647-ԱԶ

193

# Ներածութիւն առ ջերմեռանդ կեանն։ Ս͞բյն Փրանչիս կոսի Սալեղացւոյ։

Թարգմանեցեալ 'ի Տաղիաչանէ 'ի Հայս։ 'ի Ղուկասու Վարդա պետէ Խարբերդցւոյ։

Յարմարագրեցեալ, և Տպագրու- թ͞ե 'ի լոյս ածեցեալ 'ի Սարգսէ Աղք Եւդոկիայսէ Կոստանդը նու պոլսեցւոյ։

'Ի Հայրապետութե Տ͞ն Ղա- զարու Հայոց Կաթուղիկոսի։

'Ի ՎԷՆԷՏԻԿ։

Յամի Տ͞ն. 1748. 'ի մարտի. 12.

'Ի Տպ͞րնի Անտօնի Բօռթօլի։ Հրամանաւ Մեծաւորաց։

# ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## Առ ընթերցօղս · Որչափ առ Տպագրութիւն այսր մատենի :

Թէպէտ գոլով արդեն իմ պատրաստեցեալ 'ի ծանրագոյն աշխատասիրութե՛ առ 'ի յարմարագրել , նաև տպագրութե՛ 'ի լոյս ածել զբազմաց գովութեց արժանի մատեանն , որ կոչի Գիրք Օրինակաց և Նմանութեց , որ է որքան առ իս գործ իմն տաժանելի , և կենաց հիւծանօղ : Բայց սակայն մինչ ստիպեցեալ եղէ 'ի հարկեցուցիչ աղաչանաց 'ոմանց ջերմեռանդ և առաքինասէր անձանց , զի նաև կցորդս առնիցէի մեծագունի աշխատանաց իմոց՝ զյարմարագրութեն և զտպագրութեն սոյն ներկայ գրքոյս : Ոչ կարացի զանց առնուլ զխնդրուածովքնոցին , մինչ խնդրօղքն էին բարիք, և խնդրուածքն բարեգոյն, թէ և այնու կարի իմն բեռնաւորիցէի և ծանրանայցէր 'ի վերայ իմ խուժանն աշխատանաց : Եւ այս վն երից պատճառաց , զորս նկատեմ :

* Նախ . սակս հասարակ օգտակարութե համազարմ ազգի իմոյ Հայկազնոյ , յորում ըն մեծագունի մասին՝ գտանին առ այժմ բազում ըղձակերտք առաքինութեց և ջերմեռանդութե , որք և տակաւին 'ի ձեռն այսու նկարածութեն՝ յուսամ թէ օն անդր յառաջացեալք զարգանայցեն 'ի նոյնս , գնալով 'ի զօրութէ 'ի զօրութի և 'ի կատարելութէ 'ի կատարելութի : Քանզի յատկագոյն նպատակն՝ առ որ դիտէ հեղինակն սորին՝ այս է , զի առաջնորդեալ ածիցէ զմեզ առ ջերմե-

ուանդ կացութեն, և առ առաքինական կատա-
րելութեն իմն, ո՛չ և վայելէ կրօնի քրիստոնէա-
կանի ։

* Երկրորդ․ սակս յաւէտ նախանձաւոր գոլոյ իմ
դէպ առ բարիմն այլոց ազգաց քրիստոնէից ․
ոչ որքան առ այս՝ զի 'ի բաց բարձցին 'ի նոցա
նէ այնք բարիք, այլ որքան առ այս՝ զի և առ
ազգս մեր ածանցիցին ։ Առոր ես առաքեալն
յորդորէր զմեզ 'ի յասենն ․ 1․ կորն ․ 12․ 31։
Նախանձաւորք լերուք շնորհացն, որք լաւքն են ։
Քանզի այնքան 'ի մեծի վարկման և 'ի համար
ման է սոյն ազնուականագոյն գիրքս 'ի մէջ այ-
լոց ազգաց քրիստոնէից, մինչ զի ընաւ եպիսկո
պոսունք, և առաջնորդք, նաև քահանայք,
ևևս գրեթէ մեծ մասն աշխարհականաց պահեն
առ ինքեանս ։ Ուստի և 'ի մէջ սակաւ ժամա-
նակի աւելի քան զքառասուն անգամ տպագրե
ցեալ է՛ հազարաւոր թուով ։ Վասն որոյ աւելորդ
վարկանիմ ես բանավաճառ լինիլ, առ 'ի գովա
սանել զսա, մինչ ինքն իւ ինքեան ցուցանէ զինչ
գոլն իւր, յորժամ մատուցթե ընթեռնանե-
ցեալ լինիցի ։

* Երրորդ․ զի թերևս բարեխօսութե Աստուածահա-
ճոյ առնս այսորիկ որբազանի, ևևս աղօ-
թիւք համայնից առաքինասէր անձանց, որք
զարդանան և յառաջանան 'ի ձեռն ընթերցման
սորին, տացի նաև ինձ ունիլ զհոգի ջերմեռանդ
դութե, և զղձս բարեկեցութե, և զհետև-
ումն առաքինութեց, քան զորս պիտանագոյն
ինչ չիք 'ի կեանս մերկան ։ Վասն որոյ որպէս հաւ-
ատամք թէ՝ արդէն շարադրօղն սորին վարձատ-
րեցեալ իցէ 'ի յերկինս, նոյնպէս ես յուսամք
թէ՝ վարձատրելոց իցէ Ամենատատ Տէրն զմեզ
ընթեռքս ։ Այսինքն՝ զայն, որ խնդրեաց զթարգ-
մանումն ․ և զայն, որ թարգմանեաց ․ և զմեզ

որ

որ՚ի լոյս ածաք․ նաև զձեզ, որք ընթեռնոյք
խանդակաթ սիրով, և առաջադրէք կատարել
գործով։ Ուստի և կատարումն առնու բանն Տ՟ն,
որ ասացաւ․ ՚ի յօհ․ 4․ 36։ Զի որ սերմանէն և
որ հնձէ՝ հասարակ ցնծասցեն։ Որոյ սպասեալ ակըն
կալեալ յետնեցելոյ ՚ի յերամս բանասիրաց, և

անարժանագոյն ծառայ՝ ծառայից ԱՅ,

Սարգիս Վարդապետ Կոստանդնուպոլսեան,
և Արք Եպիսկոպոս Մեծի Կեսարեան։

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ:

*Սիրելի ընթերցող իմ աղաչեմ զքեզ, առ 'ի ընթեռնուլ զայս առաջաբանութիւնս՝ մի՛ քոյոյ և իմոյ բանաւորութեան:*

ԶՄտադունեղ ճարտարն Կլիչէրոս 'ի նկարելն զծրարս ծաղկանց, այնու կերպիւ յօրինէր զծաղկունս 'ի տրամադրութեան, 'ի խառնուածս, և 'ի ծրար. մինչ զի կամեցեալ Պատկերահանին Փայուսիոս, զնմանն առնել՝ առ 'ի զանազանութիւն այնորիկ գործոյ, մնաց յաղթահարեցեալ: քանզի ոչ կարաց այնու կերպիւ զնկարն իւր յօրինել, որպէս և առնէր Կլիչէրոս զծրարսն իւր: Այսպէս և Հոգին ս̃բ այնպիսի յօրինմամբ տրամադրէ և կարգադրէ զուսուցումն ջերմեռանդութեան, զոր տայ միջ-նորդութեամբ լեզուաց, և գրչաց ծառայից իւրոց. որ թէպէտ գոլով վարդապետութիւն միշտ մի և նոյն, սակայն տրամախօսութիւնքն՝ զորս առնեն, են յոյժ զնմանք՝ ըստ զանազան եղանակաց և կերպից, որովք շարադրեցեալք են: Արդ ուրեմն ես ոչ կարեմ, և ոչ կամիմ, նաև ոչ պարտիմ գրել յայսմիկ ներածման, եթէ ոչ միայն զայնս, որք արդէն հռչակեցեալք են 'ի մեծագունից մերոց՝

'ի

'ի վր̃ սոյն առարկայի : Այսոքիկ են նոյն ծաղ-
կունքն, զորս ընծայեմ քեզ ո՜վ սիրելի ընթեր-
ցող իմ: Բայց զծրարն՝ զոր ես 'ի նոցունց շա-
րադրեմ, են զանազանեցեալք 'ի յայլոց՝ պատ-
ճառաւ՛ յօրինման, որով կազմեցեալ և կերպա-
ցեալ է :

* Բազում ոմանք՝ որք ընձեռեցին զջերմեռուան
թուէ̃, դրեթէ միշտ ունեցան զնկատումն 'ի յու-
սուցանել զանձինս յոյժ հեռացեալս 'ի կենցա-
ղավարութէ̃ աշխարհի , կամ գոնեայ ուսուցին
զտեսակ իմն ջերմեռանդութե̃ , որ առաջնոր-
դէր առ այս ամբողջ հեռացումն : Բայց դի-
տաւորութիւն իմ է՝ ուսուցանել զայնոսիկ , որք
կան 'ի քաղաքի , 'ի զբաղման , և 'ի յատենա-
կան ապարանի , որք և ըստ կացութե̃ իւրեանց
պարտաւորին առնել զհասարակ կենցաղավա-
րութիւն իմն ։ որք բազմիցս 'ի ձեռն պէսպէս
պատճառանաց անկարելութե̃ առ ձեռնամխու-
թե̃ իմն , ոչ կամին ևս զձեռնամխութիւն ջեր-
մեռանդ կենի : Թուէլով մտաց նց̃՝ թէ որպէս
կենդ̃նի ոմն, որ ոչ համարձակի ուտել զհատն
խոտոյ արմաւ քրիստոսի կոչեցելոյ • այսպէս ևս
ոչ պարտի մարդ ձկտիլ առ արմաւն քրիստո-
նէականի բարեպաշտութե̃ , մինչ կայ 'ի մէջ
խուժանաց ժամանակաւոր առից : Բայց ես
ցուցանեմ նց̃, թէ որպէս սատափքն կան 'ի մէջ
ջուրց ծովու՝ թարց ընկալնլոյ զկաթ իմն ջուց
ծովու • և որպէս 'ի կողմանս քելիտոնեայ կըղ-
զւոյն՝ են աղբիւրք բարեհամ ջուրց 'ի մէջ ծո-
վու • նաև որպէս փիրաւուսքն թռչին 'ի մէջ բո-
ցոյ հրոյն թարց այրելոյ թևոցն: Այսպէս կա-
րէ քաջադոյն և հաստատ հոգի ոմն մնալ 'ի մէջ
աշխարհի, առանց ընկալնլոյ զաշխարհային պա-
տիր իմն, և գտանել զերակ իմն քաղցրադունի
բարեպաշտութե̃ 'ի մէջ դառնադունի աղեաց

այսօրիկ կենցաղոյս, և թուչիլ 'ի մէջ բոցոյ եր կրայի՛ն ցանկութեանց՝ թարց այրեցման թևոցն մաքրութեան: Եւ՛ թէպէտ այս է դժուարին ինձ: յաղագս որոյ ես ցանկամ, զի բազումք հպեցուցանիցեն զմտածմունս իւրեանց առ այս՝ առաւել տապով, որ ոչ է եղեալ մինչև ցայժմ. Ո՛վ ես՝ որ եմ տկար իսկ, զօրացուցանեմ զիս 'ի ձեռն դրունածոյ այսոցիկ, բաշխել զօժանդակութիւնչ առ այնս, որք քաջադոյն սրտիւ առնեն զայս արժանաւոր ձեռնամխութիւն:

* Բայց նաև այսու ամի՛, այս ոչ է պատահեալ ըստ ընտրութեան և ըստ յօժարութեան իմոյ, զի այն ներածումն ելանիցէր 'ի յառեան: Սակայն անձն իմն՝ լի ճշմարիտ պատուով և առաքինութեամբ, որ ունէր արդէն 'ի սակաւ ժամանակաց հետէ ընկալեալ յիմ զշնորհս՝ կամելոյ դնել առ ջերմեռանդ կեանն, ցանկացաւ մասնաւորի օժանդակութեան իմոյ 'ի ձեռն այսու ներգործութեան: Եւ՛ ես՝ որ էի նմա յոյժ պարտաւորեալ վասն բազմազան պատճառաց, և մանաւանդ տեսեալ էի 'ի նմա նախապէս զբազամ տրամադրութիւն առ այս յառաջադրութիւն յարմար: ուստի դտի զիս յօժար առ 'ի բարեպէս ուսուցանել զնա: Եւ՛ առաջնորդելով նմա ըստ բղձի և ըստ թէ ունէ իւրոյ ամ պատկանաւոր կրթութեամբ, թողի զնա յիշատակ նմա 'ի ձեռն դրոյ, զի 'ի հարկաւորութեան իւրում դիմիցէր առ այնս: Բայց նա յետոյ հաղորդեաց զսա կրօնաւորի ուրուք մեծի, դիտնոյ, և ջերմեռանդի. որ և վարկելով նա՝ թէ բազումք կարեն քարշել 'ի սմանէ զշահաւէտութիւն և զօժանդակութիւն, յոյժ ստիպեաց զիս առ 'ի հոչակել զսա: Քանզի յոյժ դիւրին էր նմա համոզելն զիս, այնու՝ զի բարեկամութիւն իւր ունէր զառաւել կարողութիւն 'ի վերայ կամաց իմոց, և դատողութիւն իւր զմեծ ինձ հեղի-

նա

Նախկութ̅ն ՚ի վ̅ր իմ։

* Արդ՝ զի լինիցէր այս գործ առաւել օգտակար և հաճելի, ընկալայ զնա և եդի ՚ի կարգի իմիք, համդերձ առակցութբ բազմաց խրատուց՝ ըստ իմոյ դիտաւորութն։ Բայց զայս ամ̅ արարի իբր Թարց ուրուք փոքրադունի անդորրութն ժամանակի։ Աղագաւ որոյ՝ ոչ տեսանես դու աստ զերկարաբանութն ինչ նրբութն, այլ միայն զհաւաքումն իմն բարեաց խրատուց և ներբաղդմանց, պարզապէս և Թարց արուեստի հռետորութն, զոր ես մեկնեմ յայտնի և իմանալի բանիւք, կամ գոնեայ ցանկամ առնել։ Եւ որքան առ պաճուճանս լեզուաց ոչ կամեցայ մտածել ինչ, որպէս թէ ունիցէի զբաղում գործս առնելոյ։

* Արդ՝ ես ուղղեմ յաւէտ զիմ խօսակցութն առ Փիլօթէայ։ Որ իմանի սիրահար, կամ խանդակաթ Այ. զի կամելով ածել զայն առ հասարակ օգտութն բազմաց անձանց, զոր նախադրեալէի վ̅ր միոյ, ես զնա կոչեմ հասարակ անուամբ առ այնոսիկ ամենեսեան, որք կամին գոլ ջերմեռանդք. զի Փիլօթէա նշանակէ զխանդակաթն, և կամ զջերմեռանդն։

* Ուրեմն ունելով զնկատումն առ ամ̅ անձինս, որք դիմեն առ սէրն Այ ըղձիւ ջերմեռանդութն, բաժանեցի զայս ներածումս ՚ի հինգ մասունս։

* Յառաջնում մասին՝ վարեցայ առարկութբ և կիրառութբ ոմամբք, առ ՚ի դարձուցանել զպարզ իղձն խանդակաթին ՚ի մի ամբողջ վերլուծումն, զոր արասցէ նա ՚ի վախճանի՝ միով հաստատ յառաջադրութբ, զկնի միոյ ընդհանրական խոստովանութե, ընկերակցեալ ը̅ սրբազնագունեղի Հաղորդութե, յորում տալով զինքն ամենափրկչին Իւրոյ՝ եւս ընդունելով զնա, մտանէ երջան

կա

կաբար 'ի մ̃ր. սէր Նորին ։ Զայս արարեալ, առ 'ի ածել զնա առաւել անդր, ցուցից նմա զերկու մեծագոյն միջնորդս՝ առ 'ի միաւորել ևս ընդ ա̃ծայնոյ հանդիսավէհութե Նորին. փ̃ զկնի ռութեն Սրբազնութեց, որոց միջնորդութբն գայ առ մեզ ամենաբարին ա̃ծ. և մ̃բզն Աղօթօքն, որով նա քարշէ զմեզ առ ինքն ։ Եւ 'ի սմին եղերեմ զերկրդ մասն ։

* Յերրորդում մասին ծանուցից, թէ ո՞չ պարտի ցէ նա կրթել 'ի բազում առաքինութիս, որ է առաւել յատուկ իւրոյ յառաջադիմութե. ոչ յապաղելով զիս անդ, եթէ ոչ 'ի յոմանս մասնաւոր խրատս, զորս նա ոչ կարէր դիւրապէս գտանել յայլ ուրեք, և ոչ ևս ըստ ինքեան ։

* 'Ի չորրորդում մասին յայտնեցից նմա զոմանս դարանս իւրոյ թշնամոյն, ցուցանելով՝ թէ ո՞չ պարտի զերծանիլ և յառաջ անցանիլ յարժանաւոր ձեռնամխութե իւրում ։

* Ապա 'ի հինգերորդում մասին՝ արարից զնա սակաւ ինչ մտանել 'ի յինքն իւր, առ'ի զօվանալ և առնուլ զշունչ, և նորոգել զզօրութիս իւր. զի կարիցէ յետոյ առաւել երջանկապէս ստանալ զքաղաքս, և յառաջանալ 'ի ջերմեռանդկեանս ։

* Նորդ այս կացութիս է յոյժ ազատ, և զանազան ։ Ուստի յոյժ բարեպէս նախատեսանեմ ես, զի գուցէ ասիցեն բազումք. Թէ այս ոչ պատկանի, եթէ ոչ առ կրօնաւորս, և առ ջերմեռանդանձինս, առ 'ի խնդրել զայսպիսի մասնաւոր առաջնորդութիս առ բարեպաշտութի ։ Եւ՛ս՝ թէ այնպիսի կացութինքն պահանջեն զաւելի ժամանակ՝ քան զայն, զոր եպիսկոպոս ոք կարիցէ ունել՝ լի ծանրագոյն զբաղանօք միոյ նահանգի ( ո՞չ և է՛ իմս ) որ յաւէտ տարացնդէ զիմացականութին, զի պարտի դոլ զբաղեցեալ 'ի հարկաւոր իրակութիս ։

կունա: Բայց ես ՚ի միասին ը̅ մեծին դիոնեսիոսի ասեմ քեզ ո՛վ սիրելի ընթերցող իմ, թէ նախկնապէս պատկանի Եպիսկ̅պաց կատարունակել զանձինս իւրեանց. և այնքան առաւել՝ որ քան կարգն նոցին է առաւել բարձրագոյն ՚ի մէջ մարդկանց, որպէս և դասքն սերովբէից ՚ի մէջ հրեշտակաց. որոյ վ̅ ժամանակին նոցին ոչ կարէ գոլ լաւագ̅ յարմարեցեալ և սահմանեցեալ, եթէ ոչ առ այս:

* Նախկին եպիսկոպոսունքն և հարքն եկղե̅ց, այնքան զբաղեցեալք էին առ բեռն իւրեանց՝ որպէս և մեք. և այսու ոչ ՚ի բաց թողուին նաև զհոգն միոյ մասնաւորի առաջնորդութե̅ դէպ ՚ի բաղում անձինս, որք դիմէին առ օգնութիւն իւրեանց, ո̅պ երևի ՚ի գիրս իւրեանց: Այսու գործով հետևէին առաքելոցն, որք ՚ի մէջ բոլոր և ընդհանրական հնձոցն, ժողովէին և զըմանս հասկս առաւել նշանաւորս, յատուկ և մասնաւոր ըղձիւ միով: Ո՞վ ոչ գիտէ զայս, թէ Տիմոթէոս. Տիտոս. Փիլիմոն. Օնէսիմոս. Սրբուհին Թեկղի. և Ապփլիա, էին որդիք մեծի առաքելոյն Պօղոսի, ո̅պ Ս̅ն Մարկոս. և Սրբուհին Փէթրոնիլա՝ ս̅րբ Պետրոսի: Զսրբուհին ասեմ զՓէթրոնիլա, զորմէ գիտնաբար վկայէն Բարոնիոս, և կալօնիոս՝ ոչ գոլ մարմնաւոր դուստր ս̅րբ Պետրոսի, այլ միայն հոգևոր: Ե՞ւ ս̅րբն Յօհաննէս՝ ո՞չ ապաքէն գրեաց ՚ի կանոնական թղթի իւրում առ ջերմեռանդ ընտրեալն Կիւրիա: Արդ ես խոստովանիմ գոլ մեծ աշխատանք իմն, առաջնորդել հոգւոյ ՚ի մասնաւորի: Բայց այնպիսի աշխատանք, որ զօրացուցանէ. նման հնձողաց և այգեկութողաց այնոցիկ, որք ոչ երբէք այնքան գոհունակք լինին, եթէ ոչ յայնժամ՝ մինչ առաւել բեռնաւորեցեալք և զբաղեցեալք լինին: Այս է այնպիսի աշ-

աշխատութիւն իմն , որ լայնացուցանէ և կենդանացուցանէ զսիրտն քաղցրութեամբ , զոր միայն զգան այնոքիկ՝ որք զբուռն արկանեն 'ի նա . որպէս առնէ և կենսամամնն այնոցիկ , որք տանին զնա 'ի յերջանիկն Արաբիայ :

* Իսկ թէ՝ ինձն տանելով զմինն 'ի մանուկորեանց իւրոց , զոր թողու զնա որբորդն 'ի մշձմանապարհին մինչ տանի ինքն զայլս , առ 'ի յամեցուցանել զնա : Բայց նա բեռնաւորի նովաւ՝ որքան և իցէ ծանր . և այսու ոչ լինէ ծանրանայ , այլ յաւէտ թեթևանայ 'ի յընթացս՝ առ 'ի զերծուցանել զնա 'ի յորջս իւր , զի բնական սէրն առնէ զնա թեթև այնքան ծանրութեան : Արդ որքան առաւել հայրական սէրս իմ՝ յօժարութեամբ առնու ինքեան 'ի բեռն՝ զմի հոգի , առ որ աշխատի , և մինչ տանէ զնա ցանկացող կատարելութեան իւրոյ , այնքան մեծաւ հոգաբարձութեամբ պարտի տանել զնա 'ի յառաջ : Որպէս և առնէ մայր ոմն դէպ առ իւր փոքրագունեղի որդւոյ , թարց ձանձրանալոյ կէտ մի յայնմանէ սիրելի ծանրութենէ : Բայց թարց երկբայութեան պիտոյ է՝ զի այս իցէ հայրական սիրտ իմ : Եւ մինչ առաքեալքն և առաքելական արքն , ոչ միայն կոչէին զաշակերտս իւրեանց որդիս . այլ նա և յաւէտ քաղցրութեամբ կոչէին զնոսա որդեակս . քան փոքրագունեղ որդիս :

* Արդ այսու ամենայնիւ ո՛վ սիրելի ընթերցող իմ , թէպէտ գրեմ ես յաղագս ջերմեռանդ կենի՝ թարց գոլոյ իմ ջերմեռանդ , բայց խրատ ոչ թարց բղձի լինելոյ իմ ջերմեռանդ : ուստի և այս խղձատայ ինձ զզօրութիւն առ 'ի ուսուցանել և զքեզ : Զի որպէս ասէր մեծ ոմն բանիբուն . Թէ լաւ կերպ ուսանելոյ է՝ ընթեռնուլն . լաւագոյն լսելն . և լաւագունեղ ուսուցանելն : Պատահի ապա բազմիցս մարդն օգտոյ՝ գրելով առ իւր ջերմեռանդ

ռանդ Փիօրէնդինայ . Թէ պաշտօն բաշխելոյ ծառայէ արդեան՝ առ'ի ընդունիլ , և պաշտօն ուսուցանելոյ հիման՝ առ 'ի ուսանիլ :

Աղեքսանդր հրամայեաց զի նկարիչն իւր պատկերն գեղեցիկ Քամպասպէին՝ ( որ էր ինքեան սիրելի , ) ձեռամբ հռչակաւոր ապելլի պատկերահանի . և ապէլ կամելով գծագրել 'զգեղեցկութին նորին 'ի վ̄ր տախտակի , հարկաւորեցաւ առ'ի խոկալ երկարապէս զՔամպասպէէ . ուստի ներատպեցաւ սէր նորին 'ի սիրտ իւրում , և այնպէս մնաց յոյժ սիրահարեցեալ : Որոյ տեղեկանալով աղեքսանդր, և ունելով դէպ առ նա զմեծ գթութին , ետ զնա նմա 'ի կնութին . և զրկեաց զինքն 'ի յառաւել սիրելոյն , զոր նա ունէր 'ի յաշխարհի՝ վ̄ն սիրոյ բարեկամին : Զորմէ ասէ փլինոս . Թէ եցոյց զմեծութին սրտի իւրոյ այնքան , որքան ունէր ընկալեալ զմեծագոյն յաղթութիւն :

* Արդ՝ Թուի ինձ ո՛վ ընթերցող բարեկամ իմ . զի դոլով ես եպիսկպս , կամի ած զի նկարեցից ես 'ի վերայ սրտից մարդկանց ոչ միայն զառաքինութիւս հասարակս , այլ և զսիրելի ջերմեռանդութին իւր : Ուստի յօժարապէս զբուռն արկից , որքան վասն հնազանդելոյ և կատարելոյ զպաշտօնն իմ , այնքան վ̄ն յուսոյ զոր ունիմ : ք̃զի ներատպելով զնա 'ի հոգիս այլոց , դուցէ լինիցի նա և իմ՝ սրբապէս սիրահարելով : Եւ՛ մինչ տեսանիցէ իւր ածային հանդիսավէհութին՝ Թէ ես հոգունակապէս զբուռն արկանեմ, ընկալցի զիս 'ի հարսնութին իւր յաւիտենականս : Արդ՝ որպէս գեղեցիկ և ողջախոհուհին ռեբեկա արբուցանելով զուղտունս իսահակայ , սահմանեցաւ առ'ի լինիլ հարսն նորին , ընդունելով 'ի կողմանէ նորին զգինս ոսկեղէնս և զապարանջանս : Այսպէս և ես խոս-

խոստանամ ինձ 'ի կողմանէ անչափ բարերա-
րութեանն այ̃ իմոյ. Զի առաջնորդելով իւր սի-
րելոյ հօտին, առ առողջաւէտ ջուրն ջերմե-
ռանդութե̃, ընկալցի եւ զհոգի իմ 'ի հարսնութի̃
իւր յաւիտենական. դնելով 'ի յականջս իմ զոս
կեզօծ խօսս ո̃ք սիրոյն իւրոյ, և 'ի բազուկ իմ
զզօրութի̃ բարեպէս կրթելոյ և 'ի կիրարկելոյ
զնա̃, յորում կայանայ էութի̃ ճշմարտի ջերմե-
ռանդութե̃: Եւ հայցեմ յա̃ծայնոյ հանդիսա-
վէհութէն՝ շնորհել ինձ, և բնաւից որդւոց Եկե-
ղեցւոյն իւրոյ. առ որ կամիմ եւ միշտ ենթարկել
զատս, զգործս, զխօսս, զկամս, և զմտածմունս
իմ:





Սուրբ Ֆրանչեսկոս սալէզացի այր սրբասուն
վարուք մաքուր ուսմամբ ըզգօն և բանիբուն ,
Հրաւէր լինի մեզ բնաւից միահաղոյն
'ի ջերմեռանդն կենի լինել յար հնայուն ։

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԱՌ ՋԵՐ ՄԵՌԱՆԴ ԿԵԱՆՆ

Որ պարունակէ շաւղմունս, և ընտրելաւոր Ներքերթութեանս :

Բ,ռ. ՚ի առաջնորդել զհոգւոյ՝ ՚ի նախկին ըղձակերտութենէ իւրոյ ջերմեռանդ կենի, մինչև ցառ մի ամբողջ վերլուծումն գգուելոյ զնա :

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ.

### Ստորագրութիւն ճշմարիտ Ջերմեռանդութեան :

### Գլուխ. Ա :

ԴՈՒ ՀԱՌԱՋԵՍ ԱՌ ջերմեռանդութիւն ո՛վ սիրահար Ա՟յ. զի գոլով քո քրիստոնեայ՝ լաւապէս գիտես, թէ այս է առաքինութիւն իմն յաւէտ հաճելի Ա՟ծայնոյ հանդիսավեհութեան : Բայց փոքրագոյն սխալմունքն, որք գործին յսկզբան գործառութեան ուրուք, անհնա՟պ

առնին 'ի յառաջացման նորին գործոյ, և 'ի վախճանի դրեթէ են աննորոգելիք: Պարտ է ուրեմն նախ քան զընթացս իւր գիտել, թէ զինչ իցէ առաքինութիւն ջերմեռանդութեան: Քանզի նա ոչ է այլ ինչ՝ քան թէ ճշմարտութիւն իմն, և դառնալումն 'ի մի մեծ սուտութիւն և ունայնութիւն. եթէ դու ոչ ճանաչիցես թէ ո՛րն իցէ ճշմարիտն, այնու կարես պատրիլ, և դնել զքեզ առ'ի հետևիլ անպատշաճ և աւելորդ ջերմեռանդութեան իմիք:

* Ռուէլիոս նկարէր զընթացս դէմս պատկերաց՝ 'ի նմանութիւն կանանց, զորս նա սիրէր: այսպէս և իւրաքանչիւրոք նկարէ զջերմեռանդութիւն ըստ իւրոյ ախտին, և ըստ երևակայութեանն: Այն ոմն՝ որ տուեալ է զինքն 'ի պահեցողութեան, համարեցեալ լինի յոյժ ջերմեռանդ: արդ թէպէտ է պահեցող, սակայն լի է սրտին իւր խեռիւ՛ և մախանօք: Ե՛ւ թէպէտ ոչ համարձակի թաթաւել զլեզուն իւր 'ի գինւոջ, և ոչ ևս 'ի ջուր՝ վասն ժուժկալութեան: բայց ոչ ունի երբէք զկէտ մի խղճահարութեան 'ի թաթաւել զնա յարիւն ընկերին, բամբասանօք և նախատանօք: Այլ ոմն համարեցեալ լինի ջերմեռանդ, զի յամենայն աւուր ասէ զբազում և զպանազան շարունակութիւնս աղօթից: սակայն այսու ամենայնիւ՛ հակէ ևս բոլորովին զլեզու իւր՝ ձանձրացուցական, ամբաստանական, և անիրաւական բանիւք առ ընտանիս և առ ընկերս: Այլ ոմն՝ յօժարապէս քարշէ յարտաքս զդրամս 'ի քսակէ առ'ի տալ աղքատաց: բայց ոչ կարէ արտահանել զսակաւ ինչ քաղցրութիւն 'ի սրտէ իւրմէ առ'ի ներել թշնամեաց: Միւս այլ ոմն՝ ներէ այնց՝ յորոց վշտացաւ: բայց ոչ հատուցանէ երբէք զպարտս իւրոց փոխատուաց եթէ ոչ բռնութեամբ դատաստանի: Բնաւ՛ք այսպիսիք վարկեցեալք լինին 'ի յոռմկաց ջերմեռանդք:

ռանդք: Բայց ոչ ինչ կերպիւ ըստ ինքեանց են ջերմեռանդք:

* Զինուորքն սաւուղայ որոնէին զդաւիթ 'ի տան իւրում. և մելքող կինն նորին դնելով զարձան իմն 'ի մահճի, և ծածկելով զայն զգեստիւն դաւթայ, եւ հաւատալ նց՝ թէ այն էր նոյն ինքն դաւիթ տկարացեալ: Այսպէս բազում անձինք ծածկեն արտաքին գործովք իմն պատկանեալ առ՛ի ջերմեռանդութիւն. և աշխարհն տեսանելով զայս՝ հաւատայ, թէ այսոքիկ իցեն ճշմարիտ և հոգևոր ջերմեռանդք: Բայց իրաւի ոչ են այլ ինչ՝ քան թէ արձանք և երևոյթք ջերմեռանդութեն: Ճշմարիտ և կենդանի ջերմեռանդութիւն ո՛վ սիրահարդ' այ, նախենթադրէ զսէրն այ. և մանաւանդ նա ոչ է այլ ինչ՝ եթէ ոչ ճշմարիտ սէր իմն այ, և սակայն ոչ այսպիսի և այնպիսի սէր: Քանզի ըստ որում սէրն ածային զի գեղեցկացուցանէ զհոգիս մեր՝ կոչի շնորհք, առնելով զմեզ հաճելի ածային հանդիսավեհութեն: Իսկ ըստ որում զի տայ մեզ զզօրութիւն առ՛ի գործել զբարին՝ կոչի սէր: Բայց մինչ ժամանէ նա առ այնպիսի իմն աստիճան կատարելութեն, որ ոչ միայն առնէ զմեզ գործել զբարին, այլ ևս առնէ գործել հանճարեղապէս, յաճախագոյն, և յօժարապէս, յայնժամ կոչի ջերմեռանդութիւն:

* Ջայլամունքն ոչ երբէք թռչին. իսկ աքաղաղքն թռչին, բայց ծանրութբ, հազիւ, և ցածագոյն: Բայց արծուիքն, աղաւնիքն, և ծիծռունքն՝ թռչին յաճախապէս, արագագոյն, և բարձրապէս: Այսպէս մեղաւորքն՝ ոչ թռչին երբէք 'ի յած; այլ մանաւանդ բոլոր ընթացք նոցին են 'ի յերկրի, և վս երկրի: Բարիքն՝ որք տակաւին չև են հասեալք առ ջերմեռանդութիւն, բարեգործութբ թռչին 'ի յած: բայց հազուա-

պէս, յամրապէս. և ծանրապէս: Ջերմեռանդանձինքն թռչին 'ի յած յաճախապէս, յօժարապէս, և բարձրապէս: Վերջապէս՝ ջերմեռանդութիւն ոչ է այլ ինչ, քան թէ արագութի, թեթևութի, և հոգևոր զօրութի իմն. միջնորդութբ որոյ սէրն առնէ 'ի մեզ զիւր ներգործութիւն. և կամ թէ՝ մեք միջնորդութբ նորին առնեմք զներգործութիւն մեր յօժարապէս և ըղձակերտութբ: Եւ ո՛չ պատկանի առ սէրն՝ առնել զմեզ առ 'ի պահել զամ պատուիրանս այ, ընդհանրապէս և հասարակապէս. այսպէս պատկանի և առ ջերմեռանդութիւն՝ առնել զմեզ գործել յօժարապէս և հոգունակապէս: Յաղագս որոյ, այն՝ որ ոչ պահէ զամ պատուիրանս այ, ոչ կարէ վարկանիլ բարի, և ոչ ջերմեռանդ: Քանզի առ 'ի գոլ բարի՝ պիտոյ է ունիլ զսէր, և առ 'ի գոլ ջերմեռանդ՝ պիտոյ է անդր քան զսէրն ունիլ ևս զմեծ իմն զօրութի և յօժարութի առյատուկ գործն սիրոյ:

* Իսկ յորժամ ջերմեռանդութիւն ժամանէ առաստիճան իմն գերազանց սիրոյ, յայնժամ նա ոչ միայն առնէ զմեզ յօժար՝ գործունեայ՝ և հոգունակ՝ առ պահպանումն ընաւից պատուիրանացն այ, այլ ևս շարժէ զմեզ առ 'ի առնել յօժարութբ և ըղձակերտութբ զամ բարեգործութիւն, զորս մեք կարեմք, թէ ևս ոչ իցեն հրամայեցեալք կերպի՛ւ իւիք, բայց միայն խրատեալք և ներշնչեալք: Քանզի ո՛չ այր ոք՝ որ մինչ նորապէս առաջացեալ է 'ի տկարութէ իմեքէ, քայլէ՝ որքան է հարկաւոր ինքեան, բայց մեղմաբար և յամրապէս: Այսպէս մեղաւորն գոլով առաջացեալ յանօրէնութէ իւրմէ, քայլէ յառաջ՝ որքան հրամայէ նմա ած, բայց մեղմաբար և յամրապէս, մինչև շօշափիցի 'ի ջերմեռանդութէ: Զի յայնժամ իբր բարեպէս առ-

ողջա-

ողջացեալ մարդ՝ ոչ միայն քայլէ, այլ և ընթա-
նայ և վազէ 'ի ճանապարհս պատուիրանացն ա̃յ:
և առաւել ևս անցանէ և ընթանայ 'ի ճնպ̃րհս
խորհրդոց և երկնային ներշնչմանց:
Վերջապէս, սէրն և ջերմեռանդութիւն ոչ ու-
նին 'ի մէջ ինքեանց զայլ զանազանութիւն,
քան զայն՝ զոր ունին 'ի մէջ ինքեանց բոցն և
հուրն. զի սէրն գոլով հուր իմն հոգևոր, և
յորժամ նա առաւել բորբոքի, կոչի ջերմեռանդ-
ութիւն: Վ̃ն ջերմեռանդութիւն ոչ առնկցէ զայլ
ինչ առ հուրն սիրոյ, եթէ ոչ զբոցն. որ առ-
նէ զսէրն յօժար, գործունեայ, և հաղունակ,
ոչ միայն 'ի պահպանութիւն պատուիրանացն ա̃յ,
այլ ևս 'ի կրթութիւն և 'ի կատարումն խորհրդոց,
և ներշնչմանց երկնայնոց:

## Յատկութեան, և Գերազանցութեան ջերմեռանդութեան:

### Գլուխ. Բ.

Այնոքիկ, որք թելադրէին զիսրայէ-
լացիս առ 'ի ոչ գնալ յերկիրն աւե-
տեաց՝ ասէին նց, թէ այն էր այն-
պիսի երկիր իմն, որ կլանէր զբնա-
կիչսն: Այսինքն՝ թէ այնքան վնասակար էր
եղանակն նորին, որ ոչ կարէր անդ ոք ապրել
երկարապէս: Նաև բնակիչքն էին այնքան
հսկայք և ահարկուք, մինչ զի ուտէին զայլ մար-
դիկս որպէս զմարախս: Այսպէս աշխարհն ո՞վ
սիրահար ա̃յ, որքան կարէ վատաբանէ զս̃բ
ջերմեռանդութիւնն, ձևացուցանելով զջեր-
մեռանդ անձինս մռայլ զզուելի՝ տրտում՝ և

տգեղ երեսօք . նաև հռչակէ՝ թէ ջերմեռանդութիւն պատճառէ զմարդ տրտմութե , և է ևս անտանելի : Բայց ո՞չ յեսու, և քաղէբ վկայ էին , թէ երկիրն աւետեաց ոչ միայն լցեր բարի և գեղեցիկ , այլ մանաւանդ թէ ժառանգումն նորին լցեր քաղցր և հաճելի : Համգունաբար՝ Հոգին սբ , բերանով ամից սբց . նաև Տրն մեր՝ իւր յատուկ բերանովն հաւաստէ մեզ, թէ ջերմեռանդ կեանքն է իր լին քաղցր , համեղ , և հաճելի :

* Աշխարհն տեսանէ , զի ջերմեռանդքն ծոմապահեն , աղօթեն , համբերեն անիրաւութեց , ծառայեն տկարաց , տան աղքատաց , հսկեն , սանձեն զբարկութիւն , հեղձուցանեն և նուաճեն զախտս իւրեանց , զրկեն ՚ի յզգայական հեշտութեց , և առնեն զայլ պէսպէս գործս , որք ըստ ինքեանց և ըստ յատուկ գոյացութեց և որպիսութեց իւրեանց՝ են խիստք, և դառինք : Բայց ոչ տեսանէ արդէն աշխարհն զներքին ջերմեռանդութիւն սրտին, որ առնէ զընաւ գործս զայսոսիկ հաճելի , քաղցր , և դիւրին : Նկատեցէք նստեալ ՚ի վր լեղի խոտոց զմեղուան . զի գտանեն նք անդ զմի դառնադոյն խոնաւութի , բայց ՚ի ծծելն զնա դարձուցանեն ՚ի մեղր , զի այնպիսի է յատկութի նոցին :

Ով աշխարհականք . ջերմեռանդ անձինքն գտանեն զբաղում դառնութիւս ՚ի մահացուցական կրթութիւս իւրեանց՝ այս է ճշմարիտ . բայց ՚ի յունիլն զնա՝ դարձուցանեն ՚ի քաղցրութի և ՚ի համեղութի : Հուրն , բոցն , անիւն , և սուրն , համարեալք լինէին ծաղկունք , և անուշահոտ խունկք սբց մարտիրոսաց , զի էին ջերմեռանդք : Արդ եթէ ջերմեռանդութիւն կարէ առբերել զայնքան առաւել քաղցրութիւս ՚ի խստագոյն տանջանս , նա ևս ՚ի նոյն իսկ մահուան . և զի՞նչ ար-

դեօք

դեօք ոչ առնէ 'ի յառաքինական գործս ։
Շաքարն քաղցրացուցանէ զխակ պտուղսն , և նուաճէ զխստութիւն և զվնասակարութիւն հասունակ պտղոց ։ Արդ ջերմեռանդութիւն է ճշմարտ շաքար հոգևոր , որ բառնայ զդառնութիւն 'ի մահացուցմանէ , և զվնասակարութիւն 'ի մխիթարութէ ։ Նա բառնայ զհողն 'ի յաղքատաց , և զհաշումն 'ի հարստաց , զանմխիթարութիւն 'ի զրպարտեցելոց , զցոփութիւն 'ի պատուեցելոց , զտրտմութիւն յառանձնացելոց , զաահականութիւն յայնցանէ, որք կենցաղավարին 'ի յընկերակցութե ։ Նա ծառայէ 'ի տեղի հրոյ 'ի ձմերայնի , և 'ի տեղի ցօղոյ 'ի յամարայնի ։ Նա առնէ առատանալ և տանել աղքատութե ։ Նա առնէ հաւատարապէս օգտակար զպատիւն և զանարգումն ։ Նա ընդունի զհեշտութիւն և զցաւն միշտ միով արտև՝ իբր հաւասար , և լի միով զարմանալի հա
մեղուութբ և քաղցրութբ ։

* Նկատեցէք զանդուխտն յակօբայ , որ է ճշմարիտ պատկեր իմն ջերմեռանդ կենաց ։ Արդ երկու կողմունքն ընդ որս ելանէ ոք , նաև 'ի մէջ որոց զետեղեալք են աստիճանքն , ցուցանեն զաղօթս , որ հայցէ զսէրն այ . նաև ցուցանեն զորբաղնուեան , որք շարաբերեն և շնորհեն զնոյնն ։ Աստիճանքն ոչ են այլ ինչ , քան թէ զանազան աստիճանքն սիրոյ , 'ի ձեռն որոց յառաջացեալ լինի 'ի յառաքինութէ 'ի յառաքինութի ։ Եւ՛ այս կամ իջանելով գործով 'ի յօժանդակու ընկերին . և կամ ելանելով խոկմամբ առ սիրելի
միաւորութի ընդ այ ։

Արդ աղաչեմ զձեզ , առ'ի նկատել զայնոսիկ , որք կան 'ի վր սանդխտոյն ։ Քանզի այնոքիկ՝ կամ են մարդիկք , որք ունին զսիրտ հրեշտակական . կամ են հրեշտակք , որք ունին զմարդկային մարմին ։ Նոքա ոչ են մանկունք , բայց ցուցա

նեն թէ իցեն մանկունք ; քանզի լի են զօրութեամբ և հոգևոր թեթևութեամբ ։ Ունին զթևս՝ առ՚ի թռչիլ և հանգչիլ ՚ի յԱստուած ձեռն աղօթիւք ․ բայց նա և ունին զոտս առ՚ի շրջիլ ընդ մարդկանց , որք և բարեկամական կենցաղավարութեամբ միով ։ Դէմք նոցին են գեղեցիկք և փափուկք , զի զոմն ինչ քաղցրութեամբ և համեղութեամբ առնեն ։ Արունքն , բազուկքն , և գլուխք նոցին , են բոլորովին մերկք և յայտնիք ։ քանզի խորհուրդքն , լեզուքն , և գործքն նոցին , ոչ ունին զայլ նշան կամ շարժումն , քան թէ հաճոյանալ Աստուծոյ ։ Իսկ մնացեալ մասունքն մարմնոց նոցին է ծածկեցեալ , բայց գեղազան և թեթև զգեստիւ միով ։ քանզի թէպէտ ծնեալ են աստորիկ աշխարհի և աշխարհային իրաց ․ բայց կերպիւ իմն բոլորովին մաքրութեամբ և պարզութեամբ , ոչ առնելով զայլ ինչ , եթէ ոչ զայն միայն թեթևապէս , որ է հարկաւոր յատկութեան իւրեանց ։ այսպիսիք են նաև ջերմեռանդ անձինքն ։

Հաւատամ ինձ սիրելի խանդակաթ այ ․ զի ջերմեռանդութիւն է քաղցրութիւն քաղցրութեանց , և թագուհի առաքինութեանց , զի է կատարելութիւն սիրոյ ։ Քանզի եթէ սէրն իցէ կաթն իմն , ջերմեռանդութիւն է կարագն նորին ․ եթէ սէրն իցէ տունկ իմն , ջերմեռանդութիւն է ծաղիկն նորին ․ եթէ սէրն իցէ ակն իմն պատուական , ջերմեռանդութիւն է փայլումն նորին ․ և եթէ նա իցէ պալասան իմն ազնիւ , ջերմեռանդութիւն է անուշահոտութիւն նորին , որ զօրացուցանէ զմարդիկ , և ուրախացուցանէ զհրեշտակս ։

Յա-

## Յաղագս Թէ Ջերմեռանդութենն պարտական եմ ցեղ հոչման, եւ հայութե ։

### Գլուխ . Գ.

Հրամայեաց Տր ’ի ստեղծման իւրայ , զի բերիցեն իւրաքանչիւր ծառք զպտուղս իւրեանց , ըստ ազգի իւրեանց . Ծննդ . I . II ։ Այսպէս հրամայէ և ս քրիստոնէից , որք են կենդանի տունկք եկեղեցւոյ իւրոյ , զի յառաջ բերիցեն զպտուղս ջերմեռանդութեան՝ ըստ որպիսութեան կոչման և կացութեան իւրեանց ։ Ջերմեռանդութենն պարտի գոլ զնզնապ կերպարկեցեալ ’ի զնզան անձանց . Այսինքն . այլապ ’ի յաղնուականս առնէ ումեմնէ , այլապ ’ի յարուեստաւորս , այլապ ’ի ծառայս , այլապ ’ի յիշխանս , և այլապէս ’ի յայրի կնոջէ , ’ի յաղջկանէ , ’ի յամուսնացելոյ , և ’ի յայլոց ։ Եւ ոչ միայն այս , այլ և պիտոյ է ևս յարմարեցուցանել զկիրառումն ջերմեռանդութեան առ զօրութիւս , առ կարողութիւս , առ գործս , և առ իւրաքանչիւր մասնաւոր պաշտօնս ։

Ո՞վ սիրահարդ իմ , ասա ինձ աղաչեմ զքեզ . լինէ՞ր արդեօք պատկանաւոր ինչ , եթէ եպիսկոպոս ոք կամիցէր կեալ առանձնականութեամբ որպ զմի ոք լռակաց ճգնաւոր ։ Եւ կամ ամուսնացեալքն ոչ կամիցէին ստանալ զիր իմն հանգոյն գաբուճին կրօնաւորաց ։ Եւ կամ թէ արուեստաւորն յարամնայցէր յեկեղեցւոջ ’ի բոլոր օրն՝ որպ զկրօնաւորս . և կրօնաւորն յամբողջ օրն դեգերիցիւր ’ի զանազան տեսակս զբաղանաց վասն ծառայութեան ընկերին՝ որպ եպիս-

կո-

կոպոս քո. մի՞թէ ոչ լինէր այսպիսի ջերմեռանդութիւն ծիծաղելի՝ անկարգ՝ և անտանելի: Բայց սակայն այս մոլորութիւս պատահի բազմիցս, և աշխարհն՝ որ ոչ կամի ճանաչել, և կամ ոչ կամի ընտրել՝ ՚ի մէջ ջերմեռանդութեան, և անխոհեմութեան այնոցիկ՝ որք համարեցեալք լինին գոլ ջերմեռանդք, այնու բամբասէ և նախատէ զջերմեռանդութիւն, որ ոչ կարէ գոլ երբէք պատճառ այսպիսեաց անկարգութեանց:

* Ոչ ապականէ ջերմեռանդութիւն զիր ինչ ո՛չ զհրահար ինչ՝ մինչ նա է ճշմարիտ, այլ մանաւանդ կատարունակէ զամ ինչ: և մինչ լինի նա ներհակ ընդդէմ ումեք օրինաւոր կոչման և կացութեան, նա թարց երկբայութեան է սուտ: Մեղուն՝ ասէ արիստոտէլ, քարշէ զմեղրն իւր ՚ի ծաղկանց թարց ապականելոյ զնա, և թողու կատարեալ և ամբողջ՝ որպէս և եգիտ զնա: Բայց ճշմարիտ ջերմեռանդութիւն ևս առաւել լաւագունապէս առնէ, զի ոչ միայն ոչ ապականէ նա զցեղ կացութեան և գործոյ իմիք, այլ մանաւանդ վայելչացուցանէ և գեղեցկացուցանէ զայնս: Բնաւ տեսակք պատուական ականց մինչ ձգին ՚ի մէջ մեղեր, իւրաքանչիւրքն լինին առաւել փայլունք և պայծառք ըստ գունոց իւրեանց: այսպէս ամ ոք լինի առաւել հաճելի յիւրում կացութեան՝ մինչ առակցէ զայն ընդ ջերմեռանդութեան: Զի յայնժամ հոգն ընտանեաց լինի առաւել խաղաղ. սէրն ՚ի մէջ առն և կնոջ առաւել պարզ. ծառայութիւն իշխանին՝ առաւել հաւատարիմ. և բնաւ տեսակք զբաղմանց և գործոց՝ առաւել քաղցր և սիրելի:

* Այս է մոլորութիւն իմն, և մանաւանդ գրեթէ իցէ հերետիկոսութիւն իմն, կամել աքսորել զջերմեռանդ կեանքն ՚ի կացութենէ զինուորաց, ՚ի կրպակէ արուեստաւորաց, ՚ի պալատէ իշխանաց, ՚ի

տա-

տանէ ամուսնացելոց :

Թէպ՟ ճշմ՟ է ո՛վ սիրահար իմ. թէ՛ տեսակն, վանա կն, և կրօնաւորակն ջերմեռանդութին՝ մաքրապ՟ ոչ կարէ 'ի գործ ածիլ 'ի այսպիսիկ կցուեն : Բայց անդր քան զայս երիս տեսակս ջերմեռանդութեն, են և այլ բազում յատուկ տեսակք, առ 'ի կատա րունակել զայնոսիկ, որք կենցաղավարին 'ի յաշ_ խարհական կացութեն : Որքան առ հին կտակար անն, տան զվկայութեն ասացելոյն մեր. Աբրա համ. Իսահակ. Յակոբ. Դաւիթ. Յոբ. Տոբիթ. Սառա. Ռաքէլ. և Յուդիթ : Եւ որքան առ նոր կտակարանն. որպէս Յովսէփ. սրբուհին Լի_ դիա. որպէս Կրիսպոս, որք եղեն կատարելապէս ջերմեռանդք 'ի կրպակի իւրեանց : Եւ սրբուհին Աննա. սրբուհին Մարթա. սրբուհին Մօնիքա. Ակուիլա. Պրիսկիլա, 'ի կառավարութեն տան իւրեանց : Եւ կուռնէլիոս. որպէս Սեփաստիա_ նոս. որպէս Մաւրիցիոս, 'ի մէջ զինուորութեն : Եւ կոստանդիանոս. Հեղինէ. որպէս Լօտովիկոս. երանելին Ամաթէաս. որպէս Էտովարտոս, 'ի թագաւորական և յիշխանական գահոջ իւրեանց : Քանզի պատահեցաւ երբեմն, զի բազումք կո րուսին զջերմեռանդութին 'ի յանապատի, որ թէ և իցէ այնքան ըղձալի սակս կատարելութեն : Ղովտ՝ ( ասէ որպէս գրիգոր ) որ եղև այնքան ողջախոհ 'ի քաղաքի, բայց պակասեցաւ 'ի յանա_ պատի : Ո՛ւր և իցեմք մեք՝ կարեմք, և պար_ տիմք հասանել առ կեանն կատարելութեն :

## Յաղագս հարկաւորութեան միոյ Առաջնորդի · առ'ի մտանել, և առնել յառաջադիմութիւն 'ի Ջերմեռանդութեան:

### Գլուխ · Դ:

ԳՈլով հրամայեցեալ մանկանն Տօբիայ, առ'ի գնալ 'ի Հռագս · պատասխանեաց նա : Ես ոչ գիտեմ զճանապարհն : խնդրեա՛ դու քեզ՝ զայր ոք ( ասաց նմա հայրն ) որ եկեսցէ ընդ քեզ · տօբիթ · 4 · 4: Ե՞րդ ես ասեմ քեզ զնոյնն՝ ո՛վ սիրահարդ-ա̃յ · եթէ կամիս դու բարեպէս ընդանալ 'ի ճանապարհս ջերմեռանդութե̃ն , խնդրեա՛ զայր ոմն բարի , որ առաջնորդեալ ածիցէ զքեզ: Այս է խրատն խրատուց : որքան դու խնդրիցես ( ասէ ջերմեռանդն աւ̂իլաս ) ոչ երբէք գտանես այնպէս անդորրաբար զկամս ա̃յ , որքան ճանապարհաւ այսորիկ խոնարհ հնազանդութե̃ն, այնքան յաճախապէս պատուիրեցեալ և 'ի գործածեցեալ 'ի բնաւ հնազոյն ջերմեռանդից :

Երանելի մայրն Թերեզիա, մինչ լուաւ թէ որբուհին կատարինէ դօռտոնյ , առնէր զմեծամեծ ապաշխարանս, ըղձակերտեցաւ այնու հետևել նմա , ընդդէմ խրատու խոստովանահօր իւրոյ, որ արգելեաց նմա զայն · որով իսկ փորձեցաւ նա առ'ի ոչ հնազանդիլ նմա՝ յայսմիկ մասնաւոր խրատու : Ուստի ասաց նմա ա̃ծ · Դուստր իմ, դու ունիս զբարի և զանդորր ճանապարհ իմն : Տեսանես դու զայն ապաշխարութի̃ն, զոր նա առնէ : Բայց ես առաւել քան զայն համարիմ զհնազանդութի̃ն քո : Ե՞ր այսպէս՝ այնու հե-

տև

տէ նա այնքան սիրեաց զայս առաքինութիւն, որ անդր քան զՀնազանդութիւն զայն, զոր պարտ էր իւրոյ մեծաւորին, ուխտեաց ևս զմի մասնաւոր Հնազանդութիւն դերազանց առն միոյ, պարտաւորելով զինքն յաւէտ Հետևել ուղղելութեան և առաջնորդելութեան նորին։ ուստի յետոյ անՀնապէս մխիթարեցաւ այնու, ոչ և յառաջն։ Եւ զկնի նր̃, բազում բարեգոյն անձինք ևս՝ առ՚ի լաւապէս Հնազանդիլ նմ̃, ենթարկեցին զկամս իւրեանց՝ 'ի ներքոյ կամաց ծառայից իւրեանց։ Արդ այս է առաքինութիւն իմ, որ 'ի սրբուՀի կատարինէէ սենացւոյ բարձրապէս գովի ներ խոստակցութեան իւրում։ Այսպէս ևս ՍրբուՀի եղիսաբեթ ջերմեռանդ իշխանուՀին, ենթարկեաց զինքն ծայրագոյն Հնազանդութե̃ Գօռատոս Վարդապետին։ Եւ ահա տամ քեզ զխրատ իմ, զոր և մեծ ս̃րբն Լօտովկիոս նախ քան զմեռանիլն իւր՝ եա որդւոյ իւրում ասելով։ Խոստովանեա միշտ, և ընտրեա՛ վն̃ քո զընդունակ և զՀաւատարիմ խոստովանաՀայր ոք, որ կարիցէ անդորրապէս ուսուցանել քեզ, առ՚ի առնել զիրս, որք են Հարկաւորք քեզ։

* Բարեկամ Հաւատարիմ ( ասէ սր̃ գիրն ) է Հովանաւորութիւն Հզօր · իսկ որ գտանէ զնա, գտանէ զգանձ բաղում։ Բարեկամ Հաւատարիմ բժշկութիւն կենաց՝ ևանմաՀութեան · և որք երկնչին 'ի տնէ գտցեն զնա · ժողով · 6 · 14։ Այսոքիկ մ̃ծային բանքս նախապետաբար Հային 'ի յանմաՀութիւն, ոչ տեսանես դու։ Յաղագս որոյ պարտ է 'ի վեր քան զամ̃ ինչ ունիլ զայս Հաւատարիմ բարեկամն, որ ուղղիցէ զգործողութիւնս մեր, խրատիւք և խորՀրդովք իւրովք · և այսու կերպիւ պաշտպանիցէ զմեզ 'ի յորոգայթից և 'ի խաբէութեանց չար ոգւոյն։ Նա լինիցի մեզ ոչ զգանձ իմն իմաստութեան, 'ի նեղու-

թեան,

թեան, 'ի տրտմութեան, և 'ի յանկման մերում: Նա ծնոյց մեզ փոխանակ դեղոյ, առ 'ի թեթևացուցանել և մխիթարել զախտս մեր 'ի հոգևոր հիւանդութեան: Նա զգուշացուցէ զմեզ 'ի չարէ, և առնիցէ լաւագոյն զբարիս մեր. և մինչ պատահիցի մեզ տկարութիւն, արդելուցու առ 'ի չլինել մահաբեր. այնու՝ զինա յայտնէ մեզ զայն:

Բայց ո՞յք են՝ որք գտանեն զայսպիսի բարեկամ. պատասխանէ իմաստունն: Որք երկնչին յԱյ. և խոնարհքն, որք յոյժ ցանկան հոգևոր յառաջադիմութեան իւրեանց: Արդ որովհետև ո՛ սիրահարդ ոյ, այնքան օգնէ քեզ միով բարեաւ առաջնորդիւ ընթանալ 'ի յայս սբ ճանապարհս քերթողութեան, աղաչեմ զքեզ թախանձանօք մեծաւ, առ 'ի նախապատրաստել քեզ զբարի առաջնորդ ոմն, ըստ հաճութեան իւրոյ: Եւ՛ մի՛ երկբայիր երբեք, զի մինչ պատրաստեաս առաքել քեզ զմի ոմն 'ի հրեշտակաց երկնից. որպէս և արար մանկանն տօբիայ, տայ և քեզ զոմն բարի և հաւատարիմ:

* Արդ այնպիսի անձն, պարտի լինել վասն քո որպէս զմի հրեշտակ: Ուստի յորժամ գտանիցես զնոյնպիսին, մի՛ մտածեր զնա որպէս զպարզ մարդ ոք; և մի՛ դներ զապաւինութիւն քո 'ի նմա, և մի՛ 'ի մարդկային գիտութիւն նորա, այլ 'ի յԱստուած՝ որ օգնէ քեզ, և միջնորդութեամբ նորին խօսի ընդ քեզ, դնելով 'ի սիրտ և 'ի բերան նորա զայնպիսիս, որք պահանջին վասն բարւոյ քոյ: Վասնորոյ պարտիս դու լսել նմա որպէս հրեշտակի միոյ, որ իջանէ յերկնից առ 'ի առաջնորդել քեզ: Կենցաղավարեա ընդ նմա յայտնի սրտիւ, ամենայն պարզութեամբ, և հաւատարմութեամբ. յայտնելով նմա պարզապէս զբարիս և զչարիս քո՝ թարց խարդախանաց և կեղծաւորութեան իմիք: Եւ՛ այսու կերպիւ, բարիս քո լինի քննեցեալ և հաստատի, և չարիս քո ուղղեցեալ և բժշկեցեալ.

Նա

նա և լինիս դու թեթևացեալ և զօրացեալ 'ի նեղութեան քում . կարգաւորեալ և կանոնաւորեալ 'ի մխիթարութեան քում . Ունեա՛ զմեծագոյն ապաշխարութիւն իմ 'ի նա , խառնեալ ընդ միոյ մաքրագոյն պատուոյ : այնպէս՝ զի մի՛ նուաղեցուսցէ պատիւն զկէտ մի յապաշխարութենէն , և ապաշխարութիւն մի՛ արգելուցու կէտ մի զպատիւն : Ապաշխարեաց 'ի նա , նկատմամբ միոյ դատեր դէպ 'ի հայրն : պատուեա՛ զնա ապաշխարութեամբ , նկատմամբ որդւոյ միոյ դէպ 'ի մայրն : Վերջապէս , այս բարեկամութիւս պարտի գոլ զօրեղ և քաղցր , բոլորովին սուրբ ; բոլորովին սրտագին , բոլորովին աստուածային , և բոլորովին հոգևոր :

* Նո՛ վանկ ընտրեա՛ ( առէ աւելիս ) 'ի հազարէ զմի ոմն : բայց ես ասեմ , ընտրեա՛ 'ի բիւրոց : Քանզի կարէ պատահիլ , թէ մինն 'ի հազարէ չիցէ ընդունակ պաշտօնի այսորիկ : զի այնպիսին պարտի գոլ լի սիրով , գիտութեամբ , և խոհեմութեամբ . և եթէ մինն 'ի յերից մասանց այսոցիկ պակասիցի 'ի նմանէ , արշաւեսցէ լինել 'ի յորոգայթն : Բայց ասեմ քեզ վերստին , ժտեա՛ 'ի Տեառնէ , և 'ի գտանելդ զնա՝ օրհնեա՛ և բարեբանեա՛ զԱստուածային հանդիպաւորութեան . կաց այնուհետև հաստատ , և մի՛ խնդրեր զայլ . մանաւանդ զնա՛ պարզապէս , խոնարհաբար , և համարձակօրէն ; զի առնես զերջանկագոյն ճանապարհ իմ :

## Յաղագս թէ պիտոյ է ուսանիլ զմաքրութիւն Հոգւոյ:

## Գլուխ · Ե:

ԾԱղիկք ( ասէ Տէրն փեսային ) երեւեցան յերկրի մերում · ժամանակ յատանելոյ, և կտրելոյ եհաս · երգ · 2·12: Զինչ են ծաղիկք սրտի մերոյ ո՞չ սիրահար ա͞յ, եթէ ոչ բարի ըղձակերտութիւնքն: Արդ նախ քան թէ սկսանիցեն երեւիլ, պիտոյ է զձեռն ձգել 'ի մանգաղն, առ 'ի կտրել 'ի խղճմտանաց մերոց զբնաւ մեռեալ և զաւելորդ գործս:

Օտար դուստրն՝ առ 'ի լինել հարսն իսրայէլացւոց, պարտ էր մերկանալ զհանդերձն գերութե͞ իւրոյ, և կտրել զեղունգսն, և գերծել զհերսն: Եւ հոգին՝ որ հառաջէ առ պատիւն գոլոյ հարսն Որդւոյն ա͞յ, պարտի մերկանալ զհին մարդն, և զգենուլ զնորն՝ թողլով զմեղս · և յետոյ կտրել և գերծել զբնաւ տեսակս արգելմանց, որք հեռացուցանեն զնա 'ի սիրոյն ա͞յ: Այս է նախկին առողջութիւն մեր, մինչ մաքրիմք 'ի բնաւից մեղանչական խոնաւութեանց մերոց:

Ս͞բն Պօղոս 'ի միում կիտոջ բոլորապէս մաքրեցեալ եղև միով կատարեալ մաքրութե͞ · ո͞պ և եղև նաև Սրբուհի Մարիամ մագդաղենացին · սրբուհի Կատարինէ Ճենովացին · սրբուհին Փէլաճիա · և այլք ոմանք: Բայց այս եղանակս մաքրութե͞, է բոլորովին սքանչելական, և արտաքոյ կարգի 'ի շնորհս, ո͞պ յարութիւն մեռելոց 'ի բնութիւնս: Յաղագս որոյ մեք ոչ պարտիմք ձկտիլ առ այս: քան զի կարգաւորական մա-

քրութիւն

քրումն և բժշկումն, թէ խյէ հոգւոյ՝ և թէ մարմնոյ, ոչ լինի՝ եթէ ոչ սակաւ առ սակաւ յաջողմամբ, պատճառ, և ժամանակաւ։

* Հրշտկքն ունէին զթևս 'ի վերայ սանդխտոյն յակոբայ։ Բայց այնու ոչ թռչէին, այլ մանաւանդ ելանէին և իջանէին կարգաւ յաստիճանէ յաստիճանս։ Հոգին, որ ելանէ 'ի կացութէ մեղաց առ ջերմեռանդութիւն՝ նմանի արշալուսի, որ բարձրանալով ոչ արտաքսէ խսկոյն 'ի նոյն կիտոջ զխաւարն, այլ սակաւ առ սակաւ։ Աւաքումն, և բժշկութիւն (ասէ ափոռխամոս) որ լինի սակաւ առ սակաւ, միշտ է աներկրորդոյն։ Հիւանդութիւքն սրտի՝ որպէս և մարմնոյ, գան կառօք և երիվարօք, բայց դառնան 'ի յետս հետևակ և յամրընթացք։ Պարտ է ուրեմն (ո՛վ սիրահարէ) դոլ զօրաւոր և համբերող յայսմիկ ձեռնամխութեան։

Ո՜հ թէ. ո՛րպիսի բարեպաշտութիւն է այն հոգւոյն, որ զկնի կրթելոյ ամամբք ամսօք 'ի ջերմեռանդութիւն, և յետոյ տեսանելով զինքն ենթարկեալ բազմաց անկատարելութեանց, սկսանի անհանգստանալ, խռովիլ, և շուարիլ հոգւով. թողլով տատանիլ զսիրտն 'ի փորձութէ, 'ի բաց ձգելով զամ ինչ, նաև դառնալով 'ի յետս։ Բայց 'ի միւս կողմանէ ո՜չ ապաքէն այս է ծայրագոյն խմն որոգայթ հոգւոյ, որք հաւատան դոլ մաքրեցեալք յանկատարելութեանց իւրեանց՝ յառաջնում աւուր մաքրութեան իւրեանց՝ միով ներհակ փորձութեամբ, համարելով զինքեանս դոլ կատարեալք, և դնելով զինքեանս առ 'ի թռչիլ թարց թևոյ։ Ո՛վ սիրահարդ իմ. այսպիսիքս են 'ի մեծագոյն որոգայթի վերստին անկանելոյ, գոլով նախ քան զժամանակն թողեալք 'ի ձեռաց բժշկաց։ Ո՜հ. իննաներ է ջեղ յաննել հաննաա (ասէ մարզիրեն) արդ արեդյեփոյ դի նոսի-



193

ցէ 'ի նմա : Արդ նոյն ինքն, որ կրթէր յայսմիկ ընթերցման, արդէն գոլով լուսանեցեալ և մաքրեցեալ, տակաւին խնդրէ մաքրիլ նորա՛պ:

* Կրթութիւն մաքրութեան հոգւոյ՝ ոչ կարէ, և ոչ պարտի եղերիլ, եթէ ոչ ընդ կենաց մերոց: Մի՛ ուրեմն խռովեալ վրդովիցուք վ̃ անկատարութեան մերում, զի կատարելութիւն մեր կայանայ 'ի պատերազմին, և ոչ կարեմք պատերազմիլ՝ թարց տեսանելոյ զնա, և ոչ յաղթել՝ թարց հանդիպելոյ նմա: ուստի յաղթութիւն մեր ոչ կայանայ 'ի յոչ զգալն զնա, այլ 'ի յոչ հաւանիլն:

Արդ թէպէտ ընկալնանի 'ի նոցանէ ձանձրութի և աշխատութի իմն, սակայն այս ոչ է հաւանիլ այնմ:

Ուրեմն պիտոյ է. զի սակս կրթութեան խոնարհութեան մերոյ, հարցեմք մեք երբեմն վիրաւորեցեալք յայսմիկ հոգևոր պատերազմի: սակայն մի՛ համարիցուք զմեզ արդէն յաղթեցեալս, եթէ ոչ յայնժամ, մինչ կորուսանիցեմք զկեանն, և զզօրութիւն: Բայց անկատարելութիւնքն և ներելի մեղքն, ոչ կարեն բառնալ 'ի մէնջ զհոգևոր կեանն: քանզի նա ոչ կորուսանի, եթէ ոչ մահացու մեղօք: Մնայ մեզ ուրեմն այս միայն, զի մի՛ հեղգասցուք հոգւով: Փրկեա՛ զիս ասէր Դաւիթ 'ի չարաճճարութէ պայքարանալոյ, և 'ի մրրկեալ նեղութէ: Այս է մի երջանիկ յատկութի վ̃ մեր յայսմիկ պատերազմի, զի մեք լինիցուք միշտ յաղթօղք, միայն թէ կամիցիմք պատերազմիլ և մարտնչիլ:



## Յաղագս նախկնոյ մաքրման, որ է 'ի մահացու մեղաց :

### Գլուխ · Զ.

Առաջին մաքրումն՝ որ պարտ է եղանել, է մաքրումն 'ի մահացու մեղաց : և հերքման առնելոյ զնա՝ է նորին խորհուրդն խոստովանութեն : Խնդրեա՛ դու ( որքան կարես ) զառաւել արժանաւոր խոստովանահայր մի , և առ 'ի ձեռն զփոքրիկ գրգուկ իմն յայնց գրեանց , որք են շարադրեցեալք առ 'ի օգնել խղճմտանաց , վն բարեպէս խոստովանելոյ · ովք են գրեանքս այսոքիկ , Կրանաթա , Պրունո , Արիաս , Աւճերօ , Ճիւստինելի , և զայլս նմանս : Եւ ընթերցիր մտաւորութբ , և առնշանադրեա՛ կէտ առ կէտ , թէ ո՛րով, և յի՞նչ վշտացուցեր դու զած , սկսանելով 'ի ժամանակէ այնմանէ՝ յորում ունեցար դու զկիրառումն բանականութեն , մինչև ցներկայ ժամն : Եւ եթէ ոչ հաւատարիմանաս դու քոյոյ յիշողութեն , գրեա՛ զայնս 'ի գիր՝ զորս նշանեցեր , և այսու կերպիւ ժողովեալ և պատրաստեալ զմեղանչական խառնաւութիւնն խղճմտանաց քոց · անարգեա՛ և 'ի բաց ձգեա՛ զայնս , այնքան մեծագոյն զզուանօք և ատաճութբ , որքան սիրտն քո կարէ ունիլ , մտածելով զայս չորս իրս : Նախ , զի կորուսեր մեղօք զշնորհն այ : Երկրդ , զի թողեր զբաժինն քո դրախտին : Երրրդ , զի ընդունեցեր զյաւիտենական պատիժն դժոխոց : Չորրդ , զի հրաժարեցար 'ի տեսութէ , և 'ի յաւիտենական սիրոյն այ :

* Դու բարեպէս տեսանես ո՛վ սիրահարդ իմ, որ ես խօսիմ աստ յաղագս միոյ ընդհանրական խոստովանութեան, որ ճշմարտապէս ստորասեմ, ոչ գոլ այն միշտ բացարձակապէս հարկաւոր: Բայց նկատեմ ես, թէ նա լինի քեզ օգտաւէտ յայսմիկ սկզբան, որոյ վասն եւ յանձնեմ զնա քեզ:

* Պատահի բազմիցս, զի հասարակական խոստովանութիւնքն այնոցիկ, որք կեան միով հասարակ եւ ռամկական կենօք, լի լինին մեծամեծ պակասութեամբք: Քանզի երբեմն մարդ՝ կամ ոչ պատրաստի բնաւ, կամ յոյժ սակաւ պատրաստի, կամ թէ եւ ոչ ունի զզղջումն այն՝ որ պահանջի: Եւ մանաւանդ պատահի, զի բազմիցս մարդ գնայ առ ՚ի խոստովանիլ՝ միով լռեալ կամօք դառնալոյ անդրէն ՚ի մեղս, այնու՝ զի ոչ կամի զգուշանալ եւ խոյս տալ ՚ի յառիթից մեղաց, եւ առնուլ զհարկաւոր դեղս առ ՚ի ուղղել զկեանս: Եւ՛ ՚ի բնաւ այսպիսի պատահմունս՝ պիտոյանայ ընդհանրական խոստովանութիւն, առ ՚ի հանդարտեցուցանել զհոգին:

* Բաց ՚ի յայսմանէ. ընդհանրական խոստովանութիւն կոչէ զմեզ՝ առ ճանաչումն մերոյ ինքեան եւ շարժէ զմեզ առ ՚ի փրկաւէտ պատկառումն՝ պատճառաւ անցելոյ կենաց մերոց: Եւ առնէ զմեզ զարմանալ ՚ի վերայ ողորմութեանն այ, որ սպասէ մեզ համբերութեամբ, եւ քաղցրացուցանէ զսիրտն մեր, լայնացուցանէ զոգիս մեր, զարթուցանէ ՚ի մեզ զբարի առաջադրութիւնս, տայ զառիթ հոգեւոր հօր մերոյ՝ առ ՚ի տալ մեզ զխրատս՝ որք լինին առաւել պատշաճաւորք կացութեան եւ որպիսութեան մերում, եւ բանայ զսիրտն մեր առ ՚ի ունիլ զհաւատարմութիւն բարեպէս բացայայտելոյ ՚ի հետեւեալ խոստովանութեան:

* Խօսելով ուրեմն յաղագս միոյ ընդհանրական նորոգմանէ սրտի մերոյ, եւ յաղագս միոյ ընդ-

հան-

հանրական դարձմանէ հոգւոյ մերոյ առ ած՝ առ 'ի ներածիլ 'ի ջերմեռանդ կեանն․ լինձ յոյժ պատկանաւոր թուէր ո՛չ սիրահար ոք, զի խրատիցեմ զքեզ վասն ընդհանրական խոստովանութեան։

## Յաղագս Երրորդի մասին, որ է 'ի խուսափել մեղաց։

### Գլուխ ․ Է․

Թէպէտ բնաւ իսրայէլացիքն ներգործութեամբ ելին 'ի յերկրէն եգիպտացւոց․ բայց սակայն ոչ ելին բնաւին ըղձիւք։ Այսպէս է, զի բաղձումք 'ի նոցանէ ցանկէին 'ի յանապատին աղագաւ ոչ ունելոյ զսոխ, և զսխտոր եգիպտոսի։ Այսպէս զոմն բազում ապաշխարողք, որք ներգործութեամբ ելանեն 'ի մեղաց, բայց ոչ թողուն զըղձն մեղաց։ Ո՞ Թէպէտ յառաջագրեն առ 'ի ոչ մեղանչել ևս, սակայն այս է հակամարտութեամբ իւիք, այսինքն՝ զի պարտին զրկել և հրաժարել 'ի յանիծեալ հեշտութենէ մեղաց։ Հրաժարին և հեռանան սիրտքն նոցին 'ի մեղաց, բայց այսու ոչ թողուն զդարձումն և զհակումն 'ի յայն կողմն բազմիցս, որպէս արար կինն ղովտայ դէպ 'ի սոդոմ։

Այնպէս հրաժարեսցեն 'ի մեղաց, որպէս և հրաժարեն հիւանդքն 'ի սեխոյ, որք ոչ ուտեն զայն՝ զի բժիշկն նց սպառնայ զմեռանիլ եթէ ուտիցենն։ Բայց վրդովին սակս այսորիկ ժուժկալութեան, խօսին և վիճին ընդմանէ, թէ ո՛րդեօք կարելի իցէ ուտելն, և կամ գոնեայ կամին հոտոտալ, և երջանիկ համարին զայնս, որք կարեն ուտել զնա։

զնա ։ Թէպէտ այսու կերպիւ հրաժարին ժամանակ ինչ 'ի մեղաց՝ Թոյլ և հեղգացեալ ապաշխարողքս այսորիկ. բայց այս է չար կամօք, զի կամին՝ թէ կարիցեն մեղանչել Թարց դատապարտեցեալ գոլոյ ։ Խօսին հաճութբ և հաւանութբ զմեղաց, և երջանիկ համարին զայնս, որք գործեն զնա ։

* Այր ոք, որ յառաջադրեալ է յինքեան վրէժխնդիր լինիլ Թշնամւոյն, և փոխէ զկամս իւր 'ի խոստովանութն. բայց զկնի սակաւուց տեսանի նա 'ի մէջ բարեկամաց սրտմտութբ ասել ։ Եթէ ոչ իցէր երկիւղն այ՝ այսպէս և այնպէս առնէի ։ և եթէ օրէնքն ածային ոչ իցէր դժուարին 'ի ներել այսմ մասին, լաւապէս գիտէի ես զինչ ։ Արդ Թէպէտ տեսանի այս խղճալի մարդս՝ Թէ իցէ արտաքոյ մեղաց, սակայն նա է բորբոքեցեալ առ մեղս համայնիւ բղձիւ իւրով, և գոլով ներգործութբ արտաքոյ եգիպտոսի. սակաւին անդ զբաղի բղձիւ խստորոյ և սոխի՝ զորս սովոր էր ուտել ։ Որպէս և առնէ նաև անպարկեշտ կին ոմն, որ Թէպէտ ատէ և անարգէ զչար սէրն իւր. սակայն այսու ամիւ հաճի բոլորովին՝ սիրահարեցեալ և ցանկացեալ գոլ 'ի յայլոց ։ Ո՜հ. զի այսպիսին է 'ի մեծագոյն որոգայթի անկանելոյ ։

* Արդ ո՜վ սիրահար այ, որովհետև դու կամիս պատրաստիլ առ ճշմրտն ջերմեռանդութն. ոչ միայն պարտ է քեզ Թողուլ զմեղս, այլ և պիտոյ է ևս մաքրել բոլորովին զսիրտն քո 'ի յամէից բղձից, որք կախին 'ի մեղաց ։ Քանզի բաց 'ի լինելոյ քեզ որոգայթ վերստին անկանելոյ այսոքիկ Թշուառական բղձկունքս, առնեն ևս հոգւոյ քո մշտնջենապէս հիւանդանալ, որ նա այնու ոչ կարիցէ առնել զբարեգործութիւնս յօժարապէս՝ հոգունակապէս՝ և յաճախապէս, յորում

կայա-

կայանայ էութեն ճշմարիտ ջերմեռանդութեն ։

Անձինքն այնոքիկ, որք ելեալք են 'ի կացութէ մեղաց, որք ունին տակաւին զայսպիսի ըղձկունս և խօլթութիւնս, ինձ թուի թէ նմանք են աղջկանց՝ որք ունին զգեղին դոյնս, որք թէպէտ ոչ են արդէն տկարք, սակայն տկարութիւնք են գործքն և արարմունքն նոցին ։ Քանզի ունեն թարց համբղութեն, ննջեն թարց հանգստութեն, ծիծաղին թարց զուարճութեն, և մանաւանդ վաստակին 'ի յընթացման ։ Նմանապէս այսոքիկ անձինքս՝ այնքան մեծ հեղգութիւնք առնեն զհոգևոր բարին, որք բառնան զբոլոր շնորհն 'ի բարի կրթութէ իւրեանց . որք են սակաւք թուովք, և փոքերք ներգործութիւնք ։

# Յաղագս Կերպի առնելոյ զայս Երկրորդ Մաքրումն ։

## Գլուխ · Ը ·

Արդ առաջին կերպն և հիմն այսորիկ երկրորդի մաքրմանս, է կենդանի և զօրեղ ըմբռնումն մեծագոյն չարին, զոր առնէ մեզ մեղքն, միջնորդութիւ որոյ մտանեմք մեք 'ի մի խորին և 'ի սաստիկ զղջումն ։ Վասն զի ոչ զղջումն՝ միայն զի իցէ ճշմարիտ, թէ և որքան և փոքր իցէ, մինչ առակցեալ է 'ի նա զօրութիւն խորհրդոյն, բաւականապէս մաքրէ զմեզ 'ի մեղաց, այսպէս մինչ նա է մեծ և սաստիկ՝ մաքրէ զմեզ յամենից ըղձից, որք կախին 'ի մեղաց ։

Ատելութիւն իմն, կամ փոքր և թոյլ նախանձ իմն՝ առնէ զմեզ դարշել յայնմանէ, զոր ատեմք .

և առնէ զմեզ փախչել 'ի յընկերակցութենէ նորին: Բայց եթէ իցէ այս՝ ատելութիւն իմն մահացու և բռնաւոր, յայնժամ ոչ միայն փախչիմք և գարշիմք յայնմանէ՝ առ որ զնա ունիմք, այլ և ունիմք մանաւանդ զնա 'ի տհաճութեան, նա և ոչ կարեմք տանիլ կենցաղավարութեան մերձաւորաց, ազգականաց, և բարեկամաց նորին. ոչ և պատկերի նորին, և ոչ բնաւ իրի իմիք՝ որ նմա պատկանի:

* Այսպէս և յորժամ ապաշխարողն՝ ոչ ատէ զմեղս, եթէ ոչ միով թեթև ատելութեամբ ( միայն թէ իցէ ճշմարիտ զղջմամբ ) նա բարեպէս և ճշմարտապէս յառաջադրէ՝ այլ ոչ և մեղանչել: Բայց յորժամ նա ատէ հզօր և կարող զղջմամբ միով. յայնժամ ոչ միայն անարգէ և ատէ զմեղս, այլ և զբնաւ իղձս յօժարութեան, և հակմունս առ մեղս: Պարտ է ուրեմն ո՛վ սիրահար իմ առնել առաւել մեծագոյն զղջումն և զփոշիմանութիւն մեր, որքան իցէ կարելի, մինչև տարածիցի առ իւրաքանչիւր փոքրագոյն իր, որ պատկանի առ մեղսն:

Այսպէս Մագդաղենացին 'ի դարձմանն իւրում, այնպէս կորոյս զհաճութիւն մեղաց, և զունեցեալ հեշտութիւն 'ի նոցունց, մինչ զի ոչ երբեք և մտածեաց զնա: Եւ Դաւիթ վկայէր՝ ոչ միայն ատել զմեղս, այլ և զամ ճանապարհս և զշաւիղս նց: 'Ի յայս կէտս կայանայ վերանորոգումն հոգւոյ, զոր այն մրգրէն նմանեցուցանէ նորոգման արծուոյ.

* Արդ առ'ի հասանիլ ըմբռնման և զղջման այսորիկ, պարտ է զի ներկրթիցիս հոգունականս 'ի հետևեցեալ մտածութիւնս, առ որս գոլով դու բարեաւ կրթեցեալ, կարես արմատախլել 'ի սրտէ քումմէ միջնորդութեամբ շնորհացն այ՝ զամ մեղս, և զգլխաւոր ըղձանձկութիւնս որ առ մեղս: Քան-

զի

զի առ այս վախճան ուղղեալ զնմ՟ շարակարգե-ցի : Դու արասցես կնմ՟ մի զկնի միւսոյ, և՟ որում առնշանադրեցի քեզ աստ ; ոչ առնելով՝ եթէ ոչ զմինն յիւրաքանչիւր աւուր. և եթէ իցէ կարելի՝ արասցես զայն՝ ի յառաւօտու, որ է առաւել յատուկ ժամանակ բնաւից գործոց՝ հոգւոյ և մտաց :

# ՄՏԱԾՈՒՄՆ · Ա։

## Յաղագս ստեղծման :

### Գլուխ · Թ։

Նախապատրաստութիւն :

1. Դիր զքեզ առաջի ներկայութեան այ՟ :
2. Աղաչեա զնա, զի ներշնչեսցէ՝ ի քեզ :

Մտածումն :

1 Մտածեա, թէ ո՛րքան ամք հոսեալք և անցեալք են, յորս դու ոչ էիր յաշխարհի. և թէ գոյն քո էր մի պարզ ոչինչ : Ո՛ւր էաք մեք ո՛վ հոգի իմ՝ ի յայնքան ժամանակս : Աշխարհն էր արդէն այնքան ժամանակ, և զմէնջ ոչ էր ըրոյց իմն բնաւ :

2. Այ՟ արար զքեզ ելանել՝ ի յայսմանէ ոչընչէ, առ՝ ի առնել զքեզ այն որ, ոպ՟ եսդ այժմ, թարց խմիք ունելոյ զպիտոյութիւն իմն՝ ի քէն, այլ միայն արար զայս վն՟ իւրոյ բարութե՟ :

3. Մտածեա զգոյն, զոր ետ քեզ այ՟. Զի այս է առաջին գոյն երևելի աշխարհի, ե՟ունակ յաւի-տենականաց գոլոյ, և կատարելագոյս միաւորելոյ ընդ հանդիսավեհութեան իւրոյ :

Իսկ,

## Իղձք, և Առաջադրութեք.

1. Խոնարհեցո՛ զքեզ խորապէս առաջի ա՟յ, ասելով 'ի սրտէ ըստ մարգարէին: Ո՛վ Տ՟ր իմ, ես եմ առաջի քո ո՟չ զուտ ոչինչ իմն, և ո՞րպէս ժխտեցեր դու առ'ի ստեղծել զիս: Վա՜յ ինձ ով հոգի իմ, զի դու սուզեալ էիր 'ի յայն անհուն ոչընչութն, և անդ լինէիր տակաւին այժմ, եթէ ոչ հանիցէր զքեզ ա՟ծ անտի, և զի՞նչ արդեօք կարէիր առնել դու 'ի մէջ այն ոչընչին:

2. Շնորհակալ լեր զա՟յ: Ո՛վ Ամենամեծ, և Ամենաբարի ստեղծող իմ. որքան պարտականութի՟ ունիմ քեզ, որովհետև հաներ զիս 'ի միջոյ ոչընչէ, առ'ի առնել զիս քոյով ողորմութ՟բ՝ այն որ, որպիսի եմ այժմս: Եւ՞ զինչ արարից երբէք ես, առ'ի արժանապէս պատուհել, և փառաբանել զանուն քո ս՟բ, և շնորհակալ լինիլ զանչափ բարերարութե՟ քումդ:

3. Պատկառեաց: Բայց վայ է ինձ, ով ստեղծող իմ, զի փոխանակ միաւորելոյ զիս ընդ քեզ սիրով, եղէ ապստամբ միով անկարգ և սանձարձակ ըղձիւ, անջատելով և հեռացուցանելով զիս 'ի քէն՝ առ'ի մերձենալ մեղաց և անօրէնութե՟. ոչ պատուելով և փառաւորելով ես զքո բարութիւնդ, որպէս թէ ոչ իցէիր ստեղծող իմ:

4. Կորացո՛ զքեզ առաջի ա՟յ: Ծանիր ո՛վ հոգի իմ, զի Տ՟ր Ա՟ծ քո նա է, որ արար զքեզ. ք՟զի ոչ դու ինքդ արարեր զքեզ: Ո՛վ ա՟ծ իմ, ես եմ գործ ձեռաց քոց:

Ուրեմն ոչ կամիմ ես երբէք ինքնին հաճոյանալ ինձ, զի ես 'ի կողմանէ իմմէ եմ ոչինչ իմն: Ընդ է՞ր հպարտանաս և անապարծիս ո՛վ հող և մոխիր: Եւ՞ ընդ է՞ր բարձրավզիս ո՛վ զուտ ոչինչ: Արդ առ'ի խոնարհեցուցանել զիս, ես կամիմ

առ_

առնել զայսպիսի, և զայնպիսի բարի երակու-
Թիս . և կամիմ համբերել այսպիսի, և այնպի-
սի նախատանաց: Կամիմ փոխել զվարս իմ, և
հեռանալ արդէն ատեղծողին իմոյ, և պատուել
զկացուԹիւն գոլոյն, զոր նա ետ ինձ, ընծելով
բոլորովին զկամեցողուԹիւն իմ ընդ հնազանդու-
Թե կամաց նորին . այսու կերպիւ, որք ցուցա-
նիցեն և առնշանադրիցեն ինձ, և կամ այնու՝
որ ուսանիցիմ 'ի հոգևոր հօրէ իմմէ:

## Եզրակացութիւն:

1. Շնորհակալ լեր զայ: Ով հոգի իմ օրհնեա՛ զածն քո, և բնաւ ներքնայինքն իմ գովեսցեն սր զանուն նր: քանզի սակս բարուԹե իւրոյ էհան զիս 'ի յոչընչէ, և վս ողորմուԹե իւրոյ ստեղծեաց զիս:

2. Մատո՛ զքեզ: ո՛վ Ած իմ, ընծայեմ և մատուցանեմ քեզ զայն գոլն և լինելն, զոր դու ինձ պարգևեցեր . բոլորով սրտիւ քեզ ընծայեմ և մատուցանեմ:

3. Աղաչեա՛: Ով ած իմ զօրացո՛ զիս յայսմիկ ըղձի և յառաջադրուԹե: Ով երանուհի Կոյս Մարիամ, յանձնեա զիս ողորմուԹե որդւոյ քո, ընդ այնոցիկ բնաւից, որոց վս պարտիմ աղօԹել . և այլն: Հայր մեր . և Ողջոյն քեզ:

* 'Ի վերջն աղօԹից, մինչ անցանէ փոքր ինչ ժամանակ, ժողովեա՛ զփոքրիկ փունջ մի ծաղկանց 'ի ջերմեռանդ մտածուԹեց, զոր արարեր առ 'ի հոտոտել զնա 'ի մէջ աւուրն այնորիկ:

# ՄՏԱԾՈՒՄՆ · Բ։

## Յաղագս վախճանի՝ որոյ սակս ստեղծեցեալ եմք ։

### Գլուխ · Ժ ·

Նախապատրաստութիւն ։

1. Դիր զքեզ առաջի ներկայութեան այ̃ ·
2. Աղաչեա՛ զնա, զի ներշնչիցէ 'ի քեզ ։

Մտածումն ։

1 ԱԾ Ոչ եդ զքեզ յայսմիկ աշխարհի սակս խնդիր պիտոյութեան իւրոյ՝ զի զայն ունիցէր 'ի քէն, որ ըստ ինմ ոչ կարէս բնաւ օգտակար լինել նմա, այլ միայն առ 'ի գործածել 'ի քեզ զբարութիւն իւր, տալով քեզ զշնորհս, և զփառս։ Յաղագս որոյ՝ ետ քեզ զիմացականութիւն առ 'ի ճանաչել զնա, զյիշողութիւն առ 'ի յիշել զնա, զկամք առ 'ի սիրել զնա, զերևակայութիւն առ 'ի ներկայացուցանել զիւր՝ բարի գործսն, զաչս առ 'ի տեսանել զարմանալիսն արարածոց, զլեզու առ 'ի գովել զնա, այսպ̃ և զայլս։

2. Գոլով դու ստեղծեալ և եդեալ յայսմիկ աշխարհի այսպիսեաւ դիտաւորութ̃ · պարտ է ուրեմն 'ի բաց ձգել և արհամարհել 'ի քէն բնաւ գործք, որք են հակառակք այսմիկ դիտաւորութեան ։ և այնոքիկ իրք՝ որք ոչ ծառայեն այսորիկ վախճանի, պարտին լքել և արհամարհել որպ̃ ունայն և աւելորդ ։

3. Մտածեա՛ զթշուառութիւն աշխարհի · քզի որ ոչ մտածէ զայս, կենցաղավարի այնպէս՝ որպ̃ թէ ոչ իցէ ստեղծեցեալ վս̃ այլոյ վախճանի, եթէ ոչ

ոչ միայն առ՚ի շինել տունս , տնկել զծառ , ժողովել զհարստութիւնս , և ուրախանալ փափկապէս :

## Իղձք . և Առաջադրութիւնք :

1. Պատկառեմ , ներբերելով ՚ի միտս քո զթշուառութիւն աշխարհի , որ գոլով այնքան մեծ : Բայց այսու ամի՞ խորհի զունայնութեանց , և ոչ խորհի զվախճանէ իւրմէ : Վա՜յ ինձ , զի՞նչ խորհէի ես ո՛վ Ած իմ , յորժամ ոչ խորհէի զքէն , զի՞նչ յիշէի ես , մինչ ոչ յիշէի զքեզ , զինչ սիրէի , յորժամ ոչ սիրէի զքեզ : Վա՜յ ինձ , զի ես պարտէի կերակրել ճշմարտութբ , և լցեալ եմ ունայնութբ , և ծառայեմ աշխարհի , որ ոչ է արարեալ վասն այլոյ՝ քան առ՚ի ծառայել ինձ :

2. Վատաբանեմ զանցեալ կեանս քո : Հրաժարիմ ես ՚ի ձէնջ ո՛վ սնոտի խորհուրդք , և անօգուտ մտածմունք , քամահեմ զձեզ ո՛վ եպերելի և ունայն յիշեցմունք , անգոսնեմ և լքեմ զձեզ ով անհաւատարիմ ևանօրէն բարեկամութիւնք , դատապարտելի և թշուառելի ծառայութիւնք , ապերախտ շնորհակալութիւնք , և վնասակար ինքնահաճութիւնք :

4. Դարձի՛ր առ ած : Ե՞ւ դու ո՛վ Ած իմ և Տր իմ . դու լեր այժմ , և առ յապայ մտածութեանց և խորհրդոց իմոց առարկայ . մի՛ երբէք մերձեսցի միտս իմ ՚ի հեշտութիւնս , որք ոչ են հաճոյք քեզ : Յիշողութիւն իմ լնասցի յամ աւուրս կենաց իմոց ՚ի մեծութէ գթութէ և բարերարութէ քո , որ այնքան քաղցրապէս ՚ի կեր առնուս դէպ առ իս : Դու լե՛ր հեշտութի սրտի իմոյ , և համեղութի ըղձի իմոյ :

Ուրեմն ո՛րպիսիք ևս իցէին փափկութիւնքն և հեշտութիւնքն , առ որս ես հպէի , ո՛րպիսիք ևս իցէին

լիցէին այն ունայն գործքն և արարմունքն, յորս ծախեցի զբոլոր օրն իմ. և ո՛րպիսիք՝ ևս լիցէին այն ըղձկունքն, որք ունէին դրաւեցեալք զսիրտն իմ, այսուհետև լիցին ինձ 'ի զղջումն և 'ի զարշութիւն. և վ՟ այսպիսւոյ վախճանի ծառայեցից ես որով և իցէ դեղօք:

## Ընծայացութե:

1. Շնորհակալ լեր զմյ, որ ստեղծեպց զքեզ վ՟ միոյ այնքան գերազանց վախճանի: Ստեղծեր զիս ո՜վ Տէր իմ վ՟ քո առ 'ի վայելել զանչափութիւն փառաց քոց յաւիտենականացն: յերբ լիցէ, զի արժանի լինիցիմ. և յերբ՝ զի օրհնեցից զանուն քո մբ. ը պարտաւորութե իմոյ:

2. Մա՛տո՛: Ես մատուցանեմ քեզ ո՜վ սիրելի ստեղծող իմ, զըննաւ իղձս և զառաջադրութիւնս իմ յամ սրտէ, և յամ մտաց իմոց:

4. Աղաչեմ: Աղաչեմ զքեզ ո՜վ մծ իմ, զի ընկալցիս զբարի իղձս, և զառաջադրութիւնս իմ, և տացես հոգւոյ իմոյ զքոյդ օրհնութիւն, զի կարողասցի նա կատարել զամենայնը կամս քո, արդեամբ արեան որդւոյ քո, որ հեղաւ 'ի վ՟ խաչին, և այլն:

Արա՛ յետոյ զփունջ մի 'ի ծաղկանց ջերմեռանդութե, ոպ և ասացի յառաջն:

ՄՏԱ.

# ՄՏԱԾՈՒՄՆ . Գ:

## Յաղագս Բարերարութեանց ԱՅ

## Գլուխ . ԺԱ:

Նախապատրաստութիւն :

1. Դիր զքեզ առաջի ներկայութեն նմա :
2. Աղաչեա՛ զնա, զի ներշնչեսցէ 'ի քեզ :

Մտածումն :

1 Մտածեա՛ զմարմնական շնորհսն, զորս ած ետ քեզ . զծ զմարմինն, և զանդորրութին. առ 'ի պահել զնա. զառողջութի, զմխիթարութի՝ և զհանգստութի վնր . նաև զբարեկամս և զօգնութիս : Արդ զայս ամ մտածեա՛, բաղդատելով զքեզ առ այլ անձինս, որք առաւել արժանաւորք են քան զքեզ, բայց են զրկեցեալք յայսոցիկ բարերարութեց : Քանզի ոմանք են դարշատեսիլ մարմնով, և տկարացեալ առողջութք, և խեղացեալ անդամօք : Ոմանք ենթադրեցեալք ամ կերպ նախատանաց՝ արհամարհանաց՝ և անպատուու՛թեց, և ոմանք ևս նեղեալք 'ի յաղքատութէ : Բայց սակայն կամեցաւ ած, զի դու ոչ լինիցէիր մի ոմն 'ի յայսպիսեաց ողորմելեաց, և խղճալեաց :

1. Մտածեա՛ զպարգևս հոգւոյն քոյ : Քանզի գտանին 'ի յաշխարհի բազում ոմանք խելագարք, կատաղեցեալք, անզգայք . և վն ո՞յր պատճառի դու ոչ ես ոչ զմի ոք 'ի նոցանէ . բայց ած արար զքեզ նրբիմաց, և մտացի : Քանի՛ք գտանին, որք են անուսեալք դռեհկապէս, նաև կամ

'է

'ի մեծագոյնի տգիտութեան: սակայն ածային նա_
խախնամութեամբն կամեցաւ զի լինիցիս դու սնու_
ցեալ քաղաքավարութբ, և ազնուականութբ:
3 Մտածեա՛ զՀոգևոր շնորհսն՝ ո՜վ սիրահար
ածյ. զի դու ես մի ոմն 'ի յորդւոց Եկեղեցւոյն, և
ած ուսոյց քեզ զճանապարհն իւր 'ի մանկութե
քումն: Քանիցս անգամ նա ետ քեզ զսբ խոր_
հուրդս իւր, որքան ներշնչմունս, ներքին լու_
սաւորութիւնս, խրատս, և կշտամբութիւնս վասն
քոյոյ ուղղութեան: Քանիցս անգամ ներեաց քեզ
զյանցանս քո, և քանիցս ազատեաց զքեզ 'ի յառ_
թից կործանելոյ, յորում արտադրեցեալ էիր դու:
Եւ բնաւ ժամանակքս այսոքիկ անցեալք, ո՞չ
ապաքէն էին գեղեցիկ առիթ իմն և անդորրու
թեն, առ 'ի յառաջանալ 'ի բարիս հոգւոյ քոյ:
Նկատեա՛ սակաւ մի նրբապէս, և տես. թէ
ոչ ած դէպ 'ի քեզ եղեալ է քաղցր և գթած:

## Իղձք. և Աղաչաւորութիւնք:

1. Զարմացի՛ր 'ի վր բարութեն ածյ: Ո՜հ. որ_
պէս բարի է ածն իմ դէպ առ իս: ո՜հ. որպէս
բարի է սիրտն քո ո՜վ Տր, և որպէս փարթամ
ողորմութբ և առատ գթութբ: Ո՜հ հոգի իմ,
պատմեսցուք միշտ զբազում շնորհսն, զոր նա ա_
րար մեզ:

2. Զարմացի՛ր 'ի վր ապերախտութե քո: Բայց
զ՞ինչ եմ ես ո՜վ Տր, որ դու յիշեցեր զիս: Ո՜հ.
թէ որքան մեծ է անարժանութիւն իմ: Վա՜յ
ինձ, զի ոտնակոխ արարի զբարերարութեն քոյ,
անարգեցի զշնորհսն քոյ չարապէս վարելով, և
արհամարհելով զքո ծայրագոյն բարութիւն:
Հակադրեցի զանդունդն իմոյ ապերախտութեան,
առ անդունդն քոյոյ շնորհաց և բարերարու_
թեն:

4 Զարթի՛ր առ 'ի ճանաչել: Արի՛ ուրեմն ո՜վ
հոգի

հոգի իմ. ոչ կամիմ ես գոլ անհաւատարիմ դէպ առ այս բարերարս ։ Ո՛րպէս հոգի իմ ոչ լիցի արդէն ենթարկեալ այ՟, որ արար զայնքան զարմանալի զշնորհս առիս, և վ՟ս իմ։

Արդ ուրեմն ո՞վ սիրահարդ այ՟, հեռացո՛ զմարմինն քո 'ի պէսպէս հեշտութեանց , և ենթարկեա՛ զնա առ'ի ծառայել այ՟ , որ արար նմա զայնքան բարերարութիւնս։ Հակեա՛ զհոգի քո առ'ի ճանաչել զնա 'ի ձեռն պէսպէս կրթութեան և գործոյ , որք պահանջին առ այսոսիկ ։ Ընկա՛լ հոգունա-կապէս զմիջնորդսն , որք են յեկեղեցւոջ առ'ի փրկել զքեզ և առ'ի սիրել զա՟ծ ։

Այո՞, այսպէս արարից։ Յանձնեցից 'ի յաղօթս, 'ի սրբազնութիւնս, լուսայց զբանս ա՟ծյինս , նաև 'ի գործ ածից զներշնչմունս , և զբարի խոր-հուրդս ։

## Եպրաչայութիւն ։

1. Շնորհակալ լեր զա՟յ սակս ճանաչմանն , զոր այժմ ետ քեզ առ'ի ճանաչել զպարտաւորութիւն քոյ, և զբնաւ զընկալեալ բարերարութիւնս ։
2. Մատո՛ նմա զսիրտն քո, ընդ բնաւից բարի ըղձից քոց ։
3. Աղաչեա՛ զնա , զի զօրացուսցէ զքեզ առ'ի գործ ածել զն՟ն հաւատարմաբար, 'ի ձեռն արդեան մահուան որդւոյ իւրոյ ։ Հայցեա՛ զբարեխօսութիւն Երանուհւոյ կուսին , և ամից ս՟բց։ Հայր Մեր , և Ողջոյն Քեզ ։ Եւ արա՛ զհոգևոր ծրարս ։

# ՄՏԱԾՈՒՄՆ · Գ:

## Յաղագս մեղաց:

### Գլուխ · ԺԲ :

Նախապատրաստութիւն :

1. Դիր զքեզ առաջի ներկայութեան Աստուծոյ :
2. Աղաչեա զնա, զի ներշնչեսցէ 'ի քեզ :

Մտածումն :

1 Մտածեա, թէ որքան ժամանակ է՝ յորմէհետէ սկսար դու 'ի մեղանչել, և տես թէ որպէս 'ի յայնմ առաջին սկզբանն՝ յորում դու սկսար 'ի մեղանչել, բազմապատկեցան մեղքն 'ի սրտի քում. և որպէս 'ի բոլոր օրն աճեցուցեր դու զն̃ն ընդդէմ Աստուծոյ, և ընդդէմ քո · նաև ընդդէմ ընկերին՝ գործով, բանիւ՛, ըղձիւ՛, և մտածութեամբ:

2. Մտածեա զչար յօժարութիւն և զհակումն քո, առ որ այնքան հետևեցար: Եւ՛ այսու երկու կէտիւ՛ տեսցես դու, թէ յանցանքն քո են մեծագոյն թուով քան զհերս գլխոյ քո, և մանաւանդ առաւել քան զաւազ ծովու :

3. Մտածեա մանաւորապէս զմեղքն ապերախտութե̃ քո արարեալ դէպ 'ի յԱստուած, որ է ընդհանրական մեղք իմն, որ տարածի 'ի վերայ այլոց ամենից մեղաց, և առնէ զն̃ն առաւել դարշելի անհընարս : Տես՛ ուրեմն թէ որքան բարերարութի̃ շնորհեաց քեզ Աստուած, և դու անառակաբար վատնեցեր զայնս՝ ընդդէմ կամաց պարգևողին: Եւ՛ եղականամ̃ մտածեա, թէ զոր քան ներշնչմունս ար-

արհամարհեցեր ; և զորքան բարի շարժմունս անօգուտ թողեր; և 'ի վեր քան զիմ՝ որքան անդամ ընկալար զօրհնութիւնս : Եւ՞ արդ՝ ո՞ւր են պտուղքն , և զինչ արարեր զայն պատուական ակունս , որով զարդարեաց զքեզ փեսայն քո : Համայնք իրքս այսոքիկ ծածկեցեալք են 'ի ներքոյ անօրէնութեան քոյ : ո՞րով պատրաստութք ընկալար դու զնա : Մտածեա լաւապէս զայս ապերախտութիւն , որ ած միշտ ընթացեալ յառաջ առ 'ի փրկել զքեզ , և դու միշտ փախեար 'ի նմանէ առ 'ի կորուսանել զքեզ :

## Իղձք, և Առաջադրութիւնք.

1. Ամաչեա վն թշուառութեան , և վն ողորմութեան քոյ : Ո՞վ ած իմ որպէս համարձակեցայց երևել առաջի աչաց քոց : Վա՜յ ինձ , զի ես ոչ եմ այլ ինչ , քան դարշութիւն իմն աշխարհի , նաև դուռ իմն ապերախտութեան և անօրէնութեան : Եւ՞ այս մի թէ կարելի իցէ , որ ես այնքան անհաւատարիմ , և անօրէն լինիցիմ , որ ոչ թողուցում գոնեայ զմի միայն զգայութիւն , նաև զմի միայն զօրութիւն հոգւոյ թարց բծաւորման : Բայց այո՞. զի ապականեցի , և աղտեղեցի : Եւ՞ զի ոչ էանց օր մի կենաց իմոց յորում ոչ իցէի յայսպիսի չար գործս ըղձի՞ : Մի թէ պարտ էր ինձ այսու կերպի՞ չարապէս կենցաղավարել ընդդէմ բարերարութեանց ստեղծողին իմոյ , և ընդդէմ արեամբն իւրով փրկողին զիս :

2. Խնդրեա զներումն , և անկիր առ ոտս Տն քոյ՝ ոպ այլ իմն անառակ որդի , և ոպ այլ ոմն մարիամ մագդաղենացի . և ոպ կին ոմն , որ ապականիցէ զանկողինն առն իւրոյ ամ կերպի՞ շնութե՞, ասելով : Ո՞վ տէր , ողորմութիւն արա ինձ մեղուցելոյս , ո՞վ աղբիւր կենդանի ցաւակցութեան , գթա այս թշուառացելոյս :

C 2 Առա_

3. Առաջադրեա՛մ բարեպէս կենցաղավարել: Ո՛վ
տէր իմ՝ միջնորդութեամբ շնորհաց քոց, այլ ոչ եր
բէք տայցես զիս յաւար մեղաց: Վա՜յ ինձ, զի
յաւէտ սիրեցի զմեղս. բայց այժմ եպերեմ և
անգոսնեմ զնոսա, և զքեզ հայրդ ողորմութեան
գրկեմ, նաև կամիմ կեալ և մեռանիլ 'ի քեզ:

4. Եւ՛ առ 'ի ջնջել զանցեալ մեղս իմ, ամբաս
տանեցից զինքն համարձակօրէն, և ոչ թողից 'ի
նոցանէ և ոչ և մի, զոր ոչ արտաքսեցից:

5. Եւ՛ արարից զայն ամ՟ զոր կարացից, առ 'ի
արմատախլել ամբողջապէս 'ի սրտէ իմմէ զարմատն
մեղաց, և առաւելապէս զայնպիսիսն, որք են
ինձ առաւել վնասակարք:

6. Եւ՛ առ 'ի առնել զայս՝ ընդգրկեցից հաստա
տապէս զմիջնորդսն, որք տրիցեն՝ և ոչ համա_
բերելով զիս երբէք արարեալ զբազումս առ'ի ուղ
ղել զայս քան մեծ մոլորութիւնս:

## Եզրափակումն:

1. Շնորհակալ լեր զԱյ, որ համբերեաց քեզ
մինչև ցայժմ, և ետ քեզ զայս բարի խղճս:
2. Ընծայեա՛ նմա զբոլոր սիրտն քո առ 'ի գործ
ածել զնա:
3. Աղաչեա՛ զնա, զի զօրացուսցէ և արիացու
ցէ զքեզ, և այլն:

# ՄՏԱԾՈՒՄՆ · Ե:

## Յաղագս Մահուան :

### Գլուխ · ԺԳ:

Նախապատրաստութիւն :

1. Դիր զքեզ առաջի ներկայութեան Այ :
2. Խնդրեա՛ զշնորհս նորայ , և այլն :

Երևակերպացո՛ զքեզ գոլ 'ի վերջին տկարու-
թեան 'ի մահճի մահուան , թարց իրիք յուսոյ
զերծման :

Մտածումն :

1 Մտածեա՛ զանհաւաստութիւն աւուր
քոյոյ մահուան : Ո՛վ հոգի իմ
ելանելոց ես դու յաւուր միում
յայսմանէ մարմնոյ : Ե՞ւ յերբ լի-
նելոց է այս : Լինի՞ արդեօք 'ի ձմերայնի , թէ 'ի
յամարայնի : 'ի քաղաքի , թէ 'ի գեղջ : 'ի ցե-
րեկի , թէ 'ի գիշերի: Լինի՞ այս արդեօք յանկար-
ծակի , և կամ թէ իմացմամբ : լինի արդեօք հի-
ւանդութեամբ , կամ թէ պատահմամբ : Ունելո՞ց
իցես արդեօք դու ժամանակ խոստովանելոյ ,
թէ ոչ: Օգնիցի՞ս արդեօք 'ի խոստովանահօրէ ,
և 'ի հոգևոր դաստիարակէ քումմէ , թէ ոչ :
Վա՜յ ինձ , զի մեք վասն այսոցիկ ամենից զոչ ինչ
գիտեմք: միայն այս է հաւաստի մեզ , զի մեռա-
նելոց եմք , և այս այնքան շուտով՝ որքան մեք
կարեմք մտածել :

2. Մտածեա՛ , թէ յայնժամ վերջանայ աշխարհն
վասն քոյ · զի այն՝ որ պատկանիւր քեզ , ոչ լինի
այլ ևս քոյ , և շրջի ներքևն 'ի վերայն առաջի

աչաց քոց: Այո՞ այսպիսի է լինելոց: զի յայն-
ժամ հեշտութիւնքն, ունայնութիւնքն, աշխահա-
կան ցնծութիւնքն, և ունայն ըղձակերտութիւնքն՝
յոյժ առաւել քան զմեղ եղխաւար թուելոց են
քեզ: Ո՜հ թշուառնկն հոգի իմ, որպիսի իրօք և իրա
կութ̃ մշտացուցեր զանձն իմ: տեսցես դու յայն
ժամ, զի մեք թողաք զմ̃ծ՝ վ̃ն միոյ ոչընչի: Հա
կառ արձապէս՝ ջերմեռանդութիւն, և բարեգոր
ծութիւնքն թուելոց են քեզ յոյժ առաւել ըղձա
լի, և քաղցր:

Ափսո՜ս, վ̃ն է՞ր ոչ հետևեցայ ես այսպիսի գե
ղեցիկ և պատուական շաւղաց: և յայնժամ մեղքն՝
որք թուէին քեզ փոքրագոյնք, համարելոցք են
քեզ ոպ̃ զմեծամեծ լերինս, և ջերմեռանդու-
թիւն քո երևեսցին քեզ յոյժ փոքրագոյն:

3. Մտածեա՛ զմեծ և զցաւագին տրտունջս:
ո՜հ ցաւոյս. զինչ ասիցէ արդեօք հոգի քո այ
սորիկ ստորնագունի աշխարհի: Քանզի նա տես-
ցէ յայնժամ զվերջին թողանումն և զհրաժա-
րումն հարստութեանց, ունայնութեանց, անօտի ըն
կերակցութեանց, հեշտութեանց, զբօսանաց, բարե
կամաց, դրացեաց, ծնողաց, որդւոց, կնոջ,
նաև ամ̃ ստեղծուածոց. և վերջապէս մարմնոյ
իւրոյ, որ զնա թողցէ դեղնեցեալ, ուռուցեալ,
ապականեցեալ, նաև զզուելի, և դարշահոտ:

4. Մտածեա՛ զշուտափութութիւն այնոցիկ,
որք տանին զմարմինն քո առ՚ի թաղել զնա՚ի
ներքոյ երկրի. և յետ այնորիկ այլ ոչ ևս յիշէ
զքեզ աշխարհն, և ոչ խորհի զայնմանէ, զոր ա-
րարեր այլոց: Ած տացէ նմա զհանգստութի, և
տր ողորմեսցի հոգւոյ նորին՝ ասէ ոմն, և այս է
ամ̃: Ո՜հ մահ, որպէս պարտ էիր մտածեցեալ
լինիլ: ո՜հ թէ որպէս անողորմ իցես արդեօք
դու առ բնաւս:

5. Մտածեա՛, թէ հոգին՚ի յելանելն՚ի մար-
մնոյն

մնոյն գնայ 'ի ճանապարհն իւր. և այս կամ առ աջակողմն, և կամ առ ձախակողմն: Վա՜յ ինձ. ուր գնայ արդեօք հոգին իմ, և զոր ճանապարհն ընկալնու: Ո՞հ, ոչ զայլ, քան զայն՝ զոր սկսաւ 'ի յայսմիկ աշխարհի:

## Իղձք. և Առաջադրութիւնք:

1. Աղաչեմ զԱստուած, և անկեր 'ի բազուկս նորա: Ո՜հ Տէր իմ, ընկալ զիս 'ի ներքոյ քոյոյ պաշտպանութեան, 'ի այնքան զարհուրելի աւուրն: Արա, զի ժամն այն լինիցի ինձ երջանիկ և յաջողակ. և ոչ է ինձ փոյթ թէ այլ բնաւ աւուրք կենաց իմոց բերցեն ինձ զտրտմութիւն և զնեղութիւն:

2. Արհամարհեմ զաշխարհն: Որովհետև ոչ գիտեմ ես զժամն, յորում թողլոց եմ զքեզ ով աշխարհ, այլ և ոչ կամիմ յենուլ 'ի քեզ: Ո՜վ սիրելի բարեկամք իմ, և ծնօղք իմ, և ազգականք իմ, շնորհեցէք ինձ՝ զի մի՛ ես լինիցիմ առաւել սիրահարեալ ձեզ, քան այնմ՝ որ խոստանայ ինձ զիւր բարեկամութիւն իւր, որ կարէ մնալ յաւիտենականապէս: Քանզի ո՞րով պատճառաւ միաւորիցիմ ես ընդ ձեզ, մինչ պիտոյ է յետոյ խզել և պատառել զայս կապս սիրելութեան:

3. Ես կամիմ պատրաստիլ վասն ժամուս այսորիկ, և առնուլ զհարկաւոր հոգս առ 'ի գնալ երջանկապէս առ այս ճանապարհս: Կամիմ հաստատել զկացութիւն իմոյ խղճմտանաց բոլոր զօրութեամբ իմով, և կամիմ դնել զկարգաւորութիւն իմն զանազան պակասութեանց իմոց:

## Եզրակացութիւն:

Շնորհակալ լեր զԱստուծոյ, վասն այսոցիկ բարի առաջադրութեանց, զոր նա ետ քեզ: Ընծայեա զայնս իւր Աստուածային հանդիսավեհութեան, և աղաչեա զնա նորապէս, զի արասցէ՝ որ մահն քո լիցի երջան-

կապէս արդեամբ մահուան որդւոյ իւրոյ: Հայցեա՛ զօգնութիւն կուսին մարիամու, նաև ամ̃ից սր̃ց: Յետոյ ասա՛ Հայր մեր. և Ողջոյն քեզ: Ե՛տրա՛ զծրար իմն զմուսոյ:

# ՄՏԱԾՈՒՄՆ · Զ:

## Յաղագս Դատաստանին:

## Գլուխ · ԺԵ ·

### Նախապատրաստութիւն:

1. Դիր զքեզ առաջի ներկայութեան ա̃յ:
2. Աղաչեա՛ զա̃ծ, զի ներշնչեսցէ քեզ:

### Մտածումն:

I Օկնի ժամանակաց 'ի վերջին կացութեան աշխարհի, զոր ա̃ծ սահմանեալ է, նաև զկնի բազմաց հրաշից, և զարհուրելի նշանաց, ի ձեռն որոց յոդւոց հանիցեն և չորանայցեն մարդիկ 'ի յերկիւղէ, և 'ի զարհուրանաց. հուրն գալով որպէս զհեղեղ իմն, այրէ և 'ի մոխիր դարձուցանէ զամ̃ երեսս երկրի՝ Թարց Թողլոյ զեր իմն 'ի վ̃ր երկրի, զորս մեք այժմ տեսանեմք:

2. Մերձ ընդ մերձ այսորիկ բոցոյ, և հեղեղի կայծականց՝ յառնեն ամ̃ մարդիկք 'ի յերկրէ (բաց 'ի նոցանէ, որք արդէն յարուցեալք են,) և ձայնիւ հրեշտակապետին ժողովին 'ի ձորն յովսափաթու: Բայց վա՛յ է ինձ, ո՞րով զանազանութբ̃: զի ոմանք երևին փառաւո՛ր և պայծառ մարմնով, և ոմանք զազրալիք և զարհուրելիք:

3. Մտածեա՛ զհանդիսավեհութիւն զայն, որով

երևի

երևի բարձրագունեղ դատաւորն շրջապատե֊ ցեալ 'ի բնաւից հրեշտակաց և սրբ̃ց , ունելով և առաջի իւր զամենայնը խաչն իւր առաւել պայ֊ ծառ քան զարեգակն , 'ի բարի նշան բարեաց , և 'ի խստութեն չարեաց :

4. Արդ այս դերազանցագոյն դատաւորս , իւրով զարհուրելի հրամանաւն ( որ և իսկոյն կատարի ) բաժանէ զբարիսն 'ի չարեաց , դնելով զմի բաժինն 'ի յաջակողմն , և զմիւսն 'ի ձախակողմն : Եւ այս՝ յաւիտենական բաժանմամբ , վասն զի զկնի այսորիկ բաժանման , այս երկու մասունքս ոչ երբէք այլ ևս գտանին 'ի միասին :

5. Արարեալ բաժանմանն , և բացեալ գրեացն խղճմտանաց , յայնժամ յայտնապէս երևի չարութեն չարեաց , նա և արարեալ արհամարհումն 'ի նոցանէ դէպ 'ի յա̃ծ : Եւ 'ի միւս կողմանէ երևի ապաշխարութեն բարեաց , նաև ներգործութեն շնորհացն ա̃յ , որ ընկալեալ եղև 'ի նոցանէ , և ոչ ինչ իր բնաւ թաքիցի անդ : Ո՜վ ա̃ծ իմ և Տ̃ր իմ , որպիսի ամօթ լինիցի միոյ կողմանն , և որպիսի մխիթարութեն միւսոյն :

6. Մտածեա՛ զվերջին վճիռն չար հոգեաց :

Երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական, որ
պատրաստեալ է սատանայի, և հրեշտակաց նր̃ :

Արդ կշռեա՛ զայս խօսս այնքան ծանր և դառն : Քանզի ասէ նա՝ երթայք : և այս է բան իմն մշտնջենաւորի թողման , զոր ա̃ծ տայ այն թշուառ , և աներջանիկ հոգեացն , մերժելով զն̃ս յերեսաց իւրոց յաւիտենական աքսորմամբ : Եւ կոչէ զն̃ս անիծեալս : Արդ ո՜վ հոգի իմ , զինչ և որպիսի անէծք իցէ այս : Է անէծք ընդհանրական , որ պարունակէ զա̃մ չարս : անէծք անյետ դառնալի , որ պարունակէ զա̃մ ժամանակս , նա և զնոյն յաւիտենականութեն : Առաքէ՝ 'ի հուրն յաւի֊

տե֊

պէնտական :

Նկատեա՛ ո՛վ սիրտ իմ 'ի յայս մեծ յաւիտենականութիւն : ո՞հ , ո՛վ յաւիտենականութիւն յաւիտենական պատժոյ, դու որպէս սարսուելի և սարսափելի ես ինձ :

7. Մտածեա՛ և ներհակ սորին, նաև զվճիռն բարեաց: Զի եկայք ասէ դատաւորն: Ո՞հ, թէ որքան քաղցր է այս խօսս փրկութեան, որով ած քարշէ զմեզ առ ինքն, և ընկալնու 'ի ծոց բարութեան իւրոյ: Օրհնեալք հօր իմոյ՝ ո՞հ սիրելի օրհնութիւն, որ պարունակէ զամ օրհնութիւնս: Ժառանգեցէք զարքայութիւնն, որ պատրաստեալ է ձեզ 'ի սկզբանէ աշխարհի: Ո՛վ ած իմ, որպիսի շնորհ է այս, քանզի այս արքայութիւնս ոչ երբէք ունելոց է զվախճան և զվերջ:

## Իղձք . և Առաջադրութիւնք :

1, Դողա՛ ո՛վ հոգի իմ յիշելով զայս: Ո՛վ տէր իմ, ո՛վ կարէ ապահով առնել զիս այսօր՝ վասն այնորիկ, որոյ վասն դողան սիւնք երկնից զարհուրանօք:

2. Անարգեա՛ և եպերեա՛ զմեղս քո, որք կարեն զքեզ միայն կորուսանել 'ի յայն սարսափելի և զարհուրելի աւուրն: Ո՞հ, ես կամիմ այժմ դատել զիս ինքնին, զի մի՛ յետոյ դատիցիմ, և կամիմ քննել զխղճմտանս իմ, և դատապարտել: ամբաստանել զինէն, և ուղղել զիս. զի մի դատապարտիցէ զիս դատաւորն 'ի յայն սոսկալի աւուրն: Ուրեմն խոստովանեցայց ես այժմ, և ընկալայց զընաւ հարկաւորագոյն խրատն, և այլն:

## Եզրափակումն :

1. Շնորհակալ լեր զայ, որ ետ քեզ զկերպ առ 'ի անկասկած առնել զքեզ 'ի յայնպիսի աւուրն. Նաև

նաև եւ քեզ զժամանակ ապաշխարելոյ:
2. Ընծայեա զսիրտն քո նմա առ'ի առնուլ զնա:
3. Աղաչեա՛ զնա, զի տացէ քեզ զշնորհս առ'ի բարեպէս առնել զայն վասն նր̄: ասա Հայր մր. և Ողջոյն քեզ: Եւ արա՛ զմի ծրար 'ի ստաշխից ջերմեռանդութե̄:

# ՄՏԱԾՈՒՄՆ. Է:

## Յաղագս Դժոխոց:

## Գլուխ. ԺԵ.

### Նախապատրաստութի̄:

1. Դիր զքեզ առաջի ներկայութե̄ն այ̄:
2. Խոնարհեա՛ և խնդրեա՛ 'ի նմանէ զօգնութի̄ն իւր:

Երևակերպացո՛ քեզ զմի խաւարչտին քաղաք՝ հրդեհեալ բոլորովին ծծմբով, և գարշահոտ ձիւթով, նաև լի բնակչօք, որք ոչ կարեն ելանել անտի:

### Մտածումն:

1 Դատապարտեալքն են 'ի դժոխական անդունդն որպէս 'ի մէջ միոյ աներջանիկ և թշուառական քաղաքի, յորում բոլոր զգայութք̄ և ամ̄ անդամօք կրեն զանասելի տանջանս: Զի ոպ̄ եդին առ 'ի մեղանչել զբնաւ զգայութիս, և զամ̄ անդամս, նոյնպէս եւս կրեն բոլոր անդամօք և զգայութք̄ իւրեանց զպատիժս պատկանեալ առ մեղքն: Ակունքն նոցին՝ վասն իւրեանց արատ և չար հայեցմանն՝ կրելոց են զզարհուրելի տեսութիս դիւաց, և դժոխոց: Ականջքն,

վս̄

վն լսելոյ զախտական և զմոլութենական խօսակ-
ցութիւնս, լսելոցքեն զողբս, զլացս, և զյուսա-
հատութիւնս: Եւ՛ այսպէս իմանիլ պարտ է նաև
զայլոց բնաւից զգայութենց:

2. Բայց 'ի յայսցանեաց բնաւից տանջանաց, է
ևս անդ այլ իմն մեծագոյն տանջանք, որ է
զրկումն և արտաքսումն 'ի փառացն այ, յորմէ
մերժլին և արտաքսլին՝ ոչ երբեք կարելով ևս
տեսանել զնա:

Եթէ աբիսողոմ փորձիւ գիտաց՝ թէ զրկումն 'ի
յերեսաց սիրելի հօր իւրոյ դաւթի, էր առաւել
վշտակար ցաւ ինքեան՝ քան զաքսորանս իւր:
Ո՜հ Տէր իմ, որքան մեծագոյն նեղութի և ան-
հանդուրժելի ցաւ է դատապարտելոց, լինիլ միշտ
զրկեցեալ 'ի քաղցրագոյն տեսութէ, և 'ի յամե-
նազմայլելի երեսաց քոց:

3. 'Ի վեր քան զամ մտածեա զյաւիտենականու-
թիւն այսոցիկ պատժոց: քանզի այս է իր իմն,
որ միայն կարէ առնել, զի դժոխքն լինիցին ան-
տանելի և անհանդուրժելի: Վայ է ինձ, զի
եթէ փոքրագոյն լու իմն, որ մտանէ 'ի յականջս,
և կամ ջերմութի իմն թուլագոյն տենդոյ՝ այն-
պէս անհանգիստ առնել զօրէ զմեզ, զի թուի-
ցի մեզ յոյժ երկարագոյն և վշտակարագոյն
գոլ գիշեր իմն կարճագոյն: Ապա որքան զար-
հուրելի և անտանելի լինի գիշերն յաւիտենակա-
նութեն հանդերձ այնքան տանջանօք: 'Ի յայս-
մանէ յաւիտենականութէ ծնանին 'ի դատապար-
տեցեալս յաւիտենական յուսահատութիւնք. հայ-
հոյութիւնք, և անհուն կատաղութիւնք:

### ԽՈՀ. Ժ. ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆՔ:

1. Զարհուրեցո՛ զհոգի քո բանիւն յոբայ: Ո՛վ
հոգի իմ, կարե՞ս դու յաւիտենականապէս կեալ
'ի յայս յաւիտենական գեհեանս 'ի մէջ այսպիս-
ւոյ

ւոյ կլանօղ բոցոյ ։ Կամի՞ս թողուլ դու զանձն քո յաւիտենական, և ստանալ զայսոսիկ ։

2. Խոստովանեա՛. զի՞նչ արդիւնաւորեցար դու, և կամ որքան անգամ ։ Կամիմ ես այսուհետև առնուլ զայլ իմն ներհակ ընթացումն, ապա թէ ոչ իջանեմ առ այս անդունդս ։

3. Արարից ուրեմն զզանազան գործս գործու-նեայս՝ առ՚ի փախչիլ՚ի մեղաց, զի մեղքն միայն կարէ տալ ինձ այս անմեռանելի մահս ։

Շնորհակալ լեր, Ընծայեա՛, Աղաչեա՛, ուխտ ա-
ասացաւ ։

# ՄՏԱԾՈՒՄՆ · Բ ։

## Յաղագս Արքայութե ։

## Գլուխ · ԺԶ ։

### Նախապատրաստութե ։

1. Դի՛ր զքեզ առաջի ներկայութեն այ ·
2. Արա՛ զքո կոչումն, զի ներշնչիցէ՚ի քեզ ։

### Մտածումն ։

1 Մտածեա՛ և ձևակերպեա՛ զմի գեղեցիկ և յաւէտ պարզագոյն գիշեր, և նկատեա՛ թէ որպէս գեղեցիկ առնէ զերկինս առ՚ի տեսանել ընդ այնքան բազմութե և զանազանութե աստեղաց ։ Արդ առակցեա՛ ես այժմ զայս գեղեցկութիւ, առ այնպիսի աւուր միոյ, յորում պայծառութիւն արեգական ոչ արգելուցու գոնեայ զկէտ մի՝ զպարզ տեսութիւն աստեղաց նաև լուսնոյ ։ Եւ՞ յետոյ ասա՛ համարձակապէս, թէ բնաւ այս գեղեցկութիւ միաւորեալ՚ի միասին,

սին , է ոչինչ ինձ՝ բաղդատեալ ընդ մեծագու-
նի գերազանցութեան արքայութեան : Ո՜հ թէ , ով
ըղձալի և սիրելի է այս տեղիս ; և ով պատուական
և վայելուչ է այս քաղաքս :

2. Մտածեա՛ զազնուութիւն , զգեղեցկութիւն ,
և զբազմութիւն քաղաքակցաց և բնակչաց այ-
սորիկ երջանիկ քաղաքի : Անթուելի է բազմու-
թիւն այնքան բիւրք բիւրոց հրեշտակաց ; քե-
րոբէից . և սերոբէից : Այնքան ջոկք առաքե-
լոց , մարտիրոսաց , խոստովանողաց , կուսանաց ,
և սրբուհի կանանց : Ո՜հ թէ , որպէս երջանիկ
է այն ընկերակցութիւն : եթէ մինն և փոքրա-
գոյնեղն 'ի բնաւից յայնցանէ առաւել գեղեցիկ
է 'ի տեսանել՝ քան զայս բոլոր աշխարհս , ապա
զինչ լինիցի 'ի տեսանել զբնաւն 'ի միասին : Բայց
ո՜վ Տէր իմ . որպէս են երջանիկք այնք , որք եր-
գեն միշտ զքաղցր երգն յաւիտենական սիրոյն ,
և վայելեն միշտ զմի հաստատ և զյարատև ցնծու-
թիւն և ուրախութիւն , և փոխաբերապէս փոխեն
'ի միմեանս անճառելի գոհունակութիւնս ; և կեան
'ի մխիթարութեան՝ երջանիկ և անքակտելի ընկե-
րակցութեամբ միով :

3. Մտածեա՛ վերջապէս զայնքան մեծագոյն բա-
րին , քանզի վայելելոցք են յաւէտ զԱծ , որ մխի-
թարէ զնս միշտ իւրով սիրալիրական հայեցմամբն ,
և միջնորդութբ նորին սփռէ 'ի սիրտս նոցին
զմի անհուն հեշտութիւն : Վա՜յ թէ , որքան մեծ
բարի է , միշտ գոլ միաւորեցեալ ընդ իւրոյ
սկզբան : Են ևս անդ իբր ամեներջանիկ թռչունք
որք միշտ թռչին և երգեն 'ի մէջ օդոյ ածութեն ,
որ շրջապատէ զնս ամ կերպիւ անճառելի խնդու-
թբ : Անդ իւրաքանչիւրոք որքան կարէ լաւա-
գոյն , երգէ թարց նախանձու զգովութիւնս ստեղ-
ծողին ասելով : Օրհնեալ և գովեալ լիցիս 'ի
յաւիտեան ո՜վ քաղցր և բարձրագոյն ստեղծող
մեր

մեր և փրկիչ, որ այսպէս քաղցր ես 'ի մեզ, և
այսքան առատապէս հաղորդեցեր մեզ զփառս
քո: Եւ՞ փոխաբերապէս ևս՝ ա̃ծ օրհնէ զա̃մ
ա̃րս միով յաւիտենական օրհնութե̃: Օրհնեալք
էք դուք 'ի յաւիտեան ո՜վ սիրելի ստեղծուածք
իմ, որք ծառայեցիք ինձ, նաև գովէք զիս 'ի
յաւիտեան՝ այնքան սիրով և ցնծութե̃:

## Իղձք. և Առաջադրութիւնք:

1. Զարմացիր և գովեա՛ զայս երկնային հայրե
նիս: Ո՞հ, որպէս գեղեցիկ ես սիրեցեալ իմ եդեմ.
ո՞հ ո̃ր երջանիկք են բնակիչքն քո:

2. Յանդիմանեա՛ 'ի սրտի քում զփոքրոգու-
թիւն քո, որ այնքան զօրեաց 'ի քեզ, մինչ զի
խոտորեցոյց զքեզ 'ի ճանապարհէ ամենափա-
ռաւոր կացութեան այսորիկ: Ընդ էր է ինձ
այնքան հեռանալ 'ի ծայրագոյն երջանկութէ:
Ափսո՜ս ողորմելւոյս; որ վ̃ն այսքան թեթև
և ունայն հեշտութեց՝ հազարիցս հազար հրա-
ժարեցայ և զրկեցայ 'ի յայսմանէ յաւիտենակա
նէ և յանհնոյ հեշտութէ: Զորպիսի ժպրհութ̃
և յանդգնութի ունէի ես, առ 'ի արհամարհել
զայսքան ըղձալի և ցանկալի բարիս, սակս ու-
նայն և արժանաւորապէս արհամարհելի ըղձի
և հեշտութե̃:

3. Բայց սակայն հառաչեա՛ սաստկապէս առ
այս ըղձալի և հեշտալի հանգիստս: Վա՜յ է ինձ,
որովհետև այսքան հաճելի և ըղձալի է քեզ Տ̃ր իմ,
և ծայրագոյն բարի իմ, ուղղեա՛ զգնացս իմ 'ի ճ̃պհս
քո; զի և ոչ երբէք այլ ես դարձայց 'ի յետս:
Գնասցուք ո՜վ սիրելի հոգի իմ, գնասցուք առ
այս հանգիստս, անճապարեսցուք առ այս հան
գիստս: ընթասցուք առ այս օրհնեալ երկիրս,
որ խոստացեալ եղև մեզ, զինչ արասցուք մեք
աստ 'ի յեգիպտոսի:

4. Մի

4· Մի՛ արգելլից ուրեմն ես զիս զանազան և պէսպէս իրօք, որք հեռացուցեալ յապաղեն զիս 'ի յայսմանէ գնացիցս :

5· Արարից ուրեմն զպէսպէս և զզանազան գործս, որք կարեն զիս ներածել անդ :

## ՄՏԱԾՈՒՄՆ · Թ·

### Յաղագս չէրդի ընտրութեան, և ըղձի Արքայութեան:

### Գլուխ · ԺԷ·

Նախապատրաստութիւն :

1· Դիր զքեզ առաջի ներկայութեան այ̃ ·
2· Խոնարհեցո՛ զքեզ առաջի նր̃ , և աղաչեա՛ զի ներշնչիցէ 'ի քեզ:

Մտածումն :

1 Զի՛ երեւակայեա՛ զքեզ գոլ 'ի լայն և յընդարձակ դաշտի խմբ ընդ քո բարի պահապան հրեշտակի, (որպ և էր մանուկն տօբիա 'ի գնալն 'ի հռագէս : ) Որ նոյն հրեշտակն առնիցէ զքեզ տեսանել 'ի վեր կոյս բացեալ զդրախտն հանդերձ համայնիւք հեշտութեամբն, զոր դու արարեր 'ի յանցեալ մտածմանն : Եւ՛ յետոյ դարձուցանելով զքեզ 'ի վայր կոյս՝ առնիցէ տեսանել քեզ զդժոխքն բացեալ հանդերձ ամ̃ տանջանօքն այնպէս՝ որպէս և գրեալ է 'ի մտածմանն դժոխոց : Եւ՛ դոլով դու այնպէս զետեղեալ անդ երեւակայութբ̃ , և անկեալ 'ի ծունկս առաջի պահապան հրեշտակին քո :

2· Մտածեա՛ · թէ այս է ճշմարտագոյն իմն, զի դու ես 'ի մէջ արքայութեան և դժոխոց, նաև

թէ

թէ մինն, և թէ միւսն բացեալ է զինքն առ'ի ընդունիլ զքեզ, ըստ ընտրութեան զոր դու արասցես։

3. Մտածեա՛, զի ընտրութիւն որ լինի 'ի կեանս այս, թէ միոյն և թէ միւսոյն, մնայ յաւիտենականապէս 'ի միւս կեանն։

4. Նաև զի թէպէտ թէ մինն, և թէ միւսն բացեալ է զինքն առ'ի ընդունիլ զքեզ, ըստ որում ընտրես դու ինքնդ։ Սակայն մեծ պատրաստ է առ'ի տալ քեզ զմինն վասն իւրոյ արդարութեան, և կամ զմիւսն վասն իւրոյ ողորմութեան։ Բայց սակայն ըղձակերտեա՛ միով սաստկագունիւ՛ ըղձիւ՛, զի ընտրիցես դու զդրախտն, և պահապան հրեշտակն քո բարի՝ առ այս դրդէ զքեզ բոլոր զօրութեամբ իւրով, մատուցանելով քեզ 'ի կողմանէ Աստուծոյ զպէսպէս շնորհս և զօժանդակութիւնս առ'ի օգնել քեզ յելանել 'ի դրախտն։

5. Եւ՛ Յիսուս Քրիստոս 'ի բարձանց երկնից նկատէ 'ի քեզ գթութեամբ, և հրաւիրէ զքեզ քաղցրութեամբ։ Ե'կ ո՛վ սիրելի իմ հոգի՝ առ յաւիտենական հանգիստն 'ի մէջ բազկաց բարութեան իմոյ, զոր պատրաստեցի վասն քո զայսպիսի անմահական հեշտութիւս 'ի ձեռն առատագոյն սիրոյ իմոյ։

* Նկատեա՛ և տես 'ի ձեռն ներքին նկատման աչաց զսրբուհի կոյսն Մարիամ, որ մայրական գթութեամբ հրաւիրէ զքեզ ասելով. Զօրացիր ո՛վ որդեակ իմ, և մի՛ կամիր ունիլ զատկաւ համարումն զըղձէ որդւոյ իմոյ, նաև զայնքան հառաչանաց իմոց, զոր ես արտահանեմ վասն քո ըղձակերտելով ընդ որդւոյ իմոյ զյաւիտենական փրկութիւն քո։ Տես նաև զսուրբսն, որք յորդորեն զքեզ, և բիւրք բիւրոց հոգիքն՝ որք քաղցրապէս հրաւիրեն զքեզ, ոչ ըղձալով այլ իմիք, քան թէ միաւորել յաւուր միում զախորժն քո ընդ սրտից իւրեանց, առ'ի գովել զԱստուած 'ի յաւիտեան։

Նաև հաւատեմ քեզ, թէ ճանապարհն երկնից ոչ է այնքան դժուարին, որպէս վարկէ զնա աշխարհն, և ասեն քեզ. Զօրացիր ո՛վ սիրելագոյն հոգի, քանզի ո՛րք որ բարեպէս մտածէ զճանապարհն ջերմեռանդութե. որով մեք ելեալ եմք աստ, նա տեսանէ թէ՝ մեք եկեալ և ժամանեալ եմք առ այս հեշտութիս, միջնորդութբ անբաղդատելի, նաև քաղցրագոյն և համեղագոյն հեշտութե, քան զայն՝ որ է աշխահի:

## Ընտրութիւն:

1. Ո՜վ դժոխք, ես եպերեմ և անդոսնեմ զքեզ այժմ և 'ի յաւիտեան: Նաև խոտեմ և արհամարհեմ զտանջանս և զպատիժս քո, անարգեմ և անդոսնեմ զքո թշուառ և զանէրջանիկ յաւիտենական չարչարանս: Ե՜ւ 'ի վեր քան զա̃մ զյա՜ւիտենական հայհոյութիս և զանէծս քո, զոր դու արտափսխես յաւիտենականապէս ընդդէմ ա̃յ իմոյ: Ե՜ւ դարձուցանելով զսիրտ իմ և զհոգի իմ դէպ 'ի կողմն քո՝ ո՜վ յաւիտենական փառք արքայութե, և երջանկութիւն մշտնջենական. Ընտրեմ ես յաւէտ և անյետդարձապէս՝ զյարկըն բնակութեան իմոյ՝ 'ի մէջ քոյոյ սրբազան յարկի, և 'ի մէջ ա̃յց և ըղձալւոյ խորանի: Ե՜ւ օրհնեմ ո՜վ ա̃ծ իմ զողորմութիւն քո, և ընդունիմ զպարգևսն զայնոսիկ, զորս հաճիս առնել ինձ: Ո՜հ Տէր իմ, ես ընդունիմ զյաւիտենական սէրն քո, և ժառանգեմ զատացեալն, զոր դու արարեր վ̃ն իմ 'ի յայնմիկ երջանիկ եէմի զմի յարկ և բնակութի, և այս ոչ այնքան վ̃ն այլոյ իրի, քան վ̃ն սիրելոյ և յաւիտենականապէս օրհնելոյ զքեզ:

2. Ընկալ զօգնութիւն և զօժանդակութիւն երանուհւոյ կուսին Մարիամու, նաև ս̃րց՝ որք ընծա-

ծայեն քեզ : Խոստացիր նոցա ընթանալ զհետ 'ի նմա : Տարածեա զձեռս քո առ պահապան հրեշտակն քո, զի առաջնորդեսցէ քեզ : Ե՛ւ զօրացո՛ զհոգի քո առ այս խղճմ, և առ այս ընտրութիւն :

# ՄՏԱԾՈՒՄՆ · Ժ :

## Յաղագս կերպի ընտրութեան, և ըղձի · Զոր հոգին առնէ զջերմեռանդ լինայ :

## Գլուխ · ԺԸ :

### Նախապատրաստութիւն :

1· Դիր զքեզ առաջի ներկայութեան այ :
2· Խոնարհեցո՛ զքեզ առաջի երեսաց նր ;
և խնդրեա՛ զօգնականութիւն նորին :

### Մտածութիւնք :

1 Երևակերպացո՛ դարձեալ զքեզ գոլ 'ի մի լայնատարած դաշտի ընդ պահապան հրեշտակի քո միայն : Ե՛ւ տես դու 'ի ձախակողմն զդևն նստեալ և բարձրացեալ 'ի վերայ միոյ բազմադունի աթոռոյ հանդերձ բազմութբ դժոխական հոգւոց, նաև շրջապատեցեալ 'ի միոյ մեծագունէ ամբոխէ աշխարհայնոց, որք ամենեքեան բացա գլխով պատուեն զնա և ծառայեն նմա, ոմանք այս ինչ մեղօք, և ոմանք այն ինչ մեղօք : Նաև տես զգործս և զջանս ողորմելի և թշուառական հետևողացն այս դարշելի թագաւորիս : Տե՛ս ևս զոմանս կատաղեալք ատելութբ, նախանձու, և բարկութբ. և զայլս ոմանս ; որք

փոխաբերապէս սպաննանեն զմիմեանս: Տե՛ս նա և զոմանս, որք են դեղնեալք, հաշեալք, և մաշեալ, զբաղեալք, և հոգածուք առ'ի ստանալ զհարստութիւն: Տե՛ս ևս զոմանս, որք պարապեալք են ունայնութեան թարց իմիք ցեղի հեշտութեան, որ ոչ լիցէ անօգուտ և ունայն: Զայլ ոմանս վատահամբաւեցեալ, կորուսեալ, և ապականեալ 'ի ձեռն անասնական ըղձից իւրեանց: Տես ուրեմն, թէ որպէս են բնաւքն առանց հանդստութեան, առանց կարգի, և առանց համեստութեան; տես թէ որպէս արհամարհեն զմիմեանս, և որպէս ստութբ̃ սիրեն զմիմեանս: Վերջապէս տես դու՝ զմի թշուառացեալ և զեղկելի թագաւորութիւն՝ բռնաւորեցեալ 'ի յայսմանէ անիծեալ թագաւորէ, որ ոչ ունի բնաւին զգթութիւն ինչ:

2. Հայեաց ևս 'ի յաջակողմն 'ի խաչեցեալն Յս̃ Քս̃, որ ճշմրտ̃ իմն սիրով աղաչէ զայնս ողորմելի դիւահարս, զի ելանիցեն յայնմանէ բռնաւորութէ, և կոչէ զնս̃ առ ինքն: Տես զմեծագոյն բազմութիւն ջերմեռանդից, որք կան շուրջ զնովաւ ընդ հրեշտակացն: Մտածեա զգեղեցկութիւն ջերմեռանդութեան այսորիկ թագաւորութեան: Ո՜հ թէ, որպէս գեղեցիկ է տեսանել զայնքան ջոկս կուսանաց, արանց, և կանանց, որք են առաւել սպիտակք քան զշուշանս: զԱյնքան բազմութիւն այրեաց, որք են լի սբ̃ մահացուցմամբ և խոնարհութբ̃: Տես և զգամն մեծի բազմութեան ամուսնացելոց անձանց, որք այնքան քաղցրապէս կենցաղավարին 'ի միմեանս փոխաբերկն սիրով, որ ոչ կարէ գոլ թարց մեծագունի սիրոյ: Նկատեա և զայն, թէ այսորիկ ջերմեռանդ անձինքս ո՛րպէս կառավարեն զարտաքին տունս իւրեանց, 'ի միասին ը̃ ներքին հոգացողութեան, և ո՛րպէս ունին զկողակցական սէրն, հանդերձ

սիրով

սիրով երկնաւոր փեսային ։ Տես և հաստա-
կապէս զայնս ընաւս, որք են 'ի մբ, 'ի քաղցր,
և 'ի բարեկամական կենցաղավարութե խմիք,
որք և լսեն Տն մերոյ, և կամին են անկել զնա
'ի մէջ սրտից իւրեանց ։

2. Ուրախանան՝ բայց միով հաճելի, սիրելի,
և կարգաւորեցեալ ցնծութբ ։ Սիրեն զխմեան,
բայց միով մբ, և մաքրագունեղ սիրով ։ Այ-
նոքիկ՝ որք են 'ի մէջ այս ջերմեռանդ ժողովր-
դեանս, թէպէտ կրեն զնեղութիս, բայց ոչ
համարին զայնս դոլ մեծ պատիժ, նաև ոչ
տրտնջն երբէք կէտ մի ։ Վերջապէս տես զդէմս
և զակունս ամենափրկչին, որ մխիթարէ զնս,
և բնաւքն են 'ի միասին հային 'ի նա ։

3. Արդ՝ թէպէտ դու թողեր զաստանայն համ-
դերձ իւրովք չար և եղկելի ընկերօքն՝ 'ի ձեռն
միջնորդութե բարի ըղձից քոց, զոր յղացար ։
Սակայն ոչ ես տակաւին ժամանեցեալ առ Թա-
գաւորն Յս, և ոչ ես հասեալ առ իւր երա-
նելի և մբ ջերմեռանդ ընկերսն, այլ մանա-
ւանդ կաս 'ի մէջ միոյն և միւսոյն ։

4. Սրբուհի կոյսն մարիամ, ընդ մբյն յովսե-
փայ. սրբուհին լուկիա, և մօնիքա, և այլ ան-
թուելի բազմութիք, որք են 'ի յերամս և 'ի
ջոկս նոցին, որք և կենցաղավարեցան 'ի մէջ
աշխարհի՝ հրաւիրեն և յորդորեն զքեզ ։

5. Խաչեցեալ թագաւորն կոչէ զքեզ յատուկ
անուամբ՝ ասելով, եկ ո՞վ սիրելի իմ, եկ զի
պսակեցից ես զքեզ ։

## Ընտրութիւն ։

1. Ո՞վ աշխարհ, ո՞վ դարպշելի ամբոխ, ոչ ես
երբէք դու տեսցես զիս 'ի ներքոյ դրօշակի քո,
թողի 'ի յաւիտեան զխելագարութիւն և զունայ

նութենս քո : Ո՜վ Թագաւոր հպարտութեան և Թշուառութեան, ո՜վ ոգի դժոխային, ես հրաժարիմ 'ի քէն և 'ի ընաւից քոյոց հանդիսից · և եպերեմ զքեզ՝ և զընաւ չար գործսն քո :

2. Ե՛ս դառնալով առ քեզ ո՜վ քաղցր իմ Յս̄, Թագաւոր դթութե̃, և յաւիտենականի փառաց՝ փարիմ զքև ընաւիւք զօրութե̃ հոգւոյ իմոյ : Երկրպագեմ քեզ յամենայն սրտէ իմմէ : Ընտրեմ զքեզ Թագաւոր ինձ , յայժմ և 'ի յաւիտեան : Եւ մատուցանեմ քեզ զանաղարտելի հաւատարմութիւն իմ՝ ո՜վ միակ իշխան իմ · և ընծայեմ քեզ զմի անյետդառնալի ծառայութի : Նաև ենթադրեմ ես զիս առ հնազանդութեն քոյոյ սուրբ օրինաց և պատուիրանաց :

3. Ո՜վ սրբուհի կոյս, և ամենասիրելի տիրուհի իմ, ընտրեմ զքեզ առաջնորդ ինձ , և ենթարկեմ զիս 'ի ներքոյ քոյոյ հնազանդութեն : Մատուցանեմ քեզ զմի եզական ծառայութի , և զմի յատկական պատիւ և յարգումն :

4. Ո՜վ պահապան հրեշտակ իմ , ներկայացո՛ զիս այնորիկ սրբազանի ժողովոյն , և մի՛ թողուր զիս մինչև ցհասանիլն առ այն երջանիկ ընկերակցութիւն : Որոյ վս̄ սեմ, և միշտ ասացից ·

Ողջ լիցի Յս̄, ողջ լիցի Յս̄ :



## Յաղագս թէ պարտ է առնել ընդհանրական խոստովանութիւն։

### Գլուխ · ԺԹ·

Ահա ո՛վ սիրահարդ իմ՝ ընթերցար զմտածութիւնս, որք պահանջէին առ մերս դիտաւորութիւն։ Ուրեմն մինչ արարցես դու զայնս, յայնժամ գնա համարձակապէս առ՚ի առնել զընդհանրական խոստովանութիւն քո խոնարհ ոգւով։ Բայց մի՛ թողցես շփոթիլ և վրդովիլ զքեզ արգելմամբ և ըմբռնմամբ խղճի։

Կարիճն, որ խայթէ զմեզ՝ է թունաւո՛ր խայթումն նորին։ Բայց ներարկեալ նա՚ի ձիւթ, է մեծագոյն դեղ իմն ընդդէմ յատկի խայթման իւրոյ։ Մեղքն ոչ է ամօթալի, եթէ ոչ յայնժամ, մինչ զնա գործեմք. բայց դարձեալ նոյնն՚ի խոստովանութիւն և յապաշխարութիւն, է պատուելի և առողջարար։ Զղջումն և խոստովանութիւն այնքան գեղեցիկք և անուշահոտք են, մինչ զի սրբեն զաղտեղութիւն, և ցրուեն զժանկահոտութիւն մեղաց։ Սիմոն բորոտն ասէր, թէ Մարիամ Մագդաղենացին իցէր մեղաւոր, բայց Տէրն մեր ասէր, թէ նա ոչ իցէր մեղաւոր։ Զի այլ ևս ոչ խօսի, եթէ ոչ սակս անուշահոտութեն, զոր նա բուրեաց, նաև զմեծութէ սիրոյ նորին։ Եթէ մեք իցեմ ճշմարտապէս խոնարհք, ո՛վ սիրահարդ առաքինութեց, մեղքն մեր անհաճոյանայ մեզ անհնապէս, քանզի նովաւ վշտացուցանի ած։ Բայց ամբաստանութիւն զմեղաց մերոց, լինի մեզ քաղցր և հաճելի, զի ած պատուի նովաւ։

Ցաւն՝ որ զմեզ տանջէ, տայ մեզ զմեծագոյն թեթեւութիւն առ՚ի բարեպէս բացայայտել զայն բժշկին :

Մինչ դու կայցես առաջի հոգեւոր հօրն քո, ( որ է խոստովանահայրն ) պատկերակերպեա՛ զքեզ դու ՚ի լեառն գողգոթայ ՚ի ներքոյ ոտից Յն Քն խաչեցելոյն, որոյ պատուական արիւնն հեղանի յամենայն կողմանց առ՚ի լուանալ զքեզ յանօրէնութեանց քոց : Զի թէպէտ այս ոչ է յատուկ արիւն ամենափրկչին, սակայն է արդիւնն հեղեալ արեանն այնորիկ, որ առատապէս առոգանէ զապաշխարողսն շուրջ զխոստովանատեղիւ : Բայց ուրեմն բարեաւ զսիրտն քո, զի ելանիցեն անտի մեղանքն քոյք՝ ՚ի ձեռն խոստովանութեան : Զի որով չափով ելանեն նոքա անտի, այնու չափով մտանէ անդ պատուական արդիւնն ածյին չարչարանաց, առ՚ի լցուցանել զնա օրհնութբ :

* Բայց ասա՛ զբոլոր մեղանս քոյս պարզապէս, եւ հաճեալ հաւանեցո՛ միանգամ զխղճմտանս քո : Ե՞ւ զայս արարեալ, ունկնդիր լեր խրատուց եւ ազդմանց ծառային այ, ( քհյ խոստովանահօրն ) եւ ասա՛ ՚ի սրտի քում. Խօսեաց Տէր, զի լուիցէ ծառայ քո : Այսպէս է ո՞վ խանդակաթդ առաքինութեան. զի ած է այն, որ ասաց իւր փոխանորդացն. Որ լսէ ձեզ՝ ինձ լսէ : Ե՞ւ յետ այսորիկ առ՚ի ձեռս քո զհետեւեցեալ խոստմունս եւ զառաջադրական պայմանադրութիւն, որ պիտոյանայ եւ ծառայէ եզրակացուցման բոլոր զղջման քո, զոր պարտիս դու նախապէս մտածել, խոկալ, նաեւ մտադրաբար եւ մեծագոյն զգացմամբ ընթեռնուլ, որ քան լիցէ քեզ կարելի :

Յա-

Գործունէայ և հեշինաջաջան պայմանադրութի,
որ 'ի ներապատել 'ի Հոգւոյ շառաջնորդու-
թի զի ծառայելոյ Այ, և զի
նախաընտրելոյ զգործոն
ապաշխարութե։

## Գլուխ. Ի։

Սատորեգրեցեր (այս անուն) որ եղեր
և հաստատեալ կամ առաջիներկայ
ութե իմ յաւիտենականի, և բնա-
կից քաղաքակցաց երկնայնոց։ Մտա-
ծելով զանչափ ողորմութիւն ա՟ծայնոյ բարու-
թե՟' եղեալ դէպ առ իս անարժանագոյն և չա-
րագոյն ստեղծուածս։ Քանզի նա էհան զիս
'ի յոչընչէ և պահպանեաց, մնուցանելով, ազա-
տելով յա՟մ որոգայթից, և լցուցանելով ա՟մ
բարութի՟ն։ Բայց 'ի վեր քան զայլս բնաւս մտա-
ծելով իմ զայս անըմբռնելի քաղցրութիւն և
գթութիւն, որով նոյն ամենաբարին ա՟ծ' իւրով
բարեգթութե՟ն խնայեաց զիս, համբերելով
անօրէնութեանց իմոց, նաև յաճախապէս և բա-
րեկամաբար ներշնչեաց առ իս' քարշելով զիս առ-
ուղղութի, նաև համբերաբար սպասեաց մինչև
ցառ այս ա՟մ հասակի և կենաց իմոց։ Ոչ բա-
ւականացան ինձ երբէք ամենայն ապերախտու-
թիւքն, անօրէնութիւքն, և անհաւատարմու-
թիւքն իմ, 'ի ձեռն որոց յապաղելով զդարձումն
իմ, և արհամարհելով զշնորհն իւր' ամբարշտօ-
րէն վշտացուցի զնա այնքանիցս։ Նաև մտա-
ծելով, զի 'ի յաւուր ո՟րդն մկրտութե՟ իմոյ' եղէ
եսերջանկապէս և մաքրապէս սրբագործեցեալ
և

և ընծայեցեալ Աստուծոյ իմոյ, առ 'ի լինել որդի իւր ։ Բայց ընդդէմ այն ուխտին և դաւանութեան, որ յայնժամ արարեալ եղև անուամբ իմով, բազմիցս՝ և բազում անգամ թշուառականաբար և դարշելաբար աղտեղեցի և ապականեցի զհոգի իմ, և հակադրեցի զնա ընդդէմ իւրոյ Աստուածայնոյ հանդիսավեհութեան ։

Բայց վերջապէս առ այժմս դառնալով և գալով 'ի յիս ինքս, անկանիմ բոլորով սրտիւ իմով և համայնիւ հոգւով իմով, առաջի աթոռոյ Աստուածայնոյ արդարութեան ․ Ճանաչեմ, հաստատեմ, և խոստովանիմ օրինապէս յաղթահարեցեալ գոլ զիս 'ի յԱստուածայնոյ հանդիսավեհութենէն, նաև գոլ պարտական մահուան և չարչարանաց Յիսուսի Քրիստոսի, պատճառաւ մեղաց իմոց՝ զորս գործեցի, որոց սակս մեռաւ և համբերեաց նա չարչարանաց խաչին ։ Եւ այսպէս ուրեմն հետևաբար, արժանի եմ յաւիտենականապէս կորնչել և դատապարտիլ ։

* Բայց դառնալով ես դէպ 'ի յաթոռն անհուն ողորմութեան նորին յաւիտենականին Աստուծոյ, զկնի անարգելոյ և արհամարհելոյ զանօրէնութիւն անցելոյ կենաց իմոց՝ բոլոր սրտիւ և բոլոր զօրութեամբ իմով, խնդրեմ, և հայցեմ այժմ խոնարհաբար զշնորհս, զներումն, և զգթութիւն 'ի ձեռն ամբողջ արձակման բնաւից մեղաց իմոց, զօրութեամբ մահուան և չարչարանաց սոյն փրկչիս և կեցուցչիս հոգւոյ իմոյ ։ 'Ի վերայ որոյ՝ որպէս 'ի վերայ միակի խարսխի յուսոյ յենլով ես, վերստին հաստատեմ և նորոգեմ զայն սրբազան դաւանութիւն և զուխտն հաւատարմութեան, որ արարաւ 'ի մկրտութեան 'ի կողմանէ իմմէ առ Աստուածն իմ, հրաժարելով 'ի սատանայէ, 'ի յաշխարհէ, և 'ի մարմնոյ, արհամարհելով զանիծեալ թելադրութիւն, զունայնութիւն և զցանկութիւն նոցին՝

նոցին՝ 'ի ընաւս ժամանակս կենաց իմոց, և 'ի համայն յաւիտեանս: Ե՞ւ դառնալով առ Ած իմ ամենագթած և ամենողորմ. ըղձամ, առաջադրեմ, ընտրեմ, և խոստանամ առ 'ի անյետադարձելապէս ծառայել նմա, և առ 'ի սիրել զնա յայժմ և 'ի յաւիտեան: Ուստի առ այս վախճան՝ ընծայեմ և մատուցանեմ նմա զհոգի իմ բոլոր զօրութեք իւրով, զմիտս իմ բոլոր կարողութեք իւրով, զսիրտն իմ բոլոր ըղձիւքն իւրով, զմարմինն իմ բոլոր զգայութեք իւրով: Ե՞ւ խոստանամ ես նմա՝ առ 'ի ոչ կամիլ այսուհետև վատնել զմասն ինչ գոլոյ իմոյ ընդդէմ Ածային հանդիսավեհութեն, և ընդդէմ բարձրագունեղի կամաց նորին, առ որ ընծայեմ և մատուցանեմ զիս հոգւով, առ 'ի գոլ նմա միշտ հաւատարիմ, հնազանդ, և ստեղծեալ ճշմարիտ ծառայ, թարց կամելոյ երբէք ատել և ստրջանալ:

Բայց վա՛յ է ինձ, զի եթէ թելադրութեք թշնամւոյն, և կամ մարդկային տկարութեք իմիք, պատահեցի ինձ ընդդիմանալ յեր ինչ՝ այս առաջադրութեն և ընծայման իմոյ, ես ուխտեմ և առաջադրեմ այժմ միջնորդութեք շնորհաց Հոգւոյն Սբյ՝ առժամայն յառնել, մինչ իմանայցեմ լեալ այսպէս, դարձուցանելով զիս նորապէս առ Ածային ողորմութին, թարց դանդաղման և յամեցման իմիք:

* Դորդ այսէ կամքն իմ, և դիտաւորութին իմ, նաև անապաւրտելի և անյետդարձուցանելի առաջադրութին իմ, զոր ես հաստատեմ և պահեմ թարց այլայլման և բացասութեն իմիք, առաջի Սբղն ներկայութեն աստուծոյն իմոյ, և առաջի ներկայութեն յաղթօղ եկեղեցւոյն, նաև 'ի ներկայութեն մօրն իմոյ զինուորեցեալ եկեղեցւոյ, որ լսէ զայս իմ բացայայտական բանս, ևևս 'ի ներկայութեն այնորիկ, որ 'ի կողմանէ

նորին

նորին սպասաւոր գոլով՝ լաւ է ինձ 'ի յայսմիկ իրա
կութեան։

Հաճոյացի ուրեմն քեզ ո՜վ ած իմ յաւիտենական, ամենակարող, և ամենաբարի, Հայր, և որդի, և Հոգի սբ, առ 'ի հաստատել զիս յայսմիկ առաջադրութեան, նաև առ 'ի ընդունիլ զայս ներքին և սրտական զոհն իմ 'ի հոտ անուշից։ Եւ որպէս հաճեցար դու տալ ինձ զներշնչումն, և զկամս առ 'ի առնել զայս, տուր ինձ նաև զզօրութիւն և զհարկաւոր շնորհս առ 'ի կատարել զայս։ Ո՜վ Տր իմ, դու ես Ած իմ, Ած սրտի իմոյ, Ած հոգւոյ իմոյ, Ած մտաց իմոց։ Այսպէս ճանաչեմ զքեզ, և երկրպագեմ քեզ յայժմ, և յամ յաւիտեանս։ Ողջ Լիցի Յս։

## Եզրափակութիւն Առաջնոյ մասին, և Ջերմեռանդուհւոյ՝ առ 'ի ընդունիլ զԱրձակումն։

## Գլուխ .. ԻԱ։

Արարեալ զայս առաջադրութիւնս, լեր մտադիր և զգուշ, և բաց զաչս սրտի քո առ 'ի լսել հոգւով զբանն քոյոյ արձակման։ Որ նոյն ինքն փրկիչն հոգւոյ քոյ բազմեալ 'ի վր աթոռոյ ողորմութեան իւրոյ՝ արտաբերէ զնոյն բանն արձակման 'ի յերկինս առաջի բնաւից հրեշտակաց և սրբց՝ յայնժամ, մինչ քահանայն արձակէ զքեզ աստ 'ի յերկրի անուամբն նորին։ Եւ յայնժամ բոլոր համագումարութիւնն երանելեացն այնոցիկ՝ ուրախանալով 'ի վր երջանկութեան քո, սկսանին երգել զքաղցրագոյն երգ իմն հոգևոր անբաղդատելի ցնծութեամբ, և բնաւքն 'ի միասին տան զհամբոյր խա-

խաղաղութե և միաւորութե առ սիրտն քոյ, որ
եղեալ եղև 'ի շնորհս, նաև սրբացուցեալ:

* Ահա այս է զարմանալի դաշնակցութի իմ՝ ո՛վ սիրահարդ իմ, միջնորդութբ որոյ առնես դու զմի երջանիկ պայմանադրութի ընդ ածայ_նոյ համդխավեհութեն: Որովհետև տալով զքեզ նմա, դու առանաս զնա, նաև զքեզ ինքնդ՝ վն յաւիտենական կենաց:

Ուրեմն ոչ մնայ այլ ինչ, եթէ ոչ այս միայն, զի առնելով զգրիչն 'ի ձեռնդ՝ ստորագրիցես բարի սրտիւ զհրակութինն քոյոյ առաջադրութե և խոստման: Եւ յետոյ մերձենայցես առ սե_ղանն, ուր ած ևս անդրադարձապէս ստորա_գրէ և համանշանէ զարձակումն և զխոստումն քո, առ'ի տալ քեզ զարքայութի, դնելով զինքն իսկ 'ի մէջ հաղորդութե՝ որպէս զարբաղան կնիք իմն 'ի վր նորոգեալ սրտի քո: Այսու կերպիւ թուի ինձ՝ ո՛վ սիրահարդ առաքինութե, թէ հոգին քո լինի մաքրեցեալ 'ի մեղաց, նաև 'ի բնաւից ըղձից՝ որք են առ մեղս:

* Բայց սակայն այսոքիկ թիւր ըղձկունքս դե_րապէս վերածնանին 'ի հոգւոջ՝ պատճառաւ տկարութե և ցանկութե մերոյ, այնու՝ զի մինչ կենդանի եմք 'ի վր երկրի, թէպէտ կարէ դոլ այս մահացուցեալ, բայց ոչ կարէ դոլ իսպառ մեռուցալ: Ուրեմն ես տաց քեզ զազդեցմունս ո_մանս, զորս եթէ բարեաւ 'ի կիր արկանիցես, այնք նախապահեն զքեզ առապայն 'ի մահացու մեղաց, նաև 'ի բնաւից ըղձից առ այնս, մինչ զի ոչ ևս կարիցեն գտանել նք 'ի սրտի քում զտեղի: Եւ զի նոյն ազդեցմունքն ծոյեն նաևս առաւել կատարելագունի մաքրման իմիք, յաղագս որոյ կամիմ նախ քան զտալն իմ զնս քեզ, ասել զոմանս իրս զայսմանէ առաւել կատարելագոյն մաքրեցմա_նէ, առ որ ցանկամ նաևս ածել զքեզ:

## Յաղագս թէ պիտոյ իցէ մաքրել 'ի յիղձից, որք են առ ներելի մեղս:

### Գլուխ · ԻԲ:

Ըստ որում չափոյ յառաջանայ օրն աճելով, այնու չափով և՛ս մեք տեսանեմք յաւէտ պարզապէս զաղտն և զտգեղութիւն երեսաց մերոց: Եւ նմանապէս որով չափով իցէ ներքին լոյսն Հոգւոյն Սրբոյ, որ պարզէ զխղճմտանսն մեր, այնու չափով տեսանեմք և մեք առաւել բացորոշապ̃ և պարզապէս զմեղս, զյօժարութիւնս, և զանկատարելութիւնս, որք կարեն արգելուլ 'ի մեզ զգնացումն ճշմարիտ ջերմեռանդութեան: Եւ նոյն ներքին լոյսն, որ զմեզ առնէ տեսանել զայսոսիկ վնասս և զպակասութիւնս, համանգամայն նաև բորբոքէ զմեզ 'ի յիղձ' առ 'ի մաքրել և սրբել զայնս:

* Դու ուրեմն բարեկամ իմս' ո՛վ խանդակաթդ, թէ բաց 'ի մահցու մեղաց, նաև 'ի յըղձից առ նոյն մահցու մեղսն' յորոց դու մաքրեցեալ և սրբեցեալ եղեր 'ի ձեռն կրթութեան, որք ցուցան քեզ 'ի վերոյ, Տակաւին ունիս դու 'ի հոգւոջ քում զբազում յօժարութիւնս և զիղձս առ ներելի մեղս: Արդ ես ոչ ասեմ քեզ' թէ 'ի բաց հատ ամենևին զներելի մեղս, այլ ասեմ թէ' 'ի բաց հատ զիղձս, և զյօժարութիւնս առ այնս: Քանզի այս երկոցունցս յոյժ զանազան է մինն 'ի միւսոյն. քանզի ոչ կարեմք մեք երբէք մնալ ամենևին մաքուր 'ի ներելի մեղաց, և դոնեայ մնալ երկար ժամանակաւ յայս մեկ մաքրութեան: բայց սակայն կարեմք մեք բա-

րեպէս

րեպէս , ոչ ունիլ զիղձ առ ներելի մեղս : Զի այլ ինչ է ասել զմի, և կամ երկու անգամ զթեթև սուտ իմն՝ սակս ուրախութեան իմիք, և այն՝ 'ի յիրս , որ լինի 'ի փոքրագունի վարկման . և այլ ինչ է հեշտանալ 'ի յասել զսուտ, և ըղձահարիլ առ այս տեսակս մեղաց:

* Արդ ես ասեմ, թէ պիտոյ է մաքրել զհոգին 'ի ընաւից ըղձից, զոր ունի ոք առ ներելի մեղս, զի ոչ է պարտ անուցանել ումեք զկամքն իւր առ 'ի մնալ և յարատևել 'ի տեսակ իմն ներելի մեղաց : Քանզի լինէր այս մեծագոյն թուլութիւն և հեղգութիւն իմն, կամիլ պահել 'ի խղճմտանս մեր զիր իմն, որ այնքան անհաճոյ է այ , ոպ և է կամքն անհաճոյանալ նմա: Զի ներելի մեղքն , թէ և որքան փոքրագոյն իցէ՝ անհաճոյ է այ , թէպէտ ոչ այնքան անհաճոյ է նմա , որոյ վն կամիցի դատապարտել և կորուսանել զմեզ : Արդ եթէ ներելի մեղքն անհաճոյ է նմա, ուրեմն կամքն և իղձն , զոր ունի ոք առ ներելի մեղս , ոչ է այլ ինչ՝ քան առաջադրութիւն իմն կամիլ անհաճոյանալ ածայնոյ հանդիսավեհութեան նորին : Եւ մի՞ թէ կարելի իցէ այս , որ հոգի ոմն՝ ոչ միայն կամիցի անհաճոյանալ այն իւրոյ, այլ նաև կամիցի պահել առ ինքն զիղձս անհաճոյանալ նմա:

* Այսքիկ ըղձկունքս ո՞վ սիրահար այ՝ ուղղապէս ներհակք են ջերմեռանդութեան , որպէս և իղձքն առ մահացու մեղս՝ են ներհակք սիրոյ : Քանզի տկարացուցանեն զզօրութիւն հոգւոյն , արգելուն զածային մխիթարութիւնս , բանան զդուռն փորձութեան . և զի թէպէտ ոչ սպանանեն զհոգին, սակայն ծանրապէս տկարացուցանեն: Ճանճք Մեռեալք ( ասէ իմաստունն ) չարչարացուցանեն զիւղոյ անուշահոտն : Կամի ասել՝ թէ ճանճքն, որք ոչ յամին յոյժ 'ի վր իւղոյ, այլ զնա ուտեն միայն

միայն անցանելով, ոչ ապականեն՝ եթէ ոչ զայն միայն, զոր առնուն ։ իսկ մնացեալն մնայ յամբողջութե իւրում ։ Բայց յորժամ յամենայն նք 'ի վրն նր, բառնան զհամեղութիւն, և վատացուցանեն զնա ։ Այսպէս և ներելի մեղքն եթէ ոչ յամենայն 'ի յերկար ժամանակս 'ի ջերմեռանդ հոգւոջ ումեք, ոչ առաւել վնասեն նմա ։ Բայց եթէ յամենայն 'ի հոգւոջ ըղձիւ, յայնմանէ՝ որ ներմուծանէ զայնս, թարց երկբայութե բառնան և կորուսանեն զհամեղութիւն օծանելութե ։

վն զջերմեռանդութեն ։

* Սարդքն թէպէտ ոչ սպանանեն զմեղուս, բայց աւերեն և ապականեն զմեղրն նոցին. նա և արգելուն սոստայնիւքն իւրեանց զխորիսխն՝ զոր նք գործեն ։ և այս այնպէս, մինչ զի մեղուքն այլ ևս ոչ կարեն կատարել զպաշտօնս իւրեանց ։ Բայց այս իմանալի է յայնժամ, մինչ նք բնակին անդ ։ Այսպէս և ներելի մեղքն թէպէտ ոչ սպանանեն զհոգիս մեր, սակայն ապականեն զջերմեռանդութիւն ։ նաև այնքան չար ունակութբք և յօժարութբ լցուցանեն զզօրութիւնս հոգւոյն, մինչ զի ոչ ևս կարեն նք 'ի կիրարկել զյօժարութիւն և զարագութիւն սիրոյն, յորում կայանայ ջերմեռանդութիւն ։ Բայց այս պարտ է իմանալ՝ մինչ ներելի մեղքն լինի 'ի խղճմտանս մեր 'ի ձեռն ըղձի, զոր մեք պահեմք դէպ 'ի նա ։

* Արդ այս լինի ոչ ինչ իմն՝ ո՛վ սիրահար, վն ասել զփոքրագոյն սուտ իմն անվնաս, երանել սակաւ մի 'ի կանոնէ խօսակցութեց, գործոց, հայեցմանց, զգեստուց, ծիծաղմանց, եթէ 'ի մտանելն այսոցիկն հոգեկ սարդից 'ի խղճմտանս մեր՝ արտաքսիցեմք զնս, որպ և մեղուքն արտաքսեն զմարմնաւոր սարդս ։ Բայց եթէ թողուցումք զնս յամենալ 'ի սիրտս, նաև բաց 'ի յայսմանէ՝ եթէ ըղձահարիցիմք առ 'ի ընդունիլ և բազ

մացուցանել զնա, այնու շուտով տեսանեմք զմեզըն մեր բոլորովին ապականեալ, և բոյնն խղճմտանաց մերոց կործանեալ և աւերեալ:

Բայց ես դառնամ առ'ի ասել վերստին : Թէ ո՛րպէս կարէ լինիլ այս, զի բարեպաշտ անձն ումն հաճիցի տհաճոյանալ աստուծոյն իւրոյ, նաև ըղձահարիցի առ'ի անհաճոյ լինիլ նմա . և կամիցի կամիլ զայն, զոր գիտէ գոլ վնասակար իւր, և ինքեան:

## Յաղագս Թէ պիտոյ է հրաժարել 'ի անօգուտ ըղձից և յորոգայթաւոր իրաց:

## Գլուխ . ԻԳ.

ԹԷպէտ խաղքն, պարեցմունքն, դափմունքն, հանդէսքն, և Թէատրոնքն ըստ ինքեանց ոչ են վատ իրք, այլ մանաւանդ են անզանազան իրակուԹիք, որ կարէ բարեպէս և չարապէս 'ի գործ ածիլ: Սակայն միշտ են որոգայԹաւորք . ուստի և ըղձահարիլն 'ի նա է իր իմն առաւել որոգայԹաւորագոյն: Ուստի ասեմ քեզ ո՛վ սիրահարդ առաքինուԹեանց, դիցուք Թէ օրինաւոր իցէ խաղալն, պարելն, զարդարիլն, լսել զհամեստ Թէատրոնս, և խրախճանելն: Սակայն ըղձահարիլն առ սոսա է ներհակ ջերմեռանդուԹեան, նաև է մեծապէս վնասակար և որոգայԹաւոր: Ուստի Թէ և ոչ լինիցի չար առնելն զնա, սակայն լինի չար ըղձահարիլն 'ի նա: Այս է մեծ վնաս իմն՝ սերմանել 'ի յերկրի սրտի մերոյ զայսպիսի ունայն և խեղաԹ իղձս: Այս զբաղէ և պաշարէ զտեղին

բարւոյ ներտպման, և արգելու ես՝ զի մի՛ կիրարկանիցի ՚ի հոգւոջ մերում հուրն սիրոյ, առ բարի յօժարութիւն և առ բարի հակումն:

* Այսպէս նախկին Նազօրեցիքն՝ ոչ միայն ժուժկալէին ՚ի յայնց ընաւից, որ կարէր արբեցուցանել զնս̄, այլ ես հրաժարէին ՚ի խաղողոյ և ՚ի յաղոխոյ: Ոչ թէ խաղողն և կամ աղոխն արբեցուցանէ, այլ այնու՝ զի էր որոգայթ իմն, զի գուցէ ուտելովն զաղոխ զարթուցանիցէր իղձն առ՚ի ուտել և զխաղողն, և ուտելովն զխաղողն գրգռիցիւր ախորժակն նաև ՚ի յըմպել զքաղցու, և զգինի: Արդ ես ոչ կամիմ ասել, թէ մեք ոչ կարեմք ՚ի կիրարկանել զայս որոգայթաւոր իրքս, այլ կամիմ ասել, թէ մեք ոչ կարեմք երբէք դնել զիղձն մեր ՚ի նս̄ թարց ապականելոյ զջերմեռանդութիւն մեր:

* Լողջերուքն մինչ յոյժ դիրանան, ժողովին և քարշեցեալք դնան ՚ի մէջ անտառաց, ճանաչելով թէ՝ առաւել գիրութիւն այնպէս ծանրացուցանէ զնս̄, մինչ զի ոչ ես լինին յարմարք առ՚ի ընթանալ՝ եթէ հալածիցին ՚ի յորսորդաց: Այսպ̄ ես սիրտն մ̄դկային ծանրանալով այսոքիւք անօգուտ, աւելորդ, և որոգայթաւոր ըղձիւք, ոչ կարէ թարց երկբայութե̄՝ յօժարապէս, թեթևապէս, և դիւրապէս ընթանալ զկնի տ̄յն իւրոյ, որ է միջին կէտ և նպատակ ճշմարիտ ջերմեռանդութե̄:

Փոքրիկ մանկուքն ըղձահարին և բորբոքին վազելով զկնի թիթղանց, և ոչ ոք է՝ որ ծիծաղի զնոքօք, այնու զի են մանկունք: Բայց ոչ միայն լինէր նա իր ծիծաղելի, այլ և մանաւանդ լալոյ արժանի, տեսանել զկատարեալ մ̄դիկս աշխատիլ և ըղձահարիլ զկնի այնքան փոքերց և անարժանադունից իրաց, որ̄լք են նոյն թիթղունքն: Որքբաց ՚ի անօգտակարութե̄ իւրեանց,

նա

նա եւ գնեն զմեզ 'ի յորոգայթի առ 'ի հետեւիլ նոցա անկանոնաբար եւ անկարգապէս ։ Վասն որոյ սիրահարդ առաքինութեն, պարտ է մաքրել 'ի յըղձից, թէեւ գործքն ոչ իցեն միշտ ներհակք ջերմեռանդութեն, սակայն իղձքն առ այնոսիկ միշտ են վնասակարք ։

## Յաղագս թէ պարտ է հաճրել 'ի հատուոր յօժարութեանց ։

### Գլուխ ․ ԻԴ ։

ՈՒնիմք տակաւին մեք ո՛վ սիրահարդ առաքինութեն, զոմանս ընական յօժարութիւնս եւ զհակմունս, որք վասն ոչ առնելոյ զսկիզբն իւրեանց 'ի մասնաւոր մեղաց մերոց, այնու ոչ համարին յանցապէս մեղք, ոչ մահացուք եւ ոչ ներելիք, այլ կոչին անկատարելութիւնք, ներգործութիւնք, եւ պակասութիւնք նոցին ։ Զոր օրինակ ․ սրբուհին փաւլայ ( որպէս պատմէ սբն ջերոնիմոս ) ունէր զմի մեծ հակումն առ տրտմութեն եւ առ տխրութեն ։ Վասն որոյ 'ի մահուան որդւոց, եւ առն իւրոյ բազմիցս պատահեցաւ որոգայթի մեռանելոյ սակս տհաճութեն ։ Այս էր անկատարելութիւն նորա՝ եւ ոչ մեղք, որովհետեւ էր ընդդէմ հաճութեն եւ կամաց իւրոց ։ Արդ են ոմանք, որք բնականաբար թեթեւք են, եւ ոմանք խիստք՝ առ 'ի ընդունիլ զկարծիս այլոց ։ ոմանք հակեալք առ ծիծաղ ։ ոմանք առ ղայրացումն, եւ այլք ոմանք առ սէրն ։ Եւ վերջապէս, սակաւ ոմանք գտանին, 'ի յորս ոչ կարիցէ տեսանիլ տեսակ ինչ յայսպիսեաց անկատարելութեանց ։

* Արդ՝ թէ և իցեն այնք իբր բնականք և յատուկք իւրաքանչիւր ումեք, սակայն կարեն ուղղիլ և մաքրիլ ներհակ ըղձիւ, որովհետև մեք կարեմք զինքս ազատել և զերծուցանել յայնցանէ։ Ուստի ասեմ քեզ ո՛վ սիրահար առաքինութեան, թէ պիտոյ է առնել նա և զայս մաքրումս։ Քանզի եթէ գտանեցեալ է եղանակ առ՚ի փոխարկել զդառն նուշն ՚ի քաղցր նուշ, միայն ծակելով զստորոտն ծառոյն՝ զի ելանիցէ անտի դառնագոյն հիւթն։ Եւ ընդէ՞ր մեք ոչ կարեմք հանել ՚ի սրտից մերոց զթիւր յօժարութիւնս և հակեցմունս մեր առ՚ի լինել բարեգոյն։ Զի ո՛չ ոչ գտանի ոք ՚ի մեզ, այնքան բարի բնութեամբ, որ ոչ կարիցէ լինել վատթար ՚ի ձեռն մոլութենական ունակութեան։ Այսպէս և ոչ գտանի այնքան վատագոյն և գազանաբարոյ ոք, որ ոչ կարիցէ նախախնամութեան շնորհօքն Աստուծոյ, և յետոյ հանճարեղութեամբ և հոգունակութեամբ՝ զոլ նոցա ծնեցեալ և յաղթեցել։

* Պարտ է ուրեմն այժմ տալ քեզ զազդեցմունս, նաև յառաջադրել քեզ զկրթութիւնս, որոց միջնորդութեամբն կարիցես դու մաքրել զհոգի քո ՚ի յըղձից ներելի մեղաց, նա և ՚ի յօրոգայթաւոր ըղձից, և յանկատարելութեանց։ Եւ այսպէս առնելով միշտ առաւել ապահով առնիցես զխղճմտանս քո ընդդէմ ամենից մահացու մեղաց։ Եւ Աստուած տացէ քեզ զշնորհս առ՚ի բարեպէս կիրարկել զայնս։

Վերջ Առաջնոյ Մասին։

ՄԱՍՆ

# ՄԱ՛ՍՆ ԵՐԿՐՈՐԴ։

## ՆԵՐԱԾՄԱՆ ԱՌ ՋԵՐ ՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ։

Որ պարունակէ զանազան Ազդեցմունս վ՟ն վե-
րացման հոգւոյն առ Ա՟ծ ՚ի Յաղօթս,
և ՚ի Սրբազնութիւնս։

### Յաղագս հարկաւորութեան Աղօթից։

### Գլուխ . Ա։

ԱՂՕԹՔՆ ԴՆԷ ԶԻՄԱ-
ցականութ̃ին մեր ՚ի պայծառութ̃ե,
և ՚ի յա՟ծային լուսում. և զկամքն
մեր առ ջերմութ̃ե երկնային սի-
րոյ։ Ոչ գոյ ՚ի մեզ այլ իր իմն, որ
այնու կերպիւ՛ մաքրիցէ զիմացականութ̃ին մեր ՚ի
տգիտութ̃է իւրմէ, և զկամքն մեր ՚ի թիւր և յա-
պականեա՟լ ըղձից իւրոց՝ որպէս է աղօթքն։ Այս է
ջուրն օրհնութ̃ե, որ ոռոգանելով զմեզ առնէ
սաղարթանալ և կանաչիլ, և կամ ծաղկիլ տունկն
բարի ըղձից մերոց. և լուանայ զհոգին մեր ՚ի
յանկատարելութ̃եց իւրոց, և ազատէ զսիրտն
մեր ՚ի յախտից իւրոց։

2\. Բայց ՚ի վեր քան զընդա՞ս ես տամ քեզ զխոր

հուրդ և զխրատ վ՟ն մտաւորական և սրտական աղօթից, և յատկապէս վ՟ն այնորիկ՝ որ առնանի 'ի վ՟ր կենաց և չարչարանաց Տ՟ն մերոյ. ուստի խոկալով զնա բազմիցս 'ի մտածման, այնու ընտանի բոլորովին հոգին քո նմա : Ուրեմն տեղեկացիր և հմուտ լեր դու վարուց և չարչարանաց նորին, և համակերպեա՛ զգործս քո գործոց նորին : Քանզի նա է լոյսն աշխարհի, ուրեմն 'ի նմա, 'ի նմանէ, և նովաւ պարտիմք մեք զոլ պայծառացեալք և լուսաւորեցեալք : Այս է ծառն ընձից և փափաքմանց, 'ի յստուերի որոյ պարտիմք մեք զովանալ: Այս է կենդանի աղբիւրն յակոբայ առ 'ի լուանալ զմեզ 'ի բնաւից աղտեղութեանց մերոց:

Սոնդեայ մանկունքն լսելով զխօսիլն մարց իւրեանց, և ինքեանք ևս թոթովելով և թլուատելով 'ի յինքեանս, ուսանին խօսիլ զեզուս նոցին: Ե՛րբ մեք յամելով մտածմամբ առաջի ամենափրկչին մերոյ, և պահելով զբանս, զգործս, և զիղձս իւր, ուսանիմք 'ի ձեռն միջնորդութեան շնորհաց իւրոց, մտածել, առնել, և կամիլ ո՛պ և ինքն : Գիտոյ է ո՞վ խանդակաթ առաքինութեան, հաստատիլ և մնալ աստ: Ե՛րբ ահապատ՛ ինձ, զի մեք ոչ կարեմք գնալ առ Ա՟ծ հայր, եթէ ոչ այսու դրամբ: Ե՛րբ ո՛չ ապակին հայելւոյ իմիք, ոչ կարէր քարշել առ ինքն զտեսութիւն մեր, եթէ ոչ իցէր 'ի յետ կուսէ ծածկեցեալ յանագէ և 'ի կապարոյ : Այսպէս ևս ոչ կարէր բարեպէս խոկացեալ և մտածեցեալ լինիլ ա՟ծութին 'ի մէնջ՝ յայսմիկ ստորնագունի աշխարհի, եթէ ոչ իցէր միաւորեցեալ ընդ մարդկութեան ամենափրկչին մերոյ: Որոյ կեանքն, և մահն են առաւել համեմատեալ, քաղցր, հեշտալի, փափուկ, և շահաւէտ առարկայ, քան թէ մեք կարիցեմք ճանաչել հասարակ մտածմամբ մերով: Ե՛րբ ոչ թարց պատ-

ճա

Ճառն է այս, որ փրկիչն մեր կոչէ հաց իջեալ յերկնից. զի ո՞չ հացն պարտի ունել ը՟ ա՟մ ցեղ կերակրոյ: Այսպէս ամենափրկիչն մեր, պարտի մտածեցեալ, խոկացեալ, և խնդրեցեալ լինել ՚ի յա՟մ գործս, և ՚ի յաղօթս մեր: Ուստի կեանքն և մահն նորին՝՝ ՚ի բազում հեղինակաց բաժանեցեալ է ՚ի զանազան մասունս, առ ՚ի յարմարել մտածման: Բայց զայնս, զորս ես ընծայեմ քեզ են ա՟յն Պօնավէնդուրայ, Պիլէնթանի. Պռօնսսի. Քափիլէյայ. և Կռանաթայ:

3. Ծախեա՛ դու առ այս գործ յա՟մում աւուր զժամ մի յառաւօտու, և եթէ կարելի իցէ ՚ի սկիզբն աւուր քո. որովհետև ունիս դու ազատ և առաւել պարզ զմիտս քո զկնի գիշերային հանգստեան: Սակայն մի՛ երկարեր զայն առաւել քան զժամ մի, եթէ հոգևոր հայրն քո ոչ յատկացուցեալ է քեզ յայտնապէս՝ առ ՚ի յերկարել:

4. Ե՞ւ եթէ դու կարիցես առնել զայս կրթութիւս ՚ի մէջ եկղ՟ցւյ, յորում զքեզ գտանես անդբաւականապէս հանդարտ և հանդիստ, յայնժամ այս լինի քեզ յոյժ շահաւէտ և հանդարտ: Քանզի ոչ ոք է, որ արգելուլ կարէ զկալն քո ՚ի յեկեղեցւոջ. ոչ հայր, ոչ մայր, ոչ կին, ոչ այր, և ոչ այլ ոք: Ե՞ւ ՚ի կալն քո ՚ի նեղութեան և ՚ի ձանձրութեան խմիք, դու ոչ կարես խոստանալ քեզ ունել ՚ի խցի քում՝ թերևս զժամ մի այնպիսի անդորրութեան:

5. Սկսեա՛ զա՟մ տեսակս աղօթից, թէ իցէ մտաւորական, և թէ ձայնաւորական՝ առաջի Ներկայութեան Ն՟յ. և պահեա՛ զայս կանոն թարց ընդդիմութեան խմիք: Եւ ՚ի մէջ սակաւ ժամանակի տեսանես դու, թէ որքան շահ և օգուտ լինի քեզ.

6. Ե՞ւ եթէ հաւատաս բանից իմոց, զոր ասեմ քեզ. առա՛ դու զՀայր մերն քո. և զՈղջ՟յն քեզն,

և զՀաւատամք 'ի մի ածն, ո՛չ և գրեալ է գրաբառ լեզուաւ : Բայց սակայն ուսի՛ր և առ 'ի իմանալ զբանսն, որք են 'ի նոսա աշխարհաբառ լեզուաւ քով: Զի 'ի յասելն քո զայնս հասարակ լեզուաւ եկեղեցւոյ, կարիցես ճաշակել զզարմանալի և զհեշտալի իմացումն այս սբ աղօթիցս, զորս պիտոյ է ասել՝ խորապէս հաստատելով զմտածումն քո, և զարթուցանելով զկիրս քո 'ի վր իմացմանն այնորիկ: Ոչ պարտիս շտապել կերպիւ իմիք առ 'ի ասել զբազումս, այլ պարտիս հնարել քեզ առ 'ի ասել զայն մտաւորապէս : Քանզի մի միայն հայր մերն՝ իմացմամբ և զգացմամբ ասացեալ, առաւել արժէ քան զբազումս, որք շտապօրէն և փութապէս ասացեալք լինին :

7. Պսակն կուսին, է օգտակարագոյն կերպ աղօթելոյ, միայն թէ գիտիցես դու ասել այնպ, ո՛չ և պարտ է : Ե՞ւ առ 'ի առնել զայս, ա՛ռ զգրդուկ իմն յայնց գրեանց, որք ուսուցանեն զկերպն ասելոյ զայն: Նաև յոյժ բարեգոյն է ասել զլիթանիայն Տն. Ածածնի. և Սրբոց, և զայլ բնաւ ձայնաւոր աղօթս, որք են հանապազորդականք, նաև ընտրեալք և հաստատեալք ժամակարգութիւք: Սակայն այսու տարբերութբ, զի եթէ դու ունիցիս զպարգևն մտածական աղօթից, թող նմա միշտ զնախկնագոյն տեղին : Ե՞ւ այս այնպէս, զի եթէ զկնի այն մտածական աղօթիցն, սակս բազմութն զբաղմանց. և թէ սակս այլոյ իմիք պատճառի՝ դու ոչ կարիցես առնել զձայնաւոր աղօթս, մի՛ նեղիցես զքեզ յաղագս այսորիկ, այլ բաւական համարեա՛ ասել պարզապէս կամ յառաջ, և կամ զկնի, զՏէրունական աղօթքն, զՀրեշտակական ողջոյնն, և զՀանգանակն առաքելոց :

8. Եթէ 'ի առնելն զձայնաւոր աղօթս, դու զգայ

ցես

ցես քարշեալ և շարժեալ զսիրտն քո առ մտածական և առ ներքին աղօթս, մի՛ խոտեր ընաւ կէտ մի առ՚ի հակիլ անդ, այլ թող զմիտն քո ընթանալ քաղցրապէս ՚ի յայն կողմն։ Եւ մի՛ ձանձրացեալ նեղիցիս վն ոչ ունելոյդ զվախճան ձայնաւոր աղօթից քոց, զորդու առաջադրեցեր առ՚ի առնել. քանզի մտածական աղօթքն, զորդու արարեր ՚ի տեղի նց, առաւե՛լ հաճելի է այ, և յոյժ օգտակար է հոգւոյ քո։ Սակայն այս իմանալի է բաց ՚ի յեկեղեցական ժամակարգութենց, եթէ պարտաւանդեալ իցես առ՚ի ասել զնա, զի ՚ի յայսմիկ պատահման պիտոյ է հատուցանել զպարտն։

9. Եւ եթէ պատահիցի անցանիլ բոլոր պահն առաւօտու թարց այսորիկ կրթութենս մտածական աղօթից, և այս ՚ի պատճառս բազմութե զբաղմանց, և կամ վն այլոյ իմիք պատճառի. (զոր սակայն ջանալ պարտիս դու, որքան և իցէ կարելի, զի մի՛ պատահիցի այս։) Յայնժամ խնդրեմ նորոգել զայս պակասութիւս զկնի կէս աւուր կերակրոյ, ժամանակ ինչ տարակաց և հեռի ՚ի յադեցմանէ կերակրոյ։ Քանզի եթէ առնիցես զայն իսկոյն զկնի կերակրոյն, և կամ յառաջ քան թէ մարսումն բարեպէս ընթացեալ իցէ, այնու քուննն տայ քեզ զձանձրութի, նաև առողջութիւն քո անկանի ՚ի յորոգայթ իմն հիւանդութե։ Զոր նաև եթէ ոչ կարիցես առնել ՚ի բոլոր օրն, պարտ է նորոգել զայս կորուսեալս, բազմացուցանելով զբոլորոքական աղօթս, ՚ի ձեռն ընթերցման ջերմեռանդական և ապաշխարական դրքոյ իմիք, զի արդելցէ Տր զշարունակութիւն այսորիկ պակասութե։ Եւ այսու արարմամբս՝ արա զհաստատ իմն առաջադրութիւն առ՚ի դնել ՚ի կարգի զսկսեցեալն քո՚ի հետևեալ աւուրն։

Հա-

## Համառօտ կերպ մտածման. և Նախապէս յաղագս ներկայութեն ա՟յ, որ է Առաջին կէտ նախապատրաստութեան:

### Գլուխ. Բ:

Արդ' թերևս ոչ գիտես դու ո՞վ խանդակաթդ ա՟յ, թէ ո՟պ առնել պարտ է զմտածական աղօթս: Քանզի այս է այնպիսի իր ինչ, որ սակս մերոյ թշուառութե, սակաւ ոմանք գտանին, որք առնեն 'ի յայսմիկ ժամանակի: Վ՟ս այսորիկ ես ցուցանեմ քեզ զպարզագոյն և զհամառօտագոյն կերպ ինչ վ՟ս այս գործոյ: յուսալով' զի 'ի ձեռն ընթերցման պէս պէս գեղեցիկ գրեանց, որք են շարադրեցեալք վ՟ս սոյն առարկայի, նաև 'ի վեր քան զբնաւս կիրառմամբ նոցին, կարիցես դու գոլ առաւել ներկրթեցեալ և վարժեցեալ: Ուստի ուսուցանեմ քեզ յառաջին տեղւոջ, զնախապատրաստութին մտածական աղօթից, որ կայանայ 'ի յերկու կէտս: Որոց առաջինն է դնել զինքն 'ի ներկայութեն ա՟յ: և Երկրդն է կոչել և հայցել զօգնութին նորին: Արդ' առ 'ի դնել զքեզ առաջի ներկայութեն ա՟յ, առաջադրեմ քեզ զչորս գլխաւոր կերպս, 'ի ձեռն որոց կարիցես ծառայել դու յայսմիկ սկզբան:

* Առաջին կերպն կայանայ, 'ի մի կենդանի և մտադիր ըմբռնման ներկայութեն ա՟յ: Այնպէս' թէ ա՟ծ է 'ի յա՟մս, և 'ի յա՟մ ուրեք. նաև' թէ ոչ է տեղի, և ոչ իր ինչ յայսմիկ աշխարհի, ուր ոչ իցէ ա՟ծ' միով ճշմարտագունիւ ներկայութբ: Զոր օրինակ. ո՟պ թռչունքն յո՛ր կոյս և թռչիցին,

ցին , միշտ հպին և հանդիպին օդոյ : Այսպէս մեք ևս՝ յո՛ և գնայցեմք , և կամ ուր ուրեք և իցեմք , միշտ գտանեմք զԱծ ներկայապէս : Արդ. Թէպէտ ամ ոք գիտէ զայս ճշմարտութիւն , բայց սակայն ոչ ամ ոք դնէ զհոգ առ 'ի այնպ ըմբռնել զնա : Կոյրքն Թէև ոչ տեսանեն զիշխանումն՝ որ կայ առաջի նց , բայց այնու ոչ Թողուն զկալն ամօԹով և պատկառանօք , մինչ զգացուցեալք լինին յայլոց , Թէ իցէ նա ներկայ : Բայց ճշմարիտ է նաև այս , զի նոքա ոչ տեսանելով զնա , որ է ներկայ՝ այնու դիւրապէս մոռանան զներկայացումն նորին , և մոռանալով՝ դիւրապէս կորուսանեն ևս զյարգումն և զպատիւն նորին :

Արդ աւա՜ղ մեզ ո՛վ սիրահարդ Այ : Թէպէտ մեք ոչ տեսանեմք զԱծ՝ Թէ իցէ մեզ ներկայ , սակայն հաւատոն ազդ առնէ մեզ զներկայուԹէ նորին : Ե՞ւ զի մեք ոչ տեսանեմք զԱծ աչօք մերովք , այնու բազմիցս մոռանամք զնա . ուստի և այնպէս կենցաղավարիմք , ո՛պ Թէ Ած յոյժ հեռագոյն իցէ 'ի մէնջ : Զի Թէև ս գիտեմք , Թէ նա 'ի բնաւ իրս է ներկայ . բայց ոչ մտածեմք կէտ մի , ո՛պ Թէ ոչ գիտեմք զնա : Արդ՝ այս է պատճառն , որ նախ քան զամօԹս պարտ է միշտ կոչել զհոգին մեր , առ մի մտադիր մտածումն , և առ մի զգուշ խոկումն՝ վս այս ներկայուԹեն Այ : Այս էր ըմբռնումն դաւԹի , մինչ աղաղակէր . Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես , և Թէ իջանեմ 'ի դժոխս՝ և անդ մօտ ես : Ե՞ւ այսպէս ևս պարտիմք մեք 'ի կիրառնուլ զբանն յակոբայ , որ 'ի տեսանելն զայն մրգն սանդուղն , զանհիհարեալ ասաց : Ահեղ է տեղիս այս . և ոչ է այս՝ եթէ ոչ տուն Այ , և ես ոչ գիտէի : Կամի ասել , Թէ ինքն զնա ոչ մտածէր . քանզի նա այլով ոչ կարէր տգիտանալ , Թէ Ած ոչ իցէր 'ի բնաւս , և յամ ուրեք ,

տուրէք: Գնալով ուրեմն առ'ի աղօթել ո՞վ խանդակաթ առաքինութե, պիտոյ է ասել առ սիրտն քո, ո՞վ սիրտ իմ, ո՞վ սիրտ իմ, ած աստ է ճշմարտապէս:

* Երկր. կերպն գտնելոյ զքեզ 'ի ներկայութեն այ, է մտածելն՝ թէ ած ոչ միայն է 'ի տեղւոջն յայնմիկ, ուր դու կաս, այլ ևս յատկապէս է 'ի սրտի քում, և 'ի խորս հոգւոյ քոյ, որ կենդանացուցանէ և զօրացուցանէ զնա իւր ածային ներկայութբն, և կայ անդ որպ այլ իմն սիրտ սրտի քոյ, և հոգի հոգւոյ քոյ: Վն զի որպ հոգին մարդոյ տարածեալ կայ 'ի բոլոր մարմնի ; և գտանի ևս 'ի բոլոր մասունս նորին, սակայն բազմի 'ի սրտի յատուկ բազմելութբ իմիք: Նոյնպէս ած գոլով ներկայ 'ի բնաւ իրս, բայց սակայն բազմի յատուկ կերպիւ միով 'ի սրտի քում: Եւ վսկ դաւիթ կոչէր զած, Ած սրտի իմոյ: Եւ սբն պօղոս ասէր. Թէ մեք կեամք, և եմք 'ի յած: Ուրեմն 'ի մտածմանէ այսորիկ ճշմարտութե, զարթո՛ դու 'ի սրտի քում զմեծագոյն յարգումն իմն դէպ 'ի յած, որ այնքան անհնութբն է ներկայ իւրոյ իմքեան:

* Երրորդ կերպն է մտածել զփրկիչն մեր, որ մրդկութբն իւրով հայի 'ի բնաւ անձինս աշխարհի, բայց եղականապէս 'ի քրիստոնեայս, որք են որդիք իւր, և յատկապէս 'ի յայնս, որք աղօթեն, որոց զգործս և զաշխատանս առնշանադրէ: Արդ այս ոչ է մի սոսկ երևակայութի, այլ ճշգրտագոյն իմն ճշմարտութի: Քանզի թէ պէտ մեք զնա ոչ տեսանեմք, սակայն նա 'ի վերուստ անտի հայի 'ի մեզ, և տեսանէ զմեզ: Այսպէս զնա ետես սբն ստեփաննոս 'ի ժամանակի մարտիրոսութե իւրում: Որոյ վս և մեք կարեմք ասել ընդ հարսին, Ահաւասիկ սա կայ յետուստ որմոյն մերոյ: յառեալ ընդ պա_

տուհ

ՊԱՏՈՒՀԱՆՍՆ, ՀԱՅԵՑԵԱԼ ԸՆԴ ՎԱՆԴԱԿԱՊԱՏՍՆ:

* Զորրորդ կերպն կայանայ 'ի պարզ երևակայութեան, ներկայացուցանելով մեզ զփրկիչն մեր յամենասուրբ մարդկութեան իւրում, որպէս թէ իցէ առ մեզ: Զի որպէս սովոր եմք մեք ներկայացուցանել 'ի մեզ զբարեկամն մեր, և ասել. թէ ես պատկերակերպեմ 'ի յիս տեսանել զմի ոմն, որ առնէ զայս գործ, և զայն գործ: Ինձ թուի տեսանել զնա, և կամ զայլ նմանս: Բայց եթէ ամենասուրբ հաղորդութիւն իցէ ներկայ, յայնժամ այս ներկայութիւն լինի իրական, և ոչ պարզ երևակայական: Քանզի տեսակն և երևոյթն հացին լինի որպէս զօթոց իմն, 'ի մէջ որոյ Տէրն մեր գոլով իրականապէս ներկայ տեսանէ և նկատէ զմեզ, թէպէտ մեք ոչ տեսանեմք զնա 'ի յատուկ տեսակի իւրում: Դու ուրեմն 'ի կիրարկ ով խանդակաթ առաքինութեան զմինն յայսոցիկ չորից կերպից, առ 'ի դնել զհոգի քո 'ի ներկայութեան Աստուծոյ, նախ քան զաղօթս: Եւ ոչ է պիտոյ կամիլ 'ի գործ արկանել զընաւն իմաստն, այլ միայն զմինն միանգամ, և զայլս այլ անգամ, և այս համառօտապէս և պարզաբար:

## Յաղագս Ներքնոյման, որ է Երէկր հետ Նախապատրաստութէ:

### Գլուխ . Գ.

Ս Երկոչումն լինի այսու կերպիւ: Կալով անձն քո առաջի ներկայութեն տյ, պարտի անկանիլ 'ի վր երեսաց իրոց խորագոյն յարգմամբ միով, ճանաչելով զինքն անարժանագոյն առ'ի կալ առաջի այնքան բարձրագունեղի համդիսավեհութե: Բայց սակայն դիտելով զայս, զի սոյնս կամի նոյն ինքն բարութին, զի խնդրեսցես 'ի նմանէ զշնորհս բարեպէս ծառայելոյ և երկրպագելոյ նմա յայսմիկ մտածման: Եւ եթէ կամիցիս դու՝ կարես 'ի կիրարկանել զոմանս համառօտ և բորբոքական բանս դաւթի, այսու կերպիւ: Մի՛ ընկէնուր զիս Տր յերեսաց քոց, և զհոգի քո սբ մի՛ հաներ յինէն: Երեսցո՛ զերեսս քո 'ի ծառայս քո. և ուսո՛ ինձ զարդարութիս քո: Իմաստո՛ւն արա զիս՝ և քննեսցես զօրէնս քո. և պահեսցես զնա բոլորով սրտի՛ իմով: Ծառայ քո եմ իմաստուն արա՛ զիս, և ծանեայց զվկայութիս քո: և զայլս այսպիսիս:

* Նաև օգնէ քեզ առակցելն զկոչումն պաշտպան հրեշտակի քո, և ևս այն սբոցն անձանցն՝ որք համբնթանան առ խորհրդաւոր իրն, զորմէ դու մտածես: Զոր օրինակ, 'ի մտածելդ զմահուանէ Տն մերոյ՝ կարես դու ներկոչել զերանուհի կոյսն մարիամ. զսբ Յօհաննէս աւետարանիչն. զսրբուհի Մարիամ մագդաղենացին, նաև զբարի Աւազակն: Եւ այս այնու աղագաւ. զի զայն ներքին զգացմունքն և շարժմունքն, զորս նոքա

ըն.

ընկալան, նաև քեզ հաղորդեսցեն։ Նմանապէս և 'ի մտածման քոյոյ մահուան, կարես դու ներկոչել զքո պահապան հրեշտակն, առ 'ի գտանիլ ներկայ, զի ներշնչեսցէ 'ի քեզ զպատկանաւոր մտածմունս։ Եւ այսպէս իմա՛ զայլոց խորհրդաւոր իրաց։

## Յաղագս առաջադրութե խորհրդաւոր իրի, որ է Երրդ կէտ նախապատրաստութե ։

### Գլուխ . Գ։

Օկնի այսոցիկ երկու հասարակական կխտիցս մտածման, հետևի երրորդ կէտն, որ ոչ է հասարակ առ ամ տեսակ մտածման։ Եւ այս է այն, զոր ոմանք կոչեն շարակարգութի, և կամ շար դրութի տեղւոյ. և այլք ոմանք ներքին ընթերցումն։ Արդ՝ այս ոչ է այլ ինչ, քան թէ առաջադնել երևակայութե իւրում զմարմնաւորութիւն խորհրդաւոր իրին, զորմէ ոք կամի մտածել, իբր թէ նոյն մտածեցեալն՝ իրականապէս, և ներգործութե անցանի 'ի ներկայութե իւրում։ Զոր օրինակ, եթէ կամիս մտածել դու զՏն մեր 'ի վերայ խաչին. պատկերակերպեա՛ դու զքեզ գոլ 'ի լերառն գողգոթայ, տեսանելով զայն ամ, որ լինի անդ, և լսելով զայնս բնաւս, որ ասի անդ։ Եւ կամ թէ՝ եթէ կամիցիս, ( որ մի և նոյն է ) պատկերակերպեա՛ 'ի քեզ, թէ 'ի նոյն տեղւոջ ուր և ես դու՝ լինի խաչեցումն Տն մերոյ, այնպիսի կերպիւ, ոպ և աւետարանիչքն գրեն ։ Զնոյնն ասեմ, յորժամ դու մտածիցես զմահուանէ. ոպ ասացի 'ի վերոյ 'ի մտածութե մահուան։ Ոպ և ս

'ի

'ի մտածման դժոխոց, և այլոց սոյնպիսեաց խորհրդաւոր իրաց, ուր առնանի երևելի և զգալի

իրակութիւնք:

Բայց սակայն 'ի մտածման այլոց խորհրդաւոր իրաց. որ լինի զմեծութիւն այ, և զգերազանցութէ առաքինութեանց, և կամ զվախճանէ՝ սակս որոյ ստեղծեցեալ եմք, որք են իրք աներևոյթք, ոչ է պարտ վարել այսպիսեաւ պատկերակերպութ̃: Եւ զի թէպէտ կարէ վարել նմանութ̃ և բաղդատութ̃ իմն առ 'ի օգնել մխիթարութեն. սակայն սակաւ ինչ դժուարին է գտանելն այսորիկ կերպի: Եւ ես ոչ կամիմ ուսուցանել քեզ, եթէ ոչ զառաւել պարզագոյն կերպս, ևս զայնպիսիս՝ զի մի՛ աշխատիցի միտքն քո առ 'ի առնել զայնս: Արդ միջնորդութ̃ պատկերակերպութեանս այսորիկ, հաստատեսցուք մեք զմիտս մեր 'ի մէջ խորհրդաւոր իրին, զորմէ կամիմք մտածել, զի մի՛ տատանեսցի աստ և անդ, այլ ընթասցի՝ ոչ առաւել և ոչ նուազ, որ̃ ներփակլի թռչուն իմն 'ի մէջ վանդակի, և կամ որ̃ կապի բաղէն լարիւ առ 'ի կալ հաստատ 'ի վր̃ բռան: Բայց այսու ամի՛ թէպէտ ոմանք ասեն, թէ լաւագոյն է վարել միով պարզ մտածմամբ հաւատոյ, նաև բոլորովին մտաւոր և հոգևոր ըմբռնմամբ միով՝ 'ի ներկայացուցման խորհրդաւոր իրի այսորիկ: և կամ թէ մտածել զայնս, որք յղանեցեալք լինին 'ի մէջ յատուկ մտաց քոց: Սակայն այս է իր իմն յաւէտ նրբագոյն վր̃ սկզբան, մինչ տակաւին չև է վերացուցեալ զքեզ ա̃ծ 'ի բարձրագոյնս: Ուրեմն ո՛ խանդակաթ առաքինութեան. տամ ես քեզ զխրատ, զի կացեալ միայցես 'ի խոնարհագոյն ճանապարհի, զոր յայժմ ցուցանեմ քեզ:

✢ ✢ ✢ ✢

## Յաղագս Մտածման . որ է Երկրորդ մասն Մտածութեն ։

### Գլուխ . Ե ։

Զկնի գործոյ երևակայութե՛ն, հետևեն գործքն իմացականութե՛ն, զոր մեք կոչեմք մտածումն . որոց այլ ինչ է, եթէ ոչ մի, և կամ բազում մտածութի՛ն արարեալ, առ 'ի շարժել զհղձն մեր առ ած և առ ածային իրս ։ Որով զանազանի մտածութե՛ն 'ի յուսմանէ, և յայլոց խոկմանց և նկատմանց, որք ոչ առնանին վն ստանալոյ զառաքինութիւն, և զսէրն ածյ, այլ վն այլոյ վախճանի և դիտաւորութե՛ն . հի բա՛ր . առ 'ի լինել գիտուն, և իմաստուն, և կամ առ 'ի գրել և վիճաբանել ։ Ունելով ուրեմն ( որպէս ասացի 'ի վերոյ ) հաստատեալ զմիտն քո 'ի մէջ սահմանացն և եզերացն առարկայի, զորմէ դու կամիս մտածել . ( և այս կամ երևակայութե՛, ) եթէ մտածեցեալ առարկայն իցէ զգալի . և կամ պարզագոյն առաջադրութե՛, ( եթէ իցէ իմանալի և անզգալի . ) դու սկսիր առնել 'ի վր այնոցիկ զմտածմունս, որոց տեսեր զօրինակն եդեալ 'ի մտածութե՛ն, զոր քեզ ետու ։ Եթէ քո միտն գտանիցէ զբազում քաղցրութի լուսոյ, և պտղոյ՝ 'ի վր միոյ մտածման . կաց անդանօր հաստատ առանց անցանելոյ յայլ ։ Առնելով հանգոյն մեղուաց, որք ոչ թողուն զծաղիկն՝ մինչ գտանեն անդ զմեղրն ժողովելոյ ։ Բայց եթէ դու ոչ գտանես ըստ քոյոյ ըղձին՝ 'ի միում մտածման, զկնի սակաւ ինչ մտածելոյ և խոկալոյ՝ պարտիս անցանել առ այլ մտածումն . բայց ընթացիր հանդարտաբար, և

պարզապէս 'ի յայս մտածման՝ թարց տալոյ քեզ
շտապութիւն :

## Յաղագս ըղձի. և Առաջադրութեան, որ է Երրորդ մասն մտածման:

### Գլուխ. Զ:

Մտածութիւն կանխեցուցանէ զբարի շարժմունս 'ի կամս, և 'ի ցանկական մասն հոգւոյ մերոյ. ոպ̃ է սէրն այ̃, և ընկերին. ցանկութիւն արքայութեան, և փառաց. զնախանձաւորութիւն փրկութեան հոգւոց. զհետևումն վարուց և կենաց Տն̃ մերոյ. զցաւակցութիւն. զզարմացումն. զուրախութիւն. զերկիւղն այ̃, դատաստանին, դժոխոց. զատելութիւն մեղաց. զապաւինութիւն 'ի բարութեան, և յողորմութեան այ̃. զպատկառումն վս̃ մեր անցեալ չար և վատ կենաց: Եւ միտն մեր պարտի տարածիլ և լայնանալ 'ի յայս ըղձի, որքան կարելի է նմա: Եթէ դու կամիս օժանդակել և սատարել յայսմանէ. ա՛ռ 'ի ձեռս զառաջին հատորն մտածման Տն̃ անդրէի քափլլինեայ կոչեցելոյ. և տես զառաջաբանութիւն նորին, զի 'ի նմա ցուցանէ զկերպն, որով պարտի ոք տարածել զխղձմն իւր. և առաւել լայնացուցանէ զնա հայրն արխա 'ի յընձեռուածս աղօթից իւրոց. նաև հայր լօռովիկոս պօնտացին:

Ոչ պիտոյանայ սակայն յամել այնքան, ո՞վ խանդակաթդ առաքինութեանց. 'ի յայս ընհանրական ըղձի, որ ոչ դարձուցանիցես զմտ̃ 'ի յատկական և 'ի մասնաւոր առաջադրութիւն վս̃ քոյոյ յանդիմանութեան, և ուղղութեան: Զո՞ր օրինակ. առա-

ջին

ջին խօսքն, զոր Տէրն մեր ասաց 'ի վ՟ր խաչին, սփռէ
Թարց երկրպայութե՟ն 'ի հոգւոյ քո զբարի խղձ
իմն հետևման . զ՟ի խղձ ներելոյ Թշնամեաց քոց ,
և սիրելոյ զնոսա ։ Արդ ես ասեմ այժմ . այս է՝
փոքր իմն , եթէ ոչ առակցիցես դու զմի յառա-
կական առաջադրութե՟ն այսու կերպիւ ։ Արդ
ուրեմն՝ ոչ այլ ես զայրացայց ես այնպիսի անի-
րաւական խօսիւք ; եթէ այս ոք և այն ոք՝ ա-
նիցէ զինէն , եթէ դրացիք իցեն , եթէ մերձա-
որք իցեն , եթէ ընտանիք իմք իցեն ։ Նաև ոչ
ես վրէժխնդիր եղէց վ՟ն այսպիսի և այնպիսի
արհամարհանաց , որք առնանեն դէպ առիս յոր-
պխեաց և իցէ անձանց ։ Այլ ես արարից զպէս
պէս իրս և իրակութիս առ 'ի շահել , և քաղց
րացուցանել զն՟ս ։ և այսպէս առնել պարտ է և
վ՟ն այլոց ըղձից ։ Այսու կերպիւ ո՛վ խանդա-
կաթդ առաքինութե՟ց . կարես ուղղել դու զոր
խալանս քո 'ի փոքր ժամանակի . բայց միայն
առնել պարտիս ըղձիւ , յարմարապէս , և աշխա-
տութ՟բ ։

## Յաղագս Եզրափակման, և Հոգևոր ծրարի ։

### Գլուխ ։ Ն ։

Վաղճանի՝ պիտոյ է եզրափակել զմը
տածութե՟ն երեք գործովք , զորս պի-
տոյ է առնել մեծագոյն խոնարհու-
թ՟բ , որքան իցէ կարելի ։

Առաջին գործն է՝ շնորհակալութի՟ն . շնորհա-
կալ լինելով զն՟յ վ՟ն ըղձիցն , և առաջադրու-
թե՟ցն՝ զորս ետ մեզ . և վ՟ն բարութե՟ն , և ողոր-

մութե̃ն իւրոյ, զոր մեք ընկալաք 'ի խորհրդաւո՛ր մտածման մերում:

Երկրորդ գործն է մատուցումն. որոյ միջնորդութե̃ն մեք մատուցանեմք այ̃՝ զիւր նոյն բարութիւն. և զողորմութիւն, զմահն, զարիւնն, զառաքինութիւն որդւոյ իւրոյ, և 'ի միասին զիղձս, և զառաջադրութիւնս:

Երրորդ գործն է՛ հայցման և պաղատման. որով մեք խնդրեմք և հայցեմք յայ̃՝ առ 'ի հաղորդել մեզ զշնորհս, և զառաքինութիւնս որդւոյ իւրոյ, և առ 'ի տալ զօրհնութիւն իւր՝ ըղձից և առաջադրութեանց մերոց, զի կարիցուք հաւատարմաբար կատարել, և լցուցանել զն̃ս:

Յետոյ պարտիմք աղաչել զնա վս̃ եկեղեցւոյ, վս̃ հովուաց, ծնողաց, բարեկամաց, և այլոց. առակցելով 'ի յայս զբարեխօսութիւն Տիրուհւոյն մեր. հրեշտակաց. և սբ̃ոց: Իսկ 'ի վաղճանի ազդեալ եմ քեզ. թէ պարտ է ասել զհայր մեր. և զողջոյն քեզ մարիամ, որ է ը̃հանրական, և հարկաւո՛ր աղաչանք բնաւ՛ից հաւատացելոց:

Առ այս ամ̃ առակցեցի. թէ պարտ է ժողովել զմի փոքր ծրար ջերմեռանդութե. և ահա այս է, զոր կամիմ ասել: Զի այնք, որք դնան զբօսնուլ 'ի գեղեցիկ պարտիզի իմիք, ոչ ելանեն անտի յօժարապէս, եթէ ոչ առցեն 'ի ձեռս զչորս և կամ զհինգ ծաղկունս, առ 'ի հոտոտալ և պահել զայնս 'ի բոլոր օրն: Այսպէս անցանելով միտքն մեր մտածմամբ 'ի վր̃ խորհրդաւոր իրի իմիք, պարտիմք մեք ընտրել և ժողովել զմի, և զերկու, և կամ զերիս կէտս. ը̃ զայն մասն մտածման, զոր մեզ թուեցաւ առաւել հաճոյ և քաղցր, և առաւել յարմար, և յատուկ իմացականութե մերոյ, առ 'ի յիշել և հոտոտալ զնա հոգևորապէս 'ի բոլոր օրն: Արդ այս առնանի 'ի վր̃ նոյն տեղւոյ, ուր արարեալ է մտածումն. կամ ընթա

նա

նալով առանձնականապէս ընդ փոքր ժամանակի ։

## Ոմանք օգտակարագոյն պատուիրանք վասն առարկայի Մտածութե ։

### Գլուխ . Ը։

Պիտոյ է խլել քան զնա ո՛վ խանդակաթդ առաքինութեանց . 'ի վաղճանի մտածութեն պահել 'ի քեզ զառաջադրութիւն և զընտրութիւն քո , զոր արարեր' առ 'ի հոգունակապէս կիրարկել ընա յայնմ աւուր ։ Այս է' մեծ պտուղն մտածման' թարց որոյ բաղմերս ոչ միայն է' անօգուտ , այլ ևս է վնասակար ։ Վ՟ զի առաքինութիւքն մտածեալք և ոչ կիրարկեալք' երբեմն ըթացուցանեն զմիտն և զզօրութիւն , թուելով մեզ դոլ այնպիսի , ո՟պ և յառաջադրեցաք , և ընտրեցաք առ'ի դոլ ։ Վ՟ զի թարց երկբայութե է ճշմարիտ' եթէ առաջադրութիւքն են կենդանիք և ճշգրիտք ։ Իսկ յայնժամ ոչ են այսպիսիք , այլ մանաւանդ են ունայնք և որոգայթաւորք' յորժամ ոչ կիրարկանին ։ Պարտ է ուրեմն ամ կերպիւ ջանալ 'ի կիրարկանել , և խնդրել զփոքր , կամ զմեծ առիթ ։ Զորօրինակ . եթէ յառաջադրեցի շահել քաղցրութե զմիտս նոցին , որք զիս վշտացուցանեն . խնդրեցից յաւուր միում պատահել նոցա առ 'ի ողջունել սիրով ։ Եւ եթէ ոչ կարացից պատահել նց' գոնեայ ասել բարի վնոցունց , և աղաչել զած վս նց ։

'Ի վաղճանի այս մտածական աղօթից , պիտոյ է զգուշանալ առ 'ի ոչ դատարկել զսիրտն քո , զի

դու թափես, և ունայնացուցանես զպալատանն, զոր ընկալար միջնորդութեամբ այս աղօթից: Կամիմ ասել. թէ պիտոյ է պահել եթէ իցէ կարելի՝ սակաւ մի լռութի և անդրաբերել քաղցրապէս զքո սիրտն 'ի յաղօթից առ գործն, պահելով որքան է՛ քեզ կարելի զզգացումն առ իղձսն, զոր դու յղացար: Մարդ ոք, որ ընուցու 'ի մի գեղեցիկ ապակեայ անօթոջ զհիւթ իմն մեծագին՝ առ 'ի տանել զնա 'ի տուն իւր, գնայ կարի հանդարտօրէն՝ ոչ հայելով աստ և անդ, այլ մերթ հայի 'ի յոտն իւր վասն երկիւղին՝ առ 'ի ոչ հարկանել զնա 'ի քար ինչ, կամ առնել զվատ քայլ ինչ. և մերթ 'ի յանօթն առ 'ի տեսանել, զի մի ծուփցի: Զնոյնն պարտիս առնել և դու 'ի վախճանի աղօթից, ոչ տարացնդելով զքեզ բոլորովին 'ի մի վայրկենոջ, այլ նկատես՝ պարզապէս առաջի քո, թէ ո՞չ պիտոյ է՛ առնել: Եւ եթէ պատահիցի քեզ ումն, որում դու պարաւանդեալես կայառնուլ զքեզ առ 'ի լսել նմա: Ոչ է՛ քեզ հնար, պիտոյ է՛ յարմարիլ առ այս. բայց այնպէս, զի հայիցիս և 'ի սիրտն քո, զի հիւթն սբ աղօթից որքան իցէ կարելի՝ սակաւ թափեսցի:

* Պիտոյ է ևս, զի դու սովորիցես դիտել առ'ի անցանել 'ի յաղօթից առ ամ տեսակ գործս, զոր օրինապէս և արդարապէս պահանջէ իքէն կոչումն և կացութիւն քո. թէ և երևիցին յոյժ հեռի 'ի յղձից, զոր ընկալար 'ի յաղօթից: Կամիմ ասել. թէ մի ատենադպիր՝ պարտի դիտել անցանել 'ի յաղօթից առ դատն: Վաճառականն առ վաճառականութիւն: Ամուսնացեալ կինն առ պարաւանդութե կացութե իւրոյ, և առ շարունակ աշխատութի տան իւրոյ՝ այնքան քաղցրութե, և անդորրութե, որ այսու ամին ոչ շփոթիցի միոյն նորին. զի գոլով մինն, և միւսն ըստ կամացն այ, պիտոյ է՛ անցանել միոյ առ

միւսն

միւսն օգնով խոնարհութե̃ն, և կոչման ։
* Գիտեա՛ և, զի պատահի երբեմն, որ խա֊
կոյն զկնի նախապատրաստութե̃ն՝ իղձն քո գտա֊
նի բոլորովին շարժեալ դէպ 'ի յա̃ծ ։ Յայնժամ
պիտոյ է՛ ո՛վ խանդակաթդ առաքինունեց․ թու֊
լացուցանել զսանձն՝ թարց կամելոյ հետեւիլ
կերպին, զոր ետու քեզ ։ Զի թէպ̃ հասարակա֊
պէս մտածումն պարտի յառաջանալ ըղձին, և
առաջադրութե̃ն․ սակայն յորժամ Ոգին ս̃բ տայ
քեզ զիղձս յառաջ քան զմտածումն․ յայնժմ դու
ոչ պարտիս խնդրել զմտածումն․ որովհետև նա
ոչ առեցեալ լինի, եթէ ոչ առ 'ի շարժել զիղձն ։
Վերջապ̃ միշտ իղձքն, որք քեզ հանդիպին՝ պարտ
է ընդունիլ զն̃, և տալ զտեղի նց̃․ եթէ յա֊
ռաջ, և եթէ զկնի մտածման իցէ գալն նո֊
ցին 'ի քեզ ։

Եւ՛ թէպէտ ես եդի զիղձսն զկնի ընթա՛ցից մտած֊
մանց․ սակայն ոչ արարի զայս, եթէ ոչ առ 'ի
զանազանել բարեպ̃ զմասունս աղօթից ։ Վ̃ զի
այս է՛ մի ը̃հանրական կանոն, որ ոչ է՛ պարտ
երբէք արգելուլ զիղձսն, այլ թողուլ միշտ առ֊
'ի գալ՝ յորժամ ներկայացուցանին ։ Որոյ վասն
ասեմ․ ոչ միայն վ̃ այլոց ըղձից, այլ և վասն
շնորհակալութե̃ն, և մատուցման, և խնդրոյ․
որք կարեն առնանիլ 'ի մէջ մտածման՝ եւս ոչ է
պիտոյ արգելուլ՝ ո̃պ զայլ իղձսն ։ Թէպ̃ յետոյ
վ̃ եզրափակման մտածուե̃ պիտոյ է՛ կրկնել և
վերստին առնուլ ։ Բայց որքան առ առաջա֊
դրութե̃ն պիտոյ է՛ առնել զնա զկնի ըղձից․ և 'ի
վաղճանի ընթա՛ցից մտածմանց, նախ քան զեզրափա֊
կումն ։ Զի ներկայանալով այլ մասնա՛որ, և
ընտանեկան առարկայք, դնեն զմեզ 'ի յօրոգայ֊
թի ցնդման՝ եթէ առնիցեմք զնոսա 'ի մէջ
ըղձիցն ։

Նաև 'ի մէջ ըղձից․ և յառաջադրութե̃նց յոյժ

բարի է վարել խօսացութբ̃, և խօսել մերթ ը̃ Տն̃ մերոյ. մերթ ը̃ հրեշտակաց. և ը̃ այլոց անձանց ներկայացելոց ընխորհրդաւոր մտածման. Եւ ևս ընդ սրբոց. ը̃ ինքեան. և ը̃ սրտին իւրոյ. ը̃ մեղաւորաց. և ը̃ անզգայ ստեղծուածոց. ոպ̃ տեսանի, զոր առնէր Դաւիթ 'ի սաղմոսի իւրում, և այլ սրբք 'ի մտածմունս, և 'ի յաղօթս իւրեանց:

Յաղագս չորութեան, որք պատահին 'ի Մտածութեան:

## Գլուխ. Թ.

Եթէ պատահիցի քեզ, ո՛վ խանդակաթդ առաքինութեանց. ոչ ունել զկէտ իմն քաղցրութեան և մխիթարութե̃ 'ի մտածմունս քո. երդմնեցուցանեմ զքեզ առ 'ի ոչ խռովիլ և շփոթիլ: Այլ յայնժամ բաց զդուռն ձայնաւորական խօսից, և ցաւիր առաջի Տն̃ մերոյ. խոստովանեա՛ զքո անարժանութիւնս. աղաչեա՛ զնա, զի օգնեսցէ քեզ՝ համբուրեա զնորին պատկերն՝ եթէ ունիս զնա: Ասա նմա զայն բանն յակոբայ. Ոչ թողից զքեզ Տր̃. մինչև ոչ տացես ինձ զօրհնութիւն քո: Կամ զայն բանն քանանացւոյն. այո՛ Տր̃. զի եւ ես եմ շուն իմն թէպէտ. Բայց շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ Տն̃ իւրեանց:

Եւ երբեմն առ զմի գիրս 'ի ձեռս քո, և ընթերցիր զնա մտադրութբ̃, մինչև հոգի քո զարթիցի, և համդարտեսցի 'ի քեզ: Երբեմն մորակեա՛ զսիրտ քո արարողութբ̃ իմիք, և շարժմամբ արտաքին ջերմեռանդութե̃. անկանելով 'ի վր̃ երկրի, և խաչաձև

դնե

գնելով զձեռն քո 'ի վր̅ կրծոց, և համբուրելով
զխաչելոյն իմ։ բայց այս իմանի՝ եթէ իցես դու
ի տեղի իմիք առանձին։ Եթէ այսու ամենայնիւ,
ոչ մխիթարիս դու. որքան մեծ թէև իցէ չորու
թիւն և կարծրութիւն քո՝ այնու մի՛ վրդովիր և շփո
թիր կէտ մի, այլ յարատևեա առ 'ի կալ ջերմե_
ռանդ տրամադրութբ̅ իմիք՝ առաջի իմ̅յ քո։ Արդ՝
որք̅ գտանին արքունի սպասաւորք, որք հարիւր
անգամ 'ի տարւոջն գնան 'ի սենեակ արքային իւր
եանց՝ թարց յուսալոյ խօսիլ ը̅ նմա, այլ միայն
գոլ տեսանեցեալք նմա, առ 'ի վճարել զպարտս
իւրեանց։ Այսպէս և ս՝ պարտիմք մեք ( ո՛վ խան
դակաթդ առաքինութեանց ) գնալ առ մ̅ք աղօթքն
միամտութբ̅ և պարզութբ̅, և առ 'ի վճարել զմեր
պարտաւորութիւն՝ և տալ զվկայութի մերոյ հա
ւատարմութե։ Որ եթէ հաճոյ է՛ ա̅ծային հան
դիսավէհութե առ 'ի խօսիլ ը̅ մեզ, և առ 'ի կալ
ընդ մեզ՝ իւրով սրբագունեղ ներշնչմամբն, և
ներքին մխիթարութբ̅ն, այս թարց երկբայութե
լինի մեզ շնորհք, և հեշտալի հաճոյութի իմ։
Բայց եթէ ոչ է՛ հաճոյ նմա առ 'ի առնել մեզ
զայս շնորհս. ոչ հոգալով զինջանիլ մեզ, և իբր
թէ ոչ տեսանէ զմեզ, և ոչ թէ մեք ոչ իցեմք
առաջի ներկայութե նր̅. յայնժամ ոչ պարտիմք
այսու գնալ 'ի բաց, այլ մանաւանդ ներհակ սորին
պարտիմք զկայ առնուլ անդ առաջի ծայրագու
նեղ բարութե նորին, միով գոհունակ ջերմե_
ռանդութբ̅ և խաղաղութբ̅։ զի նա յայնժամ
առանց կարծեաց ընդունի զմեր համբերութիւն,
և համանշանէ զմեր հաստատութիւն և յարա_
տևութիւն։ Անպէս՝ մինչ զի եթէ այլ մի անգամ
մինչ դառնայցեմք առ նա՝ պատուէ զմեզ, և այց
առնէ մեզ, և վարի ընդ մեզ իւրով մխիթարու
թբ̅ն, առնելով զմեզ ճաշակել՝ զքաղցրութի աղօ
թիցն։ Բայց յորժամ և ս զայս ոչ առնիցէ մեզ.

քա

բանականացուք և գոհունակ լիցուք ( ո՜վ սի֊
րահարդ իմ ) զի այս է՝ յոյժ մեծ պատիւ և փառք
իմն մեզ, գոլ առաջի ներկայութեան նր :

## Կրթութիւն Առաւօտեան :

### Գլուխ . Ժ :

ԲԱց 'ի յայսմնէ կատարել և տեսակացել մտածականն աղօթից, նաև այլ ձայնաւորական աղօթից , զոր պարտիս առնել դու յաւուրն միանգամ . գտանին այլ ևս հինգ կերպ համառօտագոյն աղօթք , որք են իբր յատկութիւնք , և ընձիւղք այլ մեծագոյն աղօթից : 'Ի մէջ որոց առաջինն է այն՝ որ առնանի յառաւօտուն՝ ոպ՟ ընդհանրական նախապատրաստութիւն իմն բնաւից գործոց աւուրն :

Արդ արա զնա այսու կերպիւ :

1. Շնորհակալ լեր, և խոնարհաբար երկրպագեա Այ՝ վն շնորհացն , զոր արար քեզ . պահելով զքեզ յանցեալ գիշերին . և եթէ 'ի նոյն գիշերին գործեցեր զմեղ իմն , խնդրեա 'ի նմանէ զներումն :

2. Գիտեա՝ , զի ներկայ օրն շնորհեալ է քեզ առ 'ի շահիլ զապագայ օրն յաւիտենականութեան , և առ 'ի առնել զմի հաստատ առաջադրութիւն ծախելոյ զնա բարեպէս՝ այսու դիտաւորութբ :

3. Նախանկատեա՝ , թէ որպիսի արարմունք . որպիսի գործք . որպիսի առիթք կարեն պատահիլ քեզ յայսմ աւուր առ 'ի ծառայել Այ . և որպիսի փորձութիւնք կարեն հասանիլ քեզ առ 'ի վշտացուցանել զնա , կամ բարկութբ , կամ ունայնութբ , կամ այլ ինչ անկարգութբ . և մբ յա֊

յառաջադրութ̃ միով պատրաստեա՛ զքեզ վարել ընաւ առթիւ, որք քեզ պատահին առ՚ի ծառայել այ, և աճեցուցանել զջերմեռանդութին ։ Եւ ոչ քաջաղէն զինուոր պատրաստեա զքեզ կռուոյ պատերազմիլ, և յաղթել զայն ոմ, որ հանդիպի քեզ՝ հակառակ քոյոյ փրկութե, և փառացն այ ։ Եւ ոչ է բաւական առնել զայս առաջադրութիս, այլ ևս պիտոյ է պատրաստել զկերպն առ՚ի կատարել զնա բարեպէս ։ Զորօրինակ ․ եթէ ես նախատեսանեմ, թե պարտիմ խրատել զգործ իմն՝ ընդ միոյ ախտակրել եցաճադնեալ անձի ուրուք, որ է յօժարառ բարկութ, ոչ միայն պարտիմ տրամադրել զիս փախչել առ՚ի ոչ վշտացուցանել զնա, այլ ևս պարտիմ պատրաստել զքաղցր խօսս առ՚ի կանխել նմա, և կամ գտանել զբարի անձն ոմն, որ կարէ ժուժկալել նմա ։ Եթէ ես նախատեսանեմ, թէ ունիմ զկարելութի առ՚ի այցելանել հիւանդի միոյ, պարտիմ տրամադրել զժամն, զմխիթարութին, և զօժանդակութին, զոր տալ պարտիմ նմա ։ և այսպէս իմա և զայլսն ։

4․ Զայս արարել խոնարհեցո զքեզ առաջի այ՝ ճանաչելով՝ թէ դու միայն ինքեամբ ոչ կարես առնել զիր իմն յայնցանէ, զոր առաջադրեցեր առ՚ի առնել․ թէ իցէ փախչել ՚ի չարեն, և թէ իցէ հետևիլ բարւոյն ։ Եւ ոչ թէ ունիս զսիրտն քո ՚ի ձեռս քո, մատո՛ զնա ընդ այ բարեգործութե քոյ՝ ամենայնոյ հանդիսաւեհութեն, աղաչելով զնա զի առցէ զնա ինքեան նախախնամութե իւրոյ, և զնա զօրացուսցէ, զի բարեպէս մնասցէ ՚ի ծառայութե իւրում ։

Եւ զայս արա այսպէս, և կամ այլ նմա ներքին բանիւք ։ Ով Տր իմ՝ ահա այս աղքատ և ողորմելի սիրտս, որ ՚ի ձեռն բարութե քոյ յղացաւ զինքն զբազում բարի իղձս ։ Բայց ո՞հ ցաւոյս ․ զի նա

է՛

է յոյժ նուաղ՝ և տկար առ 'ի կատարել զբարին՝ զոր ցանկայ, եթէ դու ոչ տացես նմա զերկնային օրհնութիւն քո, զոր այսու դիտաւորութբ ես 'ի քէն խնդրեմ, ով գթածագութեան Հայր, վասն արդեան չարչարանաց որդւոյ քո, 'ի պատիւ որոյ նուիրեմ զօրս զայս, նաև զմնացեալ զաւուրս կենաց իմոց: Այլև՝ աղաչեա զտիրուհին մեր, և զպահապան հրեշտակն, նաև զընաւ սբսն, որք օգնիցեն քեզ առ այս գործ:

Բայց այս ամ հոգևոր գործքս՝ պարտին առնանիլ համառօտակի, և կենդանապէս նախ քան զելանելդ 'ի սենեկէ, եթէ իցէ կարելի: Զի միջնորդութբ այս կրթութեն, զոր ինչ և առնիցես 'ի բոլոր օրն, լիցի ոռոգեալ օրհնութբն այ: Բայց աղաչեմ զքեզ (ով խանդակաթդ առաքինութեց) առ 'ի ոչ թողուլ զնա երբեք:

## Յաղագս Երեկոյեան կրթութեան, և քննութեան խղճմտանաց:

## Գլուխ ԺԱ:

ՈԻ ոպ յառաջ քան զմարմնական ճաշն քո՝ առնես զհոգևոր ճաշ իմն՝ միջնորդութբ մտածման: Այսպէս և յառաջ քան զճաշն երեկոյեան՝ պիտոյ է առնել զճաշ իմն հոգևոր ·այ զփոքր ջերմեռանդութեան իմն: Ստացիր ուրեմն սակաւ ժամանակ իմն՝ յառաջ քան զժամն երեկոյեան կերակրոյն. և անկեալ առաջի այ՝ ժողովելով զբոլոր միտն քո առ խաչեցեալն Յս Քս, (զոր դու ներկայացուցանես անդ քեզ՝ պարզագոյն մտածմամբ միով, և ներքին ակնարկութբ.) և կենդանացո՝ 'ի սրտի քում

քում զհուրն առաւօտեան քոյոյ մտածման ։ Ե՛ւ արա դէպ առ Այ փրկիչն քոյ՝ զծրար իմն հառաչման, խոնարհութե, և ըղձակալթութե ։ Ե՛ւ այս՝ կամ կրկնելով զմտածական կէտս և զմասունս, զորս ճաշակեցեր 'ի յառաւօտեան մտածման ։ և կամ զարթուցանելով զքեզ այլ իմն նորոգոյն առարկայիւ, ըստ որում թուի քեզ լաւագոյն ։

Ե՛ւ որքան առ քննութիւն խղճմտանաց, որ պարտ է առնանիլ միշտ՝ նախ քան զգնալն 'ի մահիճս · ամ ոք գիտէ՝ թէ որպ պիտոյ է կիրառնուլ զնա ։ Զի նախ պիտոյանայ շնորհակալ լինիլ զայ՝ վասն պահպանութե, զոր արար նա մեզ յայնմիկ աւուրն ։ Երկր · պիտոյանայ լինիլ քննութի, թէ որպ կեցեալ իցէ 'ի բնաւ ժամս յայնմիկ աւուրն ։ Ե՛ւ առ 'ի առնել զայս առաւել անդորրապ · պարտի մտածիլ, թէ ու՛ր իցէ կացեալ, ը ու՛մ, և կամ 'ի յո՛րպիսի ցեղ զբաղման ։ Երրդ · եթէ գտանէ զինքն արարեալ զբարի ինչ, պիտոյ է շնորհակալ լինիլ զայ ։ Ե՛ւ եթէ ներհակ սորին՝ գտանէ արարեալ զչար ինչ՝ խորհրդով, բանիւ, և կամ գործով · յայնժամ պիտոյանայ խնդրել զներումն 'ի հանդիսավեհութէ ածայնոյ, հանդերձ յառաջադրութբ խոստովանելոյ 'ի յառաջին պատահման առթին՝ որ հանդիպի, նաև ուղղելոյ զինքն հոգունակապէս ։ Չրրդ · զկնի յանձնարարութե առ ածային հանդիսավեհութին · մարմնոյ, և հոգւոյ իւրոյ, եկեղեցւոյ, ծնողաց, և բարեկամաց · պարտի աղաչել նաև զՏիրուհին մեր · զբարի պահապան հրեշտակն · և զՍրբն՝ առ 'ի հսկել վն մեր ։ և այսպ օրհնութբն ածյ գնալ պարտի 'ի յանկողինն առ 'ի ննջել, զոր նա կամեցաւ դնել մեզ հարկաւոր ։ Ե՛ւ այս կրթութիւս ոչ պարտի մոռացեալ լինիլ նաև ոչ ևս այն, որ է առաւօտեան ։ Արդ ուրեմն 'ի ձեռն առաւօտեան մտածման, բաց զպա-

տու

տուհանմն հոգւոյ քո առ արեգակն արդարութն· և 'ի ձեռն երեկոյեան՝ փակեա զնա ընդդէմ խաւարային դժոխոց:

## Յաղագս հոգևոր առանձնականութեան:

### Գլուխ · ԺԲ·

ՅԱւէտ ցանկամ ես ըղձունակապէս ( ով խանդակաթդ առաքինութեց ) զի հետևիցիս դու աստ խրատոյն իմոյ: Քանզի 'ի յայսմիկ գլխոջ կայանայ մինն առաւել անդորրագոյն կերպից քոյոյ հոգևոր յառաջադիմութն:

Ժողովեա՛ բազում անգամ ( որքան կարես դու ) 'ի մէջ աւուրն զմիտն քո առաջի ներկայութեն նյ, 'ի ձեռն միոյ չորից կերպից, զոր ուսուցի քեզ:Եւ՛ յայնժամ սքանչասցիս դու է այն՝ զոր առնէ ԱԾ, և է այն՝ զոր առնես դու: Զի տեսցես զնա դարձեալ դէպ 'ի քեզ աչօք իւրովք, և միշտանջենաւորապէս հակեալ 'ի քեզ անբաղդատելի սիրով միով: Ո՜վ ԱԾ իմ ( ասասցես դու; ) վն է՞ր ոչ միշտ հայիմ ես 'ի քեզ՝ որպ միշտ դու հայիս առիս: Ո՜վ Տր իմ՝ մինչ դու այնքան յաճախ խորհիս զինէն, վն է՞ր ես այնքան հազիւ խորհիմ զքէն: Ո՛ւր եմք մեք ո՜վ հոգի իմ, և ո՛ւր գտանիմք. իմա՛ զի ճշմարիտ տեղին քո է ԱԾ:

Քանզի որպ թռչունքն ունին զբոյնս իւրեանց 'ի վր ծառոց՝ առ 'ի առնել զառանձնականութիս իւրեանց, և եղջերուքն ունին զանտառս և զամուրս իւրեանց, 'ի մէջ որոց թագուցանին և թագթաքին՝ առնելով զովացումն ստուերի՝ 'ի ջերմագոյն ժամանակի: Այսպէս ո՜վ խանդակաթդ առաքինութն. սիրտքն մեր պարտին ընտրել

տրել զտեղի իմն յամենայն աւուր. ոչ կամ 'ի վր լե րինն գողգոթայի, և կամ 'ի վերա Տն մերոյ, և կամ 'ի յայլ տեղի իմիք, որ մերձաւոր իցէ առ նա, առ 'ի առնել անդ զառանձնականութիւն, և զփա խուստն իւր 'ի բազմատեսակ առթից, նաև զո- վանալ և սփոփել յարտաքին զբաղմանց և գոր- ծոց: Երբ ես առ 'ի կալ անդ ոչ 'ի մէջ միոյ ամ րաբերդի, առ 'ի ջատագովել և պաշտպանել 'ի փորձութեանց: Զի երջանիկ է հոգին այն, որ կա րէ ասել առ Տրն իւր: Ով Տր իմ. դու ես տուն ապաստանութեան իմոյ, անդորրութեան ապահովու թեան իմոյ. դու ես ծածկոյթ իմ ընդդէմ անձ- րևոյ, և հովանի ընդդէմ ջերմութեան:

Յիշեա ուրեմն ով սիրահար իմ, առ 'ի առնել միշտ զայս առանձնութիւն 'ի յանապատոջ սրտի քո, մինչ տակաւին կաս դու մարմնաւորապէս 'ի մէջ կենցաղավարութեան և գործոց: Երբ այս մտա ւորական առանձնութիւն՝ ոչ կարէ կերպիւ իւիք արգելանել 'ի բազմութենէ այնոցիկ, որք շուրջ կան զքև: Վս զի այնք՝ ոչ են շուրջ զսրտիւ քով, այլ շուրջ զմարմնով քով. այնպէս՝ զի սիրտն քո մնայ բոլորովին միայն առաջի ներկայութեան իմոյ: Այս կրթութիւն էր, զոր առնէր դաւիթ 'ի մէջ զբաղմանց իւրոց. ոչ վկայէ 'ի բազում տեղիս 'ի սաղմոսի իւրում. ըստ որում ասէ: Ե՞ ես յամ ժամ ընդ քեզ եմ: Յառաջագոյն տեսանէի զնա առա ջի իմ յամ ժամ: Առ քեզ Տր համբարձի զաչս իմ, որ բնակեալ ես 'ի յերկինս: Աչք իմ յամ ժամ առ Տր են. և այլք բազումք:

* Իսկ այսպէս կենցաղավարութիւնքն հասարա- կապէս ոչ են այնքան դժուարինք և արգելա- կանք, որ ոչ կարիցէ է ժամանակս ժամանակս զսիրտն քարշել և ածել 'ի յայս մեծագին առանձ նութիւն:

Հայրն և մայրն որբաւհւոյն կատարինէի սենեաց ւոյ՝

ւոյ՝ բարձին 'ի նմանէ զամ͞ անդորրութիւն տեղւոյ, և ժամանակի, առ 'ի ոչ աղօթել և մտածել: Բայց Տ͞ն մեր ներշնչեաց առ նա՛ առ 'ի առնել զփոքրիկ աղօթարան իւ͞ 'ի սրտի իւրում, 'ի մէջ որոյ առանձնանալով նա մտաւորականապէս, կարէր 'ի մէջ այնքան զբաղանացն պարապիլ յայտնիկ սըրտական մբ͞ առանձնութե͞: Եւ՛ յետոյ՝ մինչ աշխարհն զնա նեղէր և ձանձրացուցանէր, նա ոչ զգայր այնու զծանրութի͞ և զնեղութի͞ ինչ, վ͞ զի ասէր՝ թէ փակիւր ինքն 'ի մէջ ներքին խցի իւրում, ուր մխիթարիւր ընդ երկնաւոր փեսային իւրոյ: Ուստի նաև խրատէր զհոգևոր որդիս իւր՝ առ 'ի առնել զսենեակ իւ͞ 'ի սրտի, առ 'ի կեալ անդ:

Քարշեա՛ և առանձնացո՛ զմիտն քո ուրեմ͞ 'ի մէջ սրտի քո, ուր հեռանանալով և բաժանելով 'ի բնաւից մ͞դկանց, կարիցես խօսիլ դու ընդ ա͞յ քո՝ սրտէ 'ի սիրտ՝ զսիրաց և զսիրակութե͞ց հոգւոյ քոյ, ասելով ը͞ Դաւթի. Նմանեցայ ես հաւալուսն անապատի: Եղէ ես ոպ͞ բու յաւերակի. Տքնեցայ՝ և եղէ ես ոպ͞ ճնճղուկ միայն 'ի տանիս: Որք սոյն բանքս՝ բաց 'ի նկարագրական իմացուածոց իւրեանց (որովք նշանակեն, թէ այս մեծ Թագաւորս ընտրէր զոմանս ժամանակս առ 'ի կալ առանձնապէս 'ի խուցումն հոգևոր իւրայ,) նաև ցուցանեն մեզ խորհրդաւոր իմացմամբ՝ զերիս գերազանցագոյն առանձնականութի͞ս, և զերիս սենեակս, 'ի մէջ որոց կարեմք մեք կիրարկանել զառանձնականութի͞ն մեր, առ 'ի հետևիլ փրկչին մերոյ: Որ եղև 'ի վ͞ր լերինն գողգաթայի՝ ո͞պ հաւալուսն յանապատի, որ և իւրով արեամբն կենդանացուցանէ զմեռեալ ձագունս: Եւ՛ 'ի ծննդեան իւրում՝ 'ի մէջ մսրոյ միոյ՝ եղև ո͞պ բու յաւերակի՝ լալով և ողբալով զսխալանս և զմեղս մեր: Բայց 'ի յաւուր համբարձման իւրոյ՝ եղև

ո͞պ

ով զծնծղուկ, առանձնանալով և թռչելով 'ի յերկինս, որ է իբր տանիս աշխարհի ։

Եւ մեք ևս 'ի յերկիրս տեղիս յայսոսիկ կարեմք առնել զառանձնականութիւն մեր, 'ի մէջ զանազան զբաղմանց մերոց ։ Ուստի երանելի իշխանն եղիազար, որ բնակէր 'ի քաղաքն փռօվէնցայոյ, գոլով հեռացեալ երկար ժամանակաւ 'ի ջերմեռանդ և 'ի ողջախոհ տէլֆինէ կողակցուհոյն իւրմէ ։ Որոյ վ̃ նոյն տէլֆինէ կինն նորին, առաքեաց զայր մի̃ յատկապէս՝ առ 'ի իմանալ զլուր ի̃ բարի զառողջութէ̃ առն իւրոյ ։ Ուստի պատասխանեաց եղիազար. ո՞վ սիրելի կողակից իմ, ես կեամ յոյժ բարեպէս. և եթէ կամիս զիս տեսանել՝ խնդրեա զիս 'ի մէջ վիրաց կողին ք̃ի, զի անդ բնակիմ ես, և զիս անդ կարես գտանել ։ և եթէ յայլ ուր խնդրես զիս՝ 'ի զուր աշխատիս ։ Արդ գիտեա. զի այս էր իշխան մի̃ մեծաշուք, և ճշմարիտ քրիստոնեայ ։

## Յաղագս Ընկերութեան, և Առանձնութեան, և Բարի խորհրդոց ։

### Գլուխ ԺԳ ։

Արդ քարշի և առանձնանայ 'ի յԱ̃ծ, զի ըղձակերտի և փափաքի նմա առ'ի քարշել զնա ։ Վ̃ զի ըղձակերտութի̃ առ Ա̃ծ, նաև հոգևոր առանձնականութիւն՝ օգնեն և ձեռնտու լինին միմեանց, և երկոքեանքն ևս յառաջադային և ծնանին 'ի բարի խորհրդոց ։ Հառաչեա և ըղձակերտ լեր ուրեմն յաճախապէս առ Ա̃ծ՝ ո՞վ խանդակաթ առաքինութե̃, բայց արա զայս 'ի ձեռն տենչ

G ման

ման սրտի քո . և նկատեա զգեղեցկութիւն իւր, և խնդրեա զօգնութիւն նորին, և արկ զքեզ հոգւով 'ի յոյս խաչեցելոյն . և երկրպագեա բարութեան նորին, և հարց զնա յաճախապէս զփրկութենէ քում : Ընծայեա նմա բազմիցս յաւուրն զհոգին քո . սեւեռեա զներքին աչս քո դէպ 'ի քաղցրութիւն նորին . կարկառեա զձեռն քո որպէս փոքրիկ մանուկ առ հայր իւր, զի առաջնորդեսցէ քեզ : Դիր զնա 'ի վերայ կրծոց քո՝ որպէս զծրար և զփունջ իմն հեշտալի ծաղկանց . տնկեա զնա 'ի հոգւոջ քո իբր զարձան իմն. և արա զպէսպէս շարժմունս սրտի քո՝ առ 'ի տալ զքեզ սիրոյն նորա, և առ 'ի զարթուցանել զքեզ ի քնոյ՝ առ խանդակաթ և քաղցրագոյն սիրողութիւն իմն այսորիկ աստուածայնոյ փեսայի:

* Բայց կերպիւ ուրեմն առանձին սլաքական աղօթքն, առ որ մերն Օգոստինոս այնքան հոգւանակութեամբ յորդորէր զջերմեռանդ կինն Փռօպա : Արդ ո՛վ խանդակաթդ առաքինութեան . տալով զհոգին մեր 'ի կենցաղավարութիւն, և յընտանեկցութիւն այն իւրոյ, բոլորովին բուրէ այսօքիւք կատարելութեամբք : Եւ՛ այս կրթութիւն ոչ է բնաւ կէտ մի դժուարին, զի կարէ 'ի գործածել 'ի բնաւ իրակութեան և 'ի յզբաղման, թարց իմիք արգելման և վնասու: Եւ՛ մանաւանդ այսօքիւք՝ թէ 'ի հոգևոր առանձնութեան, և թէ 'ի յայս ներքին սլաքական աղօթս՝ ոչ այլ ինչ առնեն, եթէ ոչ զփոքր և զկարճ զբօսանք իմն, որք ոչ արգելուն ամենևին, այլ մանաւանդ յոյժ օգնեն առ 'ի կատարել զսկսեալն : Ճանապարհորդն, որ ըմպէ զսակաւ մի գինի՝ առ 'ի ուրախացուցանել զսիրտն, և զովացուցանել զբերանն, թէև յամենայ սակաւ ինչ, սակայն այսու ոչ միջահատէ զճանապարհն, այլ մանաւանդ առնու զզօրութիւն և զոյժ՝ առ 'ի եզերել զնա որքան կարէ շուտով և առաւել դիւրաւ:

Բա-

* Բազումք շարադրեցին զբազում հառաչմունս և զպաղատմունս, որք ճշմարտապէս են յոյժ օգտակարք։ Բայց ք͞ս խրատու ազդման իմոյ; մի՛ կապեր զքեզ բնաւ միով կերպիւ խօսակցութե՛, այլ մանաւանդ արտաքներեա՛ թէ սրտիւ, և թէ բերանով՝ զայնս բնաւս, զոր 'ի նոյն կիտում համոզէ քեզ սէրն; զի նա առբերէ քեզ որքան և կամիցիս։ Եւ եղիցին քեզ ոչ սահմանադրութիք ոմանք, որք ունին զյատուկ զօրութի առ 'ի բաւականացուցանել և յագեցուցանել զսիրտն քո առ այս մասնաւորս. ոչ են խանդաղատական բանքն յաճախեցեալք ընսաղմոսում դաւթի։ զանազան ներկոչմունքն անուանն Յ͞ի։ ըղձակերտութիքն և շարժմունքն սիրոյ, որք են շարադրեալք 'ի յերգսն սողոմոնի։ Նաև օգնեն առ այս դիտաւորութի հոգևոր երգքն; միայն թէ երգիցին մտադրութ͞բ։

* Վերջապէս՝ ոչ այնք, որք սիրահարեալք են մարդկային և բնական սիրով; միշտ ունին դարձուցեալք զխորհուրդս իւրեանց առ սիրեցեալ իւրն։ Սիրտք իւրեանց լիագոյն ըղձիւ հակին դէպ առ այն. բերանք նոցին միշտ պարապին առ գովութի նորին. և 'ի տարակացութե նորին ոչ թողուն զառիթ և զդիպողութի իւր; յորում ոչ տայցեն զվկայութի սրտից իւրեանց 'ի ձեռն գրուածոց. և ոչ թողուն ևս ծառ ինչ՝ յորում ոչ գրիցեն զանուն սիրեցելոյն իւրեանց։ Այսպէս այնոքիկ, որք սիրեն զք͞ս՝ ոչ կարեն դադարել 'ի խորհելոյ զնմանէ, 'ի հառաչելոյ առ նա, 'ի ըղձալոյ նմա; և 'ի խօսելոյ զնմանէ։ Եւ կամին ( եթէ կարելի իցէ ) ներտպել 'ի սիրտս բնաւից անձանց աշխարհի՝ զԱմենամբ անուանն Յ͞ի։

* Լաւ 'ի առնել զայս՝ հրաւիրեն ա͞մ արարածք, և ոչ է ստեղծուած ինչ; որ ոչ դրդիցէ և յորդորիցէ 'ի գովութի սիրեցելոյն իւրոյ։ Եւ յետ

աւելոյն որդւոյն Անտոնի, առէ եւ որդին Օգոստինոս. Այլ ինչ՝ որ գտանի յաշխարհի յայսմիկ՝ խօսի ընդ նմա լաւագոյն լեզուաւ միով, սակայն յաւէտ բարեգոյն առ 'ի յիմանալ 'ի կողմանէ սիրոյ նոյին : Բնաւ երբ գրեն եւ հրաւիրեն զնա առ բարի խորհուրդս, յորոց ծնանին յետոյ ելք, եւ հառաչմունք 'ի յամենայն : Եւ ահա քեզ օրինակ իմն : Սրբն Գրիգոր Նիւսացին, ոչ ինքն պատմէր ժողովրդեան իւրում, շրջագայելով առ ափն ծովու մտածէր. Թէ ոչ ալիքն գալով առ ափն ծովուն՝ 'ի դառնալն իւրեանց 'ի յետս թողեալ ձգէին զկեղեւունս ոստրէից, զմանրագոյն եղջերուկս, զխոտս, զժժմունս, եւ զայլս նմանս գարշելիս, զորս՝ իբրաց ձգէր ծովն : Եւ իբր թէ կերպիւ իւիք թքանէր 'ի վերայ եզեր. եւ յետոյ դառնալով ընդ այլ ալեաց՝ վերստին առնոյր եւ գլանէր զմի մասն սոյնացիկ, մինչ շիւղադէզքն կային շուրջ զինքեամբք հաստատք եւ անշարժք, թէ եւ ջուրքն զնա ուժգնապէս հարկանիցեն : Արդ յայտնապէս առնեմ (ասէր) զգեղեցիկ առիթ իմն մտածման : Զի այնք՝ որք տկարք են ոչ զկեղեւունս, զոստրէս, զժժունս, զեղջերուկս, եւ զխոտս՝ թողանին տանիլ մերթ 'ի յանձկութենէ, եւ մերթ 'ի մխիթարութենէ առ ամբոխութիւն ալեաց եւ ծփանաց բախտի : Բայց մեծասիրտքն եւ սրտեղքն մնան հաստատունք եւ անշարժք ընդդէմ ամենայն կերպ մրրկաց : Եւ յայսմանէ մտածմանէ աբար ծնանիլ զայնս ջերմեռանդական խօսակցութեան Դաւթի : Կեցո զիս Աստուած. զի հասին ջուրք յանձն իմ, ընկլայ ես 'ի խորս անդնդոց ուր ոչ գոյ ինչ հանգիստ : Ով Տէր իմ. Եկի ես 'ի խորս ծովու. եւ շրջանք ընկլուզին զիս : Քանզի յայնժամ գտանիւր նա նեղեալ ապերջան եւ անիրաւ յափշտակութենէն, զոր Մաքսեմոս արկեալ էր 'ի վերայ եպիսկոպոսարանի իւրոյ :

Սրբն

Սրն Փուլճէնցիոս եպիսկոպոսն ռուսփայ. Գտա-
նելով երբեմն 'ի յընդհանրական ժողովի իմիք՝ ընդ
ազնուականացն հռօմայու, յորում առնանէր
զրուցատրութի և փառս իմն առ Թէոթորոս
թագաւորն գօթայ: Եւ տեսանելով անդ զայս
ծառութիւն այնքան տեարց, որոց բնաւքն շա-
րակարգեցեալքէին ըստ իւրաքանչիւր որպիսութե
իւրեանց: Ով Տէր իմ, և Աստուած իմ ասաց. Որպ գե-
ղեցիկ պարտի գոլ երկնայինն Եէմ, որովհետև
աստ 'ի ստորնագունում տեսանի այնքան հան-
դիսաւոր և պայծառ երկրայինն Հռօմ: Եւ եթէ
'ի յայսմիկ աշխարհի այնքան փառք շնորհեցեալ
է սիրողացն ունայնութե. ապա որպիսի փառք
պարտի պահեալ գոլ 'ի միւսում աշխարհի՝ խոր-
հողացն ճշմարտութե:

Ասի թէ. անսէլմոս եպիսկոպոսն՝ քանթուրիա
կոչեցեալ քաղաքին ( որոյ ծնունդն մեծապէս
պատուէն լերինքն մեր Նաւզիայ .) էր զարմանալի
սրամիտ նորագունից խորհրդոց: Եղև զի նապա-
ստակիկ իմն 'ի ճանապարհին փախուցեալ 'ի շանց,
թագեաւ 'ի ներքոյ ձիոյ այսորիկ սրբ առաջնոր-
դի, ոչ առ ապաստան իմն, այլ որ ստիպէր որո-
գայթն մերձ եղելոյ մահուան, և բնաւ շունք
հաջելով շուրջ զնովաւ՝ ոչ համարձակէին ապա-
տակել զամրութի նր, առ որ փախեաւ յաւարէ
նց: Ճշմարտապէս էր տեսարան իմն արտաքոյ
կարգի, որ ծիծաղեցուցանէր զամ ճանապար-
հորդս: Այլ սրբն անսէլմոս ասաց՝ յողբոց
հանելով և ողբալով. դուք ծիծաղիք, բայց այս
խղճուկ անասունս ոչ ծիծաղի: Այսպէս և
թշնամիքն հոգւոյ՝ զմարդն հալածելով, և չա-
րապէս հասուցանելով առ ամ տեսակս մեղաց
'ի ձեռն զանազան հնարից, ապաւէն նմա 'ի նե-
ղագոյն ժամանակի մահուան՝ առ 'ի յափշտակել
և կլանել զնա. և նա բոլորովին զարհուրեալ

խնդրէ զօգնութիւն և զօժանդակութիւն յիմից, և ոչ գտանէ բնաւ. և այսու ամի՞ թշնամիքն իւր ծիծաղելի զնովաւ: Եւ՞ զայս ասացեալ՝ գնաց լալով զճանապարհս իւր:

Մեծ կայսրն կոստանդիանոս գրեաց մեծաւ պատուով գգիր իմն առ սը̃ն անտօն, առ որ մեծապ̃ զարմացան կրօնաւորքն իւր: Եւ՞ նա ասաց ցնս̃. Ը̃ է՞ր զարմանայք դուք՝ թէ թագաւոր ոմն գրէ զգիր առ մարդ ոմն, այլ մանաւանդ զարմացէք առաւել Ը̃ այն, որ Ա̃ծն յաւիտենական գրեաց զօրէնս իւր մահկանացուաց, և մանաւանդ խօսեցաւ ընդ նոսա բերան առ բերան՝ որդւով իւրով:

Սը̃ն Փրանչիսկոս տեսանելով զոչխար մի միայն 'ի մէջ հօտի այծից: Զարմացիր ասէ ընկերին իւրոյ. զի որպէս ոչխարն այն հեզութը̃ կայ 'ի մէջ հօտի այծեաց, այսպէս հեզութը̃ և խոնարհութը̃ կայր Տ̃ն մեր 'ի մէջ փարիսեցւոց: Նաև երբեմն ևս տեսանելով զփոքրագոյն գառնուկ մի, որ փողոտիւր 'ի խողէ միոյ. Ո՜հ գառնուկ (ասաց նա լալով.) ո՞պ ցուցանես ինձ ճշմարտապ̃ զմահն փրկչին իմոյ:

* Մեծահամբաւ անձն այն 'ի մերում ժամանակի, Փրանչիսկոս պոռճիացին. մինչ դեռ էր դուքս գանտիու՝ գնալով 'ի յորս, առնէր զպէսպէս հոգևոր յղացմունս: Ես զարմանայի (ասէր նա յետոյ) թէ ո՞պ վերադառնան բազէքն 'ի վերայ բռան, և թոյլ տան ծածկել աչաց, և սփածանիլ մորթոյն. և մարդիկք են այնպ̃ խիստք և յամրք ընդդէմ ձայնին այ̃:

Ասէ մեծագոյն սը̃ն բասիլիոս. թէ վարդն գոլով 'ի մէջ փշոց՝ տայ զայս խրատս մարդկանց: Այն՝ որ առաւել հաճոյ և սիրելի է 'ի յայսմիկ աշխարհի՝ ո՞վ մահկանացուք, է խառնեալ տրտմութը̃, և ոչ ինչ գոյ պարզ և մաքուր: Քանզի

ցաւն

ցաւն է կցեալ ընդ ուրախութե, այրխութին ընդ ամուսնութե, հոգն ընդ առատութե, անարգութին ընդ փառաց, անպատուութին ընդ պատուոյ, զզուումն ընդ հեշտութե, տկարութին ընդ առողջութե: Գեղեցիկ ծաղիկ է ասէ վարդն (այս որ այրս.) բայց նա պատճառէ ինձ զմի մեծ տրտմութի, մինչ խրատէ զիս վն մեղաց իմոց, որով անիծաւ երկիր առ 'ի յառաջածել զփուշ և զտատասկ:

Ջերմեռանդ անձն ոմն 'ի պարզագոյն գիշերի միում նկատելով 'ի մի յառու, և տեսանելով 'ի նմա ներկայացեալ երկինքն ընդ աստեղաց, ասաց: Ով Ած իմ. այսոքիկ աստեղքս լինելոցեն 'ի ներքոյ ոտից իմոց, մինչ զետեղեսցես դու զիս 'ի մէջ որս խորանի քո: Եւ՛ որպ աստեղքն երկնից ներկայացուցանին 'ի յերկրի, այսպէս և մարդիկք երկրի՝ ներկայացուցեալք լինին 'ի յերկինս ընկենդանի աղբեր ածայնոյ պայծառութե: Այլ ոմն տեսանելով զմի գետ՝ որ ընթանայր, այսպ աղաղակեաց: Հոգի իմ ոչ երբէք ունիցի զհանգիստ, մինչև ընկղմիցի 'ի մէջ ծովու ածութե, որ է սկիզբն իւր: Սրբուհին Փրանչեսքա տեսանելով զմի գեղեցիկ առու՝ 'ի յափ որոյ անկեալ կայր 'ի ծունկս առ 'ի աղօթել, 'ի զարմացման եղեալ յափշտակութե, կրկնելով բազմիցս քաղցրասպ զայս բանս: Շնորհն այ իմոյ այնքան քաղցրապէս և համեղաբար վազէ, որպ և վազէ այս փոքրիկ առուս:

Այլ ոմն տեսանելով զծառն ծաղկեալ՝ հառաչէր ասելով: Ընդ է՞ր կամ ես թարց ծաղկի 'ի մէջ պարտիզի եկեղեցւոյ: Այլ ոմն տեսանելով զփոքրագոյն ձագուկս ծածկեցեալ 'ի ներքոյ թևոց հաւուց, ասաց: Ո՛վ Տր իմ. ընդ հովանեաւ թևոց քոց պահեա զիս: Այլ ոմն տեսանելով զարևելեան ծաղիկն՝ ասաց: Ե՛րբ եղիցի

ո՛վ Տր իմ. զի հոգի իմ հետեւիցի ներշնչման բարութե քոյ, ոպ ծաղիկս այս հետեւի արեգական: Եւ տեսանելով նոյնն՝ ՝ի պարտիզի, զոմանս մանուշակս գեղեցկատեսիլս՝ թարց ունելոյ զհոտ՝ ասաց: Վայ է ինձ, այսպիսիք են և մտածմունքն իմ գեղեցիկ ՝ի լսել, բայց են թարց ներգործութե և պտղոյ:

* Րհա ո՛վ սիրահարդ առաքինութե՝ տեսեր, թէ ոպ արտահանեն բարի մտածմունք, և ոչ հառաչմունք յայնմանէ իրէ և յիրակութէ, որք ներկայացուցանեն մեզ, ՝ի փոփոխականութե այսորիկ մահկանացու կենաց: Արդ՝ անիծեալք են այնոքիկ, որք խոտորեցուցանեն զստեղծուածս յըստեղծողէն իւրեանց, առ ՝ի ածել զնս ՝ի մեղս: Եւ երանելիք են այնոքիկ, որք ՝ի գործածեն զստեղծուածս, ՝ի փառս ստեղծողին նոցին, և յարմարեն զունայնութիւն նոցին ՝ի պատիւ ճշմարտութե: Ուստի ճշմարտապէս ասէ սբն Գրիգոր Նիւսացին. թէ ես սովորեմ քարշել զընաւ իրս՝ առ հոգեւոր յառաջադիմութիւն իմ: Ընթերցեր զջերմեռանդ արձանագիրն սրբյն Ջերօնիմոսի, զոր արար վս սրբուհւոյն փաւլայի. վս զի է գեղեցիկ իր իմն առ ՝ի տեսանել: Քանզի բոլորովին լի է բարի մտածմամբ, և սր յղացմամբ, զոր նա առնէր յամ առթի և պատահման:

Արդ ՝ի յայսմիկ առանձնակն հոգեւոր կրթութե, նաև ՝ի սլաքական աղօթս կայանայ մեծագոյն գործն ջերմեռանդութե: Զի այս կարէ լցուցանել զպակասութիւն այլ ամ աղօթից, բայց պակասութին սորին՝ գրեթէ ոչ կարէ լցուցանել որով և իցէ միջոցիւ: Առանց սորա ոչ կարէ բարեպէս առնանիլ տեսական կեանքն, և չարապէս առնանիլ կարէ գործնականն. Առանց սորա հանգստութիւն է դատարկութի իմն, և աշխատութիւն ձանձրութի իմն: Եւ վնկ երդմնեցուցանեմ

նեմ զքեզ, առ 'ի գրկել զատ բոլորով սրտիւ քով
Թարց բնաւ 'ի բաց Թողլոյ:

## Յաղագս Անձնատուր Պատարագի, Եւ որ պիտոյ է լսել զնա:

### Գլուխ . ԺԳ:

Տակաւին ոչ խօսեցայ մինչև ցաստ զարեգակնէ հոգևոր կրթութեան . որ է սրբազնագոյն և ամենաբարձր ընծայն և սրբազնութիւն Պատարագին, որ է կեդրոն և միջակէտ քրիստոնէական կրօնի . սիրտ ջերմեռանդութեան . հոգի անձպաշտութեան, և անճառելի խորհուրդ՝ որ պարունակէ զխորութիւն ամենայնոյ սիրոյ, միջնորդութեամբ որոյ՝ Աստուած մերձենալով մեզ իրականապէս, հաղորդէ զշնորհսն և զփառքն իւր:

2. Աղօթքն՝ որք առնանեն 'ի միութեան այսորիկ անձայնոյ պատարագի, ունին զտեսակ ինչ անպատմելի զօրութեան և ներգործութեան, որոյ միջնորդութեամբն առատանայ հոգին երկնային շնորհիւք, իբր Թէ յեցեալ առ սիրելին իւր, որ լնացուցանէ հոգևոր հոտով և քաղցրութեամբ, որ և է նման ատեղան ինչ ծխոյ կասիական փայտի, զմռոյ, կնդրկի, և ամեն փոշեաց խնկեփեցաց, որպէս գրեալ է 'ի գիրս երգոց. 3. 6:

3 Արա՛ ուրեմն ջանակութիւն առ 'ի գտանել յամենայն աւուր ներկայ 'ի սուրբ պատարագին, առ 'ի մատուցանել ընդ քահանային զփրկիչն քո Հօր իւրոյ՝ վասն քո, և վասն բոլոր եկեղեցւոյ: Հրեշտակքն միշտ ներկայ գտանին անդ մեծագոյն Թուով ( որպէս ասէ սուրբն յօհ ոսկեբ" ) առ 'ի պատուել

զայս

զայս ո՛չ խորհուրդս ։ Եւ մեք ևս գտանելով ընդ նմա, և ընդ դիտաւորութեան նորին, կարեմք ընդունիլ զբազում և զառատ քաղցրութիւնս և զներմուծս՝ ի ձեռն միջնորդութեան այնպիսի ընկերակցութե։ Սիրտքն յաղթօղ, նաև զհնազանդեալ եկեղեցւոյն՝ դառն 'ի միաւորիլ և առակցիլ ընդ Տն մերոյ ՅԻ ՔԻ յայսմիկ մեծային պաշտաման, առ 'ի յափշտակել ընդ նմա, 'ի նմա, և նովաւ՝ զսիրտն Հօր ոյ, և առնել՝ զի ողորմութիւն նորին բոլորովին լիցի մեր ։ Արդ որպիսի երջանկութի ունի հոգի ումն՝ առ 'ի բաշխել ջերմեռանդապէս զինքն իւր՝ վն միոյ այնքան պատուական և ըղձալի բարւոյ,

4 Իսկ եթէ սակս պատահման մեծի իրակութե իմիք, ոչ կարիցես գտանիլ դու իրականապէս ներկայ 'ի հաչակման Ամենասուրբ պատարագին․ գոնեայ պիտոյ է զի գտանիցիս անդ սրտիւ հոգևոր ներկայութեամբ ։ Ուրեմն գնա դու յամ առաւօտու յեկեղեցին հոգւով, եթէ ոչ կարես դնալ այլով կերպիւ․ և միաւորեա զդիտաւորութիւն քո ընդ բնաւից քրիստոնէից, որք են յեկղեցւոջ, և արա զնոյն ներքին ներգործութիւն 'ի տեղւոջ՝ ուր իցես, զոր առնիցէիր՝ եթէ իրականապէս իցէիր ներկայ առ պաշտօնն սրբոյն Պատարագին 'ի յեկեղեցւոջ իմիք ։

5 Բայց առ 'ի լսել իրականապէս, և կամ մտաւորականապէս զսբ պատարագն՝ ոչ հանդիպի ։ Նախ․ պարտիս առնել զնախապատրաստութի ընդ քահանային 'ի սկզբանէ մինչ ցհասանիլն նորին առաջի ներկայութեան ոյ, 'ի ճանաչելն զանարժանութիւն քո, և 'ի խնդրելն զներումն սխալանաց քոց ։ Երկր․ զկնի որոյ մինչ քահանայն հասանի առ սեղանն, մինչև ցընթեռնուլն աւետարանին, մտածեա զգալուստն, և զկեանքն Տն մերոյ 'ի յայս աշխարհ, պարզ և ընդհանրական

մտած

մտածմամբ միով։ Երրդ. զկնի աւետարանին՝ մինչև ցեղերին հաւատամքին, մտածեա՛ զքարոզութիւն Տն մերոյ, և յառաջադրեա՛ կեալ և մեռանիլ 'ի հաւատոջ, և 'ի հնազանդութե՛ն ոք բանից Տն, և 'ի միութե՛ն ոք կաթուղիկե և առաքելական եկեղեցւոյ։ Չորրդ. 'ի հաւատամքէն մինչև ցհայր մերն, մերձեցո՛ զմիտս քո առ խոր-հուրդս մահուան և չարչարանաց փրկչին մերոյ, որք ներգործապէս և էութենականապէս ներ-կայացուցանին 'ի յայս ոք պատարագս, զոր դու ընդ քահանային, և ընդ մնացեալ ժողովրդոց մատուցանես Հօր ամյ, 'ի պատիւ իւր, և 'ի փր-կութի քեզ։ Հինգերրդ. զկնի հայր մերին մինչև առ ճաշակումն՝ զօրացո՛ զքեզ առ 'ի զարթուցանել զպէսպէս բարի ըղձմունս 'ի սրտի քում, փափաքելով ջերմապէս դոլ միշտ առակցեալ և միաւորեալ ընդ փրկչին քո՝ միով յաւիտենականասիրով։ Վեցերրդ. զկնի ճաշակման մինչև 'ի վերջն՝ շնորհակալ լեր զմծային հանդիսավեհութէ, զներմարմնութէ փրկչին, զկենաց, զչարչարանաց, զմահուանն, և զախրոյ նորին, զորմէ տայ մեզ զվկայութի 'ի յայս ոք պատարագի, երդմնեցուցանելով զնա՛ առ 'ի լինիլ միշտ քեզ, և ծնողաց քոց, բարեկամաց քոց, և բոլոր եկեղեցւոյ՝ քաւուի։ Եւ խոնարհեցուցեալ զքեզ բոլոր սրտիւ, ընկալ ջերմեռանդապէս զմծյին օրհնութին, զոր տայ քեզ Տրն մեր միջնորդութի քահանային, որ է ապաւաւոր իւր։

Բայց եթէ կամիս դու 'ի կալն առաջի պատա-րագին առնել զմտածումն քո 'ի վր խորհրդաւոր իրաց, յորս դու գնաս յառաջանալով յօրէ 'ի յօր. յայնժամ ոչ է հարկաւոր զի կասեցուսցես զքեզ առ 'ի առնել զայս մասնաւոր գործս, այլ մանաւանդ բաւական է՝ զի դու 'ի սկզբանէ ուղղեցես զդիտաւորութին քո առ 'ի կամիլ երկրպագել,

գել, նաև մատուցանել զայս մր. պատարագս կրթութ. քոյոյ մր. մտածման և աղօթից, որով հետև 'ի յամ մտածման գտանին վերաստացեալ գործքն, կամ յայտնապէս, կամ ծածկապէս և զօրութբ։

## Յաղագս այլոց Հրապարակական և հասարակական կրթութե։

### Գլուխ . ԺԵ։

Իբաց 'ի յայսմանէ ( ով խանդակաթդ առաքինութե. ) պիտոյ է 'ի յաւուր տօնի և 'ի կիւրակէի յանդիման կալ 'ի յառաւօտեան և յերեկոյեան ժամերգութե, որքան կարելի իցէ քեզ՝ և հանդարտութե քոյ։ Քանզի այնպիսի աւուրքն են ընծայեալք այ, և պիտոյ է մանաւանդ առնել զգործս 'ի պատիւ և 'ի փառս նորին՝ 'ի նոյն աւուրս, քան թէ 'ի յայլ աւուրս։ Արդ՝ զգաս դու 'ի քեզ զպէս պէս կերպ քաղցրութիս ջերմեռանդութե՝ այսու միջոցիւ, ով և զգայր մրն օգոստինոս՝ ծ. որում վկայէ 'ի գրգոջ խոստովանութե իւրոյ։ Թէ 'ի լսելն զձայն ժամակարգութիս 'ի սկիզբն դարձման իւրոյ, հալիւր սիրտն իւր քաղցրութբ և համեղութբ, և աչքն լնանիւր արտասուօք գթութե։ Եւ յետոյ ( առ 'ի ասել, կամ 'ի լսել զնա յաւէտ. ) միշտ լինի քեզ առաւել բարի և առաւել մխիթարութի 'ի հրապարակական և 'ի հասարակ ժամերգութե եկղցւոյ, քան 'ի մասնաւոր գործում։ Զի ԱԾ այսպէս կարգաւորեալ է, թէ հասարակութին լիցի դերազանցեալ առաւել կերպ մասնաւորութիս։

Յօ-

Յօժարապէս մուտ դու 'ի համաժողովեալ տեղիս՝ ուր իցես դու, և յայտնապէս 'ի յայնս՝ որոց կրթութիւնքն առաքերեն զմեծագոյն պտուղս և զշինութիս։ քանզի յայսմիկ իրաւունս առնես դու այնպիսի հնազանդութե՟ իմս, որ է առաւել հաճոյ ա՟յ։ Զի թէպէտ այսպիսի համաժողովմունք ոչ են 'ի պատուիրանէ, սակայն են հրամայեցեալ յեկեղեցւոյ, որով տայ զվկայութի՟՝ թէ ցանկայ նոյն ինքն՝ զի բազումք անդ համաժողովիցին և առաւդրեցին՝ որոյ վ՟ շնորհէ զներողութի և զայլս յատկութիս համեղբայրութեց։ Նաև այս է իր իմս յառաջացեալ 'ի մեծագոյն սիրոյ՝ համընթանալ 'ի բազումս, և գործակցել 'ի բարի գործս այլոց։ Եւ թէպէտ կարէ պատահել, թէ մի ոմն այնպէս առնիցէ զբարի կրթութիս ըստ ինքեան, ոչ և առնանի 'ի հասարակ համեղբայրութե՟. որոյ վ՟՝ կարէ լինել թէ մի ոմն առաւել հաճի առնել զնա 'ի մասնաւորի։ Սակայն Ա՟Ծ առաւել փառաւորի 'ի միաբանութե՟ և յօժանդակութե՟, զոր առնեմք մեք եղբարց և ընկերաց մերոց՝ բարեգործութե՟ մերով։ Զնոյնն ասեմ վ՟ ա՟մ կերպարօթից և հրապարականան ջերմեռանդութեց, առ որս որքան կարելի է մեզ՝ պարտիմք համընթանալ՝ առ 'ի տալ զբարի օրինակ 'ի շինութի ընկերաց, նաև 'ի փառս ա՟յ՝ 'ի դիտաւորութի հասարակութե՟ 'ի ձեռն բարի ըղձից մերոց։

## Յաղագս թէ պիտոյ է պատուել զՄարիամ :

### Գլուխ . ԺԶ.

Որովհետև բազմիցս առաքէ 'ի մեզ Ած զներշնչմունս իւր՝ միջնորդութեամբ հրշտակց իւրոց, այնու մեք ևս պարտիմք յաճախապէս առաքել առ նա զխղճս և զհառաչմունս մեր : Այլ հոգիքն ննջեցելոց ; որք են ը̃ հրշտկս 'ի յարքայութն, որպէս ասէ Տ̃ն մեր՝ թէ էն հաւասարք հրեշտակաց . նա ևս նք առնեն զնոյն պաշտօնն ներշնչելոյ 'ի մեզ, և խնդրելոյ զնա վ̃ մեր՝ 'ի ձեռն ո̃ր աղօթից և բարեխօսութեանց իւրեանց :

* Ով խանդակաթդ ո̃յ . միաւորեսցուք զսիրտն մեր ընդ երկնային հրշտկց, և ընդ երանեալ հոգւոց : Զի ո̃չ փոքրագոյն պիւլպիւլքն ուսանին երգել 'ի յընկերակցութէ մեծագունից ; այսպէս 'ի ո̃ր կենցաղավարութէ, զոր եթէ մեք ունիցիմք ընդ ն̃ց ; ուսանիմք բարեպէս աղաչել զա̃ծ ; նաև երգել զա̃ծային գովասանութիս : Առաջի հրեշտակաց ( ասէր դաւիթ ) սաղմոս ասացից քեզ :

* Պատուեա՛, յարգեա՛, և փառաւորեա՛ միով յատկական սիրով զամենասրբուհի և զփառաւորեցեալ կոյսն մարիամ : Քանզի նա է մայր ամենաբարձր Տ̃ն մերոյ, և հետևապ̃ ամենագթած մայր մեր : Դիմեսցուք ուրեմն առ նա՝ իբր փոքրագոյն որդիք իւր, անկցուք 'ի ծոց գթութե̃ նորին միով կատարեալ ապաւինութբ̃ : Եւ՛ յա̃մ կիտող, և առթի՝ աղաղակեսցուք առ այս ամենաքաղցր մայրս : կարթասցուք զիւր մայրական սէրն :

Ջա

ջանասցուք հետևիլ առաքինութեանց նորին ։ կալցուք դէպ 'ի նա զսիրտ մի, որ լիցէ ճշմարտապէս սիրտ իմն որդիական ։

* Լե՛ր նաև յաւէտ ընտանի հրեշտակաց ․ նկատեա 'ի նմ̄ ներկայ գոլ քեզ բազմիցս աներևութաբար ։ Ե՛ւ 'ի վեր քան զընաւս պատուեա և սիրեա զայն, որ է պահապան և վերակացու այնմ եպիսկոպոսական նահանգին, յորում բնակիս դու ․ նաև անձանցն այնոցիկ՝ ընդ որոց կենցաղավարիս դու ։ բայց յատկապէս և եղականաբար զքոյն ։ Աղաչեա զն̄ յաճախապէս, գովեա զն̄ կարգաւ, և խնդրեա 'ի նոցանէ զօգնութ̄ և զօժանդակութ̄ 'ի յա̄մ գործս քո, թէ հոգևորք իցեն, և թէ ժամանակաւորք, զի գործակցին ն̄ք բարի դիտաւորութ̄ քոյ ։

* Մեծ պետրոս դարբին՝ առաջին քահանայն, առաջին քարոզիչն, առաջին ընթերցողն ածաբանութ̄ 'ի մ̄ջ եղբայրութ̄ անուանն Յ̄ի, և առաջին ընկերն երանելոյն Իգնատիոսի հիմնարկչի Յ̄եան կարգին ։ Գալով յաւուր միում 'ի յալէմանիու, ուր արարեալ էր զիրս մեծամեծս 'ի փառս ա̄յ, և անցանելով յայսմանէ նահանգէ, որ է տեղի ծննդեան իւրոյ՝ պատմէր ։ Թէ կենցաղավարելով 'ի բազում տեղիս հերետիկոսաց՝ ընկալեալ էր զբազում մխիթարութիւս վ̄ս ողջունելոյն զպահապան հրեշտակաւն այնց տեղեաց 'ի ժամանելն առ այնս նահանգս, զորս ճանաչէր նա փորձառապէս լեալք նախախնամիչք ինքեան, թէ 'ի կողմանէ պահպանելոյն զնա 'ի դարանակալութ̄ց հերետիկոսաց, և թէ 'ի կողմանէ առնելոյ զբազում հոգիս առաւել դիւրին և ընդունակ առ 'ի ընդունիլ զվարդապետութիւն փրկութ̄ ։ Ե՛ւ զայս առնէր նա հաստատելով, որ և տիկին ոմն՝ յայնժամ երիտասարդ գոլով, լսելով զայս յատկապէս 'ի բերանոյ նորին, պատմէր մեծաւ

զգաց

զգացմամբ նախ քան զչորս ամ, որ 'ի պատմե-
լոյ երանելոյն՝ մինչև ցայժմ, ոչ է լեալ աւելի
քան զվաթսուն ամ: Եւ՛ ես ունեցայ զայս մխի-
թարութիւնս յատկապէս 'ի յանցեալ ամին,
նուէրելով և սրբացուցանելով զսեղան իմն
'ի տեղւոջ, ուր ածյին ակնարկութեամբն ծնաւ
այս երանելի այրս, 'ի փոքրագոյն գիւղջ
այնմիկ, որ կայ 'ի մէջ խստագոյն լերանցն մե-
րոց:

* Ընտրեա՛ յատկապէս և մասնաւորաբար զսբ-
ոմն`, զորոյ կենցաղավարութիւն դու բարե-
պէս կարիցես ճաշակել և փորձառել, նաև
հետևիլ նմա, 'ի բարեխօսութիւն որոյ ունիցիս
զյատկական ապաւինութիւն իմն. Եւ՛ մանաւանդ
զայն՝ որ է անուանակից քեզ, զի վաղուրեմն անուն
շանադրեալ է նա քեզ՝ 'ի կնունք մկրտութեան
քում:

## Յաղագս թէ պիտոյ է լսել, և ընթեռնուլ զԱծային բանս:

## Գլուխ. ԺԷ:

Լեր ջերմեռանդ և բղձունակ առ 'ի
լսել զբանն Այ. թէ լսիցես զնա 'ի
յընտանեկան խօսակցութեան քում 'ի
բարեկամաց քոց, և կամ թէ լսի-
ցես 'ի քարոզութեան: Լո՛ւր զնա յաւէտ մտադրու
թեամբ և պատուով, և արա զառաջադիմութիւն քո,
և մի՛ թողուր երբէք զի անկանիցի 'ի յերկիր, և
մանաւանդ ընկալ զնա 'ի սրտի քում՝ որպէս
զազնուագոյն պալասան իմն: Հետևելով այսու
ամենամբ կուսին մարիամու, որ զգուշապէս պա-

հէր

հէր 'ի սրտի իւրում զնմ բանս, որք ասացեալք լինէին 'ի գովութիւն որդւոյ իւրոյ ։ Եւ յիշեա զայս. զի Տէրն մեր նոյնով չափով ժողովեալ պահէ զբանս մեր, զորս խօսիմք մեք 'ի յաղօթս մեր, որով և մեք լուեալ պահեմք զբանս նորին, զորս նա ասէ մեզ միջնորդութբ սբ. քարոզութեան ։

* Պահեա՛ միշտ առ քեզ զգեղեցիկ գիրք իմն ջերմեռանդութե 'ի հետևեալ գրեանցս. սբ սբյն պօնավէնդուրայի. Ճէրսօնի. դիոնէսիոս քարթուզեանի. լուտովիկոսի. պլօսիոյ. կրանաթայի. ստէլլայի. արասի. փինէլի. աւիլեայ. հոգևորական պատերազմն. խոստովանութեն սբյն օգոստինոսի. նաև գրգուկն սբյն հերօնիմոսի, և զայլս նման սոցին ։ Եւ ընթերցիր յնմուր աւուր սակաւ ինչ՝ մեծաւ ջերմեռանդութբ, որպէս թէ ընթերցցես զգիրս ինչ գրեալ քեզ 'ի յերկնից՝ 'ի սբցն այ, առ 'ի ցուցանել քեզ զճանապարհ, և առ 'ի տալ քեզ զզօրութիւն վն գնալոյ և ժամանելոյ անդ ։ Ընթերցիր ևս զպատմութիւնս և զվարս սբց, 'ի յորս իբր 'ի մէջ հայելւոջ իմիք տեսանիցես դու զպատկերն և զկերպն քրիստոնէականի կենաց ։ և այնու յարմարեսցե՛ս զգործս նոցին՝ յառաջադիմութեն քո՝ ըստ քոյոյ կացութե ։

Եւ զի թէպէտ գոն բազում գործք սբց, որոց բացարձակապէս ոչ կարեն հետևիլ այնոքիկ, որք կենցաղավարին 'ի մէջ աշխարհի. սակայն կարեն հետևիլ մերձապէս, և կամ հեռապէս ։ Զոր օրինակ. հետևելի է առանձնականութե սբյն պօղոսի առաջին անապատական ճգնաւորի, ըստ այնմ հոգևոր և ճշմարիտ առանձնականութե, զորմէ մեք խօսելոց եմք, և արդէն ևս 'ի վերոյ խօսեցաք ։ Նմանապէս հետևելի է ծայրագոյն աղքատութե սբյն Փրանչիսկոսի, ըստ վարժման և ըստ կրթութե այնպիսի աղքատու-

թէ, զորմէ խօսելոց եմք. այսպէս իմա և զն̃ այլոց սոյնպիսեաց: Գոն և պատմութիւնք ոմանք, որք տան զմեծագոյն լոյս առաջնորդելոյ, նաև ճանապարհի կենաց մերոց. որպիսիք են վարքն երանելոյն Թերեզայի, որ է զարմանալի որքան առ այս ներգործութե̃: Եւ վարքն առաջին հարց՝ եղբարց Յ̃սեան կարգին: Նաև ս̃բյն Կառլոսի պօռօմէի, ս̃բյն Փրանչիսկոսի, և այլոց նմանեաց:

Են տակաւին պատմութիւնք ոմանք, որք առաւել լինին քեզ առիթք զարմանալոյ, քան թէ օրինակ հետևելոյ. որպիսի է պատմութին մարիամու եգիպտացւոյն. սիմէօնի սիւնակեցւոյն և երկու սրբուհեաց կատարինէից. ս̃ սենացւոյն, և ճենուա՛ցւոյն. ս̃բյն անճէլայի, և այլոց սոյնպիսեաց: Որք սակայն այսպիսի պատմութիւնք՝ ոչ բացասեն առ՚ի տալ զմեծագոյն և ընդհանրական համեղութի և քաղցրութի իմն դէպ առ սէրն ա̃յ.

## Յաղագս թէ որպէս պէտք է ընդունիլ զներշնչմանս Այ։

### Գլուխ · ԺԲ։

ՄԵք ներշնչումնք կոչեմք զայսոսիկ զա՛մ․ ք՟ զյորդորմունս, զշարժմունս, զյանդիմանութիւնս ; և զներքին խղճմտանաց խոցոտմունս, զլոյսս, և զճանաչմունս, զորս ա՛ծ առնէ 'ի մեզ՝ կանխելով և բաղխելով զսիրտն մեր հոգւոյնականութե̃ և հայրական սիրով առ օրհնութիւնս, և առ 'ի զարթուցանել, ընդոստուցանել, դրդել, և քարշել զմեզ առ ա̃մ առաքինութիւնս, առ երկնային սէրն, և առ բարի յառաջադրութիւնս ։ և վերջապէս առ առ այն ա՛մ, որ շարժէ և քարշէ զմեզ առ յաւիտենական բարին։ Այս է այն, զոր փեսայն կոչէ յերգս՝ բաղխել, և կամ հարկանել զդուռն, և խօսիլ 'ի սիրտ հարսին իւրոյ։ Զարթուցանել զնա, մինչ ննջէ․ հարցանել զնմանէ, և կոչել զնա՝ մինչ է բացակայ․ հրաւիրել զնա առ քաղցրութիւն իւր, և առ 'ի ժողովել զխնծորս, և զծաղկունս 'ի բուրաստանի իւրում. և առ 'ի երգել և հնչել զքաղցր ձայնն իւր 'ի յականջս նորին։

* Պիտոյանայ աստ ինձ նմանութի և օրինակ իմն՝ առ 'ի բարեպէս ծանուցանել ։ Զի որպէս երեք գործք պարտին յառաջանալ 'ի յամբողջ առաջադրութիւն միոյ ամուսնութե և պսակի, որքան առ աղջիկն, որ պարտի ամուսնանալ։ Նախապէսաքար՝ եթէ առաջադրի նմա պայման ինչ։ Երկրորդ՝ եթէ ցուցցէ նա հաճոյ գոլ ինքեն ա-

ռաջադրութիւն ։ և Երրորդ տեղւոջն՝ եթէ տա
ցէ նմա զհաւանութիւն իւր ։ Այսպէս՝ կամելով
Այ առնել 'ի մեզ, վն մեր, և ը մեզ՝ զգործ
իմն մեծագունի սիրոյ ։ Նախկնապէս առաջադրէ
զներշնչումն իւր ։ Երկրորդ՝ պիտոյ է՝ զի մեք ցու
ցանիցեմք՝ թէ այն հաճոյ է մեզ ։ Երրորդ՝ պիտոյ
է զի հաւանիցիմք ։ Զի ոպ առ 'ի անկանիլ 'ի
մեղս՝ են երեք աստիճանք . մի թելադրութի,
հեշտութի, և հաւանութն ։ Այսպէս առ 'ի ելա
նել առ առաքինութիս՝ են երեք աստիճանք . մի
ներշնչումն, որ է ներհակ թելադրութե ։ հեշ_
տութի 'ի ներշնչութե, որ է ներհակ թելադրա
կան հեշտութե ։ և հաւանութն ներշնչման,
որ է ներհակ հաւանման թելադրութե և փոր_
ձութե ։

* Որդ՝ եթէ ներշնչումն մնայցէր 'ի բոլոր ժա_
մանակս կենաց մերոց, ոչ ինչ կերպիւ այնու
մեք հաճոյ լինէաք այ, եթէ ոչ հաճիցէաք և
հաւանիցէաք նմա, այլ մանաւանդ հակադարձա
պէս այնու վշտացուցանիւր ամձայնն հանդիսա_
վեհութի Նորին ։ Ոպ և պատահեցաւ իսրայէ_
լացւոց, 'ի մէջ որոց եղև նա զամս քառասուն.
յորդորելով զնս 'ի դառնալ, որոյ ոչ կամեցան
երբէք հնազանդիլ ։ Ուստի երդուաւ ընդդէմ
նց, ոպ ինքն ասէ . Երդուա՜յ 'ի բարկութեան իմ թէ ոչ
մտցեն 'ի հանգիստ իմ ։ Զի ոպ . եթէ ազնիւ և պատ
ուական այր ոմն՝ ընդ երկար ժամանակս ծառայիցէր
տիկնոջ միում՝ դիտաւորութը ամուսնանալոյ ը
նմա ։ Բայց այսու ամենիւ եթէ նա ոչ կամիցէր
և հաւանիցէր կերպիւ իւիք լսել և խօսիլ վասն
ամուսնութե, զոր ցանկայր նա, այնու մնայր
նա անպարտ,

Հաճութիւն և հեշտութիւն, որ լինի 'ի ներշն_
ման՝ է մեծագոյն յորդորումն և քարշումն իմն
շնորհացն այ . զի այսու սկսանի հաճոյանալ ամձայ
նոյ

նոյ հանդխավէհութեն ։ Քանզի թէպէտ այս հեշտութիւն և համութիւն՝ տակաւին ոչ է կատարեալ հաւանութեն իմն , սակայն է հաւաստի տրամադրութեն իմն առ նա ։ Արդ՝ որպէս է բարի նշան , և իր իմն յաւէտ օգտակար՝ հաճիլ և հեշտանալ առ 'ի լսել զբանն ա̃յ , որ է իբր արտաքին ներշնչութեն իմն ։ Այսպէս և՝ է իբր իմն յոյժ բարեգոյն, նաև հաճելի ա̃յ՝ հեշտանալ և քաղցրանալ ներքին ներշնչմամբն ։ Այս է հեշտութեն այն , զորմէ խօսելով մ̃րգն հարսն 'ի յերգս իւր ասէ ։ Հալեցաւ հոգի իմ 'ի խօսս սիրեցելոյն ։ Որպէս և ազնուական այր ոմն յոյժ շնորհակալ լինի զտիկնոջէ՝ որում ծառայէ , և մեծագոյն պատիւ համարի ինքեան , մինչ տեսանէ թէ ծառայութիւն իւր յոյժ հաճելի է

տիկնոջն ։

* Բայց վերջապէս՝ այն է հաւանութեն , որ կատարումնակէ զառաքինական գործն ։ Քանզի եթէ ներշնչմունքն լինիցին ներշնչեցեալք , նա և 'ի մէնջ համահաճեալք ։ Բայց յետոյ եթէ արհամարհիցեմք զայնս՝ առ 'ի տալ զհաւանութի ա̃յ , այնու լինիմք ծայրագունապէս ոչ ճանաչողք զայնս բարերարութեն , ևևս մեծապէս վշտացուցանեմք զանձային հանդխավէհութեն իւր , զի թուի թէ՝ անդ է առաւելագոյն արհամարհութեն ։ Այս է այն , որ պատահեցաւ հարսին . զի թէ և յոյժ քաղցրագոյն էցէր ձայնն սիրեցելոյն իւր , որ շօշափեաց զսիրտն իւր՝ մ̃բ բաւականութե̃ միով ։ Բայց սակայն՝ այսու ամ̃ի նա ոչ եբաց նմա զդուռն սրտին , այլ պատճառեաց զունայն և զոնոտի առարկութեն իմն ։ որոյ վասն փեսայն արժանապէս զայրացեալ՝ էանց յառաջ , և եթող զնա ։ Որպէս և ազնուական մարդ ոմն՝ զկնի երկարապէս ծառայելոյ տիկնոջ միում , առնելով զամ կերպ ծառայու-

թեիս, որք են նմա հաճելիք. եթէ այսու ամի՛ յետոյ լինիցի արհամարհեցեալ և անարգեալ ՚ի նմանէ, առնու զմեծագոյն պատճառ տհաճութեն և զայրացման՝ յայսմ կողմանէ, քան յայնմանէ՝ որ խնդիրն իւր ոչ եղև ընկալեալ և կատարեալ: Առաջադրեա՛ քեզ ո՛վ խանդակաթդ առաքինութեն. առ ՚ի ընդունիլ բարի սրտիւ զա՟մ ներշնչմունս, որք հաճելիք են ա՟յ առ ՚ի առաքել քեզ: Եւ՛ յորժամ հասանիցեն առ քեզ՝ ընկալ զնո՟ա ո՟պ զպատգամաւո՛ր թագաւորին երկնից, որ ըղձակերտէ խորհրդակցիլ ը՟ քեզ զհոգևոր ամուսնութէ և հարսանեաց: Լո՛ւր մեծաւ խաղաղութեամբ զառաջադրութեն նորին. և իմալաւապէս զսէրն, որով ներշնչեցեալ ես դու. նաև, արա՛ զմեծագոյն յարգումն սուրբ ներշնչման:

* Տո՛ւր զհաւանութեն ա՟յ ներշնչման, բայց սիրալրական և հաստատ հաւանութը միով: Զի զա՟ծ՝ զոր դու ոչ կարես պարտաւոր առնել քեզ, այսու կերպիւ՛ համարեցեալ լինի յայժ պարտաւորեալ քոյոյ ըղձի: Բայց նախ քան զհաւանիլն ներշնչման, որ լինի վ՟ն հարկաւոր, և արտաքոյ կարգի իրաց. (զի մի՛ դուցէ պատրեցիս դու) պարտիս խորհրդակցել միշտ ը՟ առաջնորդին քոյ. որով իմանի հոգևոր հայրն, զի նա քննիցէ. արդեօք ներշնչումն այն ճշմարիտ իցէ, թէ սուտ: Վասն զի թշնամին մեր՝ տեսանելով զհոգի ոմն, որ միշտ յօժար է առ ՚ի հաւանիլ ներշնչմանց, բազմիցս յառաջիդրէ նմա զսուտ ներշնչմունս առ ՚ի խաբել զնա: Ուստի յայնժամ ոչ կարէ առնել նա զայն նենգութիւն, մինչ խոնարհութեամբ հնազանդի հոգևոր հօրն, որ է առաջնորդ և կառավարիչ իւր:

* Զկնի տալոյ հաւանութեն, պիտոյ է հոգալ զներգործութիս, և դալ ՚ի կատարումն ներշնչման,

ման, որ է լրումն և կատարունակումն ճշմարիտ առաքինութեան ։ Քանզի ունիլ զհաւանութիւն 'ի սրտի, թարց դալոյ առ գործածումն նորին, է իբր տնկել զայգի իմն, առանց կամելոյ թէ նա բերիցէ զպտուղ ։

* Արդ առ այս ամ զարմանալի կերպիւ օգնէ և ծառայէ՝ բարեպէս գործածելն զառաւօտեան կրթութիւն, և զհոգևոր առանձնութիւն, զորոց գրեցի 'ի վերանդր ։ Զի այսու կերպիւ պատրաստեմք զմեզ առ 'ի առնել բարեպէս զնախապատրաստութիւն իմն, ոչ միայն ընդհանրական, այլ և մասնաւոր և եզական ։

## Յաղագս Սրբոյ Խոստովանութեան ։

### Գլուխ. ԺԹ ։

ՏԷՐՆ մեր՝ եթող 'ի յեկեղեցւոջ իւրում զխորհուրդն ապաշխարութեան և խոստովանութեան՝ առ այս վախճան, զի լուանիցիմք մեք միշտ նովաւ յամից անօրէնութեանց մերոց, եթէ շաղախեալք գտանիցիմք ։

Ուրեմն ով սիրահարդ ջերմեռանդութեան. մի՛ թողուր երբէք, զի սիրտն քո մնայցէ շաղախեալ և ապականեալ մեղօք ընդ երկար ժամանակս, որովհետև ունիս դու առ ձեռն պատրաստ զայնքան դիւրագոյն դեղ իմն ։

Մատակն առիւծու, որ շաղաշարի է ընծուն, իսկոյն գնայ 'ի լուանիլ՝ առ 'ի մաքրել զգարշահոտութիւն, որ եթող նմա շաղաշարումն այն ։ Հոգին՝ որ հաւանի և հաճի մեղաց, պարտի ունիլ զզուումն և զզարհուրումն յինքենէ իւրմէ,

և մաքրել իսկոյն հոգունակութք , վն̃ երկիւղին
և պատկառանացն, զոր պարտի ունել առաջի ա-
չաց ամենայնոյ հանդիսավեհութեն, որ նկատէ և
հայի առ նա : Արդ՝ վն̃ է՞ր մեռանիմք մեք հո
գևոր մահուամբ , որովհետև ունիմք զայնքան
բարձրագունեղ սպեղանի իմն :

* Խոստովանեա ուրեմն խոնարհաբար, և ջեր-
մեռանդապէս 'ի յամ̃ ութն օրն միագամ , և կա
րելի է ևս՝ զի դու միշտ հաղորդիցիս , միայն
թէ՝ ոչ զգայցես 'ի խղճմտանս քո զխայթումն իմն
մահացու մեղաց: Զի միջնորդութք խոստովա-
նութե̃ն , ոչ միայն ընկալնուս դու զարձակումն
'ի ներելի մեղաց, զորս դու խոստովանիս , այլ
ևս ընկալնուս զմեծագոյն զօրութե̃ն իմն՝ առ 'ի
զգուշանալ յապառնւոյն , և զմեծ լոյս իմն առ
'ի բարեպէս ճանաչել , և զառատագոյն շնորհք
իմն՝ առ 'ի ջնջել զամ̃ վնասսն , որք պատճառե-
ցան 'ի քեզ : 'Ի գո՛րծ ած նաև զառաքինութիւն խո
նարհութե̃ն , հնազանդութե̃ն , պարզութե̃ն , և
այլոյ · վն̃ զի միայն այսու գործով խոստովա-
նութե̃ն, առաւել կրթիս դու 'յառաքինութիւնս,
քան թէ այլով իւիք :

* Պարտիս ունել միշտ զճշմարիտ ատհաճութին
իմն մեղաց քոց, զորս դու խոստովանիս , թէ
և որքան փոքրագոյնք իցեն, հանդերձ հաստատ
առաջադրութք միով՝ առ 'ի ուղղել զքեզ յապառ
նումն, և զգուշանալ յապագայէն : Բազում ո-
մանք խոստովանին զներելի մեղս 'ի սովորութէ՛
իբր զգաղափար իմն տպագրութե̃ն , թարց մտա
ծելոյ կէտ մի սրբագրել զինքեանս · և թողուն
ծանրացեալք և բեռնաւորեալք զբոլոր կեանս
իւրեանց : Ե՞ւ այսու կերպի՞ւ կորուսանեն զբա
զում բարիս , և զհոգևոր յառաջադիմութիւնս :
Ուրեմն՝ թէպէտ դու խոստովանիս , թէ սա-
ցեալ ես զսուտ իմն թեթև՝ թարց վնասու ,
կամ

կամ ասացեալ ես զբան ինչ անպատշաճ, և կամ առաւել խաղացեալ, և խեղկատակեալ ես, սակայն զղջացիր, և արա՛ զհաստատ առաջադրութիւն ինչ առ 'ի ուղղել զքեզ և 'ի յայնս։ Վ՟ն զի այս է անկարգութիւն ինչ՝ խոստովանել զիւրաքանչիւր տեսակս մեղաց, թէ իցեն մահացուք, և թէ ներելիք՝ թարց կամելոյ ուղղիլ, որովհետև առ այս վախճան կացուցեալ է խոստովանութիւնն։

* Մի՛ արասցես զոմանս աւելորդական ամբաստանումս, ոպ՟ բազումք առնեն 'ի սովորութէ, ասելով։ Ես ոչ սիրեցի զա՟ծ այնու կերպիւ, և այնքան, ոպ՟ պարտէի։ Ե՞ւ ոչ սիրեցի զընկերն իմ այնու եղանակաւ, ոպ՟ պարտէի։ Ե՞ւ ոչ ես ընկալայ զորքաղան հաղորդութիւնս այնու պատուո՞վ, որպէս պարտն էր։ Ե՞ւ ոչ աղօթեցի առ ա՟ծ այնու ջերմեռանդութբ՟ ոպ՟ արժանն էր. և զայլս նմանս։ Ե՞ւ պատճառ սորին է, զի ասելով դու զայս, ոչ ասես զեր ինչ մասնաւոր և յատկապէս, որ կարիցէ իմացուցանել խոստովանահօրն զկացութիւնն քոյոյ խղճմտանաց։ Վ՟ն զի ա՟մ սր՟բք երկնից, և ա՟մ երկրային մարդիկք կարեն ասել զայսոսիկ իրս՝ եթէ խոստովանիցեն։

Նկատեա՛ ուրեմն. թէ 'ի վ՟ր ո՛րոյ մասնաւոր և յատուկ առարկայի պարտիս առնել դու զամբաստանութիւն քո։ Ե՞ւ մինչ բացայայտես զն՟ն, ամբաստանեա՛ վասն պակասութե՟ն, և սխալանացն՝ զոր արարեր դու, պարզապէս և յայտնապէս։ Զորօրինակ. մինչ ամբաստանես դու զքէն, վ՟ն ոչ սիրելոյ զընկեր քո՝ ոպ՟ և պարտ էիր. բայց այս կարէ լինել՝ նաև այսու կերպի՞։ Զի տեսանելով դու զաղքատ ոմն՝ յոյժ կարօտ, որոյ կարէիր անդորրապէս օգնել և սատարել, բայց ոչ ունեցար բնաւ զհոգ ինչ վ՟ն ն՟ր։

նը : Ամբաստանեա՛ ուրեմն զայս մասնաւոր զանցառութի՛ւն , և ասա՛ : Թէ տեսանելով ես զաղքատ ոմն չքաւոր և կարօտեալ , ոչ օգնեցի նմա՛ թէ և կարէի օգնել : Եւ այս՝ թէ սակս հեղգութեան . թէ սակս խստութեան սրտի . թէ սակս արհամարհանաց , ընդ որում ճանաչես լեալ առիթն

սխալանաց այսորիկ :

Դարձեալ . մի՛ ամբաստաներ զքեզ վասն ոչ աղօթելոյդ առ Աստուած այնպիսի ջերմեռանդութեամբ՝ որպէս և պարտ էիր , այլ ամբաստանեա՛ եթէ ունեցար զկամաւոր ցնդմունս 'ի յաղօթելդ . և կամ եթէ հեղգացար ընտել զժամանակ , զտեղի , և զկալ , որպէս և պահանջի առ 'ի կալ յաղօթս մտադրութեամբ : Ամբաստանեա՛ ուրեմն . և խոստովան լեր վասն ամենից , ընդ որում դատանես զքեզ սխալեալ՝ թարց առբերելոյ զայնպիսի ընդհանրականութիւն , որ ոչ օգտէ քեզ բնաւ՝ թէ 'ի գաղջ , և թէ 'ի ջերմեռանդ խոստովանութեան :

* Մի՛ բաւական համարիր քեզ՝ ասել միայն զներելի մեղս քո , որ քան առ գործն , այլ և ամբաստանեա՛ զշարժողական պատճառս նորին , որ էած զքեզ առ 'ի գործել զնա : Զոր օրինակ , մի՛ բաւականասցի քեզ ասել , թէ դու խօսեցար զսուտ՝ թարց օգտի իմիք , այլ ասա՛ , եթէ խօսեցար զսուտ վասն սնափառութեան , կամ վասն գովելոյ զքեզ . կամ վասն ջատագովելոյ և առբարբելոյ զքեզ . կամ վասն սնոտի ուրախութեան . և կամ վասն սնապարծութեան , և յանդգնութեան : Եւ եթէ դու մեղար 'ի խաղալն խաղի իմիք , բացայայտեա՛ . եթէ զայս արարեր վասն ցանկութեան շահու . կամ վասն հաճոյանալոյ և հեշտանալոյ 'ի կենցաղավարութեան :

Ասա՛ ևս զայն , եթէ դու ես երկար ժամանակս մնացեալ իցես 'ի չարութեան , զի երկարութեն ժամանակին հաստատակայս աճեցուցանէ բազում

զմեղս

մեզ։ Քանզի մեծ տարբերութիւն գոյ 'ի մէջ մերոյ անցական ունայնութեան, որ մնայ 'ի սրտի քում իմի չարեկ ժամու, և 'ի մէջ այնմ՝ որ մնայ յօր մի, կամ յերկու, և կամ յերեք, Պիտոյ է ուրեմն ասել զարալին, զառիթն, և զունումն մեղաց մերոց։ Զի թէպէտ հասարակապէս ոչ է պարաւանդեալ ոք առ այն մանրամասնական հադունակութիւն 'ի բացայայտումն ներելի մեղաց. որովհետև բացարձակապէս ոչ է պարտաւանդեալ ոք առ 'ի խոստովանել զայնս։ Սակայն այնոքիկ՝ որք կամին բարեպէս մաքրել զհոգիս իւրեանց, առ 'ի բարեպէս զգուշել 'ի մէջ ջերմեռանդութեան, պարտին դոլ հոգունակք առ 'ի բարեպէս ճանաչեցուցանել զհիւանդութիւնս իւրեանց, յորմէ կամին առողջանալ, թէև որքան փոքրագոյն ևս իցէ։

* Մի՛ պակասիր գոյնեայ կէտ մի առ 'ի ասել զայն, որ պահանջի առ 'ի բարեպէս իմացուցանել զորպիսութիւն քոյոյ վշտացման։ Որ գոն . զառիթն և զպատճառն, որով դու գրգռիս 'ի բարկանալ, և կամ որով տանիս իմիք մոլութեան մարդոյ ուրուք։ Զոր օրինակ. մարդ ոք՝ որ ոչ իցէ հաճելի ինձ, եթէ ասիցէ առ իս բան իմն թեթև՝ առ 'ի ծիծաղել, ես զնա մեկնեմ 'ի չար կողմն, և այնու բարկանամ։ Բայց եթէ այլ ոք՝ որ իցէ սիրելի ինձ, ասիցէ առ իս զառաւել խստագոյնն, ես զնա մեկնեմ 'ի բարի կողմն։ Ուրեմն պարտիմ ոչ թողուլ 'ի յասել. Թէ ես համարձակեցայ առ 'ի ասել զբան իմն զայրացման ընդդէմ ումեք, մեկնելով զասացուածս նորին, զոր ինձ ասաց՝ 'ի չար կողմն։ Եւ՛ այս ոչ այն քան վն որպիսութեան խծուծին և ասացուածոցն, որքան առ այն, զի անձն այն ոչ էր ինձ հաճելի։ Եւ՛ եթէ պիտոյ է առաւել յատկացուցանել զխօսս առ 'ի բարեպէս բացայայտել, նկատեմ թէ՝ յոյժ

բարի

բարի լինի 'ի լսանել զնա: Զի այսպէս բացայայտօրէն ամբաստանելով զինքենէ, այնու ոչ միայն յայտնէ զմեղս՝ զոր արար, այլ նաեւ զչար յօժարութիւնս, զկամս, զունակութիւնս, և զարմատս մեղաց: Յորմէ հանէ հոգեւոր հայրն զառաւել ամբողջ ճանաչումն իմն սրտին՝ զոր նա շօշափէ, նաեւ դեղոց և սպեղանեաց, որք են նմա առաւել յատուկք: Սակայն պիտոյ է միշտ՝ որքան կարելի է, 'ի ծածուկ պահել զերրորդ անձն, զի զայն՝ որ գործակցեցաւ մեղաց քոց:

* Ունեա՛ զմասնաւոր նկատումն իմն առ. քանակութիւն մեղաց, որք կեան և թագաւորեն յաճախապէս և անզգալաբար 'ի մէջ խղճմտանաց քոց, զի զնո խոստովանիցիս, նաեւ կարիցես մաքրել զքեզ: Եւ՛ այսու դիտաւորութե՛ ընթերցիր հոգունակապէս՝ զհետեւեալ գլուխս երրորդի մասին. այսինքն. 27. 28. 29. 36: Նաեւ զ՚ 7. և զ՚ 8. գլուխսն չորրորդի մասին:

Մի՛ փոխեր դիւրապէս զխոստովանահայրն քո, այլ ընտրելով զմինն՝ յարատեւեա՛ տալ նմա զհամար խղճմտանաց քոց, առ այս գործ սահմանեա դրեցեալ յաւուրս: Ասա՛ նմա պարզապէս և ազատապէս զընաւ մեղս, զոր գործեցեր 'ի ժամանակէ 'ի ժամանակ, կամ յամսէ յամիս, կամ յերկու ամսէ յերկու ամիս: Ասա՛ և նմա զկացութիւն քոյոյ յօժարութե՛ և հակեցման, թէ և նոքօք ոչ մեղանչեցեր: որ զոն. եթէ տանջեցար և նեղեցար 'ի տրտմութէ, և 'ի թախծութէ: Եւ՛ կամ թէ տրեցար ուրախութենէ և ըղձից՝ առ 'ի ստանալ զբարիս և զինչս: Նաեւ զայլս յօժարութիւնս և զհակմունս:

## Յաղագս յաճախապէս ընդունելոյն սբ Հաղորդութեան։

### Գլուխ · Ի։

Ասի թէ՝ Միթրիթաս կոչեցեալ թագաւորն, 'ի գտանելն զՄիթրիթատ դեղն, որ Եռամկ" կոչի՝ հապ, այնպէս զօրացոյց նովաւ զմարմինն իւր, որ յետոյ ջանալով թունաւորիլ՝ առ 'ի զերծանիլ 'ի ծառայութենէն Հռոմայեցւոց, ոչ երբէք եղև կարելի։ Այսպէս Ամենափրկիչն մեր՝ այնպէս կայացոյց զգերազանցագոյն խորհուրդն Հաղորդութեան, որ խրախճանապէս պարունակէ զմարմինն և զարիւնն իւր, որ եթէ ոք ուտէ զնա՝ մնայ 'ի յաւիտեան։ Որովհետև մինչ ոք յաճախապէս ճաշակէ զնա ջերմեռանդութեամբ, այնպէս հաստատեալ ամրացուցանէ զառողջութիւն և զկենանքն հոգւոյ նորին, որ դրեթէ անկարելի լինի նմա՝ թէ թունաւորեցեալ լիցի 'ի վատթար ըղձէ իմիքէ։ Քանզի ոչ կարէ ոք սնուցանիլ այսու մարմնով և կերակրով կենաց, կելով 'ի մահացու ըղձի։ Վասն զի որպէս մարդիկք բնակելով և մնալով 'ի յերկրաւոր դրախտին, կարէին ոչ մեռանիլ որքան առ մարմինն՝ զօրութեամբ պտղոյն կենաց, զոր Ած տնկեալ էր անդ։ Այսպէս և կարեմք ոչ մեռանիլ հոգևորապէս՝ զօրութեամբ այս խորհրդոյ կենաց։

* Արդ՝ եթէ պտուղքն այնոքիկ, որք էին առաւել փափուկք, և առաւել մերձաւորք առ ապականութիւն, պահէին դիւրապէս 'ի բոլոր տարին՝ մինչ բարեխառնին և համեմեալք լինէին շաքարով

րով և մեղերով. որպիսիք են բալքն, սալորքն, ծիրանքն, և թութքն: Ոչ է զարմանք ուրեմն, եթէ սիրտք մեր՝ թէ և տկարքն և բեկանաւորք՝ պահպանիցին 'ի յապականութենէ մեղաց, մինչ համեմեալք լինիցին անապական մարմնով և արեամբ Որդւոյն Այ: Ով խանդակաթդ առաքինութեանց. Քրիստոնեայքն դատապարտին և նման թարց պատասխանւոյ իմիք, մինչ արդարադատաւորն ցուցցէ նոցա զանհոգութիւն, որք ունեցան առ 'ի մեռանիլ հոգևորապէս. որովհետև այսպէս դիւրին էր նոցա մնալ կենօք և առողջութբ՝ ունելով զմարմինն իւր, զոր նա ետ նց այսու դիտաւորութբ: Թշուառականք ասիցէ նց. ընդ է՞ր դուք մեռայք՝ ունելով 'ի ձեռս ձեր; զպտուղն և զկերակուրն կենաց:

* Ընկալնուլ զխորհուրդն հաղորդութեան յամսում աւուր, ոչ գովեմ և ոչ պարսաւեմ, բայց յամ կիւրակէի հաղորդիլ խրատեմ և յորդորեմ զամ ոք, միայն թէ միտքն իւր հեռի իցէ յամ ըղձէ մեղանչելոյ: Այսոքիկք են յատուկ բանք սբյն Օգոստինոսի. 'ի ձեռն որոյ ոչ պատուէմ, և ոչ գովեմ բացարձակապէս՝ եթէ ոք հաղորդիցի յամսում աւուր: Այլ թողում զայս խոհեմութե հոգևոր հօրն, որ կարէ վճռել 'ի վր այս պատահման: Վս զի տրամադրութիւն և պատրաստութիւն, որ պահանջի առ մի յաճախ հաղորդութե՝ պարտի գոլ յոյժ քննեցեալ, վսյ ոչ է լաւագոյն տալ զխորհուրդ ընդհանրականապէս: Քանզի այս քննեալ և որոնեալ տրամադրութիս և պատրաստութիս որովհետև կարէ գտանիլ 'ի բարի անձինս, այնու ոչ է պարտ արգելուլ և խտրել զնա ընդհանրականապէս յամ անձնէ: Մանաւանդ պարտի ընձեռիլ այս նկատմամբ կացութե իւրաքանչիւրոյ 'ի մասնաւորի: ուստի անխոհեմութի լինէր խրատել անզանազանապէս

զամ

զնմ ոք՝ առ այս յաճախութիւս հաղորդելոյ ։ Այլ նաև լինէր մեծագոյն անխոհեմութիւն պարսաւել զոք յաղագս այսորիկ. և մանաւանդ յայնժամ, մինչ վարի նա խրատիւք նորին, որ զնա ուղղէ և կառավարէ ։

Յոյժ շնորհալի եղև պատասխանին սրբուհւոյ կատարինէի սիենացւոյն, յորժամ ընդդիմադրեցաւ նմա՝ աղագաւ յաճախ հաղորդութեան իւրոյ, այսու բանիւ. Թէ տէրն օգոստինոս ոչ գովէ, և ոչ պարսաւէ յաճում աւուր հաղորդելն ։ Առ որ ասաց նա. որովհետև տէրն օգոստինոս ոչ պարսաւէ զնա. աղաչեմ զքեզ, զի մի՛ և դու պարսաւիցես զնա։ Քանզի ես գոհունակ եմ։

* Բայց մինչ տեսանես դու՝ ով խանդակաթդ առաքինութեան. Թէ տէրն օգոստինոս յորդորէ և խրատէ, զի հաղորդեսցի ոք յամ կիւրակէի ։ արա ուրեմն զայս՝ որքան և իցէ կարելի քեզ ։ Քանզի ոչ ենթադրեմ ես. եթէ ոչ ունիս դու զտեսակ իմն ըղձի առ մահացու մեղս, նաև ոչ ևս առ ներելիս, այնու դու ես ՚ի ճշմարիտ տրամադրութեան և պատրաստութեան, զոր պահանջէ տէրն օգոստինոս, և գոնեայ առաւել ևս գերազանցապէս ։ Քանզի ոչ միայն ոչ ունիս դու յայնժամ զգործն մեղաց, այլ նաև՝ և ոչ զիղձս առ մեղս ։ Յաղագս որոյ՝ մինչ հոգևոր հայրն քո զնա վարկցէ բարւոք, դու բազմիցս կարես հաղորդիլ յամ կիւրակէի ։

* Բայց սակայն՝ կարեն բազում օրինաւոր արգելմունք վերահասանիլ, ոչ ՚ի կողմանէ քումմէ, այլ ՚ի կողմանէ այնոցիկ՝ ընդ որս կենցաղավարիս, որք տան քեզ զառիթ ՚ի ձեռն յորդորս կամ բանից՝ առ ՚ի ոչ հաղորդիլ այնքան յաճախ ։ Զոր օրինակ. եթէ դու իցես ՚ի յենթարկութեան և ՚ի հնազանդութեան իմիք. և այնոքիկ՝ որոց

պար

պարտիս տալ դու զհնազանդութիւնս և զպատիւս՝ իցեն վատապէս սնուցեալք, նաև անջերմեռանդք. ուստի եթէ անհանգիստք լինին և խռովին 'ի տեսանելն զքեզ այնքան յաճախապէս հաղորդիլ: Յայնժամ բնաւ իրք լաւագոյն մտածեցեալ, բարեգոյն լինի զիջանիլ կերպիւ իմն առ տկարութիւնս նոցին, և հաղորդիլ հնգետասան օրն միանգամ: Բայց այս իմանիլ պարտի յայնժամ, մինչ ոչինչ այլով կերպիւ յաղթիլ կարէ այս դժուարութիւնն: Ուստի այս ոչ կարէ բարեպէս սահմանիլ ընդհանրականապէս, պիտոյ է ուրեմն առնել զայն, զոր ասէ հոգևոր հայրն: Թէպէտ կարեմ ասել զայս հաւաստապէս, թէ մեծագոյն տարակացութիւն գոյ 'ի հաղորդութեան միոյ ամսոյ՝ առ միւսն, 'ի մէջ այնոցիկ՝ որք կամին ջերմեռանդապէս ծառայել այ:

* Ո՜ եթէ դու իցես խոհեմագոյն ոք. ոչ ոք կարէ զքեզ արգելուլ 'ի յաճախ հաղորդելոյ. ոչ հայր, ոչ մայր, ոչ կին, և ոչ այլ ոք: Եւ՛ 'ի յաւուր հաղորդութեան քոյ՝ մի՛ 'ի բաց թողուր զայն հոգն և զգործածութիւն, որ պատկանի թէութեան և կացութեան քոյ: Նաև լե՛ր առաւել քաղցր, և առաւել հաճելի դէպ առ Նս, և մի՛ արհամարհեր բնաւ՝ առնել զայն իմ, առ որս ես պարտաւանդեալ:

Եւ՛ այս ոչ է ճշմարտանման՝ առ այնս, որք կամին արգելուլ զայս կրթութիւնս, որ ոչ բերէ զօգուտ ինչ առ Նս, եթէ ոչ իցեն յոյժ ձանձրացուցիչք և յանդուգնք: Եւ՛ 'ի յայսմիկ պատահման՝ (ով ասացի) թերևս հոգևոր հայրն քո կամի, զի դու զիջանիցես:

* Պիտոյ է. զի ասացից ես զայսոսիկ բանս վն ամուսնացեալ անձանց: Զի թէպէտ ոչ էր հաճոյ այ 'ի հին օրէնս, զի փոխատուքն պահանջել կամիցէին 'ի յաւուրս տօնից՝ զպարտս 'ի պարտաւորաց.

ւորաց, բայց ոչ արգել երբէք, զի պարտապանքն ոչ վճարիցեն և հատուցանիցեն զպարտս իւրեանց այնոցիկ ։ Ոչ է մեծագոյն մեղք՝ պահանջել զհատուցումն ամուսնական պարտուց՝ 'ի յաւուր, յորում որ է հաղորդեցեալ ։ Նաև ոչ է չար, այլ մանաւանդ է արդիւնաւոր իր հատուցանելն զնա ։ Ուստի աղագաւ հատուցանելոյ զայս պարտս, ոչ պարտի զրկիլ որ 'ի հաղորդութենէ, եթէ ստիպէ ջերմեռանդութիւն իւր զինքն՝ առ 'ի ընկալնուլ և ընդունիլ զնա ։ Քանզի արդարև քրիստոնեայքն նախկինն եկեղեցւոյ՝ հաղորդէին յամ օր, թէև իցէին ամուսնացեալք, և ունիցէին զօրհնութիւն ծննդեան զաւակաց ։ Որոյ վն ասացի ես · թէ յաճախապէս հաղորդիլն ոչ բերէ զվնաս · ոչ հարց, ոչ կողակցաց, և ոչ արանց · միայն թէ անձն՝ որ հաղորդի՝ իցէ խոնարհ և ընտրող ։ Եւ՞ որքան առ մարմնական տկարութիւն, ոչ այլ ինչ գոյ որ իցէ օրինաւոր արգելումն այսորիկ սրբոյ հաղորդութեան, եթէ ոչ այն՝ որ բազմիցս գրգռէ զփսխումն ։

* Արդ՝ առ 'ի հաղորդիլ յամ ութն օր՝ պիտոյ է ոչ ունիլ զմահացու մեղս, նաև ունիլ զմեծ իղձ առ 'ի հաղորդիլ ։ Բայց 'ի հանապազորդել յամում աւուր, պիտոյ է առաւել յաղթել զմեծագոյն մասն չար յօժարութեան և հակման ։ Եւ՞ այս պիտոյ է լինիլ խորհրդով հոգևոր հօրն ։

## Յաղագս՝ թէ որպէս պէտք է Հաղորդիլ։

### Գլուխ . ԻԱ.

Պիտոյ է սկսիլ 'ի յերեկոյեայ, և յառաջնոյ գիշերոյ պատրաստել զքեզ առ նր Հաղորդութիւն, բազում մտածութբ և բորբոքմամբ սիրոյ, զարթուցանելով զքեզ 'ի քնոյ կանխագոյն քան զսովորական ժամն։ Եւ 'ի զարթնուլդ՝ լից առժամայն զմիտս և զբերանն քո անուշագոյն բանիւք և աղօթիւք իմն, որոյ միջնորդութբն հոգի քո բոլորովին քաղցրասցի առ 'ի ընդունիլ առ ինքն զփեսայն իւր։ Որ 'ի ննջելն քո նա հսկէ և պատրաստի գալ առ քեզ՝ առ 'ի բերել զպէսպէս շնորհս և զփառս, եթէ դու 'ի կողմանէ քումմէ տրամադրեցեալ իցես առ 'ի ընդունիլ զնա։

Կանխեա՛ ուրեմն 'ի յառաւօտուն մեծաւ ցնծութբ վս բարերախտութեն՝ առ որ յուսաս։ Եւ գոլով խոստովանեցեալ, գնա՛ մեծաւ համարձակութբ, բայց նաև մեծաւ խոնարհութբ՝ առ 'ի ընդունիլ զայն երկնային կերակուրն, որ սնուցանէ զքեզ առ անմահութին։ Եւ յետ ասելոյ զայն բան (Տէր չեմ բաւական, և այլն.) մի՛ շարժեր զգլուխդ, մի՛ յառներ՝ թէև ես 'ի յաղօթել, և՛ մի հառաչեր, այլ համեստաբար և չափաւորութբ բանալով զբերանն քո, և այնքան բարձրացո՛ զգլուխդ, որքան պիտոյ է առ 'ի տալ զանդորրութին քահանային, և առ 'ի տեսանել զայն, զոր նա առնէ։ Ընկալ լիագոյն հաւատով՝ յուսով և սիրով՝ զայն, զոր,

առ

առ որ, ո՛րով հաւատաս, յուսաս, և սիրես դու։

Արդ՝ ո՛վ խանդակաթ առաքինութիւն. պատկերակերպեա՛ 'ի քեզ. թէ որպէս մեղուն ժողովելով զցօղն երկնից, նաև զառաւել ազնիւ հիւթն տրեալ 'ի յերկրէ, և կազմելով զնա 'ի մեղր; տանի 'ի մէջ տան և փեթակի իւր։ Այսպէս քահանայն ունելով 'ի վերայ սեղանոյն զփրկիչն աշխարհի. ը̃ զճշմարիտ Որդին այ̃, որ է որպէս զցօղ իմն իջեալ 'ի յերկնից. և զճշմարիտ որդի կուսին մարիամու, որ բուսաւ որպէս զծաղիկ 'ի յերկրէ՝ 'ի մարդկային բնութէ մերմէ, դնէ զնա 'ի բերան քո, և 'ի մէջ մարմնի քոյ՝ իբր զկերակուր իմն քաղցրութե և համեղութեան։ Ուրեմն ընկալնելով զնա, զարթո՛ զսիրտն քո առ 'ի պատուել և յարդել զայս ամենամեծ թագաւորս փրկութե։ Ընձեռեա՛ ընդ նմա զներքին խորհրդոց քոց. և մատուցեա՛ զնա դոլ 'ի մէջ սրտի քոյ, ուր կայ եղեալ վասն բարութե քոյ։ Վերջապէս. տուր նմա զամ̃ կերպ պատիւս, և շնորհակալութիւս՝ որքան կարելի իցէ քեզ։ և այնու կերպիւ և եղանակաւ վարի՛ր դու; որ 'ի բնաւ գործս քո ճանաչիցի՝ թէ ած̃ ը̃ քեզ իցէ։

Բայց յորժամ դու ոչ ունիցիս զայս բարիս՝ առ 'ի իրականապէս հաղորդիլ 'ի սբ̃ պատարագին, գոնեայ՝ հաղորդիր սրտիւ և հոգւով, միաւորելով զքեզ 'ի ձեռն միջնորդութե եռացեալ բղձիմոյ, ը̃ կենդանաչուցիչ մարմնոյ փրկչին։

* Նախապետական դիտաւորութիւն քո՝ առ 'ի հաղորդիլ, պարտի լինել առ 'ի զարգացուցանել զքեզ, նաև զօրացուցանել և մխիթարել զքեզ սիրովն այ̃։ Քանզի պարտիս դու ընդունիլ սիրով զայն, որ միայն սիրով նորին տրի քեզ։ Ամենափրկիչն մեր ոչ կարէ նկատեալ լինել յիմիք սիրալրական և քաղցրական գործում, քան

'ի յայսմիկ՝ յորում ունայնացուցանի . ( այսպէս ասացից ) և լինի կերակուր՝ առ'ի թափանցել 'ի հոգիս մեր, և միաւորել ը̅ սրտի, և ը̅ մարմնոյ հաստատացելոցն խորոց:

* Որդ՝ եթէ հարցանիցեն քեզ աշխարհականքն, թէ վասն է՞ր դու այնքան յաճախապէս հաղորդիս . ասա՛ նոցա: Թէ այս է՝ առ'ի ուսանիլ սիրել զՔս, առ'ի մաքրել զիս յանկատարելութէ իմմէ, առ'ի ազատել զիս 'ի թշուառութէ, առ'ի մխիթարել զիս 'ի նեղութեն և 'ի տկարութեն իմում: Ասա՛ նց̅ . թէ երկու կերպ անձինք պարտին յաճախ հաղորդիլ: Այսինքն՝ կատարեալքն . զի գոլով բարեպէս տրամադրեալք, առնեն զմեծագոյն անդէպութի՝ եթէ ոչ մերձենայցեն առ սկիզբն և առ աղբիւրն կատարելութեն: Եւ անկատարքն . առ'ի հասանիլ կատարելութեն: Զօրեղքն, զի մի՛ տկարասցին, և տկարքն՝ զի զօրասցին: Հիւանդքն, զի առողջասցին, և առողջքն՝ զի մի՛ հիւանդասցին: Եւ որքան առ քեզ, իբր անկատար, իբր տկար, և իբր հիւանդ ոք՝ ունիս զպիտանաւորութիւն առ'ի հաղորդիլ բազմիցս, վս̅ կատարելութե քոյ, և վս̅ դեղոյ քոյ: Ասա՛ նոցա . թէ այնք՝ որք ոչ ունին զբազում աշխարհական գործս, պարտին բազմիցս հաղորդիլ, այնու՝ զի ունին զանդորրութի: Եւ այնք, որք ունին զբազում աշխարհական գործս, ունին զպիտանաւորութի: վս̅ զի այն՝ որ յաւէտ աշխատի, և որ բեռնաւորեալ է հացիւ, պարտի նաև ունել զփափուկ և զհամեղ կերակուրս:

Ասա՛ նց̅ . դուք ևս պարտիք ընկալնուլ զՔսն հաղորդութիւն, առ'ի ուսանիլ բարեպէս ընկալնուլ զնա: Վասն զի ոչ կարեմք առնել զգործ ինչ յոյժ բարեպէս, յորում ոչ կրթիցեմք զմեզ բազմիցս:

Հա_

* Հաղորդիր յաճախապէս և բազմիցս՝ ո՛վ խան դականթդ առաքինութեան. որքան կարես՝ խորհրդով հոգևոր հօրն քո, և հաւատով բանից իմոց ։ Նապաստակքն ապխտականան 'ի լերինս 'ի ձմերայնի. այնու՝ զի ոչ տեսանեն, և ոչ ուտեն զայլ ինչ՝ եթէ ոչ զձիւն ։ Այսպէս ևս դու 'ի ձեռն զօրութեան երկրպագելոյ, և ճաշակելոյ՝ զգեղեցկութիւն, զբարութիւն, և զմաքրութիւն, որ գոյ յայսմիկ Ածային սրբազնութեան, լինիս բոլորովին գեղեցիկ, բոլորովին բարի, և բոլորովին մաքուր ։

Վերջ Երկրորդի Մասին ։



# ՄԱՏ՟Ն ԵՐՐՈՐԴ:

## ՆԵՐԱԾՈՒՄ՟Ն ԱՌ ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ:

Որ պարունակէ զզանազան ազդեցմունս շուրջ զկրթութիւն առաքինութեանց:

Յաղագս ընտրութեան, որ առնանել պարտի՝ որչափ առ կրթութիւնս առաքինութեանց:

### Գլուխ. Ա:

ԹԱԳԱՒՈՐՆ ՄԵՂՈՒԱՑ ոչ երբէք բազմի 'ի դաշտի, եթէ ոչ իցէ պաշարեցեալ և շրջապատեցեալ յամենայնից փոքրագունից զօրաց իւրոց: Եւ սէրն ոչ երբէք մտանէ, և զետեղի 'ի սրտի միում, ուր ոչ ածէ անդ ընդ իւր զբոլոր գունդս այլոց առաքինութեանց, կրթելով և դնելով զնոսա 'ի գործ, որպէս առնէ զօրագլուխ և դուքս ոմն զօրաց իւրոց: Բայց ոչ կիրարկանէ և կրթէ զնոսա միով կերպիւ, և ոչ հաւասարապէս, և ոչ յամենայն ժամանակի, և ոչ ևս յամենայն տեղւոջ:

Արդարն է որպէս զծառ՝ որ տնկեալ է 'ի գնացս ջուրց, որ տայ զպտուղ իւր 'ի ժամանակի իւրում: Վասն զի սէրն ոռոգանելով զմի հոգի, յառաջածէ 'ի նմա զառաքինական գործս, զիւրա-

քան

քանզիւրն՝ յիւրում կացութեն։ Երաժշտութիւն, որ
այնչափ հեշտալի և համելի է ըստ ինքեան, անդէպ
էին է ներ ոգւոյ. ո՞չ ասէ ո՞ք զիրն։ Այս է մե֊
ծագոյն մոլութին իմն բազում անձանց, որք առ֊
նելով զկրթութն մասնաւոր առաքինութեն իմիք,
այնու յանդգնին 'ի կամիլ առնել զնոյնն 'ի յամ֊
կերպ պատահման։ Ե՞ն կամին հանդոյն այնց
հնազոյն փիլիսոփայից՝ կամ միշտ լալ, և կամ
միշտ ծիծաղել։ Ե՞ն առնեն նաև այլ ևս վատ֊
թարագոյնս, մինչ պարսաւեն և լռեցուցանեն
զայնոսիկ, որք ոչ կրթեն միշտ 'ի մի և նոյն ա֊
ռաքինութեն՝ որպէս զինքեանս։ Պարտ է խնդալ
ընդ խնդացօղս, և լալ ընդ լացօղս՝ ասէ առաքեալն։
Նաև սէրն է բամբերող, բարերար, գթած,
առատ, խոհեմ, և զիջանող։

Արդ՝ գտանին առաքինութիք ոմանք, որք իբր
ընդհանրականապէս ունին զկիրառումն իւրեանց,
և զի ոչ պարտին առնել զգործս իւրեանց ըստ
ինքեանց, և վս ինքեանց միայն, այլ և մանա֊
ւանդ պարտին սփռել զյատկութիս և զգործս
իւրեանց 'ի վր այլոց առաքինութեց։ Քանզի
ոչ ցուցանին բազմիցս առիթք՝ առ 'ի կիրարկա֊
նել զարիութին, զմեծահոգիութին, և զառա֊
տասրտութին։ Բայց հեզութին, բարեխառնու֊
թին, համեստութին, և խոնարհութին՝ են այն
պիսի առաքինութիք, յորոց պարտին առնուլ
զօրակութին՝ և զդոյն, ընաւ գործքն կենաց մե֊
րոց։ Ուստի թէպէտ գտանին այլք առաքինու֊
թիք, որք առաւել գերազանցագոյնք են քան
զսոսա, սակայն կիրառումն սոցա է առաւել
հարկաւոր։ Զորօրինակ. շաքարն գերազանցա֊
գոյն է քան զաղն, բայց աղն առ 'ի կիրարկանել
է առաւել հասարակ և ընդհանրական։ Վասն պի֊
տոյ է ունիլ միշտ զբարի և զյօժար նախանկա֊
տումն իմն առ այսոսիկ ընդհանրական առաքի֊

նութիւնս, որովհետև պիտոյ է վարել նոքօք՝ ամ̃ հասարակական առաքինութիւնս:

* Ի՛ մէջ կրթութեանց առաքինութեանց, պարտիմք մեք հետևիլ այնմիկ, որ է առաւել համաձայն պարաւանդութեան մերոյ, և ոչ հետևիլ այնմիկ՝ որ է առաւել համաձայն հաճութեան մերոյ: Հաճելի իմն էր սրբուհւոյն Փաօլայի՝ 'ի կիրարկանել զխստութիւնն մարմնական մահացուցման, առ 'ի դիւրապէս վայելել զհոգևոր քաղցրութիւնն: Բայց նա առաւել պարաւանդեալ էր առ հնազանդութեան մեծաւորաց: Որոյ վ̃ հաստատէ մ̃ըն Ջերօնիմոս. թէ նա այսու արժանի էր յանդիմանութեան, զի առնէր զայս անբարեխառն խստութիւնս ընդդէմ կամաց եպիսկոպոսին իւրոյ: Ե՛ւ առաքեալքն հակադարձապէս, որք կոչեցեալք էին առ 'ի քարոզել զաւետարանն, և բաշխել հոգւոց զերկնային հացն, ենթադատեցին՝ թէ ոչ է պարտ թողուլ զայս բարի պաշտօնս և կրթութիւնս, առ 'ի գործածել զառաքինութիւնն հոգածուն աղքատաց, թէ և է գերազանցագոյն: Ամ̃ կոչումն և կացութիւն՝ ունի զպիտոյութիւն առ 'ի կիրարկանել զմասնաւոր առաքինութիւն իմն: Այլ է առաքինութիւն միոյ առաջնորդի, այլ է՝ միոյ իշխանի, այլ՝ միոյ զինուորի. այլ՝ ամուսնացեալ կնոջ. և այլ՝ այրիացելոյ: Ե՛ւ զի թէպէտ պարտին ամենեքեան ունիլ զընաւ առաքինութիւնս. բայց սակայն ոչ պարտին հաւասարապէս 'ի կիրարկանել զընաւս: Այլ իւրաքանչիւրոք զայնս պարտի 'ի գործածել, որք պահանջին առ որպիսութիւն կենաց, առ որ կոչեցեալ է:

* 'Ի մէջ առաքինութեանց, որք ոչ հային 'ի մասնաւոր պարաւանդութիւնն մեր, պիտոյ է նախադասել զառաւել գերազանցսն, և ոչ զառաւել երևելիսն: Շանթքն՝ հասարակաց երևելին աչաց մերոց առաւել մեծագոյնք քան զաստեղս, և առա

ւել

ւել պարունակել զմիջարկութիս տեղւոյ ։ Բայց սակայն նոքա ոչ են բաղդատելիք ը̃ աստեղաց , ոչ մեծութբ̃ քանակութե̃ , և ոչ որպիսութբ̃ որակուե̃ , եթէ ոչ այնու՝ զի առաւել մերձա֊ ւորք են մեզ, և 'ի միում նկատման՝ առաւել հաս տագոյնք քան զաստեղս ։

Են ևս ոմանք առաքինութիք , որք վ̃ գոլոյն մերձաւորք և զգալիք մեզ , ( և զի այսպէս ա֊ սացից ) նաև նիւթաւորք , մեծագոյնք համա֊ րեալք , և գերազանցեալք են 'ի ռամկաց ։ Որ֊ պէս թէ ոք գերազանցէ հասարակապէս՝ զժա֊ մանակաւոր ողորմութին , քան զհոգևոր ողորմու թին ։ Եւ զքուրցն , զպահեցողութին , զմերկու թին , զխարազնական հարկանումն , և զմարմնոյ մահացուցումն՝ քան զհեզութին , քան զբարեգթու թին , քան զհամեստութին , և քան զայլ մահա֊ ցուցումն սրտի , որք են յոյժ առաւել գերա֊ զանցք ։ Ընտրեա՛ ուրեմն ո՞վ խանդակաթդ առա քինութե̃ · զլաւագոյն առաքինութիս , և ոչ զա ռաւել համարելիս · զառաւել գերազանցսն , և ոչ զառաւել երևելիսն · զլաւագոյնսն , և ոչ զա ռաւել գեղեցիկսն ։

* Յոյժ օգտակար է , զի իւրաքանչիւրոք ընտրե ցէ զմի մասնաւոր կրթութի առաքինութե̃ խմբք , ոչ արդէն առ 'ի թողուլ զայլս , այլ առ 'ի պահել յաւէտ անդորրութ̃ զմիտս իւր կարգաւորեալ և զբաղեալ առ այն ։ Գեղեցիկ երիտասարդուհի ոմն , որ էր առաւել փայլուն քան զարեգակն , և իրականապէս զարդարեալ և շքեղացեալ , նաև պսակեալ ծիթենի պսակաւ միով , երևե֊ լով տ̃ըն յօհաննու եպիսկոպոսին աղեքսանդրու՝ ասաց ։ Ես եմ անդրանիկ դուստրն թագաւո֊ րին , և եթէ դու կամիս ունել զիս բարեկամ քո , ես ածից զքեզ առաջի նր̃ ։ Յայնժամ ճանա֊ չեաց նա , թէ այս էր առաքինութին ողորմու֊

թե̃

թե դէպ 'ի յաղքատս, զոր հրամայեր նմա ԱԾ : Որոյ վն զնի այսօրինակ այնպէս եւ զինքն ողորմութե, որ 'ի յանմէց կոչեցաւ յօհաննէս ողորմած :

Եւլօժիս աղեքսանդրացին, որ ցանկայր առ 'ի առնել զմասնաւոր ծառայութի ինն այ, ոչ ունելով զբաւական զօրութե առ 'ի դրկել զառանձնական կեանն, և ոչ ևս ունելով զբաւականութե առ 'ի ենթադրել զինքն 'ի ներքոյ հնազանդութե այլոց, էառ առ ինքն զայր ոմն խեղճ և ողորմելի, որ բորոտովին կերեալ և ապականեալ էր 'ի բորոտութէ, առ 'ի կիրարկանել կրթութբ շուրջ զնովաւ՝ զսէրն և զմահացուցումն : Ուստի վն առնելոյ զայս գործս առաւել արժանապէս, ուխտեաց առ 'ի պատուել զնա, նաև կենցաղավարել ընդ նմա, և ծառայել նմա, այնպէս՝ որպ և ծառայ ոմն առնէ տեառն և տիրուհւոյն իւր : Արդ՝ եղև զի փորձուն իմն վերաժամանեաց՝ որքան 'ի վր բորոտին, այնքան 'ի վր Եւլօժիոյ՝ առ 'ի բաժանիլ 'ի միմեանց, որոյ վն գնացին առ մբն անտոն, որ ասաց նց : Զգոյշ լերուք ով որդեակք իմ 'ի բաժանելոյ 'ի միմեանց: զի գոլով դուք մերձ վախճանին ձերոյ, եթէ հրեշտակն ոչ իցէր ընդ ձեզ, դուք ընթանայիք 'ի մեծագոյն որոգայթս առ 'ի կորուսանել ըզպսակն ձեր:

* Սբ լոտովիկոս թագաւորն, այնպէս այց առնէր հիւանդաց, և յատուկ ձեռամբ իւրով ծառայէր նց, իբր թէ իցէր թոշակառու և ռոճկաւոր պաշտօնեայ : Սբն Փրանչիսկոս 'ի վեր քան զմն սիրէր զաղքատուն, և զնա կոչէր տիրուհի իւր : Սբն տօնմէնիկոս սիրէր զքարոզութիւն, յորմէ կարգն իւր ընկալաւ զանունս այս, որ կոչի կարգ քարոզողաց: Սբն գրիգոր մեծն՝ հեշտանայր 'ի պատուելն զուխտաւորս և զհիւրս ըն-

ընծայիւք, ըստ օրինակի մեծին աբրահամու, որ ընկալաւ 'ի ներքոյ այսպիսի ձեռոյ հիւրականի զթագաւորն փառաց:

Տօբիթ կրթիւր 'ի սէր թաղելոյ զմեռեալս: Սըրբուհի տիկնին եղիսաբէթ՝ թէ և իցէր մեծ իշխանուհի, 'ի վեր քան զընաւս սիրէր զխոտումն իւրոյ ինքեան: Սրբուհի կատարինէ ճէնուացին այրի եղեալ, ետ զինքն 'ի ծառայութին հիւրանոցի: Պատմէ քասիանոս. թէ ջերմեռանդ տիբուհի ոմն՝ ցանկանալով կրթիլ 'ի յառաքինութին համբերութե, դիմեաց առ տրն աթանաս, և խնդրեաց 'ի նմանէ զայրի կին ոմն բարկացօղ, զայրացօղ, ձանձրացուցիչ, և անտանելի. որ միշտ աշխատեցուցեալ զջերմեռանդ կինն այն, այնու ետ նմա զբարի առիթ առ 'ի կրթիլ արժանապէս 'ի յառաքինութին հեզութե և համբերութե: Այսպէս 'ի մէջ ծառայիցն այ՝ ոմանք տան զինքեանս 'ի ծառայութի հիւանդաց: Ոմանք 'ի սատարումն աղքատաց, ոմանք 'ի ջանս և 'ի հոգածութիս առ 'ի յառաջացուցանել զքրիստոնէական վարդապետութին 'ի մէջ մանկանց: Ոմանք՝ առ 'ի քարշել զմոլորեալ և զկորուսեալ հոգիս՝ 'ի բարի ճանապարհն առաքինութե: Այլք ոմանք՝ առ 'ի զարդարել զեկեղեցիս, և յօրինել զսեղանս: Եւ այլ ոմանք՝ առ 'ի դնել զխաղաղութի և զհամաձայնութի 'ի մէջ մարդկանց:

* 'Ի յորս հետևէին աստղանկարակերտից, որք 'ի վերայ զանազան ենթակայից և նիւթոց՝ յօրինեն զգեղեցիկ նկարս ապրշմի, ոսկւոյ, և արծաթոյ, առ 'ի առնել զնմ տեսակ ծաղկունս: Այսպէս և՝ այս բարեպաշտ անձինքս, որք առնուն զմասնաւոր կրթութի իմն ջերմեռանդութե, վարին նոքօք ոմ ենթակայիւք ոմանք՝ սակս հոգևոր նկարակերտութեց իւրեանց, 'ի վր որոց

'ի

'ի գործածեն զնկարումն այլոց բնաւից առաքինութեանց : Եւ՛ այսու կերպիւ՛ պահելով զգործս և զիղձս իւրեանց՝ առաւել միաւորեալ և կարգաւորեալ , վերաբերմամբ առ գլխաւոր և նախապետական կրթութիւն , և այսպէս պատրաստեն և նորոգեն զմիտս իւրեանց : 'Ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ, և զանազան գործով պաճուճեալ:

* Յորժամ փորձիմք մեք 'ի մոլութէ իմեքէ , պիտոյ է մեզ ընդգրկել՝ որքան կարելի է զայն առաքինութիւն , որ է ներհակ նորին , նաև վերաբերելով և զայլս՝ առ այն : Վասն զի այսպէս առնելով՝ յետոյ յաղթեմք և ընկճեմք զթշնամին մեր , և յառաջանամք 'ի բնաւ առաքինութիւնս : Զոր օրինակ . եթէ ես փորձիցիմ 'ի հպարտութենէ , և կամ 'ի բարկութենէ . պիտոյ է՝ զի հակցիմ ես 'ի բնաւ իրս՝ 'ի կողմն խոնարհութեան և հեզութեան : Եւ՛ պիտոյ է ևս , զի և առ այս ծառայեցուցեմ և զայլս կրթութիւնս՝ աղօթից , սրբազնութեանց , խոհեմութեան , արիութեան , և զգաստութեան : Զի որպէս փիղքն առ 'ի սրել զատամունս իւրեանց վասն ջատագովելոյ և պաշտպանելոյ զինքեանս՝ քսեն և շփեն զնոսա յիրեար ընդ այլոց ատամանց իւրեանց , որք այսու զօրանան , նրբանան , և սրին՝ փոխաբերապէս նաև բնաւքն : Այսպէս և առաքինի մարդն կամելով յառաջանալ և զարգանալ 'ի յառաքինութեան , 'ի յոր ունի նա առաւել հարկաւորութիւն և պիտանաւորութիւն վասն ջատագովութեան իւրոյ , պարտի քսել և շփել զնա ընդ կրթութեան այլոց առաքինութեանց , նորուն 'ի սրելն այն միոյն , լինին ևս առաւել գերազանցք և փայլունք՝ նաև այլքն : Ո՛վ պատահեցաւ և յօբայ . որ 'ի կրթելն մասնաւորապէս 'ի ձեռն համբերութեան ընդդէմ այնքան փորձութեան , յոր

մէ այնքան նեղացուցաւ, եղև կատարելապէս սբ և առաքինի ՚ի յամ կերպ առաքինութիս, Մանաւանդ պատահի ևս. որպ ասէ սբն Գրիգոր Նիւսացին. որ մի միայն գործով առաքինութեն, մինչ բարեպէս և կատարելապէս կիրարկանի, հասանի ոք առ գագաթն ամից առաքինութեց, և առբերէ ՚ի յօրինակ՝ զՌախաբ, որ կատարելապէս կիրարկանելով զպաշտօնն հիւր ընկալութեն, եհաս առ մեծագոյն փառք իմն։ Բայց այս յայնժամ իմանիլ պարտի, մինչ այնպիսի գործն առնանի գերազանցապէս, և մեծաւ ջերմեռանդութբ, և սիրով։

## Հետևի նոյն խօսակցութեն՝ յաղագս ընտրութե առաքինութե։

### Գլուխ. Բ։

Գերազանցապէս ասէ սբն Օգոստինոս. թէ այնոքիկ, որք սկսանին տալ զինքեանս առ ջերմեռանդութի, գործեն զսխալմունս ոմանս, որք են պարսաւելիք ըստ խստութեն օրինի կատարելութեն, սակայն ոչ են պարսաւելիք վս բարւոյ նշանի, որովք ցուցանեն նք զգերազանցութի իմն ապառնւոյ բարեպաշտութեն, առ որս տրամադրին ինքեանք։ Այն ստորնագոյն և խոշոր երկիւղն, որ ծնանի ՚ի հոգիս ոմանց զառատագոյն խղճահարութիս, որք տակաւին նորապէս ելեալք են ՚ի սահմանէ մեղաց, է գովելի առաքինուի իմն յայսմիկ սկզբան, և առհաւատչեայ իմն ապառնւոյ մաքրութեն խղճմտանաց։ Բայց սոյն ասացեալ երկիւղս՝ պարսաւելի է ՚ի յայնս,

որք

որք արարեալք են զբազում յառաջադիմութիւնս , 'ի սրտի որոց պարտի Թագաւորել սէրն, որ սակաւ առ սակաւ արտաքսէ զայս ծառայական երկիւղս :

* Սբն բեռնարդոս 'ի սկզբան իւրում, լի էր խստութե՞ և կտտութե՞ ընդդէմ այնոցիկ, որք գային 'ի ներքոյ հնազանդութեան իւրոյ խրատուն, առ որս առաջին բանն զոր ասէր, այս է. Թէ պիտոյ է Թողուլ զմարմինն ; և մերձենալ առ Այծ միայն հոգւով : Եւ լսելով զխստութիւնս նոցին, պարսաւէր միով արտաքոյ կարգի խստութե՞ զնմ կերպ սխալմանս , Թէ և փոքրագոյնք իցեն : Եւ այնպէս քարշէր զայն աղքատ սկսանօղս առ կատարելութիւն , որ փոխանակ ածելոյ զնս դնալ յառաջ , քարշէր զնս 'ի յետս , զի կորուսանէին զսիրտ և զզօրութիւն 'ի տեսանելն այնքան Թախանձաբար քարշեալք՝ առ այնպիսի և այնքան բարձր և դժուար ելանումն : Տե'ս ուրեմն ո՞վ խանդակաթ առաքինութիւն . զի Թէպէտ այս էր վառեալ նախանձաւորութիւն իմն՝ միոյ կատարեալ մաքրութեան , որ գրգռէր զայս մեծ սբս՝ առ այսպիսի տեսակ խրատու , նաև նախանձաւորութիւնս այս՝ էր մեծ իմն առաքինութիւն 'ի նմա : Բայց այնպիսի առաքինութիւն , որ ոչ մնայր առանց յանդիմանեցեալ գոլոյ : Եւ այսպէս՝ նոյն ինքն Այծ 'ի ձեռն յայտնութեան իմիք՝ զնա յանդիմանեալ ուղղեաց , հեղլով 'ի հոգի նորին , զոգի իմն քաղցր , համեղ , անոյշ , և գԹած , որոյ միջնորդութեամբն բոլորովին դարձեալ 'ի յայլ , ամբաստանեաց յետոյ զինքենէ մեծապէս , վս գոլոյն այնպէս խիստ և կոպիտ : Ուստի այսու՝ այնպէս քաղցր և գԹած , նաև զիջանօղ եղև առ իւրաքանչիւրս , մինչ զի արար զնմ՝ առ ամենեսեան , առ 'ի շահել զամենեսեան :

* Սբն Ջերոնիմոս 'ի պատմութեան՝ այսպէս ասէ. Թէ

սրբու_

սրբուհին փաօլա, որ էր սիրելի և հոգևոր դստերն իւր, ոչ միայն էր անբարեխառն, այլ նա ևս խստացեալ և յամառեալ 'ի կրթութեան մարմնական մահացուցման, այնպէս՝ մինչ զի ոչ կամէր կէտ մի հաւանիլ ազդեցման, և ներհական խրատուն, զոր տէրն եպիփան տուեալ էր նմա շուրջ զայնպիսեաւ խստութեամբ: Նաև բաց 'ի յայսմանէ. այնպէս թողանիւր պաշարիլ և տանիլ վասն ցաւոյ մահուանն իւրայնոց, մինչ զի մերձենայր որոգայթի մեռանելոյ: Եւ 'ի վախճանի պատմութեան այսպէս եզրակացուցանէ նոյն տէրն: Գուցէ ասիցէ ոք. թէ փոխանակ գրելոյ զգովութիւն սրբուհւոյս այսորիկ, գրեմ ես զպարսաւանս և զնախատինս: Ես վկայեմ առաջի Յիսուսի, որոյ նա ծառայեաց. զոր և ես ցանկամ ծառայել, զի ոչ ստեմ, ոչ 'ի կողմանէ միոյն, և ոչ 'ի կողմանէ միւսոյն: Մանաւանդ պատմեմ պարզապէս զայնս՝ զորս գիտեմ զնմանէ, որպէս քրիստոնէայ՝ զքրիստոնէէ միոյ: Վասն զի գրեմ ես զպատմութիւն իմն, և ոչ որպէս զգովութիւն. զի մոլորութիւնքն նորին՝ են առաքինութիւնք այլոց: Կամի ասել. թէ սխալմունքն և պակասութիւնքն սրբուհւոյն փաօլայի՝ համարեցեալք լինէին առաքինութիւնք 'ի յայլ անկատար հոգւոյ: Որպէս և են ոմանք գործք, որք ճշմարտապէս համարեալ լինին անկատարելութիւնք՝ յայնոսիկ, որք են կատարեալք: Որք սակայն մեծ կատարելութիւնք համարին նոյնքն 'ի յայնոսիկ, որք են անկատարք:

Այս է բարի նշան իմն 'ի միում հիւանդի, մինչ ուռուցեալք լինին սրունքն 'ի յելանելն 'ի հիւանդութեան: վասն զի այս ցուցանէ՝ թէ բնութիւն արդէն զօրացեալ՝ արտաքսէ զաւելորդ խոնաւութիւն: Բայց սակայն սոյնս՝ վատ նշան լինի այնպիսւոյ ումեք, որ ոչ իցէ հիւանդ, զի ճանաչի թէ՝ բնութիւն ոչ ունի զբաւական զօրութիւն առ 'ի ցրուել և լուծել զխոնաւութիւնս: Ուստի խանդա-

կաթդ

կաթոգ առաքինութե . պիտոյ է ունիլ զբարի կարծիս զնոցունց, 'ի յորս տեսանեմք մեք զկըր-թութիս՝ թէև անկատարելապէս, որովհետև նաև մերքն կրթեէին 'ի յաշխարհի այսմիկ : Բայց որքան առ մեզ՝ պիտոյ է ունիլ զհոգ կրթիլոյ, ոչ միայն հաւատարմաբար, այլ նաև ս խոհեմապէս : Եւ՞ այսու պահել խստապէս զխրատն իմաստնոյն, ոչ յենուլ 'ի յատուկ խոհեմութիւն մեր, այլ առ այնոսիկ, զորս Ած տուեալ է մեզ՝ վմ առաջնորդութե և ուղղութե մերոյ :

* Կան ոմանք իրք, զորս բազումք համարին զօր առաքինութիւնք, սակայն ոչ ինչ կերպիւ են առաքինութիւնք, զորոց պիտոյ է՝ զի եւ ասացից զերկու խօսս : Զի այսպիսիքս . մ՞ զմայլումն, կամ յափշտակումն, անզգայացումն, անկրականութի, յափշումն, վերացումն, անդրակերպումն, և այլք այսպիսիք կատարելութիք, զորոց ընձեռեն գրեանք ոմանք : Որք խոստանան վերացուցանել զհոգին, մինչև առ պարզ իմացական խոկումն, և առ էութենական հպումն հոգւոյ, նաև գերազանցական կենաց : Ահա ո՞վ խանդակաթդ առաքինութե . այսպիսի կատարելութիքս ոչ են առաքինութիք, այլ մանաւանդ են հատուցմունք, զորս Ած տայ վմ առաքինութեց : Կամ թէ են և ս առհաւատչեայք երջանկութե ապառնւոյ կենաց, որք երբեմն ցուցանին մարդկանց, առ 'ի առնել զնմ ցանկալ կատարեալ լինութե, որք են 'ի յարքայութեն վերին : Բայց այսու ոմն ոչ է պարտ ձկտիլ այսպիսի շնորհաց, որովհետև նոքա ոչ են պայմանաւ իւիք հարկաւորք վմ բարեպէս ծառայելոյ մյ, և վմ սիրելոյ զնա, առ որ միակ ձկտիլ պարտի դիտումն և նկատումն մեր : Այսմ եւ բազմիցս՝ այնոքիկ ոչ են շնորհք, որք ստանիլ կարեն աշխատութբ և համբերողութբ, որովհետև յաւէտապէս են կիրք, քան թէ

ներ-

ներգործութիւն, զորս կարեմք ընդունիլ, բայց ոչ
արդէն առնել 'ի մեզ :

* Րուակցեմ ես . թէ մեք ոչ ունիմք զայլ ինչ արարք 'ի ձեռս մեր, քան զլինելն բարիք, և ջերմեռանդք . այլ լինիլ մեծ առաքինիք, և կանայք բարեպաշտք : Եւ վասն պիտոյ է մեզ, զինկատեցեմք բարեպէս առ այս . որ եթէ հաճոյ իցէ այլ վերացուցանել զմեզ մինչև առ հրեշտակական կատարելութիւնս, մեք ևս լինիմք բարի հրեշտակք : Միայն թէ կրթիցուք պարզապէս, խոնարհաբար, և ջերմեռանդապէս 'ի փոքրագոյն առաքինութիւնս, որոց յաղթանակն մեծ եդեալ է 'ի ջանս, և 'ի յաշխատանս մեր . Որպիսի է համբերութիւն, խոնարհութիւն, բարեգթութիւնն, մահացուցումն սրտի, հնազանդութիւն, աղքատութիւն, ողջախոհութիւն, սէր ընկերին, տանուլն անկատարելութեան նորին, շրջահայեցողութիւն, և ամ ջերմեռանդութիւն : Թողցուք յօժարութիւն զգերազանցութիւնն վերանալոյ հոգւոյ, զի մեք ոչ արժանաւորիմք զայն քան բարձրագոյն աստիճանս 'ի ծառայութեան այլ : Քանզի յոյժ երանելի լինէաք 'ի ծառայութեան նորին խոհանոցի, և կամ 'ի դրոլն բեռնակիր, և յառաջընթաց մշակ նորին, նաև աւելածու տան նորին : Առ նա պատկանի յետոյ (եթէ թուիցի բարի ինքեան) ներածել զմեզ 'ի սենեակ իւր, և 'ի ներքսագոյն
խորհրդարանն իւր :

Այսպէս է՝ ո՞վ խանդաղատակդ առաքինութեան . զի այս թագաւորս փառաց՝ ոչ վարձատրէ զծառայս իւր ըստ արժանաւորութեան պաշտօնին, զոր 'ի գործ ածեն նոքա, այլ ըստ սիրոյն, և ըստ խոնարհութեան, որով 'ի գործ ածեն զնա : Վասն զի Սաւուղ 'ի յորոնելն զէշան հօր իւրոյ, եգիտ զթագաւորութիւն : Ռեբեկա՝ արբուցանելով զուղտուն աբրահամու, եղև հարսն որդւոյ նորին :

Հռութ՝ ժողովելով զկնի հնձողաց զհասկս Բոյոսի, և ննջելով առ ոտս նորին, եղև հարսն նորին :

Սոյնգ է նաև՝ ով խանդակաթդ. թէ ձկտմունքն այսպիսեաց բարձրագունից, և արտաքոյ կարգի եղելոց իրաց, յաւէտ ենթարկեցեալք են պատրողութեանց, խաբէութեանց, և ստութեանց : Եւ պատահի ևս երբեմն, զի այնոքիկ՝ որք մտածեն, և կարծեն գոլ հրեշտակք, ոչ են նաև ևս բարի մարդիկք : և զի առաւել է 'ի նմ՟ մեծութեան խօսից և բառից, որովք վարին, քան թէ 'ի զգացման, և 'ի գործս : Ոչ է պարտ այսու խոտել և յանդիմանել զիր ինչ յանդգնապէս , այլ օրհնելով զած՟ յաղագս գերազանցութեան այլոց, կացցուք խոնարհաբար 'ի ցած և 'ի խոնարհ ճանապարհի մերում, որ է առաւել հաւաստի : Թէպէտ սակաւ գերազանց , սակայն առաւել անդորր անբաւականութեան և փոքրկութեան մերոյ : Յորում եթէ կենցաղավարեսցիմք խոնարհաբար, և հաւատարմապէս, բարձրացուսցանէ զմեզ ած՟ 'ի յաստիճան մեծութեան :

## Յաղագս Համբերութեան :

### Գլուխ . Գ :

ՊԻՏՈՅ Է ՁԵԶ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ . ( ՈՐՊԷՍ ԱՍԷ ԱՌԱՔԵԱԼՆ ) ԶԻ ԶԿԱՄՍ ԱՅ՟ ԱՐԱՐԵԱԼ՝ ՀԱՍՋԻՔ ԱՒԵՏԵԱՑՆ : Այսպէս և ասաց փրկիչն մեր . ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՄԲ ՁԵՐՈՎ ՍՏԱՑԻՔ ԶՈԳԻՍ ՁԵՐ : Այս է մեծագոյն բարեբաստութիւն մարդոյ՝ ո՛վ խանդակաթդ առաքինութեան . ստանալ զհոգի իւր : Եւ որքան առաւել կատա

րեալ

բեալ լիցի համբերութիւն, այնքան առաւել կա
տարելապէս սատանամք մեք զհոգիս մեր։ Պարտ
է ուրեմն՝ զի կատարունակեսցեմք զմեզ այսու ա-
ռաքինութեամբ։ Յիշեա յաճախապէս, զի Տէրն մեր
փրկեաց զմեզ կրելով, և համբերելով։ Եւ մեք
ևս պարտիմք նոյնով կերպիւ գործել զփրկու-
թիւն մեր, տանելով և համբերելով անիրաւու-
թեանց, և անհաճելի իրաց; մեծագոյն համաձայ
նութեամբ; որքան իցէ կարելի մեզ։

* Մի՛ եղերեր զհամբերութիւնն քո առ՚ի կրել
զայսպիսի, և զայնպիսի տեսակս անիրաւութեան
և նեղութեան; այլ տարածեա զնա, առ այնս
բնաւս, զորս առաքէ քեզ Ած; և թոյլատրէ զի
գայցեն ՚ի քեզ։ Են ոմանք, որք ոչ կամին կրել,
եթէ ոչ զպատուաւորելի նեղութիւնս. Հի բար։ վի-
րաւորիլ; և բանտարգիլ ՚ի պատերազմի, չարչա
րիլ վասն հաւատոյ, աղքատանալ յայնպիսի դատի
ինչ, յորում մնայցեն յաղթողք։ Եւ սոյնպիսիքս
ոչ սիրեն կէտ մի բնաւ զնեղութիւնն, այլ զպա-
տիւն և զփառսն, զոր բերէ ինքեանց այն նեղու-
թիւն։ Ճշմարիտ համբերողն, և ճշմարիտ ծառայն
Այ՝ հաւասարապէս կրէ զնեղութիւնս և զտառա-
պանս, որք են միաւորեալք ընդ անարգանաց,
և ընդ պատուոց։ Գոլ յանդիմանեցեալ, արհա
մարհեցեալ, և ամբաստանեցել ՚ի չարալեզուաց,
է քաղցրութիւն իմն քաջասիրտ մարդոյ միոյ։ Բայց
յանդիմանեցեալ, ամբաստանեցեալ; և չարչա-
րեցեալ գոլն ՚ի բարի անձանց; ՚ի բարեկամաց,
՚ի ծնողաց, է մեծ համբերութիւն։ Ես առաւել
հեզութիւն և համբերութիւն համարիմ սրբոյն Պօռօ-
մէոսի կարտինալին; զայնս հրապարակական յան
դիմանութիւնս և նախատինս, զորս կրէր Է եր-
կար ժամանակս, ՚ի ձեռն մեծագոյն քարոզչի
միոյ; զոր առնէր ընդդէմ նորա ՚ի յամպիոնի, քան
զայլս բնաւս ընդդիմութիւնս և ներհակութիւնս,

զորս ունեցաւ 'ի յայլոց: Զի ոչ խայթմունքն մեղուաց՝ են առաւել ցաւեցուցիչք, քան զխայթմունս ճանճից, այսպէս զչարն՝ զոր ընկալնու ոք 'ի բարի արանց, և ընդդիմութիւնքն և հակառակութիւնքն, զորս նոքա առնեն, են առաւել անտանելիք քան զայլս: Սակայն և այս պատահի բազմիցս, զի երկու բարի անձինք՝ ունելով երկաքանչիւրն զբարի դիտաւորութի 'ի վր կարծեաց իմիք, մեծապէս հալածեն զիրեարս, և հակառակին ընդդէմ միմեանց:

* Լեր համբերող՝ ոչ միայն 'ի յընդհանրական, և 'ի դիւրաւոր նեղութիւնս, որք վերահասանին քեզ, այլ և առ. պատահականս, որք կախին 'ի նոցունց: Բազումք կամին ունիլ զնեղութիս, միայն թէ՝ մի՛ լիցի այն ինքեանց անանդորրութի: Ասէ մինն, ես ոչ համարիմ ինձ պատիժ զաղքատանալն, եթէ ոչ իցէր այս արգելումն ինձ՝ առ 'ի ծառայել բարեկամաց, սնուցանել զորդիս իմ, և ապրիլ պատուաւորէն, ոչ ցանկամ ես: Եւ՛ միւսն ասէ, ես ոչ հոգայի բնաւ կէտ մի զայսմանէ աղքատութէ, եթէ ոչ մտածէր ծ, թէ այս պատահեալ իցէ ինձ վն մեղաց իմոց: Այլ միւսն՝ ամենեքին գոհունակ լինի, եթէ ասիցէ ոք չար ինչ զինքենէ, նաև տանի զնա յոյժ համբերաբար, միայն թէ՝ ոչ ոք հաւատայցէր այն չար առողին: Այլք ոմանք կամին ունիլ զմասն իմն նեղութեն չարի, բայց ոչ կամին ունիլ զնա բոլորովին: Ուստի ոչ վրդովին (ասեն) զինքեանս գոլ հիւանդք և տկարք, այլ զի ոչ ունին զդրամ առ 'ի բժշկել, և կամ յայնց՝ որք շուրջ զինքեամբք են, յոյժ զզուէին նեղացուցեալք:

* Թող՝ ասեմ ես. ո՛վ խանդակաթդ. առաքինութե. թէ պիտոյ է ունիլ զհամբերութի, ոչ միայն 'ի գոլն հիւանդ և տկար. այլ նաև յայնմիկ հիւանդութե և տկարութե, որ է հաճոյ այ, և

'ի

'ի յայնմիկ տեղւոջ՝ ուր նա կամի, և 'ի մէջ այնպիսի անձանց, զորս նա կամի, և այնպիսի նեղութբ̄ և անանդորրութբ̄, զոր նա կամի : և այսպէս առնելի է՝ և զայլոց առաքինութեանց : Յորժամ պատահիցի քեզ նեղութիւն և վիշտ ինչ, արա՛ զընաւ դեղս և զհնարս, որք քեզ են կարելիք, ապա թէ այլապէս, լինի փորձութիւն ինչ ամենայնին հանդխաւմեհութեանն : Բայց զկնի առնելոյդ զայս, սպասեա՛ ամբողջ ակնկալութբ̄ միով՝ այն ներգործութեան, որ է հաճելի ա̃յ : Եթէ հաճոյ իցէ նմա, զի դեղքն յաղթիցեն զչարիսն, և զանձկութիւս, շնորհակալ լեր զնմանէ : Եւ՞ եթէ հաճոյ իցէ նմա, զի չարիքն յաղթիցեն զդեղն, օրհնեա՛ զնա, և գոհացիր զնմանէ համբերութբ̄ ․

Այդ՝ ես հեռաւեմ կարծեաց սր̃ն գրիգորի : Յորժամ ամբաստանիցիս դու զպակասութէ̃ ինչ արդարապէս, զոր գործեալ ես ․ խոնարհեցո՛ ըզքեզ յոյժ, և խոստովան լեր՝ թէ դու յոյժ առաւել արդիւնաւորիս զամբաստանութիւն, քան զայն՝ որ առարու զքէն : Բայց եթէ ամբաստանութիւն իցէ սուտ ․ համեստօրէն ջատագովեա՛ զքէն՝ բաց ասելով զոյն յանցաւոր, քանզի պարտիս առնել դու զայս 'ի պատիւ՞ ճշմարտութե̃, և առ շինութիւն ընկերաց : Բայց զկնի առնելոյ քոյ զօրինաւոր, և ճշմարիտ ջատագովութիւն զքէն, եթէ մի ոմն յարատեւիցէ 'ի յամբաստանել զքէն, այնու մի' վրդովիր բնաւ ոչինչ կերպիւ՞, և մի' խնդրեր տակաւին, զի ջատագովութիւն քո ընկալեալ լիցի : Զի զկնի տալոյ զմնարութիւն պարտաւորութե̃ քոյ առ ճշմարտութիւն, պարտիս ևս տալ զայն առ խոնարհութիւն : Եւ՞ այսու կերպիւ՞ դու ոչ վշտացուցանես, ոչ զհոգն քո՝ զոր պարտիս ունիլ վա̃ բարի անուա՛ն քոյ ․ և ոչ զսէրն քո՝ զոր պարտիս ունիլ առ անդորրութիւն և քաղցրութիւն սրտի, նաև առ խոնարհութիւն :

Պարտիս սակաւապէս ցաւիլ վս̅ ընդդիմութեանց, և թիւրութեանց, զորս արարին քեզ: Այս է հաւատալի ինձ, զի հասարակապէս այն՝ որ տրտըն_ջայ, մեղանչէ. զի յատուկ սէրն մեր՝ միշտ երևեցուցանէ մեզ՝ զընկալեալ անիրաւութիս մեծա_գոյնս գոլ, քան թէ իցեն: Բայց 'ի վեր քան զընաւս՝ զգո՛յշ լեր առ 'ի առնել զտրտունջս քո ընդ այնպիսի անձանց, որք են դիւրասահք առ 'ի զայրանալ, և խորհիլ զչար: Եւ եթէ պատկանի ցաւիլ քեզ ը̅ ումեք, առ 'ի բուժել զվնասն, և կամ առ 'ի մեղմել զսիրտն քո, պիտոյ է՝ զի զայս առնիցես ընդ այնպիսեաց անձանց, որք իցեն յոյժ հանդարտք, և ճշմարտապէս սիրեն զա̅ծ: Ապա թէ ոչ՝ փոխանակ թեթևացուցանելոյ զսիրտն քո, առաւել գրգռեն 'ի մեծագոյն անհանդարտութիւն. և փոխանակ բառնալոյ ըզփուշսն՝ որք խայթեն զքեզ, առաւել մխեն և խրեն զայնս 'ի յոգիս քո:

Բազում ոմանք գոլով տկարք. 'ի նեղելն և 'ի վշտացուցանելն յումեքէ, յաւէտ զգուշանան 'ի տրտըն_ջալոյ՝ առ 'ի ցուցանել մեղմք, և փափուկք. զի այս է̅ կարծեաց իւրեանց (որ է ճշմարիտ) տալ զյայտնի վկայութ̅ի պակասութ̅ե զօրութ̅ե, և քաջարութ̅ե: Բայց ցանկան մեծապէս, և ջա_նան բազում հնարիւք, զի ա̅մ ոք ցաւիցի ընդ ինքեանց, և ունիցի զմեծ ցաւակցութ̅ի. նաև ա̅մ ոք համարիցի զինքեանս, ոչ միայն վշտագնեալս և նեղեալս, այլ ևս համբերօղս, և քաջասիրտս: Արդ այս է համբերութիւն իմն, բայց սուտ համբերութ̅ի, որ իրաւի ոչ այլ ինչ է, քան փափկագոյն և նրբագոյն մնապարծութ̅ի, և ունայնութ̅ի: Սիրէին զպարծանս ասէ առաքեալն, այլ ոչ առ ա̅ծ: Ճշմարիտ համբերօղն՝ ոչ ցաւի ըզչարէ իւրմէ, և ոչ ևս ցանկայ՝ զի ցաւեսցի ոք ը̅ ինքեան: և խօսի յայտնապէս, ճշմարտապէս, և

պար

պարզապէս, թարց տրտնջալոյ, թարց ցաւելոյ, և թարց մեծացուցանելոյ զնա։ Եւ՛ եթէ ոք ցաւակցի նմա, համբերաբար տանի, բաց 'ի յայնմանէ՝ մինչ ոք ցաւակցի նմա վն չարի իմիք, զոր նա ոչ ունի։ քանզի յայնժամ համեստաբար բացայայտէ նա, թէ ինքն զայնպիսի չարն ոչ ունի։ Եւ՛ այսպէս միայն 'ի մէջ խաղաղութե, ճշմարտութեան, և համբերութեան։ խոստովանելով զչարիքն իւր, և ոչ ցաւելով զնմանէ կէտ մի բնաւ։

* Ի ընդդիմութիս, և 'ի հակառակութիս, որք պատահին քեզ 'ի կրթման ջերմեռանդութեան, ( զի այսոքիկ ոչ պակասին երբէք ) յիշեա՛ զբանն Տն մերոյ. Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նր. այլ յորժամ ծնանիցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւնն վն խնդութեն. զի ծնաւ մարդ յաշխարհ։ Վն զի՝ դու յղանալով 'ի հոգւոջ քո զառաւել արժանաւոր մանուկն աշխարհի, որ է Յս Քս. ոչ է կարելի՝ թէ նախ քան զյառաջագայիլն և բոլորապէս ծնանիլն, ոչ զգայցես դու 'ի քեզ զնեղութիւս և զցաւս։ Բայց զօրացի՛ր, զի 'ի յանցանիլն այսոցիկ ցաւոց, միայն քեզ յաւիտենական ցնծութի, վն ծնանելոյդ զմի այնպիսի մարդ 'ի յաշխարհ։ Արդ՝ յայնժամ կատարելապէս ծնանի նա 'ի քէն, և կամ քև, մինչ դու ամբողջապէս կերպարանիցես զնա 'ի սրտի, և 'ի գործս քո, 'ի ձեռն հետևման կենաց, և վարուց նորին։ Յորժամ հի՛անդանայցես դու, և կամ զայլ ինչ նեղութիս կրիցես, մատո՛ և ընծայեա՛ 'ի ծառայութի Տն՝ զամ ցաւս, պատիժս, և զթշուառութիս քո, և աղաչեա՛ զնա՝ զի միաւորեսցէ զայնս ընդ տանջանաց, և չարչարանաց իւրոց, զորս կրեաց վն մեր։ Եւ՛ հնազանդ լեր բժշկին, ընկալ զդեղս, և զօշարակս, և զայլս ապեղանիս վասն սիրոյն այ։ յիշեա՛ զլեղին, զոր եարբ վն սիրոյ

 քոյ,

քոյ, և ցանկամ բժշկիլ առ 'ի ծառայել նմա: Մի՛ անգոսներ զհի՜ւանդանալն՝ վասն հնազանդելոյ նմա. և պատրաստեա՛ զքեզ առ 'ի մեռանիլ, եթէ հաճոյ իցէ նմա, առ 'ի գովել, և վայելել զնա: Յիշեա՛, զի մեղուքն 'ի ժամանակի յորում կազմեն զմեղրն, ունեն զկերակուր իւրեանց դառնագոյն: Եւ՜ այսպէս՝ մեք ոչ կարեմք առնել զգործ ինչ մեծագոյն քաղցրութեան, և համբերութեան, և մանաւանդ մեղերբ համեմեալ գերազանց առաքինութեան, եթէ ոչ յայնժամ, մինչ ունեմք զհացն դառնութեան, և կեամք 'ի մէջ անձկութեանց: Եւ՜ ո՞վ մեղրն՝ որ է կազմեցեալ 'ի ծաղկացն թիմօն խոտոյ, ըստ 'ի *ե*ի* խօսից, որ է փոքրագոյն, և դառն խոտ իւրեանց, է լաւագոյն մեղր քան զընաւս, Այսպէս՝ և ցածագոյնն նեղութեան, և անձկութեան, է առաւել գերազանց քան զընաւս:

Նկատեա՛ յաճախապէս ներքին աչօք քո՝ 'ի Քս̃ Յս̃ 'ի խաչեցեալն, և տես զնա հայհոյեցեալ. և լի ամենայն կերպ թաղծութ̃բ, տրտմութ̃բ, տառապանօք, և տանջանօք: Նկատեա՛, զի ընաւք կիրք և նեղութիւնք մերք, ոչ ինչ կերպիւ՞ բաղդատելիք են ընդ կրից, և չարչարանաց նորին, ոչ որակութ̃բ, և ոչ քանակութ̃բ: Եւ՜ դու ոչ երբէք կրես ընաւ՝ զաւկաւիկ մի վս̃ նր̃, նկատմամբ առ այն, զոր նա կրեաց վս̃ մեր:

Հայեաց 'ի պատիժս և 'ի չարչարանս, զորս արդէն կրեցին սբ̃ մարտիրոսքն. նաև նկատեա՛ ես 'ի յայնս՝ զորս կրեն այնքան անձինք, առաւել ծանրագոյնս 'ի բաղդատութեան՝ քան զայնս, յորս գտանիս դու: Եւ՜ ասասցես յայնժամ. Վա՜յ է ինձ. զի նեղութիւնքն իմ՝ են մխիթարութիւնք, և փուշքն իմ՝ են վարդք, բաղդատմամբ այնոցիկ, որք թարց օգնականութեան, թարց տապնջականութեան, և թարց իմիք թեթևութեան, կան 'ի շարունակ, և 'ի հանապազորդական մահուան իմիք

ան_

անհնապէս նուաճեալք մեծագոյն նեղութբ̃ և անձկութեամբ։

## Յաղագս արտաքին խոնարհութե.

## Գլուխ. Դ։

Սէր եղխաէոս կնոջն այրւոյ. Ա-ջես ջեղ ամանս յմ̃ գրացեաց ջոյ՝ ամանս ունայնս, և արկցես զեւղն յմ̃ ամանոն ձնչեւ լցցեն։ Այսպէս առ 'ի ընդունել զշնորհն այ̃ 'ի սիրտս մեր, պիտոյ է՝ զի լիցեն պարապք 'ի յատուկ փառաց մերոց։ Ձագարն աղաղակելով, և ակնարկելով 'ի յաւարառու թռչունս, մեռով յատկութբ̃, և գաղտնի զօրութբ̃ խմիք զարհուրեցուցանէ զնս̃։ Եւ աղաւնիքն 'ի վեր քան զմ̃ սիրեն զայլ թռչունս, և ապահով վայելս միան առ նմ̃։ Այսպէս և խոնարհութիւն արտաքսէ զսատանայն, և պահէ 'ի մեզ զշնորհս և զպարգևս հոգւոյն սբ̃յ։ Եւ վս̃ այսր պատճառի՝ բնաւ սբ̃ք, և յատկապէս թագաւորն սբ̃ց, նաև մայրն իւր՝ միշտ պատուեցին և սիրեցին զայս արժանաւորագոյն առաքինութիւն, առաւել քան զայլ բարոյական առաքինութիւնս։

* Մեք կոչեմք ունայն զփառսն, զոր տայ ոք իւրոյ ինքեան. այսոն՝ կամ զի ոչ է 'ի մեզ. կամ զի է 'ի մեզ, և ոչ վս̃ մեր. կմ̃ զի է 'ի մեզ, և վս̃ մեր, բայց ոչ արդիւնաւորի ոք՝ զի յինքենէ գոլ պարծիցի։ Ազնուութիւն արեան, յարգմունքն մեծութե, պատիւն ժողովրդոց, ոչ են 'ի մեզ, այլ 'ի նախնիս մեր, և կմ̃ 'ի համարման այլոց։ Ոմանք ցուցանին կորովիք, և գովելիք, վս̃ կալոյ 'ի վր̃ միոյ ձիոյ. կմ̃ վս̃ ունելոյ զթեպուր իմն 'ի գլխոջ. և կ վս̃ հարստա

պէս

պէս ըղձեցմանն: բայց ո՛վ է այն, որ ոչ տեսանէ զխելագարութիւն զայս: Քանզի եթէ վն այսոցիկ տրի քեզ փառք. այն է վն ձիոյն, վն թռչնոյն, և վն զգեստուն: և ո՛րքան խոտելութի, և ստրկութիւն է սրտի՝ փոխ առնուլ զհամարումն և զվարկումն իւր 'ի ձիոյ, 'ի թեպրոյ, և 'ի մաշկէ միոյ: Այլք ոմանք փառաւորին և պանծան 'ի ձեռն երկու ցցեալ և ոլորեալ պեխերաց, և վն բարեպէս նկարեցեալ մօրուաց, և գանգուր հերաց, և փափուկ ձեռաց. և վն գիտելոյն խաղալ, նուագել, և երգել: Ոչ ապաքէն այսպիսիքս են կամիլ տգեղ սրտիւ ծանրացուցանել զգինն իւրեանց, և աճեցուցանել զհամարումն իւրեանց, այնքան ունայն և ոչինչ իրօք: Այլք ոմանք սակաւ իմն գիտութե̃ կամին պատուիլ, և համարիլ 'ի յաշխարհէ գոլ ոմն. ոմ̃ թէ իւրաքանչիւրոք պարտէր գնալ առ 'ի ուսանիլ 'ի նոցանէ, և համարիլ զնս̃ վարդապետ: և վնկ կոչին դաստիարակք: Այլք ոմանք պանծան նկատմամբ գեղեցկութե̃ իւրեանց, և հաւատան թէ՝ բոլոր աշխարհ հայի առ գեղեցկութիւն իւրեանց: Արդ այս ամ̃ է մեծապէս ունայն, սնոտի, և անօգուտ: և փառքն՝ որ առնանի յայսպիսի տկար և խոտելի առարկայից, կոչի ունայն, սնոտի, և անօգուտ:

* Ճշմարիտ բարին այնպէս ճանաչի, որպէս և ճշմարիտ պալասանն: Զի ճանաչի պալասանն գնելով զնա 'ի ջուր. վն զի եթէ իջանէ նա 'ի յատակ ջրոյ, և մնայ 'ի ներքոյ նր̃, ենթադատի առաւել նուրբ, և առաւել պատուական: Այսպէս առ 'ի ճանաչել՝ թէ մարդ ոմն է ճշմարտապէս իմաստուն, խոհեմ, կորովի, և ազնիւ. պիտոյ է տեսանել՝ եթէ բարիքն իւր հակեալ դիմեն առ խոնարհութի, առ համեստութի, և առ ենթարկութի, զի յայնժամ այսպիսի բարիքս լինին

ճշմա

ճշմարիտ բարիք: Բայց եթէ ճնան 'ի վերա, և կամիցին տեսանել, յայնժամ այսպիսի բարիքս այնքան են նուաղագոյն ճշմարտոց, որքան առաւել երևելիք լինին:

* Մարգարիտքն՝ որք յղանեցեալք լինին հնչմամբ որոտման, և սնանին հողմով, ոչ ունին զճշմարիտ գոյացութի մարգարտոյ, այլ միայն զկեղևն: Այսպէս՝ առաքինութիքն, և գեղեցիկ որակութիքն մարդկանց, որք ընկալեալք և սնուցեալք լինին հպարտութբ, և սնապարծութբ, ունին միայն զսոսկ երևումն բարութե, առանց հիւթոյ, առանց ծծոյ, և առանց հաստատութե: Պատիւքն, աստիճանքն բարձրութե, և արժանապատութիքն՝ են հանգոյն քրքման, որ յայնժամ լուսապէս աճի, և 'ի մեծ քանակութի ժամանէ, մինչ կոխասի ոտիւք: Ոչ է առաւել պատիւ գեղեցիկ գոլ, յորժամ ոք գովէ զինքն. զի գեղեցկութին առ 'ի ունիլ զբարի շնորհ, պարտի գոլ զանցառեցեալ: Գիտութին անպատիւ լինի 'ի միում գաստիարակի, մինչ փքացեալ ուսուցանի, և ծնանի զհպարտութի:

Եթէ կայցեմք մեք 'ի վերայ պատուոյ իմիք՝ աստիճանաւ, յաջորդմամբ, և մականուամբ, անդրքան զոր տրամադրեմք մեք զյատկութին մեր առքննութի, առ զննումն, և առ հակասութիւն, դարձուցանեմք զնա 'ի խոտելի, և 'ի յունայն իր: Զի պատիւն՝ որ է գեղեցիկ իր, գոլով ընկալեալ 'ի պարգև, դառնայ 'ի խոտելի իր, մինչ յուզի, խնդրի, և հայցի: Յորժամ սիրամարգն առնէ զիւր բոլորակ սայլն՝ առ 'ի հայիլ, քարշի և կծկի բոլորովին 'ի բարձրացուցանել զիւր գեղեցիկ թեպուրսն, և յայմ կողմանէ ցուցանէ զտգեղութին, զոր ունի: Ծաղկունքն, որք տնկեալք են 'ի յերկրի՝ են գեղեցիկք. բայց թառամին, և դոսանան մինչ շօշափին ձեռօք: Եւ ոսկ այնք՝ որք հոտոտեն

զման

զմանրադորսն 'ի հեռաստանէ, և կամ 'ի անցանելն, զդան զմեծագոյն քաղցրութիւն անուշահոտութեան: Բայց այնք՝ որք հոտոտեն զնա առընթեր կալով, և 'ի յերկար ժամանակս, շլանան, և հիւանդանան: Այսպս պատիւքն, և փառքն առբերեն զքաղցրագոյն մխիթարութիւն իմն՝ առ այն, որ հոտոտէ զայնս 'ի հեռաստանէ՝ և թեթևապէս, թարց կայանելոյ և յամելոյ առ նմ: Բայց առ այն, որ սիրահարի, և կամի վայելել զնմ, առբերեն զմեծ անարգանս, և նախատինս: Հեշտալին և սիրելն զառաքինութիւնս, սկսանի առնել զմեզ առաքինիս: Բայց հեշտալին և սիրելն զպատիւս և զփառս, սկսանի առնել զմեզ արժանիս անարգանաց, և նախատանաց:

Անձինքն, որք են բարեպս բնաւորեալք, ոչ հաստատին յայսմիկ նուազագոյն աստիճանի գեղեցկութեան, պատուոյ, փառաց, և ողջունի. զի ունին զայլ բազում իրս առ 'ի առնել: այս է յատկութիւն այնպիսի անձանց, որք ոչ են բարիք՝ առ 'ի առնել զայլս: Որ կամի ունիլ զմարգարիտս, ոչ բեռնաւորի կեղևօքն: և այնոքիկ՝ որք հային 'ի յառաքինութիւնս, ոչ տան զմեծագոյն գինս պատուոյն: Ճշմարտապս կարէ իւրաքանչիւրոք դնիլ յաստիճանի իւրում, և մնալ անդ՝ թարց կեղծելոյ զխոնարհութիւն, միայն թէ՝ առնանիցի այս զանցաւորութեամբ միով, և առանց դաւոյ:

Զի ոմ այնոքիկ, որք դան 'ի բերոյ քաղաքէ, բաց 'ի յոսկւոյ և յարծաթոյ, բերեն նաև զկապիկս, և զփափագալ թռչունս, զի են փոքր գնով, նաև ոչ յաւէտ ծանրացուցանեն զնաւս: Այսպէս այնոքիկ, որք ջանան և ձկտին ստացման առաքինութեան, և ոչ թողուն զաստիճանս և զպատիւս, որք են ճահ և ըմբռն իւրեանց: Ն՛ զի այս ոչ պահի առ նմ բազում հոգօք և ջանիւք, այնու է 'ի նմ առանց ձանձրութեան նեղութեան,

առանց

առանց անհանդստութե, առանց վիճման և հա
կառակութե: Բայց ոչ խօսիմ ես աստ զնոցունց,
որոց արժանապատուութիւն նկատի 'ի հրապարա-
կի, և ոչ ևս զոմանց մասնաւոր առթից, որք
քարշեն զկնի ինքեանց զմեծ հետևութիւն իմն:
Քանզի յայնժամ պիտոյ է, զի ամ̃ ոք պահիցէ
զայն, որ պատկանի ինքեան, սակայն խոհեմու
թբ̃, և զգուշութբ̃, ընկերացեալ ընդ սիրոյ, և
գթութեան:

## Յաղագս Ներքնոյ Խոնարհութեան:

### Գլուխ. Ե:

Որդ. եթէ ցանկաս դու՛ ո՛վ խանդա-
կաթդ առաքինութե, զի ես ածից
զքեզ առաւել անդր, և 'ի ներքս
խոնարհութե, որ առնել զայս (ոպ̃
ասացի) է մանաւանդ իմաստութի, ք̃ թէ խո
նարհութի: Յայժմ ուրեմն ես անցից յառաջ:
Բազումք ոչ կամին, և ոչ համարձակին խորհիլ
և մտածել զշնորհս, զորս ած̃ մասնաւորապէս
արարեալ է ինքեանց, և այս վն̃ երկիւղի անկա
նելոյ 'ի սնափառութի և յինքնահաճութի, զոր
այսու իրաւի խաբին: Վն̃ զի ոպ̃ ասէ հրեշտա
կական վարդապետն. ճշմարիտ կերպն դիտելոյ
առ սէրն այ̃, է մտածումն և խոկումն ած̃այնոյ
բարերարութեան: Որքան առաւել մեք զնա
ճանաչեմք, այնքան առաւել զնա սիրեմք: և ոպ̃
մասնաւոր բարերարութիւքն մեծապէս շարժեն
քան զհասարակսն. այնպէս ևս՝ առաւել մտա-
դրութբ̃, և նրբապէս մտածելիք են: Արդարև
ոչինչ իր կարէ այնքան առաւել խոնարհեցուցա
նել

նել զմեզ առաջի ածային ողորմութեան, որքան բազ-մութիւն բարերարութեան իւրոյ: Եւ ոչինչ իր կարէ զմեզ այնքան խոնարհեցուցանել առաջի արդա-րութեան Նորին, որքան բազմութիւն անօրէնութեան մերոյ:

* Մտածեսցուք զայն, զոր Նա արար մեզ. և զայն՝ զոր մեք արարաք ընդդէմ Նորա: և որպէս մտա-ծեմք նրբամասն զմեղս մեր, այսպէս մտածեսցուք ևս նրբաբար զշնորհս իւր: Ոչ է պիտոյ երկնչիլ յայս-մանէ, թէ ճանաչումն այնորիկ, զոր Նա ետ 'ի մեզ՝ փքացուցանէ զմեզ. որովհետև նկատեմք առ այս ճշմարտութիւնս. թէ ո՛րպիսի ինչ բարի գոյ 'ի մեզ, ոչ է բնաւ երբէք 'ի մէնջ: Ո՜հ ցա-ւոյս. մինթէ ջորիքն թողուն զանմաքուր, և զաղ-տեղի անասուն գոլն, վասն գոլոյ բեռնաւորեցեալ պատուական և անգին իրօք իշխանին: Զինչ ու-նիմք մեք, զոր ոչ եմ ընկալեալք; և եթէ ընկա-լաք՝ ընդէ՞ր կամիմք փքանալ: Հակադարձապէս. կենդանի մտածումն ընկալեալ շնորհաց՝ զմեզ խո-նարհեցուցանէ. քանզի ճանաչումն ծնանի զերա-ճանաչումն: Բայց 'ի ճանաչելն զշնորհսն, զոր արար ած մեզ, եթէ վերահասանիցի տեսակ իմն ունայնութեան և սնափառութեան, անսխալ դեղն է զիմել առ մտածումն ապերախտութեան, անկատա-րելութեան, և թշուառութեան մերոյ: Եթէ մտա-ծիցեմք զայն՝ զոր արարաք, մինչ ած ոչ էր ընդ մեզ, այնու յոյժ բարեպէս ճանաչեմք, թէ զայն՝ զոր առնեմք մինչ է ընդ մեզ, ոչ յառաջագայի 'ի մէնջ, և ոչ է ալիւրն մեր: Մեք ճշմարտապէս վայելեմք զնա, և խնդամք ունել զնա; բայց մի-այն ածոյ տացուք զփառս, որովհետև Նա միայն է հեղինակ: Այսպէս սրբուհի Կոյսն Մարիամ խոս-տովան լինի. թէ ած արար ընդ ինքեան զմեծա-մեծս: Բայց այս ոչ վասն այլոյ իրի, եթէ ոչ վասն խոնարհելոյ, նաև մեծացուցանելոյ զած. ու-

տի

տի ասէր․ Մեծացուսցէ անձն իմ զՏէր, զի արար ընդ իս մեծամեծս ։

* Բազմիցս Թէպէտ ասեմք, Թէ մեք եմք ոչինչք․ Թէ եմք իսկ Թշուառութիւնք․ և կորեանք աշխարհի․ բայց յոյժ զայրանամք եԹէ ոք համարիցի, և կամ հրապարակեսցէ զմեզ այնպիսիս գոլ, զորս ասեմք ։ Հակադարձապէս․ ձևակերպեմք զմեզ 'ի փախչել, և 'ի Թագուցանել, այնու դիտաւորութեամբ, զի ընԹասցեն զկնի մեր, և խնդրեսցեն զմեզ ։ Ցանուցանեմք առ 'ի կամիլ գոլ վերջինք, և նստել 'ի վերջին սեղանոյ, բայց այս առնանի առ 'ի յուղարկել յառաջ, և զետեղել 'ի գլուխ ։ Ճշմարիտ խոնարհութիւն՝ ոչ ցուցանէ զինքն առ 'ի գոլ խոնարհ, և ոչ առէ զբաղումն բանս խոնարհութեան ։ Քանզի նա ոչ միայն ցանկայ Թաքուցանել զայլս առաքինութիւնս, այլ նաև նախապատուաբար ջանայ Թաքուցանել զիւր ինքն ։ Եւ եԹէ ճահ իցէր նմա ստել, կեղծել, և կամ գայԹակղեցուցանել զընկերն, նա առնէր զգործս զայսոսիկ ամբարհաւաճութեան և խստութեան, դիտաւորութեամբ Թաքուցանելոյ զինքն 'ի ներքոյ այսոցիկ, առ 'ի կեալ անդ բոլորովին անծանաչ, և ծածկեցեալ ։ Այս է ուրեմն խրատն իմ․ ո՛վ խանդակաԹդ առաքինութեան․ կամ մի՛ ասիցուք զբանս իմն զխոնարհութէ, և կամ ասիցուք ճշմարիտ ներքին զգացմամբ, և համաձայն այնմ, զոր ասեմք արտաքսապէս ։ Մի՛ ցածացուսցուք երբէք զաչս մեր, Թարց խոնարհեցուցանելոյ զսիրտս․ և մի՛ կեղծաւորիցուք կամիլ գոլ վերջինք, եԹէ սրտիւ ոչ կամիմք գոլ այնպիսիք ։

* Որդ՝ ես այնքան ընդհանուր համարիմ զայս կանոնս, մինչ զի ոչ առբերեմ զբացառութիւն իմն զնմանէ ։ Միայն առակցեմ զայս ; Թէ քաղաքավարութիւն պահանջէ, զի մեք մատուսցուք երբեմն նմա զաւելի իմն, որք յայտնապէս ոչ ընկալնուն ։

Եւ

Երբ սակայն այս ոչ է երկերեսութիւն իմն, և ոչ ևս սուտ խոնարհութիւն. զի յայնժամ մատուցումն դերագանցութեան է սկիզբն իմն պատուոյ. որովհետև մի ոք կարելով տալ զնա ամբողջապէս, ոչ առնէ չար ինչ տալով զսկիզբն: Այնպէս ասեմ, և վասն ոմանց խօսից և բանից պատուոյ, և պատկառանաց, որք թէպէտ ըստ խստութեան արդարութեան ոչ թուին ճշմարիտք, սակայն բաւականք են, եթէ սիրտն այնորիկ, որ արտաբերէ զայնպիսիս՝ ունիցի զճշմարիտ դիտաւորութիւն պատուելոյ զնա, և պատկառելոյ 'ի նմանէ, որոյ սակս զայնպիսիս ասէ: Զի թէպէտ այնպիսի բանքն նշանակեն զաւելորդ իմն՝ քան զայն, զոր ասեմք, սակայն ոչ առնեմք զչար 'ի յասելն, յորժամ պահանջէ զայն հասարակ սովորութիւն:

Բայց ես կամիմ նաև, զի և բանքն իցեն տրամադրեալք և կշռեալք 'ի միտս մեր, որքան իցէ կարելի, առ 'ի հետևիլ ըստ ամի պարզութեան և մաքրութեան սրտի: Ճշմարիտ խոնարհ անձն՝ վասն ինքեան առաւել կամի և սիրէ, զի այլ ոք ասիցէ՝ թէ իցէ ինքն ողորմելի, ոչինչ իմն, և առ յոչինչ իր բարի, քան թէ ինքն ասիցէ զայնս վասն ինքեան: Կամ գոնեայ՝ եթէ գիտասցէ ինքն, թէ այս ոք՝ ասէ վասն ինքեան զայսպիսիս, ոչ ընդու կէտ մի ընդդէմ ասէ այնմ, այլ հաւատայ նմա բարի սրտիւ, և հաստատապէս հաւատալով հաճի. նաև սիրէ՝ եթէ այլ ոք իցէ ըստ կարծեաց իւրոց:

Բազում ոմանք գտանին, որք ասեն. թէ թողումք զմտածական աղօթս, և ոչ առնեմք զնա, զի ոչ եմք արժանիք առ 'ի առնել զայնս: Այլք ոմանք խոստովանին. թէ ոչ համարձակիմք 'ի
5 հաղորդիլ յաճախապէս, զի ոչ եմք բաւականապէս մաքուրք: Այլք ասեն. եթէ պարապիցիմք ջերմեռանդութեան, երկնչիմք առ 'ի առնել անպատու

տու

տութիւն ջերմեռանդութեան, պատճառաւ մեծի թշուառութեան, և տկարութեան մերոյ : Այլք ոմանք հրաժարին ծախել զտաղանդս իւրեանց 'ի փառս այ, և 'ի յօգուտ ընկերին : Զի ասեն՝ թէպէտ գիտեմք, զի եթէ առնիցեմք զայնս գործիք բարւոյ իմիք՝ առ 'ի լուսաւորել զայլս, ոչ սպառին : սակայն ճանաչեմք զկտարութիւն և զպակասութիւն մեր, և ունիմք ևս զերկիւղ հպարտանալոյ : Արդ այս ամ ոչ է այլ ինչ, քան արուեստ իմն դիւրին : և է այնպիսի տեսակ իմն խոնարհութեան, որ ոչ միայն է սուտ. այլ նաև է չար. որով կամի ոք լռապէս, և նրբապէս խոտել զած-այլին իւր : Եւ՞ կամ գոնեայ ծածկել և կեղծեալ խոնարհութեամբ միով՝ զյատուկ սէրն կարծեաց, յօժարութեան, և հեղգութեան իւրոյ :

* Ասէ մարգարէն եսայի առ աքազ. Խնդրեա՛ դու քեզ նշան 'ի Տնէ Այ քումմէ 'ի խորութենէ, կամ 'ի բարձրութենէ : Եւ՞ նա պատասխանէ. Ոչ խնդրեցից և ոչ փորձեցից զՏր : Ով մեծի ամբարտաւանութեան. զի ցուցանէ տալ զմեծ պատիւ իմն այ. և 'ի ներքոյ պատրուակի խոնարհութեան՝ պտճուէ ոչ հաւատալ և դիմել առ շնորհն, զոր ածային հանդիպաւլեհութիւնն մատուցանէ նմա : Բայց ոչ տեսանէ նա. թէ մինչ ած կամի տալ մեզ զշնորհս, է հպարտութիւն իմն արհամարհելն զնա. թէ պարգևքն այ պարտաւանդեն զմեզ առ 'ի ընդունիլ զնա. և թէ խոնարհութիւն իմն է հնազանդիլ և հետևիլ կամաց նր՝ որքան առաւել կարիցեմք : Արդ կամքն այ է, զի մեք որքան կարեմք մերձենալով և միաւորելով առ ինքն՝ կատարեալք լինիցիմք : Ուստի հպարտն՝ որ ապաւինի 'ի յինքն իւր. ունի զառիթ ոչ համարձակելոյ առնուլ զինչ իմն յայ : Բայց խոնարհն՝ այնքան առաւել քաջասիրտ և զօրաւոր է, որ քան առաւել ճանաչէ զինքն տկար : և ըստ չափու՝ որով

համարի զինքն առաւել տկարագոյն , այնքան լինի առաւել համարձակ : Զի նա ունի զբոլոր յոյսն 'ի յԱծ , որ համահաճի մեծացուցանել զամենակարողութիւն իւր 'ի տկարութեան մերում . և բարձրացուցանել զողորմութիւն իւր 'ի վերայ թշուառութեան մերոյ : Պարտ է ուրեմն խոնարհութբ և սրբութբ համարձակիլ առ 'ի առնել զայն ամ , որ ենթադատեալ լինի յատկապէս 'ի զարգացումն և 'ի յառաջադիմութի մեր , յայտ
ցանէ՝ որք առաջնորդեն հոգւոյ մերոյ :

* Խորհիլ գիտել զայն , զոր ոչ ոք գիտէ . է յայտնի խելագարութիւն իմն : Կամիլ ցուցանել զինքն իմաստուն 'ի յայնմիկ , որ յոյժ բարեպէս ճանաչէ ոք թէ ոչ գիտէ . է անտանելի ունայնութի իմն : Որքան առիս՝ ես ոչ կամէի ցուցանել զիս գիտել զայն , զոր ոչ գիտեմ . ոպ և հակադարձապէս՝ ոչ կամիմ ցուցանել գոլ տգէտ : Յորժամ սէրն պահանջէ՝ պիտոյ է պարզութբ և քաղցրութբ հաղորդել ընկերին՝ ոչ միայն զայն , որ հարկաւոր է նմա՝ վս խրատու և կրթութե նորին . այլ և զայն՝ որ է օգտակար վս մխիթարութե նորին : Զի թէպէտ խոնարհութիւն ծածկէ և թաքուցանէ զառաքինութիս առ 'ի պահել զնոսա : սակայն մինչ սէրն հրամայէ՝ առնէ զնոսա երևիլ՝ առ 'ի աճեցուցանել , մեծացուցանել , և կատարունակել զնս : Յորում պատահման նմանի ծառոց թիլոս կոչեցեալ կղզւոյն , որք 'ի գիշերի փակեն և թաքուցանեն զծաղկունս իւրեանց . և ոչ բանան՝ եթէ ոչ 'ի ծագելն արեգական : որոյ վս ասեն բնակիչքն կղզւոյն այնորիկ , թէ այնք ծաղկունք 'ի գիշերի ննջեն : Այսպէս և խոնարհութիւն ծածկէ և թաքուցանէ զբնաւ առաքինութիս , և զմարդկային կատարելութիս մեր . և ոչ երբէք առնէ զնս երևիլ , եթէ ոչ վս սիրոյ : Որ գոլով սէրս այս առաքինութի իմն՝ ոչ

մարդ

մարդկային, այլ երկնային. ոչ բարոյական, այլ ա̃ծաբանական, նաև ճշմարիտ արեգակն առաքինութեանց. այնու պարտի իշխել և հրամայել 'ի վր̃ ա̃մից առաքինութեանց: Ուստի խոնարհութիւն եթէ պակասի 'ի սիրոյ, թարց կարծեաց է սուտ խոնարհութիւն :

* Նա ոչ կամիմ ցուցանել և առնել զիս յիմար, և ոչ իմաստուն: Վ̃ զի եթէ խոնարհութիւն արգելու զիս առ 'ի առնել իմաստուն. նմանապէս պարզութիւն և միամտութիւն արգելու զիս՝ առ 'ի առնել յիմար: Ե՞ւ եթէ սնապարծութիւն է ներհակ խոնարհութե̃. արուեստն, հնարաքանութիւն, և կեղծութիւն՝ են ներհակք միամտութե̃ և պարզութե̃: Ե՞ւ թէպէտ ոմանք մեծագոյն ծառայք ա̃յ՝ կեղծեցին երևիլ խելագարք, առ 'ի ցուցանել առաւել ատրուկք յաչս աշխարհի: սակայն զարմանալ պիտոյ է նց̃, և ոչ հետևել: Քանզի ունեցան նոքա առ ինքեանս՝ զայնպիսի մասնաւոր և արտաքոյ կարգի շարժմունս, առ 'ի առնել զայնպիսի աւելորդս. յորոց ոչ ոք պարտի առնուլ զհետևութիւն վասն ինքեան: Ե՞ւ որքան առ դաւիթ. որ թէպէտ խաղաց, և կաքաւեաց առաջի տապանակի Տն̃ դոյզն ինչ աւելի, քան զոր պատկան էր ծանրութե̃ և յատկական մեծութե̃ իւրոյ: Բայց ոչ արար զայն՝ իբր թէ կամիցէր երևիլ խելագար. այլ արար պարզամտ̃, և առանց արուեստի իմիք զայն ա̃մ արարմունս, և արտաքոյ կարգի շարժմունս՝ աղագաւ անչափ խնդութեամբն, զոր զգայր նա 'ի սրտի իւրում: Ե՞ւ զի թէպէտ մելքող կինն իւր, որ էր դուստր սաւուղայ. տեսանելով զնա այնպէս հոլանեալ՝ անգոսնեաց: Բայց նա ոչ ցաւեցաւ տեսանելով զինքն այնպէս անգոսնեալ. այլ մանաւանդ յարատևեաց 'ի պարզութե̃ իւրում, և 'ի ճշմարիտ ցուցման ցնծութե̃ իւրում: Որով վկայեաց զգալ առ

ինքն զքաղցրութիւն իմ, 'ի լսել զաւկաւ նախա-տինս սակս սիրոյ Տն իւրոյ:

Արդ եզրակացուցանելով ասեմ քեզ. թէ առ 'ի առնել զգործ իմն ճշմարիտ և պարզ ջերմեռան-դութե. եթէ համարիցիս խոտելի և ստորուկ, և կամ խելագար, խոնարհութիւն ուրախացուսցէ զքեզ 'ի ձեռն այսպիսի երջանիկ նախատանաց. որոյ պատճառն ոչ է 'ի քեզ, այլ 'ի նոսա՝ որք ան-գոսնեն, և նախատեն զքեզ:

## Յաղագս թէ՝ Խոնարհութիւն առնէ զմեզ սիրել զյա-տուկ ստորնութիւն մեր:

### Գլուխ. Զ:

Եւ անցից յառաջ, և ասացից քեզ ո՛վ խանդակաթդ. թէ այսու ամի՛ւ 'ի բնաւ իրս լե՛ր դու բարեկամ, և սի-րող յատկի ստորկութե քոյ: Բայց եթէ ասիցես ինձ. թէ զի՛նչ կամի ասել այս բանս՝ սիրեա՛ զյատուկ ստորկութիւն քո: իմա. զի առ լաթինս՝ ստորկութիւն ասի խոնարհութիւն, և խոնարհութիւն ստորկութիւն: Որոյ վն մինչ Տէրու-հին մեր ասէ 'ի սրբազան երգս իւր. Զի հայե-ցաւ 'ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմ հետէ երանեսցեն ինձ ամենայն ազգ: կամի ասել. թէ Տրն մեր բարի սրտի՛ւ հայեցաւ 'ի ստորկու-թիւն, 'ի խոտելութիւն, և 'ի նուաստութիւն աղախնոյ իւրոյ, առ 'ի լցուցանել շնորհօք և փա-ռօք: Սակայն գոյ զանազանութիւն 'ի մէջ առաքի-նութեանցս այսոցիկ. մ̃ խոնարհութեան, և ստոր-կութեան: Քանզի ստորկութիւն է փոքրկութիւն, նուաստութիւն, և խոտելութիւն, որ է 'ի մեզ.

Թարց

թարց որոյ մեք զնա մտածեմք։ Բայց որքան առ առաքինութիւն խոնարհութեան ասեմ. զի նա է ճշմարիտ ճանաչումն, և վերաճանաչումն ստրկութեան մերոյ։

Արդ նախապետական կէտն խոնարհութեան այսորիկ, ոչ միայն կայանայ 'ի կամաւորապէս վերաճանաչելն զստրկութիւն մեր. այլ նաև 'ի սիրելն զնա, և 'ի հաճիլն առ նա։ Ոչ արդէն առ 'ի պակասեցուցանել զզօրութիւն և զարտեղութիւն մեր, այլ առ 'ի բարձրացուցանել զհանդիսավեհութիւն աստուածայինն. և առ 'ի առնել զմեծ համարումն ընկերի մերոյ, բաղդատմամբ առ մեզ ինքեանս։

Եւ՞ այս է այն, առ որ յորդորեմ ես զքեզ։

* Ի՞ւ առ 'ի լաւագոյս իմանալ զայս՝ ծանի՛ր. զի 'ի մէջ չարեաց՝ որոց տանիմք և համբերեմք մեք, ոմանք են ստրուկք և խոտելիք. և ոմանք պատուելիք։ Ուստի բազումք հպին և մերձենան առ պատուելի նեղութիւնս։ բայց գրեթէ ոչ ոք կամի հպիլ առ խոտելիս, և առ ստրկագոյնս։ Նկատեա առ ջերմեռանդ ճգնաւոր ումն, որ իցէ բոլորովին պատառատուն հանդերձիւ, և լի ցրտութեամբ։ Քանզի ամենայն ոք պատուէ զայն պատառոտեալ հանդերձն նորին, ցաւակից լինելով ողորմելութեան և թշուառութեան այնորիկ։ Բայց եթէ գտանիցի 'ի նոյն կացութեան՝ արուեստաւոր և աշխարհական ոք, և կամ պարկեշտ և ազնուազարմ կին ոք. ամենայն ոք արհամարհէ և այպանէ զնա։ ուրեմն այսպիսի աղքատութիւնս՝ ստրուկ, նախատ, և խոտելի է։ Մինչ կրօնաւոր ոք, ջերմեռանդապէս ընդունի զխստագոյն յանդիմանութիւն իմն 'ի մեծաւորէն իւրմէ. և կամ որդի մի 'ի հօրէն իւրմէ։ յայնժամ ամենայն ոք կոչէ զայս համբերութիւն և մահացուցումն, մեծ հնազանդութիւն և իմաստութիւն։ Բայց եթէ կրիցէ զնոյն 'ի յայլոյ ումեմնէ, ազնուական և փարթամ այր, և կամ կին ոք (թէ

և այս լիցի վն՟ սիրոյն նոյ. )ճմ՟ ոք ասէ. թէ սոյնս
է երկչոտ, և տկար:

Ահա այլ իմն նուաստագոյն, և խոտելի թշուառութիւն և չար: այր ոմն ունի զցաւալի և զվատ կեղ իմն 'ի բազկի իւրում. և այլ ոմն ունի զնոյնն 'ի յերեսն իւր: Արդ առաջինն ոչ ունի զայլ ինչ, եթէ ոչ միայն զնոյն չար կեղն: բայց միւսն ունի ընդ կեղոյն՝ նաև զարհամարհումն, զայպանումն, և զտրկութիւն: Արդ ուրեմն կամիմ ասել. թէ ոչ միայն պիտոյ է սիրել զթշուառութիւնն, որ տարեալ լինի առաքինութե՟ համբերութե՟. այլ ևս պիտոյ է սիրել զտրկութիւնն, որ տարեալ և կրեալ լինի առաքինութե՟ խոնարհութե՟:

* Նաև գտանին առաքինութիւնք՝ սորուկք և խոտելիք, և առաքինութիւնք պատուելիք: Քանզի համբերութիւն, հեզութիւն, պարզամտութիւնն, նաև նոյն ինքն խոնարհութիւն. են առաքինութիւնք, զորս աշխարհական անձինքն սորուկք, և խոտելիք համարին: Եւ ներհակաբար՝ մեծագոյն իր իմն համարին զխոհեմութիւն, զկարողութիւն, և զառատաձեռնութիւն: Այլ և 'ի մէջ գործոց մի և նոյն առաքինութե՟, ոմանք են խոտելիք, և ոմանք պատուելիք: Քանզի տալ զողորմութի, և ներել թշնամեաց. են երկու գործք սիրոյ: բայց առաջինն է պատուեալ յամէց. և երկրորդն է արհամարհեալ, և խոտեալ՝ 'ի յաչս աշխարհի: Ազնուատեսիլ երիտասարդուհի, և կամ տիկին ոմն, մինչ ոչ թողանի քարշել 'ի ժողովս վավաշոտ արանց, առ 'ի խօսակցել, ըմպել, զարդարիլ, երգել, և խնճոյանալ. այպանի և յանդգնօրէն ենթադատի 'ի մարմնասիրաց՝ այնպիսի համեստութիւն նորին աւելորդապաշտութե՟ իմն գոլ. Քզի սիրել զայսպիսի արհամարհումն է սիրել զտրկութիւն: Ահա քեզ այլ իմն տեսակ

սար-

ստրկութեն, և նուաստութեն: Մեք գնամք եր-
բեմն այց առնել հիւանդաց: բայց եթէ ոք ա-
ծիցէ զիս առ առաւել ողորմելի հիւանդն. այս
լինի ինձ ըստ վարկման աշխարհի ստրկութն իմն.
վ̄յ սիրեցից զնա: Եւ եթէ ոք զիս հրաւիրիցէ
առ այնոսիկ, որք են նուաստն որպիսութե̃ և
յատկութե̃, այս է մի ստրկութն ըստ մտաց Ծի.
վ̄ն զի ոչ է անդ այնքան առաքինութին, և սր-
դիւն. սիրեցից ուրեմն զայս ստրկութիս: Ան-
կանիլն ՚ի հրապարակս ճանապարհի. բաց ՚ի վտա-
սուն և ցաւոյն, առբերէ ես զամօթս. պիտոյ
է սիրել և զայս ստրկութիս:

Են նաև սխալմունք ոմանք, ՚ի յորս ոչ գոյ բեղ
այլ չար և վնաս ինչ. բայց միայն ստրկութիւն
և նուաստութեն: Ուստի խոնարհութին ոչ պա
հանջէ, զի առցէ ոք զայնս յայտնապէս. այլ պա
հանջէ, զի մի՛ շփոթեալ վրդովեցի մինչ գոր-
ծեալ իցէ զայնս: Այսպիսի գործքս են. խելա
գարութիք ոմանք. անքաղաքավարութիք. և ան
զգուշութիք: Յորոց ո̄չ պարտ է զգուշանալ յա
ռաջ քան թէ արարեալք իցեն՝ առ ՚ի հնազան-
դիլ քաղաքականութեն և խոհեմութեն: Այսպէս
ես պարտ է բաւականանալ և հաճիլ ստրկութեն
և նուաստութեն, որ յայնցանէ յառաջանայ. և
ընդունիլ զնա բարի սրտիւ, առ ՚ի հեռևիլ ս̄ր
խոնարհութեն: Ասեմ նաև. եթէ ես եղէ ան
կարգ բարկութե̃, և վավաշոտութե̃, և կամ
ասելով զանպատշաճ խօսս, որովք ա̄ծ, և ըն-
կերքն վշտացան. ես ղղջացայց կենդանապէս,
և յոյժ ցաւեցայց վ̄ն վշտացուցանելոյս. առ որս
ջանացից ես ուղղել զիս լաւագոյն կերպիւ, որ
քան կարելի իցէ ինձ: Բայց նաև ոչ թողից եր
բէք զստրկութին, և զարհամարհութին, որ հե-
տևի ինձ: Եւ եթէ ոք կարիցէր բաժանել զիս ՚ի
միոյն. ես համարձակօրէն ՚ի բաց ընկենուի զմեղս,

և խոնարհաբար պահէի զստրկութիւն :

* Բայց դիցուք թէ. սիրեմք զստրկութիւն, և զարհամարհեցեալ լինիլն, որ հետևի 'ի չարէն: Սակայն ոչ վնկ պարտիմք թողուլ առ 'ի բժշկել և ուղղել զչարն, զոր պատճառէ յատուկ և օրինաւոր միջոցին: այլ 'ի վեր քան զընաւս բուժել ջանալ, մինչ չարն է 'ի հետևման: Զոր օրինակ, եթէ ես ունիցիմ զխոտելի, և զոգեղ խոց իմն 'ի յերեսս իմ, ջանացից բուժել և ապաքինել: բայց սակայն ոչ պարտիմ մոռանալ զստրկութիւն, զոր 'ի նմանէ ընկալայ: Իսկ եթէ արարի ես զխեւութիւն և զյիմարութիւն իմ, որ ոչ վշտացուցանէ զոք. ես ոչ առբասրեցից և ջատագովեցից զննէն : քանզի թէպէտ այս է պակասութիւն իմ. սակայն ոչ է մնացական : Որպէս ոչ կարեմ ես ջատագով լինիլ վն իմ, եթէ ոչ վն ստրկութեն և խոտելականութեն, որ անտուստ պատճառի առ իս : արդ այս է այն, որ ոչ կարէ խոնարհութիւն թոյլատրել ինձ : Բայց եթէ այնու ղևական, և յիմարական անզգուշութեամբ վշտացուցի, և կամ գայթակղեցուցի զոք. բուժեցից ճշմարիտ ջատագովութեամբ իմով՝ զվիշտն և զվնասն. զի է մնացական. և սէրն պարտաւորէ զիս առ 'ի ջնջել զնա : Պատահի երբեմն ևս՝ ի որում պահանջէ սէրն. զի մեք բուժիցեմք նաև զստրկութիւն և զարհամարհութիւն մեր, սակս բարւոյ ընկերին. առ որ հարկաւոր է բարի անունն և պատիւն մեր: Բայց 'ի յայսմիկ պատահման, որ բառնամք զնուաստութիւն և զստրկութիւն մեր 'ի յաչաց ընկերին, առ 'ի արդելուլ զգայթակղութիւն նորին. պիտոյ է փակել և թաքուցանել զնա 'ի սրտի մերում. այնու՝ զի ընկերն շինիցի:

Բայց եթէ կամիցիս գիտել. ո՛վ խանդակաթդ առաքինութեն. թէ ոյք իցեն լաւագոյն նուաստութիւնք, և ստրկութիւնք : Ասացից քեզ պար-

զապէս․ Թէ այնք են առաւել օգտակարք հոգ-
ւոյ, և հաճելի այ․ զորս մեք ընդունիմք պատա
հականապէս․ և կամ ըստ յատկութեց կենաց և
կացութեց մերոց: Վս զի յայնժամ մեք ոչ ընտ
րեմք զայնս ըս հաճութե մերոյ․ այլ այնպէս ըն
կալնումք, ոպ և հրամայէ մեզ այծ․ որոյ ընտ-
րութին միշտ լաւագոյն է քան զմերն: Բայց սա-
կայն եթէ պիտոյ եղիցի ընտրել․ գիտեա զի ա-
ռաւել մեծագոյնքն են լաւագոյնք: Եւ այնք են
մեծագոյնք համարելիք, որք են առաւել ներ-
հակք յօժարութե և հակման մերոյ: միայն թէ
համաձայնք իցեն կոչման, և կացութեան մերոյ:
Նաև այնպիսի ստրկութին է լաւագոյն, որ առ
'ի ասել զնա միանգամ, միշտ աւերէ զընտրութին
մեր, և իբր թէ ոչնչացուցանէ զամ առաքինու-
թիւնս մեր:

ՈՀ․ ո՛վ արասցէ մեզ զայս շնորհս, առ 'ի կա-
րող լինիլ ասել հանգոյն դաւթի մեծ թագաւո-
րին: Ընտրեցի ես ընդ աղբ կալ (այս առ 'ի լինիլ
ստրուկ) 'ի տանն այ․ առաւել քան զբնակել 'ի
յարկս մեղաւորաց: Ոչ ոք կարէ առնել զայն (ո՛վ
խանդակաթդ) եթէ ոչ այն, որ առ 'ի բարձրա
ցուցանել զմեզ, այնպէս կենցաղավարեցաւ, և
մեռաւ․ մինչ զի եղև նախատինք մարդկան, և
արհամարհանք ժողովրդոց: Արդ ես ասացի
քեզ զիրս բազումս, որք խստագոյնք թուին քեզ,
մինչ մտածիցես զայնս: Բայց հաւատա ինձ․ զի
լինին առաւել քան զմեղու խորիսխ, և քաղցր
քան զշաքար, մինչ 'ի գործածիցես:

Թէ

Թէ ո՛րպէս պիտոյ է պահել զբարի անունն, 'ի գործածելով զխոնարհութիւնն:

Գլուխ . Է:

Գովութիւն, պատիւ՛ն, և փառքն . ոչ տրին մարդկանց՝ սակս իւրաքանչիւր պարզ առաքինութեան . այլ տրին սակս միոյ գերազանց առաքինութե : Վասնզի 'ի ձեռն գովութե կամիմք համոզել զայլս, առ 'ի վարկանել զումեքէ ունիլ զգերազանցութի : Եւ՛ 'ի ձեռն պատուո՛յ վկայեմք, թէ մեք ևս վարկանեմք և համարիմք գոլ զնա գերազանց : Եւ՛ փառքն՝ ըստ իմոյ դիտման ոչ է այլ ինչ, քան պայծառութիւն իմն բարի համբաւոյ, որ բղխի 'ի յառատութէ բազում գովութե, և պատուո՛յ : Ուստի պատիւքն, և գովութիւքն՝ են իբր պատուական ակունք, 'ի միաւորութէ որոց յառաջագայ փառքն, իբր զգեղեցկանկար երանգ իմն : Արդ ոչ կարէ ստանիլ խոնարհութիւն, զի ունիցիմք մեք զկարծիք իմն գերազանցելոյ քան զայլս : Ոչ կարէ նաև թոյլ տալ, զի խնդրիցեմք զգովութիւն, զպատիւ, և զփառս . որք պարտին միայն առ գերազանցութիւն : Սակայն հաւանելի է խրատոյ իմաստնոյն, որ զգուշացուցանէ ըզմեզ ունիլ զհոգունակութի վս բարի համբաւոյ մերոյ : Վս զի բարի համբաւն է համարումն իմն, ոչ վս որպիսի և իցէ գերազանցութե . այլ վս միոյ պարզ և հասարակ բարութե, և ամբողջութե կենաց : Քանզի ոչ արգելու խոնարհութիւն, զի մեք զմեզ ոչ ճանաչիցեմք . և համահաւանութե ոչ ցանկանայցեմք բարի անուան, և համբաւոյ :

Արդ

Արդ թէպէտ ճշմարիտ է․ թէ խոնարհութիւն արհամարհէր զբարի բամբասն, և զվարկանումն, եթէ սէրն ոչ ունիցէր զպիտանաւորութիւն՚ի նմա։ Բայց զի նա է այնպիսի հիմն մարդկային կենցաղավարութեան․ մինչ զի թարց որոյ մեք ոչ միայն եմք անօգուտք․ այլ և փնասակարք հասարակութեան, պատճառաւ դայթակղութեան՝ զոր ընդունի։ Սէրն կամի, և խոնարհութիւն հաւանի․ զի ցանկանայցեմք նմա, և ազնուապէս պահիցեմք զնա։ Քանզի որպէս տերևքն ծառոց՝ ըստ ինքեանց ոչ են յոյժ պատուականագոյնք․ սակայն ոչ միայն ծառայեն առ՚ի զարդարել զծառս, այլ նաև առ ՚ի պահել զպտուղս, մինչ տակաւին տհասք, և մատաղատունկք են։ Այսպէս ևս բարի անունն և համբաւն․ թէպէտ ըստ ինքեան ոչ է այնքան ցանկալի․ սակայն նաև ոչ է խոտելի։ Ոչ միայն վասն շքեղութեան և զարդու կենաց մերոց․ այլ նաև սակս պահպանութեան առաքինութեան մերոյ․ և մանաւանդ այնց առաքինութեանց, որք տակաւին թարմք և տկարք են,

Պարտաւորութիւն պահելոյ զբարի անունն և ըզհամբաւն մեր․ է լինել այնպիսի, որպիսի և վարկեցեալ եմք յայլոց։ և այս ՚ի ձեռն քաջութեան, և քաղցրագոյն բունութեան խմիք ամրագոյն սրտի։ Պահեսցուք ուրեմն ( ով խանդակաթդ ) զառաքինութիւնս մեր, զի հաճելիք են Աստուծոյ․ որ է մեծագոյն և բարձրագոյն առարկայ բնաւից գործոց մերոց։ Բայց որպէս այնոքիկ, որք կամին պահել ըզպտուղս․ ոչ միայն բաւականանան համեմել զայնս շաքարով, այլ նաև դնեն զնոսա ՚ի յատուկ անօթոջ պահպանութեան նոցին։ Այսպէս թէպէտ Աստուածային սէրն իցէ գլխաւոր պահպանիչ առաքինութեանց մերոց․ սակայն կարեմք ևս վարել բարի անուամբ, որ է յաւէտ յատկագոյն օգտակար առ այս։

Բայց

* Բայց սակայն ոչ է պիտոյ, զի մեք յոյժ վառեալք, և նրբագնինք լինիցիմք առ այս պահպանութիւն: Քանզի այնոքիկ՝ որք են յոյժ փափուկք, և վրէժխնդիրք սակս համբաւոյ իւրեանց. նմանին այնոցիկ, որ սակս մի փոքեր ցաւոյ և հիւանդութեան՝ ըմպեն զդեղ և ղօշարակ: զի կամելով պահպանել զառողջութիւն իւրեանց, բոլորովին ապականեն և աւերեն զնա: Այսպէս և կամեցողքն յոյժ փափկապէս, և նրբաբար պահպանել զբարի անունն, և զհամբաւն իւրեանց, բոլորովին կորուսանեն զնա: Քանզի 'ի ձեռն այսպիսի փափկութեան, և նրբագնութեան. լինին յանդուգք, անհանգիստք, և անտանելիք. նաև գրգռեն զչարութիւն բամբասողաց, և չարասողաց:

Կեղծումն, և ոչ զգալն արհամարհանաց; անիրաւութեանց, և նախատանաց. հասարակապէս է յոյժ առողջարար դեղ իմն, առ 'ի ոչընչացուցանել զանարգանս. քան թէ զայրացումն, տրտնջումն, և վրէժխնդրութիւն: Քանզի եթէ ոք բարկանայ վս այսոցիկ. թուի թէ զգացեալ և ճանաչեալ իցէ զայնս: Վս զի կոկորդիլոսքն ոչ վնասեն՝ եթէ ոչ այնոցիկ, որք երկնչին յնքեանց: Այսպէս և չարալեզուքն ոչ լեզուահարեն, եթէ ոչ զայնս, որք զգան և ընդունին զայնս 'ի պատիժ:

* Մոռանալ երկիւղն առ 'ի կորուսանել զբարի անունն, և զհամբաւն. տայ զվկայութիւն իմն՝ մեծապէս խախուտ և խարխուլ գոլոյ հիման. որ է ճշմարտութիւն բարի կենաց: Վս զի քաղաքքն, որք ունին զփայտեայ կամուրջս 'ի վերայ մեծի գետոյ. երկնչին զի մի տանիցին, և աւերիցին բռնութբ առատութեան ջուրց: Բայց այնոքիկ՝ որք ունին զքարեայ կամուրջս, ոչ երկնչին և 'ի յորդահոսութեց արտաքոյ կարգի եղելոց:

Այս

Այսպէս՝ և այնոքիկ, որք ունին զհոգի իմն ճշմա-
րիտ քրիստոնէութեան. հասարակապէս անգոս-
նեն, և յոչ ինչ համարին զչարախօսութիւս, և
զբամբասանս անիրաւական լեզուա՛ց: Բայց այ-
նոքիկ՝ որք են տկարք. վրդովին, քստմնին, և
խռովին վն̅ ամ̅ խօսից: Զճշմարիտն ասեմ. ո՛վ
խանդակաթ առաքինութեան. որ կամի ունել ըզ
համբաւ, և զանուն առ ամենեսեան. կորուսա-
նէ զնա առ ամենեսեան: Եւ՛ այն արդիւնաւորի
կորուսանել զպատիւն, որ կամի ընդունել զնա
յայնցանէ, որք են ճշմարտապ̅ վատահամբաւք,
և անպատի՛ւք սակս մոլութեան իւրեանց:

* Բարի անունն և համբաւն՝ է իբր նպատակ և
նշան իմն. որ զմեզ առնէ ճանաչել, թէ ուր
պարտի իջևանիլ առաքինութիւն: պարտի ուրեմն
առաքինութիւն գերազանցիլ 'ի բնաւս՝ առ ամե-
նեսեան: Եւ՛ վն̅կ եթէ ոք ասիցէ քեզ. թէ դու
ես կեղծաւոր ոմն, այնու՝ զի տաս զքեզ 'ի ջեր-
մեռանդութեան: Կամ թէ. եթէ համարիցի զքեզ
երկչոտ, զի դու ներեցեր անիրաւութեանց թշնա-
մեաց քոց: յայնժամ անգոսնեա՛ զայս ամ̅. զի
այսպիսի թիւր դատողութիւնքս արարեալք են 'ի
յիմար, և յանզգամ մտ̅կաց: Յորժամ պիտոյանայ
կորուսանել զբարի անունն վն̅ առաքինութեան. ոչ
է պիտոյ թողուլ զառաքինութիւն, և ոչ ևս հեռանալ
'ի շաւղէ նորին: Վս̅ զի պիտոյ է գերազանցել ըզ
պտուղն քան զտերևս. պ̅ զներքինս և զհոգևոր
բարիս, քան զամ̅ արտաքին բարիսն: Քանզի
պիտոյ է նախանձաւոր գոլ բարի համբաւոյ և
անուա՛ն, և ոչ պաշտօղ և կռապարիշտ:

Եւ՛ ոպ̅ ոչ է պիտոյ փնասել վճիտ և սպայծառ
աչաց. այսպէս ոչ է պարտ գոհունակել և բա-
ւականանալ ցաւալի, և ճպռունակ աչօք: Ոպ̅
մորուան է զարդ երեսաց մարդոյ. այսպէս և
հերքն գլխոյ կնոջ: բայց եթէ ոք բոլորովին քաղէ
և

և փետակ զմազն 'ի ծնօտէ, և զհերս 'ի գլխոյ. վատատիպս կարեն բուսանիլ այնք: Բայց եթէ ոք միայն հատանէ և գերծու զնա. շուտատիպս աճին, և խիտախիտ բուսանին: Այսպէս և. եթէ համբաւն և բարի անունն իցէ կորեալ. և կամ թէ բոլորովին գերծեալ լեզուօք բամբասողաց, և չարախօսաց. ըստ որում ասէ դաւիթ (Որպէս ածելի սուր՝ արարեր նենգութիւն.) ոչ է պարտ վրդովիլ և խռովիլ առ այն. զի շուտով բուսանի: Ոչ միայն այնպէս գեղեցիկ, որպէս էր յառաջն. այլ նաև առաւել գեղեցիկ և հաստատ: Բայց եթէ չար վարքն մեր բոլորովին բառնայցեն 'ի մէնջ զհերս բարի անուան մերոյ. յայնժամ առաւել դժուար լինի վերադառնալն նորին. զի 'ի բաց հատեալ ունի զարմատն: Արդ արմատն բարի անուան է՝ բարութիւն և ամբողջութիւն կենաց. որ մինչ է 'ի մեզ, կարէ միշտ արտաբղխել և ընձիւղել զպատիւն, որ է պատկանաւոր նմա:

Արդ պիտոյ է թողուլ զունայն կենցաղավարութիւն, զունայն երթեւեկութիւն, զանօտի բարեկամութիւն, և զանօգուտ ընտանեկցութիւն: Զի այսոքիկ փտասեն բարի անուան: քանզի առաւել արժէ բարի անունն, քան զգնաւ տեսակս ունայն հեշտութեան: Բայց եթէ 'ի կրթիլն առ բարեպաշտութիւն, և 'ի զարգացումն ջերմեռանդութեան, նաև առ յառաջացումն յաւիտենական բարեաց. դատանիցի մի ոմն, որ բամբասիցէ, անգոսնիցէ, և նախատիցէ զմեզ. թողցուք զայն 'ի բաց՝ զի լակոտքն շան հաջիցեն դէպ առ լուսինն: Քանզի եթէ նոքա յարուցանիցեն և գրգռիցեն զչար կարծիս իմն ընդդէմ բարի անուան մերոյ. և այսու կերպիւ կամիցին գերծել զմօրուսն, և հատանել զհերս գլխոյ բարի համբաւոյն մերոյ. ոչ է երկնչելի, զի յոյժ փութապէս բուսանի:

Եւ՛ ածելին նենգութեն և չարասութեն նոցին՝ ծառայէ 'ի պատիւ և 'ի յարգութիւն մեր. որպ և հոտոցն ծառայէ այգւոյն՝ առ 'ի առատանալ և բազմանալ պտղովք:

* Եւ՛ պիտոյ է միշտ զի դարձուսցուք զաչս մեր առ խաչեցեալն Յս Քս. և դիմեսցուք 'ի ծառայութե՛ն նորին՝ հանդերձ ապաւինութբ և պարզութբ: Բայց խոհեմաբար, և զգուշապէս. զի նա լիցի պահապան բարի անուան և համբաւոյ մերոյ: Եւ՛ եթէ թոյլատրեսցէ նա՝ զի բարձցի նոյնն 'ի մէնջ. այս լինի առ 'ի առնել զմեզ բարեգոյնս. և կամ առ 'ի յառաջացուցանել զմեզ 'ի սբ խոնարհութիւն. որոյ մի միայն տրամն, առաւել արժէ քան զհազար լիտր պատուոյ: Եթէ ոք վատաբանէ զմեզ անիրաւաբար. քաղցրութբ հակադրեսցուք զճշմարտութիւն ընդդէմ վատահամբաւութեն նորին:

Եւ՛ մինչ յարատեւէ այն. եթէ խոնարհեցուցանելով զմեզ՝ յանձնիցուք զբարի անունն, և զհոգին մեր 'ի ձեռն այ. անահ և անկասկած առնեմք զնա: Ծառայեսցուք այ միջնորդութբ բարի, և վատ համբաւոյ. ըստ օրինակի սբյն Պօղոսի: Զի և կարասցուք ասել ըստ դաւթի. Վս քո համբերեցի նախատանաց. և ծածկեաց ամօթ զերեսս իմ: Բայց այս իմանալի է՝ բաց 'ի մոլութեց ոմանց. որք այնքան վատթարք և վատահամբաւք են. մինչ զի ոչ ոք պարտի տանիլ և համբերել նախատանաց և բամբասանաց նոցին, մինչ կարէ արդարապէս 'ի բաց բառնալ զայնս: Եւ՛ ևս՝ բաց 'ի յանձանց ոմանց, յորոց բարի համբաւոյ կախի շինութիւն բազմաց: Քանզի այսպիսի պատահման՝ պիտոյ է անդորրապէս, և խաղաղաբար բուժել զընկալեալ անիրաւութիւն, և զթիւրութիւն. ըստ խրատու, և ըստ ազդման ածաբանից:

Յա_

## Յաղագս հեզութեան դէպ առ ընկերս . և Դեղոյ ընդդէմ բարկութեան :

### Գլուխ . Ը :

Սուրբ միւռոնն , զոր առաքելական աւանդութիւն 'ի կիրարկանէ եկեղեցին մեր՝ 'ի մէջ խորհրդոյ դրոշմի , և օրհնութեան . է բաղադրեցեալ յիւղոյ ձիթենեաց , և խառնեալ ընդ պալասամի : Որ 'ի մէջ այլոց իրաց՝ ցուցանէ նաև զերկու սիրելի , և զպատուական առաքինութիւնս , որք փայլէին 'ի յամենասուրբ անձն Տեառն մերոյ . զորս նա յանձնեաց և աւանդեաց մեզ եղականապէս : Իբր թէ յատկապէս պարտ իցէր սիրտն մեր նոքօք նուիրել մեր , և սրբագործիլ առ ծառայութիւն իւր , և բոլորովին տրիլ առ 'ի հետևիլ նմա : Ուսարուք յինէն ( ասէ նա ) զի հեզ եմ , և խոնարհ սրտիւ : Զի խոնարհութիւն կատարունակէ զմեզ դէպ 'ի յԱծ , և հեզութիւն դէպ 'ի յընկերս : Պալասամն ( որպէս ասացի 'ի վերոյ , ) որ մնայ միշտ 'ի ներքոյ ամենից հիւթոց . ցուցանէ զխոնարհութիւն : Բայց իւղն ձիթենւոյ , որ մնայ միշտ 'ի վերայ հիւթոց . ցուցանէ զհեզութիւն , և զքաղցրութիւն . որ բարձրանայ 'ի վերայ ամենից իրաց , և է դերազանց 'ի մէջ առաքինութեանց : Իբր թէ իցէ ծաղիկն սիրոյ . որ ըստ սրբոյն բեռնարդոսի՝ կայ 'ի կատարելութեան իւրում . յորժամ ոչ միայն է համբերող , այլ և ա
բաց 'ի յայսմանէ՝ յորժամ է հեզ և քաղցր :

Բայց ունեմ զհոգունակութին . ով խանդակաթ առաքինութիւն . զի այս խորհրդաւոր միւռոնս , որ է բաղադրեալ և կազմեալ 'ի հեզութենէ և 'ի խո֊

խոնարհութե՟ · իցէ 'ի մէջ սրտի քո : Քանզի մինն
'ի մեծագոյն արուեստից, և հնարից Թշնամւոյն՝ է
առնել զայս, զի բազումք հաստատեսցին միայն
'ի խօսս, և յարտաքին արարմունս՝ երկու առա-
քինութեացս այսոցիկ · և ոչ զինելով զներքին
իղձս իւրեանց, խորհեսցին գոլ խոնարհք և հեզք ·
բայց ոչ են ամենեւին ներգործութե՟ : Զի այնու
ճանաչի լինել հեզութիւն, և խոնարհութիւն նոցին
գոլ արտաքնակն միայն : Զի 'ի ձեռն նուաղագոյն
խօսից, որ ներհակօրէն ասացեալ լինի առ նմ՟ · և
կամ վն՟ փոքրագոյն անիրաւութե՟, զոր ըն՟ունին ·
գրգռին և զոռոզանան եղական ամբարհաւա-
ճութեամբ միով :

* Ասի թէ՝ այնոքիկ որք արբեալք են զնախա-
պահուածս · որ ռամկօրէն կոչի շնորհք սբ՟յն պօղո-
սի · ոչ ուռուցանեն մինչ խայթեն 'ի յօձից · մի-
այն թէ շնորհն իցէ ճշմարիտ : Նմանապէս յոր-
ժամ խոնարհութիւն, և հեզութիւն՝ բարի և ճշմա-
րիտ իցէ · պահպանէ զմեզ 'ի յուռուցմանէ և 'ի
տապոյ, զոր սովորք են անիրաւութիւքն յարու-
ցանել 'ի սիրտս մեր : Բայց գոլով մեք խածա-
տեալք և խայթեալք 'ի բամբասողաց և 'ի թշնա-
մեաց · եթէ լինիցիմք դաժանք, ուռուցեալք, և
քինապահք · է հաւաստի նշան ի՟ն · թէ խոնար-
հութիւն և հեզութիւն մեր, ոչ են ճշմարիտք և հա-
ստատք, այլ հնարեալք, և երեւոյթք միայն :

* Ար՟ և պայծառ նահապետն յովսէփ, 'ի յուղար-
կելն զեղբարս իւր 'ի յեգիպտոսէ առ հայրենի
տունն · զայս խրատս միայն ետ նոցա ասելով ·
Մի՛ զայրանայցէք ինչ 'ի ճանապարհի : Այ՟ մի՛ բարկա-
նայք, և մի՛ կռուիք 'ի ճանապարհին : Ես
ասեմ քեզ զնոյնն՝ ով խանդակաթդ առաքինու-
թեան · զի այս ողորմելի կեանքս ոչ է այլ ինչ,
քան ճանապարհ, և ընթացումն ի՟ն առ երա-
նութիւնն : Մի՛ զայրասցուք և կռուիցուք ու-

րեմն ընդ միմեանս 'ի ճանապարհին: ընթացուք 'ի միասին հեզութ̄բ, խաղաղութ̄բ, և բարեկամութ̄բ. ընդ եղբարց, և ընդ ընկերաց մերոց: Այլ և ասեմ քեզ յայտնապէս, և առանց ակնառութեն. մի՛ բարկանար ամենևին՝ եթէ կարելի իցէ քեզ. և մի՛ առնուր զառիթ իմն որպիսի և իցէ, առ 'ի բառնալ զդուռն սրտի քո 'ի բարկութեն: Վ̄ս զի յայտնապէս ասէ ս̄ր առաքեալն յակոբոս. Թէ Բարկութիւն Մարդոյ զարդարութիւնն Ա̄յ ոչ գործէ: Պիտոյ է նաև ընդդիմանալ չարին, և յանդիմանել զմոլորութիւս նոցին, որք են 'ի ներքոյ կառավարութեն մեր, արիապէս և քաջապէս. նաև համեղապէս և քաղցրաբար: Ոչ այլ ինչ այնքան յաղթէ զբարկացեալ փիղն, որքան տեսութիւն գառան միոյ: և ոչ այլ ինչ այնքան դիւրապէս խորտակէ զուժգնութիւն հրացանին, որքան առնէ ասրն և բուրդն:

Ոչ ինչ համարեալ լինէր այնքան բարկութիւն արարեալ ախտին, թէև ընկերակցեալ իցէ բանականութեն. եթէ ոչ ունիցէր նա զսկիզբն 'ի բանականութէ միայն: Քանզի բանական հոգին՝ դոլով բնականապէս ենթարկեալ բանականութեն, ոչ ենթարկի ախտին, եթէ ոչ բռնութ̄բ: Եւ վ̄ոկ՝ մինչ բանականութիւն ընկերակցեալ է ընդ ախտին, լինի ատելի. ծնալով արհամարհեալ արդար տէրութիւն նորին. նաև ստրկացեալ ընդ բռնութ̄բ ընկերակցութեն: Իշխանքն և դատաւորքն՝ պատուեն և առաւելագոյն մխիթարեն զժողովուրդս իւրեանց, մինչ այց ելանեն ն̄ց հանդերձ խաղաղական ազնուականօք և հետևողօք ռամամբք: Բայց մինչ ածեն ընդ ինքեանս նաև զզինուորս և զբազմութիւս զօրաց՝ ( Թէ և իցէ այն սակս բարւոյ հասարակի ) այնու միշտ լինի գալուստն նոցին ահարկու և զարհուրելի: Քանզի դիցուք թէ խստապէս պատուիրեսցեն զօրացն պահել

զզին

զգլխաւորական պատուիրանս և զկանոնս։ Սակայն ոչ կարեն առնել այնքան երբէք, զի բնաւ ոչ ծնանիցի անդ անկարգութիւն իմն, որով բարի մարդիկք առ ոտս ոչ կոխատիցեն։ Այսպէս մինչ բանականութիւն թագաւորէ, և խաղաղութեամբ 'ի կիրարկանէ զպատիժն, զյանդիմանութիւն, և զկշտամբութիւն իւր։ Թէ և այս իցէ սաստկագոյն և խստապէս՝ ամենայն ոք սիրէ զնա, և հնազանդի նմա։ Բայց մինչ ածէ նաև ընդ ինքեան զցասումն, զբարկութիւն, և զպայրացումն, որք են (որպէս ասէ սուրբն Օգոստինոս) իբր զինուորք, և զօրք նորին. յայնժամ լինի առաւել զարհուրելի, քան թէ սիրելի։ Նաև սիրոն իւր միշտ մնայ այնու կոխատեալ և տանջեալ։

* Ուստի գրելով սուրբն Օգոստինոս առ Փռօֆութռոս՝ ասէ. լաւագոյն է խցել զմուտն ընդդէմ արդար և բանաւոր բարկութեան, քան թէ բանալ նմա. թէ և փոքրագոյն ևս իցէ։ Վասն զի յետ ընդունելոյ զնա. յոյժ դժուարին լինի արտաքսելն զնա։ զի մտանէ նա որպէս զփոքրագոյն շիւղ իմն. և 'ի միում կիտոջ հաստանայ և լինի որպէս գերան։ Որ և եթէ կարիցէ մնալ անդ 'ի միում գիշերի միայն. և կամ թէ՝ եթէ արեգակն մտանիցէ 'ի վերայ բարկութեան մերոյ (զոր առ 'ի լինել այսպէս արգելու առաքեալն.) յայնժամ գրեթէ ոչ ինչ միջոցաւ, և սպեղանեաւ յետոյ կարէ շիջուցանել։ Վասն զի սնանի նա բազմազան սուտ համոզմամբ և թելադրութեամբ. որովհետև բարկացեալն ոչ երբէք համարի զբարկութիւն իւր գոլ անարդար։

* Լաւագոյն է ուրեմն կարել կենդաղավարիլ առանց բարկութեան, քան կամիլ իմաստնապէս և չափաւորաբար 'ի կիրարկանել զբարկութիւն։ Եւ յորժամ վասն անկատարելութեան և տկարութեան մերոյ, պաշարեալ գտանիցիմք մեք 'ի նմանէ. լա-

ւադոյն է խնկոյն արտաքսել զնա, քան մնալ առ 'ի խորհրդակցիլ ընդ նմա ։ Քանզի եթէ տրիցի նմա փոքր ինչ ժամանակ, առ այն խնկոյն լինի նա տէր հրապարակին ։ Ե՞ւ առնէ հանգոյն օձի, որ դիւրապէս կարէ քարշել անդ զբոլոր մարմինն, ուր սեղմէ զգլուխն իւր ։ Բայց եթէ առիցես, թէ ո՛րպէս արտաքսեսցես զնա ։ Ասեմ քեզ ո՛վ սիրահարդ առաքինութեան . թէ պիտոյ է, զի խկոյն և պատրաստօրէն ժողովեսցես զընաւ զօրութիւս քո 'ի գլուխ քո ։ և այս ոչ սրտմտաբար, և ուժգնապէս . այլ քաղցրաբար, և մեղմապէս ։ Քանզի որպէս տեսանի 'ի բազմախուռն հանդիսի, և խռնութեան իմիք, յորում արտակայանայ աղաղակ ինչ . մինչ այնք՝ որք կամին լռեցուցանել զբազմութիւն՝ աղաղակելով լո՛ւռ լէրուք՝ լո՛ւռ լէրուք . այնու առաւել զաղաղակս և զշշնջմունս յարուցանեն, քան թէ լռեցուցանեն, Այսպէս և բազմիցս պատահի, որ կամելով սրտմտաբար և շտապօրէն նուաճել զբարկութիւս մեր . յարուցանեմք զմեծագոյն խռովութիւս և զաղմուկս 'ի սրտի մերում, քան թէ կարիցէին առնել 'ի մեզ այնք բարկութիւք ։ Ե՞ւ գոլով սիրտն մեր այսպէս աղմկեցեալ և վրդովեցեալ, ոչ կարէ գոլ տէր իւրոյ ինքեան ։

* Յետ այսորիկ վարիլ նա և այնու խրատով սրբոյն օգոստինոսի . որ արդէն ծեր գոլով՝ խրատէր զերիտասարդ եպիսկոպոսն աւսիլիոս ։ Արա՛ ( առէր ) զայն, զոր պարտի առնել մարդ ոք ։ և եթէ պատահիցի քեզ այն . զոր այրն այ ասէ 'ի սաղմոսի իւրում . Խռովեցայ 'ի սրտմտութենէ ակն իմ . դիմեա՛ առ այծ աղաղակելով ։ Ողորմեա՛ ինձ Տր, զի հիւանդ եմ ես, բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ ։ Քանզի նա յայնժամ տարածէ զբազուկն իւր, առ 'ի նուաճել և շիջուցանել զբարկութիւն քո ։ Ե՞ւ կամիմ ասել . թէ պիտոյ է կար

դալ և կոչել զզօրութիւն նոյ․ մինչ տեսանեմք ըզ-
մեզ տատանեալ, և շարժեալ 'ի բարկութէ : Եւ
այսու հետևիլ առաքելոցն, որք մինչ խռովեալք
էին 'ի մէջ մրրկաց և ալեաց, աղաղակեցին առ
Տր : Քանզի սաստէ նա ախտից մերոց, զի դա-
դարիցեն․ և հետևիցի խաղաղութիւն մեծ : Բայց
յուշ առնեմ քեզ բարեպէս․ զի աղօթքն ևս որ
առնանի ընդդէմ բարկութե (որ և պիտոյ է մեզ 'ի
ներկայումս) պարտի միշտ առնանիլ քաղցրամբ,
և անդորրապէս, և ոչ ուժգնապէս : Քանզի այն
պէս պարտի 'ի կիրարկանիլ աղօթքն, որպ և կի-
րարկանի դեղ և հնար ինչ ընդդէմ այսպիսւոյ
չարի :

* Երդ այսու ամբ․ մինչ զգաս դու 'ի քեզ, ըզ-
գործ ինչ բարկութե․ իսկոյն բժշկեա զխախտմանս
քո, գործով ինչ հեզութե․ կիրարկանելով զայն
դէպ առ անձն այն, ընդդէմ որոյ բարկացեալ ես
դու : Քանզի որպ եղական դեղ ընդդէմ սոսութե
այս է․ իսկոյն առնել զանդրադարձ ճշմարիտ :
Այսպէս ևս բարեգոյն դեղ ընդդէմ բարկու-
թե այս է․ իսկոյն առնել զգործ ինչ հեզութե․
վս զի սովոր է ասել․ թէ նորագոյն հարուածքն
յոյժ դիւրապէս բժշկին :

* Բաց 'ի յայսմանէ․ յորժամ դու լիցես 'ի խա-
ղաղութե, և արտաքոյ առթի բարկութե․ արա
զնախակրթութի հեզութե, և քաղցրութե․ ա-
սելով զբնաւ խօսս քո քաղցր եղանակաւ, և առ-
նելով զամ գործս քո հեզութբ, որքան կարելի
իցէ քեզ : Յիշելով զայն, որ գրի 'ի յերգս սողո
մոնի․ թէ հարսն ոչ միայն ունի զմեղրն 'ի վր շր-
թանց, և 'ի ծայրն լեզուին իւրոյ․ այլ նաև 'ի ներ
քոյ լեզուին․ այ 'ի ներքս և 'ի մէջ կրծոյն : նաև
ոչ միայն ունի անդ զմեղրն, այլ և զկաթն : Այս
պէս ևս՝ ոչ միայն պիտոյ է մեզ ունիլ զքաղցրագոյն
խօսակցութի դէպ առ ընկերս, այլ նաև 'ի բո-

լոր կուրծս մեր . այլ 'ի բոլոր ներքս հոգւոյ մե_րոյ : Եւ ոչ միայն բաւական է ունիլ զքաղցրու_թիւն մեղեր (որ է կասիական, և քաղցրահոտ) այլ զքաղցրութիւն քաղաքական կենցաղավարու_թեան : այլ նաև պիտոյ է ունիլ զքաղցրութիւն կա_թին 'ի մէջ ընտանեաց և մերձաւորաց : Յորոց յաւէտ պակասին այնպիսի անձինքն, որք 'ի հրա_պարակի թուին հրեշտակք, և 'ի տան սատա_նայք :

## Յաղագս հեզութեան դէպ 'ի դէմ խոժոռութեան :

### Գլուխ . Թ :

Մինն 'ի բարեգունից կրթութեան հե_զութեան (եթէ կարէցէաք առնել) այս է, որոյ ես առարկայն է 'ի մեզ . ոչ զայրանալ և բարկանալ երբէք ընդ_դէմ մեր, և ոչ ես ընդդէմ անկատա_րելութեան մերոյ : Զի թէպէտ բանականութիւն կամի . զի մինչ գործիցեմք զմոլութիւն ինչ, զգայ_ցեմք զտհաճութիւն և զցաւս : Սակայն պիտոյ է զի զգուշանայցեմք մեք՝ առ 'ի ոչ ունիլ զդառ_նագոյն, զկսկծագին, և զզայրացական տհաճու_թիւն լինի : Յորում մոլորին բազումք մեծապէս, որք գոլով բարկացեալք, բարկանան ինքեանց՝ վասն բարկանալոյն . նեղանան՝ վասն գոլոյ նեղա_ցեալք . և խռովին՝ վասն գոլոյ խռովեալք : Ուստի և այսու կերպիւ՝ ունին զսիրտս իւրեանց թաթա_ւեալք, և շաղախեալք 'ի բարկութեան : Զի թէ_պէտ թուի թէ՝ յետին բարկութիւն ջնջէ և բժշ_կէ զառաջինն : բայց սակայն՝ նա է իբր դուռն և ճանապարհ լինի, առ այլ նորագոյն բարկութիւն՝ 'ի պա

'ի պատահիլն առաջնոյ առիթի ։ Բայց յայտնանէ նաև՝ այսպիսի բարկութիւնս, զայրացմունս, և դառնութիւնս, զորս ունի ոք ընդդէմ իւրոյ ինքեան · քարշեն զնա առ ամբարտաւանութիւն, և առ հպարտութիւն ։ Եւ ոչ ունին զայլ սկիզբն և զգաղափար, եթէ ոչ զյատուկ սէրն ինքեանց · որով վրդովին, և անհանգստանան 'ի տեսանելն զինքեանս անկատարադոյնս ։ Պարտ է ուրեմն զայնպիսի տհաճութիւն ունիլ դէպ առ սխալանս մեր, որ իցէ խաղաղ, հանդարտ, և հաստատ ։

* Օ ի որպէս դատաւոր ոմն՝ յոյժ լաւապէս պատժէ զչարագործս, արտաբերելով զվճիռն բանականութեամբ, և հանդարտ մտօք · քան մինչ է շարժեալ բռնութեամբ և ախտի ։ Եւ այս այնքան · մինչ զի նա դատելով զայնս 'ի ձեռն ախտի, ոչ պատժէ զմոլութիւնս նոցին՝ ըստ որում են մոլութիւնք · այլ ըստ որում ամբոխեալ և խռովեալ է ինքն ։ Այսպէս և մեք յոյժ լաւապէս պատժեմք մեք զմեզ ինքեանս՝ հանդարտ և հաստատ զղջմամբ · քան թէ դառն, զկծական, և զայրացական զղջմամբ ։ Զի այսպիսի զղջմունքս և փոշիմանութիւնս, որք առնանին խստութեամբ և սաստկութեամբ, ոչ առնանին ըստ ծանրութեան սխալանաց մերոց · այլ ըստ հակեցման յօժարութեանց մերոց ։ Զոր օրինակ · այն որ է ըղձական ողջախոհութեան · մեծագոյն տհաճութեամբ զայրանայ սակս փոքեր սխալանաց, զոր արարեալ է ընդդէմ նոյն ողջախոհութեան · սակայն յոչ ինչ համարի զծանրագոյն բամբասանս՝ զոր առնէ ։ Եւ հակադարձապէս · այն որ ատէ զբամբասանս և զչարախօսութիւնս, յոյժ վրդովի ասելով զթեթև բամբասանս ոմանս · բայց ոչինչ համարի զմեծագոյն մոլութիւնս արարեալ ընդդէմ ողջախոհութեան ։ այսպէս իմա՛ և զայլոց ։ Եւ այս ոչ պատահի այլուստ, եթէ ոչ

յայսմանէ, զի ոչ գտանեն զխղճմտանս իւրեանց բանականութեամբ, այլ ախտիւ:

* Հաւատամ ինձ. ով խանդակաթդ առաքինութեան. զի ոչ յանդիմանութիւնքն, որք քաղցրութեամբ և սիրով արարեալք լինին 'ի հօրէ միոյ, զմեծագոյն հեղինակութիւն ունին 'ի վերայ որդւոյ՝ առ 'ի ուղղել զնա, քան զայնս՝ որք բարկութեամբ և սրտմտութեամբ արարեալք լինին: Այնպէս ես 'ի առնելն սրտի մերոյ զխալմունս ոմանս. եթէ քաղցրապէս յանդիմանիցեմք և հանդարտաբար խրատիցեմք զնա, ունելով դէպ առ նա զցաւակցութիւն, քան թէ զսրտմտական ախտս. և ևս յորդորելով առ ուղղութիւն և առ զղջումն, զոր նա յղանայ: Այսպիսի խրատս առաւել լաւապէս թափանցի 'ի ներքս նորին, քան զզայրացական, զսրտմտական, և զպառական յանդիմանութիւնս:

* Արդ որքան առիս. եթէ ես ունիցէի զմեծագոյն իղձ՝ առ 'ի ոչ անկանիլ 'ի մոլութիւն ունայնասիրութեան: և սակայն այսու ամենայնիւ անկանիցէի անդ. ոչ թեթևապէս, այլ ծանրապէս: Իբրու ես յայնժամ ոչ կամէի այսու կերպիւ յանդիմանել զսիրտն իմ ասելով. Ով հոգի իմ. մի՞ թէ ոչ ես դու ողորմելի, գարշելի, և զզուելի ոք. որ յետ այնքան առաջադրութեան՝ զոր արարեր, թողուս զքեզ յաղթիլ 'ի մոլութենէ յայսմանէ: Մեռի՛ր 'ի յամօթոյ, մի՛ բարձրացուցաներ զաչս քո 'ի յերկինս. ո՛վ կոյր. անամօթ. լիրբ. մատնիչ. և անհաւատարիմ դէպ առ Աստուածն քո: Այլ մանաւանդ կամէի ուղղել զնա քաղցրութեամբ, և ցաւակցական եղանակաւ՝ ասելով: Աղէ՛. տե՛ս ո՛վ աղքատ և ողորմելի սիրտ իմ. զի մեք անկեալ եմք 'ի վիհն, յորմէ բազմիցս զգուշանալ առաջադրեցաք: Ո՜հ. ելցուք 'ի վեր, և թողցուք զնա միշտ բոլորովին. դիմեսցուք առ ողորմութիւն Աստուծոյ, և յուսասցուք 'ի նա. զի նա օգնէ մեզ՝ առ 'ի լինիլ ապագայն

առա-

առաւել հաստատուն, և կայուն. և դիցուք ըզ
մեզ 'ի ճանապարհի խոնարհութեան: Աճապարեա
ցուք այսուհետև յառաջանալ 'ի մեզ. և յառա
ջադէմ լիցուք, զի ած օգնէ մեզ: Եւ կամիմ ես
կազմել զհաստատ, և զկայուն առաջադրութիւն
իմն՝ առ 'ի ոչ անկանիլ վերստին 'ի խորխորատն մո
լութեան. առնելով առ այս զպատկանաւոր դեղ,
և զհրատ՝ խոստովանահօրն իմոյ:

Բայց սակայն. եթէ այսու ամիք տակաւին ոչ
շարժի սիրտն քո բաւականապէս. կարես յայն_
ժամ յանդիմանել զնա խստագոյն և զօրեղագոյն
կշտամբութեամբ իմն, առ 'ի զարթուցանել զնա առ
խորին ամօթահարութիւն իմն: Զի թերևս զկնի
խստամբս յանդիմանեցելոյ գոլոյ սրտի քոյ. դիւրա
պէս յառաջադրեսցէ, եղերելով զբոլոր վիշտն,
զնեղութիւն, և զայրացումն իւր, քաղցր և սուրբ
ապաւինութեամբ իմն 'ի յած: Հետևելով մեծագոյն
ապաշխարողին այնորիկ, որ գոլով հոգի նորին
վշտացեալ, այսու կերպիւ մխիթարէր զնա:
Ընդ է՞ր տրտում ես անձն իմ. և ընդ է՞ր խռովես
զիս: Յուսա առ ած. խոստովանեա նմա. փրկիչ ե_
րեսաց իմոց ած է:

* Մխիթարեա ուրեմն քաղցրապէս զսիրտն քո,
մինչ նա անկանի. առաւել խոնարհեցուցանելով
զքեզ առաջի այ. ճանաչմամբ քոյոյ թշուառու
թեան. առանց երկիւղի և զարհուրանաց քոյոյ անկ
ման: Որովհետև այս ոչ է զարմանալի իր. թէ
հիւանդն իցէ հիւանդ. տկարն իցէ տկար. և
թշուառն իցէ թշուառ: Բայց սակայն արհա_
մարհեա և խոտեա ընաւ իւք զօրութեամբ քով՝ ըզ
վշտացումն, զոր ած ընկալար 'ի քէն: և մեծա
սրտի ապաւինեա 'ի յողորմութիւն նորա. և
դարձիր առ 'ի հետևիլ առաքինութեանց, զորս
թողեր:

## Յաղագս թէ պէտս է ջանացողութե, և առանց նեղութեան և վնասակար խորհրդոց՝ ձեռանամուխ լինել 'ի գործս:

### Գլուխ. Ժ:

Հոգն և ջանացողութիւն, զոր մեք պարտիմք ունել 'ի գործս մեր. են յոյժ զանազանք 'ի վնասակար հոգոց և զբաղանաց: Հրեշտակքն ունին զհոգ վ՟ փրկութե մերոյ, և հոգան զնմանէ ջանացողաբար: բայց այսու ամ՟ի ոչ ունին զզբաղումն, զվնասակար խորհուրդ, զնեղութի, և զձանձրութի ինչ: Վ՟ զի հոգն, և ջանացողութիւն՝ վերաբերի առ սէրն նոցին: բայց զբաղումն, նեղութիւն, և ձանձրութիւն, բոլորովին ներհակք են երջանկութե նոցին: Որովհետև հոգն, և ջանացողութիւն՝ կարեն ընկերակցիլ ը՟ անդորրութե, և խաղաղութե հոգւոյ: բայց ոչ երբեք կարեն զբաղումն, և ձանձրացումն, և յոյժ առաւել նեղութիւն:

* Լեր ուրեմն ջանունակ և պատրաստ 'ի բնաւ գործս քո, առ որս ունիս զպարտաւորութի: Զի ամծ՝ առ որ ապաւինիս, կամի զի ունիցիս զմեծ հոգունակութի: բայց եթէ կարելի իցէ՝ ոչ ունիցիս զզբաղումն, և զնեղութի: Այսինքն. կամի զի մի՛ ձեռնամուխ լինիցիս 'ի գործ ինչ՝ անհանգստութը, և շտապելով. և մի՛ ձանձրացուցես ևս կէտ մի զքեզ՝ 'ի կատարելն զնա: Քանզի ամ՟ տեսակ ձանձրութե, վրդովէ զբանականութիւն, և զմիտքն. նաև արգելու զմեզ առ 'ի բարեպէս առնել և զայնս, որք ոչ ձանձրացուցանեն զմեզ:

Յորժամ Տէրն մեր յանդիմանեաց զարբուհին մարթա, այսպէս ասաց նմա: Մարթա՛, Մարթա. դու հոգաս՝ և զբաղեալ իմիք զբաղեալ ես: Արդ տե՛ս ուրեմն. եթէ նա իցէր պարզապէս ջանունակ, ոչ զբաղէր և վրդովէր: այլ զի էր անհանգիստ, և ձանձրացեալ, վնկ զբաղէր և ամբոխէր. որոյ վասն Տէրն մեր յանդիմանեաց զնա: Գետքն, որք ծաւալին մեղմաբար, և գնան հանդարտապէս 'ի հարթայատակ դաշտի. տանին ըզմեծամեծ նաւս, և զմեծագին վաճառս: Եւ անձրևքն, որք մեղմաբար իջանեն 'ի դաշտս և 'ի յանդս, առատացուցանեն և զարդարեն զայնս բազմութբ պտղոց, և ցորենոց: Բայց հեղեղատքն, որք մեծագոյն ուժգնութբ ընթանան և վազեն 'ի վր երկրի. աւերեն զմերձակայ դաշտս. նաև անօգուտք են արտօրէից: այսպէս և մրրկալի անձրևքն, որք իջանեն ուժգնութբ, ապականեն զդաշտս, և զայգիս: Իր ինչ՝ որ առնանի շտապելով և վռազելով, ոչ եղանի բարեպէս: Պիտոյ է, զի եղերիցի ամ ինչ հանդարտաբար և մեղմապէս, որպ ասէ հին առակն: Վսյ ասէ սաղոմոն. Որ փութաջան է ոտիւք գայթակղի: ուստի մեք ոչ երբեք առնեմք բարեպէս, մինչ առնեմք շտապօրէն: Պիծակքն առնեն առաւել շշնչմունս և զազմուկս քան զմեղուս. նաև են առաւել արագագոյնք քան զնս. բայց առնեն միայն զմոմս, և ոչ զմեղրս: Այսպէս և այնոքիկ, որք շտապին վառել խրհրդով, և աղմկական վրդովմութբ իմն, ոչ կարեն երբեք առնել զմեծ բարի:

* Ճանճքն ոչ ձանձրացուցանեն զմեզ 'ի ձեռն զօրութե իւրեանց, այլ 'ի ձեռն բազմութեան: Այսպէս և մեծագոյն գործքն և արարքն, ոչ այնքան վրդովեն զմեզ. որ քան վրդովեն փոքրագոյնքն, մինչ են բազմաւոր թուով: Ընկալ ուրեմն հանդարտութբ զայնս գործառութիս,

որք

որք պատկանին քեզ . և ջանայ կատարել զնո̄ կարգաւ՝ մինն զկնի միւսոյ : Վ̄ զի եթէ կամիցիս առնել զնոսա համանգամայն և առանց կարգի . յայնժամ զայնքան բռնութիւնս և ստիպմունս առնես դու ինքնին քեզ , մինչ զի նուաղեալ հեղձուցանես և տկարացուցանես զմիտքն քո : Ուստի որքան առ քեզ , մնաս դու ըստ կարգի քում՝ նուաղեալ 'ի ներքոյ ծանրութեան , և առանց պտղոյ :

* 'Ի բնաւ գործս և յառս քո , յեցեալ լեր բոլորովին 'ի նախախնամութեն այ , որոյ միայնակ միջնորդութե̄ն ամ̄ գործք քո պարտին առնուլ զվախճան : Բայց սակայն 'ի կողմանէ քումմէ աշխատեա և ջանա դու , առ 'ի չափաւորապէս գործակցիլ նմա : Եւ յետոյ հաւատա ինձ . զի եթէ բարեպէս յեցեալ և ապաւինեալ իցես 'ի յա̄ծ . այն ամենայն որ պատահի քեզ , միշտ լաւագոյն լինի վ̄ քո : Թէպէտ թէև թուի քեզ բարի , կամ չար , ը̄ մասնաւոր ենթադատութե̄ քոյ : Լե՛ր հանգոյն մանկանց այնոցիկ , որք միով ձեռամբ յեցեալք լինին առ հայրն իւրեանց , և միւսովն ժողովեն զմորս , և զթութս 'ի բարձրագոյն ցանգոյ այգեստանեաց : Այսպէս և դու ժողովելով , և ուտելով զբարիս աշխարհիս այսորիկ՝ միով ձեռամբ քով . միւսովն յեցեալ լեր 'ի ձեռս երկնաւոր հօրն : Դառնալով առ նա երբեմն՝ առ 'ի տեսանել . թէ արդեօք հաճելիք իցեն նմա զբաղմունք , և գործք քոյք : Եւ 'ի վեր քան զբնաւս՝ զգոյշ լեր առ 'ի ոչ թողուլ զձեռն , և զնախախնամութիւն նորին , 'ի ժողովելն և 'ի քաղելն զաւելորդս : Վ̄ զի եթէ նա թողցէ զքեզ , ոչ կարես առնել գոնեայ զքայլ մի՝ թարց անկանելոյ երեսօք առ երկիր :

* Կամիմ ասել . ով խանդակաթդ առաքինութեան . թէ մինչ դու լիցիս 'ի մէջ գործառութե̄ ,

և

և հասարակ զբաղմանց, որք ոչ պահանջեն զայն քան սաստկագոյն մտադրութիւն. յայնժամ առաւել նկատեա դու 'ի յԱստուած, քան 'ի գործառութիւնս քո ։ Եւ յորժամ գործառութիւնք քո՝ այնքան հարկաւորք են, մինչ զի պահանջեն զբոլոր ուշադրութիւն և մտադրութիւն քո, առ 'ի լաւապէս առնել. յայնժամ նկատեա 'ի յԱստուած ժամանակէ 'ի ժամանակ ։ Որպէս և առնեն այնոքիկ, որք նաւարկելով 'ի ծովու, առ 'ի ժամանել և հասնել յերկիրն իւրեանց՝ առ որ փափաքեն. առաւել հային 'ի վեր յերկինս, քան 'ի խոնարհ 'ի ծովն, ուր նաւարկեն ։ Այսպէս առնելով, Աստուած գործէ քեւ, 'ի քեզ, և վասն քո ։ Նաև աշխատանքն քո ընկերանայ, և հաղորդակցի միութեան ։

## Յաղագս հնազանդութեան ։

### Գլուխ. ԺԱ ։

Միայն սէրն տայ մեզ զկատարելութիւն. բայց հնազանդութիւն, ողջախոհութիւն, և աղքատութիւն. են երեք մեծագոյն միջոցք առ 'ի ստանալ զնա ։ Հնազանդութիւն նուիրէ և մատուցանէ սիրոյ, և ծառայութեան Աստուծոյ՝ զկամսն մեր. ողջախոհութիւն զմարմինն մեր. և աղքատութիւն զբարիսն մեր ։ Այսոքիկ են երեք հոգևոր բարունակք խաչին. սակայն սոյն երեքեանքս 'ի միասին հիմնեալք են 'ի վերայ չորրորդին, որ է խոնարհութիւնն ։ Արդ ես ոչ խօսիմ վասն առաքինութեանցս այսոցիկ, ըստ որում են հանդիսաւորապէս ուխտեցեալք. զի այս պատկանի առ կրօնաւորս ։ Եւ ոչ ևս՝ ըստ որում են պարզապէս ուխտեցեալք ։ վասն զի թէպէտ ուխտն միշտ ա-

ռակ-

ռակցէ զբազում շնորհս, և արդիւնս առ գործն: Սակայն առ որ ես դիտեմ, ոչ է հարկաւոր՝ զի արարեալք իցեն այնք ուխտին, կամ առանց ուխտի. այլ միայն զի պահիցին: Քանզի մինչ առնանին նոքա ուխտին. և յատկապէս հանդիսաւոր ուխտին, դնեն զմարդն 'ի կացութեան կատարելութեան: Սակայն այսու ամենայնիւ առ 'ի դնել զնա 'ի կատարելութեան, բաւական է զի պահիցին. գոլով մեծագոյն զանազանութիւն 'ի մէջ կատարելական կացութեան, և կատարելութեան: Որովհետև ամ եպիսկոպոսք, և կրօնաւորք, են 'ի կատարելական կացութեան: բայց սակայն ոչ ամենեքեան են 'ի կատարելութեան, որպէս արդէն տեսանի: Ջանասցուք ուրեմն. ո՛վ խանդակաթդ առաքինութեան. կրթիլ բարեպէս 'ի յերիս առաքինութիւնս այսոսիկ, իւրաքանչիւր ըստ կոչման մերում: Զի թէպէտ թէև ոչ դնիցեն նոքա զմեզ 'ի կացութեան կատարելութեան. սակայն տան մեզ զնոյն ինքն կատարելութիւնն: Եւ այսպէս՝ մեք բնաւքս պարտաւորեալ եմք 'ի կրթութիւն երից առաքինութեանց այսոցիկ: սակայն պարաւանդեալ եմք 'ի գործածել զայնս ըստ կացութեան, և ըստ կերպի մերոյ:

* Արդ են երկու տեսակ հնազանդութեան. մինն հարկաւոր, և միւսն կամաւոր: 'Ի ձեռն հարկաւոր հնազանդութեան՝ պարտիս դու հնազանդիլ եկեղեցական մեծաւորաց քոց: Զոր օրինակ. Սրբազան պապին. Եպիսկոպոսին. Հոգաբարձու քահանային. նաև այնոցիկ, որք են փոխանորդք նոցին: Այլ և պարտիս հնազանդիլ քոց քաղաքական մեծաւորաց: այսինքն. մեծագոյն իշխանին. և դատաւորաց, զորս նա կարգեալ է 'ի քաղաքի քում: Եւ վերջապէս պարտիս հնազանդիլ դու ընտանի մեծաւորաց քոց: Հ՛բար. հօր, մօր, տեառն, և տիկնոջ: Արդ այս հնազան

դու

դութիւնս կոչի հարկաւոր . զի ոչ կարէ բացառացեալ ոք զինքն 'ի պարտաւորութէ հնազանդութե այսպիսի մեծաւորաց : Վս՟ զի ած՟ տուեալ է նց՟ զհեղինակութիւն առ 'ի հրամայել և կառավարել զմեզ, ըստ իւրաքանչիւր պաշտօնի իւրեանց, զորս ունին 'ի վր՟ մեր :

* Կատարեա՛ ուրեմն զհրամանս նոցին . զի այս է հարկաւոր : բայց առ 'ի լինել կատարեալ, հետևեա՛ ևս խրատուց, և խորհրդոց, նաև յօժարութե նոցին, ըստ որում թոյլատրէ քեզ սէրն, և խոնարհութիւնն : Հնազանդ լեր ևս՝ մինչ հրամայեն քեզ զիրս առ 'ի ճաշակել . ք՟ առ 'ի ուտել, ըմպել, ուրախանալ, և մխիթարել : Զի թէպէտ թուի թէ՝ ոչ իցէ մեծ առաքինութիւն հնազանդիլն առ այսպիսի պատահմունս : սակայն մեծագոյն մոլութիւն է ոչ հնազանդիլն : Հնազանդ լեր նաև 'ի յիրս անզանազանս . ո՛ր գոն . զզգենուլ զայսպիսի, և զայնպիսի զգեստս . գնալ այսու, կմ՟ այնու ճանապարհաւ . երգել, և կմ՟ լռել . զի այս է յոյժ գովելի հնազանդութիւն իմն : Հնազանդ լեր նաև 'ի յիրս դժուարինս, զի այս է հնազանդութիւն իմն կատարեալ : Վերջապէս . հնազանդ լեր քաղցրապէս՝ առանց կրկնելոյ . յօժարապէս՝ առանց յապաղման . ուրախապէս՝ առանց տհաճութե : Եւ՟ 'ի վեր քան զամ՟ . հնազանդ լեր սիրով . վն՟ սիրոյ այնորիկ, որ յաղագս սիրոյ մեր՝ հնազանդ եղև մահու չափ՝ և մահու խաչի : Զորմէ ասէ բեռնարդոս . թէ կամեցաւ մանաւանդ կորուսանել զկեանքն, քան զհնազանդութիւնն :

* Արթիլ առ 'ի դիւրապէս հնազանդիլ մեծաւորաց . զիջանիլ կամաց քոյոց հաւատարաց . և հաւանիլ կարծեաց նոցին՝ որ ոչ է չար, թարց մաքառելոյ և խստանալոյ . է լաւագոյն հնազանդութիւն : Համաձայնեա՛ զքեզ կամաւորապէս

ընդ

ընդ կամաց ստորինագունից քոյոց , ըստ ուրում թոյլատրէ քեզ բականութիւնն , թարց կերարկելոյ զհրամայողական հեղինակութի ՚ի վր նց , մինչ բարեպէս կենցաղավարին : Զի այս է անդէպութի ինն . հաւատալ՝ թէ կրօնաւորքն , և կամ կրօնաւորուհիքն դիւրապէս հնազանդին . և ինքն գտանիցի խիստ և դժուար՝ առ ՚ի տալ հնազանդութիւն այնոցիկ , զորս Տէր կացոյց ՚ի վերայ մեր :

* Մեք զայն կոչեմք կամաւոր հնազանդութիւն , առ որ պարտաւորիմք յատուկ ընտրութբ մերով . և կամ որ ոչ է եդեալ ՚ի յայլոց : Հասարակապէս՝ ոչ ոք ընտրէ զծնողսն իւր , զեպիսկոպոսն իւր , զհայրն և զմայրն իւր . և բազմիցս ևս զկողակիցն իւր : բայց իւրաքանչիւր ոք ընտրէ զխոստովանահայրն , և զհոգևոր առաջնորդն իւր : Արդ ՚ի ընտրելն ոք զնա , եթէ արասցէ նմա ուխտ հնազանդութեան , ոպ և արար երանելի մայրն Թէկղա . որ բաց ՚ի հնազանդութէն՝ զոր ուխտիւ արարեալ էր առ մեծաւորն կարգի իւրոյ . պարտաւորեաց նաև զինքն պարզադոյն ուխտիւ միով , առ ՚ի հնազանդել կրացիանոս հօրն : կամ թէ թարց ուխտի նուիրիցէ զինքն ՚ի հնազանդութի ումեք : միշտ այսպիսի հնազանդութին կոչի կամաւոր , պատճառաւ հիման իւրոյ . որ կախի ՚ի յընտրութէ , և ՚ի յուխտէ մերմէ :

* Պիտոյ է հնազանդել ամ մեծաւորաց . սակայն իւրաքանչիւրոց ըստ պաշտօնի , և ըստ հեղինակութե , զոր ունին ՚ի վր մեր : Զոր օրինակ ՚ի յայնս , որք հային ՚ի ժամանակաւոր կենցաղավարութիս , և ՚ի քաղաքական իրս . պիտոյ է հնազանդել իշխանաց : Եւ՛ ՚ի յայնս , որք նկատեն ՚ի յեկեղեցական կացութիս և իրակութե . առաջնորդաց : Եւ՛ ՚ի յայնս , որք դիտեն առ ընտանեկան համաբնակութիս . ծնողաց , և տեարց : Բայց որքան

առ

առ մասնաւոր առաջնորդութեան հոգւոյ · յատկագոյն խոստովանահօր, և հոգաբարձուին ։

* Կարգադրեա՛ զբարեպաշտական գործս, զորս ընկալցիս դու 'ի հոգևոր հօրէ քումմէ, առ 'ի կատարել · զի եղիցին բարեգոյնք, և ունիցին զկրկին շնորհ, և բարութիւն ։ Մինն ըստ ինքեան · ը՛ որում են առաքինական և բարեպաշտական գործք ։ Եւ՛ միւսն վասն հնազանդութեան · զոր կարգաւորէ զգործս, զի լինիցին զօրութեամբ հնազանդութեան ։

## Յաղագս հարկաւորութեան Հնազանդութեանն ։

### Գլուխ · ԺԲ ։

Ողջախոհութիւն է շուշան առաքինութեանց ։ սա առնէ զմարդն իբր հաւասար հրեշտակաց ։ Ոչինչ է գեղեցիկ, եթէ ոչ 'ի ձեռն մաքրութեան · բայց մաքրութիւն մարդկանց է ողջախոհութիւն ։ Ողջախոհութիւն կոչի համեստութիւն · և ուխտելոց նորին կոչի պատիւ ։ Սա կոչի ամբողջութիւն, և ներհակն սորին ապականութիւն ։ Վերջապէս · սա ունի զբոլոր փառքն և զպայծառութիւն յինքենէ, առ 'ի գոլ գեղեցիկ ըստ հոգւոյ, և ըստ մարմնոյ ։

* Ոչ երբէք ճահէ առնանիլ գործ ինչ հեշտութեան 'ի մարմնոյ մերոյ, որով և իցէ կերպիւ · եթէ ոչ 'ի յօրինաւոր ամուսնութեան · որոյ սրբութիւն կարէ արդար տնօրինմամբ բուժել զխասան, որք զգացեալք լինին 'ի հեշտութեան նորին ։ Նաև պիտոյ է պահել զհամեստութիւն դիտաւորութեան 'ի յամուսնութեան ։ Զի եթէ իցէ անդ կիրառ կե-

կեցեալ անպատշաճութիւն իմն, եղիցի համես_
տութիւն 'ի կամս:

* Ողջախոհութին է ոչ զսատափ մարգարտոյ, որ ոչ կարէ ընունիլ զայլ կաթիլ իմն ջրոյ, եթէ ոչ զայն՝ որ իջանէ յերկնից: Զի ոչ կարէ ընդունիլ զայլ հեշտութին իմն, եթէ ոչ զայն միայն, որ գործածի 'ի յամուսնութե. որև կարգադրեալ է 'ի յերկնից: Արտաքոյ ամուսնութե ոչ է նմա պատկանաւոր, դոնեայ մտածել զնա
վավաշոտական, և կամաւոր խորհրդով:

* Որդ՝ առաջին ատրճանաւն այսորիկ առաքինութեան՝ ո՛վ խանդակաթդ. զգուշացիր դու առ 'ի ընունիլ զոեսակ իմն հեշտութե, որ է արգելեալ: Որպիսիք են այնք ընաւք, որք առնանին արտաքոյ ամուսնութե, և կա՛ ևս 'ի յամուսնութե.
մինչ առնանին ընդէմ կանոնի ամուսնութե:

* Երկդ ատրճանաւն՝ որքան կարելի իցէ քեզ, հատ 'ի քէն զանօդուտ, և զաւելորդ հեշտութիս.
թէև իցեն ճահաւորք, և թոյլատրեցեալք:

* Երրորդին, մի՛ ըղձահարիր առ հեշտութիս, և փափկութիս. թէ ևս հրամայեցեալք, և կարգադրեցեալք իցեն: Վ՞ զի թէպէտ պիտոյ է 'ի գործածել զհարկաւոր հեշտութիս. պր̃ զայնս՝ որք հային 'ի վախճան, և 'ի կացուցումն սր̃ ամուսնութե: Սակայն ոչ է պիտոյ այսու աղա_
դաւ կապակցիլ 'ի նա սրտիւ, և մտօք:

* Բայց 'ի մնացեալս՝ ամ̃ ոք ունի զմեծագոյն հարկաւորութի առաքինութեես այսորիկ: Վ՞ զի այնոքիկ, որք են 'ի յայրիական կացութե. պարտին ունիլ զմի կորովի ողջախոհութի. ոչ միայն առ 'ի արհամարհել զներկայ, և զապառնի առարկայս: Այլ նաև ընդդիմանալ պատկերակերպութեցն, զորս ընկալեալք են 'ի ճահաւոր հեշտութէ ամուսնական գործոյ, որք կարեն ծնանիլ 'ի միտս նց. քղի 'ի ձեռն այսոցիկ դիւրինք և յօժարք լինին

առ 'ի

առ 'ի անկանիլ 'ի վավաշոտութիւն։ Ուստի՝ այսու աղագաւ զարմանայ ս՟ն օգոստինոս 'ի վ՟ր մաքրութ՟ն ալփոս բարեկամի իւրոյ. որ ը՟ ա՟մի մոռացեալ էր զմարմնական հեշտութիւս, զորս թէև փորձառեալ էր յերիտասարդութ՟ն իւրում։ Եւ զի թէպէտ պտուղքն մինչ են ամբողջք ; կարեն բարեպէս պահպանիլ՝ ոմանք 'ի յարդս, ոմանք 'ի յաւազս, և ոմանք ևս 'ի յատուկ տերևս իւրեանց։ Բայց գոլով ապականեալ միանգամ 'ի մի կողմն, այնու իբր անկարելի լինի պահպանումն նոցին՝ աւանդ համեմելոյ, և տագորելոյ ը՟նդ մեղրով, և կամ շաքարով։ Այսպէս և ողջախոհութիւն՝ մինչ տակաւին ոչ է ապականեալ և շօշափեալ, կարէ պահպանիլ բազում կերպիւ։ Բայց գոլով միանգամ վիրաւորեալ. ոչ ինչ իր այնուհետև կարէ զնա բարեպէս պահպանել, եթէ ոչ գերազանցագոյն ջերմեռանդութ՟ի իմն. ը՟ որում ո՟պ բազում անգամ ասացի՝ է շաքար և մեղր հոգւոյ։

* Լա՛ կուսանքն պարտին ունիլ զայնպիսի ողջախոհութ՟ի, որ իցէ առաւելապէս մաքուր և փափուկ, առ 'ի մերժել 'ի սրտից իւրեանց զա՟մ կերպ հեշտաքրքիր մտածմունս, և առ 'ի արհամարհել զընդաւ տեսակս աշխարհային հեշտութեանց՝ 'ի ձեռն միոյ բացարձակ արհամարհութեան ։ Որ արդարև ոչ արժեն նաև այնպիսի հեշտութիւնքն ըղձակերտեցեալք լինել 'ի մարդկանէ. որովհետև էշք, և խոզք ևս ընդունակք են նոցին։ Ուրեմն պարտին բարեպէս նկատել մաքուր անձինքն այսոքիկ՝ կալով ևս յաւէտ 'ի կասկածանս. թէ ողջախոհութիւն է անբաղդատելապէս լաւագոյն ; քան զա՟մ անբաղդատելիս։ Զի ո՟պ ասէ ս՟ն հերոնիմոս. թէ թշնամին՝ յաւէտ խստութ՟բ մորակէ և գրգռէ զկուսանս, առ իղձն հեշտութ՟ց, երևակերպելով նո՟ց զայնս առաւել հեշտալի գոլ, քան թէ իցեն։ Զի այնու առաւել անձկացու-

ցէ, և չարչարեսցէ զնս՟ : որովհետև ասէ սոյն սբ՟ հայրս. թէ նոքա առաւել քաղցր համարին զայն, զոր ոչ փորձառեալ են : Քանզի որպ՟ լուսախնդիր թիթեռնիկն՝ մինչ տեսանէ զլոյսն ճրագին, հետաքրքրապէս գնայ թռչելով շուրջ զնովաւ՝ առ ՚ի փորձառել, թէ արդեօք իցէ այնպէս քաղցր՝ որպ՟ և է գեղեցիկ. և ստիպեալ ՚ի յերևակայութէ իւրմէ, ոչ դադարի՝ մինչև կորիցէ առաջին փորձառութբն: Այսպէս և երիտասարդք՝ բազմիցս այնպէս թողանեին տանիլ և պատրիլ ՚ի սուտ և ՚ի յիմար կարծեաց, զոր ունին զհեշտութէ զգայական բոցոյ. մինչ զի զկնի բազմաց հետաքրքիր խնդրոց, գնան փորձառել զնա առ ՚ի կորնչիլ: Առաւել յիմարք երևելով յայսմիկ, քան զթիթեռնիկս: Վս՟ զի այնոքիկ ունին զառիթ իմն երևակերպելոյ. թէ հուրն իցէ հեշտալի, որովհետև այնպէս գեղեցիկ է: Բայց սոքա գիտելով. թէ զայն՝ զոր խնդրեն, է ՚ի ծայրագոյնի անհամեստութե. այսու տակաւին ոչ թողուն զմեծ իմն համարիլ զմոլեկան և զագեղ հեշտութիւն:

* Բայց որքան առ այնոսիկ, որք են ամուսնացեալք. այս է ճշմտոյն իր (թէպէտ թէև դռեհիկքն ոչ կարեն պատկերակերպել.) թէ ողջախոհութիւն յոյժ հարկաւոր է վս՟ նոցեանց: Վս՟ զի բացարձակապէս ոչ կայանայ ՚ի նս՟ ժուժկալել ՚ի մարմնական հեշտութեց, քան պահելն ՚ի նոսա զբարեխառնութի: Եւ զի թէպէտ ճշմարիտ է այս. թէ սբ՟ հրամանն և թոյլատրութիւն ամուսնութե, ունի զմասնաւոր զօրութի իմն առ ՚ի շիջուցանել զհուրն ցանկութեան: Բայց տկարութիւն այնոցիկ՝ որք վայելեն զնա, դիւրապէս անցանէ ՚ի թոյլատրութէ առ սանձարձակութիւն. և ՚ի կարգաւորապէս կիրառմանէ՝ ՚ի յանկարգ կիրառութի: Եւ որպ՟ տեսանին բազում փարթամք և հարուստք՝ որք միշտ գողանան. ոչ վս՟

պի-

պիտոյութե՛ն, այլ վ̅ ադահութե՛ն: Այսպէս և ս տեսանի՛ն բազում ամուսնացեալ անձինք, լինիլ վավաշոտք և սանձարձակք՝ միայն վ̅ անբարե_ խառնութե՛ն և հեշտասիրութե՛ն. ոչ կարելով համ դարտիլ օրինաւոր ենթակայիւ՛, յորում կարէին, և պարտէին կայանալ: Վասն զի ցանկութիւնն գոլով որպէս անկայուն հուր իմն, վազէ աստ և անդ այրելով, առանց կայառութե՛ն յիմիք տեղ_ ւոջ: Քանզի ո՛չ է միշտ որոգայթաւորագոյն իր, ըմպել և ուտել զզօրեղագոյն և զըռնագոյն դեղս: Վ̅ զի եթէ ըմպիցեն առաւել՝ քան զոր պիտոյ է. և կամ թէ գուցէ ոչ իցեն բարեպէս պատրաստեցեալք, ընդունին զմեծագոյն վնաս: Այսպէս՝ և ամուսնութի՛ն է օրհնեալ և կարգա դրեալ դեղ ընդդէմ ցանկութե՛ն, և թարց երկ_ բայութե՛ է օգտաւէտ ապեղանի իմն: Բայց է զօրեղա գոյն և բռնաւոր. և հետևա՛պս որոգայթաւորա գոյն՝ եթէ խոհեմապէս ոչ 'ի կիրարկանիցի:

* Ըռակցեմ և ես 'ի ասել. թէ բաց 'ի յերկար հի՛անդութենց. նաև բազմիցս զանազանութիւնն գործառութեանց, առից և տրոց. հեռացու_ ցանեն զայս 'ի կանանց իւրեանց: Ե՛ վ̅կ ամուս նացելոց պիտոյ է ունիլ զերկու տեսակս ողջախո հութե՛: Մինն՝ վ̅ բացարձակ ժուժկալութե՛, մինչ հեռացեալք և անջատեալք են 'ի միմեանց, այնու առթիւ՛ զոր ասացի: միւսն վ̅ բարեխառ նութե՛, մինչ են 'ի միասին 'ի հասարակ և 'ի սահ մանեալ կացութե՛ իւրեանց: Սրբուհի կատարի նէ սենացին, ճշմարտապէս ետես 'ի մէջ դատա_ պարտեցելոցն՝ զբազում հոգիս մեծապէս տան_ ջիլ, վ̅ ապականելոյ զամուսնական սրբութի՛ն: Որ պատահեալ էր այս նց̅. ո՛չ ասէ նա. ոչ վ̅ յաւէտ մեծութե՛ն մեղաց (որովհետև մարդաս պանութիւնքն, և հայհոյութիւնքն առաւել դար_ շելիք, և մեծագոյնք են;) այլ՝ զի այնորիկ ան_

ձինք, որ զայսպիսիս գործեն՝ ոչ խղճահարին, և հետևապէս յարատևեն 'ի յայնս երկարաբար:

* Արդ ուրեմն պարտիս տեսանել դու. թէ ողջախոհութիւնն հարկաւոր է ամ ցեղ մարդկան: Զխաղաղութէ հետեւեցարուք ընդ ամենեսին և զսրբութէն՝ (ասէ առաքեալն) առանց որոյ ոչ ոք տեսանէ զՏր: Արդ սրբութին իմանի աստ՝ ողջախոհութին. որպ ասեն սրբն հերօնիմոս, և ոսկեբերան: Ոչ ոք կարէ տեսանել զԱծ. ո՛վ խանդակաթդ առաքինութեն՝ թարց ողջախոհութե. և ոչ ոք կարէ բնակել 'ի սրբազոյն խորանի նորին, որ ոչ իցէ մաքուր սրտիւ: Զի շնացօղք և անպարկեշտք՝ արտաքսին յայնմանէ. որպ և ասաց ամենափրկիչն մեր. Երանի որք սուրբք են սրտիւ. զի նոքա զԱծ տեսցեն::

## Զգուշութիւնք և խրատք՝ վս պահպանելոյ զողջախոհութիւնն:

## Գլուխ. ԺԳ:

Ի վեր քան զամ՝ յօժար և պատրաստ լեր առ 'ի խոյս տալ և փախչել յամից ճանապարհաց, և հակեցմանց առ վավաշոտութե: Քանզի այս չարս գործէ զեղեռն իւր անզգալապէս. և 'ի ձեռն փոքրագոյն սկզբան՝ առնէ յառաջացումն 'ի մեծամեծ պատահմունս: Եւ միշտ առաւել դիւրին է փախչել 'ի նմանէ, քան թէ բուժել զնա: Մարդկային մարմինքն նմանք են ապակեաց, որք ոչ կարեն տարեալք լինել 'ի միասին, զի շօշափելով զմիմեանս՝ անկանին 'ի յորոգայթս բե-

ընկալնելոյ ։ Նաև պտուղքն Թէ և որքան իցեն ամբողջք ՚, և բարեգոյն կազմողութեամբք, ՚ի շօշափելն զերեսս՝ յոյժ վնասեն ։ Եւ սառնագոյն ջուրն ևս՝ գոլով ՚ի միում անօԹոջ, ՚ի շօշափելն յերկրայի֊ն կենդանեայ իմեքէ, ոչ կարէ երկարապէս պահել զսառնութիւն և զԹարմ գոյն իւր ։ Մի՛ Թոյլատրեր երբէք. ո՛վ խանդակաԹդ առաքինութիւն. զի շօշափեսցէ ոք զքեզ անբարոյականապէս. ոչ կերպիւ խեղկատակելոյ, և ոչ կերպիւ խանդաղատելոյ ։ Զի Թէպէտ Թէև կարիցէ պահպանել ողջախոհութիւն ՚ի մէջ այսպիսեաց արարմանց. մանաւանդ մինչ իցեն ԹեԹևագոյնք, և ոչ վատԹարագոյնք ։ Բայց սակայն միշտ ընդունի յայնցանէ զնուաս և զկորուստ՝ Թարմագոյն ծաղիկն ողջախոհութեան ։ Բայց Թոյլատրել շօշափել անհամեստօրէն. այս լինի գլխաւորական կործանումն ողջախոհութեան ։

* Ողջախոհութիւն կախի ՚ի սրտէ՝ ոչ ՚ի գաղափարէ և ՚ի յակզբէ իւրմէ. բայց հայի ՚ի մարմինն՝ ոչ ՚ի նիւԹն իւր ։ Եւ վնկ՝ նա կորուսանի և ապականի ամ արտաքին զգայութբ մարմնոյ. նաև խորհրդով, և ըղձիւ սրտի ։ Անպարկեշտութիւն է հայել, լսել, հոտոտել, և շօշափել զանհամեստ իրս, մինչ անդ յամի սիրտն՝ զգալով զհեշտութի ։ Որոյ վն սբն պօղոս արգելու զնա յայտնապէս ասելով. Բնաւ և անուանի իսկ ՚ի ձեր մէջ չէր պոռնկութիւն ։ զի մի՛ անուանեսցի ՚ի միջի ձերում բնաւ իսկ պոռնկութի ։ Մեղուքն ոչ միայն ոչ կամին շօշափել զբորոտան. այլ և ՚ի բաց փախչելով՝ ծայրագունապէս ատեն զամ տեսակ գարշութիս, որք յառաջագային ՚ի նոցանէ ։ Արբազան հարսն՝ ՚ի յերգ երգոցն սողոմոնի. ունի զայնպիսի ձեռս, որք կաԹեցուցանեն զմուռս, որք են հիւԹք պահպանիչք յապականութէ ։ Զայնպիսի շրԹունքս՝ որք են իբրև զլար կարմիր, ՚ի

նշան մաքրութեան խօսից: Աչք նորին՝ են իբրև աղաւնւոյ, պատճառաւ ամբծութեան: Ականջք նորին ունին զօսկեղէն գինտս, ՚ի նշան մաքրութեան: Ռունգունք նորին՝ են իբրև զաշտարակ լիբանանու, ՚ի նշան անապականութեան: Այսպիսի ուրեմն պարտի գոլ հոգին, ողջախոհ՝ մաքուր՝ և համեստ. այ՟ ՚ի ձեռս, ՚ի շրթունս, ՚ի յունկս, ՚ի յաչս. և ՚ի բոլոր մարմինն իւր:

* Ըստ այս առաջադրութեան՝ դնեմ առաջի աչաց քոց զվէպ իմն. որ եղեալ է ՚ի բերանոյ մեծի սրբոյն բասիլիոսի, զոր պատմէ հնագոյն հայրն յոհաննէս քասիանոս. թէ խօսելով զինքենէ յաւուր միում ս՟րն բասիլիոս՝ ասաց. Ես ոչ երբէք շաղախեալ եմ ընդ կին: սակայն այսու ամ՟ն ոչ եմ կոյս: Քանզի հաւաստի է այս. զի ողջախոհութիւն այնքան կերպիւ կարէ կորուսանիլ, որքան և են անպարկեշտութիւնք և վավաշոտութիւնք: Վ՟ զի՝ ը՟ որում ոմանք մեծագոյնք են, և ոմանք միջակագոյնք, և ոմանք փոքրագոյնք. ը՟ այսմ ևս ոմանք տկարացուցանեն զնա. ոմանք վիրաւորեն. և ոմանք բոլորովին մեռուցանեն:

Են ընտանեկցութիւնք ոմանք, և անխոհեմ կիրք անպատշաճք, և զգայականք. որ յատկապէս խօսելով՝ թէպէտ ոչ ապականեն զողջախոհութիւն: Բայց սակայն տկարացուցանեն, և հիւանդացուցանեն զնա, թխացուցանելով և նսեմացուցանելով զպայծառութիւն նորին: Են ևս՝ այլք ընտանեցութիւնք և ախտք ոմանք, որք ոչ միայն են անխոհեմք, այլ նաև մոլեկանք. ոչ միայն յիմարք, այլ նաև անհամեստք և անպարկեշտք. ոչ միայն զգայականք, այլ նաև մարմնականք: և այսպիսեօք՝ գոնեայ յոյժ վիրաւորեցեալ և խոցոտեցեալ մնայ ողջախոհութիւն: Արդ՝ ասացի գոնեայ. վ՟ զի նա մեռանի, և բոլորովին կորուսանի՝ մինչ մոլեգնութիւնքն, և վավաշոտութիւնքն

տան

տան մարմնոյ զվերջին ներգործութիւն բղջախոհութեան : Եւ մանաւանդ , յայնժամ ողջախոհութիւնն կորուսանի առաւել անարժանապէս , անօրինապէս , և թշուառաբար . քան մինչ կորուսանի պոռնկութեամբ , շնութեամբ , և կուսապղծութեամբ : Քանզի այսոքիկ երեք վերջին տեսակք գարշութեան ոչ են այլ ինչ , եթէ ոչ մեղք : Բայց միւսքն , որպէս ասէ Թերթուղիանոս 'ի գրքոջ պարկեշտութեան , են ցուցանք անօրէնութեան և մեղաց :

Արդ Քասիանոս ոչ երբէք հաւատայր . և ես ևս ոչ բնաւ հաւատամ . թէ սուրբն Բասիլիոս հակեալ իցէ առ այսպիսի անկարգութիւնս . մինչ ամբաստանեաց զինքենէ ոչ գոլ կոյս : Վասն զի ես մտածեմ և հաւատամ . թէ նա ոչ ասէր զայս , եթէ ոչ վասն գարշելի և չար խորհրդոցն . որք թէպէտ ոչ ապականեալք էին զմարմինն նորին . սակայն գոնեայ աղտեղեալք էին զմիտսն : Որ և վասն այսպիսի ողջախոհութեան , ծայրագունապէս պարտին հոգիքն նախանձախնդիրք լինիլ :

* Մի՛ կենցաղավարիր բնաւ կերպիւ իւիք ընդ անպարկեշտ անձանց . և մանաւանդ եթէ իցեն անամօթք և լիրբք : Զի որպէս այծքն՝ շօշափելով 'ի ձեռն ատամանց իւրեանց զտունկս քաղցր նշենեաց , դառնացուցանեն զնոսա : Այսպէս ևս սոյնպիսի աղտեղի անձինքս , և ժահահոտ սիրտքս՝ գրեթէ ոչ խօսին ընդ անձանց , և ընդ ցեղից . զորս կերպիւ իւիք ոչ առնիցեն անկանիլ զնոսա 'ի պարկեշտութենէ : Վասն զի հանգոյն իժի՝ ունին զթոյն 'ի յաչս , և 'ի շունչս :

Հակադարձապէս . կենցաղավարեա՛ ընդ ողջախոհ և ընդ առաքինի անձինս . ընթերցի՛ր և մտածեա՛ բազմիցս զսուրբ բանս : Վասն զի բանք Տեառն են բանք սուրբ . և սուրբ առնեն զայնոսիկ՝ որք ճաշակեն զնա . զոր և դաւիթ նմանեցուցանէ տապա-

գիոն

զնոյն ական, որ ունի զյատկութիւն շիջուցանելոյ զտապն ցանկութեան:

Մերձեցի՛ր միշտ առ խաչեցեալ Յս Քս. և այս կամ հոգևորապէս՝ 'ի ձեռն մտածման. և կամ իրականապէս՝ 'ի ձեռն սրբոյ հաղորդութեան: Քանզի ոպ այնոքիկ, որք ննջեն 'ի վր ողջախոհ դառն կոչեցեալ խոտոյ՝ լինին ողջախոհք և պարկեշտք: Այսպէս և սիրտն քո հանգչելով 'ի վր Տն մերոյ, որ է ճշմարտապէս ողջախոհ և անարատ դառն. այնու շուտով տեսանես դու զհոգին և զսիրտն քո, մաքրեալ և սրբեալ 'ի բնաւից աղտեղութեանց, և աղտեղի վավաշոտութեանց:

## Յաղագս աղքատութեան հոգւոյ՝ որ պահպանի 'ի մէջ հարստութեանց:

### Գլուխ. ԺԴ.

Երանի աղքատաց հոգւով (ասէ Տրն) զի նց է արքայութիւն երկնից: Ուրեմն աներջանիկք են փարթամքն, զի նց է թշուառութիւն դժոխոց: Արդ այն է փարթամ հոգւով, որ ունի զփարթամութիւն, և զհարստութիւն իւր 'ի մէջ հոգւոյ, և մտաց իւրոյ: և կմ թէ ունի զհոգի և զմիտսն իւր՝ 'ի մէջ հարստութեանց: Իսկ այն է աղքատ հոգւով, որ ոչ ունի զմարմնաւոր հարստութիւն 'ի մէջ հոգւոյ իւրոյ, և ոչ ևս զհոգին 'ի մէջ հարստութեանց: Ալքէոն կոչեցեալ թռչունքն՝ շինեն զբոյնս իւրեանց բոլորակաձև՝ ոպ զմի կլորակ, ոչ ունելով զայլ ինչ բաց տեղի, եթէ ոչ զծակուկ իմն 'ի վերուստ կողմանէ, և դնեն զնա առ ափն ծովու: Բայց այնքան ամրագոյն, և անթափան

ցիկ առնեն զնա. մինչ զի 'ի վերադալն ալեաց՝ ոչ երբէք կարէ մտանել 'ի նա ջուր. այլ մանաւանդ միշտ կայ 'ի վր ծովու։ և այսու կերպիւ կան և մնան ինքեանք անդ՝ իբր տեարք և իշխօղք ծովու։ Արդ ո՛վ խանդակաթ առաքինութե. պարտի սոյնպէս լինել սիրտն քո՝ բացեալ միայն առ երկինս, և անթափանցիկ առ Հարստութիւնս, և առ սաՀական իրս։ Եւ եթէ դու ունիս զգոյս և զստացուածս, Հեռի պաՀեա զսիրտն քո յայնմից ըղձից, որք Հակեն զնա դէպ առ այնս։ Զի կայցէ նա միշտ 'ի վր. և 'ի մէջ Հարստութեանց մնայցէ առանց Հարստութեանց, և տիրող Հարստութեանց։ Մի՛ դներ բնաւին զերկնայինն միտն քո 'ի մէջ երկրային ընչից և ստացուածոց. այլ արա զի նա միշտ լիցի 'ի վր նց, և ոչ 'ի մէջ նց։

* Մեծ զանազանութի գոյ 'ի մէջ թունաւորեցեալ գոլոյ, և զթոյնն ունելոյ։ Զի դրեթէ ամ դեղածախք ունին զթոյնն՝ առ 'ի գործածել 'ի զանազան պէտս և 'ի դիպուածս։ Բայց այսու ոչ են թունաւորեցեալք. զի ոչ ունին զթոյնն 'ի մէջ մարմնոյ, այլ 'ի մէջ կրպակաց իւրեանց։ Այսպէս ևս կարես դու ունել զինչս և զՀարստութիւնս քո, թարց թունաւորեցեալ գոլոյ 'ի նոցանէ։ Եւ այս յայնժամ լինի. եթէ ունիցիս դու զայնս 'ի տան, և 'ի քսակի քում միայն. բայց ոչ 'ի սրտի։ Մեծագոյն բախտաւորութի է քրիստոնէի ումեք՝ գոլ Հարուստ ներգործութբ, և աղքատ ըղձիւ։ Վս զի այսպէս լինելով. ունի զինչս Հարստութե 'ի յայսմիկ աշխարՀի, և զարդիւնս աղքատութե 'ի Հանդերձեալ կենի։

* Բայց ափսո՛ս կուրութե մերոյ. ով խանդակաթ առաքինութե. զի ոչ ոք գտանի՝ որ իսկապէս խոստովանիցի երբէք զագաՀ գոլն իւր։ Այլ ոք ցուցանէ զինքն դարշիլ յայսմանէ մոլութէ, և ստորկութէ սրտի։ բայց պատճառէ զբաղ

մու

մութին որդւոց. և զգօն նախազգոյշ և խոհեմ, որ կամի՝ զի ամ̃ ոք ջանայցէ առ՚ի կեալ բարեպէս: Ոչ երբէք գտանի ոք, որ համարիցի ունիլ զբաւականս. զի միշտ գտանին հարկաւորութիւնք ոմանք առ՚ի ունիլ զաւելորդս: Մանաւանդ ևս ագահքն՝ որք ոչ միայն ոչ խոստովանին գոլ ագահք. այլ և ՚ի խղճմտանս իւրեանց համարին զինքեանս ոչ գոլ ագահք: Վս̃ զի ագահութիւնն է այնպիսի զարհուրելի և ահարկու տենդ իմն, որ որ̃ առաւել ոչ զգացեալ լինի և անճանաչ մնայ, այնքան առաւել թունաւորէ և տոչորէ: Մովսէս ետես զմ̃ հուրն զայն, որ թէպէտ վառեալ էր զմորենին. բայց ոչ այրէր զնա. ա̃ ոչ ծախէր և սպառէր զնա: Բայց ներհակաբար. գարշելի հուրն ագահութե՝ ծախէ և սպառէ զագահն: Եւ ոչ այլապէս այրէ և տոչորէ զնա. եթէ ոչ գոնեայ յայնժամ, մինչ ՚ի մէջ առատագունի տապոյ և ջերմութե ագահութե, պարծի և կարծէ վայելել ինքն՝ զքաղցրագոյն զովացումն աշխարհի. մտածելով՝ թէ իւր անզովանալի պասքումն իցէ ծարաւութե իմն՝ բոլորովին բնական և անոյշ,

* Եթէ դու երկարապէս, ջերմապէս, և անհանգստաբար ցանկաս բարեաց և ստացուածոց՝ զորս ոչ ունիս. կարես ասել բարեպէս՝ թէ դու ոչ կամիս անարդարապէս, այլ արդարապէս. որովհետև ոչ լինիս այնու ճշմարտապէս ագահ: Այն՝ որ փափաքի երկարապէս, ջերմապէս, և անհանգստապէս առ՚ի ըմպել. թէև ոչ կամիցի ըմպել՝ եթէ ոչ զջուր և եթ. տայ զյայտնի նշան իմն՝ թէ ունի զտենդ: Արդ՝ ո՛վ խանդակաթդ առաքինութե. ես ոչ գիտեմ՝ թէ մարդեօք արդար իցէ այս խղձս; արդարապէս ըղձալ ունիլ զայն, զոր այլ ոմն ժառանգէ արդարապէս: զի վարկանի առ իս, թէ այսպիսեաւ ըղձիւ կա-

միմք շահիլ մեք՝ փնասիւքն այլոց : Այն՝ որ վայելէ զբարի իմն արդարապէս, մի՞ թէ ոչ ունի զառաւել իրաւունս՝ առ 'ի պահպանել զնա արդարապէս, քան զկամիլն մեր ունիլ զնա արդարապէս : Ապա ուրեմն՝ վն՟ է՞ր տարածեմք մեք զիղձն մեր 'ի վր՟ ընչից և ստացուածոց ընկերին՝ առ 'ի զրկել զնա : Քանզի թէև այս իղձս իցէ արդար . սակայն այսու ոչ է ընդ եղբայրական սիրոյ : Վն՟ զի նաև մեք ոչ կամիմք, թէ այլ ոք ցանկանայցէ այնմ, ( թէև արդարապէս ) զոր մեք կամիմք պահել 'ի մեզ արդարապէս : Այս էր մեղքն աքայաբու, որ կամեցաւ ունիլ արդարապէս զայգին Նաբօթայ, որ նա ևս կամէր պահել առաւել արդարապէս վն՟ ինքեան : Ուստի մինչ ցանկացաւ նմա երկարապէս, ջերմապէս, և անհանդստաբար . այնու վշտացոյց զա՟ծ :

Դադարեա՛ ուրեմն . ո՛վ խանդակաթդ առաքինութե՟ . 'ի ցանկանալոյ բարւոյ ընկերին, մինչև նա ինքն կամիցի զրկել զինքն : վասն զի յայնժամ իղձն նորին՝ լինի քո . ոչ միայն արդար, այլ և եղբայրասիրական : Քանզի ես կամիմ, զի դու ունիցիս զհոգ առ 'ի աճեցուցանել զբարիս և զգոյս քո . միայն թէ այս ոչ լինիցի սոսկ արդարապէս, այլ նաև համեստութբ՟ և սիրով :

* Իսկ եթէ յոյժ սիրահարիցիս դու 'ի բարիս և 'ի գոյս՝ զորս ունիս . և կամ եթէ յոյժ զբաղիցիս շուրջ զնոքօք՝ դնելով զսիրտն քո առ նոսա, և սևեռելով զմտածմունս քո առ այնս . և երկնչելով առ 'ի կորուսանել զայնս՝ կենդանի և զբաղական երկիւղիւ միով . այսու տակաւին ունիս զփոքր տենդ իմն : Վն՟ զի տենդեցելոցն՝ այնպիսի անյագութբ՟ և ախորժակաւ ըմպեն զջուրն՝ որ տրի ինքեանց . զոր և ոչ ունին զայնպիսի ախորժակ առողջ անձինքն :

* Իսկ թէ պատահիցի քեզ . զի կորուսանես դու զբա-

զբարիս քո, և զգայցես 'ի քեզ զյաւէտ տրտմելն և տանջելն սրտի քոյ : Հաւատա՛ ինձ, ով խանդակաթդ . զի այսու ցուցանես՝ թէ դու յոյժ յեցեալ ես 'ի նմա : Վասն զի՝ ոչ ինչ այլ իր այնքան առաւել ցուցանէ ունիլ զիղձ առ կորուսեալ իրն ,
որքան ցուցանէ ցաւն կորուսեալ իրին :

* Մի՛ ցանկար ուրեմն ամբողջ և տեսական ցանկութեամբ միով՝ ընչից և ստացուածոց , զորս ոչ ունիս : Եւ մի՛ դներ ևս զսիրտն քո առ այնս , զորս ունիս . զի մի՛ տրտմեցիս կորստեամբ նոցին , մինչ պատահիցի քեզ : Եւ պարտիս ունիլ զիրաւունս հաւատալոյ . թէ գոլով դու փարթամ ընչիւք , ոչ ես բնաւ փարթամ ըղձիւք : Այլ ես աղքատ հոգւով . և հետևապէս երանելի , զի պատկանի
քեզ արքայութիւն երկնից :

## Թէ որպէս պիտոյ է 'ի կիրարկանել զիրական աղքատութիւնն . մնալով նաև իրականապէս ճարտար :

## Գլուխ . ԺԵ :

Փառաղիոս պատկերահանն՝ յոյժ հանճարեղակն արուեստիւ իւրով նկարեաց զաթենական ժողովուրդն . ցուցանելով զնա այլազան բնութեամբ միով : Այսինքն . բարկացող , անիրաւ , անհաստատ , նաև գթած , և ողորմած . գոռոզ , սնափառ , և խոնարհ . խստաբարոյ , և մեղմ : և զայս ամենայն նկարագրեաց 'ի միասին : Բայց ես՝ ով խանդակաթդ առաքինութեան . կամիմ առնել զաւելի իմն : զի կամիմ դնել համանգամայն և 'ի միասին 'ի սրտի քում . զաղքատութիւն , և զհարստութիւն . զմեծագոյն հոգածութիւն իմն ժամանակաւոր իրաց ,

իրաց, և զմեծագոյն արհամարհումն նոցին։

* Պարտիս ունիլ զբաղում հոգս, զի բարիքն քո լինիցին օգտակարք և պտղաբերք, քան զայնս զորս ունին աշխարհային անձինքն։ Ասա՛ ինձ աղաչեմ զքեզ՝ ո՛վ խանդակաթդ. թէ վ՟ է՞ր պարտիզպանքն մեծամեծ իշխանաց՝ այնքան հոգունակք և հետաքրքիրք են առ 'ի պաշտպանել և յօրինել զբուրաստանս և զպարտէզս նոցին, քան զիւրեանց յատուկ պարտէզս։ Այս ոչ է թարցերկրայութե՟ վ՟ այլոյ, եթէ ոչ՝ զի նոքա մտածեն զայնս բուրաստանս՝ գոլ բուրաստանք թագաւորաց, և իշխանաց. որոց հաճոյանալ ցանկան այսու ծառայութե՟։ Այսպէս և՝ ո՛վ խանդակաթդ առաքինութե՟. ստացուածքն զորս ունիմք մեք՝ ոչ են մերք, այլ ա՟ծ տուեալ է զայնս մեզ՝ առ 'ի յարդարել և յօրինել։ Եւ կամի՝ զի առնիցեմք զայնս օգտակարք և պտղաբերք։ և այնքան առաւել հաճոյանամք նմա, որքան բարեպէս հոգածու լինիմք առ այնս։

* Բայց պիտոյ է. զի այս հոգունակութիւն իցէ առաւել մեծ, և առաւել հաստատ քան զայն՝ զոր ունին աշխարհային անձինքն՝ վ՟ բարեաց և ընչից իւրեանց։ Վ՟ն զի նոքա ոչ աշխատին և ջանան, եթէ ոչ վասն յատուկ սիրոյ իւրեանց։ բայց մեք պարտիմք աշխատիլ և ջանալ վ՟ սիրոյն ա՟յ։ Արդ ո՟պ սէրն իւրոյ ինքեան է բռնաւոր, վրդովեալ, և աշխատալի սէր իմն։ այսպէս և հոգունակութիւն, որ ունեալ լինի վ՟ իւրոյ ինքեան. լի է վրդովութե՟, անձկութե՟, և անհանգստութե՟։ Եւ՞ ո՟պ սէրն ա՟յ է քաղցր, խաղաղ, և հանդիստ։ այսպէս և հոգն՝ որ յառաջագայի 'ի նմանէ, թէև իցէ վ՟ աշխարհային բարեաց և ընչից. է սիրելի, քաղցր, և հաճելի։ Կալցուք ուրեմն զայս հաճելի և քաղցր հոգածութիւս վ՟ պահպանութե՟, և մանաւանդ վ՟ աճ-

ման

ման ժամանակաւոր բարեաց մերոց, մինչ ներ-
կայացուցանի մեզ արդար առիթ իմն, նաև որ-
քան պաշտանջէ յատկութիւն մեր: Քանզի ա̅մ կամի,
զի վ̅ս սիրոյ իւրոյ այսպէս առնիցեմք:

* Բայց սակայն զգուշանալ պարտիմք, զի մի՛
պատրիցէ զմեզ յատուկ սէրն մեր: Քանզի եր-
բեմն՝ նա այնքան բարեպէս ձևակերպի ՚ի սէր
ա̅ծային, զորմէ կարէ ասել ոք՝ թէ նա է նոյն
ինքն սէրն ա̅յ: Արդ առ ՚ի արգելուլ զնա՝ զի
մի՛ պատրիցէ զմեզ. նաև՝ զի մի՛ այս հոգս ժա-
մանակաւոր իրաց դարձցի ՚ի ագահութի̅ (բաց
յայնմանէ՝ զոր ասացի ՚ի յանցեալ գլխոջն) պի-
տոյ է նաև բազմիցս կրթել զմեզ ՚ի յիրական և ՚ի
ներգործական աղքատութե̅՝ ՚ի մէջ գոյից և հարս-
տութեանց, զորս տուեալ է մեզ ա̅ծ:

* Դի՛ր ուրեմն յամենայնում աւուր ՚ի մի կողմն՝
զբաժին իմն ՚ի բարեաց քոց, առ ՚ի տալ զնա աղ-
քատաց: Վ̅ս զի տալ զայն՝ զոր ունի ոք, է աղ-
քատանալ իմն. և որքան առաւել տաս՝ այնքան
առաւել աղքատանաս: Եւ՛ զի թէպէտ ա̅ծ հա-
տուցանէ քեզ ոչ միայն ՚ի հանդերձելումն, այլ
նաև յայսմիկ Ծի. քանզի ոչ գոյ այլ ինչ՝ որ
այնքան յաջողիցէ քեզ ժամանակաւորապէս, որ-
քան ողորմութիւն: Բայց եթէ աղքատանայցես
դու՝ ՚ի սպասելն վերահատուցման նորին, մի՛
լքանիցի՛ր բնաւ այսու: Այլ մտածեա՛. թէ ո՛րքան
ս̅բ և փարթամագոյն աղքատանալ է այն, որ լինի
պատճառաւ ողորմածութեան:

* Սիրեա՛ զաղքատն և զաղքատութիւն. զի այ-
սու սիրով ճշմարտապէս լինիս աղքատ: Քան-
զի ո՞չ ասի. մեք եմք նմանք իրաց, զորս սի-
րեմք. զի սէրն հաւասար առնէ զսիրօղն սիրե-
ցելոյն: Ո՛ հիւանդանայ, և ես ոչ հիւանդանամ՝
ասէր ս̅բն Պօղոս: Եւ՛ այսու կամի ասել. Ո՛վ է
աղքատ, ընդ որում ես ոչ իցեմ աղքատ: վ̅ս զի

սէրն առնէր զնա այնպիսի, որպիսիք և էին այ֊
նոքիկ, զորս սիրէր նա։ Ապա ուրեմն եթէ դու
սիրիցես զաղքատսն, այնու լինիս ճշմարտապէս
մասնակից աղքատութեան նոցին. նաև աղքատ ոգւն
որպէս զնոսա։

* Արդ՝ եթէ սիրես զաղքատսն, դի՛ր զքեզ բազ֊
միցս 'ի մէջ նց. հաճեա՛ց տեսանելն զնս 'ի տան
քում, և այց առնելն առ նս. յօժարակ կենցաղա
վարեա՛ է նս։ Հաճեա՛ց զի մերձենայցեն 'ի քեզ
յեկեղեցւոջ, 'ի ճանապարհի, և յայլ ուրեք։ Լե՛ր
աղքատ է նս լեզուաւ, խօսակցելով առ նոսա՝
ոչ ընկերակից նոցին։ Բայց լե՛ր հարուստ և
փարթամ ձեռօք, տալով նց առատապէս զբա֊
ժին 'ի բարեաց և յընչից քոց.

* Կամի՞ս նաև առնել զառաւել ինչ՝ ո՛վ խան֊
դակաթդ առաքինութեան. մի՛ բաւականանար
միայն գոլ աղքատ՝ ոչ զաղքատս. այլ լե՛ր առա
ւել աղքատ քան զաղքատս։ Եւ՞ եթէ ասիցես՝
այս ո՛րով կերպիւ՞ լինի։ Ասեմ. ծառայն է փոքր
քան զտէրն իւր. լե՛ր ուրեմն ծռյ աղքատաց. և
զնա՛ ծառայել նոցա 'ի մահճի յատուկ ձեռամբ
քով, մինչ են հիւանդք։ Լե՛ր նաև նց եփող կե
րակրոյ. և ձախիւք քո հոգա՛ զպիտոյս զգես֊
տուց նոցին. նաև լուացեալ սպիտակացո՛ զնո֊
սա 'ի յաղտից։

* Ո՛վ խանդակաթդ. այսպիսի ծառայութիւն է
մեծագոյն յաղթանակութեն՝ քան զգոլն թագա֊
ւոր։ Ես ոչ կարեմ իմանալ բաւականապէս. թէ
ո՛րդեօք տեսեալ իցէ արեգակն, զայն ջերմեռան
դութիւն, որ 'ի գործածեցեալ եղև 'ի սբյ Լուդով
կիոսէ մեծ թագաւորէ։ Բայց միայն ասեմ զայս.
թէ սոյն գերազանցագոյն թագաւորս, ծառայ֊
էր բազմիցս 'ի սեղանն աղքատաց՝ իբր սպաս
ւոր և մնուցիչ նոցին. և յամենայնում աւուր
հրաւիրէր 'ի սեղան իւր զերիս աղքատս. և հա֊

Օ նա֊

նապաղ ուտէր զխաշուն, զոր յաւելանայր 'ի նոցանէ՝ մեծագոյն սիրով: Եւ՛ մինչ այց առնէր հիւանդաց 'ի հիւանդանոցի (զոր և առնէր բազմիցս.) պատրաստէր զինքն հասարակապէս առ'ի ծառայել այնոցիկ, որք ունէին զառաւել զարշելի և զզուելի խօլթութիւնս. հիքա՛ր. զքորոտութիւն, զքոսոտութիւն, և զայլս նմանս: Եւ՛ ծառայէր նոցա բացաւ գլխով, և երբեմն ևս 'ի ծունկս անկեալ. պատուելով 'ի յանձն նոցին զամենափրկիչն աշխարհի: Եւ՛ սփոփէր զնոսա այնպիսի խանդակաթ և փափուկ սիրով. որպիսի և սովոր է առնել որդեսէր մայր ումն դէպ առ յատուկ որդիս իւր:

* Այսպէս և սրբուհին եղիսաբէթ՝ դուստր թագաւորին ունկարիոյ, հասարակապէս բազմիւր 'ի մէջ աղքատաց: Եւ՛ առ'ի մխիթարել, զգենոյր երբեմն ոչ զաղքատ կին ումն՝ 'ի մէջ մեծամեծ տիկնաց, ասելով ցնոսա. եթէ ես իցէի աղքատ՝ այսպէս զգենուի: Տե՛ս ուրեմն ո՛վ խանդակաթդ. զի այս թագաւորս, և թագուհիս՝ էին աղքատք 'ի հարստութեան իւրեանց. և հարուստք 'ի յաղքատութեան իւրեանց:

Երանելիք են այնոքիկ, որք են այսպիսի աղքատք. զի նոցա է արքայութիւն երկնից: Քանզի ասելոց է թագաւորն Քս՝ 'ի մեծի աւուրն դատաստանի իւրում՝ առ աղքատս, և առ թագաւորս: Քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել. ծարաւեցայ՝ և արբուցէք ինձ. օտար էի՝ և ժողովեցէք զիս. մերկ՝ և զգեցուցէք զիս. և այլն: Ժառանգեցէք ուրեմն զպատրաստեալ ձեզ արքայութիւնն 'ի սկզբանէ աշխարհի:

* Ոչ ոք գտանի՝ որ ոչ ունիցի զպակասութիւն և զպիտանաւորութիւն իմն անդորրութեան՝ 'ի դիպուածի իմիք: Գայ երբեմն առ մեզ պանտուխտ և անցաւոր ոք, որոյ կամիմք, և պարտիմք մեք առնել զբարի: բայց յայնպիսի ժամու գայ, որ է կարի

րի իմն տարադէպ: Այլ ոմն ունի զպիտանաւո-
րութիւն իմն զարդու առ ըզգեստն իւր, որով ե-
րեւիլ պարտի շքեղ: Պատահի եւս երբեմն, զի բո-
լոր լաւագոյն գինին ապականի 'ի մառանոջ, և
ոչ միայն՝ եթէ ոչ վատն: Այլ ոմն գտանի 'ի մէջ
կիսափուլ իջեւանի իմիք, ուր պակասին ամ իրք:
զի ոչ գտանի անդ սենեակ. ոչ մահիճ. ոչ սե-
ղան. և ոչ ծառայութիւն ինչ: Վերջապէս. յոյժ
դիւրին է պատահիլ բազմիցս՝ ունիլ զպիտանաւո-
րութիւն և զպակասութիւն իրի իմիք, որքան և հա-
րուստ իցէ ոք: Արդ այս է գոլ աղքատ ներ-
գործութբ 'ի յայնս, որք պակասին մեզ: Սիրեա՛
ուրեմն՝ ո՛վ խանդակաթդ առաքինութիւն. զայս
պիսի պատահմունս, և ընկալ զնա բարի սրտիւ,
և տա՛ր համբերութբ:

* Յորժամ վերահասանիցին քեզ պատահմունք
ոմանք, որք աղքատացուցանիցեն զքեզ՝ սակաւ,
և կամ առաւել. որպիսիք են կարկուտք. հրկի-
զութիւնք. կողոպտմունք ընչից. և անիրաւ դատք:
Յայնժամ է ճշմարիտ ժամանակ, և առիթ վասն
քո՝ առ 'ի կրթիլ յաղքատութեան. ընդունելով
խաղաղութբ զկորուստն ընչից, և ստացուածոց
այնոցիկ. և ենթարկելով համբերութբ և հաստա
տութբ այնց վնասուց:

Եսաւ ներկայանայր առաջի հօրն իւրոյ՝ բոլորո-
վին թաւամազ ծածկեցեալ ձեռամբ. և յակոբ
ևս արար զնոյնն: Բայց զի ազն՝ որ կայր 'ի վր
ձեռացն յակոբայ, ոչ էր միաւորեալ 'ի մորթն նո
րին, այլ 'ի ձեռնամանն իւր: Ուստի կարէր 'ի
բաց հանել զմազն զայն՝ առանց վնասելոյ, և քեր
թելոյ զձեռքն: Բայց հակադարձապէս. զի մազն
եսաւայ միաւորեալ էր 'ի մորթն նորին. զի բնա
կանաբար էր թաւահեր, և բոլորովին մազա-
խիտ: Որոյ վս՝ եթէ կամիցէր ոք 'ի բաց հանել
զայն 'ի նմանէ, պատճառէր նմա զմեծագոյն

ցաւս, և զաղաղակս, եթէ կամիցէր պաշտպա-նել զինքն :

* Որպէս և յորժամ ինչքն մեր՝ միաւորեալք և ափածեալք են 'ի սիրտն մեր . մինչ զմի մասն նորին բառնայցեն 'ի մէնջ գողքն, աւելորդու-թիւքն, և յափշտակողքն . որդեօք որպիսի ողբք, որպիսի վրդովմունք, որպիսի անհամբերութիւնք ոչ պաշարեն և չարչարեն զմեզ : Բայց մինչ ոչ ունիմք մեք զմեծագոյն հոգածութիւն և զհամա-բուռն առ ինչս մեր, աւելի քան զայն՝ զոր ած կամի թէ ունիցիմք . այնու ոչ են ինչքն 'ի մէջ սրտի մերոյ : Ուստի եթէ 'ի բաց բարձցին այնք 'ի մէնջ . ոչ կորուսանեմք այնու զխաղաղութիւնն և զհանդարտութիւն մեր : Այս է զանազանու-թիւն 'ի մէջ անասնոց, և մարդկանց՝ որքան առ զգեստս նոցին : Զի զգեստն անասնոց միաւո-րեալ է 'ի մարմինս նոցա . և զգեստն մարդկան՝ հպեցեալ և սփածանեցեալ է միայն առ նա : և այս այնպէս՝ զի կարեն զգենուլ, և կարեն մեր-կանալ՝ յերբ և կամիցին ինքեանք :

## Յաղագս չհրաժարման հարստութեան հոգւոյ՝ 'ի մէջ իրա-ժանի աղքատութեան :

### Գլուխ . ԺԶ :

Այդ եթէ դու իցես իրականապէս աղքատ . ո՛վ խանդակաթդ առաքի-նութեան . լե՛ր և հոգւով նոյնգու-նակ . և արա՛ զհարկաւոր առաքի-նութիւնս : Նաև 'ի գո՛րծ ած զայս պատուական ակնս աղքատութեան, զի է 'ի մեծի արժողութեան : և զգինն իւր թէպէտ ոչ երևի յաշխարհի յայս-միկ .

մեկ. սակայն այսու ոչ 'ի բաց թողանի գոլ ծայ
րագոյնապէս գեղեցիկ, և մեծագին:

* Համբերեա՛ և արիացի՛ր, զի դու ես 'ի բարե
գոյն ընկերակցութե՟ն: Զի Տ՟ն մեր, և Երա_
նուհի մայրն նորին. առաքեալքն, և այլ անթի՟ւ
ս՟բք, և սրբուհիք՝ էին աղքատք: և թէպէտ կա_
րէին գոլ հարուստք և փարթամք. սակայն ոչ
երբէք ունեցան զփոյթ: Որքան մեծամեծ ան_
ձինք աշխարհի՝ հանդերձ կրմամբ զանազան ընդի
մութ՟ենց, գնացին առ 'ի խնդրել մեծաւ հոգունա
կութ՟բ զս՟բ աղքատութիւն՝ 'ի յանապատի, 'ի վա
նականս խցի, և 'ի հիւանդանոցի: Եւ թէ ո՛րքան
աշխատութ՟բ, նեղութ՟բ, և դժուարութ՟բ գտին
զնա. վկայեն ս՟ն ալեքսիանոս. սրբուհին փա_
ւօլինա. ս՟ն անձելօ. և այլք բազումք: Ահա
տե՛ս ուրեմն. ով խանդակաթ առաքինութ՟ե.
թէ ո՛րքան առաւել քաղցր է նա դէպ 'ի քեզ,
որ ընդառաջ ելանէ քեզ. ք՟զի գտանես դու զնա
առանց խնդրելոյ, և առանց աշխատելոյ: Գր_
կեա՛ ուրեմն զնա՝ ո՟վ սիրելի բարեկամ Յ՟ի Ք՟ի.
որ ծնաւ աղքատութ՟բ, եկաց ը՟ աղքատութ՟ե.
և մեռաւ աղքատապէս. որ և եղև նոյնն ցուցիչ
բոլոր կենաց իւրոց:

* Աղքատութիւն քո. ո՛վ խանդակաթ առա_
քինութ՟ե. ունի զերկու գերազանցութիւն, միջ
նորդութ՟բ որոց կարես դու առաւել արդիւնաւո
րել: Առաջինն է. զի նա ոչ է եկեալ 'ի քեզ ընտ
րութ՟բ քով. այլ միայն կամօքն աստուծոյ,
որ արար զքեզ աղքատ՝ առանց համընթացման
յատկի կամաց քոց: Արդ զայն՝ զոր ընդու_
նիմք մեք կամօքն ա՟յ, միշտ հաճելի է նմա. մի_
այն թէ ընդունիցիմք զնա բարի սրտիւ, և վ՟ն սի
րոյ ս՟բ կամաց ն՟ր: և որքան պակաս գտանի ուրեք
կամքն մեր, այն՟ք անդանօր առաւելագոյն գտա
նի կամքն ա՟յ: Պարզապէս և մաքրաբար ընդու_

նումն կամացն այ, առնէ՝ զի տանումն աղքատութեն իցէ առաւելապէս մաքուր:

Երկրորդ գերազանցութիւն այսպիսի աղքատութեն է. զի նա է աղքատութիւն իմն ճշմարտապէս աղքատ. նաև աղքատութեն գովեցեալ, սիրեցեալ, յարգեցեալ, և օգնեցեալ: Ուստի այնպիսի աղքատութիւն, որ ունի՝ ոչ գիտեմ զո՛րպիսի, և զո՛րքան հարստութիւն, այսու գոնեայ ոչ է բոլորովին աղքատ: Բայց աղքատութեն իմն, որ է արհամարհեցեալ, ընկեցեալ, խոտեցեալ, և ՚ի բաց թողանեցեալ, այն է ճշմարտապ աղքատ: Արդ ուրեմն այսպիսի է հասարակապէս աղքատութիւն աշխարհականաց. զի ոչ են աղքատք յատուկ ընտրութեամբ իւրեանց, այլ հարկաւորութեամբ. զորոց ոչ լինի մեծագոյն համարումն: Եւ ըստ որում ոչ լինի զնոցանէ համարումն. այնու աղքատութիւն նոցին է առաւել աղքատ՝ քան զաղքատութիւն կրօնաւորաց: Թէպէտ թէև ունիցի կրօնաւորական աղքատութիւն՝ զառաւել գերազանցութիւն իմն, և իցէ յոյժ արժանի գովութեան, պատճառաւ ուխտի և դիտաւորութեան, որով ընտրեցեալ է:

* Մի՛ ցաւիր ուրեմն վն աղքատութեն քոյ. զի ոչ ոք ցաւի և տրտմի, եթէ ոչ զայնմանէ իրէ, որ է անհաճոյ ինքեան: Ուստի եթէ աղքատութիւն է քեզ անհաճոյ. ուրեմն դու ոչ ես աղքատ հոգւով, այլ մանաւանդ փարթամ ըղձիւ և ցանկութեամբ:

* Մի՛ տրտմիր և տրտնջար հոգւով. թէ դու ոչ ես այնու կերպիւ օժանդակեցեալ՝ որպէս և պարտ էր. քանզի յայսմիկ կայանայ գերազանցութիւն աղքատութեն: Կամիլ դոլ աղքատ, և ոչ ընդունիլ զկէտ մի անհանգստութեն, է մեծագոյն ամբարտաւանութիւն իմն: Քանզի այս է կամիլ ունիլ զպատիւն աղքատութեն, և զհանգստութիւնն հարստութեան:

* Մի՛ ամաչեր դոլ աղքատ, և մի՛ պատկառիր

խնդ-

խնդրել զողորմութեն: Ընկա՛լ խոնարհութբ զայն, որ քեզ տրի. և ընդունեա՛ հեզութբ եթէ արհամարհիցիս: Յիշեա՛ յաճախապէս զճանապարհորդութիւնն, զոր արար Տիրուհին մեր՝ մինչ գնայր փախստեայ 'ի յեգիպտոս, յորժամ տանէր զսիրելի որդին իւր. 'ի յոր՝ ո՛րդեօք ո՛րքան պատահեցաւ, և պարտ եղև կրել նմա զաղքատութիւն, զարհամարհանս, և զողորմելութե: Արդ՝ եթէ դու ևս կեայցես այսու կերպիւ, փարթամագոյն լինիս 'ի յաղքատութեն քում:

## ՅԱՂԱԳՍ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ: ԵՒ ՆԱԽԱՊԱՏՈՒԷՐ՝ ՅԱՂԱԳՍ ՃՇԴԻ, ԵՒ ՍՆՈՏԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵՆ:

### Գլուխ. ԺԵ:

Սէրն ունի զառաջին աստիճան 'ի մէջ ամ ախտից հոգւոյն: Սա է թագաւոր ամից շարժմանց սրտին: սա քարշէ զայլ ամ ձգնացեալն առ ինքն. և առնէ զմեզ այնպիսի, զոր ինքն սիրէ: Զգո՛յշ լեր ուրեմն բարեպէս՝ ո՛վ խանդակաթդ. առ 'ի ոչ ունիլ զվատագոյն սէր, զի մի՛ և դու խակոյն վատթարանայցես: Արդ բարեկամութիւնն է առաւել որոգայթաւոր սէր՝ քան զայլս ընաւս. քանզի այլ ամ սէր՝ կարէ գոլ թարց հաղորդութե: բայց բարեկամութիւնն բոլորովին հիմնեցեալ է 'ի վերայ նր: Իբր թէ ոչ կարէ առնանիլ բարեկամութի ընդ ումեք, առանց հաղորդելոյ որպիսութե նորին:

* Ոչ ամ սէր է բարեկամութի. զի կարէ ոք սիրել՝ թարց գոլոյ սիրեցեալ: Եւ այսպէս՝ յայնժամ անդ է սէր, բայց ոչ բարեկամութի: քան

զի բարեկամութիւն է փոխաբերական սէր իմն · ուստի եթէ ոչ իցէ փոխաբերական , ոչ է բարեկամութիւն : Երկրորդ · ոչ է բաւական՝ զի եղիցի բարեկամութիւն փոխաբերական · այլ նաև պիտոյ է , զի մասունքն՝ որք սիրեն զիրեարս , գիտիցեն զփոխաբերական զիղձս իւրեանց : Վասն զի եթէ ոչ գիտիցեն՝ եղանի 'ի մէջ նոցա սէր · բայց ոչ արդէն բարեկամութիւն : Երրորդ · պիտոյ է բաց 'ի յայսմանէ , զի լինիցի 'ի մէջ նոցա նաև սեռ իմն հաղորդակցութեան , որ է հիմն բարեկամութեան :

* Դարձեալ · զանազանութիւնքն հաղորդակցութեան : նաև զանազան բարեկամութիւնքն , են զանազանք՝ ըստ զանազանութեան բարեաց , որք հաղորդին միմեանց : Վասն զի՝ եթէ այսպիսի բարիքս իցեն սուտ և ունայն բարիք · բարեկամութիւն է սուտ և ունայն : Եւ եթէ այսոքիկ իցեն ճշմարիտ բարիք , բարեկամութիւն է ճշմարիտ : Եւ որքան առաւել գերազանցք են բարիքն · այնքան առաւել գերազանց լինի բարեկամութիւն : Քանզի որպէս այն մեղրն է գերազանց , որ ժողովեալ է 'ի յառաւել պատուական ծաղկանց : այսպէս և սէրն այն , որ է հիմնեցեալ 'ի վերայ առաւել պատուական հաղորդակցութեան · է առաւել գերազանց : Եւ որպէս մեղրն հերակլէփոնիթօ կոչեցեալ քաղաքին՝ է թունաւոր · նաև զայնոսիկ որք ուտեն զնա՝ առնէ անզգայ · զի ժողովի յաքօնիթօ կոչեցեալ խոտոյ , որ առատապէս գտանի 'ի նոյն քաղաքի : Այսպէս և բարեկամութիւն , որ հիմնեցեալ է 'ի վերայ սուտ և մոլեկան բարեաց , բոլորովին սուտ է , և չար :

* Հաղորդակցութիւն մարմնական հեշտութեանց , է փոխաբերական յօժարութիւն , և անասնական՝ վրնջումն իմն · որ ոչ կարէ ունել 'ի մէջ մարդկան զայլ մեծագոյն անուն բարեկամութեան , քան զայն բարեկամութիւն՝ որ է 'ի մէջ իշոց , և ձիանց · որև

ունի

ունի զայնպիսի ներգործութի։ Եւ՛ եթէ ոչ լիցէր այլ հաղորդակցութի 'ի յամուսնութե, ոչ լինէր անդ բարեկամութի իմն։ Բայց զի գոյ անդ բաց 'ի յայսմանէ՝ նաև հաղորդակցութի կենաց, կամաց, ըղձից, բարեաց, և անլուծանելի հաւատարմութե։ ուստի աղագաւ այսոցիկ, ամուսնական բարեկամութիւն է ճշմարիտ, և սք։

* Բարեկամութիւն՝ որ հիմնեցեալ է 'ի վր հաղորդակցութե զգայական հեշտութե, է բոլորովին նիւթական, և անարժան անուան բարեկամութե. ոպ և այն՝ որ հիմնեալ է 'ի վր մնոտի, և ունայն առաքինութե։ որովհետև այսպիսի առաքինութիքս կախին նաև 'ի յզգայութեանց։ Արդ ես աստ կոչեմ զգայական հեշտութի զայնոսիկ, որք անմիջապէս, և նախապետաբար առակցեալք են առ արտաքին զգայութիս. հիբար. հեշտանալ 'ի տեսանել զգեղեցկութիւն, լսել զքաղցր ձայն իմն, շօշափել զփափուկ իրս. և այլք նմանք։ Նաև կոչեմ ունայն և մնոտի առաքինութի զայնս որակութիս, զորս տկարանձինքն կոչեն առաքինութի և կատարելութի։ Լսեմք բազմիցս, զի խօսին մեծագոյն մասն կանանց, և երիտասարդաց՝ ասելով։ Այս ինչ ազնուական ոք՝ է յոյժ առաքինի, և ունի զբազում կատարելութիս. զի գեղեցկապէս քայլէ, բարեպէս և շնորհալի կերպիւ ըմպանէ և 'ի գործածէ զիւրաքանչիւր կերպ գործիքս. զգենու բարեպէս, երգէ բարեպէս, խօսակցի բարեպէս, և ունի զբարեձև կերպարան մարդոյ։ Ուստի գրեթէ նաև կատակերգուքն և դերասանքն հրապարակի, որքան առաւել կատակերգուք և ծաղրաբանք լինիցին, այնքան առաւել առաքինիք համարին 'ի նոցանէ։ Արդ՝ ոպ այս ամ նկատէ առ զգայութիս. այսպս և բարեկամութիքն, որք 'ի սոցանէ ծնանին, կոչին զգայականք, մնոտիք.

տիք. և ունայնութիք. և արդիւնաւորին կոչիլ մանաւանդ խելագարութիք, քան թէ առաքինութիք:

Ուստի և այսպիսիք են բարեկամութիքն երիտասարդաց, զի յեցեալք լինին 'ի պեխերս, 'ի հերս, 'ի հանդերձս, 'ի տեսիլս, 'ի նկատմունս, 'ի շարժմունս, և 'ի ծաղրաբանութիւնս: Բարեկամութիքն, որք գտանին 'ի մէջ սիրահարեցեալ հասակի երիտասարդաց, որք և զուրկք են ը̅ ամ̃ի յառաքինութեց. կայանան 'ի խանդաղատման, և ոչ յայլ ինչ ունին զընթադատումն իւրեանց, եթէ ոչ առ ունայնութի: Յաղագս որոյ այսպիսի բարեկամութիքս՝ ոչ են, եթէ ոչ 'ի յանցման. և հալին որպ̃ զձիւն 'ի յարեգակնէ:

## Յաղագս սիրահարութեց. և կամ խանդաղատմանց:

## Գլուխ. ԺԸ:

Յորժամ այսպիսի խելագար բարեկամութիքս 'ի գործածին 'ի մէջ զանազան ցեղից, առանց դիտաւորութե ամուսնութեան. կոչին սիրահարութիւնք, և կամ խանդաղատմունք, և երևոյթք բարեկամութե: Եւ́ ոչ կարեն ունիլ զանուն բարեկամութե և սիրոյ, սակս անբաղդատելի ունայնութե և անկատարելութե: Արդ 'ի ձեռն այսպիսի սիրահարուեց՝ սիրտք արանց և կանանց մ̃ան առեցեալք, գրաւեցեալք, և կապեցեալք 'ի միասին՝ 'ի յունայնութիս, և 'ի խելագար իղձս. նաև հիմնեցեալք 'ի վր̃ այնպիսի անոտի հաղորդակցութեց, և վատթարագոյն հեշտութեց, զորոց կամիմ ես խօսիլ: Եւ́ թէպէտ այսօքիկ խելա-

գար

դար սիրահարութի՟ք՝ հասարակապէս գնան առ 'ի վերջանալ և ստորասուզիլ 'ի մարմնականութե՟, և 'ի գարշելագոյն վավաշոտութե՟։ Սակայն՝ այս ոչ է նախկնագոյն նպատակն և դիտումն այնոցիկ, որք 'ի կիրարկանեն զայսպիսի սիրահարութիւս և խանդաղատմունս։ Ապա թէ ոչ՝ այսօրքիկ ոչ լինէին սիրահարութի՟ք․ այլ մանաւանդ բղջախոհութի՟ք, և յայտնի վավաշոտութի՟ք։ Եւ եթէ հասիցէն երբեմն բաղում ամք 'ի մէջ այնոցիկ, որք են հարեալք 'ի յայս խելագարութիւս, յորս թէև ոչ պատահիցի ուղղապէս իր իմն ընդդէմ ողջախոհութե՟ մարմնոյ։ Բայց բաւական է, զի միայն առ 'ի շաղախել զսիրտս իւրեանց ցանկութ՟բ, ըղձի՟ւ, հառաչմամբ, հայեցմամբ, և այլ այսպիսի խելագարութ՟բ և ունայնութ՟բ։ և այս 'ի ձեռն զանազան դիտման։

* Ոմանք ոչ ունին զայլ պիտոյս՝ քան յագեցուցանել զսիրտս իւրեանց, առ 'ի տալ և ընդունիլ զսէրն․ այսու հետևելով սիրահարական օժարութե՟ց և հակեցմանց իւրեանց։ Եւ այսպիսիքս ոչ հային առ այլ իր ինչ ընտրութ՟բ սիրոյ իւրեանց, եթէ ոչ առ յօժարութիւս և առ հեշտութիւս իւրեանց։ Ուստի 'ի հանդիպիլն հաճելի և հեշտալի առարկայի իմիք․ թարց քննելոյ զներքինս և զարտաքինս իւրեանց, սկսանին առնել զայս հաղորդակցութիւնս սիրահարութեանց, և խանդաղատմանց։ Եւ այնու անկանին 'ի մէջ ողորմելի ցանցից և որոգայթից, յորոց յապաղին յետոյ ելանել։

Այլք ոմանք թողանին քարշիլ առ այս 'ի յունայնութէ․ թուելով նոցա, թէ ոչ իցէ սակաւ փառք՝ առնուլ և կապել զսիրտս ընդ սիրոյ։ Եւ այսօրքիկ առնելով զընտրութիւն իւրեանց վ՟ փառաց, այնու լարեն զորոգայթս, և տարածեն զցանցս իւրեանց 'ի լայնատարած՝ յայտնի պայ֊

պայծառ՝ և ընդարձակ տեղւոջ:

Այլք ոմանք քարշեալք և տարեալք են 'ի սիրահարական յօժարութէ, և 'ի միասին ունայնութէ իւրեանց: Քանզի թէպէտ ունին զսիրտս իւրեանց դարձուցեալք առ սէրն: սակայն ոչ կամին առնուլ, եթէ ոչ երևմամբ և առակցութբ փառաց իմիք: Եւ այսպիսի բարեկամութիւնքս են բոլորովին չար, խեղագար, և ունայն: Չարք՝ զի վերջանան 'ի մարմնական մեղս, նաև բռնեան զսէրն. և հետևապէս հեռացուցանեն զսիրտն 'ի յայ. 'ի յատուկ կնոջէ, և 'ի յառնէ: Նաև ունայնք և անոտիք են, զի ոչ բերեն զշահ, և զօգուտ իմն. ոչ զպատիւ, ոչ զփառք, և ոչ զգոհունակութի:

Այլ հակադարձապէս առնեն կորուսանել զժամանակն, և զպատիւն. և ոչ ունին զայլ ինչ հեշտութի, եթէ ոչ զանասնական և զիշայինն՝ առ որ դիտեն և յուսան. Թարց գիտելոյ զայն՝ թէ զի՞նչ է այն, որ կամի և դիտէ ոք առ այն: Քանզի միշտ վարկանի թշուառականաց և տկարացելոց հոգւով, թէ իցէ անդ իր ինչ ըղձալւոյ (զոր ոչ գիտեմ) զի այսպէս տայ նշ վկայութի փոխաբերական սէրն իւրեանց. բայց ոչ գիտեն ասել՝ թէ զի՞նչ իցէ: Ուստի իղձն նոցին ոչ կարէ ունիլ զվախճան. այլ միշտ գնայ տանջելով զսիրտս նշ մշտնջենական յուսահատութբ, նախանձաւորութբ, և անհանգստութբ:

* Սբն գրիգոր նիւսացին՝ գրելով ընդդէմ ունայնասէր կանանց, ասէ զերս զարմանալիս 'ի վր սոյն առարկայի: Զոր և ահա ես աստ գրեմ քեզ զմի մասնիկն բանից նորին. զոր թէպտ ասաց նա ճշմրտպս ընդդէմ կանանց, սակայն պատկանի և արանց: * Բնական գեղեցկութին քո (ո՛՜ կին դու) բաւական է առն քոյ. և եթէ նա է վր բազում արանց. ապա է ոպ ցանց իմն լարեալ վր բազում թռչնոց: Ո՛ և պատահի՝ այն հանճի և հաւա_

ւանի քեզ, նաև հաճելի լինի 'ի գեղեցկութէ
քումմէ : դու 'ի նա արժանկես զհայեցումդ, և նա
'ի քեզ : նա անկնահարէ զքեզ, և դու զնա : Վ՟յ
առ ժամայն հետևի ծիծաղ, և սակաւ խօսակ֊
ցութիւն ինչ : Եւ այսպէս 'ի սկզբան գաղտնի սըր֊
զընաւորի, բայց յետոյ ազատապէս և յայտնա֊
պէս կատարի : Զգուշացի՛ր ո՛վ ճոխաբան լեզու֊
իմ 'ի ասել զայն, որ հետևի. բայց ասացից ճշ֊
մարտ՟ն : Զի՛նչ և իցէ գործ և իրակութի, որ
առնանի յարանց, և 'ի կանանց, նաև յերիտասար֊
դաց 'ի միասին՝ ցոփական և խենեշային կենցա֊
ղավարութ՟ք, ոչ է զուրկ 'ի մեծագոյն խայթո֊
ցաց անպարկեշտութ՟ն : Զի նաև այսպիսի կըն֊
ճիռքս խենեշութեց և ցոփութեց՝ պատճառին և
փալթութեին առ միմեանս, և քարշին և գնան ըզ֊
կնի ն՟ց : Եւ յետոյ ոչ այլ ինչ եղանին, եթէ ոչ
մաքնխաեցեալ օղ իմն շղթայի, որ քարշէ առ ինքն
զայլ բազում օղս : *

* Ո՞հ. թէ ո՛րքան բարեպէս խօսի այս գե֊
րազանց այրս ա՟յ : Զի՛նչ խորհիս առնել դու.
տամ՛լ զառիթ սիրելոյ. ոչ ընաւ : Զի ոչ ոք տայ
երբէք յօժարապէս, որ ոչ առնու հարկաւորա֊
պէս : Ո՛ ոք տանի յայսմիկ խաղում, տարեցեալ
է : Ափրոնիս կոչեցեալ խոտն՝ այնքան շուտով
ընդունի և յղանայ առ ինքն զհուրն, որքան շու֊
տով տեսանէ զնա : Այսպէս են և սիրտքն մեր.
զի մինչ տեսանեն զանձն ումն վառեալ 'ի սէր ի֊
րեանց, առ ժամայն և ինքեանք բորբոքին առ
այն :

* Թերևս ասիցէ ոք ինձ. թէ ես կամիմ առնել
զնոյն սիրահարութիւն սակաւ ինչ, և ոչ զըա֊
զում : Ո՞հ. խաբիս և պարտիս դու ո՛վ ողորմե֊
լի. զի հուրն սիրոյ առաւել գործունեայ, և թա֊
փանցական է, քան զոր դու գիտես : Դու խնդ֊
րես միայն ունիլ զմի միայն կայծ. բայց մնաս

ափշեալ և շուարեալ առ 'ի տեսանել. թէ ո՞չ 'ի միում կիտոջ բոլորովին պաշարեցեալ եղև սիրտն քո, և ո՞չ ը̅ ա̅մի դարձաւ 'ի մոխիր բնաւ առաջադրութիւնն քո. և ո՞չ 'ի ծուխ վերալուծաւ համայն պատիւն և փառքն քո: Աղաղակէ իմաստուննն: Ո՛վ ողորմելոյ Բովլնէ՝ յոյժ խայթեցելոյ: Եւ ես աղաղակեմ յետ նորա: ո՛վ յիմարք և անըղգայք. խորհի՞ք դուք թերևս թովել և հմայել զսէրն, առ 'ի կարել զնա 'ի կիրարկանել ը̅ խնդրոյ ձերոյ. կամի՞ք թերևս փաղաքշել և խանդաղատիլ զնովաւ: բայց ծաներուք՝ զի խայթէ և խածատէ նա զձեզ: Ուստի յետոյ ա̅մ ոք ծիծաղի զձեօք, որք կամեցայք թովել և հմայել ըզսէրն. և 'ի ներքոյ սուտ պահովութե իմիք, և կամեցայք դնել 'ի ծոցս ձեր՝ զայնպիսի որոդայթաւոր օձ իմն, որ զձեզ այնպէս ապականեաց, և եբարձ 'ի ձէնջ զպատիւն, և զփառքն ձեր:

* Ափսո՜ս անմտութե մերոյ. զի ո՛րպիսի կուրութիւն է այս, հաւատալով առ 'ի շահել զունայնս, դնեմք 'ի դրաւ և յաւանդ՝ զնախապետագոյն մասն հոգւոյ մերոյ: Այսպիսի է՝ ո՛վ խանդակաթ առաքինութե. զի ա̅ծ ոչ կամի զմ̃դն՝ եթէ ոչ պատճառաւ հոգւոյ. և ոչ զհոգին՝ եթէ ոչ պատճառաւ կամաց. նաև ոչ զկամքն՝ եթէ ոչ պատճառաւ սիրոյ: Վա՜յ ինձ. զի մեք ոչ ունիմք զայնքան բաւական սէր, որքան պիտոյ է մեզ: Կամիմ ասել. թէ պիտոյ էր՝ զի մեք ունիցէաք զանհուն սէր, առ 'ի բաւականապէս սիրել զա̅ծ: Բայց յայսմիկ ողորմելի կացութե, յորում կեամք մեք ողորմելապէս. 'ի բաց հերքեմք զնա անառակապէս. նաև ծախեմք 'ի յունայն, 'ի սնոտի, և 'ի յիմարական իրս. ո՞չ թէ ունիցէաք զնա առաւելապէս: Ափսո՜ս մեզ. զի ա̅ծ որ պահեալ է զսէրն հոգւոյ մերոյ՝ միայն առ 'ի ճանաչել ըզստեղծանելն, զփրկելն, և զպահպանելն իւր.

պա_

պահանջէ զխստագոյն համար իմն՝ վս՟ յիմարա_
կան և խելագարական հեշտութեանց այսոցիկ,
զորս առնեմք մեք : Արդ՝ եթէ նա առնէ զանձ_
կագոյն քննութի՟ իմն վս՟ դատարկ բանից. ապա
զի՛նչ առնելոց է վասն դատարկ, անյարմար, և
որոգայթաւոր բարեկամութեանց :

* Ընկուզենին մեծապէս վնասէ այգեաց, և ար
տօրէից՝ ուր տնկեցեալ է . զի գոլով մեծագոյն
ծառ, քարշէ զամ հիւթն երկրի, և ոչ թողու
անցանիլ զնա 'ի սնուցումն այլոց բուսոց և տն_
կոց : Տերևքն նորին՝ այնքան են թանձրախիտք,
որք պատճառեն զստուեր իմն թանձրամած :
Նաև քարշէ առ ինքն զճանապարհորդս, որք
գալով առ 'ի ժողովել զանկեալ պտուղս նորին,
կոխատեն շուրջ զնովաւ եղեալ բոյսսն : Այսպէս
և սիրահարեցեալ անձինքն՝ պատճառեն հոգւոյ
իւրեանց զայն վնասս : Վս՟ զի այնպէս զբաղեն,
և այնքան զօրեղապէս քարշեն առ ինքեանս ըզ_
շարժմունս ըղձից իւրեանց . մինչ զի ոչ կարեն
յետոյ թոյլատրել զայնս՝ առ 'ի բաւական լինել
'ի բարի գործ ինչ : Տերևքն իւրեանց . այսինքն
խանդաղատմունքն, հրճուանքն, և շողոքորթու_
թիւնքն նոցին . այնքան յաճախք են, մինչ զի կարեն
կորուսանել զբոլոր ժամանակս իւրեանց 'ի յայնս :
Նաև զայնքան փորձութիւնս, ցնդմունս, կարծիս,
և զայլ հետևմունս պատճառեն և քարշեն առ
ինքեանս . մինչ զի բոլորովին մնայ սիրոյն իւրե_
անց ապականեալ, և կոխատեալ այնոքիւք : Վեր
ջապէս . այսպիսի սիրահարութիւնքս՝ ոչ միայն
մերժեն զսէրն երկնային, այլ նաև զերկիւղն այ՝
տկարացուցանելով զհոգին . և կորուսանեն զպա
տիւն, և զբարի համբաւն : Ես՛ աւարտեմ միով
բանիւ . թէպէտ սոյնս է խաղ ապարանից . բայց
է ժանտամահ սրտից :

## Յաղագս ճշմարիտ բարեկամութեան :

### Գլուխ. ԺԹ :

Ո՛Վ խանդակաթ առաքինութիւն. սիրեա՛ զա̃մ ոք մեծագոյն խնամ սիրով : բայց մի՛ ունիցիս ընաւ զբարեկամութիւն, եթէ ոչ ընդ այնոսիկ, որք կարեն հաղորդել քեզ զառաքինութիւնս : Եւ՛ որքան առաւել պատուականագոյնք եղիցին առաքինութիւնքն, զորս քեզ հաղորդեն. այնքան առաւել կատարեալ լինի բարեկամութիւն քո : Եթէ դու հաղորդիցիս 'ի գիտութիւնս, յոյժ գովելի լինի բարեկամութիւն քո. առաւել ևս՝ եթէ հաղորդիցիս յառաքինութիւնս, 'ի խոհեմութիւնս, 'ի պարկեշտութիւնս, յարիութիւնս, և յարդարութիւնս : Բայց եթէ փոխարերական հաղորդակցութիւն քո լինիցի 'ի սէրն, 'ի ջերմեռանդութիւն, և 'ի քրիստոնէական կատարելութիւն. ո՛հ թէ՝ ո՛րչ̃ պատուականագոյն լինի բարեկամութիւն քո : Վ̃ զի լինի ը̃ ա̃մի գերազանց՝ զի գայ յա̃յ. գերազանց՝ զի դիմէ 'ի յա̃ծ. գերազանց՝ զի շաղկապն իւր է ա̃ծ : Վա̃ն թէ. ո՛րքան բարի է սիրել այնպէս 'ի յերկրի, ո̃պ և սիրեալ լինի 'ի յերկինս. և գտանել այնպէս փարել 'ի յաշխարհի. ո̃պ և լինել յաւիտենականապէս 'ի հանդերձեալ կենի :

Արդ ես ոչ խօսիմ աստ յաղագս պարզ սիրոյ. զի այս պարտի 'ի կիրարկանիլ առ ա̃մ մարդիկս : Այլ խօսիմ յաղագս հոգևոր բարեկամութեան, 'ի ձեռն որոյ՝ երկու, և երեք, և կամ այլ աւելի անձինք, հաղորդեն միմեանց զջերմեռանդութիւնս, և զհոգևորս իղձս իւրեանց, և լինին մի և նոյն

հո-

հոգի 'ի մէջ իւրեանց։ Եւ իրաւամբ կարեն յայն ժամ երգել այնպիսի անձինքն, զերգս զայս. Զի բարի, կամ զի վայելուչ. զի բնակել եղբարց 'ի միասին։ Այսպէս է՝ ո՛վ խանդակաթ առաքինութեան. զի հեշտալի պաշտամամն ջերմեռանդութե, կաթէ 'ի միոյ սրտէ 'ի միւսն՝ շարունակ հաղորդակցութե։ Որոյ վ͞ս կարէ ասել. թէ ա͞մ սփռեալ է զօրհնութիւն իւր, 'ի վ͞ր այնպիսի բարեկամութե 'ի բոլոր յաւիտեանս յաւիտենից։

* Ինձ թուի թէ. այլ ա͞մ բարեկամութիւնք ոչ են այլ ինչ, եթէ ոչ ստուե՛ր՝ բաղդատմամբ այսպիսի բարեկամութե։ Եւ՛ կապանք նոցին ոչ են այլ ինչ, քան ապակեղէն շղթայ իմն, բաղդատմամբ այս մեծի կապանաց ս͞բյ ջերմեռանդութե, որ է բոլորովին ոսկեղէն։

* Մի՛ հատաներ նաև զայլ տեսակ բարեկամութիւնս. և ընտանեկան սիրելութիւնս, զի ոչ է պարտ թողուլ, և կամ արհամարհել այսու զբարեկամութիւն, զոր պարաւանդեն քեզ բնութիւն, և պարտաւորութիւնն առ 'ի պահել. Ո͞պ են այնք բարեկամութիւնք, որք իրակին ընդ ծնողաց, ընդ մերձաւորաց, ընդ դրացեաց, և ընդ այլոց։ Եւ՛ խօսիմ զայնց, զորս դու ինքն ընտրես քեզ 'ի բարեկամս։

* Նա՛ թերևս ասիցեն քեզ բազումք. թէ ոչ է պիտոյ ունիլ զմասնաւոր իղձ և բարեկամութե իմն. վ͞ս զի զբաղեցուցանէ զսիրտն, ցնդէ զմիտն, և ծնանի զնախանձ։ Բայց խաբին այսպիսիքս խորհրդով իւրեանց։ վ͞ս զի ընթերցեալք են 'ի գրեանս բազմաց ս͞բց և ջերմեռանդ հեղինակաց՝ որք ասեն. թէ մասնաւոր բարեկամութիքն, և արտաքոյ կարգի ըղձկունքն՝ առաւելապէս փասեն կրօնաւորաց։ և այսու համարին յինքեանս, թէ սոյնյատկութի՝ նաև պարտի լինիլ 'ի մէջ աշխարհականաց։ Ուստի ասել պիտոյ է առ այսպիսիս. թէ

Ք 'ի

'ի վանքի խմբի՝ որ է բարեպէս կանոնաւորեցեալ, հասարակ կանոնն քարշէ զընաւս առ ջերմեռանդութի: Որոյ աղագաւ ոչ է հարկաւոր անդ ունել զմասնաւոր հաղորդակցութի վս երկիւղի. զի դուցէ խնդրելով զայն 'ի մասնաւորն՝ որ է հասարակ. անցանիցէ 'ի մասնականութէ առ եզականութի: Բայց որքան առ այնս՝ որք են 'ի մէջ աշխարհական կացութե, և ընդգրկեն զճշմարիտ առաքինութիս. հարկաւոր է նց այս մասնաւոր սէր բարեկամութիւնս, առ 'ի շարակապել զնոսա յիրեարս. որոյ միջնորդութբն սիրիցեն զմիմեանս, օգնիցեն միմեանց, և քարշիցեն զիրեարս առ բարեգործութիւնս:

Ե՞ւ ոչ այնոքիկ՝ որք ընթանան 'ի դաշտային և 'ի յարթայատակ տեղւոջ, ոչ ունին զպիտանաւորութի տալոյ միմեանց զձեռս: Բայց որք ընթանան 'ի քարաժեռ, և 'ի լպրծուն տեղիս, ըմբռնեն զմիմեանս՝ առ 'ի ընթանալ անսայթաքաբար և անկասկածօրէն: Հանգունաբար ևս այնոքիկ՝ որք են 'ի կրօնի, ոչ ունին զպիտանաւորութի մասնաւոր, և եզական բարեկամութե: Բայց որք են 'ի յաշխարհային կացութե, ունին զհարկաւորութի առ 'ի օժանդակել և թիկնահաս լինել միմեանց՝ 'ի մէջ այնքան չար գնացից, ընդ որս անցանիլ պարտին: 'Ի յաշխարհի՝ ոչ ջանան ամենեքեան առ մի վախճան, և ոչ ունին ամենեքեան զմի կամս: ուրեմն թարց երկբայութե պիտոյ է քարշել անդ 'ի մի կողմն, և առնել զբարեկամութի ը̄ն դիտաւորութեան մերոյ: Ե՞ւ զի թէպէտ այս մասնաւորութիս ճշմարտապէս առնէ զեզականութիւն իմն. բայց առնէ սէ եզականութի և մասնականութի: Ե՞ւ ոչ պատճառէ զայլ իմն բաժանումն, եթէ ոչ զայն՝ որ գտանի 'ի մէջ բարւոյն և չարին, 'ի մէջ ոչխարին և այծին, 'ի մէջ մեղուաց և պիծակաց. որ և է հարկաւոր բաժանումն:

Իրա

* Իրաւի՝ ոչ կարեմք բացասել, թէ Տէրն մեր ոչ լցէ սիրեալ առաւել յատկական և քաղցր բարեկամութբ մեով, զսբ աւետարանիչն յովհաննէս. զղազար. զմարթա. և զմագդաղենացին: զի վկայէ զայս սբ գիրն: Նաև սբ առաքեալն պետրոս՝ գթածապէս սիրէր զսբն մարկոս, և զորբուհին փեթրոնիլա. որպէս և սբն պօղոս՝ զտիմօթէոսն իւր, և զորբուհին թեկղի: Եւ սբն գրիգոր նիւսացին՝ բազմիցս պարծի վն անբաղդատելի բարեկամութեն, զոր ունէր ընդ սբյն բարսղի կեսարացւոյ. գրելով այսպէս: Թուէր՝ թէ 'ի մէջ իմ և նր լցէր մի միայն հոգի, ունելով զերկու մարմինս: Թէպէտ ոչ է պիտոյ հաւատալ այնոցիկ՝ որք ասեն, թէ ամ իրք են 'ի յամ իրս: սակայն պիտոյ է հաւատալ՝ թէ մեք երկոքեանքս էաք առ միմեանս: Զի ունէաք երկաքանչիւրքս՝ զմի և նոյն դիտաւորութի առ 'ի ժողովել զառաքինութիւս, և առ 'ի յարմարել զվարս կենաց մերոց հանդերձելոյ յուսոյն. և առ 'ի ելանել յերկրէ յարտաքս՝ յառաջ քան զմեռանիլն: Եւ սբն օգոստինոս վկայէ. թէ սբն ամբրոսիոս եղականապէս սիրէր զորբուհին մօնիքա, վն առաքինութեցն նորին՝ զորս տեսանէր 'ի նմա: Եւ նոյն մօնիքա ես՝ փոխաբերապէս սիրէր զնա՝ որպէս զմի հրեշտակ աստուծոյ:

* Արդ ես ոչ արարի զայնքան լաւագոյն իմն՝ յամելով 'ի վերայ այսպիսի յայտնագոյն նիւթոյ: որովհետև սբն ջերօնիմոս, սբն օգոստնս, սբն գրիգոր, սբն բեռնարդոս, և այլ ամ մեծամեծ ծառայքն այ, ունեցան զմասնաւոր բարեկամութիւս առ ոմանս, թարց վնասու կատարելութե իւրեանց: Սբն պօղոս յանդիմանելով զհեթանոսս, ամբաստանէ զնոցանէ. լինիլ ազգ անսէր և առանց ըղձի. այ ոչ ունիլ զբարեկամութիւն առ միմեանս: Եւ սբն թօմաս խոստովանի՝ հան

դերձ ամ բարի փիլիսոփայիւք. թէ բարեկամութիւն է առաքինութիւն իմն: Արդ նա խօսի զմասնաւոր բարեկամութենէ. զի ո՛չ ասէ անդ. թէ կատարեալ բարեկամութիւնն ոչ կարէ տարածիլ առ բազում անձինս: Ուրեմն կատարելութիւնն ոչ կայանայ երբեք 'ի յոյժ ունիլն զբարեկամութիւն, այլ 'ի ունիլն այնպիսի բարեկամութիւն, որ իցէ բարի, սուրբ, և սրբազան:

## Յաղագս զանազանութեան՝ որ գտանի 'ի մէջ ճշմարիտ, և ունայն բարեկամութեան:

### Գլուխ. Ի:

Ահա՛ տուեալ քեզ զխրատ իմն. ո՛վ խանդակաթդ առաքինութեան: Զի մեղրն հերաքլեայ՝ որ է այնքան թունաւոր, թէպէտ նման է առողջարար և լաւագոյն մեղեր: Սակայն անդ 'ի գործածելն նորին գոյ մեծագոյն որոգայթ, զի մի գուցէ առնանիցի մինն փոխանակ միւսոյն. և կամ խառնեալ 'ի միասին: քանզի բարութիւն միոյն, ոչ կարէ արգելուլ զվնասակարութիւն միւսոյն: Այսպէս և պիտոյ է զգուշանալ ոք առ 'ի ոչ պատրիլ 'ի գործս բարեկամութեան: Եւ յոյժ առաւել պիտոյ է այս զգուշութիւն, մինչ կիրարկանի բարեկամութիւն 'ի մէջ արական, և իգական սեռի, որպիսի և իցէ առիթն և պատճառ: Քանզի սատանայն բազմիցս փոխարկէ զսէրն. զի նախ սկսեալ լինի առաքինական սիրով: բայց եթէ ոչ իցէ զգոյշ, խառնէ անդ զունայն սէր. և յետոյ զգայական սէր. և հուսկ յետոյ՝ զմարմնական սէր: Մանաւանդ գտանի նաև սոյն որոգայթս 'ի մէջ

հո-

հոգևոր սիրոյ , եթէ ոչ յառաջանայցէ մեծագոյն խնամատարութեամբ : Թէպէտ թէև առաւել դժուարագոյն լինի յայսմիկ՝ այս փոխարկումս : վն̃ զի մաքրութիւն, և պայծառութիւն նորին առնէն , զի առաւել դիւրապէս ճանաչիցի գործելութիւն, որ կամի սատանայն խառնել անդ : Յաղագս որոյ՝ մինչ քննայ նա առնել զայս , առնէ նրբապէս , և փորձէ անզգալապէս՝ առ 'ի ներածել զանմաքրութիւն իւր :

* Որպէս ճանաչել և զանազանել պարտիս զու-զաշխարհային բարեկամութիւն՝ 'ի սրբ̃ և յառաքինական բարեկամութենէ , որպ̃ ճանաչի և զանազանի երաքլիական մեղրն՝ 'ի միւս մեղերէ : Քանզի երաքլիական մեղրն՝ առաւել քաղցր է լեզուի , քան զհասարակ մեղրն . պատճառաւ աքքօնիթօ ծաղկան , որ տայ նմա զօրութիւն իւր քաղցրութե : Այսպէս և աշխարհական բարեկամութիւն՝ հասարակապէս յառաջածէ զմեծագոյն բազմութե քաղցր բանից . և զխօսակցութե իւր ախտաւոր շարժման և գովութե, արտաքարշեալ 'ի գեղեցկութէ, 'ի շնորհաց, և 'ի զգայական ոլակութեց : Բայց սրբ̃ բարեկամութիւն՝ ունի զպարզ, և զազատ լեզու իւր . և ոչ կարէ գովել զայլ ինչ, եթէ ոչ զառաքինութիւն, և զշնորհն այ̃ . որ է միայնակ հիմն , 'ի վր̃ որոյ յենեալ լինի նա :

Երաքլիական մեղրն՝ 'ի կլանելն պատճառէ զշարժումն գլխոյ : Նո՞յն սուտ բարեկամութիւն՝ շարժէ առ անկայունականութիւն իմն հոգւոյ , որ վրդովէ և շփոթէ զմիտն՝ 'ի սիրոջ, և 'ի ջերմեռանդութե . և քարշէ զնա առ սիրահարական հայեցմունս , 'ի շողոքորթութիւնս , և 'ի զգայական խանդաղատմունս , 'ի յանկարգ հառաչմունս , և 'ի տրտնջմունս՝ վն̃ ոչ գոլոյ սիրեցեալ : Նաև առ ումանս հետաքրքրական, և մանրազննին շարժմունս քաղաքականս , և առ այլ ընտանեկցութիւնս ,

նաև յանկարգ և յանվայելուչ յարդմունս, որք են հաւաստի և աներկբայ նախագուշակք մերձ ընդ մերձ կործանման համեստութեան : Բայց սէր բարեկամութիւնն՝ ունի զաչս պարզ և պարկեշտ . զխանդաղատումունս մաքուր և անախտ . զհառաչմունս առ յերկինս . զընտանեկցութիւնս հոգեկան . զորտունքս՝ մինչ ոչ սիրի ամծ, որ է անստելի նշան համեստութեան :

Երաքլիական մեղրն՝ պղտորէ զտեսութիւնն : Եւ այսպէս աշխարհային բարեկամութիւնն՝ այնպէս պղտորէ զխելքն . մինչ զի այնոքիկ՝ որք են շաղախեալք 'ի նմա, 'ի գործելն զչար՝ համարին թէ առնեն զբարի : Եւ կամին թէ պաքսարաքն, զի տաւարութիւնքն, և խօսքն իւրեանց, միշտ իցեն ճշմարիտ խելացութիւնք . ուստի մերժեն զլոյսն, և սիրեն զխաւարն : Բայց սէր բարեկամութիւնն՝ զայնպիսի մծիտ աչս ունի, որ պայծառապէս տեսանէ զամ ինչ : Նաև ոչ փակի, այլ մանաւանդ յօժարապէս տեսանէ 'ի ներկայութեան բարի արանց :

Վերջապէս . երաքլիական մեղրն՝ պատճառէ զմեծագոյն դառնութիւն իմն 'ի բերանոջ : Այսպէս և սուտ բարեկամութիւնքն՝ դառնան և եզերին 'ի դառնագոյն խօսս . 'ի մարմնական և 'ի դարշելի խնդիրս : Եւ կամ եզերին 'ի բաց լքանումն, 'ի յանիրաւութիւն, 'ի նախատինս, 'ի տրտմութիւն, 'ի յամօթահարութիւնս, և 'ի նախանձս : Նաև բազմիցս 'ի սխտաբարոյութիւնս, և 'ի խելագարութիւնս : Բայց ողջախոհ բարեկամութիւն, հաստարակապէս միշտ է համեստ, բարոյական, և բարեկամական . և ոչ երբէք դառնայ յայլ ինչ, եթէ ոչ 'ի կատարելագոյն, և 'ի մաքրագոյն միաւորութիւն իմն հոգւոյ . որ է կենդանի պատկեր երանական բարեկամութեանն, որ 'ի գործ ածի յերկինս :

Ասէ

* Ասէ սրբն գրիգոր նիւսացի · թէ մինչ սիրամարգն կարկաչէ, և սփռէ զիւր թեպրական բոլորակն՝ առ՚ի անապարծիլ · յայնժամ մեծամբս դրդէ այնու զայլս սիրամարգս 'ի ցանկութիւն, որք լսեն զնա : Այսպէս՝ մինչ տեսանի ոք անապարծիլ, խեղեպնիլ, և խեղկատակիլ՝ ընդ երիդասարդուհւոյ, և կամ ընդ կնոջ ումեք · չունելով դէպ առ նա զդիտաւորութիւն իմն արդար պսակի և ամուսնութեան : Յայնժամ առանց երկբայութեան ճանաչի, թէ այս ոչ լինի վասն այլ ինչ իրաց, եթէ ոչ առ 'ի շարժել զայնս առ անպարկեշտութիւն իմն : Ուստի պարտի համեստաբարոյ կնոջն, փակել զականջս իւր դէպ առ այս սիրամարգական կարկաչմունս, և առ թովչական ձայնս · որ կամի թովել և հմայել զնա խորամանկաբար : Բայց եթէ բանայցէ զլսելիս իւր առ 'ի լսել նմա · ո՜հ թէ · ո՛րքան մախիզ դուժ լինի այս՝ վասն ապառնի կորստեան սրտի իւրոյ :

* Երիտասարդքն՝ որք առնեն զայնպիսի արարմունս, նշմարանս, և ցուփութիւնս · և կամ ասեն զայնպիսի խօսս, որք ոչ կամին թէ լսիցեն 'ի հարց, 'ի մարց, 'ի յարանց, 'ի կանանց, և կամ 'ի խոստովանահարց · այնու տան զնշան, թէ ձեռնամխիլ կամին առ այլ իրս, որ է արտաքոյ պատուոյ, և խղճմտանաց: Տիրուհին մեր՝ 'ի տեսանելն զմի հրեշտակ 'ի ձև մարդոյ՝ խռովեցաւ · այնու՝ զի էր միայնակ · նաև՝ զի տայր նմա զպատիւ իմն արտաքոյ կարգի, թէ և երկնային : Արդ՝ ո՛վ խանդակաթդ · մաքրութիւնն երկնչի 'ի միոյ հրեշտակէ, որ էր 'ի ձև մարդոյ : ընդ է՞ր ուրեմն անմաքրութիւնն ոչ երկնչի 'ի միոյ մարդոյ, թէ և իցէ 'ի ձև հրեշտակի, մինչ գովէ զնա զգայական, և մարդկային գովութեամբ :

## Խրատք, և դեղ՝ ընդդէմ չար բարեկամութեան:

### Գլուխ. ԻԱ:

Դեղ ընդդէմ յիմար, խելագար, և անմաքուր սիրոյ՝ այս է: Մինչ ունիցիս դու 'ի քեզ զփոքր զզգացումն անմաքուր սիրոյ. առժամայն դարձիր առ այլ կողմն, և բացարձակաբար արհամարհելով զայս ունայնութիւս, դիմեա՛ առ խաչն կենաբարին, և ընկալ զփշեղէն պսակն նորին՝ առ 'ի շրջապատել զսիրտն քո. զի մի՛ կարիցեն հպիլ անդ այսպիսի աղուէսունք: Բարեպէս զգուշացի՛ր առ 'ի ոչ ունել զտեսակ իմն համաձայնութեան ընդ այս թշնամւոյս: Մի՛ ասիցես, թէ լուա՛յց նմա. սակայն ոչ արարից զայն՝ զոր ասէ ինձ: Նաև միայն ունկնդիր եղէց նմա, և ոչ սրտադիր: Ո՛չ. ո՛չ. ո՛վ խանդակաթդ առաքինութեան՝ ո՛չ. այլ վն սիրոյն այ՝ խստագոյն լե՛ր 'ի յայսմիկ պատահման. զի սիրտն, և ականջն ծառայեն միմեանց: Եւ՛ որպ անկարելի է արգելուլ զհեղեղ իմն, որ հոսի դէպ 'ի վայր 'ի լերանէ միոյ: այսպէս ևս դժուարին է արգելուլ զսէրն, որ է անկեալ 'ի յականջս, առ 'ի ոչ առնել զայլ անկանումն իմն 'ի սիրտս:

Այծքն՝ ըստ կարծեաց Ալկմէոնի. շնչեն ականջօք, և ոչ ռնգամբ. թէպէտ արիստոտէլ բացասէ զայն. Ես ոչ գիտեմ, թէ ո՛րն իցէ ճշմարիտ: բայց զայս բարեպէս գիտեմ. զի սիրտն քարշէ զշունչն ականջօք: Եւ՛ որպ ելուզանէ նա զխորհուրդս իւր լեզուաւ. այսպէս ևս շնչէ նա ականջօք, որով իսկ ընդունի յայլոց զխորհուրդս: Պահեսցուք ուրեմն զգուշապէս զականջս մեր՝ 'ի յօ-

դոյ չար խօսից . ապա թէ ոչ՝ սիրտն իսկոյն մա
հացուցանի : Մի՛ լսեր ուրեմն զվատթար առա
ջադրութիւն իմն , 'ի ներքոյ որոյ և իցէ առիթ :
և միայն յայսմիկ պատահման ոչ է քեզ որոգայթ
լինիլ գուեհիկ , ամարդի , և անքաղաքավար :

* Յիշեա . զի ընծայեալ ես դու զսիրտն քո այ .
նաև սէրն քո նուիրեալ և ա̃նագրեալ է այ : ու
րեմն սրբապղծութիւն իմն լինի , բառնալ զսակա
ւին 'ի նմանէ : Ընծայեա նմա զնա գոնեայ նորայն՝
բազմազան առաջադրութեամբ . պարփակեալ լեր 'ի
նմա , որպէս եղջերու իմն 'ի յորջս իւր : Աղաղակեա
առ Տէր , և նա օգնէ քեզ . և առնու 'ի ներքոյ
պահպանութեան իւրոյ զսիրտն և զսէրն քո , զի
կեայցէ միայն վասն իւր :

* Բայց եթէ արդէն ըմբռնեալ իցես դու 'ի
ցանցս սիրոյ . ո՜հ թէ . որպիսի դժուարութիւն իցէ
ճողոպրելն զքեզ յայնմանէ : Դի՛ր ուրեմն զքեզ
առաջի ներկայութեան աստուածայնոյ հանդիսավեհու-
թեան , և ճանաչեա զմեծութիւն թշուառութեան ,
տկարութեան , և ունայնութեան քոյ : Եւ յետոյ մե-
ծագոյն ուժգնութեամբ սրտի՝ որքան իցէ կարելի
քեզ , արհամարհեա զայն սկսեալ սէրն , և հրա
ժարեա 'ի յունայն առաջադրութենէն՝ զոր արարեր :
'Ի բաց թող զամենայն արարեալ խոստմունս ընդ նմա .
և կատարեալ կամօք հաստատեա զսիրտն քո , և
առաջադրեա 'ի քեզ՝ առ 'ի ոչ բնաւ ներածել ըզ
քեզ 'ի յայնպիսի խանդաղատմունս , և ըղձաձըկ
տութիւնս :

* Եթէ կարիցես հեռանալ 'ի յառարկայէ նո-
րին . յայնժամ առաւելապէս գովելի զքեզ : Քանզի՝
որպէս այնոքիկ , որք խայթեցեալք են 'ի յօձէ , ոչ
կարեն անդորրապէս բժշկիլ 'ի ներկայութեան նո-
ցին , որք այլ անգամ խայթեցեալք են 'ի ձեռն
այնու խայթեցման : Այսպէս և անձն՝ որ է
խայթեցեալ 'ի սիրոյ , դժուարաւ բժշկի յայսմա

նէ

նէ ախտէ, մինչ կայ առ ընթեր միւսոյն, որ է հարեալ այնու խայթոցիւ : Ուստի փոփոխումն տեղւոյ՝ առաւելապէս օգնէ առ 'ի շիջուցանել զտապն, և զանհանգստութիւն. թէ իցէ տապ ցաւոյ, և թէ սիրոյ:

Երիտասարդն այն, զորմէ խօսի սբն Ամբրոս". 'ի յերկդ գիրքն ապաշխարութեն. զկնի գնալոյ 'ի յերկար ժամանակս իմն, դարձաւ անտի բոլորովին ազատեալ 'ի խելագարական սիրոյ, յորմէ ըմբռնեցեալ էր նախ: Քանզի այնպէս փոխեալ էր 'ի յայլ իմն մարդ. մինչ զի յորժամ հանդիպեցաւ նմա մոլեալ սիրականն, և ասաց. մի՞ թէ ոչ ճանաչես դու զիս, զի ես այն եմ, և այլն: Նա պատասխանեաց նմա : դու այն ես, սակայն ես ոչ եմ այն: քանզի հեռաւորութիւնն, և տարակացութիւն՝ առ բերեալ էր նմա զայս երջանիկ փոփոխումն: Եւ՞ սբն Օգոստինոս վկայէ. թէ առ 'ի թեթևացուցանել զցաւն իւր, զոր ունեցաւ վն մահուան բարեկամին իւրոյ. չուեաց 'ի Թակաստ քաղաքէ՝ ուր նա մեռաւ, և գնաց 'ի Կարթագինէ:

* Բայց եթէ ոք ոչ կարէ հեռանալ. զի՞նչ պարտի առնել: Պարտ է հատանել բացարձակապէս զամ մասնաւոր կենցաղավարութիւնս, զբնաւ ծածուկ ընտանեկութիւնս, զամ մոլութիւնս աչաց, ծիծաղմանց. նաև հասարակածս զամ տեսակ հաղորդակցութիւնս և մանակցութիւնս, որք կարեն տածել և սնուցանել զծխաւէտ, և զդարշահոտ հուրս այս: Եւ՞ եթէ հնար իցէ. պարտ է խօսել ընդ սիրակցին իւր, առ 'ի բացայայտել նմա համարձակապէս՝ համառօտ, և խիստ բանիւք, զյաւիտենական բաժանումն, թէև երդուեալ իցէ ոչ բաժանիլ 'ի նմանէ: Ուստի աղաղակեմ ես "բարձրագոյն ձայնիւ, առ այն՝ որ անկեալ է 'ի մէջ այսպիսի ցանցից սիրահարութեն. կորեա՛, հա՛տ,

և

և խոնարհեա՛ զայնս ։ Զի ոչ է պարտ յամել առ 'ի ընդերկարել, և կարկատել զայսպիսի մոլեգնական բարեկամութիւնս . այլ պիտոյ է իսկոյն խզել և ծուատել ։ Նաև ոչ է պարտ ստուարացուցանել զայսպիսի կապանս . այլ պիտոյ է վաղվաղակի հատանել և խորտակել ։ քանզի այսպիսի կապանքս և առասանքս, ոչ են բարի և օգտակար առ իր իմն ։ Զի ոչ է պարտ խնայել սիրոյ այնմ, որ այնքան ներհակ է սիրոյն այ ։

* Բայց եթէ ասիցես . զկնի որոյ՝ մինչ բեկանիցեմ ես այսու կերպիւ զշղթայս թշուառագունի գերութեանս այսորիկ . տակաւին մնայ առ իս զգացումն իմն ։ զի նշանքն և նշմարանքն երկաթոյ մնան դեռևս տպեալք 'ի յոտս իմ . և 'ի յիղձս իմ ։ Ոչ կարեն առնել նոքա քեզ զայն, զոր ասացեր՝ ո՛վ խանդակաթդ . եթէ յղացար դու 'ի քեզ զայնքան արհամարհութիւն, և զզուութիւն քոյոյ չարին, որքան արդիւնաւորի նա ։ Ուստի եթէ իցէ այսպէս՝ դու ոչ ներղացուցանես այլևս 'ի շարժմանէ իմեքէ . և միայն ես ազատ յայնմանէ գարշելագոյն, զարհուրելագոյն, և վատահամբաւագոյն սիրոյ . նաև յայնց ընթացից, որք կախին 'ի նմանէ ։ Այլ և միայն ազատ յամ ըղձից, որք նկատեն դէպ առ թողեալ առարկայն . բաց յայնմանէ մաքրագոյն սիրոյ, որ է առ ած, և վն այ ։

Բայց եթէ վն անկատարելութեան զղջման քոյ, տակաւին մնասցէ 'ի քեզ չար յօժարութիւն և հակեցութիւն իմն ։ Յայնժամ ջանա՛ և հոգա՛ առնել յաղագս քոյ զմտաւորական առանձնութիւն իմն, հանգոյն այնմ՝ զոր ուսուցի քեզ 'ի վերոյ ։ Եւ՛ ժողովեա՛ զքեզ որքան և կարես . և հրաժարեա՛ 'ի ընթացից յօժարութեանց, և թուլամորթ հակեցմանց քոց . 'ի ձեռն հազարապատիկ կրկնեցման առաջադրութեան . և շնորհական լեր զՏնէ՝ յամ զօրութէ քումմէ ։ Ընթերցի՛ր առաւե

լապէս

լապէս զհոգևոր գրեանս. խոստովանեա՛ բազում անգամ, աւելի քան զսովորութիւն: պատմեա՛ խոնարհաբար և պարզապէս հոգևոր հօրն քոյ՝ զա̃մ թելադրութիւնս և գփորձութիւնս, որք պատահին քեզ: Եւ եթէ կարելի իցէ քեզ, բազմիցս խորհրդակցեա՛ շուրջ զայսու նիւթօք, ընդ այլ հաւատարիմ և իմաստուն անձինս: Եւ մի՛ երկբայիր երբէք, թէ ա̃ծ ոչ ազատէ զքեզ 'ի բնաւից ախտից այսցանէ. միայն թէ՝ դու յարատևեա՛ յայսմիկ կրթութեան հաւատարմաբար:

* Բայց եթէ ասիցես ինձ. ա՛րդեօք ոչ է ապերախտութիւն իմ, այսպիսի բռնութ̃ հատանել զբարեկամութիւն: Ո՛հ. ո՛վ երանելի ապերախտութիւն, որ զմեզ հաճելի առնես ա̃յ: Ոչ. ոչ. ո՛վ խանդակաթ առաքինութիւն՝ ոչ. զի այս ոչ լինի ապերախտութիւն, այլ բարերարութիւն իմն մեծագոյն, զոր դու առնես սիրեցելոյն քոյ: քանզի հատանելով զկապանս քո, 'ի միասին հատանես նաև զկապանս նորին, որովհետև նա էր հասարակ քեզ, և նմա: Եւ զի թէպէտ յայնժամ ոչ իմանայ նա՝ զիւր ապառնի բախտաւորութիւն. սակայն յետոյ իմանայ յոյժ բարեպէս, և ը̃ քեզ երգէ զշնորհակալութիւն զայն: Հատեր զկապանս իմ. քեզ մատուցից պատարագս օրհնութեան. և զանուն Տ̃ն կարդացից:

### Այլ ոմանք ազդմունք, և խրատք 'ի վերայ առարկայի բարեկամութեան ։

## Գլուխ · ԻԲ ։

Տակաւին ունիմ զհարկաւոր խրատ ինչ 'ի վերայ սոյն առարկայի ։ Բարեկամութիւն պահանջէ զմեծագոյն հաղորդակցութիւն ինչ 'ի մէջ սիրեցելոց · ապա թէ ոչ՝ նա ոչ կարէ ծնանիլ, և մնալ ։ Ե՞ւ ստուգաւ է՝ որ պատահի բազմիցս · զի ընդ հաղորդակցութե բարեկամութեան՝ անցանին նաև այլք բազումք հաղորդակցութիւք · և կաթեն անզգալապէս 'ի սրտէ 'ի սիրտ, 'ի ձեռն միոյ փոխաբերական ներհեղման և կաթեցման ըղձից, հակեցմանց, և յօժարութեանց ։ Ե՞ւ այս մանաւանդ յայնժամ պատահի · մինչ մեք զմեծ ինչ համարիմք զայն՝ զոր սիրեմք ։ Քանզի յայնժամ այնպէս բանամք զսիրտ մեր առաջի բարեկամութե նորին · մինչ զի դիւրապէս կարեն մտանել առ այն, ընաւ հակեցմունք և յօժարութիւք նորին · թէ իցեն բարիք, և թէ չարք ։

Ստոյգ է այս · զի մեղուքն՝ որք կազմեն զՀերաքլիական մեղրս, ոչ խնդրեն և ժողովեն զայլ ինչ, եթէ ոչ զմեղրն ։ Բայց 'ի ծծելն զմեղրն ծաղկանց, ընդ նմին նաև ծծեն անզգալապէս զթունաւոր հիւթն, և որակութիւն՝ աքքօնիթօ կոչեցեալ խոտոյ, 'ի վերայ որոյ առնեն զժողովումն իւրեանց ։ Ուստի ո՛վ խանդակաթդ առաքինութե · պիտոյ է յայսմիկ պատահման բարեպէս 'ի գործածել զխօսս կենարարին մերոյ · ոպ̄ և նախնիքն ուսուցին և աւանդեցին · Լե՛ր լաւագոյն հատավաճառ ·

Ճառ. ՟ժ՟ ատառաք : Որ կամի ասել. թէ մի՛ առնուր զսուտ դրամն 'ի տեղի լաւ դրամոյ. և մի՛ զցած ոսկին՝ 'ի տեղի ձոյլ ոսկւոյ. այլ որոշեա՛ և բաժանեա՛ զպատուականն յանարգէ : Վս՟ զի ոչ գտանի անդ իմն, որ ոչ ունիցի զանկատարելութիւն իմն :

Եւ ընդ է՞ր է այս մեզ, ընդունիլ առ ամօթոյ՝ զպակասութիւն, և զանկատարելութիւն բարեկամին՝ ընդ բարեկամութեան նորին : Պիտոյ է ճշմարտապէս սիրել զնա, և ոչ հաղորդակցիլ անկատարելութեան նորին, եթէ ունիցի : Բայց ոչ պիտոյ է սիրել և ընդունիլ զանկատարելութիւն նորին. զի բարեկամութիւն պահանջէ զհաղորդակցութիւն բարւոյ, և ոչ չարի : Զի ոպ՟ այնոքիկ՝ որք հանեն զաւազն 'ի հանքից. բաժանեն զոսկին՝ զոր գտանեն անդ, և զաւազն թողուն առ ափն հանքատեղ : Այսպէս և այնոքիկ, որք ունին զհաղորդակցութիւն՝ բարւոյ բարեկամութեան իմիք, պարտին բաժանել զաւազն անկատարելութեան, և ոչ թողուլ մտանել զնա 'ի հոգիս իւրեանց : Սբն գրիգոր նիւսացին վկայէ. թէ բազում ոմանք սիրելով զմ՟ն բարսեղ, և զարմանալով ընդ այն. քարշեցեալք էին առ 'ի հետևիլ նաև արտաքին անկատարելութեանց նորին. ՟յ՟ յամրապէս խօսելոյն, և ներդևեալ շնչառութեան. մտախորհ գոլոյն. նաև ձևոյ մորուացն, և ընթացից նորին :

* Նաև՝ մեք ևս տեսանեմք բազմիցս. զարս, ըզկանայս, զորդիս, և զբարեկամս. որք 'ի ունիլն 'ի մեծի համարման զբարեկամս, զհարս, զմարս, զարս, և զկանայս. ստանան զբազում վատ պակասութիւնս նոցին, հետևելով նց՟. և կամ զիջանելով առ նս՟, 'ի ձեռն կիրառման բարեկամութեան, զոր ունին 'ի միասին : Արդ՝ այս ոչինչ կերպիւ՞ պարտ է առնանիլ. զի իւրաքանչիւրոք բա-

ւա-

ւակամապէս ունի յինքեան զվատ յօժարութիւն և զհակեցմունս, առանց բեռնաւորեցեալ գոլոյ զայլոցն։ Եւ ոչ միայն ոչ պահանջէ բարեկամութիւն զայս. այլ նաև հակադարձապէս պարտաւորէ զմեզ առ 'ի օգնել իրերաց. ազատելով զմեզ փոխաբերապէս յամենայն կերպ անկատարելութեանց։ Արդ առանց երկբայութեան պիտոյ է հեղաբար տանիլ բարեկամին 'ի պակասութիւնս նորին. բայց ոչ է պիտոյ օգնել նմա 'ի յայնս։ Ապա որչափ ևս առաւել՝ ոչ պարտիմք անդրաբերել զայնս 'ի մեզ։

* Բայց ես ոչ խօսիմ աստ, եթէ ոչ միայն զանկատարելութեանց։ քանզի որքան առ մեզս, ոչ պիտոյ է տանիլ և համբերել բարեկամին։ Վասնզի այս է բարեկամութիւն իմն տկար՝ և վատ. տեսանել կրել զբարեկամն, և ոչ օգնել նմա. տեսանել մեռանիլ զնա շարաւալի վիրօք և ուռուցուածովք, և ոչ համարձակիլ տալ նմա զհարուածս իմն ածելւոյ յանդիմանութեան, առ 'ի փրկել զնա։

* Ճշմարիտ և կենդանի բարեկամութիւն՝ ոչ կարէ տևել 'ի մէջ մեղաց։ Ասի թէ՝ սալամանդրն շիջուցանէ զհուրն, մինչ դնի 'ի մէջ նորին։ և մեղքն եղծէ զբարեկամութիւն՝ յորում և գտանիցի։ Եւ եթէ այս իցէ մեղք իմն անցական, բարեկամութիւն մերժէ զնա իսկոյն։ բայց եթէ յարատևէ և երկարի, այնու շուտով մեռանի բարեկամութիւնն. քանզի նա ոչ կարէ յենուլ, եթէ ոչ 'ի վերայ ճշմարիտ առաքինութեան։ Տե՛ս ուրեմն՝ թէ որքան պակաս պարտի մեղանչել ոք 'ի բարեկամութեան։ Բարեկամն՝ թշնամի է, մինչ կամի կորուսանել և դատապարտել զբարեկամն։ և մանաւանդ՝ այս է մինն 'ի յառաւել նշանաց սուտ բարեկամութեան. տեսանել զնա կենցաղավարիլ ընդ մոլեկան անձանց, 'ի մէջ որպիսի և իցէ մեղաց։

ղաց ։ Արդ զայն՝ զոր մեք սիրեմք ; եթէ իցէ ախտաւոր, և մոլեկան․ թարց երկրայութեան․ բարեկամութիւն մեր ևս է ախտաւոր և մոլեկան ։ Որովհետև՝ նա ոչ կարելով ունիլ զհայեցումն առ ճշմարիտ առաքինութիւն, և զօրութիւն․ զի տեսանիցէ զյիմարական առաքինութիւն, և զզգայական որակութիւն ։

Ընկերութիւնն՝ որ առնանի 'ի մէջ վաճառականաց, վ͞ա մարմնաւոր շահուց․ ոչ ունի զայլ ինչ, եթէ ոչ զպատկերն ճշմարիտ բարեկամութեան ։ Քանզի նա առնանի՝ ոչ վ͞ա սիրոյ անձին, այլ վ͞ա սիրոյ շահուց ։

* Վերջապէս՝ այսոքիկ երկու ծայլին բանքս, են իբր երկու սիւնք, առ 'ի ապահով և անկասծած առնել զքրիստոնէական կեանքն ։ Մինն է իմաստնոյն, որ ասէ․ Որ երէնչի յո՛յ հաաարաչաւո ափաայի ղբարէճամութի բարի ։ Եւ միւսն է սրբոյն յակոբայ․ Սէր աշխարհիս թշնամութի է առ ա͞ծ ։

Յաղագս չրբութեան՝ արտաքնոյ մահացուցման ։

## Գլուխ․ ԻԳ ։

Այնոքիկ՝ որք ընձեռեն զադարակաց, և զդաշտից․ վկայեն լթէ․ եթէ ոք դրիցէ 'ի վ͞ր ամբողջ նշոյ իմիք՝ զբառ իմն․ և զնոյն նուշն դնիցէ 'ի մէջ կեղևոյ իւրոյ՝ ամրապէս փափկամբ, և այսպէս տնկիցէ զնա․ ա͞մ պտուղքն՝ որք բուսանին յայն մանէ ծառոյ, ունին առ ինքեանս գրեալ և նկարեալ զնոյն բառն ։ Արդ որքան առիս՝ ո՛վ խանդակաթդ առաքինութեան․ ոչ երբեք կարասցի հաւանիլ դիտաւորութեան այնոցիկ, որք առ 'ի կաղ-

մել

մել եւ նկարել զմարդն, սկսանին ձեւակերպել 'ի յարտաքնոց, 'ի յարարմանց, 'ի զգեստուց, եւ 'ի հերաց ։ Վս զի թուի թէ՝ պիտոյ էր ներհակապէս սկսանիլ 'ի ներքնոց. Դարձ առ իս (ասէ Տր) բոլորով սրտիւ քով. Որդեակ տուր ինձ զսիրտ քո ։ Զի սիրտն գոլով սկիզբն գործոց. ուստի եւ նոյն գործքըն այնպիսիք են, որպիսի է եւ սիրտն ։ Փեսայն երկնաւոր հրաւիրելով զհոգին՝ ասէ. Դի՛ր զիս իբրեւ զկնիք 'ի վր սրտի քոյ. եւ իբրեւ զմատանի 'ի վր բազկի քոյ ։ Այսպէս է ո՛վ սիրահարդ իմ. զի այն ոք՝ որ ունի զՅս Քս 'ի սրտի իւրում, նա բարեպէս ունի զնա 'ի բնաւ արտաքին գործս իւր ։

* Մնկ՝ ո՛վ խանդակաթդ առաքինութե. յառաջ քան զայլ իմ ինչ, կամեցայ ձուլել եւ նկարել 'ի սրտի քում զայս սրբագոյն բանս. Ո՛չ Լէցի Յս ։ Յուսալով թէ. յետ այսորիկ կեանքն քո, որ յառաջագայի 'ի սրտէ քումմէ, ոչ եւ նոյն 'ի կեղեւոյ իւրմէ. յառաջածէ զբնաւ գործս իւր ( որք են պտուղք նորին. ) նկարագրութբ այսու փրկաւէտ բանիւս ։ Եւ՛ ոչ սոյն ամենաքաղցր Յսս՝ կեայ 'ի մէջ սրտի քոյ. նոյնպէս եւս կելոց է 'ի բնաւ գործս. նաեւ երեւելոց է 'ի յաչս, 'ի բերանս, 'ի ձեռս, եւ 'ի նոյն հերս քո ։ Ուստի եւ դու՝ յայնժամ կարես ասել ընդ սբյն Պօղոսի. Կենդանի եմ այսուհետեւ՝ ոչ ես, այլ կենդանի է յիս Քս ։ Վերջապէս, այն՝ որ շահեալ է զսիրտն մարդոյ. շահեալ եւ ժառանգեալ է եւս զնոյն մարդն ։ Բայց սոյն սիրտս, յորմէ մեք կամիմք սկսանիլ. պահանջէ՝ զի իցէ վարժեալ եւ հմտացեալ. թէ ո՛րպէս պարտի կազմել եւ կառավարել զընտանիս, եւ զարտաքին կացութիս իւր. զի ոչ միայն ծնանիցի յինքեան զսբ ջերմեռանդութի, այլ նաեւ զմեծ իմաստութի, եւ բարոյականութի ։ Որոյ վս պատրաստիմ յայժմ տալ քեզ զբազում ներբողմունս, եւ զխրատս.

* Արդ՝ եթէ դու կարես ծոմապահել․ բարեգոյն առնես՝ եթէ պահես 'ի յոմանս աւուրս, բաց 'ի յայնց ծոմապահութեանց, զոր եկեղեցին հրամայէ մեզ: Քանզի առ 'ի վերացուցանել զմիտս, 'ի մահացուցանել զմարմինն, 'ի կրթիլ յառաքինութիւնս, և առ 'ի ստանալ զարդիւնս 'ի յերկինս․ այս է յաւէտ մեծ իմն բարի․ բաց 'ի հասարակ ծոմապահութեանց, ունիլ նաև զնախանձաւորութիւն առ 'ի զսպել զզգայական ախորժակն, և ենթարկել զմարմինն օրինաց մտաց: Եւ թէպէտ՝ թէև երբեմն ոչ պահիցէ այնպիսին․ սակայն տակաւին այսու յոյժ երկնչի թշնամին մեր․ մինչ ճանաչէ թէ կարեմք, և գիտեմք պահել: Աւուրքն չորեքշաբաթի, ուրբաթի, և շաբաթի, էին աւուրք 'ի յորս առաջին քրիստոնեայքն՝ առաւել կրթեէին առ 'ի պահել, և ժուժկալել: Ընկալ ուրեմն և զայնս՝ առ 'ի ծոմապահել, ըստ որում ջերմեռանդութեան քո․ նաև խոհեմութեան հոգևոր հօրն քոյ, տնօրինեն և թոյլատրեն զայնս քեզ:

* Այս և կամաւորապէս ասեմ զայն, զոր ասէր սուրբն Ջերոնիմոս առ ջերմեռանդ կինն լէթա․ Երկար պահեցողութիւնքն՝ ինչ յոյժ անհաճոյք են․ և մանաւանդ 'ի յայնս՝ որք են տկարքն 'ի մատաղատունկ հասակի: Ուստի գիտեմ և ես 'ի ձեռն փորձառութեան․ զի աւանակն մինչ առաւել վաստակի և խոնջի 'ի ճանապարհին, խնդրէ փախչիլ և զերծանիլ: Այսպէս և առաւելութիւնն պահոց՝ մինչ առաւել տկարացուցանէ զմատաղատունկս, և զերիտասարդս․ այնու դիւրապէս դարձուցանէ զնոսա առ հեշտութիւն: Եղջերուքն 'ի յերկուս ժամանակս անկանին 'ի չարիս․ այսինքն մինչ յոյժ գիրանան, և մինչ յոյժ վտիտանան: Այսպէս և մեք՝ առաւելապէս տրամադրիմք փորձութեանց, մինչ մարմինն մեր առաւել սնուցանի․ և կամ մինչ առաւել պա-

հե_

հեցողութե՛ մաշի և նուաղի: Քանզի մինն առնէ զնա ցոփանալ 'ի գործս իւր. և միւսն առնէ յուսահատիլ 'ի կարիս իւր: Եւ ո՟պ մեք ոչ կարեմք տանիլ զնա, մինչ է յոյժ պարարտացեալ և գիրացեալ: այսպէս և նա ոչ կարէ տանիլ զմեզ, մինչ է յաւէտ վատացեալ և նիհարացեալ:

Պակասութիւն այսպիսի բարեխառնութեան, որ լինի 'ի պահեցողութեան, 'ի կրթութեան, 'ի ձաղկեցման, և 'ի խստութեան. անօգուտ առնէ զծառայութիւն սիրոյն, և զլաւագոյն ամս բազում անձանց: Ո՟պ և արար սէրն բեռնարտոսի. որ ցաւէր վս՟ կրթելոյ 'ի խստութիւնս՝ առաւել քան ըզչափն: Վս՟ զի այնոքիկ, որք առաւել խստապէս կրթեալք են զնա 'ի սկզբան, վերստին սփոփեալք և փաղաքշեալք են զնա 'ի վախճանի: Բարեգոյն լինէր նոցա, եթէ 'ի սկզբան ունիցէին զհաւասար և զհամեմատ կրթութիւն իմ՟ս գործոց, և աշխատանաց, առ որս պարտաւորէր զնս՟ յատկութիւն իւրեանց:

* Պահեցողութիւն, և աշխատանքն՝ յաղթահարեն և նուաճեն զմարմինն: Բայց եթէ աշխատանքն, զոր դու առնես. իցէ հարկաւոր, և յոյժ օգտակար 'ի փառս այ՟. ես առաւել սիրեմ յայնժամ, զի կրիցես զպատիժն աշխատանաց, քան թէ պահեցողութեան: Այսպէս դիտումն եկեղեցւոյ, որ վս՟ օգտակար ծառայութեան այ՟՝ և ընկերին, զորս առնեն ոմանք. անպարտաւոր առնէ զայնս՝ նաև 'ի հրամայեցեալ պահեցողութենէ: Մի ոմն ունի զաշխատանս պահեցողութե՟. և այլ ոմն ունի զաշխատանս՝ առ 'ի ծառայել հիւանդաց, այց առնել բանտարգելելոց, լսել զխոստովանութիւն, մխիթարել զտրտմեալս, աղօթել վս՟ հոգւոց. և առնել զայլ նման կրթութիւնս: Այս յետին աշխատութիւնքս առաւել արժէն քան զառաջինն: վասն զի բաց 'ի համարակապէս նուաճելոյ զմարմինն,

մինն , առնեն նաև զբաղումն ցանկալի պտուղս : Եւ՛ հասարակաւս խօսելով , առաւել լաւագոյն է ունիլ զառաւել զօրութիւն մարմնոյ՝ որ ոչ է հարկաւոր . քան նուաղեցուցանել զնա առաւել , որ ոչ է պիտոյ : Քանզի միշտ կարէ ոք նուաղեցուցանել և յաղթել զնա , մինչ կամիցի : բայց ոչ կարէ միշտ նորոգել և զօրացուցանել զնա , յորժամ կամիցի :

* Ինձ այսպէս թուի . թէ մեք պարտիմք 'ի մեծի համարման և յարգման ունիլ՝ զայն բանն , զոր Տէրն մեր ասաց առաքելոցն . Ուտիցէ՛ք , զոր ինչ առաջի ձեր դնիցեն : Զի ո՞չ ես հաւատամ . թէ այս է մինն 'ի մեծագոյն առաքինութեանց . թարց ընտրութեան ուտել զայն , զոր քեզ պատրաստի , և այնու միջոցաւ՝ որով պատրաստի . թէ իցէ ըստ ախորժակի քում , և թէ ոչ . քան միշտ ընտրելն զխոշորն և զվատն : Վա՞ զի թէպէտ այս վերջին կերպս կենցաղավարելոյ , թուի ինձ առաւել խստագոյն գոլ : սակայն առաջին կերպն ունի զգերազանցութիւն : զի այնու ոչ միայն հրաժարի 'ի հաճելեաց իւրոց , այլ նաև 'ի յաղատութէ ընտրելոյ : Եւ՛ այս ոչ է սակաւ խստութիւն , յարմարեցուցանել զճաշակելիսն իւր ամ ձեռաց , և ենթարկել զնա ամից ընդդիմութեանց :

Առակցեմ ևս . թէ այսպիսի մահացուցումն ոչ երևի կէտ մի , և ոչ բերէ ընաւ զանանդորրութիւն իմն ումեք . և եղականապէս է յատկութիւն քաղաքական կենաց : Խստել զկերակուր իմն , և առնուլ զայլ . կցմթել , նաև աստ և անդ դարձուցանել զամ ինչ . ոչ գտանել երբեք զեր ինչ բարեպէս արարեալ , և պատրաստեալ . և գտանել զպակասութիւն առ ամ պատառս . և ունիլ ըղ մեծ հոգունակութիւն զսկուտեղեց , զսկաւառակաց , և զգրգալեաց . է յատկութիւն միոյ փափուկ սրտի : Ես առաւել համարիմ զայն , զոր սուրբն բեռ_

բեռնարտոս ըմպէր զձէթ 'ի տեղի ջրոյ, և գինւոյ. քան թէ ըմպիցէր գիտութե զդառնագոյն ջուրն ապսինթոսի: քանզի այս էր նշան, զի նա ոչ մտածէր զայն՝ զոր ըմպէր: Եւ յայսպիսի զանցառութե ուտելոյ և ըմպելոյ՝ կայանայ կատարելութին կրթութե և կիրարկման՝ այսորիկ մբ վճռոյս: ՈՒՏԻՑԷՔ*՝ ԶՈՐ ԻՆՉ ԱՌԱՋԻ ՁԵՐ ԴՆԻՑԵՆ: Սակայն բաց 'ի յայնց կերակրոց, որք վնասեն առողջութե, և պղտորեն զմիտս. որպ առնեն բազում կերակուրք ջերմայինք, փքուորք, գոլորշականք, և դեղօրէականք: Եւ ևս բաց 'ի պատահմանց ումանց, յորս բնութին ունի զկարօտութի օգնելոյ, և զօրանալոյ, առ 'ի կրել զաշխատութի իմն 'ի փառս այ: Զի լաւագոյն է շարունակ և բարեխառն զգաստութի իմն, քան զայն ժուժկալութին, և պահեցողութին, որ առնանի 'ի ձեռն զանազան դեղօրէից. 'ի յորս միջադրին մեծամեծ թուլացմունք:

* Կրթութին ունի զզարմանալի զօրութի իմն՝ առ 'ի զարթուցանել զախորժակն ջերմեռանդութեան, մինչ բարեխառնապէս և չափաւորաբար առնանի: Քուրձն՝ հզօրեղապէս նուաճէ զմարմինն: բայց կիրառութ նորին ոչ է հասարակապէս յատուկ ամուսնացելոց, և փափուկ կազմութե ունողաց. և ոչ ևս այնոցիկ՝ որք ունին զայլ ծանրագոյն պատիժս, և զաշխատանս առ 'ի կրել: Բայց սակայն կարէ 'ի կիրարկանել 'ի յառաւել նշանաւոր աւուրս ապաշխարութե, ըստ ընտրութեան, և ըստ խոհեմութեան խոստովանահօրն:

* Պիտոյ է ունել իւրաքանչիւրոք զգիշերն՝ առ 'ի ննջել, ըստ կազմողութե իւրում, որքան և պիտոյանայ ինքեան. առ 'ի կարել բարեպէս զարթնուլ, և հսկել յառաւօտեան ժամու: Քանզի մբ գիրքն. օրինակքն մբց. և բնական պատճառքն,

բազում կերպիւ յանձնեն մեզ՝ զառաւօտեան ժամն, իբր առաւել լաւագոյն և պտղաբերագոյն մասն աւուրց մերոց: Եւ ինքն Տէրն մեր՝ կոչեցեալ է արեգակն առաւօտու. և Տիրուհին մեր՝ առաւօտ և արուսեակ աւուրն: Ես համարիմ թէ՝ այս իցէ առաքինական մտախոհութիւն իմն. ննջել յերեկոյեան ժամու, առ՚ի զարթնուլ և յառնել կանխապէս ՚ի յառաւօտեան պաշտօն: Ճշմարտապէս՝ այս ժամանակս է առաւել հաճելի, առաւել քաղցր, և առաւել անդորր: Քանզի՝ նաև թռչունքն հրաւիրեն զմեզ առ՚ի զարթնուլ, և օրհնել զած: ուստի յոյժ շահաւէտ է նաև առողջութեան և սրբութեան՝ յառնելն կանխապէս:

* Բաղաամ հեծանելով ՚ի վր̃ իշոյ իւրոյ, գնաց առ՚ի գտանել զԲաղակ: բայց զի ոչ ունէր զուղիղ դիտաւորութիւն, այնու հրեշտակն սպասէր ՚ի ճանապարհին, սուսեր մերկ ՚ի ձեռին՝ առ՚ի սպանանել զնա: Եւ էշն՝ որ տեսանէր զհրեշտակն, երեք անգամ խուսեաց ՚ի ճանապարհէն: և յայսմեկ միջոցի՝ Բաղաամ անողորմաբար հարկանէր զէշն գաւազանաւ իւրով, առ՚ի տանիլ զնա յառաջ: Եւ մինչ երեք անգամ էհար զէշն. նստաւ էշն ընդ Բաղաամու. և սկսաւ խօսիլ մեծ հրաշիւք առ Բաղաամ ասելով. Զի՞նչ արարի քեզ՝ զի հարեր զիս այս երիցս անգամ: Եւ առ ժամայն բացան աչքն Բաղաամու, և ետես զհրեշտակն՝ որ խօսէր ընդ ինքեան, ասելով: Ընդէ՞ր հարեր դու զէշդ այս երիցս անգամ. և եթէ չէր խուսափեալ յինէն, արդ էս զքեզ սպանեալ էր, և զդա ապրեցուցեալ: Տե՛ս ուրեմն ո՛վ խանդակաթդ առաքինութիւն, զի Բաղաամ է պատճառ չարին. բայց խիթէ և հարկանէ զխղճուկ էշն, որ ոչ ունի զյանցանս: այսպիսի պատահի բազմիցս նաև ՚ի գործս մեր: Կին ումն մինչ սխալանէ զայրն իւր, և կամ զորդին իւր

հի-

հիւանդ. իսկոյն դիմէ առ պահեցողութիւնս, առ քուրձն, և առ կրթութիւնս. ոպ̃ և արար դաւիթ յայսպիսի պատահման իմիք: Ահ. ո՛վ սիրելի իմ. դու հարկանես զխեղճ իշուկն. զի̃ տանջես դու զմարմինն քո: Բայց նա ոչ է պատճառ նեղութեան և անձկութեան քոյ. և ոչ ես ած̃, որ մերկացուցեալ է զսուրն իւր ընդդէմ քեզ. այլ յանդիմանեամ, և ուղղեամ զսիրտն քո: Քանզի իբր կռապաշտութեան իմն է այս առն քոյ, որ թոյլատրէ գործել որդւոյ իւրոյ՝ զպէսպէս կերպ մոլութիւս, և հրաւիրէ զնա առ հպարտութիւն, առ ունայնութիւն, և առ փառասիրութիւն:

* Այր ոմն մինչ տեսանէ, թէ հանապազ գարշելապէս անկանի 'ի մեղս բղջախոհութեան. ներքին խայթումն՝ սուսերամերկ ը̃դդէմ ելանէ խղճմտանաց իւրոց, առ 'ի հարկանել զնա ստ̃ երկիւղիւ միով: Եւ իսկոյն սիրտն իւր դառնալով առ ինքն ասէ. ո՜հ. մատնիչ և դաւաճանօղ մարմին. ո՜հ. անհաւատարիմ և անօրէն մարմին, դու մատնեցեր և ապստամբեցուցեր զիս: Որոյ վս̃՝ առժամայն հարկանէ զմարմինն իւր, անբարեխառն պահեցողութբ̃, անկարգ կրթութբ̃, և անտանելի քրձազգեցութբ̃: Ո՜վ խղճալի հոգի. եթէ կարիցէր խօսիլ մարմինն քո՝ հանդոյն իշոյն բաղաամու. նա քեզ ասէր. ընդ է՞ր հարկանես զիս անողորմաբար՝ ո՛վ հոգի իմ. ած̃ մերկացուցեալ է ընդդէմ քո զսուրն վրէժխնդութեան իւրոյ: Դու ես յանցաւորն և մեղապարտն. զի դու ածես զիս առ չար, և առ վատթար կենցաղավարութիւս: դու հպեցուցանես զաչս իմ, զձեռս իմ, և զշրթունս իմ առ վավաշոտութիւն: դու շփոթես զիս չար և վատ երևակայութբ̃: Ունեամ զբարի խորհուրդ, և ես ոչ ունեցայց զչար և զվատ շարժմունս: կենցաղավարեամ ը̃ պարկեշտ անձանց. և ես ոչ շարժեալ և դրդեալ եղէց 'ի ցանկութիւս: մի՛

յաճախեր առ բղջախոհս, և ես ոչ եղէց ալէկոծեցեալ 'ի ցանկութէ իմմէ: Վայ ինձ. դու ես այն՝ որ արկանես զիս 'ի հուր, և ոչ կամիս թէ այրեցից զքեզ: դու արկանես զծուխ 'ի յաչս իմ, և ոչ կամիս զի բորբոքեցիմ: Եւ՛ յայսմիկ պատահման ասէ քեզ ա̃ծ. Նախապէս հա՛ր, պատռեա՛, ջախջախեա՛, և խորտակեա՛ զսիրտն քո. զի ես բարկացեալ եմ ընդդէմ նմա:

Արդարև առ 'ի բժշկել 'ի կեռոյ, ոչ է այնքան պիտոյ լուանիլ և թանիլ. որքան պիտոյ է մաքրել զարիւնն, և զովացուցանել զթոքն: Այսպէս՝ առ 'ի բժշկել 'ի մոլութեանց մերոց, ճշմրտպ̃ է լաւագոյն իր՝ մահացուցանել զմարմինն: բայց 'ի վեր քան զա̃մ՝ հարկաւոր է բարեպէս մաքրել զիղձն մեր, և զովացուցանել զսիրտն: Բայց այսու ա̃միւ. ոչ ինչ կերպիւ պարտ է մեզ առնել զխստութիւն իմն մարմնոյ, առանց խրատու և թոյլատրութեան խոստովանահօր, և առաջնորդողի հոգւոյ մերոյ:

## Յաղագս կենցաղավարութեան, և առանձնականութեան:

### Գլուխ . ԻԴ:

Խնդրել զկենցաղավարութիւն է այս. և փախչել 'ի կենցաղավարութէ. են երկու ծայրք 'ի քաղաքական ջերմեռանդութեան. զորմէ ես աստ խօսելոց եմ քեզ: Զի փախչելն 'ի նմանէ՝ ցուցանէ ունել զզայրացումն, և զարահամարհումն դէպ առ ընկերն. և խնդրելն զնա, ցուցանէ ունել զդատարկութիւն, և զանօգտութիւն: Պիտոյ է սիրել զընկերն՝ որպ̃ զանձն

զանձն իւր ։ ուստի առ 'ի ցուցանել՝ թէ ոք սիրէ զընկերն, ոչ պարտի փախչել 'ի գոլոյ ընդ նմա ։ Եւ առ 'ի վկայել՝ թէ սիրէ ոք զանձն իւր, պարտի հաճիլ ինքեան, յորժամ է առ ինքն. և յայնժամ է առ ինքն, յորժամ է միայն ։ Մտածեա՛ նախ զքէն ( տես ս̄ն բեռնարտոս ) և ապա զայլոց ։ Ուրեմն մինչ ոչ ինչ իր, և իրակութիւն դնէ քեզ հարկ՝ առ 'ի դնալ 'ի կենցաղավարութեն ընդ այլս . բնակեա՛ց 'ի քեզ ինքնդ, և կա՛ց ընդ սրտի քում ։ Բայց մինչ պատշաճաւորապէս վերահասանիցէ 'ի վր̄ քո՝ կենցաղավարել ընդ այլս . և կա̄ արդար պատճառ իմն յորդորիցէ զքեզ՝ առ 'ի ընդունիլ զնա ։ յայնժամ դնա՛ դու անդ 'ի յանունն ա̄յ, և տե՛ս զընկերն քո բարի սրտիւ՛, և բարի աչօք ։

* Այնք կոչին վատ կենցաղավարութիւնք, որք առնանեն չար դիտաւորութե̄ իւիք . և կամ մինչ են մոլութենականք, անխոհեմք, և անպարկեշտք ։ Եւ յայնպիսի կենցաղավարութեց պարտ է հեռանալ . ո̄պ և հեռանան մեղուքն 'ի բազմութէ բզէզաց, և պիծակաց ։ Զի ո̄պ այնոքիկ՝ որք խածատեցեալք են 'ի կատաղի շանց . ունին զառաւել որոգայթաւոր քրտունս, շունչս, և թոքս . և մանաւանդ այնք՝ որք են մանկունք և փափուկք կազմողութե̄ ։ Համգունաբար և այսպիսի ախտացեալքս, ոչ կարեն կենցաղավարել ը̄ այլս, թարց վնասուց և մեծագոյն որոգայթից . և մանաւանդ ընդ այնոսիկ, որք տակաւին են տկարք և փափուկք ջերմեռանդութե̄ ։

* Են ևս կենցաղավարութիւնք ոմանք, որք են անօգուտք առ այլ ի̄մ իրս, բաց 'ի զբաղելոյ, և սփոփելոյ . որք առնանեն պարզապէս առ 'ի թուլացուցանել սակաւ ինչ զծանրութիւն զբաղանաց ։ Եւ որքան առ այս . ո̄պ ոչ է պիտոյ առաւել պարապել առ այն . այսպէս կարէ ծախել 'ի

նա

նա սակաւ ինչ ժամանակ, ը̄ որում սահմանեալ է
առ 'ի զբօսնուլ և սփոփիլ:

* Են նաև այլք կենցաղավարութիւնք. որք ունին
զհամեստ վախճանս. որպիսիք են փոխաբերա_
կան այցելութիւնք, և համաժողովմունք ոմանք, որք
առնանին առ 'ի պատուել զընկերն: Եւ՛ որքան
առ այս՝ ասեմ. զի ոչ՛ ոչ է պարտ լինիլ ումեք
'ի մասնաւորի՝ առաւելապէս սիրող կենցաղավա_
րութեան: այսպէս ոչ է պարտ լինիլ յաւէտ անբա
րոյական, առ 'ի արհամարհել զնա: Ուստի պի_
տոյ է հատուցանել 'ի ձեռն համեստութեան՝ զպա
րաւանդութիւն, զոր պարտի. առ 'ի փախչիլ և
զգուշանալ հաւասարապէս 'ի կոպտութենէ, և 'ի
թեթևութենէ:

* Են և այս կենցաղավարութիւնք օգտակարք. որ_
պիսիք են կենցաղավարութիւնքն ջերմեռանդ, և
առաքինի անձանց: Մեծագոյն բախտաւորու_
թիւն լինի քեզ միշտ՝ ո՛վ խանդակաթդ. եթէ պա
տահիցիս այսպիսւոյ կենցաղավարութեան: Որթքն
այգեաց՝ որք տնկեալք լինին 'ի մէջ ձիթենեաց,
զայնպիսի խաղողս յառաջածեն, որք ունին զսա
կաւ ինչ պարարտութիւն, և զհամ ձիթապտղոյ:
Այսպէս և հոգի ոմն, որ յաճախապէս գտանի
'ի մէջ առաքինի անձանց, ոչ է կարելի՝ թէ ոչ
հաղորդակցիցի 'ի յորպիսութիւնս, և 'ի յորակու_
թիւնս նոցին: Պիծակքն, որք միայնակք ոչ կա
րեն առնել զմեղրն, բայց խառնեալ ը̄ մեղուաց,
օգնեցեալք լինին 'ի նոցանէ առ 'ի առնել զայն:
Այս է մեծագոյն շահաւէտութիւն իմն. բարե
պէս կրթիլ 'ի ջերմեռանդութեան, և կենցաղավա
րիլ ընդ ջերմեռանդ անձանց:

* Յա̄մ կերպ կենցաղավարութիւնս, միշտ գե
րազանցելի է միամտութիւնն, պարզութիւն, հե
զութիւնն, և համեստութիւնն: Են ոմանք ան
ձինք, որք ոչ առնեն բնաւ զտեսակ իմն արարո
ղու

ղութեն և շարժման. եթէ ոչ այնպիսի արհեստիւ և եղանակաւ, յորմէ ամ ոք ձանձրանայ և զզուի. Եւ ո՞վ այր ոք՝ ոչ կամիցէր ընթանալ, եթէ ոչ թռուցելով զքայլս իւր. և ոչ խօսիլ, եթէ ոչ եղանակելով և երգելով. այնու յաւէտ ձանձրութիւն լինէր ընկերակցեալ մարդկանց: Այսպէս և այնոքիկ, որք ունին զարուեստաւոր կենցաղավարութիւն իմն, և առնեն զընաւ շարժմունս և զբանս իւրեանց՝ հանդերձ ... ութբ. ծայրագունապէս ձանձրալիք լինին 'ի կենցաղավարութեն: և այսպիսի անձինքս՝ միշտ ունին զտեսակ իմն ժպրհութեն, և յանդգնութեն: Հասարակապէս հարկաւոր է. զի բարեխառն ուրախութիւն և զուարճութիւն իմն՝ իշխիցէ կենցաղավարութեն մերոյ: Սբն ռոմուալտօ, և սբն անտոն, որք են մեծապէս գովելի անձինք: զի թէև իցէին 'ի մեծի խստակրօնութեն. սակայն ունէին զդէմս, և զխօսս իւրեանց՝ զարդարեալ ուրախութեամբ, զուարճութբ, և քաղաքավարութբ: Ասի յառակս. ծիծաղ լեր ընդ այնոսիկ, որք ծիծաղին. և ուրախ ընդ այնոսիկ, որք ուրախանան: Ասեմ և ես քեզ՝ 'ի միասին ընդ առաքելոյն. Ուրախ լեր 'ի Տէր յամ ժամ. հեզութիւն քո յայտնի լիցի ամ մարդկան: Առ 'ի խնդալ 'ի տէր՝ պիտոյ է, զի առարկայն ուրախութեն քոյ, ոչ միայն իցէ հաճաւոր, այլ նաև համեստ: Քանզի դոն թէպէտ հաճաւոր իրք, սակայն այնու ոչ են համեստք: ուստի առ 'ի երևիլ համեստութիւնն քո, զգո՛յշ լեր 'ի ցոփութենց, և 'ի խեղկատակութենց. որք թարց երկրայութեն միշտ խոտելիք և յանդիմանելիք են: 'Ի վայր ձգել զոք խաբանօք, ներկել մրով զերեսն ումեք. կցմթել զոք. կատակել և նշաւակել զխելագար ոմն. են անկարգ և ցոփ ծիծաղք, և անյարմար խնդութիւնք:

* Բայց 'ի մտաւորական առանձնութէ (առ որ կա-

կարես քարշել դու 'ի միջոյ մեծագոյն կենցաղավարութեանց. որպ ասացաւ 'ի վերոյ.) պարտիս նաև սիրել միշտ զտեղական և զերական առանձնութիւնն: Ոչ արդէն առ 'ի գնալ 'ի յանապատ. որպ արար մարիամ եգիպտացին. սբ հայրն պօղոս. սբն անտոն. սբն արսէն.(և այլք սբ հարք միայնակեացք: Այլ առ 'ի կալ սակաւ ինչ 'ի խցի և 'ի սենեկի, և 'ի բուրաստանի քում. և կամ յայլ ուրեք: Որ մեծագոյն հեշտութբ ժողովել կարես դու զմիտս և զսիրտս քո 'ի քեզ. նաև մխիթարել զհոգիս քո բարի խորհրդով, և սբ մտածմամբ. և կամ սակաւ իմն բարի ընթերցմամբ: Ըստ օրինակի սբյն գրիգորի նիւսացւոյ, որ խօսելով զինքենէ՝ ասէր: Շրջագայէի ես ձերջ 'ի մփանէն արեգական՝ առ ափն ծովու, առ'ի անցուցանել զժամանակն: Վասն զի սովոր էի ես հարել այսու օտոտանօք և զբօսանօք՝ առ 'ի հանգչիլ, և առ 'ի թափել սակաւ ինչ զհասարակական ձանձրութիւնս, և զանձկութիւնս: Ես կամ ևս՝ ըստ օրինակի սբյն ամբրոսիոսի. զորմէ խօսելով սբն օգոստինոս ասէ: Թէ 'ի մտանելն 'ի խուց իւր (Թէև ոչ բացասէր զմտանելն ումեք) տեսանէի ես զնա զի ընթեռնոյր. և յետ սակաւ ինչ ժամանակ սպասելոյ իմ անդ, դառնայի 'ի յետս՝ առանց ասելոյ զբան ինչ, առ 'ի ոչ տալ նմա զձանձրութիւն և զնեղութն ինչ: Խորհելով առ իս. թէ ոչ է պարտ բառնալ 'ի նմանէ զայնքան փոքր ժամանակն, որ աւելանայր առ այն սբ հովուի՛ն, առ 'ի զօրացուցանել և սփոփել զհոգի և զմիտքն իւր, յետ այնքան աշխատանացն և վաստակոցն: Այսպէս ևս՝ մինչ յաւուր միում պատմէին առաքեալքն Տն մերոյ՝ զայն ամ, զոր քարոզեալք և արարեալք էին, ասաց նց:

Եկայք յանապատ տեղի, և հանգերո՛ւք սակաւ ինչ:

## Յաղագս պատկանաւորութէ, և պատշաճաւորութէ զգեստուց ։

### Գլուխ . ԻԵ ։

Սուրբն պօղոս կամի, զի ջերմեռանդ-կանայքն (որ և պատկանի արանց.) իցեն զգեցեալք զպատկանաւոր ըզգեստս. այսինքն 'ի զարդ խոնարհութե՝ աննածութե զարդարել զանձինս ։ Արդ պատշաճաւորութիւն զգեստուց, և այլոց զարդարանաց՝ կախի 'ի նիւթոյ, 'ի ձևոյ, և 'ի մաքրութե ։ Որքան առ մաքրութիւնն. պարտի նա միշտ հաւասարապէս գտանիլ առ ամ զգեստս մեր, 'ի վր որոց՝ որքան կարելի իցէ մեզ, ոչ պարտիմք թողուլ զցեղ իմն աղտեղութե, և անմաքրութե ։ Քանզի արտաքին մաքրութիւն՝ կերպիւ իմն ցուցանէ զներքին համեստութիւն ։ Վասն զի լինքն ած խնդրէ նաև զարտաքին մարմնական համեստութի 'ի յայնոսիկ, որք մերձենան առ սեղանն իւր, և որք ունին զգլխաւոր գործառութիւն ջերմեռանդութե ։

* Պատկանաւորութիւն, և վայելչութիւն նիւթոյ, և ձևոյ զգեստուց՝ կախի 'ի բազմաց պարագայից. այսինքն 'ի ժամանակէ. 'ի հասակէ. յորպիսութէ ընկերաց. և 'ի դիպուածոց ։ Քանզի հասարակաբար՝ բարեպէս զգենու ոք 'ի յաւուրս տօնից, ըստ մեծութե աւուրն՝ որ հոչակի ։ 'Ի ժամանակի ապաշխարութե. որպիսի է քառասնորդական պահքն, յոյժ ցածուցանի զգեստն ։ 'Ի հարսնեռուենն՝ տօրեալ լինի հանդերձ հարսանեաց. և 'ի մեռելառուենն զգեստ սգոյ ։ Առաջի իշխանաց գնացեալ լինի մեծաւ հանդիսիւ, և զարդարանօք ։ բայց նոյնն

'ի բաց

'ի բաց թողանել՝ 'ի մէջ ընտանեաց : Ամուսնացե_
ալ կինն · կարէ, և պարտի զարդարել՝ գոլով ընդ
առն, յերբ և կամիցի նա : բայց եթէ նա արտա
ցէ զնոյնն՝ հեռի գոլով այրն իւր 'ի նմանէ : Յայն
ժամ եթէ հարցանիցի նա · թէ ուստի մասնաւոր
հոգացողութիւն՝ ո՛րպիսի աչաց կամի հաճոյանալ :
իսկոյն ամփոփերան լինի, և առանց պատասխան
ւոյ մնայ :

* Թոյլատրեն աղջկանց առաւել զարդք · զի նո
քա ճահաւորապէս կարեն բաղձալ հաճոյանալ
բազմաց · միայն թէ այս լիցի բարի վախճանաւ,
առ 'ի շահիլ զմինն՝ վասն պսակելոյ ընդ նմա : Ոչ
ևս համարեցեալ լինի վատ արարմունք · եթէ
կերպիւ իմն զարդարիցեն այրիքն այնոքիկ, որք
կամիցին ամուսնանալ · միայն թէ այս ոչ լինիցի
աւելորդաբար, և չափազանց : Վասն զի գոլով ար_
դէն եղեալ մարք որդւոց և ընտանեաց · նաև
փորձառուք այրիական կացութեան · ուստի համա
րեալք լինին, թէ ունին զհաստուն և զբարե_
խառն հոգի :

Բայց որքան առ այնս, որք են ճշմարիտ այրիք,
այսինքն որք ոչ միայն մարմնով են այրիք, այլ նաև սր_
տիւ · ոչ ինչ զարդ պատկանաւոր է առ նոսա. եթէ
ոչ միայն խոնարհութիւն, համեստութիւն, և ջեր_
մեռանդութիւն : Քանզի եթէ կամին նոքա առ_
նել սէր ընդ մարդկանց, ոչ են ճշմարիտ այրիք ·
բայց եթէ ոչ կամիցին առնել սէր ընդ նոսա, ա՛ռ
ինչ վախճան կամին տանիլ զզարդս : Իւրաքան_
չիւրոք՝ որ ոչ կամի ընկալնուլ զհիւր, պարտի 'ի բաց
բառնալ զնշանն հիւրանոցի : Ամենայն ոք ծիծա
ղի 'ի բոլոր օրն՝ 'ի վերայ պառաւանց, և ծերոց · որք
կամին զգենուլ զփափուկս, որպէս զմանուկ : Այս
է խելագարութիւն իմն, որ ոչ կարէ տանիլ, եթէ
ոչ 'ի մանկութեան, և յերիտասարդութեան :

* Ո՛վ խանդակաթ առաքինութիւն · լե՛ր պատշա

ճա_

ճաւորապէս զգեցեալ . զի մի՛ լինիցի 'ի քեզ իր իմն , որ ունիցի զանպատեհութի , և զվատ համարումն : Այս է արհամարհել իմն զայնոսիկ՝ Ե̄ որս կենցաղավարիս , գնալ 'ի մէջ նց̄ անյարմար , և անվայելուչ հանդերձիւ : Բայց զգո՛յշ լեր յոյժ 'ի վատթար ըղձէ , 'ի յունայնութէ , 'ի հետաքրքրութէ , և 'ի խելագարութէ : Մերձեցո՛ զքեզ միշտ՝ որքան և իցէ կարելի , առ պարզութի , և առ համեստութի . որք են մեծագոյն զարդարանք գեղեցկութե , և լաւագոյն առաքասրումն տգեղութե : Սբ̄ն պետրոս՝ նախապետաբար խրատէ և զգուշացուցանէ զերիտասարդուհի կանայս , առ 'ի ոչ ունիլ զհերս կռածոյս , գանգուրս , և գոյնզգոյն ծաղկամբ զարդարեալս և յօրինեալս , Քանզի մարդիկք՝ որք են այնպէս տկարք . 'ի տեսանելն զայսպիսի ոչընչութիւնս , առ ժամայն խանդաղատեալք սիրահարին : Եւ՛ ունայնասէր կանայքն ևս՝ տկար համարելիք են 'ի յողջախոհութե . զոնեայ եթէ ունին զնա , ոչ է տեսանելի 'ի մէջ այնքան խառնիխուռն իրաց , և ունայնութեանց :

Եւ՛ եթէ ասիցէ ոք . թէ ոչ է պարտ խորհիլ զումեքէ չարապէս : Ասեմ առ այնպիսին , որ̄ և ասացի յայլ ուրեք . թէ սատանայն միշտ խորհի : Որքան առ իս՝ ես կամիմ , զի ջերմեռանդքն , և ջերմեռանդուհիքն իցէին լաւապէս զգեցեալք քան զայլս . բայց այն իցէր արտաքոյ պճնազարդութե և հանդիսի : Այնպէս , որ̄ և ասի 'ի յառակս . թէ զարդարեալք էին շնորհիւ , վայելչութբ , և գեղով : Սբ̄ն լուդովիկոս ասէ . թէ իմ̄ ոք պարտի զգենուլ զհամաձայն զգեստ՝ ըստ կացութե իւրոյ : Եւ՛ այս այնպէս , զի իմաստուն և բարի անձինքն՝ ոչ կարիցեն ասել . թէ դու առաւել զարդարիս : Նմանապէս և մի՛ կարիցեն ասել երիտասարդքն . թէ դու սակաւ զար

դա_

դարիս : Բայց 'ի պատահման առթին, եթէ երիտասարդքն ոչ կամիցին բաւականանալ այնու՝ որ վայելուչն է. յայնժամ պիտոյ է քեզ համաձայնիլ կարծեացն իմաստնոց :

## Յաղագս խօսակցութեան. և նախապէսաբար՝ թէ ո՛րպէս պէտք է խօսել ըԱՃ:

## Գլուխ. ԻԶ:

Բժիշկքն՝ 'ի նկատմանէ լեզուի՛ն առնուն զմեծագոյն ճանաչումն առողջութեան և տկարութեան մարմնոյն: Ե՞րբ խօսակցութիւնքն և բանքն մեր, են ճշմարիտ նշանք որպիսութեան հոգւոց մերոց : 'Ի բանից քոց (ասէ փրկիչն) արդարասցիս. և 'ի բանից քոց դատապարտեսցիս : Մեք ո՛չ իսկոյն դնեմ զձեռն մեր 'ի վ̄ր ցաւոյն, զոր զգամք. այսպէս և դնեմք զլեզուն մեր 'ի վ̄ր սիրոյն, զոր ունիմք :

* Արդ ուրեմն՝ ո՛վ խանդակաթդ առաքինութեան. եթէ դու ճշմարտապէս սիրահարեցեալ իցես առ ած. խօսեսցես յաւէտ զայ՝ 'ի յընտանեկան խօսակցութեանս, զորս առնես 'ի տան քում. նաև ը̄ բարեկամս, և ընդ մերձաւորս քո : Այսպէս է. զի բերան արդարոյ խորհի զիմաստութիւն. և լեզու նորա խօսի զիրաւունս : Ե՞րբ ո՛չ մեղուքն ոչ շաղախեն զփոքր բերանս իւրեանց՝ այլ իրօք, եթէ ոչ միայն մեղերբք : Այսպէս և լեզուն քո՝ միշտ քաղցրացեալ, և մեղրաշաղախեցեալ լիցի աստուծով իւրով. և ոչ զգայցէ ընաւ զայլ ինչ մեծագոյն քաղցրութիւն և համեղութիւն. բաց 'ի զգալոյն ծորել 'ի մէջ շրթանց իւրոց, գովութիւնք, և օրհնաբանութիւնք սիրեցելոյն իւրոյ : Ո՛չ և ասի յա

ղագս

զադս սրբյն Փրանչիսկոսի . թէ 'ի յարտաբերելն զա̄ղն անուանն Տ̄ն մերոյ . ծծէր և լիզէր զշրթունս իւր . իբր թէ ծորիւր 'ի բերանոյ իւրմէ մեծագոյն քաղցրութիւն աշխարհի :

* Որդ՝ խօսեաց դու միշտ յաղագս այ̄, որպէս վայել է խօսիլ զայ̄ . այ̄ պատուով, և ջերմեռանդ դաբար : Ոչ վիճաբանելով, և քարոզելով . այլ քաղցրութբ̄ հոգւոյ, սիրով, և խոնարհութբ̄ : կաթեցուցանելով և ծորելով՝ կաթիլ առ կաթիլ, ( որքան և գիտես ) զհեշտալի մեղրն ջերմեռանդութե և ա̄ծային իրաց, մերթ 'ի յականջս միոյն, և մերթ 'ի յականջս միւսոյն . ո̄պ և ասի զհարսնէն 'ի յերգս : Աղաչելով ես զա̄ծ 'ի խորս սրտի քոյ, զի հաճեսցի թափանցել զայս ալ̄ ցօղս՝ 'ի խորս սրտից այնոցիկ, որք լսենն քեզ :

* Ի վեր քան զա̄մ՝ պիտոյ է առնել զայս հրեշտակական պաշտօնս . քաղցրութբ̄՝ և համեղութբ̄ . և ոչ բնաւ երբէք բարկութբ̄, և յանդիմանութբ̄, այլ քաղցրաշնչութբ̄ : Քանզի այս է զարմանալի իմն . թէ ո՛րպէս համեղաբանութիւն, և սիրալրական առաջարկութիւն բարւոյ իրի իմիք, լինի հզօրագոյն քարշող իմն բազմաց սրտից :

* Ուրեմն մի՛ խօսիցիս բնաւ երբէք զայ̄, և զջերմեռանդութէ . աղագաւ զբօսանաց, և անցուցանելոյ ժամանակի . այլ միշտ խօսիցիս մտադրութբ̄, և ջերմեռանդութեամբ : Արդ ասեմ զայս՝ առ 'ի բառնալ զյայտնի ունայնութիւն զայն, որ գտանի 'ի բազումս . որք կամին ցուցանել զինքեանս ջերմեռանդ գոլ, զի յա̄մ առաջարկութե ասեն զա̄ և զջերմեռանդ բանս ըստ կերպի խօսակցութե, թարց մտածելոյ զայնս բնաւ : Ե՞ զկնի ասելոյ զայսպիսի բանս, վարկեն զինքեանս լինիլ այնպէս, ո̄պ և են բանքն իւրեանց . բայց ոչ են բնաւ իսկ :

## Յաղագս համեստութէ խօսից , և պատկառանաց՝ զոր պիտոյ է ունել դէպ առ անձինս :

### Գլուխ . ԻԷ :

Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ ( ասէ սրբն Յակոբոս ) նա է մարդ կատարեալ: *Զգո՛յշ լեր ուրեմն հոդունակապէս՝ առ ՚ի ոչ արձակել յանպարկեշտ խօսակցութիւն ինչ : զի թէ նաև ոչ ասիցես զնա չար դիտաւորութեամբ . սակայն այնոքիկ՝ որք զնա լսեն, կարեն իմանալ այլով կերպիւ : Անհամեստ խօսքն՝ անկանելով ՚ի միում տկար սրտի, այնպէս տարածի և լայնանայ, որպէս և տարածի կաթիլ ինչ ձիթոյ ՚ի վերայ հանդերձի : Եւ երբեմն ևս այնպէս տիրապետէ և իշխէ սրտին , մինչ զի լցուցանէ զնա բազմազան խորհրդով, և անպարկեշտ փորձութեամբ : Վասն զի որպէս թոյնն մարմնոյ՝ մտանէ միջնորդութեամբ բերանոյ . այսպէս և թոյնն սրտի՝ մտանէ միջնորդութեամբ ականջաց : ուստի և լեզուն՝ որ արտաբերէ զայն, է մարդասպան : Եւ դիցուք թէ՝ նոյն արտափոխեցեալ թոյնն, ոչ արար զիւր ներգործութիւն առ լսօղս, վասն զի գտանելոյ զսիրտս նոցին տրամադրեցեալ դեղթափիւ իմիք : սակայն այսու ամենայնիւ, ոչ մնայ նա անպարտ ՚ի չարութենէ սակս ոչ մեռուցանելոյն : Եւ համարիմ թէ՝ գուցէ ասիցէ ոք ինձ . թէ այնպիսի խօսօղն՝ ոչ խորհի զչար : Առ որ ասեմ . թէ Տէրն մեր , որ ճանաչէ զամենայն խորհուրդս՝ ասաց .* յառելուածոյ սրտի խօսի բերանն . *Եւ եթէ մեք ոչ խորհիմք զչար . սակայն սատանայն յոյժ խորհի զչար . և միշտ վարի այսպիսի չար շարժմամբ, առ ՚ի թա_*

թափանցել 'ի սրտի ուրուք՝ զայսպիսի չարութիս ։

Այս թէ ․ այնոքիկ որք կերեալք են զայն խոտն, որ կոչի խոտ հրեշտակային ․ միշտ ունին զշունչս իւրեանց քաղցր, և հաճելի ։ Այսպէս և այնոքիկ՝ որք ունին 'ի սիրտս իւրեանց զպարկեշտութիւն, և զողջախոհութիւն, որ է հրեշտակային առաքինութիւն ․ միշտ ունին զմաքուր, զպարկեշտ, և զբարոյական խօսակցութիւնս ։ Եւ որքան առ անպարկեշտ և վավաշոտական իրս, և խօսակցութիւնս ․ առաքեալն ոչ կամի՝ թէ նաև անուանիցի ։ Հաւաստելով ․ թէ ոչ այլ ինչ այնքան ապականէ զբարի վարս, որքան չար խօսակցութիւնն ։ ՄԻ ԽԱԲԻՔ ․ ԱՊԱԿԱՆԵՆ ԶԲԱՐՍ ՔԱՂՑՈՒՆՍ ԲԱՆՔ ՉԱՐՔ ։

* Բայց մինչ այսպիսի անհամեստ խօսակցութիւնքս՝ ասին ծածկաբար ; բղձիւ, և խորամանկութբ ․ յայնժամ լինին առաւել թունաւորք ։ Վա՜ զի ո՛չ նետ իմն՝ ո՛րքան առաւել սրագոյն է, այնքան առաւել դիւրապէս թափանցի 'ի մարմինս մեր ։ այսպէս ևս վատթարագոյն շարժումն իմն, ո՛րքան առաւել է սրագոյն խորամանկութբ, այնքան առաւել դիւրապէս մտանէ 'ի սիրտս մեր ։ Բայց այնոքիկ՝ որք խորհին գոլ քաղաքավար մարդիկք ․ ասելով զայնպիսի խօսս 'ի կենցաղավարութե ․ և ոչ գիտեն յայլ ինչ, եթէ ոչ զի արասցեն զկենցաղավարութիւն իմն բարոյականաբար ։ պարտին գոլ ո՛չ խումբ իմն մեղուաց, ժողովեալք առ 'ի կազմել զքաղցրագոյն մեղրն բարոյականի կենցաղավարութե իմիք ։ Եւ ոչ պարտին լինիլ ո՛չ զխումբ իմն պիծակաց, որք համաժողովին առ 'ի ծծել զապականեալ և զաղտեղի շարաւս ։ Եւ եթէ յիմար ոք ասիցէ քեզ զանպատշաճ, և զանմաքուր բանս իմն ․ պարտիս տալ նշան՝ թէ ականջքն քո վշտանան յայնպիսի խօսից ։ Եւ այս կամ դարձուցանելով զերես յայլ ուր ․ և կամ այլով կերպիւ իմիք,

ըստ որում ուսուցանէ քեզ խոհեմութիւն։

* Մինն 'ի յառաւել վատթար որպիսութեանց՝ է այս . լինել կատակօղ և ծանակօղ։ քանզի մեծ ծայրագունապէս ատէ զայս մոլութիւս, և երբեմն ևս պատժեաց զնա խստապէս։ Ոչ ինչ իր այնքան ներհակ է սիրոյ, և մանաւանդ ջերմեռանդութե, որքան նախատ և խոտելի համարումն ընկերին։ Արդ կատակումն և այպանումն՝ ոչ առնանի երբեք թարց արհամարհման . և վնկ՝ այս է այնք մեծագոյն մեղք իմն. մինչ զի վարդապետքն առին զպատճառ ասելոյ. թէ կատակումն և ծաղրառումն ընկերին, է առաւել չար վշտացուցումն իմն, որ կարէ առնանել ընկերին խօսիւք։ Վ զի՝ այլ վշտացուցմունք առնանին արհամարհամբ իւիք այնորիկ՝ որ վշտացուցանի . բայց ծաղրառումն և կատակումն՝ լինին արհամարհամբ, և խոտմամբ։

* Բայց որքան առ հանաքական խօսս, որք լինին 'ի մէջ ոմանց անձանց, համեստութ, ուրախութ, և զուարթութ՝ ասեմ. թէ այնք պատկանին առ այն առաքինութիւն, որ յունարէն կոչի Էվդրապէլիա, զոր և մեք կարեմք ասել՝ բարի կենցաղավարութի։ Զի այսու վայելեալ լինի համեստ, և բարեկամական կենցաղավարութի և զբօսանք իմն՝ 'ի վր ունայն առթից, որք տան մարդկային անկատարելութիքն։ Միայն թէ պարտ է զգուշանալ, առ 'ի ոչ անցանել 'ի համեստ խնդութէ և զուարճութէ, առ այպանումն և նշաւակումն։ Արդ՝ այպանմունքն գրգռեն առ 'ի ծիծաղել արհամարհամբ և խոտմամբ ընկերին։ բայց զուարճութիւն՝ և զբօսանքն, գրգռեն առ 'ի ծիծաղել ազատութ, համարձակութ, և ընտանեկան պարզութ միով, հանդերձ համեստական շարժմամբ իմիք։

Մէ ըստովիկոս Թադէոսին՝ ( մինչ կրօնաւորքն կա-

կամեցին խօսել ընդ նմա վս հարկաւոր իրաց, զկնի կեցաւոր կերակրոյն՝) ասէր։ Ոչ է յայժմ ժամանակ խորհրդածելոյ. այլ է ժամանակ սակաւ ինչ ուրախանալոյ, զբօսնելոյ, և զուարճանալոյ։ Եւ եղբարցան_ ցիւղոք տօնեցէ զայն հանդիսաւոր, զոր կամի։ Վս զի նա ասէր զայս, առ՛ի սփոփել և պատուել զազնուական անձինս, որք կային շուրջ զնովաւ, առ՛ի ընդունիլ զմխիթարութիւն ինչ 'ի հանգստաւոր գերազանցութէ իւրմէ։ Այդ ո՛վ խանդակաթդ առաքինութեն. այնպէս անցուսցուք զժամանակն 'ի զուարճութիւն, և 'ի զբօսանս. զի կարասցուք պահել նաև զմեր յաւիտենականութիւն ջերմեռանդութեամբ։

## Ցաղագս յանդգնոյ դատողութեան։

### Գլուխ · ԻԸ։

Մի՛ դատէք՝ և ոչ դատիցիք (ասէ փրկիչն) մի՛ պատժէք՝ և ոչ պատժիցիք։ Եւ՝ առաքեալն ասէ. մի՛ յառաջ քան զժամանակն դատէք. մինչև եկեսցէ Տէր՝ որ լուսաւոր առնիցէ զծածուկս խաւարի. և յայտնիցէ զխորհուրդս սրտից։ Ով. թէ ո՛րքան անհաճոյք են մեզ յանդուգն դատողութիւնք։ Դատողութիւնքն որդւոց մարդկան՝ են յանդուգնք. զի ոչ են դատաւորք միմեանց, և դատելով զայլս՝ յափշտակեն զպաշտօնն Տն մերոյ։ Են յանդուգնք, զի գլխաւոր և նախապետական չարութեն մեղաց՝ կախի 'ի դիտաւորութէ, և 'ի խորհրդոյ սրտի, որ որքան առ մեզ՝ է գաղտնիք խաւարի։ Են յանդուգնք, զի իւրաքանչիւրոք ունի զբազում իրս առ՛ի դատել զինքն, թարց առնելոյ զպաշտօն դա_

դատելոյ զընկերն իւր։ Այս է համարակապէս իր իմն հարկաւոր, ոչ դատել զայլս, և դատել զինքն իւր։ Քանզի որպէս Տէրն մեր հրամայէ զմինն։ այսպէս և առաքեալն նորին պատուիրէ զմիւսն՝ ասելով. Եթէ զանձինս քննէաք, ապա ոչ դատապարտէաք։ Բայց աւաղ մեզ. զի ըստ մեծի առնեմք մեք զներհակն։ քանզի այն որ արգելեալ է մեզ, ոչ դադարեմք բնաւ առ ՚ի ոչ առնել զնա, դատելով զընկերն մեր ՚ի յամենայն գործս։ Եւ այն՝ որ պատուիրեալ է մեզ առնել, որ է դատել զմեզ, ոչ երբեք առնեմք։

* Որդ պիտոյ է բժշկել զյանդուգն դատողութիւն ըստ պատճառին։ Վասն զի գտանին սիրտք ոմանք՝ կարծր, դառն, և խիստ ըստ բնութեան իւրեանց, որք համարակապէս դարձուցանեն ՚ի կարծրութիւն, ՚ի դառնութիւն, և ՚ի խստութիւն զայն ամենայն՝ զոր ընդունին։ Եւ դարձուցանեն (որպէս ասէ մարգարէն ամոսը) զիրաւունս ՚ի ցասումն. և զպտուղ արդարութեան ՚ի դառնութիւն. այսինքն ոչ դատելով զընկերն, եթէ ոչ ըստ մեծի կարծրութեան, և խստութեան։ Այսպիսի անձինքս՝ ունին զմեծագոյն պիտանաւորութիւն անկանելոյ ՚ի ձեռն հոգևոր բժշկի միոյ բարեգունի. զի այս դառնութիւնս որպէս գոլով նոցա բնական, դժուարագոյն է առ ՚ի յաղթահարել։ Եւ զի թէպէտ այս ոչ է մեղք ըստ ինքեան, այլ միայն անկատարելութիւն իմն։ բայց սակայն է որոգայթաւոր. զի հակառակի սիրոյ, և թագաւորեցուցանէ ՚ի հոգւոջ՝ զյանդուգն դատողութիւն, և զչարասութիւն. այսպիսիքն զբամբասանս։

* Ոմանք թէպէտ ոչ դատեն յանդգնաբար, կարծրութեամբ, և դառնութեամբ. այլ հպարտութեամբ։ Թուելով ինքեանց, թէ որով չափով նուաստացուցանեն զպատիւն այլոց, այնու չափով բարձրացուցանեն զպատիւն իւրեանց։ Այսպիսիքս են յանդուգն, և ամբարտաւան հոգիքն. որք նկատեն

յին-

յինքեանս. և 'ի յայնքան բարձրութե́ դնեն զին քեանս, մինչ զի զայլ ամ մնացեալս համարին ոչ̄ զփոքրագոյն, և զցածագոյն իր իմն: Եւ ոչ են իբրև զայլս 'ի մարդկանէ, ասէր յիմար փարիսեցին: Ոմանք ոչ ունին զայս հպարտութիւն յայտնի. այլ միայն զփոքր համահաճութի իմն 'ի նկատել զչարին այլոց, առ 'ի ճաշակել, և վերաճաշակել ախորժելով՝ զներհակն բարւոյ նց̄ին. յորոց իմ քեանք համարեցեալք լինին ստացեալք: Եւ այս համահաճութիւն, այնքան ծածուկ և անճանաչելի է. մինչ զի եթէ ոչ ունիցի ոք զբարի տեսութի, ոչ կարէ տեսանել զնա: Եւ այնք, որք են այսպիսիք, ոչ կարեն ճանաչել զնա, եթէ ոչ ցուցանիցի յայլոց: Այլք ոմանք՝ առ 'ի փաղաքշել, և անբասիր առնել զինքեանս, և առ 'ի բաղցրացուցանել զխայթումն խղճմտանաց իւրեանց. յօժարապէս ասեն զայլս, որք են ախտացեալք այնու ախտիւն, 'ի յոր ինքեանք են ընկղմեալք, և կամ գոնեայ 'ի յայլ մեծագոյն ախտի իմիք: Թուելով նց̄. թէ բազմութիւն յանցաւորաց առնէ, զի մեղքն իւրեանց լինիցի սակաւ պարտաւոր, և ա̄նարգելի:

* Բազում ոմանք՝ որլին յանդգնոյ դատողութե́, վս̄ հեշտութե́ իւրեանց, զոր առնեն առ 'ի փիլիսոփայել, և առ 'ի նախադուշակել զբարս, և ըզկազմողութիւն անձանց, ըս̄ կերպի կրթութե́ մտաց իւրեանց: Եւ եթէ երբեմն (ոչ բարեաւ) պատահիցի ճշմարտութի 'ի յանդգնական ենթադատմունս իւրեանց. այնուհետև այնպէս առնի 'ի նս̄ յարատև համարձակութիւն, և ախորժակն՝ առ այս ժպրհութի, մինչ զի յետոյ յոյժ դժուարին լինի բառնիլ այս 'ի նոցանէ. Այլք ոմանք դատեն ախտիւ. զի խորհին միշտ բարի զայնմանէ, զոր սիրեն. և միշտ չար զայնմանէ, զոր ատեն: և ոչ յեղափոխեն զայս, եթէ ոչ 'ի զարմանալի պա-

տահման իմիք: Բայց սակայն՝ է այլանդակ ցու-
ցանք իմն, և անպատշաճ ներգործութիւն. եթէ
գրգռի ոք 'ի բորբոքմանէ սիրոյ, առ 'ի առնել
զյանդուգն դատողութիւն զայնմանէ, զոր սիրէ:
Զի յառաջագայի այս յայնպիսի սիրոյ, որ իցէ
անմաքուր, անկատար, պղտոր, և տկար: Ուս-
տի և կոչի այս նախանձ. (ոչ և ոմն ոք գիտէ)
զի վա միոյ պարզ հայեցման, և վա միոյ փոքեր
ծիծաղման, դատէ զանձինս լինիլ անօրէն, և հնա-
ցօղ: Վերջապէս. երկիւղն, փառասիրութիւն,
և այլ այսպիսի տկարութիւնք հոգւոյ և մտաց,
յոյժ համընթանան առ 'ի ծնանիլ զկարծիս, և
զյանդուգն դատողութիւնս:

* Բայց առ այս օ՞րն իցէ դեղ: Ասեմ. որպէս
այնոքիկ՝ որք ըմպեն զհիւթն այնորիկ խոտոյ, որ
կոչի օփուզիա եթօպիական. երևակերպեն տե-
սանել յամ կողմանէ զօձս, և զարհուրելի իրս:
Այսպէս ևս այնոքիկ, որք կլեալք են զհպար-
տութիւն, զնախանձ, զփառասիրութիւն, և զատե-
լութիւն. ոչ կարեն տեսանել զիր ինչ, որ ոչ
թուիցի ինքեանց չար, վատ, և անարդելի: Ուս-
տի ոչ պիտոյ է ըմպողաց զհիւթն օփուզիա խո-
տոյ, ըմպել զգինին արմաւոյ՝ առ 'ի բժշկիլ:
Այսպէս և ես ասեմ ցառ այնոսիկ. ըմպեցէք
որքան առաւել կարէք՝ զսբ գինին սիրոյ, զի
ազատեսցէ զձեզ յայսպիսի վատթարագոյն հիւ-
թոց, որք ներգործեն 'ի ձեզ՝ առնել զայսպիսի
թիւր, և յանդգնական դատողութիւնս: Սէրն
երկնչի պատահիլ և հանդիպիլ չարի. և յոյժ հե-
ռի է առ 'ի խնդրել զնա. և մինչ հանդիպի՝ դար
ձուցանէ զերեսն իւր յայլ ուրեք, և կեղծէ ոչ
տեսանել: Եւ՞ մանաւանդ փակէ զաչս՝ յառաջ
քան զտեսանելն և զդատելն զայն, զոր զգայ առ
ինքն: և յետոյ հաւատայ միով պարզամտութբ,
թէ այն ոչ էր չար. այլ միայն ստուեր, և երև-
ոյթ

ոյթ չարի ։ Եւ թէ ևս ճանաչիցէ, թէ այն էր չար · առժամայն դարձուցանէ զինքն յայլուրեք, և կամի իսկոյն մոռանալ ։ Սէրն է դեղ, և բժշկութի̃ ամ̃ չարի, բայց մասնաւորապէս առ յանդուգն դատողութիւն ։

Այնոքիկ՝ որք ունին զդեղնացաւութի̃, բնաւ իրք դեղնագոյնք երևին աչաց նոցին ։ Ուստի ասի 'ի բժշկաց · թէ առ 'ի բժշկել յայսմանէ հիւանդութե̃, պիտոյ է կրել 'ի ներքոյ ներբանաց ոտից զայն խոտն, որ կոչի չէլիտոնիա ։ Ճշմարտապէս սոյն մեղքս յանդուգն դատողութե̃, է հոգևոր իմն դեղնացաւութի̃, որ երևեցուցանէ զամ̃ իր՝ գոլ բոլորովին վատ և չար՝ աչացն այնոցիկ, որք են ապականեալք այսու ախտիւ ։ Բայց այն՝ որ կամի բժշկել յայսմանէ ախտակրութե̃ · պիտոյ է զի դիցէ զդեղ՝ ոչ աչացն, և ոչ ևս իմացականութե̃ն · այլ ըղձիցն, որք են ոտք հոգւոյն ։ Քանզի՝ եթէ ըղձկունք քոյք լինիցին հաճելիք և մաքուրք · նոյնպէս լինի ևս դատողութիւն քո ։ ԵՒ եթէ լինիցին գթածագոյնք և ողորմածք · նոյնպէս լինի և դատողութիւն քո ։

* Ես աստ ցուցանեմ քեզ զերիս զարմանալի օրինակս ։ Իսահակ ասաց աբիմելէքայ · թէ ռեբեկա իցէր քոյրն իւր ։ Բայց աբիմելէք ետես յաւուր միում զիսահակ, զի խաղայր ընդ ռեբեկայ · զ̃ շօշափէր զնա փափկապէս, և խանդաղատէր զնո վաւ ։ Ուստի առժամայն դատեաց յինքն, թէ ռեբեկա էր կողակիցն իսահակայ ։ Արդ եթէ տեսանիցէր զայս չարանկատ աչք ումն, իսկոյն դատէր՝ թէ նա իցէր հարճ նորին ։ և կամ թէ իցէր քոյր նորին · բայց կամի գործել ընդ նմա զաղգապղծութի̃ ։ Բայց աբիմելէք կամեցաւ հետևիլ գթածագոյն կարծեաց, և դատողութե̃, քան զոր ունիլ կարէ ոք վ̃ այսպիսի արարողութե̃ ։ Պիտոյ է նաև մեզ՝ ո՛վ խանդակաթդ առաքինութե̃ · ու

նիլ

նիլ միշտ զնոյն գթածութիւնն, առ 'ի դատել 'ի կողմն ընկերին, որքան իցէ կարելի մեզ: Եւ՞ եթէ գործողութեն իմն ունիցէր զհազար դէմս, պիտոյ էր մեզ հայիլ 'ի յայն դէմն, որ էր առաւել գեղեցկագոյն :

* Տէրուհին մեր՝ գոլով յղացեալ գերբնականապէս : ուստի թէպէտ տեսանէր յովսէփ զնա գոլ յղի . բայց 'ի միւս կողմանէ տեսանէր զնա բոլորովին սբ, բոլորովին մաքուր, և բոլորովին հրեշտակական : Ուստի ոչ կարաց հաւատալ երբէք . թէ յղութիւն նորին պատահեալ իցէ այլով կերպիւ . որոյ վս յառաջադրեաց լռելեայն արձակել զնա, և յանձնել զդատաստանն առ այ : Քանզի թէպէտ առարկութիւն իցէր զօրեղ՝ առ 'ի ունիլ զչար կարծիս զայնմանէ սրբազնագոյն կուսէ : սակայն ոչ կամեցաւ երբէք տալ զայն դատողութեանն իւրոյ . Բայց վս էր : վս այն . զի ասէ հոգին սբ . թէ նա էր այր արդար : Քանզի արդար այրն՝ մինչ ոչ կարէ արդարել վասն գործոյ, և դիտաւորութեն այնորիկ, որ այլով ճանաչէ զնա գոլ այր ամն բարի: յայնժամ ոչ կամի այլեւս դատել զնա . այլ 'ի բաց հրաժարեցուցանէ զմիտս իւր յայնմանէ , և թողու զդատաստանն առ այ : Ուստի և խաչեցեալ փրկիչն մեր , ոչ կարելով ամենեւին արդարել, և անմեղադրելի առնել զմեղքն այնոցիկ, որք զնա խաչեցին . դոնեայ նուազեցոյց ըզչարութիւն մեղաց, պատճառելով զտգիտութիւն նոցին: Արդ՝ մեք ևս յորժամ ոչ կարեմք արդարել, և անմեղադրելի առնել զմեղս այլոց . դոնեայ ցուցցուք զնա արժանի ցաւակցութեան . տալով զայս կարելի՝ և տանելի պատճառին, զորս կարէ նա ունիլ . որպ է տգիտութիւն, և կամ տկարութիւնն :

* Բայց զի՞նչ . մի՞թէ ոչ կարէ երբէք դատել ըզընկերն իւր : Արդարև ո՛չ երբէք : Այն է՝ ո՛վ

խան

խանդակաթդ առաքինութե. որ դատէ արդա-
րապէս զյանցաւորն : բայց վարի ձայնիւ՛ դատա
ւորաց, առ 'ի ծանուցանել մեզ, թէ նոքա են
թարգմանիչքն իւր : Որոյ վասն՝ ոչ պարտին ար
տաքերել նոքա զայլ ինչ, բաց 'ի յայնմանէ,
զոր ընկալան 'ի նմանէ. գոլով իբր գուշակօղք
նորին : Ուստի եթէ այլապէս առնիցեն՝ հետևե
լով ախտից իւրեանց. յայնժամ ճշմարտապէս լինին
յանդգնապէս դատօղք, և հետևապէս դատելիք :
Քանզի արդելեալ է մարդկանց՝ ըստ որում են
մարդիկք, դատել զայլս :

* Տեսանել, և ճանաչել զիր իմն 'ի մարդն, այս
ոչ է դատել զնա : Վս՟ զի դատողութին ըս՟ ոճի
սբ՟ գրոց. գոնեայ ենթադրէ զփոքր, և կմ՟ զմեծ.
զճշմարիտ, և կամ զերևութական դժոխարութե
իմն, որ պարտի 'ի բաց հատանիլ : Վսկ ասէ նա.
Թէ այնոքիկ, որք ոչ հաւատան, արդէն իսկ դատապար
տեալք են. զի ոչ գոյ երկբայութի իմն վս՟ դատա
պարտութե նոցին : Ուրեմն ո՞չ է չար երկբայելն
զընկերէ. ո՞չ : քանզի ոչ է արգելեալ երկբայելն,
այլ դատելն : Բայց սակայն այնքան թոյլատրե-
ցեալ է մեզ երկբայիլ, և կարծել զնմանէ, որ-
քան ստիպեն զմեզ առիթքն, և առարկութիւնքն
առ 'ի երկբայիլ, և կարծել : ապա թէ ոչ, երկ-
բայութիքն և կարծիքն լինէին յանդգունք :

* Լոտ՝ եթէ չար աչք ոմն տեսանիցէր զյակոբ,
մինչ համբուրեաց զռաքէլ յափն ջրհորոյն : Եւ՛
կամ եթէ տեսանիցէր զռեբեկա ընդունիլ զապա
րանջանս, և զգինտս 'ի յեղիազարու. որ էր այր
ոմն օտարական, և անճանաչ յայնմիկ գաւառի :
Թարց այլոյ իմիք խորհէր զչար՝ զայնց երկուց
հայելեաց ողջախոհութե : բայց զայն առնէր ա-
ռանց պատճառի, և հիման : Քանզի յորժամ
գործ իմն, որ ըս՟ ինքեան է անզանազան. երկ-
բայութիւնքն լինին յանդգունք, եթէ ոք արտա

քար

քարշէ 'ի նմանէ զչար հետևումն իւր, եթէ բազում պարագայք ոչ տայցեն նմա զուժգնութիւն առարկութեան : Նաև՝ է յանդուգն դատողութիւն, արտահանել և քարշել զհետևումն 'ի գործոյ միոյ, առ 'ի վատաբանել զոմն : բայց ասացից զայս առաւել պարզապէս :

* Վերջապէս . այնոքիկ՝ որք ունին զբարի հոգունակութիւն խղճմտանաց իւրեանց, ոչ են ենթարկեցեալք յոյժ յանդուգն դատողութեան : Քանզի որպէս մեղուքն՝ 'ի տեսանելն զժամանակն մրրկեալ, և ամպոտեալ, ժողովին 'ի փեթակունս իւրեանց առ 'ի կազմել զմեղր : Այսպէս և մտածմունքն բարի արանց, ոչ միայն 'ի վերայ շփոթական առարկայից, և ոչ ևս 'ի մէջ մրրկախառն, և մթագոյն գործոց ընկերաց : Մանաւանդ թէ՝ առ 'ի խուսափել և խոյս տալ 'ի հակառակութեանց, և յընդդիմութեանց՝ քարշին և ժողովին 'ի մէջ սրտից իւրեանց, առ 'ի առնել զբարի առաջադրութիւն, վասն ուղղութեան ինքեանց :

* Այս է յատկութիւն իւր՝ անօգուտ և անշահ անձին, միայն առ 'ի քննել զկեանքն այլոց : Սակայն իմանալի է այս բաց 'ի յայնցանէ, որք ունին զհոգաբարձութիւն 'ի վերայ այլոց . թէ ընտանեաց, և թէ թագաւորութեանց : Քանզի բարի մասն խղճմտանաց սոյնպիսեաց, կայանայ 'ի նկատել, և 'ի հսկել 'ի վերայ կենցաղավարութեան այլոց : Պարտին ուրեմն սիրով կատարել զպարտաւորութիւնս իւրեանց, որ է հսկող և դէտ լինել այլոց, այսու մանաւորին :

## Յաղագս բամբասանաց. և չարաստութեն:

### Գլուխ. ԻԹ.

ՅԱնդուգն դատողութիւն՝ ծնանի զան
հանդստութի. զարհամարհումն ըն
կերին. զամբարտաւանութի. համա
հաճութի ինքեան. և զայլ բազում
վնասակար իղձս: 'Ի մէջ որոց՝ բամբասանքն, և
չարաստութիւնքն՝ ունին զառաջին տեղին, ոչ՟ ճշմ՟տ
ժանտախտութի իմն կենցաղավարութե: Ո՞հ ցա
ւոյս. զի է՞ր ոչ ունիմ ես զկայծ իմն 'ի սբ՟յ սեղա
նոյն, առ 'ի շօշափել զշրթունս մարդկանց. զի
բարձցին անօրէնութիւնք նոցին, և սրբեսցին մեղք
նոցին. ըստ օրինակի սերոբէին, որ մաքրեաց զբե
րանն Եսայեայ: Քանզի բառնալով զբամբասանս
յաշխարհէ, բառնիւր 'ի նմանէ մեծ մասն մեղաց,
և անօրէնութե:

* Արդ՝ ամ՟ ոք, որ բառնայ զբարի անունն ընկերին
իւրոյ՝ անարդարաբ՟ս. բաց 'ի մեղացն զոր գործէ.
պարտաւորի նաև 'ի հատուցանել. զ՟ 'ի յետ դար
ձուցանել զաւերումն անուան. ը՟ զանազանու-
թե բամբասանացն, և չարաստութեցն, զորս ա-
րար: Վ՟ զի ոչ ոք կարէ մտանել յերկինս, ու-
նելով զբարին այլոց: բայց 'ի մէջ ամ՟ արտաքին
բարեաց, լաւագոյն է բարի անունն: Բամբա-
սանքն և չարաստութիւն՝ է տեսակ իմն մարդաս-
պանութե: Քանզի մեք ունիմք զերիս կեանս. զ՟
հոգևոր. որ կայանայ 'ի շնորհն այ՟. մարմնաւոր,
որ կայանայ 'ի հոգւոջ. և քաղաքական, որ կայա
նայ 'ի համբաւոջ: Արդ մեղքն բառնայ 'ի մէնջ զա
ռաջինն. մահն զերկրորդն. և բամբասանքն զեր-

րոր

բորդն : Բայց սակայն չարալեզուն, և բամբա_
սօղն. մի միայն հարմամբ լեզուի իւրոյ, հասա_
րակապէս պատճառէ զերկս մահս : Քանզի սպա
նանէ հոգևոր մարդասպանութբ̃՝ զհոգի իւր.
նաև զհոգի այնորիկ, որ լսէ զայն. և բառնայ
ևս զքաղաքական կեանն այնորիկ, զորմէ բամ_
բասէ և չարաբանէ : Զի ո՛չ ասէ սբ̃ն բեռնար
դոս. այն որ բամբասէ, և այն որ բամբասօղին
ունկն դնէ, երկոքեանքն ունին զսատանայն յին
քեանս : մինն ունի զնա 'ի լեզուի, և միւսն 'ի
յականջս : Խօսելով մարգարէն դաւիթ զբամբա
սողաց՝ ասէ. Սրէցին զլէզուս իւրէանց ո̃պ օձի :
Արդ՝ օձն ունի զերկճղի, և զերկսայրի լեզու.
ո՞չ ասէ արիստոտէլ : Այսպէս է և լեզու բամ_
բասօղին, որ միայն միով հարմամբ՝ խայթէ և
թունաւորէ զականջս լսողին, և զբարի համ_
բաւն այնորիկ, զորմէ վատաբանէ :

* Արդ ուրեմն երդմնեցուցանեմ զքեզ՝ ո՛վ խան
դակաթդ առաքինութե̃ն. առ 'ի ոչ ասել երբեք
զչար ինչ զումեքէ. ոչ ուղղապէս, և ոչ անուղ
ղապէս : Զգո՛յշ լեր ըստ ա̃մի, առ 'ի ոչ դնել ըղ
ձուտ յանցանս և զմեղս 'ի վր̃ ընկերին. Նաև ոչ
յայտնել զայնս, որք են ծածուկք, և գաղտնիք :
Ոչ ևս մեծացուցանել զայնս, որք են յայտնիք. և
ոչ չարապէս թարգմանել և մեկնել զբարի գործս
ուրուք : Ոչ ուրանալ զբարին՝ զոր գիտես դու գոլ
առ ումեք. ոչ կեղծել, և զանց առնել չարա̃չ,
նաև նուաղեցուցանել զնա խօսիւք : զի այսու
ա̃մ կերպիւ, մեծապէս վշտացուցանես դու զա̃ծ :
Բայց 'ի վեր քան զա̃մ զգո՛յշ լեր, առ 'ի ոչ բամ
բասել ստութբ̃ զընկերն, և առ 'ի ոչ ուրանալ
զճշմարտութիւն 'ի վնաս ընկերին : Զի այս է մե_
ծագոյն մեղք. ստել, և վնասել 'ի միասին ընկե
րին :

* Այնոքիկ՝ որք 'ի բամբասելն, և 'ի վատաբա_
նելն՝

նել՝ առնեն զպատուելի առաջաբանութիս. և կամ ասեն զփոքր հանապս և ծաղրականութիս. են առաւել նրբագոյն, և թունաւորագոյն բամբասօղք՝ քան զայլս: Ես թէպէտ (ասեն) գիտեմ զնա, և վկայեմ՝ զի է ազնիւ այր ոմն: բայց պիտոյ է ասել զճշմարիտն, զի յոյս անգամ թիւրեցաւ, և սխալեցաւ նա՝ առնելով զայն անհաւատարմութիւն, և զայն ինչ պակասութիւն: Այն է (ասեն) յոյժ առաքինի երիտասարդ ոմն: բայց յանկարծակի խաբեցաւ և պատրեցաւ: և կամ ասեն զայլ նման գովաբանութիս:

* Ոհ. մի՞թէ ոչ տեսանես դու զհնարն նետաձգաց: Զի որ կամի քարշել և լարել զաղեղն, որքան կարէ առաւել քարշէ առ ինքն զնետն: բայց զայս ոչ առնէ վս̃ այլոյ, եթէ ոչ՝ զի առաւել հզօրապէս և ուժգնաբար ձգիցէ, և թափանցիցէ զնետն: Այսպէս ևս. թուի թէ՝ այնոքիկ քարշեն առ ինքեանս զբամբասանս և զվատաբանութիս իւրեանց: բայց զայս ոչ առնեն վս̃ այլոյ, եթէ ոչ առ'ի առաւել հզօրապէս սեղմել, և թափանցել զոլաքն վատաբանութեան 'ի սիրտս լսողաց:

Բամբասանքն և տրտունջն, որ ասացեալ լինի ը̃ կերպի ծաղու, է առաւելագոյն անողորմ և խիստ՝ ք̃ զայլս: Քանզի ոպ̃ չիքութա կոչեցեալ խոտն, թէպէտ ը̃ ինքեան ոչ է այնքան սաստկագոյն թոյն, այլ յոյժ մեղմագոյն, նաև դիւրապէս կարէ բժշկիլ: բայց մինչ ըմպեցեալ լինի գինեաւ, լինի անբժշկելի: Այսպէս ևս՝ բամբասանքն, և վատաբանութիւն՝ թեթևապէս ասացեալ, անցանէ առ մի ունկն, և ելանէ ընդ միւսն: Բայց մինչ ասացեալ լինի համդերձ գովասանութբ̃ և գեղգեղմամբ. յայնժամ հաստատապէս մնայ 'ի յուղեղս լսողաց: Թոյն իժից (ասէ դաւիթ) 'ի ներքոյ շրթանց նց̃: Զի իժ օձն

առնէ

առնէ զխայթումն իւր անզգալաբար. նաև թոյնն իւր՝ պատճառէ 'ի սկզբան զհեշտալի կեռացումն իմն. որոյ միջնորդութեամբն՝ սիրտն, և ներքնայինքն լայնանան, և ընդունին զթոյնն, ընդդէմ որոյ դեղ ոչ լինի յետոյ:

* Մի՛ ասեր բնաւ, թէ այս ինչ մարդ սովոր է առ 'ի արբենալ. թէև տեսեալ իցես զնա արբեցեալ: Մի՛ ասեր՝ թէ այս ոք է շնացող, թէև տեսեալ իցես զնա 'ի յայս մեղս: և մի՛ ասեր՝ թէ նա իցէ ազգապիղծ, թէև գտեալ իցես զնա յայսմիկ մոլութեան: քանզի մի միայն գործն՝ ոչ դնէ, և ոչ տայ զանուն իրին: Արեգական միանգամ եկաց 'ի յընթացիցն, վասն յաղթութեանն եսուա՛յ. և այլ անգամ ևս խաւարեցաւ, վասն մահուա՛ն ամենափրկչին. սակայն ոչ ոք է որ ասէ, թէ նա իցէ անշարժ, և խաւար: Նոյ արբեցաւ միանգամ. նոյնպէս և Ղովտ արբեցաւ միանգամ. նաև յաւել ևս գործել զմեծագոյն զաղգապղծութիւն իմն: Բայց սակայն՝ ոչ նոյ կոչեցաւ արբեցող, և ոչ Ղովտ ազգապիղծ: Նաև ոչ ևս պետրոս կոչեցաւ արիւնահեղ, վասն միանգամ հեղլոյ զարիւն. և ոչ ևս հայհոյիչ, վասն հայհոյելոյն միանգամ: Քանզի առ 'ի ստանալ զանուն առաքինութեան, և մոլութեան իմիք, պիտոյ է յարատեւութիւն, և ունակութիւն: Ուրեմն զրպարտութիւն իմն է ասել, թէ այս ինչ մարդ բարկացող, և կամ գող է, տեսանելով զնա միանգամ բարկացեալ, և գողացեալ:

* Նաև թէպէտ մարդ ոք՝ երկար ժամանակաւ կացեալ իցէ 'ի մոլութեան իմիք. յորժամ ոք զնա կոչէ ախտաւորեալ, անկանի 'ի յորոգայթս ստելոյ. Քանզի սիմոն բարոտն՝ թէպէտ կոչեաց զմարիամ մագդաղենացին մեղաւոր. զի յառաջ քան զսակաւ ժամանակ էր այնպիսի: Բայց սակայն ստէր. քանզի նա ոչ էր այլ ևս այնպէս մեղաւոր. այլ էր սրբագոյն ապաշխարող ոմն: և վասնկ

Տ՟ն

Տէրն մեր ընդդիմացաւ պատճառանացն սիմոնի :
Այն չիմար փարիսեցին ևս , համարէր զմաքրա-
ւորն զոլ մեծագոյն մեղաւոր ամն . կամ թերևս
մեծագոյն անօրէն , շնացող , և յափշտակող ոք :
բայց խաբէր և ստէր . զի նա արդարացեալ էր
յայնժամ: Ափսո՛ս մեզ ուրեմն . որովհետև բա-
ւական է մեզ մի միայն կէտ նորին, առ՚ի ընկալ-
նուլ զամ՟ շնորհն իւր: ապա ո՞րպիսի հաւաստու-
թի կարեմք ունիլ մեք . թէ մարդ ոք՝ որ էր մե-
ղաւոր յերեկ , այսօր ևս իցէ նոյնպէս : Անցեալ
օրն ոչ պարտի դատել զներկայ օրն , և ոչ ևս ներ-
կայ օրն պարտի դատել զանցեալ օրն . վերջինն
միայն է , որ դատելոց է զմն: ուրեմն մեք ոչ կա-
րեմք ասել երբէք . թէ մարդ ոք իցէ անօրէն՝
թարց որոգայթի ստելոյ : Զայն՝ զոր կարեմք
ասել՚ի պատահման՝ վս՟ ուրուք . պիտոյ է այսպէս
խօսիլ . թէ նա՝ արար զայնպիսի վատ գործ իմն .
և եկաց չարապէս ՚ի յայն ինչ ժամանակ . և կամ
յայժմ առնէ վատապէս : Բայց ոչ կարէ արտա-
հանել հետևութիւն ինչ՝ յերեկէ առ այսօր . և ոչ
յայսօրէ առ երեկ :

* Որդ թէպէտ պիտոյ է լինիլ ծայրագունապէս
զգո՛յշ , առ՚ի ոչ ասել չար զընկերէ : սակայն պի-
տոյ է ևս զգուշանալ ՚ի միւս ծայրէ , ՚ի յոր ան-
կանին ոմանք . որք առ՚ի փախչել բամբասանաց՝
գովեն , և բարեբանեն զմոլութիւս նոցին : Եւ՞
եթէ դտանիցի այր ոք , որ իցէ ճշմարտապէս
բամբասող , և վատաբանող . մի՛ ասեր զնմանէ
զոլ համարձակախօս , և ազատաբարոյ , առ՚ի
քատագովել զնա : Եւ՞ եթէ իցէ ոք ունայնասէր .
մի՛ ասեր՝ թէ նա է ազնիւ , և բանաւոր ոք : Մի՛
կոչեր զորոգայթաւոր ընտանեկցութիւն և կեն-
ցաղավարութիւն՝ պարզամտութիւն , և միամտու-
թիւն : Մի՛ շփոթեր զանհնազանդութիւն , ը՟ ան-
ուան նախանձայուզութիւն : և մի՛ զամբարհաւա

ծութիւն , է անուան ազատաբարոյութեան : և մի՛ ևս զվավաշոտութիւն , է անուան բարեկամութեան : Ոչ է պարտ ո՛վ խանդակաթդ առաքինութեան . ջանալով փախչիլ 'ի մոլութենէ բամբասանաց , գովել , շողոքորթել , և կամ ածել զմոլութիւնս այլոց : Այլ պարտ է ազատապէս , և համարձակաբար ասել չար՝ զչարս , և անարգել զանարգելի իրս : Որ 'ի առնելն այսպէս՝ փառաւորեմք զԱծ . միայն թէ լինիցի այն 'ի ձեռն հետեւեալ յատկութեանց :

* Առ 'ի լաւապէս արհամարհել և անարգել զմոլութիւնս այլոց . պիտոյ է՝ զի պահանջիցի օգտակարութիւն . կամ այնորիկ՝ զորմէ խօսիմք . և կամ այնոցիկ՝ առ որս խօսիմք : Մի ոմն պատմէ 'ի ներկայութեան աղջկանց և կանանց . զանհամեստ կենցաղավարութիւն ոմանց անձանց , որք են յայտնապէս որոգայթաւորք : և զհամարձակութիւնն ոմանց՝ 'ի բանս և 'ի գործս , որք են յայտնապէս վավաշոտք : Ուստի եթէ ես ոչ պարսաւիցեմ , և վատաբանիցեմ զայսպիսի չար գործս : և կամ թէ , եթէ կամիցիմ ջատագով լինիլ այնպիսեաց անձանց . յայնժամ այն մատաղատունկ անձինքն , որք լսեն զայնպիսի չարս , առնուն զառիթ առ 'ի լայնանալ , և արծարծիլ 'ի սոյնպիսի գործս : Ուրեմն պահանջէ օգտակարութիւն նոցին . զի ազատապէս վատաբանիցեմ ես յայնժամ զսոյնպիսի գործս : Բայց 'ի յայսմանէ , կարեմ նաև առնել զսոյն բարի պաշտօնս , յայլում պատկանաւոր ժամանակի , և յայլում առիթի . սակաւ մնասիւք այնոցիկ , զորոց խօսեցեալ լինի :

* Բայց 'ի յայսմանէ , նաև պիտոյ է ինձ խօսիլ զայսպիսւոյ գործոյ . մինչ եմ ես նախկին 'ի յընկերակցութեան : վ՟ն զի եթէ ոչ խօսիցիմ , թուի թէ հաստատեմ , և գովեմ զմոլութիւն : Եւ՛ եթէ իցեմ յետինն յայնմիկ ընկերակցութեան , ոչ պար-

տիմ

տիմ ձեռնամուխ լինել առ՚ի առնել զերաւագատութիւն: Բայց ՚ի վեր քան զամ պիտոյ է, զի իցեմ հաւաստարապէս արդար ՚ի բանս իմ, առ՚ի ոչ ասել նաև զփոքրագոյն բան ինչ վերադրաւ, և յաւելմամբ: Զոր օրինակ. եթէ վատաբանեմ ես զընտանեկցութին; և կենցաղավարութիւնն այն երիտասարդին, և կամ այն աղջկանն, և կնոջն. զի է յոյժ անպատշաճ, և որոգայթաւոր: Յայնժամ պիտոյ է՝ ո՛վ խանդակաթդ. զի ըմբռնիցեմ ես զկշիռն յոյժ արդարապէս, առ՚ի ոչ մեծացուցանել, և յարաբարդել զիրն՝ գոնեայ սակաւիկ մի: Նաև՝ եթէ իցէ անդ տկար երևումն, ոչ պարտիմ ասել անդր քան զոր է. և եթէ իցէ անդ պարզ անխոհեմութին ինչ; ոչ պարտիմ ասել զիր ինչ աւելի:

Բայց եթէ ոչ իցէ անդ անխոհեմութիւն, և ոչ ևս երևոյթ ինչ չարի. այլ այնքան միայն, զի չարաճճիկ հոգի ումն՝ կարիցէ առնուլ զվկայութիւն բամբասանաց. յայնժամ ոչ խօսեցայց բնաւին, կամ թէ ասացից զայն միայն: Մինչ ես դատեմ զընկերն իմ, լեզուն իմ ՚ի բերանի իմում՝ է ոպ նշտրակ ինչ ՚ի ձեռն վիրահատի, որ կամի առնել զհատանումն ՚ի մէջ ջլաց, և յօդուածոց. Պիտոյ է ուրեմն, զի հարկանումն՝ զոր ես տամ. (այս զրուցաբանութիւնն՝ զոր ես առնեմ զայլոյ ումեմնէ,) այնպէս արդարագոյն լինիցի. մինչ զի ոչ ասիցեմ առաւել, և ոչ ևս պակաս՝ քան զոր է: Վերջապէս. ՚ի վեր քան զընաւս՝ պարտ է պահել զկարգն ՚ի վատաբանել զմոլութիւնն. որ է այս. զի լինիցի մանաւանդ առ՚ի չահել զանձն, որ պատատեալ կայ ՚ի նոյն մոլութեն:

* Բայց սակայն վատահամբաւ, և յայտնի մեղաւորաց, կարէ խօսիլ ոք յայտնապէս. միայն թէ՝ այս լինիցի ոգւով սիրոյ, և ցաւակցութեն. և ոչ բնաւ իսկ ամբարհաւաճութե՛, և յանդգնու-

թէ. և ոչ ևս հաճելով այլոց մեղաց ։ քանզի այս վերջինս՝ է գործ ունայն և սնոտի սրտի մրոյ ։ Սակայն իմանալի է այս՝ բաց ՚ի թշնամեաց նոյ, և եկեղեցւոյ իւրոյ. զի զայնպիսիս՝ որ քան կարելի է. պիտոյ է հռչակել, և հրապարակել ։ Որք և են աղանդքն հերետիկոսաց, և հերձուածողաց, և հեղինակաց նոցին ։ քանզի այս է մեծագոյն գործ իմն սիրոյ, յայտնել զգայլն՝ մինչ կայ ՚ի մէջ ոչխարաց, և կամ այլ ուրեք իցէ ։

* Ամենայն որք առնուն զհամարձակութիւն առ ՚ի դատել և բամբասել զիշխանս. և առ ՚ի ասել չար՝ ամբողջ զազգէ միոյ, կամ զքաղաքան բղձից՝ զօրս ունի դէպ ՚ի նոսա ։ Ով խանդակաթդ առաքինութե. մի՛ առներ դու զայս մոլութիւնս. զի բաց ՚ի վշտացուցանելոյ զԱծ. նաև կարէ երբեմն յարուցանել ՚ի վր քո զքաղաքական տեսակս հասարակութե, և կռուոյ ։

* Յորժամ լսես դու ասել չար զումեքէ. դի՛ր զայն ամբաստանութիւն ՚ի յերկբայութե, եթէ կարիցես առնել արդարապէս ։ և եթէ ոչ կարես, ջատագովեա՛ զդիտաւորութիւն ամբաստանեցելոյն ։ Եւ՛ եթէ այս ոչ իցէ կարելի. յայնժամ ցո՛յց՝ ունիլ զցաւակցութիւն դէպ առ այն. և դարձո՛ զոճն խօսակցութե այնու կերպիւ. զի կարիցեն յիշել նոյն չար իրակութե լսող մարդիկքն. Թէ այնք, որք ոչ անկանին ՚ի մոլութիւս, պարտին բոլոր շնորհն և գովութիւն տալ նմա ։ Եւ՛ արա՛ դառնալ առ ինքն զնոյն բամբասօղն՝ գեղեցիկ եղանակաւ իմն, ասելով զայլ բարի ինչ զվաստաբանեցեալ անձնէն, եթէ գիտես դու զնա ։

Այլք ոմանք աղերսմունք՝ և խրատք, որք պատկանին առ խոհականութիւնն:

Գլուխ. Լ:

Ան զի՝ առ'ի լինել լեզու քո քաղցր, համարձակ, բոլորակ, պարզ, և հաւատարիմ. զգո՛յշ լեր յերկլեզուութէ, յարհեստախօսութէ, և'ի կեղծաւորանութէ: Զի թէպէտ ոչ է լաւագոյն իրակութն, միշտ ասել զամ կերպ ճշմարտութիւն. սակայն ոչ է թոյլատրեցել և բնաւ, հակառակիլ ճշմարտութն: Կրթեա՛ և ընտելացո՛ զքեզ, առ'ի ոչ ասել երբէք զսուտ իմն գիտութբ. ոչ մն ջատագովութեան, և ոչ և այլով կերպիւ. խրատելով զքեզ, թէ ած է՝ ած ճշմարտութն: Եւ՛ եթէ դու ասացեր զսուտ իմն, և կա՛րես ուղղել զնա մեկնելով, և կամ այլով միջոցիւ, խոկոյն ուղղեա՛ զնա: Զի ճշմարիտ ջատագովութն իմն, ունի առաւել շնորհս և զօրութիւ՝ առ'ի պաշտպանել, քան զբազում ստութիւ:

* Թէպէտ երբեմն կարէ ոք՝ խոհեմաբար պատատել և ծածկել զճշմարտութիւն՝ արհեստիւ իմիք խօսից: Սակայն ոչ է պարտ կրթիլ և վարժիլ առ այս, եթէ ոչ 'ի հարկաւորութն. մինչ յայտնապէս պահանջէ զնա փառքն այ, և ծառայութիւն նորին: Քանզի բաց 'ի յայսմանէ, տրուեստաբանութիւքն որոգայթաւորագոյնք են: վասն զի ոպ ասէ սբ գիրն. Բէ սբ հոգին իմաստութեան փախիցէ 'ի նենգութէ: ուստի ոչ է առաւել բարի, և ըղձալի խորամանկութիւն՝ քան զմիամտութիւն: Քանզի աշխարհային խոհեմութիւքն, պատկանին

որդւոցն աշխարհի: բայց որդիքն այ ընթանան առանց թիւրութեան. և ունին զսիրտ առանց պատատեցման: Որ գնայ միամտութբ. (ասէ սբ գիրն) գնայ յուսով. ոչ ապահովութբ: Մտաբանութիւն, երկլեզուութիւն, և կեղծումն. միշտ ցուցանեն

զոկար, և զստրուկ անձն ոմն:

* Մէն օգոստինոս՝ ասաց 'ի չորրորդ գրգոջ խոստովանութեան իւրոյ. թէ հոգի իւր, և հոգի բարեկամին իւրոյ. ոչ էին այլ, եթէ ոչ մի միայն հոգի: Նաև թէ ինքն ունէր 'ի մեծագունի զարշութեան զայս կեանքս, զկնի մահուան բարեկամի իւրոյ: Վն զի ոչ կարէր կեալ, և ապրիլ կիսովն. և այսու ամի երկնչէր 'ի մեռանիլ, զի մի՛ բարեկամն իւր բոլորովին մեռանիցէր: Բայց բանքս այսոքիկ. յետոյ թուեցան նմա բանք արուեստականք, և ըղձակաթականք. որոյ վն՝ յետ դարձոյց զայնս՝ 'ի գիրքն իւրում յետկոչման. և անուանեաց զայն արուեստ, և հնարաբանութիւն իմն: Տե՛ս ուրեմն՝ ով խանդակաթդ առաքինութեան. թէ ո՛րպէս այս սբ անձնս, գեղեցիկ և փափուկ է՝ 'ի զգացման ըղձական խօսից: Իրաւի. զի մեծագոյն զարդ իմն է քրիստոնէական կենաց, հաւատարմութիւն, պարզութիւն, և միամտութիւն լեզուին: Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ (ասէր մարգարէն դաւիթ) զի մի՛ մեղայց լեզուաւ իմով: Դի՛ր տէր պահապան բերանոյ իմոյ. և դուռն ամուր՝ շրթանց իմոց, զի մի՛ խոտորեսցէ սիրտ իմ բանից չարութեան:

* Այս է խրատն սբյն լուդովիկոս թագաւորի. ոչ հակառակիլ բնաւ ումեք, եթէ ոչ իցէ անդ մեղք, և կամ մեծագոյն վնաս 'ի հաւանիլն: և զայս ասէր նոյն երանելին. առ 'ի զգուշանալ և փախչիլ յամ կռուոյ, և հակառութէ: Արդ յորժամ հարկաւոր է ընդդիմանալ, և հակառակիլ ումեք, և կմ հակադրել զկարծիս իւր ընդդէմ

կար

կարծեաց ումանց . պիտոյ է 'ի գործածել զմեծ քաղցրութի, և խոհեմութի, Թարց եղծելոյ ըզ կարծիսն այլոց բռնաբար ։ Զի ոչ շահի ոք զինչ աւելի , կամ պակաս՝ խստապէս առնելով զիւրա կութիւն իմն ։

* Փոքր խօսիլն , որ պատուիրեալ եղև 'ի հնագոյն իմաստնոց . ոչ իմանի ասել զսակաւ խօսս , այլ իմանի՝ ոչ ասել զբազում անօգուտս ։ Զի նիւթն խօսից՝ ոչ ունի զնկատումն իւր առ քանակու-թիւնն , այլ առ որակութիւն ։ և ինձ թուի թէ՝ պարտ է փախչիլ և ա յերկուց ծայրից ։ Վս զի ցու-ցանել զինքն յոյժ իմաստուն , և արհամարհել զհամընթացութն 'ի յընտանեկցական խօսակցու-թիս , որք առնանին 'ի կենցաղավարութն . Թուի թէ՝ այս ունի զսակաւագոյն ապաւինութիս , և կամ թէ՝ զտեսակ իմն ինքնահաւանութն ։ Եւ խօսիլն յաճախ , և բարբանջելն միշտ , Թարց տա-լոյ զժամանակ և զանդորրութիւն՝ առ 'ի խօսիլ այլոց . այս ունի զհամարձակութն , զթեթևու-թի , և զանխոհեմութի ։

* Սեն Լոտովիկոս՝ ոչ ենթադատեաց բարի գոլ , լինելով ոք 'ի յընկերակցութն , խօսիցէր ընդ ու-մեք ծածկապէս , և խորհրդաբար . և զայն յատ-կապէս 'ի սեղանոջ ։ այնու՝ զի մի՛ տայցէր զկար-ծիս ումանց , առ 'ի չար խօսիլ զայլոց ։ Այն՝ որ նստի 'ի սեղանոջ՝ ( ասէր նա ) 'ի մէջ բարի ընկերակ-ցութե . եթէ ունիցի զիր ինչ զուարճալի , և հաճելի ասելոյ , պարտի ասել զնա յայտնի , զի բնաւքն իմա-նայցեն զայն ։ Բայց եթէ այն ինչ էր հարկաւոր , պար-տի լռել՝ Թարց ասելոյ զինչ ։

Յաղագս զբօսանաց, և անցուցման ժամանակի. և նա խաղեփաբար յաղագս այնց զբօսանաց, որք են ճահաւորք և գովելիք։

## Գլուխ. ԼԱ։

Հարկաւոր է երբեմն մեզ, թոյլատրել զոգի, և զմարմինն մեր՝ առ տեսակ իմն զբօսանաց, և սփոփանաց։ Սբ. յօհաննէս աւետարանիչն (զի որում պատմէ քասիանոս.) յաւուր միում ունելով 'ի ձեռին իւրում զկաքաւ իմն, և շփէր զնա վս զբօսնելոյ։ Եւ տեսեալ զնա որսորդ մի եհարց. թէ զորով իմքն այր ոք յայնքան մեծի հեղինակութեն. վս է՞ր անցուցանէր զժամանակն 'ի յայնքան խոտելի և դուեհկական յիրակութեն։ Առ որ պատասխանեաց սբն յօհաննէս. ընդ է՞ր և դու ոչ լարես միշտ զաղեղն քո։ Պատասխանեաց որսորդն. վս երկիւղի ոչ առնեմ զայս. զի եթէ զբաղեցից միշտ 'ի լարել, գուցէ կորուսանիցեմ զզօրութիւն իմ. և յետոյ մինչ պիտոյանայցէ՝ ոչ կարիցեմ լարել զնա։ Մի՛ զարմանար ուրեմն (ասաց սբ առաքեալն) թէ և ես թուլացուցանեմ զիս սակաւ ինչ 'ի խստութեէ, և 'ի դիտմանէ մտաց իմոց, առ 'ի զուարճանալ սակաւ ինչ. վս կարող լինելոյ յետոյ՝ առաւել կենդանապէս պարապել 'ի խոկման։ Առանց երկբայութեն՝ մոլութիւն իմն է լինիլ սաստկապէս, և խստաբար զբաղեալ յիրակութին ինչ։ Նաև այն, որ ոչ կամի թոյլատրել ինքեան՝ առ 'ի առնել զդոյզն ինչ զբօսանս. և ոչ ևս թոյլատրէ այլոց՝ առ 'ի առնել զտեսակ իմն զբօսանաց, առնէ վատապէս։

Առ-

* Րռնուլ զշունս. զգնալ ձեռնելով. կալ 'ի զու-արձ և 'ի բարեկամական խօսակցութեն. հնչեցուցանել զտաւնաղի, զքնար, և զնուագարան. երգել զերաժշտական երգս. գնալ 'ի յորսորդութն ։ Այնքան համեստագոյն զբօսանք են ըստ ինքեանց. մինչ զի առ 'ի բարեպէս 'ի գործածել զայնս, ոչ պիտոյանայ այլ ինչ, եթէ ոչ հասարակ խոհեմութի. որ ուսուցանէ զայն մեզ՝ կարգըն, ժամանակն, տեղին, և չափն՝ իւրաքանչիւր իրի ։

* Րյնպիսի խաղացմունքն, յորում շահն գնահատի, և հատուցանի փոխանակ ուշիմութեն մարմնոյ և մտաց. որպիսիք են խաղացմունքն կլօրակաց, սանդրանձից, և այլ սոյնպիսեաց. են ըստ ինքեանց զբօսանք, և ճահաւորք ։ Բայց պիտոյ է միայն զգուշանալ յաւելորդութէ. թէ որքան առ ժամանակն, որ անդ ծախեցեալ լինի. և թէ որքան առ գինն, որ անդ եդեալ լինի ։ Քանզի եթէ զբաղեցեալ լինի անդ 'ի բազում ժամանակս. յայնժամ ոչ է զբօսանք, այլ զբաղումն ։ ուստի ոչ թեթևացուցանէ զմարմինն, և զմիտքն. այլ ներհակաբար թմրեցուցանէ և նուաճէ ։ 'Ի խաղալն ոք զսանդրանձ, և զթավլու՝ զհինգ, և զվեց ժամս, բոլորովին գտանի վաստակեալ, և թուլացեալ 'ի զօրութէ ։ Նմանապէս և խաղալն յերկար ժամանակ զկլօրակ և զգնտակ. ոչ է զբաղեցուցանել զմարմինն, այլ տկարացուցանել ։ Եւ՛ եթէ գինն, որ եդեալ լինի անդ առ 'ի խաղալ, իցէ նաև բազում, և առաւել. յայնժամ անկարգ լինի իղձն խաղացողաց ։ Եւ՛ բաց 'ի յայսմանէ, անիրաւութի է ևս դնել զմեծագոյն գին առ այնպիսի անօգուտ, և անհարկաւոր ուշիմութեն. որպիսիք են ուշիմութիք և հանճարեղութիւնք խաղուց ։

Բայց այսու ամի՞ ո՞վ խանդակաթգ առաքինութե.

թն . զգո՛յշ լե՛ր 'ի վեր քան զամ, առ 'ի ոչ դնել զկեղծն քո ընաւ՝ 'ի յայսպիսի իրս : Վ՟ զի ո՛րքան համեստ և իցէ զբօսանք իմն , մոլութի է դնել անդ զսիրտն , և զկեղծն քո : Արդ՝ ես ոչ ասեմ քեզ , թէ ոչ է պիտոյ՝ ոչ առնուլ զհեշտութի իմն 'ի խաղալն զհամեստ խաղս : քանզի՝ եթէ ոչ իցէր այս , ոչ զբօսնոյր ոք 'ի խաղալն : Այլ ասեմ . թէ ոչ է պիտոյ դնել անդ ոք զկեղծն իւր , առ'ի ցանկալ նմա , և առ'ի մնալ անդ փափաքանօք :

## Յաղագս արգելեալ խաղուց :

## Գլուխ . ԼԲ :

ԽԱղացմունքն զարից , թղթոց , և այլոց նմանեաց սոցին . յորս նախապետաբար շահն կախի 'ի պատահմանէ , և 'ի բախտէ . ոչ միայն են որոգայթաւոր զբօսանք , որպէս և են կաքաւեցմունքն : Այլ նաև պարզապէս , և բնականաբար են վատթարք , և անարգք . և վ՟կ 'ի քաղաքական , և 'ի կանոնական օրինաց արգելեալք : Բայց եթէ ասիցես . ո՞րպիսի չար գտանի 'ի նմ : Ասեմ . շահն՝ որ լինի յայնպիսի խաղս , ոչէ ի՟ բանականութե , այլ ի՟ բախտի . որ բազմիցս անկանի 'ի կողմն այնորիկ , որ ոչ արդիւնաւորի զիմն ուշիմութբ , և հանճարեղութբ : ուստի բանականութիւն այսու մնայ վշտացեալ : Բայց եթէ ասիցես՝ թէ մեք այսպէս դաշնադրեցաք նախ 'ի միջի մերում : Ասեմ առ այդ . թէ այն դաշնադրութիւն , այնքան զօրութի ունի , զի ցուցանէ միայն , թէ այն՝ որ շահի յայնպիսի խաղս , ոչ առնէ զթիւրութի , և զանիրաւութի այլոյ : Բայց ոչ հետևի յայսմանէ ,

նէ, թէ այսպիսի դաշնակցութեն ոչ իցէ հակա-
ռակ բանականութն, նաև խաղացման : Քան-
զի այն փոքր շահն, որ պարտէր լինել գին ուշի-
մութն, և հանճարեղութն. առնանի գին պա-
տահման բախտի. որ բնաւ ոչ արդիւնաւորի ունիլ
զգին իւրն, զի ոչ ինչ կերպիւ կախի 'ի մէնջ:

* Նաև խաղքն՝ ունին զանուն զբօսանաց, և այ-
սու վախճանաւ են արարեալք: բայց այնպիսի
խաղքն՝ ոչ ինչ կերպիւ են սոյնպիսիք. այլ են բռ-
նաւոր զբաղմունք: Մի՞թէ ոչ լինէր վնասակար
զբաղմունք իմն, ունել զմիտքն զբաղեալ, և շր-
ջապատեալ շարունակ մտածութբ միով. նաև
տատանեալ և տարաբերեալ անհանգստութբ,
երկիւղիւ, և նեղութբ: Ուրեմն ո՛րպիսի հոգա-
ծութիւն կարէ գտանել առաւել խռովեալ, և
թախծեալ, քան զմտածութիւնն խաղացող ան-
ձանց: Աստուստ պատճառի. որ ոչ է պիտոյ
խօսել 'ի վր խաղուց. ոչ ծիծաղել. ոչ հագալ: ապա
թէ ոչ, արտակայանայ բարկութն, և զայրա-
ցումն մեծ:

* Վերջապէս. ոչ լինի ուրախութն 'ի խաղաց-
ման, եթէ ոչ 'ի շահելն: Եւ այսպիսի ուրախութիւ
է անօրէն, և անիրաւ. որովհետև ոչ կարէ ու-
նել ինքն, եթէ ոչ կորստեամբ, և տհաճութբ
ընկերին: վս որոյ՝ այսպիսի ուրախութիւ է վատա-
համբաւ, և վատ: Ուստի վս երեք պատճա-
ռաց, որք ասացան. այսպիսի խաղացմունքս են
արգելեալք: Սբ լոտովիկոս Թագաւորն՝ գիտե-
լով թէ իշխանն անկլիոյ, (որ էր եղբայրն իւր)
նաև կոմսալթիէռ իշխանն նէմուռաց՝ խաղային, գո-
լով ինքն հիւանդ. սակայն կանգնեցաւ 'ի յոտին,
և գնաց դողալով 'ի սենեակ նոցին, ուր նոքա խա-
ղային. և էառ զտախտակն, և զզարսն, և զմասն ինչ
դրամոց. և ընկէց զայնս 'ի պատուհանէ 'ի ծովն,
յոյժ զայրացմամբ: Սրբուհի, և ողջախոհագոյն
թա-

սառա, ('ի գիրս տօբիթայ) խօսելով առ նմ վն անմեղութեն իւրոյ, ասէր. Դու գիտես Տէ, որ ես ոչ երբէք չէնչաղավարեցայ ընդ խաղացողաց:

Յաղագս ճահաւոր հաճաւեցման, և ղէօսանաց, նաև որոգայթաւորաց:

## Գլուխ. ԼԳ:

Աքաւմունքն, և դոփեցմունքն, ըստ բնութեան իւրեանց են անզանազան իրք: բայց ոչ հասարակ կերպիւ՝ որով առնանին այսպիսի գործքս, յաւէտ հակին 'ի կողմն չարին. և հետևապէս լի են վնասիւք և որոգայթիւք: Երբ՛ ելթէ առնանին 'ի գիշերի, և 'ի մթին տեղւոջ. է դիւրագոյն իր, զի պատահիցի բազում մթային, խաւարային, և մոլութենական պատահմունք, 'ի միում առարկայի, որ է ըստ ինքեան յօժար առ 'ի ընդունիլ զչարն: Անդ լինին մեծագոյն արթնութիւք, որով կորուսանի առաւօտն հետևեալ աւուր. և հետևապս եղանակն ծառայելոյ այ յայնմիկ աւուրն: Աւելի է միով համառօտ բանիւ. թէ միշտ խելագարութի է՝ փոխել զօրն ընդ գիշերոյ. լոյսն ընդ խաւարի. և բարեգործութին ընդ չարագործութե: Ամենայն ոք տանի առ պարեցումն զանապարծութի ջանակռութք: Բայց անապարծութին է մեծագոյն տրամադրութի առ վատթար իղձն, և առ որոգայթաւոր, և յանկարգ սէրն: զի դիւրապէս ծնանի այս նմ 'ի կաքաւեցման, և 'ի դոփեցման:

* Նա այնպէս խօսիմ զկաքաւեցմանէ՝ ո՛վ խանդակաթդ առաքինութե, ոչ և խօսին բժիշկք յաղագս ան

մնկաց՝ տանելով. Ոչ լաւագոյնս նոցին ոչինչ արժէն: և ես ասեմ քեզ. թէ լաւագոյն կաքաւմունքն ոչ են բարիք: Բայց եթէ պատահիցի քեզ (ասեն) ուտել զսունկս. հոգա՛, զի իցեն այնք բարեպէս համեմեալք: Այսպէս եթէ պատահմամբ իմիք՝ բռնաբարեցեալ լինիցիս գնալ 'ի կաքաւել. հո՛գ տար՝ զի կաքաւումն քո իցէ բարեպէս համեմեալ համեստութբ, պարկեշտութբ, և բարի դիտաւորութբ: Բայց ո՞րպէս պիտոյ է, զի լիցի համեստութբ, պարկեշտութբ, և բարի դիտաւորութբ: Կե՛ր (ասեն նոյն բժիշկքն) զսունկսն սակաւ, և երբեմնապէս. քանզի թէև բարեպէս համեմեալք եղիցին, շատութիւն նոցին է որպէս զթոյն: Այսպէս և ո՛վ խանդակաթդ. եթէ պատահիցի քեզ հարկ. կաքաւեա՛ սակաւ, և հազիւ. ապա թէ ոչ, անկանիս 'ի յորոգայթի՝ առ 'ի դնել զիղձն քո 'ի նմա:

* Սունկքն՝ ըստ Փլինոսի, գոլով ծակոտկէնք, և երակաւորք, այնու քարշեն զբոլոր ապականութիւն երկրի, որ է շուրջ զինքեամբք. նաև գոլով մերձագոյն օձից, ընդունին զթոյնս նոցին: Այսպէս և՝ կաքաւմունքն, գոփեցմունքն, և այլք այսպիսիք խաւարային խաղացմունք. հասարակապէս քարշեն առ ինքեանս զմոլութիս և զմեղս, որք թագաւորեն 'ի միում տեղւոջ: նաև ծնանին ըզկռիւս, զնախանձս, զծաղրս, և զմոլեկան սէրս: Եւ որպէս այսպիսի կրթութիւնքս՝ բանան զերակունս մարմնոյ նոցին, որք առնեն զայնս: այսպէս և բանան զերակունս սրտից նոցին. մինչ զի եթէ գայցէ օձ իմն առ 'ի շնչել 'ի յականջս այնոցիկ՝ զվավաշոտական խօսք իմն: Եւ կամ թէ գայցէ իժ իմն, առ 'ի տալ 'ի յաչս նոցին՝ զանպարկեշտ հայեցուածս. յայնժամ սիրտք նոցին դիւրապէս թողանին թունաւորիլ, և առնանիլ: Արդ՝ ո՛վ խանդակաթդ առաքինութե.

այս

այսպիսի անպատշաճ զբօսանքս, հասարակապէս որոգայթաւորք են: Քանզի ցրուեն զոգին ջերմեռանդութեան. տկարացուցանեն զառաքինութիւն. սառուցանեն զսէրն. և զարթուցանեն 'ի հոգւոջ զպէսպէս վատթար խղձս. և վ̃նկ պիտոյ

է մեծաւ խոհեմութ̃բ կիրարկանել զնս̃:

* Բայց ասի նաև. թէ 'ի վեր քան զամ̃ պիտոյ է ըմպել 'ի վր̃ սկնոյ՝ զպատուական գինի: Այսպէս և ես ասեմ. Թէ պիտոյ է զկնի կաքաւմանց և խաղուց, կիրարկանել զոմանս ոք̃, և բարի մտածմունս. որք արգելուցուն զորոգայթաւոր երևակայութիւնս, և զունայն հեշտութիւնս, զորս ներքաղեն այնպիսի խաղացմունքն 'ի սիրտս մեր: Բայց եթէ ասիցես. թէ ո՞յք են այնք մտած-

մունք, որք պարտին առնանիլ:

Նախ. զի 'ի նոյն ժամանակի՝ մինչ դու կայիր 'ի կաքաւման, և 'ի խաղացման, բազում հոգիք այրեցեալք լինէին 'ի հուրն դժոխոց՝ վս̃ այնց մեղաց, զորս գործեալք էին յայնպիսի խաղացման, և պարեցման: Երկրդ. բազում կրօնաւորք, և ջերմեռանդ անձինք՝ կային յայնժամ առաջի այ̃, և երգէին զգովութիւնն նորին, նաև խոկային

զբարութիւնն իւր:

Երրդ. մինչ դու կայիր յայնպիսի խաղացման, և կաքաւեցման. բազում հոգիք ելին յայսմանէ աշխարհէ, մեծաւ նեղութ̃բ և ցաւով: Եւ հազարք հազարաց՝ արք, և կանայք, կրեցին զմեծամեծ նեղութիւնս և ցաւս՝ 'ի մահճի, 'ի հիւանդանոցի, և 'ի տան իւրեանց: Եւ այս՝ կամ տոնացաւութ̃բ, կամ գլխացաւութ̃բ, կամ ատենտի̂. և կամ այլով անթուելի հիւանդութ̃բ: Ո՜հ ցաւոյս. նոքա ոչ ունեցան բնաւ զհանգստութիւն իմն. և դու ոչ ունեցար զկէտ մի ցաւակցութեն դէպ առ այնոսիկ: Եւ ոչ խորհիս ևս. թէ յաւուր միում՝ հեծեծելոց և ողալոց ես ոպ̃ զնս̃.

մինչ

մինչ այլք խաղային, և կաքաւիցեն, ուր և դու
արարեր :

Զրոյց · Տէր մեր, և Ամենասրբուհի տիրուհին մեր · հրեշտակըն, և սուրբքն · տեսին զքեզ՝ զի խաղայիր անմտաբար, և կաքաւէիր ցոփապէս : Ո՞չ թէ · արդեօք յայնժամ առ որքան ցաւակցութին շարժեցան նոքա դէպ առ քեզ · մինչ տեսին ընկղմեալ զսիրտն քո յայնպիսի մեծագոյն խոտե-
լութեն, և ունայնութեն :

Հինգերորդ · զի մինչ դու կայիր յայնպիսի գործս · էանց և հոսեցաւ ժամանակն քո, և մերձեցաւ մահն : Տե՛ս թէ՝ նա ո՛րպէս ծիծաղի 'ի վերայ քո, և ո՛րպէս կոչէ զքեզ 'ի խաղն իւր · 'ի յոր սուգն, և կոծն մերձաւորաց և բարեկամաց քոց, լինիցին 'ի տեղի երգոց, և քնարաց : Եւ՞ դու ես անդանօր ոչ առնես զայլ ինչ, եթէ ոչ միայն զանդրաչըռութիւն 'ի կենաց առ մահն : Քանզի այս կաքաւեցութիւն է ճշմարիտ զբօսութիւն, և տեսարան մահկանացուին · որովհետև 'ի միում կիտոջ անցանէ նա՝ 'ի ժամանակէ առ յաւիտենականութիւն : և այս լինի՝ կամ առ բարի յաւիտենականութիւն, և կամ առ չար յաւիտենականութիւն : Եւ՞ զի թէպէտ՝ ես ցուցի քեզ զայս փոքրագոյն մտածմունս · սակայն դու ներշնչէ քեզ զայս սոյնպիսի մտածմունս բարեգոյնս,
եթէ ունիցիս դու 'ի քեզ զսուրբ երկիւղն նորին :

## Յաղագս թէ՝ յե՛րբ պէտս է խաղալ, և պարել:

### Գլուխ. ԼԴ:

Առ'ի ճահաւորապէս խաղալ, և պա_
րել. պիտոյ է՝ զի լինիցի այն վասն
զբօսանաց, և անցուցման ժամանա
կի. և ոչ վասն ըղձի: Ե՞ւ՝ սակաւ ինչ
ժամանակ, և ոչ մինչև ցվաստակիլն, և ցխոն_
ջելն: Նաև լիցի երբեմնապէս և ցանցառակի. զի
որ առնէ զայս միշտ, դարձուցանէ զզբօսանքն 'ի
զբաղումն: Բայց թէ յո՞րպիսի պատահման և
առթի կարէ ոք խաղալ և պարել: Արդար ա_
ռիթքն անզանազան խաղուց, են առաւել բա_
ղումք. և առիթքն՝ արգելեալ խաղուց, են առա
ւել սակաւք. ոպ՟ և են այնք խաղացմունքն, որք
են առաւել անարգք, և որոգայթաւորք:

* Բայց համառօտ բանիւ ասեմ. խաղա՛, և պա
րեա՛ թէուէթ ( ոպ՟ ասացաւ ) մինչ է վասն համա
հաճութեան, և համաձայնութեան՝ համեստ կենցա_
ղավարութեան, յորում գտանիցիս դու: Խոհեմու
թիւն և ընտրութիւն՝ ուսուցանէ քեզ. զի համա
ձայնութիւն, և համազիջանումն, (ոպ՟ պատուա_
տումն ճիւղոյ, այսպէս և սիրոյ) առնէ՝ զի ան
զանազան իրքն լինիցին բարիք, և որոգայթա_
ւորքն՝ թոյլատրելիք. և բառնայ ևս զչարութիւն
յայնցանէ, որք կերպիւ իմն են չարք: Եւ վասն՝
խաղքն պատահման և բախտի, որք են անարգք
և վտարականելիք. ոչ համարեալք լինին այնպէս,
եթէ երբեմն 'ի գործածիցին 'ի նոցանէ, վասն ար
դար համազիջման և համաձայնութեան: Ես յոյժ
մխիթարիմ ընթեռնլով զվարս սրբոյն կառլո
պո_

պօռոմէին . որ նա 'ի յոմանս իւրս համաձայնիւր ավէգերից , ընդ որոց ընդդիմակ , և խիստ էր այլովք :

Ե՞ւ ա՞յն իգնատիոս լօյօլացին՝ դոլով հրաւիրեցեալ առ 'ի խաղալ, ընդունեաց և ընկալաւ զայն: Նաև սրբուհի եղիսաբեթ ունկարիացին . Թէպէտ խաղայր և գտանիւր 'ի մէջ բազմութեան զբօսնողաց՝ առանց վնասու ջերմեռանդութեան իւրոյ : Բայց այնպէս հաստատեալ և արմատացեալ էր ջերմեռանդութիւն 'ի սրտի նորին . մինչ զի՝ ոտն շիւղադէզքն կալով շուրջ զափամբ լճակաց, ամէն 'ի բախմանէ ալեաց : Այսպէս և ջերմեռանդութիւն նորին, աճէր 'ի մէջ հանդիսից և ունայնութեանց, առ որս տրամադրեալ էր ըստ կացութեան իւրոյ : Արդ՝ այնք ասին մեծագոյն հուրք, որք առաւել բորբոքին հողմով : բայց փոքրագոյն հուրքն շիջանին, եթէ ծածկաբար տարեալք ոչ լինիցին :

## Յաղագս Թէ՝ պիտոյ է հաստատուն գտանել 'ի մեծագոյն, և 'ի փոքրագոյն պատահման, և ատրի :

## Գլուխ . ԼԵ :

ՍՈւրբաղան փեսայն՝ 'ի յերգս սաղօմոնի ասէ . Թէ հարսն յափշտակեալ էր զսիրտն իւր , միով ակամբ , և միով հերաւ պարանոցի իւրոյ : Արդ՝ 'ի մէջ ամենից մասանց մարդկային մարմնոյ, ոչ գտանի առաւել ազնուագոյն, առաւել արուեստաւոր կազմողութիւն, և առաւել զարմանալի՝ քան զաչս : Նաև ոչ ևս առաւել խոտելի , և անարգ՝ քան զհերս : Ուստի այսու կամի ծանուցանել երկնաւոր փեսայն .

թէ ոչ միայն ընդունի զմեծամեծ գործս ջերմեռանդ անձանց, այլ նաեւ զփոքրագոյնս, եւ զառաւել խոտելիս, եւ զանարգս: Ուստի առ'ի ծառայել նմա ըստ հաճութեն իւրոյ. պիտոյ է համանգամայն ունիլ զմեծագոյն հոգունակութեն բարեպէս ծառայելոյ նմա 'ի մեծամեծ, եւ 'ի բարձրագոյն իրս. նաեւ 'ի փոքրագոյն, եւ յստորնագոյնս Որովհետեւ կարեմք հաւասար սիրով յափշտակել զսիրտն նորին՝ 'ի ձեռն միոյն, եւ միւսոյն:

* Պատրաստեա՛ ուրեմն զքեզ՝ ով խանդակաթդ առաքինութեն. առ'ի կրել զբազում մեծամեծ նեղութիս վս սիրոյ Տն մեր, թէ եւս իցէ մարտիրոսութեն: Առաջադրեա՛ 'ի քեզ՝ տալ նմա զայն ամ պատուականագոյն իրս՝ զորս ունիս դու, եթէ հաճոյ իցէ նմա ընդունիլ զայնս. այս է զհայր, զմայր, զեղբայր, զայր, զկին, զորդի, զաչս, եւ զկեանս քո: քանզի պարտիս պատրաստ ունիլ զսիրտն քո՝ առ'ի տալ նմա զայսոսիկ ընաւս: Բայց մինչ ամենայն նախատեսութիւնն՝ ոչ առաքէ քեզ զայն քան մեծ, եւ զգալի նեղութիս. եւ եթէ ոչ պահանջէ 'ի քէն զակն քո. գոնեայ տո՛ւր նմա դուզհերս քո: Կամիմ ասել. թէ գոնեայ քաղցրաբար կրեա՛ զփոքրագոյն անիրաւութիս. զնուաստագոյն նեղութիս. եւ զսակաւ կորուստս ընչից, որք պատահին երբեմն: Զի միջնորդութբ այսպիսի փոքեր առթի եւ պատճառի, զոր ընկալնուս դու սիրով. ամբողջապէս կարիցես շահել զսիրտն նորին, եւ այնու առնիցես զնա բոլորովին քո:

Այն հանապազորդական սակաւ ողորմութիւնն՝ զոր տաս. այն ցաւն գլխոյ, եւ ատամանց՝ զոր կրես. այն նախատինքն՝ զոր ընդունիս, 'ի յառնէ, կամ 'ի կնոջէ. այն փոքր համարումն, եւ ծիծաղն՝ զոր այլք առնեն զքէն. այն կորնչումն փոքր իրաց, որք պատահին քեզ. այս է մատանւոյ,

թաշ

թաշկինակի, և այլոց սոյնպիսեաց . այն անկանեղութիւն՝ զոր կրեաց վասն անագան դնալոյդ 'ի ննջել . այն կանխապէս յառնելդ յառաւօտուն՝ առ 'ի հաղորդիլ . այն փոքր ամօթն՝ զոր կրէ ոք առ 'ի առնել հրապարակապէս զոմանս գործս ջերմեռանդութեան : Վերջապէս . այս ամ փոքրագոյն կրմունքս, որք ընկալեալք և ընդգրկեալք լինին սիրով . տան զմեծագոյն հաճութիւն իմն ածային բարութեան . որ վասն միոյ բաժակի ջրոյ, խոստացեալ է հատուցանելոյ իւրոց՝ զմեծագոյն ծով իմն ամից երջանկութեանց : Եւ քանզի յամ կիտոջ պատահին առիթքս այսոքիկ . այնու լինին մեծագոյն միջոցք, առ 'ի ժողովել զբազում հարստութիւնս հոգևորականս :

* Մինչ ընթերցայ ես 'ի վարս սրբոյն կատարինէի սենացւոյ . զայնքան առաւել վերացումն, և յափշտակումն մտաց նորին . զայնքան բանս իմաստութեան . և մանաւանդ զայնքան քարոզս արարեալ 'ի նմանէ : Ոչ երկբայեցայ կէտ մի, թէ նա ոչ իցէր յափշտակեալ զսիրտ երկնաւոր փեսային իւրոյ, 'ի ձեռն աչաց խոկման, և տեսականութեան : Եւ հաւասարապէս մխիթարեցայ ես . մինչ տեսի զնա 'ի յեփարանոցի հօր իւրոյ՝ խոնարհաբար դարձուցանել զշամփուրն խորովածին, վառել զհուր ; պատրաստել զկերակուր, թրել զխմոր, և առնել զհաց, և զայլ ցածագոյն պաշտօնս 'ի տան հօր իւրոյ՝ հոգունակապէս, և լի ածային սիրով : Եւ ոչ պակաս համարիմ զայն խոնարհ մտածումն, զոր նա առնէր 'ի մէջ խոտելի, և սորուկ գործոցն այնոցիկ, քան զվերացումն և զյափշտակումն մտաց ; զոր ունէր նա յաճախապէս . որք շնորհեցան նմա թերևս 'ի հատուցումն խոնարհութեան իւրոյ : Արդ՝ այսպիսի էր մտածումն՝ զոր նա առնէր . զի պատկերակերպէր՝ թէ պատրաստելով զկերակուր հօր իւրոյ, պատրաստէր զայն

Տն իւրոյ՝ ոչ այլ ումն մարթա ։ Ունէր զմայրն իւր 'ի տեղի Տիրուհւոյն մերոյ . և զեղբարս իւր 'ի տեղի առաքելոցն ։ և բորբոքէր զինքն առ 'ի ծառայել հոգւով , բոլոր երկնային քաղաքաց_ւոցն ։ Եւ այսու կերպիւ , պարապիւր մեծագոյն քաղցրութբ հոգւոյ , 'ի յայնս խոտելի և ստորուկ գործառութեան . քանզի գիտէր , թէ այս էր ած_ային կամքն ։ Արդ՝ առ այն ասացի քեզ զայս օրինակս՝ ով խանդակաթդ առաքինութեան . զի գիտիցես դու բարեպէս , թէ ո՛րքան հարկաւոր է ուղղել զամ գործս մեր 'ի ծառայութն ածայնոյ հանդիսաւեհութեն , թէ ստորուկք իցեն , և թէ խոտելիք ։

* Յաղագս որոյ խրատեմ զքեզ՝ որքան և կարեմ , զի հետևիցիս դու այն ծրագրուիս կնոջն , որ դավեցեալ լինի 'ի սաղմոսնէ մեծէ , ըստ որում ասէ . Պնդեալէ հզօրապէս զմէջ իւր . մեծաց զբազուկս իւր 'ի բարձրագոյնս , և 'ի յերս զօրէնս . և այլն ։ Բայց սակայն այսու ամիւ , ոչ դատարկի նաև 'ի մանելոյ զքարմանն . զի ձչեալ իւր ձգէ յօգուտ . և զմատունս իւր անձանձրոյթ պայ 'ի լոյս ։ Այսպէս և դու՝ արկ զձեռն քո 'ի բարձրագոյն և 'ի հզօրագոյն իրս . կրթելով զքեզ 'ի յաղօթս , 'ի մտածմունս , 'ի ընդունումն սրբոց խորհրդոց , առ 'ի առնել զհոգի քո մասնակից ածային սիրոյն , և առ 'ի ընդունել զհասանս ածային ներշնչմանց 'ի սիրտն քո ։ Վերջապ . 'ի առնելն զմեծամեծ , և զհարկաւոր գործս ըստ կացութեն , և ըստ որպիսութեն քոյ . այսու ամիւ , մի՛ դադարեր նաև 'ի մանելոյ զքարմանն ։ Այսինքն . մի՛ թուլացուցաներ զքեզ՝ առ 'ի կրթել 'ի փոքրագոյն , և 'ի խոնարհագոյն առաքինութեան . զի այսոքիկ աճին 'ի յոտս խաչին , ոչ զծաղկունս ։ Ծառայութին աղքատաց . այց առնուլ հիւանդաց . հոգն ընտանեաց . և օգտակար ջանացողութիքն , մի՛ թողցեն զքեզ կէտ մի

դա

դատարկ ։ Այլ խառնեա՛ զոսա ը̅ այնպիսի ջերմեռանդ մտածմանց, զորոց տացի քեզ, թէ առնէր սրբուհին կատարինէ ։

* Հազի՞ւ և սակաւ գտանին մեծամեծ առիթք առ՚ի ծառայել ա̅յ ․ բայց փոքրագոյն առիթքն՝ են հասարակք ։ Արդ՝ որ ՚ի փոքուն հաւատարիմ է ) ( ասէ Տ̅ր̅ն ) և ՚ի բազմին հաւատարիմ է ։ Արա՛ ուրեմն զա̅մ գործս՝ ՚ի յանուննն ա̅յ, և այնու բնաւքն լինին լաւապէս արարեալք ։ Զի եթէ ուտիցես, եթէ ըմպիցես, եթէ ննջիցես, եթէ զբօսնուցուս, և կամ թէ զշամբուրս խորովածոյն դարձուցանիցես ( միայն թէ գիտիցես բարեպէս առնել զգործն քո ․ ) դու բարեպէս զարգանաս և յառաջանաս առաջի աստուծոյ, ՚ի առնելն զամենայն գործս քո ։ քանզի ա̅ծ կամի, զի առնիցես զնոսա ։

## Յաղագս թէ՝ պարտէ ունիլ զարդար, և զբանաւոր հոգի ։

## Գլուխ ․ ԼԶ ։

ՄԵք ոչ այլով պատճառաւ եմք մարդիկք, եթէ ոչ պատճառաւ բանականութե̅ ։ Եւ՞ սակայն է դժուարին էր՝ գտանել ճշմարտապէս զբանաւոր մարդիկք ։ Այնու՝ զի յատուկ սէրն մեր քարշէ զմեզ հասարակապէս յարտաքս ՚ի բանականութէ ․ և ածէ զմեզ անզգուշապէս՝ առ բազում տեսակս փոքեր, բայց որոգայթաւոր անիրաւութե̅, և անօրէնութե̅ ․ որք լիրբ և զաղուէսունս փոքունս ( զորոց խօսի սողոմոն ՚ի յերգս ) ապականեն զայգիս ։ Վա̅ զի այնու, զի են փոքունք, ոչ յոյժ

վշտացուցանեն ։ բայց այնու, զի են բազմաւ
թիւով, ոչ թողուն առանց վնասու ։ Առկայն
այսու՝ զայնս գործս կամիմ ասել ես աստ, որք
ոչ են անօրէնութիւնք, և ոչ ևս գործք անբանա-
կանք ։

* Վ՟ն սակաւ իրաց՝ ամբաստանեմք մեք զընկե-
րէ մերմէ, և յոյժ բարեպէս ջատագովեմք զմեզ ։
Կամիմք մեք վաճառել յոյժ թանկապէս, և գնել
սակաւ գնով ։ Կամիմք, զի առնիցի արդարութի
դէպ առ այլս. և դէպ առ մեզ ողորմութի, և
երեսպաշտութի ։ Կամիմք, զի ա՟մ ոք առնուցու
զխօսքն մեր ՚ի բարի կողմն. բայց մեք կոխոք, և
խիստք եմք առ ՚ի առնել զայն այլոց ։ Կա-
միմք. զի մերձաւորն մեր թողուցու զբարիս իւր
մեզ՝ առ ՚ի հատուցանել զնա նմա. և ոչ այլ ևս
կամիմք տեսանել զայն, որ խնդրիցէ զդրամն մեր
՚ի մէնջ ։ Ոչ կամիմք ունել զայն ոք ՚ի բարի կողմն,
որ ոչ կամի տալ մեզ զփոխ ։ ոչ ունի ևս նա պատ
ճառ կրելոյ զվնաս, եթէ խնդրիցէ ՚ի մէնջ, զի մեք
կամիմք հատուցանել նմա զվնաս ։

* Եթէ ըղձակերտեմք մեք միոյ կրթութեան և
գործոյ, արհամարհեմք և խոտեմք զայլս բնաւս,
որք ոչ են ը՟ն հաճութե մերում ։ Եթէ գտանի
ստորինագոյն ոք քան զմեզ, որ ոչ ունի զբարի
շնորհս առաջի մեր. և կամ թէ՝ եթէ միանգամ
յեցուցաք ՚ի վ՟ր ն՟ր զատամունս մեր. այնուհե-
տև զի՞նչ և առնիցէ, մեկնեմք զայն ՚ի չար կողմն.
և ոչ դադարեմք ՚ի հակառակելոյ ընդ նմա, և
բոլոր օրն կամք ՚ի բամբասել զնա ։ Ե՞ հակա-
դարձապէս. եթէ ոք հաճելի լինի մեզ՝ զգայա-
կան շնորհիւ միով. զոր ինչ և առնիցէ նա՝ մեք
ջատագովեմք և պաշտպանեմք զնա ։ Գտանին
առաքինի որդիք, որոց ծնօղքն ոչ կարեն ( գրե
թէ ) տեսանել զն՟ն, այնու զի ունին զմարմնա-
կան պակասութի ինն ։ Գոն ևս որդիք մոլիք,

և

և ախտաւորք. որք են գովելիք և պատուելիք,
վս̃ մարմնական շնորհաց իմիք, զոր ունին: 'Ի
բնաւ իրս՝ գերազանցեմք և նախադրեմք զփար֊
թամս՝ քան զաղքատս. Թէև ոչ իցեն լաւագոյնք
Թէութ̃. և ոչ ևս այնքան առաքինիք: Նաև
գերազանցեմք մեք զբարեպէս զգեցեալսն: և կա
միմք նոյնպէս խնդրել զփառս և զպատճառս
մեր. և եթէ այլք ևս խնդրիցեն զպատճառս իւ
րեանց՝ ասեմք, թէ են խիստք և կոպիտք: Կա֊
միմք կալ մեք 'ի միում աստիճանի, ամ̃ կերպ խս
տութ̃, և նեղագոյն արդարութ̃. և կամիմք՝
զի այլք իցեն խոնարհք և զիջանողք: Մեք դիւ
րաւ̃ տրտնջամք, և տժգոհիմք զընկերէ մերմէ. և
ոչ կամիմք՝ թէ այլ ոք տրտնջասցէ զմէնջ: Զայն՝
զոր առնեմք մեք այլոց, միշտ թուի մեզ գոլ
շատ. և զայն՝ զոր այլք առնեն մեզ, ոչինչ վար
կեցեալ լինի:

Վերջապէս. մեք նմանիմք կաքաւուց փաւլակո֊
նիայու, որք ունին զերկու սիրտս: Քանզի և
մեք ունիմք զսիրտ իմն քաղցր, համեղ, և կակուղ՝
դէպ 'ի մեզ. և զայլ սիրտ իմն դառն, կարծր, և
կոպիտ՝ դէպ առ ընկերս: Մեք ունիմք զկրկին
կշիռս. զմինն առ 'ի կշռել զանդորրութիւն մեր,
յոյժ առաւել ծանրութ̃՝ որքան և կարեմք. և
զմիւսն՝ առ 'ի կշռել զընկերինն յոյժ թեթևու֊
թ̃, որքան և իցէ կարելի: Ըստ այսմ ասէ սուրբ
գիրն. Շրթամբք նենգաւորօք՝ 'ի սրտէ 'ի սիրտ խօսե֊
ցան. Այսինքն. ունին զերկու սիրտս, և զեր֊
կու կշիռս. զմինն հզօր և զօրեղ՝ առ 'ի առնուլ.
և զմիւսն անզօր և տկար՝ առ 'ի տալ: Որ և յոյժ
գարշելի, և պիղծ է առաջի այ̃՝ այսպիսի կրկին
չափս:

* Ով խանդակաթդ առաքինութն̃. լե՛ր հաւա
սար և արդար 'ի գործս քո, Ե՛ւ միշտ դի՛ր զքեզ
'ի տեղի ընկերի քոյ, և զընկերն 'ի տեղի քո. և

այսպէս առնելով՝ բարեպէս կարես դատել դու: 'Ի գնելն զեր ինչ, պատկերակերպեա զքեզ գոլ այն, որ վաճառէ. և 'ի վաճառելն՝ գոլ այն, որ գնէ. և այսու կերպիւ, արդարապէս վաճառես, և գնես: Համայնք անարդարութիւնք և անիրաւութիւնք այսորիկ, թէպէտ են փոքրագոյնք. զի ոչ պարտաւորեն առ հատուցումն, թէև մնամք 'ի մէջ սահմանի, որ է օգուտ, և շահաւէտութիւն մեր: Բայց ոչ թողուն նաև՝ առանց պարտաւորութեան առ հատուցումն. զի են մեծ պակասութիւնք ընդդէմ բանականութեան, և ընդդէմ սիրոյ: և վերջապէս ոչ են այլ ինչ, եթէ ոչ պատրողութիւնք: Վս՟ զի՝ ոչ ինչ կորուսանի բնաւ, մինչ կենցաղավարի ոք մեծահոգիապէս, ազնուապէս, և քաղաքավարապէս. նաև ճշմարիտ, հաւասար, և

բանաւոր սրտիւ միով:

Յիշեա ուրեմն ո՛վ խանդակաթ առաքինութեան. առ 'ի քննել զսիրտն քո բազմիցս. թէ արդեօք լիցէ նա այնպիսի՝ դէպ 'ի ընկերն քո, որպ և կամէիր դու՝ թէ լիցէր սիրտն ընկերին քոյ դէպ 'ի քեզ, եթէ լիցէր նա 'ի տեղի քո: Տրայիանոս կայսրն՝ խրատեցեալ եղև 'ի հաւատարմաց իւրոց. թէ ըստ կարծեաց իւրեանց, յոյժ առաւել ընտանեկցութիւն առնէր առ ամ ոք՝ կայսերական հանդիսաւորութիւն իւր: Այո՛. այսպէս է ասաց նա. կամիմ լինել ես այնպիսի կայսր դէպ առ մասնաւոր անձինս, որպէս և ցանկայի ես ունել զկայսրն դէպ անձն, եթէ էի մասնաւոր անձն ոք: Արդարութեամբ ասաց նա զայս, զի այս է ճշմրտ կէտն

բանաւորութեան:

## Յաղագս ըղձից :

## Գլուխ . ԼԷ :

ԱՄենայն ոք գիտէ զայս, թէ պիտոյէ զգուշանալ առ՚ի ըղձալ մոլութենական իրաց . վասն զի ըղձակերտենն չարի՝ չարացուցանէ զմեզ : Բայց ես ասեմ քեզ առաւել ինչ՝ ով խանդակաթդ առաքինութե . մի՛ ցանկար այնպիսի իրաց , որք են որոգայթաւորք հոգւոյ քոյ . որպիսիք են կաքաւմունքն , խաղքն , և այլք անցուցմունք ժամանակի : Մի՛ ցանկար եւս պատուոյ , և փառաց . և մի՛ եւս գոլոյ երևելի , և հանդիսաւոր : քանզի յայսպիսի իրս՝ գտանին մեծագոյն որոգայթք , ունայնութիք , և խաբէութիք : Մի՛ ըղձար , և ցանկար իրաց հեռագունից , որք ոչ կարեն հանդիպիլ , եթէ ոչ զկնի երկար ժամանակաց . ո՞չ և առնեն բազում ոմանք , որք այսու կերպիւ թուլացուցանեն և ցնդեն զսիրտս իւրեանց , և դնեն զնա 'ի մեծագոյն որոգայթի անհանդստութե :

* Որդ՝ եթէ մանուկ և երիտասարդ ոք՝ յոյժ ցանկայ ստանալ զպաշտօն ինն , յառաջ քան զհասանելն ժամանակի իւրոյ . ա՞ռ ինչ օգուտ է այսպիսի իղձս և ցանկութիս : Եթէ ամուսնացեալ կին ոք , ցանկայ գոլ կրօնաւորուհի . ա՞ռ ինչ պիտոյէ առաջադրութեն նորին : Եթէ ես ցանկամ գնել զինչս և զստացուածս դրացւոյն իմոյ , զորս ոչ կամի վաճառել նա . ո՞չ ապաքէն կորուսանեմ զժամանակն իմ յայսպիսի ցանկութե : Եւ՞ եթէ գոլով ես հիւանդ՝ ցանկամ առ՚ի քարոզել , կամ զպատարագ մատուցանել , կամ այլոց հիւանդաց այց

այց առնել. և կամ կրթել և վարժել զայնոսիկ, որք են առողջք. ո՞չ առաքէն այսպիսի խղճքս, և ցանկութիւնքս ամենեքին են ընդունայնք: Քանզի ժամանակն այն՝ ոչ է 'ի ներքոյ կարողութեան իմոյ, առ 'ի գործել զայնս : Ուստի և այսպիսի ըղձաձկութիւնքս՝ զբաղեն, և պաշարեն յայնժամ ըզսիրտն իմ, մինչ պիտոյ է ինձ լինել բարեպէս համբերող, բարեպէս յանձնեցեալ առ Ած, բարեպէս մահացուցեալ, բարեպէս հնազանդ, և բարեպէս հանդարտ առ 'ի կրել և տանել զայն՝ զոր կամի Ած, զի յայնժամ կրթիցիմ: Բայց սակայն մեք հասարակապէս ունիմք զխղճս՝ հանգոյն ըզձից յղի կանանց, որք 'ի յաշնան խնդրեն զդեռահաս կեռասս, և 'ի գարնան՝ զթարմագոյն խաղողս :

* Ինձ ոչինչ կերպիւ հաճելի է այս. եթէ անձն ոմն, որ պարտաւորեալ է հաստատապէս՝ պատկանաւոր կոչման և կացութեան իմիք, ցանկանայցէ և ըղձասցի այլոյ կացութեան իմիք, որ ոչ իցէ պատկանաւոր յատկութեան իւրոյ, նաև ոչ իցէ համեմատ ներկայական կացութեան իւրոյ : քանզի այս զբաղեցուցանէ զսիրտն, և տկարացուցանէ զնա 'ի հարկաւոր գործս : Արդ՝ եթէ ես ցանկանայցեմ առանձնականութեան չերթուզիանոսաց ( որք են կարգն լռակեցից ) կորուսանեմ զժամանակն իմ: Եւ այս խղճս՝ պաշարէ զտեղին այնպիսւոյ ըղձի, 'ի յոր պարտիմ ես զբաղիլ բարեպէս՝ 'ի ներկայական պաշտօնի իմում: Ոչ կամիմ ես՝ թէ ցանկանայցէ ոք առ 'ի ունիլ զլաւագոյն միտս, և զլաւագոյն ենթադատմունս : Քանզի այսպիսի ցանկութիւնքս են ունայնք, և կալնուն զայն տեղին. որով Ած ոք պարտի ունիլ զհոգ՝ առ 'ի բարեպէս 'ի գործ ածել զպաշտօնն իւր, առ որ պարաւանդեալ է : Ոչ կամիմ նաև, զի ցանկանայցէ ոք այնպիսի ծառայութեան Այ՝ զոր ոչ ունի. այլ հաւատարմաբար

'ի կի_

'ի կիրարկցէ զայն, զոր ունի։ Արդ այս իմանալի է յաղագս այնց ըղձից և ցանկութեց, որք զբաղեցուցանեն զսիրտն։ քանզի որքան առ պարզ կամեցումն՝ ոչ տան զվնաս իմն, եթէ ոչ իցեն յաճախակի, և բազմիցս։

* Մի՛ ըղձար և ցանկար խաչի (մտ̃ նեղութե̃) եթէ ոչ ըս̃ չափու քոյ, որով պարտիս կրել և տանիլ զայնս, որք ներկայացուցանին քեզ։ Քանզի անդէպութի̃ իմն է ցանկալ մարտիրոսութե̃, և ոչ ունիլ զսիրտ՝ առ 'ի կրել և տանիլ գոնեայ զփոքր իմն անիրաւութի̃։ Թշնամին՝ բազմիցս յղացուցանէ 'ի մեզ՝ զմեծամեծ իղձս, և ցանկութիւնս բացակայ առարկայից, որք ոչ պատահին երբէք. առ 'ի դարձուցանել զմիտս, և զկամս մեր 'ի ներկայ առարկայից. 'ի ձեռն որոց՝ թէև որքան փոքրագոյնք իցեն, կարէաք առնել զմեծ յառաջադիմութիւնս։ Մեք պատերազմիմք երևակայութբ̃՝ ընդդէմ գազանացն ափրիկէի, և թողումք զմեզ սպանանիլ ներգործութբ̃ 'ի փոքրագոյն օձից, որք են 'ի ճանապարհի մերում. և այս վ̃ պակասութե̃ դիտման մերոյ։

* Մի՛ ըղձար և ցանկար փորձութեց. զի այս է յանդգնութի̃ իմն։ բայց պատրաստեա՛ զսիրտն քո՝ առ 'ի սպասել նմա քաջապէս, և առ 'ի պաշտպանել զքեզ՝ մինչ գայցեն։ Զանազանութիւնն կերակրոց, (մանաւանդ եթէ իցէ մեծ քանակութբ̃) միշտ ծանրացուցանէ զստամոքսն. բայց եթէ իցէ տկար, աւերէ զնա։ Մի՛ լցուցաներ ըզհոգի քո բազում ըղձիւք, և ցանկութբ̃ք աշխարհայնովք. զի այսոքիկ բոլորովին ապականեն ըզնա. և մի՛ ևս պէսպէս հոգևոր ցանկութբ̃, զի ծանրացուցանեն և շփոթեն զքեզ։ Յորժամ հոգին մեր մաքրեալ, և թեթևացեալ է 'ի չար ախտից, յայնժամ ունի զմեծ իմն ախորժակ հոգևոր իրաց։ Եւ երբ բոլորովին բորբոքեալ՝ պատրաստի

տի ցանկալ պէսպէս կրթութեանց, և բարեպաշտական գործոց. ը̃ մահացուցման ախտից. պաշխարութե. խոնարհութե. սիրոյ. և աղօթից: Ո՛վ խանդակաթ. տուաքինութե. այս է բարի նշան, ունիլ զայնպիսի ախորժակս: Բայց զգուշանալ պիտոյ է, զի կարիցես մարսել զայն ո̃մ, զոր կամիս ուտել դու:

Ընտրեա՛ ուրեմն ը̃ խրատու հոգևոր հօրն քոյ, 'ի մէջ այնքան ըղձից՝ զայնս, որք կարեն 'ի գործածիլ, և կատարիլ իսկոյն. և այսոքիւք բարեպէս վարի՛ր: Ջի զայնս արարեալ, առաքէ քեզ ա̃ծ նաև զայլս, զորս հասարակա̃ց գործածիցես 'ի ժամանակի իւրում: և այսպէս առնելով՝ ոչ կորուսանես զժամանակն քո յանօգուտ իղձս: Արդեա ոչ ասեմ քեզ, թէ պիտոյ է կորուսանել զսեսակ իմն բարւոյ ըղձի. այլ ասեմ, թէ պիտոյ է յառաջածել զնո̃ կարգաւ: Եւ՛ այնք ըղձակատութիք, որք ոչ կարեն ներգործութե̃ 'ի գործարկանիլ ըստ ներկայ ժամանակի. պիտոյ է պահել զնո̃ 'ի յանկեան իմիք սրտի, մինչև գայցէ ժամանակն նորին: Բայց 'ի ներկայ ժամանակի քոյ՝ մինչ կարես, դի՛ր զայնս ըղձակերտութիս 'ի ներգործութե, որք են հասունակք, և կայունք: Ջայս ոչ միայն վ̃ հոգևորացն ասեմ, այլ նաև վասն աշխարհական իրաց. թարց որոց՝ մեք ոչ կարեմք կեալ, եթէ ոչ անհանգստութե̃, և մեծագոյն նեղութեամբ:

## Աստուածաբանութիւնք և խորհուրդք՝ վասն ամենասրբութեան անձանց։

### Գլուխ. ԼԲ։

ՈՍակն է՝ խորհուրդ էՆ ՔԾ. բայց ես ասեմ 'ի ՔՍ, և յեկեղեցի, ասէր առաքեալն։ Սա է պատուականն յամից. 'ի յամս. և վն ամից. զի վն ամից մասանց իւրոց։ Յամից. զի նաև կուսանքն պարտին պատուել զսա խոնարհութբ։ 'Ի յամս, զի հաւասարապէս սրբ է՝ 'ի մէջ աղքատաց, և հարստաց։ Վն ամից. զի սկիզբն, և վախճանն իւր. նաև օգտակարութիւն, ձևն, և նիւթքն իւր՝ են սրբք։ Այս է սերմնարան քրիստոնէականութեան, որ լցուցանէ զերկիրն հաւատացելովք, առ 'ի լրացուցանել զթիւն ընտրելոց 'ի յերկինս։ Որոյ վն մեծապէս հարկաւոր է հասարակութեան՝ բարի կենցաղավարութիւն պսակին. զի այս է արմատն և սկիզբն ամից ճիւղոց։

* Նորանի՛ թէ, որդին այ կոչեցեալ լինէր առ ամ հարսանիսս, այլ և կոչեցաւ 'ի հարսանիսն կանայ գալիլէացւոց. քզի գինին մխիթարութն, և օրհնութն՝ ոչ պակասիւր երբէք անտի։ Բայց հասարակապէս՝ ոչ է անդ, եթէ ոչ սակաւ ինչ ժամանակ՝ 'ի սկզբանն։ Եւ այս վն այն. զի փոխանակ Տն մերոյ՝ հրաւիրի անդ արամասդ. և փոխանակ Տիրուհւոյն մերոյ՝ անահիտ։ Որ կամի ունիլ զգեղեցիկ, և զխայտաբղէտ զաւակս. հանգոյն յակոբայ, պարտի դնել (այլ և արար նա) առաջի աչաց ոչխարաց 'ի ժամ յղացմանն, զգեղեցիկ գաւազանն խայտախարիւ. այ ունօղ զանազան գունոյ։ Եւ որ կամի ունիլ զերջանիկ ելս 'ի յա

մուս

մուսնական պսակի • պարտի ցուցանել 'ի հարսանիան իւր , զսրբութիւն և զարժանապատուութիւն խորհրդոյս այսորիկ ։ Բայց փոխանակ այսորիկ՝ գտանին անդ հազար կերպ անկարգութիւնք , անպատշաճ խեղկատակութիւնք , ցոփական խաղացմունք , և անվայելուչ առասպելաբանութիւնք ։ Ուստի ոչ է զարմանք ինչ , եթէ ներգործութիւնքն նորին՝ լինիցին յետոյ անկարգք ։

'Ի վեր քան զամ , յորդորեմ զամուսնացեալ անձինս՝ առ փոխաբերական սէրն , զոր բազմիցս պատուիրէ նոյն հոգին սբ 'ի գիրս ։ Ով ամուսնացեալք • այս է ոչինչ իմն՝ ասել ձեզ , թէ սիրեցէք զմիմեանս բնական սիրով • քանզի տատրակքն , որք ընկերակցեալք են միմեանց՝ զայս առնեն ։ Նաև ունայն իմն է ասել, թէ սիրեցէք զմիմեանս մարդկային սիրով • վն զի հեթանոսք ևս 'ի գործածեն զայսպիսի սէրս ։ Այլ ասեմ ձեզ՝ ըս առաքելոյն ։ Արք՝ սիրեցէք զկանայս ձեր , ոպ և Քս սիրեաց զեկեղեցի ։ Եւ դուք ևս ով կանայք՝ սիրեցէք զարս ձեր , ոպ և եկեղեցի սիրեաց զփրկիչն իւր ։ Արդ ած էր՝ որ էած զևա առ նախահայրն մեր , և ետ զնա նմա 'ի կին ։ Այսպէս ևս՝ նոյն ածն է , որ աներևոյթ ձեռամբ իւրով արար զկերպն սբ կապակցութեան պսակի, և ամուսնութեան ձերոյ , և զձեզ ետ միմեանց ։ Ընդ է՞ր ուրեմն ոչ սիրէք դուք զմիմեանս , ըս ամի սբ՝ և ածային սիրով ։

* Արդ առաջին ներգործութիւն այսորիկ սիրոյ՝ է անլուծանելի միաւորութիւն սրտի ձերոյ ։ Եթէ երկու կտոր նուրբ հրահալելիք՝ միաւորիցին լեհմով 'ի միասին • այնպէս պնդագոյն լինի միաւորութիւն նոցին , մինչ զի կարեն մանաւանդ բեկանիլ յայլ ամ տեղեաց , քան յայնմանէ՝ ուր միաւորեալք են ։ Բայց ած միաւորեաց զայրն , և զկինն 'ի միասին՝ յատուկ արեամբն ։ որոյ վն միաւորութիւն նոցին՝ այն քան պնդագոյն է • մինչ զի

մա_

մանաւանդ պարտի բաժանիլ հոգիք նոցին 'ի մարմնոց իւրեանց, քան թէ բաժանիցի 'ի միմեանց: Արդ՝ այսպիսի միաւորութիւն ոչ իմանի նախապետաբար վն մարմնոյ, այլ մանաւանդ վն սրտի, ըղձի, և սիրոյ:

* Նորին ներգործութիւն այսորիկ սիրոյ, է անլուծանելի և անաղարտելի հաւատարմութիւնն՝ միոյ առ միւսն: Յառաջին ժամանակս՝ կնիքքն քանդակեալք լինէին 'ի մատանւոջ, և կրեալք լինէին 'ի մատն, ոպ վկայէ ս. գիրն: Այսպէս լինի ես 'ի յարարողական խորհուրդս հարսանեաց: զի եկեղեցին՝ միջնորդութբ քահանային օրհնէ զմատանի իւր, և տայ զնա առ այրն: Որով վկայէ՝ թէ նա կնքէ զսիրտն նորին այսու խորհրդով, զի ոչ երբէք կարիցէ մտանել անդ՝ անուն, և սէր այլոյ կնոջ. մինչ կենդանի է այն, որ տուաւ ինքեան 'ի կնութի: Եւ յետոյ՝ փեսայն դնէ զմատանին 'ի մատն հարսին. զի և հարսն գիտիցէ փոխադարձաբար, թէ ոչ երբէք պարտի ունիլ 'ի սիրտն իւր զիղձ իւր՝ դէպ առ այլ ոմն մարդ, մինչ նոյնն կենդանի է 'ի վր երկրի, զոր Տրն մեր դայ անդ՝ առ 'ի տալ նմա զայն:

* Նորին պտուղն պսակին է, յառաջածել և օրինապէս անուցանել զորդիս: Արդ՝ այս մեծագոյն պատիւ իւր է ձեզ՝ ո՛վ ամուսնացեալ անձինք. զի կամելով ած բազմացուցանել զհոգիս, որք կարիցեն օրհնել զնա 'ի յա͞մ յաւիտեանս, Այնու գործակից լինի ձեզ՝ առ այնպիսի արժանաւոր գործառութե իւրք, առ 'ի յառաջածել զմարմինս. 'ի յորս հեղու որպէս զերկնային ցօղ զհոգիս՝ ստեղծանելով զնս: Քզի ստեղծանէ և հեղու 'ի մարմինս:

* Պահեցէք ուրեմն՝ ո՛վ արք դուք, զսէր իւր կակուղ, մշտնջենաւոր, և սրտական, դէպ 'ի կանայս ձեր: Քանզի առ այս կինն քարշեցաւ 'ի կողէ

նախ_

նախկին մարդոյն, որ է մերձ սրտին. զի սիրիցի 'ի նմանէ սրտիւ, և կակղութեամբ: Ուստի տկարութիւքն, և նուաղութիւքն կանանց ձերոց, թէ իցեն ըստ մարմնոյ, և թէ ըստ մտաց. ոչ պարտին շարժել զձեզ առ տեսակ ինչ բարկութեան. այլ մանաւանդ առ գթութիւն, և առ սիրալիրական ցաւակցութիւն ինչ: Որովհետև՝ Տէր այնպէս ստեղծեաց զնոսա, զի կախելով նոքա 'ի ձէնջ. այնու ընդունիցիք դուք զմեծագոյն պատիւ, և զյարգութիւն 'ի նոցանէ: և այսու ամիւ. ունելով զնոսա 'ի յընկերութեան, դուք լինիցիք գլուխք, և մեծաւորք նոցին:

Եւ դուք ես ո՛վ կանայք. սիրեցէք զարս ձեր, զոր Տէր ետ ձեզ, այնպիսի սիրով՝ որ իցէ կակուղ, սրտիւ, պատկառանօք, և պատուով: Քանզի ճշմարտապէս, ա՛ռ այն ստեղծ Տէր զնոսա յայնպիսի զօրաւոր, և իշխօղ կացութեան. և ա՛ռ այն կամեցաւ թէ կինն իցէր կախումն ինչ 'ի մարդոյ. ոսկր յոսկերաց նորին, մարմին 'ի մարմնոյ նորին. յառաջացեալ 'ի կողից նորին՝ որ է 'ի ներքոյ բազկի: Զի այնոքիւք ցուցանիցէր գոլ զնա 'ի ներքոյ ձեռաց, և 'ի ներքոյ կառավարութեան առն: ուստի և բոլոր սուրբ գիրն պատուիրէ ձեզ խստապէս, զայս ենթարկութիւն, և հնազանդութիւն: Բայց սակայն՝ նոյն սուրբ գիրն առնէ ձեզ զնոյն ենթարկութիւն՝ լինել քաղցր: Քանզի ոչ կամի թէ միայն դուք ենթարկիցիք սիրով. այլ նաև պատուիրէ արանց ձերոց, զի մեծաւ սիրով, գթութեամբ, և քաղցրութեամբ կառավարիցեն զձեզ: Արք իմաստութեամբ բնակեսցին ընդ կանայս. (ասէ սուրբ առաքեալն պետրոս)

Իբրև տկար անօթոյ տանիցեն պատիւ կանանց:

* Բայց մինչ յորդորեմ ես զձեզ՝ առաւել և առաւել մեծացուցանել զսէրն, զոր դուք ունիլ պարտիք առ միմեանս. զգո՛յշ լերուք, զի մի՛ դուցէ սէրն այն դարձցի տեսակ ինչ նախանձաւորութեան: Քանզի որպէս բազմիցս պատահի. զի որդն

ծնա

ծնանի 'ի յառաւել փափուկ, և յաւ՟ել հաստունակ խնձորոջ : այսպ՟ և նախանձաւորութիւն ծնանի 'ի յառաւել բորբոքեալ, և սաստիկ սիրոյ ամուսնացելոց, որ աւերէ և ապականէ զգոյացութիւն սիրոյ : վ՟ն զի սակաւ առ սակաւ ծնանի զկռիւ՛, զտարաձայնութի, և զանջատումն : Արդարև՝ ոչ երբէք գտանի անդ նախանձաւորութի, ուր բարեկամութիւն փոխաբերապէս հիմնեցեալ է 'ի վ՟ր ճշմարիտ առաքինութե : Եւ՞ վ՟նկ՝ նախանձաւորութիւն, կերպիւ՞ իմն հաւաստի նշան է զգայական և խոշոր սիրոյ : և առ այնպիսի տեղւոջ զետեղի նա, ուր պատահեալ է անկատար, անհաստատ, և անհաւատարիմ առաքինութե միոյ : Ուրեմն այս է յիմար մնապարծումն իմն, կամիլ բարձրացուցանել զնա նախանձաւորութե : քանզի նախանձաւորութիւն է ճշմարիտ նշան մեծութե, և խոշորութե բարեկամութե. բայց ոչ երբէք բարութե, և մաքրութե, և կատարելութե նորին : Վ՟ն զի կատարելութիւն բարեկամութե՝ ենթադրէ զհաւաստութի առաքինութե 'ի սիրեցեալն, և նախանձաւորութիւն ենթադրէ զանհաւաստութիւն :

* Արդ եթէ կամիք դուք ո՛վ ամուսնացեալ արք, զի կանայք ձեր հաւատարիմք լիցին ձեզ. լե՛րուք ուսուցիչ նց՟ բարի օրինակօք ձերովք : Ո՛րովհետև նոք (ասէ ս՟բն գրիգոր նիւս՟) կամիք խնդրել դուք պարկեշտութի 'ի կանանց ձերոց, եթէ չենցաղավարիք յանպարկեշտութե : և ո՛րպէս խնդրէք 'ի նոցանէ զայն, զոր դուք ոչ տայք նց : Կամիք դուք, զի կանայք ձեր լինիցին ողջախոհք. կենցաղավարեցէ՛ք ընդ նմ՟ ողջախոհապէս : Որպէս և ասէ ս՟բն պօղոս. գիտել իւրաքանչիւր ումեք 'ի ձէնջ՝ զիւր անօթ ստանալ սրբութե և պատուով : Բայց եթէ դուք ինքնին հակադարձապէս՝ ուսուցանէք նոցա զանպարկեշտական գործս : ուրեմն ոչ է զարմանք,

թէ յետոյ ընդունիցիք զանպատուութիւն կորստեամբ նոցին ։ Նաև դուք ո՛վ կանայք ․ զպատիւն և զփառքն՝ որ անբաժանելորէն միաւորեալ է ընդ պարկեշտութե, պահեցէ՛ք նախանձաւորապէս, և մի՛ թոյլատրէք երբէք, զի տեսակ իմն անպարկեշտութեան թխացուսցէ զպայծառութիւն անուան, և համբաւոյն ձերոյ։

* Պարտիս երկնչիլ յոյժ կերպ շօշափմանց, թէև ո՛րքան փոքրագոյնք իցեն․ և ոչ թոյլատրել երբէք՝ լինիլ թեթևութե իմիք շուրջ զքև։ Ո՛ք և իցէ, մինչ գայ առ ՚ի գովել զգեղեցկութիւն, և զշնորհն քո, պարտիս դու ՚ի կարծիս և յերկբայութե լինիլ։ Զի իւրաքանչիւրոք, որ գովէ զվաճառ իմն՝ զոր գնել ոչ կարէ զայն, հաստարակապէս փորձառեցեալ է այս, զի կամի գողանալ զնա։ Բայց եթէ ՚ի գովելն ոք զքեզ՝ առակցիցէ նաև զարհամարհումն առն քոյ․ այնու վնասել կամի քեզ անհնարապէս։ Վն զի է յայտնագոյն իր․ թէ ոչ միայն կամի կործանել զքեզ, այլ և արդէն ունի կորուսեալ զքեզ ընդ կէան։ Քանզի յորժամ անհաճոյ լինի ումեք առաջին վաճառականն․ յայն ժամ դրեթէ զկէան վաճառելոյն սակարկեալ է ընդ երկրորդին։

Ազնուագոյն կանայքն՝ որքան յառաջ, այնք առ այժմս, սովորք են կախել զշարանս բազում մարգարտաց ՚ի յականջս իւրեանց․ քանզի հեշտանան ՚ի հնչմանէ մարգարտաց, մինչ բաղխին առ միմեանս, ոպ՛ ասէ փլինոս։ Բայց որքան առիս՝ զայս գետեմ հաւաստեաւ․ թէ մեծագոյն բարեկամն այ իսահակ, առաքեաց իբր նախկին առհաւաչեայ սիրոյ իւրոյ՝ զգինտս ականջաց, առ պարկեշտուհին ռեբեկայ։ Վն զի հաւատամ․ թէ այս խորհրդաւոր զարդս, նշանակէ զառաջին օժիտն, զոր պարտի այրն ունիլ ՚ի կողմանէ իւրմէ ՚ի վերայ կնոջն։ Եւ կինն ևս պարտի այնպէս հաւատարմաբար զգու_

շանալ, և պահել զնա 'ի յականջս իւր, մինչ զի ոչինչ լեզու, և ոչինչ շշունչ և աղմուկ կարիցէ մտանել անդ. եթէ ոչ քաղցր, և հեշտալի հնչումն՝ ողջախոհ և պարկեշտ խօսակցութեանց. որք են իբր արևելեան մարգարիտք ը̄ աւետարանին: Վ̄ զի միշտ պիտոյ է զգուշանալ. ք̄զի հոգին թունաւորի ականջօք, ոպ̄ և մարմինն բերանով:

* Սէրն՝ և հաւատարմութիւն զուգակցեալ 'ի միասին, միշտ ծնանին զմտանեկցութի̄, և զհամարձակութի̄: Յաղագս որոյ՝ սէրքն, և սիրուհիքն, յոյժ խանդաղատք էին փոխաբերապէս 'ի յամուսնական պսակի իւրեանց: Թէպէտ խանդաղատմունք նոցին ճշմարտապէս էր սիրայնական. բայց նաև էր ողջախոհ, փափուկ, և պարզ: Այսպէս՝ իսահակ, և ռեբեկա, որք էին նպատակք ողջախոհութե̄ ամուսնացելոցն հնոյ ժամանակի. այնպիսի կերպիւ խանդաղատիլ տեսանեցան 'ի պատուհանէ, մինչ զի ոչ եղև անդ անպարկեշտութիւն իմն: Ուստի և աբիմելէք յոյժ բարեպէս ճանաչեաց. թէ նոքա ոչ կարէին լինիլ այլ ոք, եթէ ոչ այր, և կին՝ կողակիցք միմեանց:

Սբ̄ լուդովիկոս թագաւորն, որ հաւասարապէս էր խիստ դէպ առ մարմինն իւր, և կակուղ դէպ առ սէրն կողակցին իւրոյ. յանդիմանեցեալ եղև յոմանց, վասն արձակ գոլոյն 'ի յայնպիսի խանդաղատեցման: Բայց նա այսու իրաւի արժանաւորիւր գովութե̄. քանզի դիտէր ցածուցանել զարական և զօրաւոր միտն իւր, առ այս փոքր գործս, որ է հարկաւոր վ̄ պահպանութե̄ կողակցական սիրոյ: Վ̄ զի թէպէտ այսպիսի փոքրագոյն ցուցմունքս՝ մաքուր և համարձակ բարեկամութե̄, ոչ կապեն զսիրտս նոցին: սակայն 'ի ձեռն այնոցիկ հպին առ միմեանս, և ծառայեն իրերաց համահաճութեամբ՝ 'ի փոխաբե-

քակման կենցաղավարութիւնս:

* Սորուհին մօնիքա . յղանալով զսէրն օգոստի-
նոս, ընծայեաց զնա պէսպէս մատուցմամբ՝ քրիս-
տոնէականի կրօնին, և ծառայութեան փառացն
այ . որպ նոյն ինքն վկայէ՝ ասելով . Թէ արդէն
վաղուրէն ճաշակեալ էր նա զաղն ածայնն՝ 'ի յորովայն
մօր իւրոյ: Այս է մեծ վարդապետութի, և օրի-
նակ քրիստոնեայ կանանց, առ'ի մատուցանել
ածայնոյ հանդիսավէհութեն զպտուղն որովայնի
իւրեանց, նախ ք զելանելն 'ի լոյս: Քանզի ած,
որ ընդունի զընծայն խոնարհ և կամաւոր սրտի
միոյ . աճեցուցանէ զնա 'ի ժամանակի իւրում,
ըստ հասարակ բարի ըղձից մօրն: Յայտնի վկայք
են առ այս, սբ Թօմաս ադուինացին . սբն Ան
դրէաս փիլզօլացին . և այլք բազումք: Մայրն
սբյն բեռնարտոսի, որ էր արժանի մայր այնպի
սի որդւոյ . առնոյր զերախայսն իւր 'ի բազուկս
իւր՝ իսկոյն 'ի ծնանիլն . և մատուցանէր Յն Քի:
ուստի յայնմհետէ սիրէր զնա մեծաւ պատուով,
որպ զիր իմն սրբացեալ, և իբրև զիր իմն յանձնեցեալ
յայ առ ինքն: Որոյ վս պատահեցաւ նմա այս
երջանկութիւն, զի և եօթանեքին որդիքն նորին
սրբացուցեալք եղեն:

Արդ երեխայքն գոլով եկեալ 'ի յաշխարհ, մինչ
սկսանին վարիլ բանականութբ, պարտին ծնողքն
նոցին զմեծագոյն հոգ ունիլ առ'ի տպաւորել 'ի
սիրտս նոցին՝ զսբ երկիւղն այ: Պիանքա կոչեցեալ
բարի թագուհին, ջերմեռանդապէս արար զայս
գործս դէպ առ որդին իւր՝ սբ Թագաւորն լուդո
վիկոս: Վս զի սովոր էր նա ասել. Ես առաւել
հաճիմ մեռեալ տեսանել առաջի աչաց իմոց զորդին իմ,
քան տեսանել զնա գործել զմի միայն մահացու մեղս: Որև
յետոյ այնպ տպաւորեալ մնաց սոյնս 'ի սրտի որդ
ւոյ նորին . մինչ զի ( որպ պատմէ ինքն զինքենէ )
թէ ոչ եղև երբեք օր մի 'ի կեանս իւր, յորում
ոչ

ոչ յիշիցէր նա զայս ա̃ծային վարդապետութիւս, ջանալով ես կատարել զնոյնն գործով, որքան իցէր կարելի ինքեան : Հաւաստի է այս, զի սերունդքն, և ծնունդքն՝ 'ի մեր լեզուոջ յորջորջեալք լինին տունք : Նաև ինքեանք եբրայեցիք՝ զըծնունդս որդւոց, կոչէին շինուածս տանց : և այսու իմացմամբ ասացեալ եղև. Եւ Տանխաբարձին արարին իւրեանց տունս : Արդ այս է՝ առ 'ի ցուցանել, թէ ոչ է շինելի զևաւագոյն տուն իմն, առ'ի լցուցանել զնա ժամանակաւոր բարեօք, այլ առ 'ի բարեպէս սնուցանել զորդիս՝ յերկիւղն ա̃յ, և յառաքինութիս : Առ որս ոչ պարտէ ես խնայել զտեսակ իմն աշխատութե̃, և անձկութե̃. որովհետև որդիքն են պսակք ծնողաց իւրեանց : Այսպէս ես սրբուհին մօնիքա. այնքան ջերմապէս և արիաբար աշխատեցաւ վս̃ չար հակեցման, և յօժարութե̃ արբ̃յն օգոստինոսի որդւոյ իւրոյ. մինչ զի հետևեցաւ նմա ընդ ծով, և ընդ ցամաք : Ուստի առաւել երջանկապէս արար զնա որդի արտասուաց իւրոյ՝ դարձմամբ հոգւոյ նորին, քան որդի արեան իւրոյ՝ ծննդեամբ մարմնոյ նորին :

* Մէ̃ առաքեալն պօղոս. թողու 'ի բաժին կանանց՝ զհոգածութիւն ընտանեաց : Որոյ վս̃՝ բազումք ունին զայս ճշմարիտ կարծիքս, թէ ջերմեռանդութիւն և բարեպաշտութիւն նոցին, առաւել պտղաբեր է ընտանեաց, քան զբարեպաշտութիւս արանց : Որք վս̃ ոչ ունելոյ զմշտական յարամնացութիւն 'ի մէջ ընտանեաց, ոչ կարեն ես այնպէս դիւրաբար կրթել զնս̃ 'ի յառաքինութիւս, որպ̃ առնեն կանայքն : Ուստի այսու նկատմամբ, սողոմոն 'ի յառակս իւր՝ վերաբերէ զբոլոր երջանկութիւն ընտանեաց, առ հոգւոյնակութիւն, և առ հանճարեղութիւն՝ այն ժրագլուխ կնոջն, զորմէ գրէ նա. առակ. 31:

* Ասի 'ի ծննդոց . թէ իսահակ տեսանելով զռե_
բեկա կինն իւր ամուլ, աղաչեաց զՏր̃ վս̃ նորա :
և կամ ըստ եբրայեցւոց . աղաչեաց զՏր̃ հան_
դէպ նր̃ : Քանզի իսահակ աղօթէր 'ի միում ան_
կեան աղօթարանին, և ռեբեկայ աղօթէր 'ի մի_
սում անկեան : ուստի այսու կերպիւ արարեալ
աղօթք առն, լսելի եղև : Առաւել մեծ, և ա_
ռաւել պտղաւէտ միաւորութի 'ի մէջ առն, և կնոջ՝
այն է, որ լինի 'ի սր̃ ջերմեռանդութեան, առ
որ պարտին ածիլ հայելով 'ի միմեանս : Արդ են
պտուղք ոմանք, ոպ̃ են սերկևիլքն, որք վս̃
խստութե̃ դիմութե̃ իւրեանց, ոչ են այնքան բա
րիք, եթէ ոչ համեմիցին շաքարով : Են նաև
պտուղք ոմանք, որք վս̃ կակղութե̃ և փափկու
թե̃ իւրեանց՝ ոչ կարեն մնալ, եթէ ոչ համեմի
ցին նմանապէս . ոպ̃ են կեռասքն, և ծիրանքն :
Այսպէս ևս հոգալ պարտին կանայք, զի այր
իւրեանց լիցեն համեմեալք շաքարով ջերմեռան_
դութե̃ : վս̃ զի մդ̃ առանց ջերմեռանդութե̃՝ է
խիստ, կարծր, և դժնդակ կենդանի : Եւ արքն ևս
պարտին ջանալ և հոգալ, զի կանայքն իւրեանց
լինիցին ջերմեռանդք : վասն զի անջերմեռանդ
կինն, է առաւելապէս տկար առարկայ՝ առ 'ի
անկանիլ, և կորուսանել զպայծառութիւն առա_
քինութե̃ : Սբ̃ն պօղոս ասէ . Սուրբ է այրն ան_
հաւատ կնաւն . և սբ̃ է կինն անհաւատ արամբն : Եւ
այս վս̃ այնորիկ . զի 'ի ձեռն անձկագոյն կապա_
նաց պսակին, դիւրապէս կարէ մինն քարշել ըզ
միւսն առ առաքինութի : Արդ ո՞րպիսի օրհնու_
թիւն է այս . որով հաւատացեալ այրն, և կամ
կինն, սրբացուցանեն զմիմեանս երկիւղն այ̃ :
* Վերջապէս . փոխաբերական համբերութիւնն
առն՝, և կնոջն . այնքան մեծ պարտի գոլ, մինչ
զի ոչ երբէք բարկանայցեն երկաքանչիւրքն մի_
մեանց . նաև ոչ տեսանիցի բնաւ 'ի մէջ նց̃ տա_
րա_

րաձայնութիւն, և կռիւ։ Մեղուքն ոչ կարեն կեալ յայնպիսի տեղւոջ, ուր լինին արձագանգք, հնչմունք, և վերակրկնեցմունք ձայնից։ Այսպէս և Հոգին սբ՝ ոչ կարէ կալ 'ի տան միում, ուր լինին կռիւք, և վերակրկնեցմունք աղաղակաց, և խռովութեանց։

* Սբն գրիգոր նիւսացին վկայէ. թէ 'ի ժամանակի իւրում եղեալ ամուսնացեալքն, զտօն մեծ առնէին, 'ի յաւուր տարելցի հարսանեաց իւրեանց։ Արդարև յայնժամ հաւանէի ես այսպիսի սովորութեն՝ լինիլ նաև այժմ, եթէ ոչ իցէ այն աշխարհային և զգայական հանդիսիւ։ Այլ իցէր հոգևոր. ո՟պ այնպէս՝ եթէ արք, և կանայք խոստովանիցէին և հաղորդիցէին, 'ի տարելից օրն պսակի իւրեանց։ Եւ առաւել հաստատապէս յանձիցէին առ ա՟ծ՝ զյառաջադիմեցումն ամուսնական պսակի իւրեանց. նորոգելով զբարի յառաջադրութիս, առ 'ի սրբացուցանել զնա յա՟մ աւուր, փոխաբերական բարեկամութ՟բ, և հաստատութ՟բ միով։ Զի այսպէս առնելով, ընդունէին զզօրութին յո՟յ, առ 'ի դիւրապէս տանիլ զբեռն կացութեան իւրեանց։

## Յաղագս համեստութե՟ ամուսնական անկողնոյ։

### Գլուխ. ԼԹ.

Ամուսնական անկողինն պարտի գոլ անարատ և ամբիծ. (ո՟պ և կոչէ զնա առաքեալն) ո՟պ՝ հեռի յանպարկեշտութենէ, և յայլոց գարշելի աղտից։ Այսպէս կացուցեալ եղև սբ պսակն նախապէս 'ի յերկրաւոր դրախտին, ուր ոչ երբէք եղև յայն

ժամ անկարգութեան իմն ցանկութեան, և անհամեստութեան, Արդ գտանի նմանութիւն ինչ 'ի մէջ ամօթալի հեշտութեան, և 'ի մէջ ուտելոյն: քանզի երկոքեանքն ևս հային առ մարմինն. թէև առաջինն կոչի պարզապէս մարմնական, պատճառաւ զգայական հեշտութեան: Ուրեմն մեկնեցից ես զմինն, և զմիւսն, 'ի ձեռն այնպիսի յատկութեանց, որք պատկանին միոյն, և միւսոյ:

* 1. Ուտելն սահմանեալ է վասն պահպանութեան անձին: ուստի որպէս ուտելն պարզապէս առ 'ի սնուցանել, և պահպանել զանձն՝ է բարի, այլ, և հրամայեցեալ: Այսպէս և այն, որ պահանջի 'ի յամուսնութեան վասն յառաջածման զաւակաց, և վասն բազմացուցման անձանց, է բարի, և սրբագոյն իր: քանզի այս է նախապետական վախճանն հարսանեաց:

* 2. Ուտել՝ ոչ միայն առ 'ի պահպանել զկեանքն, այլ նաև առ 'ի պահպանել զփոխաբերական կենցաղավարութիւն, և ընկերակցութիւն, զոր պարտիմք ունիլ առ միմեանս՝ է յոյժ արդար, և համեստ իր: Այսպէս և՝ փոխաբերական, և օրինաւոր հատուցումն, որ լինի 'ի յամուսնութեան, 'ի սրբոյն Պօղոսէ կոչեցեալ է պարտք: Ե՞ւ այնքան մեծ պարտք. մինչ զի ոչ կամի նա, թէ մինն յամուսնացելոց կարիցէ բացակայիլ, թարց ազատ և կամաւոր հաւանութեան միւսոյն: և այս ոչ ևս դիտմամբ ջերմեռանդական կրթութեան: Քանզի այս էր՝ որ շարժեաց զիս 'ի յասել զայն, զոր գրեցի 'ի վեր անդր շուրջ զայսու նիւթով, 'ի գլուխն սրբազան հաղորդութեան: Ապա ուրեմն տես թէ. ո՛րքան առաւել ոչ կարէ բացակայիլ մինն 'ի նոցանէ, պատճառաւ եզական և առանձնական առաքինութեան. և կամ թէ սակս բարկութեան, և զայրացման:

* 3. Զի որպէս այնոքիկ, որք ուտեն սակս պարար

ւան

ւանդութեան փոխաբերական կենցաղավարութեան, պարտին ուտել ազատապէս, և ոչ 'ի ձեռն բռնութեան, և իբր ակամայ: Եւ մանաւանդ պարտ է ցուցանել, թէ ունի զախորժակ ուտելոյ. զի ընկերակիցքն ճանաչիցեն և հաւատայցեն, թէ կամաւորապէս և յօժարաբար կայ ընդ նոքեանց: Այսպէս և ամուսնական պարտն, միշտ պարտի հատուցանիլ հաւատարմաբար և ազատապէս: Իբր թէ. համանգամայն ունին զյոյս առ'ի ծնանիլ ըզզաւակս. թէև պատճառաւ իմիք, մինն նոցին ոչ ունիցի զայնպիսի յոյս:

* 4. Ուտել, բայց ոչ վասն նախասացեալ երկուց պատճառաց. այլ պարզապէս վասն բաւ առնելոյ ախորժակին, է տանելի իր. բայց ոչ գովելի: Քանզի միայն պարզ զգայական հեշտութիւն ախորժակին, ոչ կարէ գոլ բաւական առարկայ, առ'ի առնել զգործ ինչ գովելի: սակայն կարէ գոլ, զի լինիցի տանելի:

* 5. Ուտել, ոչ միայն վասն պարզապէս բաւ առնելոյ ախորժակին, այլ աւելորդապէս, և անկարգաբար. այնքան աւելի, կամ պակաս նախատելի է. որքան մեծ, կամ փոքր է աւելորդութիւն, և անկարգութիւն:

* 6. Աւելորդութիւն ուտելոյ, ոչ միայն կայանայ 'ի մեծագոյն քանակութեան, այլ նաև 'ի կերպի, և յեղանակի ուտելոյ: Այս է մեծագոյն պատահումն ինչ՝ ո՛վ խանդակաթդ առաքինութեան. զի թէպէտ մեղրն է յատուկ գործ մեղուաց, և առողջութիւն նոցին: Սակայն կարէ նաև գոլ վնասակար նոցին: քանզի հիւանդացուցանէ զնոսա երբեմն. հի՛բար. մինչ ուտեն զնա առատապէս 'ի գարնան: Վասն զի այս պատճառէ 'ի նոսա զլուծումն որովայնի. և երբեմն ևս առնէ անզերծելապէս մեռանիլ, մինչ մեղրաշաղախեցեալք լինին առաջին կողմն մարմնոյ, և թևոց նոցին:

Հան

Հանգունաբար ևս՝ ամուսնական գործառու-
թին, որ թէպէտ այնքան սբ, այնքան արդար,
այնքան գովելի, և այնք օգտակար է հասարա-
կութե։ Սակայն 'ի յոմանս պատահմունս՝ որո-
գայթաւոր է այնոցիկ, որք կիրառնուն զնա։ վն
զի երբեմն մեծապէս հիւանդացուցանէ զհոգիս
նց ներքելի մեղօք, մինչ պատահի լինիլ պարզ ա-
ւելորդութբ խմիք։ Ե՛ւ երբեմն ևս մեռուցանէ
մահացու մեղօք. որ յայնժամ պատահի այս. մինչ
թիւրեալ լինի կացուցեալ կարգն առ որդէծնու-
թին։ Յորում պատահման. որքան առաւել, և
նո՛ւազ հեռանայ ոք յայսմանէ կարգադրութէ.
այնքան առաւել, և նո՛ւազ դարշելի են մեղքն.
բայց սակայն միշտ են մահացուք։

Վն զի՝ նախկին և գլխաւոր վախճանն ամուսնու-
թե՝ գոլով յառաջածումն զաւակաց. ուստի ոչ
երբէք կարէ գովելապէս հեռանալ 'ի նոյն կար-
գէ, զոր պահանջէ նա։ Թէև վասն այլոյ պա-
տահման, ոչ կարիցէ յայնժամ ունիլ նա զներգոր
ծութին իւր։ Ոպ և պատահի երբեմն, զի ամ-
լութին, և կամ յղութին արդէն հասեալ, ար-
գելու զառաջածումն, և զծնունդն զաւակին։
Քանզի յայնպիսի պատահման, ոչ թողանի մար
մնական զուգակցութին՝ առ 'ի ոչ լինիլ արդար.
այնու՝ զի կանոնքն ծննդեան պահեալք են։ Ուս
տի ոչ կարէ այնպիսի պատահումն դատել զօ-
րէքն, որ եդ զգլխաւոր վախճան ամուսնութե՝
զորդէծնութին։ Յաղագս որոյ՝ նոյն դարշելի,
և զազիր գործն, զոր առնէր Օնան 'ի յամուսնա
կան գործս իւր, չար և դարշելի թուեցաւ առա
ջի այ, ոպ ասի. ծննդ. 38. 10։ Թէպէտ ոմանք
հերետիկոսք այժմոյս ժամանակի, որք են հա-
րիւր անգամ վատթարագոյնք քան զհեթանոսս,
( զորոց խօսի սբն Ջերոնիմոս, 'ի վր եփեսացւոց
թղթոյն ) կամեցան ասել. թէ միայն թիւր դի-

տա

տաւորութիւն այն թշուառականին՝ չար էր առաջի ա͞յ։ Բայց ս͞բ գիրն խօսի այլով կերպիւ. զի յատկապէս հաստատէ, թէ նոյն իրակութիւն և գործն՝ զոր առնէր, չար և գարշելի թուեցաւ առաջի ա͞յ։

* 7. Հաւատոյ նշան իմն է՝ չարակնեայ, խոտելի, սորուկ, և համբաւագուրկ հոգւոյ. մտածել զկերակուրն, և զճաշելն՝ յառաջ քան զժամանակն ուտելոյ։ Եւ մանաւանդ մինչ զկնի ուտելոյն՝ յամի ոք անդ ՚ի յորոճալ զհամն՝ խօսիւք, մտածմամբ, և շաղախելով զմիտն իւր յիշմամբ ընկալեալ քաղցրութեան՝ ՚ի կլանելն զպատառս։ Որք և առնեն այնոքիկ, որք յառաջ քան զճաշակումն՝ ունին զմիտս իւրեանց ՚ի սեղանն, և զկնի ճաշակման ՚ի յամանս։ Այսպիսիքս՝ արդարև արժանիք են լինիլ մշակք խոհարարաց՝ ՚ի խահանոցի. որովհետև ա͞ծացուցանեն զորովայնս իւրեանց, ըստ առելոյն ս͞բյն պօղոսի. որոց ա͞ծ որովայնն է։ Բայց պատուելի անձինքն՝ ոչ մտածեն զսեղանն, եթէ ոչ մինչ բազմին անդ. և զկնի ուտելոյն՝ լռանան զձեռս և զբերանս, առ՚ի ոչ ունիլ ևս զհամն, և զհոտն այնորիկ, զոր կերինն։

Փիլն ոչ է այլ ինչ, եթէ ոչ մեծագոյն անասուն իմն, որ կայ ՚ի վ͞ր երկրի, և ունի զառաւել ըղգացումն քան զայլս։ Աստ կամիմ ասել քեզ զմի գործն համեստութ͞ե նորին, որ է այս. զի նա ոչ փոխէ բնաւ զընկերն իւր, նաև քաղցրապէս սիրէ զայն, զոր միանգամ ընտրեաց ՚ի յընկերակութ͞ի։ Բայց այսու ա͞մի՛, ոչ զուգակցի ընդ նմա, եթէ ոչ միայն յերեք ամէ յերեք ամ։ և այն ևս հինգ օր միայն. նաև՝ այնպէս գաղտաբար և ծածուկ, մինչ զի ոչ երբէք տեսանի յայնպիսի գործոջ։ Եւ ՚ի տեսանելն ՚ի վեցերորդ աւուրն, յառաջ քան զա͞մ ինչ, աճապարէ ուղղապէս առ-

գետ

գետ իմն, յորում լռանայ, և մաքրէ ամբողջապ̅ զբոլոր մարմինն իւր, և ապա դառնայ առ ճա_րակն իւր: Արդ այս է գեղեցիկ և համեստ սո վորութիւն այսորիկ կենդանւոյ. որով յորդորէ զամուսնացեալսն, առ 'ի ոչ գրաւել զիղձս իւրե անց 'ի յզգայականութ̅ի, և 'ի հեշտութ̅ի, զոր 'ի կիրարկանեն ըստ կացութ̅ե իւրեանց: Նաև 'ի վախճանի այնպիսւոյ իրակութեան՝ լռանալ և մաքրել խոկոյն զսիրտն և զիղձն, առ 'ի կարել յետոյ 'ի կիրարկանել զայլ գործս, առաւել ազա տապէս, մաքրապէս, և սրբապէս:

* Առ այս ազդեցութ̅ կայանայ՝ կատարեալ կր թութ̅ին դերասանց վարդապետութ̅ե, զոր սբ̅ն պօղոս տայ կորնթացւոց: Ժամանակս հարճեալ է ( ասէ նա ) այսուհետև զի որք ունիցին կանայս՝ որպ̅ թէ չունիցին: Զի ը̅ս̅ սբ̅յն գրիգորի. այն է որ ունի զկին՝ որպ̅ թէ չունիցի. որ այնպէս առնու ը̅ս̅ նմա զմարմնաւոր մխիթարութիւն, մինչ զի ոչ արգելեալ լինի այնու կէտ մի 'ի հոգևոր դիտմանէ: արդ այն՝ որ ասի զառնէ, իմանի նաև զկնոջէ: Եւ որք վարեն զաշխարհս՝ ( ասէ նոյն առաքեալն ) որպ̅ թէ չվայելի ցեն. ը̅ս̅՝ որպ̅ և թէ ոչ ծառայիցեն նմի: Ուրեմն այ_սու իմն, ծառայիցեն աշխարհի իւրաքանչիւրքն ը̅ս̅ կոչման իւրեանց: բայց այնու կերպիւ, մինչ զի որք ծառայիցենն, որպ̅ թէ ոչ ծառայիցեն նմա ըղձիւք: Այլ այնպէս ազատք, և յօժարք մնայ_ցեն առ 'ի ծառայել ա̅յ. որպ̅ թէ՝ ոչ ծառայեցու ցեալք իցեն զինքեանս ընաւ աշխարհի: Այս է մեծագոյն չար իմն մարդոյն ( ասէ սբ̅ն օգոստի նոս ) կամիլ զմայլիլ զայնպիսի իրօք, որք են կի րառնելիք. և կիրառնուլ զայնպիսի իրս, որք են զմայլելիք: Արդ մեք պարտիմք զմայլիլ զհոգևոր իրօք. և կիրառնուլ զմարմնականս: որոց կիրա_ռութ̅ն մինչ դառնայ 'ի զմայլութ̅ն, համանգամայն և բանական հոգին մեր դառնայ 'ի յանասնական

հո_

հոգի: Վերջապէս՝ ես համարիմ թէ, ասացի զայն ամ, զոր կամէի ասել. նաև իմացուցի ես զայն թարց ասելոյ, զոր ոչ կամէի ասել:

## Առաջնորդութիւնք և խրատք՝ վն այրեաց:

### Գլուխ. Խ:

ՍՈւրբն պօղոս խրատէ զամենայն առաջնորդս՝ 'ի յանձն տիմօթէոսի իւրոյ, ասելով: Զայրիս պատուեա, որք ստոյգ այրիք իցեն: Արդ առ 'ի գոլ ճշմարտապէս այրի, պահանջին այսոքիկ իրքս:

* Նախ պիտոյ է, զի այրին՝ ոչ իցէ միայն այրի մարմնով, այլ նաև սրտիւ. որ զի առաջադրեսցէ հաստատագոյն առաջադրութեամբ միով, առ 'ի մնալ 'ի կացութեան ամբողջ այրիութեան: Քանզի՝ այրիքն, որք սպասեն առթի ամուսնանալոյ, միայն բաժանեցեալք են 'ի մարդկանէ, որքան առ մարմնական հեշտութիւն. բայց արդէն միաւորեալք են ընդ նոսա, որքան առ կամքն սրտին: Արդ ճշմարիտ այրին՝ առ 'ի հաստատել 'ի յայրիական կացութեան, եթէ կամի ընծայել այ զմարմինն, և զողջախոհութիւն իւր. այնպիսին առասցէ զմեծագոյն զարդ իմն այրիութեան իւրոյ. նաև 'ի մեծի ապահովութեան դնէ զառաջադրութիւնն իւր: Վն զի 'ի տեսանելն, թէ զկնի ուխտելն՝ այլ ևս ոչ է 'ի կարողութեան իւրում, թողուլ զողջախոհութիւն իւր՝ թարց զրկելոյ 'ի դրախտէն: այսու այնպէս նախանձաւոր լինի առաջադրութեան և դիտման իւրոյ. մինչ զի ոչ թոյլատրէ կէտ մի, զի կայացի 'ի սրտի իւրում գոնեայ սոսկ խորհուրդ իմն ամուսնութեան: Եւ այս այնպէս. մինչ զի

զի նոյն սբ ուխտն՝ դնէ 'ի հոգւոջ նորին զամրաբերութիւն իւր, որ ընդդիմակայի ընդդէմ ամենայն առարկայի,

որ կամի ներհականալ առաջադրութեան իւրոյ :

Իրաւի. սուրբն Օգոստինոս մեծաւ խորհրդով առաջադրէ զայս այրիական ուխտս, քրիստոնեայ այրեաց : Բայց հնագոյն, և գիտուն օրոգինէսն, անցանէ այլ ևս յառաջ : վասն զի խրատէ զամուսնացեալ կանայս, ուխտել և առաջադրել զայրիական ողջախոհութիւն, եթէ պատահիցի մեռանիլ արանց նոցին՝ նախ քան զինքեանս : Զի 'ի մէջ զգայական հեշտութեանց, զոր ունին 'ի յամուսնութեան իւրեանց, կարիցեն վայելել նաև զարդիւնս ողջախոհ այրիութեան, միջնորդութեամբ նախասկսեալ խոստմանն : Ուխտն առնէ, զի գործքն այսու կերպիւ արարեալք, առաւել հաճելի լիցին Աստուծոյ. և զօրացուցանէ զկամքն առ'ի առնել զայնս : Նաև ոչ միայն տայ Աստուծոյ զգործս, որք են պտուղք բարի կամաց մերոց. այլ նաև ընծայէ նմա զնոյն կամքն,

որ է որպէս ծառ իւր գործոց մերոց :

Արդ 'ի ձեռն պարզ ողջախոհութեան, տամք մեք զմարմինն մեր Աստուծոյ, հանդերձ ունելով զազատութիւն ենթարկելոյ զնա վերստին՝ զգայական հեշտութեան : Բայց ուխտիւ ողջախոհութեան՝ տամք նմա զբացարձակ, և զանյետդառնալի ընծայ իւր, առանց պահելոյ 'ի մեզ զկարողութիւն իւր բացասութեան : Եւ այսու կերպիւ, երջանկապէս առնեմք զմեզ դերի այնորիկ, որոյ ծառայութիւն է լաւագոյն քան զթագաւորութիւն : Արդ որպէս հաստատեմ ես մեծապէս, զազդմունս և զխրատս՝ երկու հռչակաւոր անձանց այսոցիկ : Այսպէս ևս ըղձամ, զի հոգիքն՝ որք երջանկանան կամելով կատարել զնա. առնիցեն զայն խոհեմապէս, սրբապէս, և պարզապէս. նաև բարեպէս քննելով զզօրութիւնս իւրեանց : Կոչելով ևս յինքեանս զներշնչմունս երկնից. և առնելով զխրատ յիմաստուն,

տուն, և 'ի ջերմեռանդ առաջնորդէ իմքէ: վ՟ս
զի՝ այսպէս առնելով, առնեն առաւել պտղաբե
րապէս:

* Երկրորդ. բաց 'ի յայսմանէ պիտոյ է, զի այս
հրաժարումս յերկրորդ հարսանեաց, լինիցի մաքրա
պէս, առ 'ի ուղղել մեծագոյն մաքրութ՟բ զմ՟տ
իղձս իւր առ ա՟ծ, և առ 'ի միաւորել յմ՟մ կողմա
նէ զսէրտն իւր ա՟ծայնոյ հանդիսավեհութեան:
Զի եթէ իղձն առ 'ի թողուլ զհարուստ որդիս,
և կամ զայլ աշխարհային դիտմունս, արգելուցու
զայրիս 'ի յայրիութէ. այս թէպէտ կարէ՝ զի լի
նիցի գովելի. բայց ոչ արդէն առաջի ա՟յ: Քան
զի ոչ ինչ իր կարէ ունել զճշմարիտ գովութիւն
առաջի ա՟յ, եթէ ոչ այն, որ է արարեալ վասն
սիրոյ նորին:

* Երրորդ. պիտոյ է նաև, զի այրին՝ առ 'ի գով
այրի, ճշմարտապէս և կամաւորաբար հեռանայցէ
'ի հեշտութենց: Որ գիրգ այրին է՝ (ասէ ս՟ն պօ
ղոս) կենդանւոյն մեռեալ է: Կամիլ գովել այրի. և
այսու ամ՟ի հեշտանալ 'ի գովն պատուեցեալ,
և ողջունեցեալ: Նաև կամիլ գտանիլ 'ի խաղս, 'ի
գոփեցման, և 'ի կաքաւեցման. կամիլ գովել օծե_
ցեալ, զարդարեցեալ, և պնճնեցեալ. այս է գով
այրի իմն կենդանի, որ՟ք առ մարմինն. և մեռեալ
որքան առ հոգին: Ասա ինձ աղաչեմ զքեզ.
զի՞նչ օգուտ է, եթէ դրօշակն և նշանն իջեանի
անահատայ կուքոյն, և գարշելի սիրոյն (որով նշա
նակի զարդարանքն գլխոյ, և դիմաց) արարեալ
իցէ սպիտակ թելով, և յօրինեալ ը՟ն կերպի առա
գաստի, և գեղափայլ վարագուրի, և բոլորակա
պէս տարածեալ շուրջ զդիմօք՝ ը՟ն կերպի ուռկա
նի: Եւ՞ մանաւանդ այն սեաւն, որ բազում ու
րեք կպուցեալ լինի մեծագոյն ունայնութ՟բ 'ի վ՟ր
սպիտակին, առ 'ի բառնալ զգոյնն: Այրի կինն
զարդարիլով, և առնելով զայնպիսի աշխարհա_
կան

կամ փորձառութիւն , որով կարեն կանայք հաճոյանալ արանց · այնու արկանէ 'ի միտս նոցին, զառաւել որոգայթաւոր ըղձաձկութիւս : Այրին ուրեմն , որ կեայ յայսպիսի ունայն հեշտութեն , կենդանւոյն մեռեալ է : և յատկապ̃ խօսելով · նա ոչ է այլ ինչ, եթէ ոչ կուռք իմն այրիութեն :

* Ժամանակ յատանելոյ եհաս · ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում, ասէ երգերգոցն : Հարկաւոր է յատանել զաշխարհային աւելորդութիւնն իւրաքանչոք , որ կամի կեալ բարեպաշտօրէն : Բայց առաւել քան զիմ՝ հարկաւոր է այս ճշմարիտ այրւոյն · որ ըստ կերպի ողջախոհ տատրակի , փղձկուն գտանի դեռևս առ 'ի լալ, հեծեծալ , և սգալ զմահն առն իւրոյ : Յորժամ նոեմի դարձաւ 'ի մովաբայ 'ի բեթղէհէմ · կանայք քաղաքին , որք նախապէս ունէին զճանաչումն ամուսնութեն նորին, ասէին առ միմեանս · Թէ սա՞ իցէ Նոյեմի · Նա պատասխանեաց նոցա ասելով, մի՛ կոչէք զիս Նոյեմի · ( քանզի Նոյեմին թարգմանի գեղեցիկ , և շնորհալի · ) այլ կոչեցէք զիս Մարա , որ է դառնացեալ · զի դառնացոյց զիս Ամենակալն յոյժ : և վն̃կ ասէր նա զայս, զի մեռեալ էր այրն իւր : Այսպէս և՝ ջերմեռանդ այրին, ոչ երբէք կամի կոչիլ և համարիլ գեղեցիկ, և շնորհալի · բաւական համարելով զայն, զոր ա̃ծ կամի · զ̃ զի իցէ խոնարհ , և սորուկ 'ի յաչս իւր :

* Ղամբարքն , որք ունին զանուշահոտ իւղս 'ի վառիլն, արձակեն և ս զանուշ հոտս՝ մինչ շիջանի բոցն նոցին : Այսպէս և ս այրիքն , որոց սէրն մաքուր եղեալ է 'ի յամուսնական կացութեն իւրեանց , արձակեն զքաղցրադոյն հոտ իմն առաքինութեն , և ողջախոհութեն՝ մինչ լոյսն իւրեանց շիջեալ է · զ̃ մինչ այրն իւրեանց մեռեալ է : Սիրել զայրն՝ մինչ կենդանի է , է հասարակ իր իմն 'ի մէջ կանանց : բայց այնքան սիրել զնա , մինչ զի

զկնի

զկնի մահուան նորին, ոչ կամիցի ընդունիլ զայլս. այս է մեծագոյն սէր իմն, որ ոչ պատկանի, եթէ ոչ առ ճշմարիտ այրիսն։ Յուսալ առ Ա՛ծ՝ մինչ այրն ծառայէ պահպանութեան կնոջ, ոչ է այնքան անսովոր իր։ բայց յուսալ առ Ա՛ծ, մինչ զրկեցեալ է ոք յայնպիսւոյ պաշտպանութենէ, է իր իմն արժանի մեծի գովութեան։ Ստուգատ է, զի ա՛մ ոք առաւել դիւրապէս ճանաչէ զկատարելութիւնս առաքինութեան՝ 'ի յայրիական կացութեան, քան 'ի յամուսնականութեան։

* Այրին, որ ունի զայնպիսի որդիս, որք կարօտին կառավարութեան, և առաջնորդութեան իւրոյ. և մանաւանդ 'ի յայնս, որք պատկանին առ հոգիս, և առ հաստատութիւն կենաց նոցին. ոչինչ կերպիւ կարէ, և ոչինչ կերպիւ պարտի թողուլ զնո՛. Քանզի ս՛ն պօղոս յայտնապէս խրատէ, թէ այրիքն պարտաւորք են առ այսպիսի հոգունս կութիւս, առ 'ի հատուցանել զփոխարէնս ծնողացն։ Ա՛ռ զի ասէ՝ եթէ ոք իւրոց, և մանաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի, 'ի հաւատոցն ուրացեալ է, և չար ևս քան զանհաւատն է։ Բայց եթէ որդիքն՝ են յայնպիսի կացութեան, որք ոչ ունին զպիտոյս առաջնորդեցեալ գոլոյ 'ի նմանէ։ յայնժամ այնպիսի այրին, պարտի ժողովել առ ինքն զմ՛տս իւր, առ 'ի կիրակել զայնս մաքրապէս 'ի սէրն Ա՛յ, վ՛ն զարդացման, և յառաջադիմութեան իւրոյ։

* Եթէ բռնաւոր պատահումն, և դիպուած իմն ոչ պարտաւորիցէ զխղճմտանս ճշմարիտ այրւոյն՝ առ արտաքին խուժանն, և աղմուկն. որպիսիք են դաւք, վէճք, և կռիւք։ Յայնժամ ես խրատէի զնա, զի ա՛մ հրաժարիլ յայնպիսեաց, և հետևիլ կանոնի իմիք, առ 'ի ուղղել զգործս իւր, որ է առաւել խաղաղ, և հանդարտ. թէև ոչ թուիցի առաւել պտղունակ։ Քանզի պիտոյ է,

զի պտուղքն այսպիսւոյ նեղութեան, յոյժ մեծագոյնք լինեն, բաղդատմամբ բարեացն որ̄յ հանդարտութեան խմէք : Վասն զի բաց 'ի յայնմանէ, որ այնպիսի աղմուկքն և վէճքն ցրուեն զմիտս. նաև բազմիցս բանան դդուռն թշնամեաց ողջախոհութեան : Որովհետև առ 'ի հաճոյանալ այնոցիկ, որոց օգնականութեանն կարօտի. դնի 'ի յեղերս անջերմեռանդից, և անհաճոյից

աստուծոյ :

* Աղօթքն՝ շարունակ կրթութիւն եղիցի այրւոյն. քանզի նա ոչ պարտի ունիլ առ այլ ինչ զսէրն իւր, եթէ ոչ առ ա̄ծ : նաև գրեթէ ոչ պարտի ունիլ զայլ ինչ խօսակցութիւն, եթէ ոչ վասն ա̄յ : Եւ զի որպէս երկաթն արգելանի հետևիլ քարշմանն մագնիսի, պատճառաւ ներկայութեան անդամանդական : բայց արագէ՛ դէպ առ նոյն մագնիսն, մինչ հեռացեալ է անդամանդն : Այսպէս և սիրտն այրի կնոջ, մինչ ոչ կարէ անդորրապէս արագել առ ա̄ծ բոլորովին, և հետևիլ քարշման ա̄ծային սիրոյն՝ 'ի կենդանութեան առն իւրոյ : Պարտի խնկոյն զկնի մահուան նորին, համարձակապէս դիմել և ընթանալ առ հոտն երկնային իւղոյն, նաև ասել ըստ հարսին 'ի յերգս : Ով Տ̄ր. այժմ իմքն՝ քոյք են բոլորովին, ընկալ զիս վ̄ն քոյոցն բոլորովին. Ձգեա զիս՝ զհետ քո 'ի հոտ

իւղոյ քոյ ընթասցուք :

* Յատկագոյն կրթութիւնքն առաքինութեանց, 'ի յորս կրթիլ պարտի որ̄ այրին, են այսոքիկ : Կատարեալ համեստութիւն, հրաժարումն 'ի պատուոյ, 'ի յարդութեանց, 'ի կենցաղավարութեանց, 'ի մականուանց, և յայլոց այսպիսեաց ունայնութեանց : Ծառայել աղքատ հիւանդաց, մխիթարել զտրտմեալս, կրթել զորդիս 'ի ջերմեռանդ կեանս, և լինիլ օրինակ իմն կատարելութեան մանկուհեաց : Մաքրութիւնն, և պարզամտութիւնն, են երկու

զարդ-

զարդ զգեստուց նոցին: սէրն և խոնարհութիւն, երկու զարդ գործոց նոցին: խոհեմութիւնն և քաղցրութիւն, երկու զարդ լեզուաց նոցին: համեստութիւն և պարկեշտութիւնն, երկու զարդ աչաց նոցին: և խաչեցեալն Յս, միակ զարդ սրտից նոցին:

* Համառօտ բանիւ. Ճշմարիտ այրին՝ 'ի յեկեղեցւոջ է իբրև զփոքրիկ փունջ իմն դարմանային մանուշակի, որ բուրէ զանբաղդատելի քաղցրահոտութի իմն ջերմեռանդութե իւրոյ: Եւ միշտ թաքուցեալ կայ 'ի ներքոյ լայնագոյն տերևոյ սարկութե իւրոյ. և 'ի ձեռն մթին գունոյ իւրոյ՝ տայ զվկայութի մահացուցման սրտի իւրոյ: Բուսանի յապահով, և յոչ վարեցեալ տեղւոջ, ոչ կամելով կոխատիլ 'ի յաշխարհային կենցաղավարութեց, առ 'ի լաւագէս պահել զթարմութիւն սրտի իւրոյ, ընդդէմ բնաւից ջերմութեց, որք պատճառեն 'ի նա զեղձս բարեաց, պատուոյ, և մանաւանդ աշխ սիրոյ: Նա լինի երջանիկ (ասէ սբ առաքեալն) եթէ յարատևեսցէ այսու կերպիւ:

* Կամէի ասել զայլ բազում իրս զայսմանէ առարկայէ և նիւթոյ. բայց ասացեալ համարիմ զամ, մինչ ասեմ. Թէ այրին, որ է նախանձաւոր դէպ առ պատիւն կացութե իւրոյ. մտադրութբ ընթերցցի զգեղեցիկ տրակն, զոր սբն Ջերոնիմոս գրեաց առ Փուրիայ, առ Սալվիայ, և առ այլ բնաւ որբևայրս, որք ունեցան զայս մեծ բարեբախտութիս, առ 'ի լինել հոգևոր դուստր այնպիսւոյ մեծի հօր: Քանզի ոչ կարէ առակցել այլ իր իմն առ այն, զոր նա ասէր նց, եթէ ոչ միայն այս զգուշութիս, և խրատս. Թէ ճշմարիտ այրին, ոչ երբէք պարտի խօսել և արհամարհել զայնոսիկ, որք անցանեն առ երկրորդ, կամ առ երրորդ, և կամ ևս առ չորրորդ պսակն,

և հարսանիսն ։ քանզի 'ի յոմանս պատահմունս ա̃ծ այնպէս տրամադրէ, վասն մեծի փառաց իւրոց ։ Ե՛ւ պիտոյ է միշտ առաջի աչաց ունիլ զայս վարդապետութիւնս հնագունից . Թէ այրիութիւնն, և կուսութիւնն, ոչ ունին զայլ աստիճան 'ի յերկինս, եթէ ոչ զայն, որ պատրաստեալ է նոցա ըստ խոնարհութեան իւրեանց ։

## Մի՛ ձայն բան առ կուսանս ։

## Գլուխ . ԽԱ ։

Ո՛Վ կուսանք, ոչ ունիմ ես զայլ ինչ առ'ի ասել ձեզ, եթէ ոչ զայս միայն . ( զի կարէք գտանել զայլ խրատս յայլ ուրեք ) եթէ ցանկայք դուք ժամանակաւոր հարսանեաց, պահեցէ՛ք նախանձաւորապէս զառաջին սէրն ձեր, դէպ առաջին փեսայն ձեր ։ Ես վարկեմ թէ, մեծագոյն խաբէութի̃ իմն է, փոխանակ ցուցանելոյ նմա զամբողջ, և զպարզ սիրտ իմն, ցուցանել զսիրտ մի բոլորովին հնացեալ, պատառոտեալ, և մաշեցեալ'ի սիրոյ, Բայց եթէ բարեբախտութի̃ն քո, կոչիցէ զքեզ առ հոգևոր հարսանիսն ողջախոհութե̃, և կուսութե̃ . նաև եթէ կամիցիս միշտ պահել զկուսութի̃ն քո վ̃ն այ̃ . պահեա՛ զսէրն քո որքան և կարես առաւել փափկապէս, վ̃ն այս ա̃ծային փեսայիս ։ Որ գոլով նոյն ինքն մաքրութի̃, ոչ սիրէ զայլ ինչ այնքան, որքան սիրէ զմաքրութի̃ն . առ որ պարտին ընծայիլ անդրանիկքն բնաւից իրաց, և մանաւանդ սրտից ։ Տրակքն ս̃յն ջերոնիմոսի յիշեցուցանեն քեզ զբնաւ խրատսն, որք հարկա-

կաւորք են քեզ ։ Արդ ուրեմն, որովհետեւ կացութիւն քո պարտաւորէ զքեզ առ հնազանդութիւն, ընտրեա՛ զառաջնորդ ոմն, զի կարիցես 'ի ներքոյ կառավարութեան նորին՝ սրբապէս ընծայել ամենայնոյ հանդիսավէհութեան, զհոգին, և զմարմինն քո ։

Վերջ Երրորդի Մասին ։

# ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ:

## ՆԵՐԱԾՈՒՄՆ ԱՌ ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ:

*Որ պարունակէ զհարկաւոր ազդմունս, և գլխաւոր՝ ընդդէմ առաւել հասարակ փորձութեանց:*

Յաղագս թէ՝ ոչ է պիտոյ ունկնդիր լինել բանիցն որդւոյ աշխարհի:

Գլուխ. Ա:

ՏԵՍԱՆԵԼՈՎ ԶՔԵԶ ԱՇխարհային անձինքն, թէ դու կամիս հետևիլ ջերմեռանդ կենաց. իսկոյն ամբաստան 'ի վր̃ քո զհազար տէգս բարբանջմանց, և բամբասանաց: Եւ՞ զրպարտեն չարակրապէս զդարձումն, և զփոխումն քո լինիլ կեղծաւորութի, աւելորդապաշտութի, և հնարագիտութի: Ասեն ևս, թէ աշխարհն դարձոյց զերեսս իւր 'ի քէն, և դու արհամարհեցեալես 'ի նմանէ, վն̃ այն դիմես առ ած̃: Բարեկամքն քո առնեն ընդ քեզ զառատագոյն զրոյցս՝ խոհեմական և սիրաղնական բանիւք, ըստ կարծեաց իւրեանց: Դու անկանիս (ասեն) 'ի մաղձ իմն տրտմական. կորուսանես

զհա

զհաւատարմութիւն քո առաջի աշխարհի. լինիս անտանելի. և ծերանաս յառաջ քան զժամանակն, և գործառութիւնք քոյք կրեն զնաս: Պիտոյ է (ասեն) կեալ, և կենցաղավարել ը̄ս հաճութե̄ն աշխարհի, որովհետև կարէ մարդ փրկել 'ի մէջ աշխարհի՝ թարց այնքան խստութեանց, և զբաղանաց,

* Արդ ո՛վ խանդակաթդ առաքինութե̄ն. այս ամ̄ ոչ է այլ ինչ, եթէ ոչ յիմարութի̄, և ունայն բարբանջումն իմն: Քանզի այսպիսիքս ոչ ունին զնկատումն առ առողջութիւն, և առ գործն քո: ԵԹԷ ՅԱՇԽԱՐՀԷ ԱՍՏԻ ԷԻՔ՝ (ասէ փրկիչն) ԱՇԽԱՐՀ ԶԻՒՐՆ ՍԻՐԷՐ ԱՐԴԵՕՔ. ԲԱՅՑ ԶԻ ՉԷ՛Ք ՅԱՇԽԱՐՀԷ, Վ̄Ն ԱՏԵԱՅ ԶՁԵԶ ԱՇԽԱՐՀ: Վ̄ն զի տեսանեմք մեք բազմիցս, զի ազնիւ անձինք ոմանք, զամբողջ գիշերն անցուցանեն 'ի խաղալ զթուղթ, և զթավլու, և զայլս: Արդ՝ մի՞թէ դատանի առաւել քան զայս տաղտկալի, տրտմալի, և մթային զբաղումն: բայց սակայն՝ աշխարհային անձինքն ոչ ասեն առ այնպիսիս գոնեայ զորոյց իմն, նաև բարեկամքն նոցին ոչ ձանձրանան երբեք 'ի նոցանէ: Վ̄ն առնելոյ ժամ մի զմտածական աղօթս. և կամ վ̄ն յառնելոյ 'ի քնոյ կանխապէս՝ յառաջ քան զսովորական պահն, առ'ի պատրաստել յընկալնումն ս̄բ զն հաղորդութե̄ն՝ ամ̄ ոք դիմէ առ դեղս, և առ բժիշկս, առ 'ի ապաքինել զթուլութիւն, և զկերկերումն կոկորդին: բայց եթէ կայցէ 'ի բազում գիշերս 'ի խաղալ, ոչ ոք տրտնջայ և դժկամակ լինի: Միայն թէ՝ արթուն մնալն 'ի գիշերի ծննդեան Տ̄ն, և յաւագ ուրբաթի, ամ̄ ոք հազդոյ. և 'ի հետևեալ աւուրն՝ գլուխն, և որովայնն իւր ցաւի: Ո՛վ է այն՝ որ ոչ տեսանէ զայս, թէ աշխարհն է անիրաւ, և երեսապաշտ դատաւոր ամ̄ դէպ առ որդիս իւր. բայց խիստ և դաժան՝ դէպ առ որդիսն ա̄յ:

* Մեք ոչ կարեմք բարեպէս կալ ընդ աշխարհի, եթէ ոչ հակադրելով զմեզ ընդդէմ նորա : Եւ ոչ է կարելի երբէք . թէ գոհունակ առնիցեմք, և հաճեցուցանիցեմք զնա . զի է յոյժ փոփոխանակ, և անհաստատ : Եկն յովհաննէս, (ասէ փրկիչն) ոչ ուտէր՝ և ոչ ըմպէր . և ասեն՝ դև գոյ 'ի նմա : Եկն որդի մարդոյ ուտէ՝ և ըմպէ . և ասեն . ահա այր կերող և արբեցող : Վասն զի՝ ո՛վ խանդակաթդ առաքինութեն . եթէ թոյլատրիցեմք զմեզ խնդալ, խաղալ, և պարել ընդ աշխարհի, վասն կենցաղավարութեն, և համազիջման . դայթակղի 'ի մէնջ : բայց եթէ ոչ առնիցեմք զայնս, ամբաստանէ զմէնջ, գոլ կեղծաւոր, և տրտում : Եթէ զարդարիցեմք զմեզ , նա մեկնաբանէ զայն գոլ հպարտութի, և փառասիրութիւն իմն : և եթէ կենցաղավարիցիմք հասարակօրէն, այս համարեցեալ լինի 'ի նմանէ ստրկութի սրտի : Եւ ուրախութիւքն մեր՝ կոչին 'ի նմանէ անպատշաճութիւք . և մահացուցմունքն մեր՝ տրտմութիւնք և տխրութիւք : և այսպէս՝ որովհետև հայի նա 'ի մեզ չար աչօք, այնու ոչ երբէք կարեմք հաճոյանալ նմա : Նա նկատէ 'ի յանկատարելութիւն մեր, և հռչակէ զնա գոլ մեղք . զներելի մեղքն մեր ցուցանէ լինել մահացու . և զմեղքն տկարութե՝ դարձուցանէ 'ի մեղք չարութե : Արդ՝ փոխանակ այնմ, (որպ ասէ առաքեալն) սէրն է գթած : հակադարձապէս աշխարհն է չարաճճիկ : փոխանակ այնմ, զի սէրն ոչ խորհի զչար : հակադարձաբար՝ աշխարհն միշտ խորհի զչար : նաև մինչ ոչ կարէ ամբաստանել յաղագս գործոց մերոց . ամբաստանէ յաղագս դիտաւորութեանց մերոց : Արդ՝ գայլն ոչ թողու զոչխարն 'ի յուտելոյ . թէ ունիցի զեղջիւրս, և թէ ոչ . թէ իցէ սպիտակ, և թէ սեաւ :

* Ուստի՝ զի՛նչ և կամիցիմք առնել, միշտ պա-

տե-

տերազմի ընդ մեզ աշխարհ: Զի եթէ երկարա-
պէս մնայցեմք առաջի խոստովանահօր մերոյ,
զարմանայ զմէնջ, թէ ունիմք արդեօք մեք զայն-
քան բան՝ առ 'ի ասել նմա: Եւ եթէ մնայցեմք անդ
'ի սակաւ ժամանակս. վարկէ, թէ մեք ոչ ասեմք
նմա զամ իրս: Նա գիտել կամի զամ շարժմունս
մեր. եւ վն միոյ փոքր խօսից բարկութե՝ ասէ,
թէ մեք եմք անտանելիք, եւ անհամբերք: Հոգն
գործառութե առից եւ տրից մերոց, ագահութե
եան թուի նմա. եւ բարեպաշտութիւն մեր յիմա-
րութի: Բայց որք առ որդիսն աշխարհի, վարի
այլապէս: քանզի ցուցանէ նց, թէ բարկութիք
նոցին՝ են քաջութիք. ագահութիքն՝ հանճարե
ղութիք. եւ անհամեստ ընտանեկցութիքն՝ պատ
ուելի կենցաղավարութիք: Վս զի՝ մարդքն սո-
վորք են միշտ պատկանել զգործս մեղուաց:
* Բայց թողցուք ուրեմն ո՛վ խանդակաթ ա-
ռաքինութե. զայս յիմար, եւ անզգամ աշխարհս.
զի աղաղակիցէ՝ որքան եւ կամեսցի, հանդոյն գի
շերահաւու, որ ձանձրացուցանէ զտունջենական
թռչունս: Լիցո՛ւք կայուն 'ի գործս մեր. հաս-
տատ՝ 'ի յառաջադրութիս մեր: Վասն զի յարա-
տեւութիւն առնէ, զի կարասցուք տեսանել բա-
րեպէս. թէ ա՛րդեօք ճշմարտապէս նուիրեալք
իցեմք զմեզ այ, եւ մատուցեալք առ ջերմեռանդ
կեանն: Տաւուր աստեղքն, եւ մոլորակքն. թէ-
պէտ որքան առ տեսիլս իւրեանց, երեւին հաւա
րակապէս լուսաւորք: բայց տտաւորքն չքանան
'ի մէջ սակաւ ժամանակի. այնու՝ զի նոքա ոչ են
այլ ինչ, եթէ ոչ անցաւոր հուր իմն: իսկ մոլո-
րակքն՝ մնան մշտնջենական պայծառութբ, եւ
լուսաւորութբ: Այսպէս եւ՝ կեղծաւորութին,
եւ ճշմարիտ առաքինութին, յաւէտ նմանին մի-
մեանց 'ի յարտաքս: բայց դիւրաւ տարբերին մինն
'ի միւսոյն: Վասն զի կեղծաւորութին, ոչ ունի

զկայունութիւն իմն, որոյ վն ցրուի 'ի յեղանելն: բայց ճշմարիտ առաքինութիւն, միշտ կայուն, և հաստատուն է:

Այս ոչ է փոքր անդորրութիւն իմն, զի առ'ի բարեպէս հաստատել զսկսանումն քերթողութեան մերոյ, ընդունիցիմք զանարգանս, և զնախատինս: Քանզի՝ այսու կերպիւ, փախչիմք մեք 'ի յարօգայթէ ունայնասիրութեան, և հպարտութեան. որք են իբրև դայեակք եգիպտացւոց, որոց հրամայեալ է դժոխայինն փարաւօն, զի սպանանիցեն զարու մանկունս, 'ի նոյն աւուր ծննդեան նոցին: Արդ որովհետև, մեք 'ի խաչ ելեալ եմք ընդդէմ աշխարհի. և աշխարհ ևս պարտի 'ի խաչ ելանել ընդդէմ մեզ: Նա վարկանէ զմեզ իբր յիմար, մեք ևս պարտիմք համարել զնա՝ որպէս անզգայ:

Յաղագս թէ՝ պիտոյ է ունել շնորհս արթնութեան, և քաջութեան:

## Գլուխ. Բ:

Թէպէտ լոյսն է գեղեցիկ, նաև ցանկալի աչաց հայելոյ. սակայն այսու ամիւ, մ'թացուցանէ զաչս՝ յետ մնալոյ նր երկարապէս 'ի խաւարի: Յառաջ քան թէ ընտելացեալ իցէ ոք ընդ բնակիչս քաղաքի ուրուք, թէ և իցեն նոքա մարդավարք և հաճելիք, կերպիւ իմն երկնչի ոք 'ի նոցանէ: Արդ կարէ լինել՝ ո'վ խանդակաթդ առաքինութեան. թէ յայսպիսւոյ փոխմանէ վարուց, լինիցին 'ի ներքս քո բազում անդորրութիւնք, և դիւրութիւնք: Բայց եթէ պատահիցի քեզ, զի այս մեծ, և ընդհանուր բարեմնաս, զոր տաս դու

յիմա

յիմարութեն, և խելագարութեն աշխարհի, պատճառեցէ 'ի քեզ զզգացումն իմն տրտմութեն, և վհատութեն: Աղաչեմ զքեզ՝ համբերեա սակաււիկ մի, զի այս է ոչինչ իմն: Նաև ոչ է այլ ինչ, եթէ ոչ խուռն ինչ զարհուրումն, զոր նորութին և անսովորութին առբերէ քեզ: քանզի 'ի անցանիլն այսօրիկ, ընկալնուս դու զբազմազան մխիթարութիւնս: Թէրևս 'ի սկզբան տայ քեզ զձանձրութիւն՝ վն թողլոյ զփառս, զոր տային քեզ յիմարքն, և շողոքորթքն՝ վն քոյոյ ունայնութեն: Բայց աւաղ. մի՞թէ կամիս վն այն՝ կորուսանել դու զյաւիտենական ճշմարտութիւնն, զոր տայ քեզ Ած: Ունայն կենցաղավարութիքն, և զբօսանքն, յորս դու վատնեցեր անցեալ ամս քո, տակաւին ներկայացուցանին 'ի սրտի քում, առ 'ի շարժել և դարձուցանել զնա 'ի կողմն իւրեանց: Որոյ վն, և դու ունիս զսիրտ՝ առ 'ի հրաժարիլ և հեռանալ յայնմանէ յաւիտենականութէ, վասն պատրող և չնչին ունայնութեն: Բայց հաւատա ինձ. զի եթէ յարատևիցես դու. ոչ յամենաս ընդերկար՝ առ 'ի ընդունիլ զայնքան հեշտալի քաղցրութի սրտի. և առ 'ի խոստովանիլ՝ թէ աշխարհ ոչ ունի զայլ իր ինչ, եթէ ոչ ըզդառնութի միայն, բաղդատմամբ քաղցրութեանս այսօրիկ: Նաև խոստովանեսցիս. թէ մի միայն օրն ջերմեռանդութեն, աւելի արժէ քան զհազար ամս աշխարհային կենաց:

* Բայց դուցէ 'ի տեսանելն քո, թէ լեառն քրիստոնէականի կատարելութեն՝ յոյժ բարձրագոյն է 'ի գագաթն. ասիցես 'ի քեզ: ո՞հ Տր իմ. ո՞րպէս կարիցեմ ելանել ես անդ: Արիացի՛ր, և քաջ լեր՝ ո՛վ խանդակաթդ առաքինութեն, և մի՛ վհատիր: Վն զի մինչ դեռածին, և փոքրագոյն մեղուքն սկսանին ձևաւորիլ՝ կոչին ձագք, որոյ վն տակաւին յայնժամ ոչ կարեն թռչիլ 'ի վր ծաղկանց,

'ի վր

'ի վր լերանց, և 'ի վր մերձաւոր բլրոց, առ'ի ժողովել զմեղրս : Բայց սակաւ առ սակաւ ընտանելով մեղերբք, որք պատրաստեալք են 'ի մարց իւրեանց, այնու արձակեն զԹևս, և այնպէս զօրանան, մինչ զի Թռչին յետոյ ընդ ամ դաւառս, առ 'ի յորոնել զծաղկունս :

Արդ՝ այս ճշմարիտ խնն է. զի մեք տակաւին եմք փոքրադոյն մեղուք քերթողանդութեն. որոյ վս ոչ կարեմք ելանել և բարձրանալ ըս կերպի դիտման, և նպատակի մերոյ. որ ոչ է այլ ինչ, եթէ ոչ հասանիլ առ գագաԹն քրիստոնէականի կատարելութեան : Բայց եթէ սկսանիցիմք առնուլ զձևակերպութիւս՝ 'ի ձեռն ըղձից և առաջադրութեց մերոց, յայնժամ սկսանին արձակիլ և ելանել Թևքն մեր : Պիտոյ է ուրեմն յուսալ, թէ յաւուր միում լինիմք նաև հոգևոր մեղուք, և Թռչիմք : սակայն յայսմիկ միջոցի, ընտանիցուք մեղերբք խրատուց, զորս պատրաստեցին մեզ հնագոյն քերթողանդքն : Եւ աղաչեսցուք զնծ, զի տացէ մեզ զԹևս ոպ աղաւնւոյ. 'ի ձեռն որոց ոչ միայն կարիցուք Թռչիլ 'ի կացութե ներկայ կենիս. այլ նաև հանգչիլ յապառնի յաւիտենականութեան :

Յաղագս բնութեան փորձութեան ։ Եւ յաղագս պահպանութեան՝ որ գտանի 'ի մէջ զգալոյ փորձութեանս, և հաստատելոյ առ այնս ։

## Գլուխ ․ Գ ։

Ներեւակերպացո՛ 'ի քեզ՝ ո՛վ խանդակաթդ առաքինութեան ․ զազնուամեծ երիտասարդուհի ոմն, որ ծայրագունապէս սիրեցեալ է 'ի փեսայէն իւրմէ ։ Ուստի եթէ անօրէն այր ոք, առ 'ի խոտորեցուցանել զնա, և առ 'ի ապականել զանկողին հարսնութեան նորին, առաքիցէ առ նա զվատահամբաւ միջնորդ իմն մոլեկան սիրոյ, առ 'ի խօսիլ ընդ նմա զչար դիտաւորութենէ իւրմէ ։ Յայնժամ նոյն չարաճճիկ միջնորդն, նախապէտաբար առաջադրէ իշխանուհւոյն այնմիկ՝ զդիտաւորութիւն առաքողին իւրոյ ։ երկրորդապէս ․ նոյն իշխանուհին՝ կամ հաճի, կամ ոչ հաճի առաջադրութեան, և միջնորդութեան ։ երրորդապէս ․ կամ հաւանի նմա, և կամ անդոսնէ զնա ։ Այսպէս եւս՝ սատանայն ․ աշխարհն ․ և մարմինն ․ տեսանելով զհոգի ոմն, որ հարսնացեալ է որդւոյն այ, առաքեն և յղեն առ նա զթելադրութիւնս, և զփորձութիւնս ։ 'Ի ձեռն որոց, նախ առաջադրեն նմա զմեղս ։ երկրորդ ․ կամ հաճոյանայ նմա այս, և կամ ոչ ։ երրորդ ․ կամ հաւանի նմա վերջապէս, և կամ արհամարհէ զնա ։ Վ՛ս զի այսոքիկ են երեք աստիճանք, առ 'ի լինել յանօրէնութիւնս ․ որք են փորձութիւն ․ հեշտութիւն ․ և հաւանութիւն ։ Եւ զի թէպէտ այսոքիկ ներգործութիւնքս, ոչ ճանաչին այնքան յայտնապէս 'ի բնաւ

տե-

տեսակս մեղաց : սակայն յոյժ զգուշապէս ճանաչէին 'ի մեծամեծ , և 'ի գարշելի մեղս :

* Յորժամ փորձութիւն՝ որպիսի և իցէ մեղաց ; մնասցէ 'ի բոլոր բնաւ կեանս մեր , ոչ երբէք կարէ առնել զմեզ անհաճոյ ածայնոյ հանդիսավեհութեանն · միայն թէ՝ անհաճոյանայցէ այն մեզ , նաև ոչ հաւանիցիմք նմա : Եւ՞ պատճառ սորին է · զի մեք ոչ եմք ներգործօղք 'ի փորձութեն , այլ եմք կրօղք : ուստի մինչ ոչ ընկալնումք զհեշտութի ինչ յայնմանէ · այնու ոչ կարեմք ունել զտեսակ ինչ մեղաց : Սբն Պօղոս երկարապէս կրեաց զփորձութիս մարմնոյ · սակայն այնու ոչ եղև անհաճոյ այ · այլ հակադարձապէս՝ ած փառաւորիւր 'ի նմա : Սրբուհին անճէլա ևս՝ այնքան խստաբար կրեաց զմարմնական փորձութիս , որոյ պատմելն միայն շարժէ զմն ոք 'ի ցաւակցութիւն : Մեծամեծք եղեն նաև փորձութիւքն , զորս կրեցին սբն Ֆրանչիսկոս , և սբն բեռնարտոս : աղագաւ որոց՝ մինն ընկէց զինքն 'ի մէջ փշոյ , և միւսն 'ի մէջ ձեան , առ 'ի մեղմել զայնս : Բայց սակայն այսու ամի՞ , ոչ կորուսին կէտ մի զշնորհն ածային · այլ մանաւանդ յոյժ առաւել աճեցուցին զնա :

* Պարտ է ուրեմն՝ ո՛վ խանդակաթդ առաքինութեան · յոյժ արիագոյն և քաջագոյն լինել 'ի մէջ փորձութեց · և ոչ երբէք կարծել յաղթիլ , մինչ անհաճոյք են այնք քեզ : Բարեա̃ պահել պարտիմք զայս զանազանութիս , որ գտանի 'ի մէջ զգալոյ , և հաւանելոյ փորձութեց : Քանզի կարեմք մեք զգալ զնոս՝ առանց հաճելոյ 'ի նս · բայց ոչ կարեմք հաւանիլ , առանց հաճելոյ 'ի նս : Վս զի հասարակապէս՝ հեշտանալն է պատճառ առ 'ի հաւանիլ 'ի հաւանումն : Ուրեմն՝ թէև թշնամիքն փրկութեան մերոյ , ներկայացուսցեն մեզ զայնքան թելադրութիս , և համոզմունս , որքան

և

և կարիցեն. թէև կայցեն միշտ առ դուռն սրտի մերոյ՝ առ՚ի մտանել ՚ի ներքս. թէև առնիցեն մեզ զայնքան ստիպմունս, որքան և կամիցին։ Այսու ամենայնիւ, մինչ մեք առաջադրեմք ոչ հեշտանալ ՚ի նոսա, ոչ է կարելի, թէ այնու վշտացուցանեմք զԱստուած։ այլ և իշխանուհին այն, (զորմէ ասացաւ) ոչ վշտացուցանէ զփեսայն իւր, և ոչ ես կամի զչար, մինչ ոչ ընկալնու զհեշտութիւն իմն յառաջադրեցելոյ իւրեանն ՚ի ձեռն չար միջնորդին։ Բայց սակայն, դոյ այս մասնաւոր զանազանութիւն ՚ի մէջ հոգւոյ, և ՚ի մէջ իշխանուհւոյն։ Վասն զի իշխանուհին, ՚ի լսելն զանպարկեշտ առաջադրութիւն զայն. կարէ հաճիլ առ այն, և կարէ ՚ի բաց վանել զմիջնորդն՝ առ՚ի ոչ լսել նմա։ Սակայն ոչ է միշտ ՚ի ներքոյ կարողութեան հոգւոյ մերոյ՝ առ՚ի ոչ զգալ զփորձութիւնս. թէև իցէ ՚ի ներքոյ կարողութեան իւրում ոչ հաւանիլն նմա։ Աստուստ է. զի թէ և յարատևիցէ ՚ի մեզ փորձութիւն ընդ երկար ժամանակս, ոչ երբէք կարէ վնասել մեզ, մինչ ոչ համահաճիմք նմա։

* Բայց որքան առ հեշտութիւն, որ կարէ հետևիլ ՚ի փորձութենէ, ասեմ։ Թէ մեք ունիմք ՚ի հոգւոջ մերում զերկու մասունս. մինն ստորին դոյն, և միւսն վերնադոյն. և ստորնադոյնն ոչ հետևի միշտ վերնադունին, այլ մանաւանդ առնէ զգործն իւր ըստ իւրեան։ Որոյ վն պատահի բազմիցս, զի ստորնադոյն մասն հեշտանայ ՚ի փորձութեն՝ առանց հաւանութեան վերնադոյն մասին, և մանաւանդ ընդդէմ կամաց նորին։ Այս է վիճումն, և մարտն, զորմէ գրէ սուրբն պօղոս, մինչ ասէ։ Մարմին. ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ։ Նաև այն թէ. Տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ, զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց։ և զայլ այսպիսի բազում բանս։

* Արդ վարկեմ թէ՝ ո՛վ խանդակաթդ առաքի-

նու-

նութե̃ն . տեսեալ իցես զըղըւմ հրացեալ ածուխս ծածկեալ 'ի ներքոյ մոխրոյ : ուստի մինչ գնայ ոք յետ 10. և 12. ժամու՝ առ 'ի խնդրել զհուր , ոչ զայլ ինչ գտանէ անդ , եթէ ոչ զսակաւ ինչ հուր , և զայն ևս դժուարաւ , և հազիւ : Բայց սակայն անդ է նոյն հուրն . որովհետև գտանելով ոք զայն սակաւն , այնու կարէ վառել , և կենդանա ցուցանել զայլս ածուխս , որք արդէն շիջեալք են : Արդ ըստ նմին՝ այսպէս մտածելի է յաղագս սիրոյ , ( որ է հոգևոր կեանք մեր ) 'ի մէջ մե ծամեծ , և բազմաւոր փորձութեանց : Վ̃ զի փոր ձութիւն արկանելով զհեշտութիւն իւր 'ի յստոր նագոյն մասն հոգւոյ . թուի թէ այնու ծածկէ մոխրով զհոգին , և զսէրն նոյ̃ ածէ 'ի փոքրագոյն կացութե̃ն : Քանզի ոչ երևի այլ ևս նա 'ի մասի իմիք , եթէ ոչ 'ի մէջ սրտի , և 'ի խորս մտաց . նաև թուի թէ՝ նա ոչ իցէ անդ . ուստի դժուա րագոյն լինի առ 'ի գտանել զնա : բայց սակայն ճշմարտապէս նա է անդ : Վ̃ զի թէպէտ նմ իւր՝ 'ի յստորին մասն հոգւոյ մերոյ , և 'ի մարմնի մե րում՝ աղմկեցեալ է : սակայն նոքօք մեք տակաւին հաստատունք , ոչ հաւանելով մեղաց , և փոր ձութեանց . թէև իցեմք 'ի մէջ փորձութեանց : Ուս տի և հեշտութիւն , որ է հաճելի արտաքին մար դոյն , եթէ անհաճոյ լինիցի ներքին մարդոյն մեր . յայնժամ թէև կայցէ նա բոլորովին շուրջ զկամօք մերովք , այսու նմին ոչ կարէ մտանել 'ի նա : Որով յայտ եղանի իսկ . թէ այնպիսի հեշ տութիւն՝ վասն գոլոյն ակամայ , ոչ կարէ լինել մեղք :

## Երկրորդ Գեղեցիկ օրինակ, 'ի վերայ նոյն առարկայի և Նիւթոյ:

### Գլուխ. Դ:

Յոյժ հարկաւոր է բարեպէս իմանալ զայն, զոր ասելոցեմ. զի մի՛ դուցէ դժուարացուցից զերն 'ի մեկնելն զնա: Այն երիտասարդն, զորմէ խօսի սբ̃ն Ջերոնիմոս. թէ ընկղմանեցուցեալ, և կապեցեալ էր փափկապէս 'ի վր̃ կակուղ անկողնոյ միոյ. և գրգռիչ ամենայն կերպ անպարկեշտ շօշափմամբ, և գործով, յանպարկեշտ կնոջէ միոյ, որ կայր ընկղմանեալ առընթեր նր̃, առ 'ի բեկանել զհաստատութիւն նորին: Մինչ թէ կարելի լիցէր նմա՝ ոչ զգալ զմարմնական անկարգ շարժմունս, և ոչ ըմբռնել զզգայութիւնս նորին 'ի հեշտութէ, և երևակայութիւնս ոչ շփոթել 'ի հեշտացուցիչ ներկայ առարկայէ: առանց երկբայութեան՝ ո՛չ: Բայց սակայն վկայէ թէ, 'ի մէջ այնքան աղմկութեանց, և ալէկոծութեանց, ոչ յաղթեցաւ սիրտն իւր՝ գոնեայ կէտ մի. և կամքն իւր, որ զգայ շուրջ զիւրև զայնքան հեշտութիս, այսու ամիւ̂ ոչ հաւանեցաւ բնաւին: Քան զի տեսանելով հոգի նորին ապստամբեալ յինքենէ ամ̃ ինչ. և ոչ ունելով զայլ իմն մասն մարմնոյ իւրոյ 'ի ներքոյ հրամանաց իւրոց, եթէ ոչ զլեզուն միայն: Ուստի առժամայն էհատ զնա ատամօքն, և եթուք յերեսս այն գարշելի լկտւոյն. որ առաւել անողորմաբար տանջէր զնա հեշտութեամբ, քան թէ կարիցէին չարչարել դահիճքն տանջանօք: Վասն զի բռնաւորն, որ յուսահա-

տեալ էր յաղթել զնա բռնութք, խորհեցաւ յաղթահարել զայն այսպիսի հեշտութք:

* Պատմութիւն պատերազմի սրբուհւոյ կատարինէի սենացւոյն, է համանման պատահմն իմն զարմանալի. որոյ վճ համառօտապէս ասացից: Չոգին չարութն ունեցաւ զթոյլատրութի ինչ յմյ, ապատակ լինել պարկեշտութեն սրբուհւոյ կուսիս այսորիկ, մեծագոյն կատաղութք որքան և կարէր. բայց թարց շօշափելոյ զնա: Մղեաց ուրեմն չարն զընաւ տեսակս անպարկեշտ թելադրութե 'ի միտս նորին: Եւ առ 'ի առաւել շարժել զնա, ձևակերպեաց զընկերս իւր 'ի ձև արանց, և կանանց. 'ի ձեռն որոց առնէր 'ի ներկայութե նորին՝ զանթուելի տեսակս անպարկեշտութե, և մարմնական մեղաց. առակցելով նաև զանպարկեշտ խօսս, և զանհամեստ հրաւիրմունս: Եւ զի թէպէտ բնաւ իրակութիք այսորիկ էին արտաքինք. բայց միջնորդութք ըղգայութեցն՝ թափանցեալք լինէին 'ի ներկայութեան սրտի կուսին: Ոպ նոյն ինքն խոստովան լինի զինքենէ. թէ բոլորովին լի էր միտն իւր այնպիսի գարշելի իրակութք. և ոչ մնացեալ էր առ ինքն այլ իր ինչ մաքուր, եթէ ոչ միայն վերնագոյն կամքն, որ ոչ շարժեցաւ բնաւ յայսպիսեաց ալէկոծութեց, մարմնական աղտեղութեց, և հեշտութեց: Եւ այս այնքան ընդերկար ժամանակաւ մնաց 'ի նա, մինչ զի յաւուր միում մինչ երևեցաւ նմա Տրն. ասաց նմա կոյսն: Ո՛ւր էիր դու՝ ո՞վ Տէր իմ, մինչ լի էր միտն իմ այնքան խաւարօք, և աղտեղութք: Առ որ պատասխանեաց փրկիչն. Ո՞վ դուստր իմ, ես էի յայնժամ 'ի մէջ սրտի քոյ: Եւ նա դարձեալ էհարց. ոպ կարէիր բնակել դու 'ի մէջ սրտի իմոյ, յորում էին այնքան աղտեղութիւնք. մինթէ կարելի իցէ բնակել քեզ 'ի յայնքան անհամեստ տեղւոջ: Եւ Տրն

մեր

մեր ասաց նմա ։ Ասա ինձ ո՛վ դուստր իմ․ զի՛նչ պատճառէին 'ի քեզ այնպիսի աղտեղի խորհուրդքն․ ա՛րդեօք հաճութեա՞ն, թէ տրտմութեա՞ն․ դա՛ռնութեա՞ն, թէ հեշտութեա՞ն ։ Ասաց կոյսն․ պատճառէին առիս զմեծագոյն դառնութիւն, և տրտմութիւն ։ Ուստի պատասխանեաց փրկիչն․ և ո՛վ էր այն, որ դնէր զայնպիսի մեծագոյն ցաւս, և տրտմութիւն 'ի սրտի քում․ եթէ ոչ ես, որ գաղտաբար բնակէի 'ի մէջ հոգւոյ քոյ ։ Զի եթէ ես ոչ լցէի ներքոյ անդ, այն խորհուրդքն՝ որք կային շուրջ զկամօք քով, և ոչ կարէին ասպատակել զնա․ առանց երկբայութեան յաղթահարէին զնա, և մտանէին 'ի ներքս, և ընդունեալք լինէին հեշտութեամբ յանձնիշխանութենէ քումմէ․ և վերջապէս տային զմահ հոգւոյ քոյ ։ Բայց որովհետև ես կայի անդ․ դնէի զայն տհաճութիւն, և յանդիմանութիւն 'ի մէջ սրտի քոյ, որով արհամարհէր նա զայնս փորձութիւնս, որքան և կարէր ։ Ուստի ոչ կարելով նա այնքան մերժել և յաղթել, որքան կարէր․ այնու զգայր յինքն զմեծագոյն տհաճութիւն, և ատելութիւն ընդդէմ նոցա, և ընդդէմ ինքեան ։ Եւ այսու կերպիւ․ նեղութիւնքն այնոքիկ, էին մեծագոյն արդիւնք, և շահաւէտութիւնք վասն քո․ և մեծագոյն աճումն առաքինութեան, և զօրութեան քոյ ։

* Ահա տե՛ս ուրեմն՝ ո՛վ խանդակաթդ առաքինութեան․ թէ ո՛րով կերպիւ հուրս այս ծածկեցեալ էր մոխրով․ և ո՛րպէս փորձութիւնքն, և հեշտութիւնքն մտեալք էին 'ի սրտի նորին, և պաշարեալք էին զկամքն ։ Նաև տե՛ս թէ․ ո՛րպէս օժանդակեցեալ լինիւր 'ի փրկչէն իւրմէ ։ և ո՛րպէս ընդդիմանայր չար թելադրութեանն ( դառնութեամբ, տհաճութեամբ, և արհամարհամբ ) զոր սերմանեալ էր 'ի նմա թշնամին ։ Նաև ո՛րպէս միշտ անգոսնէր զնա, ոչ տալով զհաւանութիւն փորձութեացն

և մեղացն, որք պաշարեալք էին զնա, առ՚ի կոր-
ծանել: Ո՜հ. ո՛վ խորք մեծութե՟ն ա՟յ. ո՛րպիսի
մարտիրոսութի է այս, զոր կրէր հոգի ո՟մն՝ որ
սիրէր զա՟ծ, վ՟ն ոչ գիտելոյ միայն զայս. ա՛ր-
դեօք ա՟ծ իցէ ընդ ինքեան, թէ ոչ: և կամ թէ,
ա՛րդեօք սէրն ա՟ծային՝ որով պատերազմի նա,
բոլորովին շի՛ջեալ իցէ, թէ ոչ: Բայց սակայն
այսու ա՟մի՟ւ, այս է փափկագոյն ծաղիկն երկ-
նային սիրոյ, որ առնէ համբերել և պատերազմիլ
զտիրատենջն՝ վասն սիրոյ, թարց գիտելոյ. թէ
արդեօք ունի զսէր, որոյ միջնորդութե՟ն, և որոյ
վ՟ն պատերազմի ինքն:

Յաղագս քաջալերութե՟ հոգւոյ, որ կայ ՚ի մէջ փոր-
ձութեան:

## Գլուխ. Ե:

Սոյնպիսի մեծագոյն յարուցմունքս, և
այսքան հզօրագոյն փորձութիւնքս՝
ո՛վ խանդակաթդ առաքինութե՟. ոչ
երբէք թոյլատրեցեալք լինին յա՟յ գալ
առ այլս ումանս, եթէ ոչ այնպիսի հոգւոց, զորս
կամի նա բարձրացուցանել առ մաքուր, և առ
գերազանց սէրն: Բայց սակայն այսու ա՟մի՟ւ, ոչ
է պարտ մնալ տակաւին յետ այնքան պատերազ-
մաց՝ անդորր, և անկասկած: Վասն զի բազում
անգամ պատահեալ է այս. զի այնոքիկ, որք հաս-
տատունք, և զօրեղք էին ՚ի բռնաւոր յարուց-
ման, և փորձութե՟. վ՟ն ոչ համապատասխանելոյ
յետոյ հաւատարմաբար ա՟ծայնոյ շնորհացն, յաղ-
թահարեցեալք եղեն յառաւել փոքրագոյն փոր-
ձութէ: Զայս այնու աղագաւ ասացի քեզ. զի
եթէ

եթէ պատահիցի երբեմն և քեզ, յարուցմունք այսպիսի մեծամեծ փորձութեանց. գիտիցես, թէ ա՟ծ օգնէ քեզ արտաքոյ կարգի օգնութ՟բ միով, նաև կամի մեծացուցանել զքեզ առաջի երեսաց իւրոց։ Բայց սակայն այսու ամենիւ, պարտիս լինել միշտ խոնարհ և երկիւղած. նաև ոչ պարտիս անկասկած առնել զքեզ, առ՚ի կարել յաղթել զփոքրագոյն փորձութիւնս, յետ յաղթելոյ քոյ զմեծամեծ փորձութիւնս, եթէ ոչ շարունակ, և յարատև հաւատարմութ՟բ՝ դէպ առ իւր ա՟ծային հանդիսավեհութիւնն։

* Ուրեմն եթէ յառնիցէ ՚ի վերայ քո՝ ո՛րպիսի և իցէ փորձութիւն, և եթէ հետևիցի անտի ո՛րպիսի և իցէ հեշտութիւն. մինչ կամքն քո հրաժարի առ՚ի տալ նմա զհաւանութիւն, ամենևին մի՛ խռովիր, և մի՛ վրդովիր երբէք. ոչ միայն ՚ի փորձութենէն, այլ նաև ՚ի հեշտութենէն. զի այնոքիւք ոչ վշտացուցանի ա՟ծ. Յորժամ մ՟դ որ անկեալ է ախտիւ ուշաթափութեան, և ոչ տայ զնշան իմն կենաց. եթէ դնիցի ձեռք ՚ի վ՟ր սրտի նորին, թէև որքան սակաւ և իցէ շարժումն սրտին, որ զգացեալ լինի. այնու ենթադատեցեալ լինի, թէ նա կենդանի է։ ուստի միջնորդութ՟բ պատուականագոյն ջրոյ, և կամ դեղոյ իմիք, կարէ տալ նմա զօրութիւն, և սթափումն։ Այսպէս պատահի և մեզ երբեմն. զի բռնութ՟բ փորձութեանն՝ թուի թէ անկեալ և նուաղեալ իցէ հոգին մեր ՚ի զօրութենէ իւրմէ բոլորապէս. և իբր ախտակրեալ ուշաթափութ՟բ՝ ոչ ունի զհոգևոր կեանս, և շարժմունս։ Բայց եթէ կամիցիմք մեք ճանաչել զնա. դիցո՛ւք զձեռս մեր ՚ի վ՟ր սրտի մերոյ, և նկատեսցուք. թէ ա՟րդեօք սիրտն, և կամքն մեր՝ ունին տակաւին զհոգևոր շարժումն իւրեանց։ Այսինքն. ա՟րդեօք առնեն, որ ինչ պարտ է ինքեանց, առ՚ի ՚ի բաց հրաժարիլ ՚ի տալոյ զհաւա

նութիւն, և հեռևելոյ փորձութեան, և հեշտութեան: Վ̃ զի մինչ շարժումն 'ի բաց հրաժարման, և տհաճութիւն՝ գոյ 'ի մէջ սրտի մերոյ. մեք անկասկած և ապահով լինիմք: զի սէրն՝ որ է կեանք հոգւոց մերոց, է տակաւին 'ի մեզ. և փրկիչն մեր Յս̃ ևս՝ գտանի արդէն 'ի մէջ հոգւոց մերոց, թէպէտ գաղտնի, և թագուն: Ուստի հետևապէս, միջնորդութբ̃ կրթութեան շարունակ աղօթից, և սրբազնութեանց, և ապաւինութեան 'ի յա̃ծ. զօրութիւնքն մեր վերադառնան 'ի մեզ, և կենդանանամք ամբողջ, և զուարճալի կենօք:

## Յաղագս թէ՝ ո՛րով կերպիւ կարէն գոլ մեզ փորձութիւնք, և հեշտութիւնք:

### Գլուխ. Զ:

Իշխանուհին (զորմէ խօսեցաք 'ի վեր անդր) ոչ եղև պատճառ անհամեստ խնդրոյն, որ առաջադրեցաւ նմա. որովհետև ենթադրեցաք, թէ եղև ընդդէմ կամաց նր̃: Բայց հակադարձապ̃, եթէ ժպտութբ̃ իմիք տայցէր զառիթ, և զնշան հաւանութեան, առ այն՝ որ փաղաքշիւր, և խանդաղատիւր զնովաւ. յայնժամ աներկբայապէս յանցաւոր լինէր նոյն խնդրոյն, (թէև առնիցէր զայն զգուշապէս) և ոչ թողանիւր ևս առանց նախատանաց, և պատժոյ: Այսպէս պատահի երբեմն և մեզ. զի միայն փորձութիւն դնէ զմեզ 'ի մեղանչել. այնու՝ զի մեք լինիմք պատճառք նորին: Զոր օրինակ. մինչ գիտեմ ես, զի խաղալով ըղթուղթս, ըղթավլուս, և զայլ խաղս՝ դիւրապէս բարկանամ, և հայհոյեմ. նաև գիտեմ, զի այն-

պիսի

պէսպէս խաղացմունքն՝ դրդուեն զիս 'ի փորձութիւն :
և այսու ամի՟ եթէ տակաւին խաղամ, պարտա_
ւոր լինիմ ամ՟ց փորձութեանց, որք պատահին ինձ
'ի մէջ այնց խաղուց : Նաև մինչ գիտեմ ես. թէ
կենցաղավարութի իմն, է պատճառ փորձութեան,
և անկման իմոյ. և այսու ամի՟ տակաւին յօժա_
րապէս կենցաղավարիմ. առանց երկբայութեան
պարտաւոր, և յանցաւոր եմ ամ՟ց փորձութեանց,
զորս ընկալնում 'ի նմանէ :

* Հեշտութիւն, որ յառաջադայի 'ի փորձութէ,
մինչ կարէ մերժիլ. ընդունիլն զնա՝ միշտ է մեղք:
այնքան, որքան և հեշտութիւն՝ որ առնանի, և կմ՟
հաւանութիւնն՝ որ նմա տրի, իցէ մեծ, և կամ
փոքր. երկար, և կմ՟ սակաւ ժամանակեան : Միշտ
նախատելի իր իմն վարկանելի է իշխանուհ_
ւոյն՝ (զորմէ խօսեցաք) ոչ միայն այն, եթէ կամի
լսել զաղտեղի, և զանպարկեշտ առաջադրութիւն,
որ արարեալ լինի նմա. այլ նաև այն, եթէ զկնի
լսելոյ՝ հաճի առ այն, յամեցուցանելով հեշտու
թի՟ զսիրտն իւր յայնմիկ առարկայի : Քանզի թէ
պէտ նա ոչ կամի հաւանիլ իրականաբար կատար
ման թելադրութեան այնորիկ, որ առաջադրի ին
քեան : սակայն հաւանի հոգևորապէս՝ հպեցուց
մամբ սրտի իւրոյ, վ՟ հեշտութեան՝ զոր ընկալու :
Վ՟ զի միշտ է անհամեստ իր իմն, հպեցուցանել
զսիրտն, և կամ զմարմինն իւր, առ անպարկեշտ
և առ անհամեստ իրս : որովհետև անհամեստու
թիւն այնպէս կայանայ 'ի հպեցման սրտի, մինչ
զի թարց նմա հպեցումն մարմնոյ, ոչ կարէ
գոլ մեղք :

* Յորժամ փորձեցեալ ես դու մեղօք իմիք. մտա
ծեա զայս. արդեօք դու տուեր կամաւորապէս
զառիթ փորձեցեալ գոլոյ : Եւ եթէ իցէ այսպէս.
յայնժամ նոյն փորձութիւն դնէ զքեզ 'ի կացու_
թեան մեղաց, վ՟ որոգայթին՝ յորում եդեր զքեզ:

Եւ՛ այս խմանի վ՟ն այնպիսի փորձութեն, զոր նա խապէս տեսեր. և 'ի պատճառէ որոյ կարէիր փախչիլ անդորրապէս ։ և կամ թէ կարէիր նա_ խատեսանել զյարուցումն, և զվերահասանիլն նորին ։ Բայց եթէ ոչ տուեր դու զառիթ իմն փորձութեն, այնու ոչինչ կերպիւ կարէ նա հա_ մարիլ քեզ 'ի մեղս ։

* Մինչ հեշտութիւն, որ հետևի, և յառաջա_ դայի 'ի փորձութենէ, և կարէ մերժիլ. բայց ոչ զգուշացեալ լինի առ 'ի մերժիլ, միշտ գտանի անդ տեսակ իմն մեղաց. ՟ն որում սակաւ, կամ առա ւել յամեցեալ լինի անդ. և ՟ն հեշտութեն, զոր ընկալեալ լինի 'ի նմանէ ։ Կին ոք, թէև ոչ իցէ տուեալ զառիթ, առ 'ի լինիլ նկատեցեալ յարանց արատ աչօք ։ բայց եթէ հեշտանայցէ 'ի նկատիլն այնու հայեցուածով, այս ոչ թողանի անպարտ 'ի նախատանց ։ Սակայն եթէ հեշտութիւն, զոր նա ընդունի, ոչ ունի զայլ ինչ պատճառ, եթէ ոչ միայն վայելուչ երևումն. ոչ լինի անդ մեղք ։ Զոր օրինակ, եթէ երգիչ, և երաժիշտ ոք, կամե լով առնել սէր ընդ կնոջ ումեք, այնու լաւապէս երգիցէ, կամ հնչեցուցանիցէ զգործիքս երգոյն, Թէպէտ նա 'ի լսելն զայն եղանակն հեշտանայ ։ բայց ոչ հեշտանայ առաջարկեալ դիտաւորութն և խնդրոյն երգչին. այլ եղանակաւն և քաղցրու թեն երգոյն, և կից նուագարանին. որոյ վ՟ն ոչ լինի անդ մեղք ինչ ։ Սակայն ոչ պարտի երկարա պէս տևել յայնմիկ հեշտութեն. և այս վ՟ն երկիւ ղին, զի մի գուցէ անցանիցէ 'ի հեշտութենէ եղա նակին, առ հեշտութիւն խնդրոյն ։ Այնդունակ, նաև եթէ ոք ցուցանէ ինձ զնրբագոյն ար_ ուեստ, և հնար իմն, առ 'ի առնուլ զվրէժ 'ի թշ նամւոյ իմոյ ։ Եւ՛ ես եթէ հեշտանամ միայն վ՟ն նրբութեն արուեստին, և հնարոյն. և ոչ հաւանիմ և հեշտանամ առ 'ի առնուլ զվրէժ. առանց երկ

բայու

բայութն ոչ մեղանչեմ: Բայց սակայն ոչ պարտիմ առնել յամիլ յայսպիսի հեշտութն, վասն երկիւղի. զի մի՛ գուցէ նոյն հեշտութենն նրբութն, քարշիցէ զիս առ հեշտութենն վրէժխնդրութեան:

* Երբեմն ըմբռնի ոք 'ի յանյարմար հեշտութէ միոյ, որոյ անմիջապ հետևի փորձութենն, յառաջ քան թէ ճշմարտապէս զգացեալ իցէ: Եւ՞ այս ոչ է այլ ինչ. եթէ ոչ թեթևագոյն ներելի մեղք իմն, որ լինի մեծագոյն մեղք. եթէ ոք զկնի որոյ մինչ զգաց զչարն (յորում և գտանի) յամի անդ հեղգութբ ժամանակ ինչ, առ'ի սակարկել վասն հեշտալւոյն. թէ արդեօք պիտոյ իցէ ընդունիլ զնա, թէ մերժել: Եւ՞ լինի ևս մեծագոյն. եթէ ոք զգալով, և իմանալով՝ յամենայ անդ ժամանակ ինչ զուտ հեղգութբ, և առանց առաջադրութն իմիք՝ առ'ի բաց մերժել զնա: Բայց մինչ կամաւորապէս, և ազատական առաջադրութբ յառաջադրեմք՝ հաճիլ և հեշտանալ առ այնպիսի հեշտալին. յայնժամ այս ազատական և ընտրեալ առաջադրութիւն է մեծագոյն մեղք. եթէ յայտնապէս չար իցէ առարկայն, որով հեշտանամք մեք: Մեծ մոլութի է կնոջ միոյ՝ խօսակցիլ և յամենալ յայնպիսի սիրոջ. թէև ոչ կամիցի իրականապէս տրիլ 'ի յաւար սիրահարեցելոյն:

Յա-

## Յաղագս դեղոյ ընդդէմ մեծամեծ փորձութեանց:

### Գլուխ. Է:

Սկզբն 'ի զգալն 'ի քեզ զփորձութիւն ինչ. արա՛ այնպէս՝ որպէս և առնեն մանկունքն. որք 'ի տեսանելն զգայլ, և զարջ ինչ՝ 'ի հրապարակի, առժամայն փախչին 'ի բազուկս ծնողաց իւրեանց. և կամ գոնեայ կոչեն զնս 'ի յօգնութիւն իւրեանց: Այսպէս և դիմեա՛ դու առ Ած, կոչելով զօգնութիւնն, և զողորմութիւն նորին: Զի այս է ապեղանին, զոր ուսուցանէ մեզ Տր մեր՝ ասելով.

Աղօթս արարէք, զի մի՛ անկանիցիք 'ի փորձութիւն:

* Եթէ տեսանիցես դու, թէ յարատևէ, և աճի 'ի քեզ փորձութիւնն. աճապարեա՛ դիմել հոգւով առ 'ի գրկել զսբ խաչն. որպէս թէ տեսանիցես զխաչեալն Յս առաջի աչաց քոց: Յառաջադրեա՛ 'ի քեզ առ 'ի ոչ հաւանիլ փորձութեն, և խնդրեա՛ զօգնութեն 'ի նմանէ՝ ընդդէմ փորձութեան այնորիկ. և յարատևեա՛ բոլորապէս, առ 'ի ոչ հաւանիլ նմա, ցորքան ժամանակ և տևէ 'ի քեզ:

* Բայց մինչ արարեր զայսպիսի յառաջադրութիւն՝ առ 'ի ոչ հաւանիլ նմա, մի՛ հայիր բնաւ 'ի յերեսս փորձութեն. այլ հայեաց 'ի Տրն մեր Յս Քս: Վս զի եթէ նախկինապէս հայիցիս 'ի փորձութիւն մինչ է զօրեղ, յայնժամ կարէ նա վրդովել զօրութին քո: Դարձո՛ ուրեմն զհոգի քո առ բարի, և գովելի զբաղումն իմն. զի այսուքիկ մտանելով 'ի սիրտն քո, և տիրապետելով զնա, մերժեն և արտաքսեն 'ի նմանէ զփորձութիւն, և զչար թելադրութիւնն:

Մե-

* Մեծագոյն դեղ ընդդէմ ամից փորձութեց, թէ մեծագոյնք իցեն, և թէ փոքրագոյնք. այս է. պարզել և տարածել զսիրտս մեր առաջի խոհեմ խոստովանահօր մերոյ. նաև բացայայտել զթելադրութիւն դիւին. և ես զզգացմունս, և զխղճս մեր, զորս ունիմք։ Քանզի պարտիս զգոյշ լինիլ. զի հոգին չարութեն, որ կամի մոլորեցուցանել զմեզ. զառաջին յատկութիւնն և զդաշն, զոր խնդրէ 'ի հոգւոյ մերոյ՝ այս է. լուռ լինիլ։ Ոչ և սովորք են առնել, որք կամին մոլորեցուցանել զաղջկունս, և զկանայս. նախ քան զամենայն ինչ՝ զայս պատուիրեն նց, զգոյշ լինիլ՝ առ 'ի ոչ յայտնել զառաջադրութիւնս իւրեանց՝ հարց, և արանց իւրեանց։ Ուր հակադարձապէս՝ ած 'ի ներշնչմանն իւրում, 'ի վեր քան զամ ինչ կամի զայս. զի մեք լաւապէս ճանաչեցեալք լիցուք 'ի մեծաւորաց, և 'ի հոգևոր հարց մերոց։

* Իսկ եթէ զկնի այսոցիկ ամից, տակաւին յարատևէ, և յամառի 'ի մեզ փորձութիւն, առ 'ի նեղել և տաղնապել զմեզ։ Յայնժամ մեք ես ոչ պարտիմք առնել զայլ ինչ. եթէ ոչ յամառիլ, և յարատևել 'ի յառաջադրութեն մերում, առ 'ի ոչ հաւանիլ նմա։ Քանզի ոչ աղջկունքն ոչ կարեն հարսնանալ, ցորքան ժամանակ ասեն՝ ո՛չ։ այսպէս ես հոգին մեր, թէև վրդովեալ իցէ, ոչ կարէ երբէք մեղանչել, մինչ ասէ՝ ո՛չ։

* Մի՛ մնայցես վիճաբանիլ ը թշնամւոյն քո. և մի՛ պատասխանեսցես նմա թերևս զայլ բան ինն. եթէ ոչ զայն միայն, զոր պատասխանեաց նմա Տէրն։ Երթ յետս իմ սատանայ։ Երկի՛ր պագցես Տն այ քոյ, և զնա միայն պաշտեսցես։ Եւ ոչ ողջախոհ կինն ոչ պարտի պատասխանել՝ դռնեայ զմի միայն բան. նաև ոչ ես հայիլ 'ի յերեսն այն գարշելի շինականին, որ կցմթէ, և խոստղէ զնա, առաջադրելով նմա զանհամեստ ինչ։ Այլ ամե_

ամենեւին թողլով զնա 'ի բաց, թարց վիճելոյ ը̄ նմա, դարձուցանէ զերեսն իւր 'ի կողմն փեսային իւրոյ. և նորապէս խոստանայ, և երդնու նմա զնոյն հաւատարմութի̄, զոր խոստացեալէր յառաջ։ Այսպէս և ջերմեռանդ հոգին, տեսանելով զինքն պաշարեալ 'ի փորձութե̄ իմեքէ. ոչ ինչ կերպիւ պարտի յամենալ 'ի վիճել, և 'ի պատասխանել նմա։ Այլ պարտի դառնալ փութա̄ 'ի կողմն Յի̄ Քի̄ փեսային իւրոյ, և վերստին խոստանալ նմա բոլորովին իւր լինել՝ միայնապէս։

## Յաղագս թէ՝ պէտք է ընդդիմանալ ընդդէմ խոշորագունից փորձութեանց։

### Գլուխ . Ը։

Թէպէտ պիտոյ է ընդդիմանալ ընդդէմ մեծամեծ փորձութե̄ց, անպարտելի սրտիւ միով. նաև թէպէտ յաղթութիւնն՝ զոր բերեմք 'ի մեզ, է մեծապէս օգտակար և շահաւէտ մեզ։ Սակայն մեծագոյն յառաջադիմութի̄, և օգուտ լինի նաև ընդդիմանալն փոքրագունից փորձութե̄ց։ Վս̄ զի որպ̄ մեծամեծ փորձութիւնքն անդրազանցին որակութե̄։ այսպէս և փոքրագոյնքն՝ այնպէս անդրազանցին առաւելութե̄ թուոյ, մինչ զի յաղթութիւն այնպիսեաց, կարէ համեմատիլ յաղթութե̄ն մեծագունից։ Գայլքն, և արջքն՝ առանց երկբայութեան թէպէտ առաւել որոգայթաւորագոյնք են քան զճանճսն։ բայց ոչ լինին մեզ այնքան ձանձրացուցիչք, և վնասակարք. և ոչ ևս կրթեն զմեզ 'ի համբերութի̄ ։ Դիւրագոյն իր իմն է ոչ գործել զմարդասպանութիւն։ բայց է դժուա

դժուարին էր, փախչիլ 'ի փոքրագոյն բարկութենէ,
որոյ առիթքն պատահին մեզ յամ կիտով: Դիւ-
րագոյն էր է մարդոյ, և կնոջ՝ զգուշանալ 'ի շնու-
թենէ: բայց ոչ է այնքան դիւրագոյն զգուշանալ
'ի թիւր հայեցմանէ. 'ի տալոյ, և կամ ընդունե-
լոյ զառիթ սիրելութեն. 'ի ձկտելոյ փառաց, և կմ
'ի փոքրագոյն պատուոյ. 'ի յասելոյ, և կմ 'ի լսե-
լոյ զշողոքորթական խօսս: Դիւրագոյն էր իմն է
ոչ ունիլ ամուսնացեալ անձանց՝ զվավաշոտական
երակութին ինչ, որքան առ մարմինս իւրեանց:
բայց ոչ է այնքան դիւրին՝ ոչ ունիլ զնա որքան
առ սիրտս իւրեանց: Դիւրագոյն էր է՝ ոչ ապա-
կանել և շաղախել զամուսնական անկողինն: բայց
դժուարին է ոչ արատաւորել զամուսնականն սէրն:
Դիւրագոյն էր է՝ ոչ առնուլ, և դողանալ զիրս
այլոց: բայց դժուարին է ոչ ցանկալ իրացն այ-
լոց: Դիւրագոյն էր է՝ ոչ առնել զսուտ վկայու-
թիւն 'ի դատաստանի: բայց դժուարագոյն է ոչ
ստել 'ի կենցաղավարութեն: Դիւրագոյն էր է ոչ
արբենալ: բայց դժուարին է գոլ զգաստ: Դիւ-
րին է ոչ ցանկալ մահուան այլոց: բայց դժուա-
րին է ոչ ցանկալ վնասու նոցին: Դիւրին է ոչ
վատահամբաւել զոք: բայց դժուարին է ոչ ար-
համարհել զնա: Վերջապէս. այսպիսի փոքրա-
գոյն փորձութիւնս. որպիսիք են փորձութիւնքն
զայրացման, կարծեաց, նախանձու, սիրոյ, յիմա-
րութեն, ունայնութեն, մարդելուզութեն, ընձա-
ձկտութեն, արուեստաբանութեն, և տգեղ մտած-
ման. են ևս շարունակ կրթութիւնք այնոցիկ,
որք են առաւել ջերմեռանդք, և հոգևորք: Վ՜
այսորիկ՝ ո՛վ խանդակաթդ առաքինութեն. պի-
տոյ է մեզ, զի մեծաւ ջանիւ, և հոդունակու-
թեան պատրաստիցեմք զմեզ առ այսպիսի պատե-
րազմն: Նաև պարտիմք հաւաստիք լինիլ. զի որ-
քան առաւել յաղթութիւն ստանամք մեք ընդդէմ

թշնա

թշնամեաց մերոց. այնքան առաւել պատուական
նագոյն ակունք դնին 'ի պսակի մերում՝ յերկինս,
զոր պատրաստեալ է մեզ ած 'ի յարքայութեն իւ
րում: Որոյ վն ասեմ քեզ. զի 'ի պատրաստելն
զմեզ առ'ի քաջապէս ընդդիմանալ մեծամեծ փոր
ձութեանց, որք պատահին մեզ. պիտոյ է նաև հա_
մանգամայն պաշտպանել զմեզ 'ի յայսպիսի փոք_
րագոյն, և տկարագոյն յարուցմունս:

## Յաղագս թէ՝ որպէս պիտոյ է բժշկել զփոքրագոյն փորձութիւնս:

### Գլուխ. Թ:

ՈՐդ ուրեմն, այսոքիկ փոքրագոյն փոր
ձութիւնքս՝ ունայնութեն, կարծեաց,
նեղասրտութեն, նախանձու, սիրոյ,
և այլոց սոյնպիսեաց պատրողութեանց,
որք իբրև զճանճս, և զմժեխս թռչտելով անցա
նեն առաջի աչաց մերոց: Եւ ձանձրացուցանեն
զմեզ յաւէտ. երբեմն խայթելով զմի երեսն մեր,
և երբեմն զմիւսն, և երբեմն ևս զքիթն. զի ան
կարելի է ամենևին ազատ լինել 'ի նեղացուցմանէ
նոցին: Սակայն լաւագոյն ընդդիմութի, որ կարէ
ոք առնել ընդդէմ այսպիսեաց փորձութեանց՝ այս
է. ոչ ընկալնուլ 'ի նոցանէ զձանձրութի, և ըզ
նեղութի ինչ: Վն զի բնաւ այսպիսիք, ոչ կարեն
վնասել դոնեայ սակաւ ինչ. (թէ ևս կարիցեն
բերել զվնաս) միայն թէ բարեաւ առաջադրեալ
իցէ ոք, առ'ի կամիլ ծառայել այ:

* Ընդոտնեա, և արհամարհեա ուրեմն զայս_
պիսի փոքրագոյն յարուցմունքս, նաև մի համա
րիր ևս արժանի մտածելոյ զայնս, զորս ասել
կա_

կամին քեզ ։ Այլ թո՛ղ զնոսա, զի թռուչտիցին շուրջ զականջօք քով, և ընթասցին աստ և անդ՝ այնքան, որքան և կամեսցին ինքեանք. ո՛չ և առնանի ճանճից մինչ գան 'ի խայթել զմեզ։ Եւ՛ տեսանելով դու զնա̃ յամիլ 'ի սրտի քում կերպիւ՛ իւիք, մի՛ առներ զայլ ինչ, եթէ ոչ վանել և բառնալ զնա̃ անտի պարզապէս ։ Ոչ պատերազմելով ընդ նա̃, ոչ ևս պատասխանելով նոցա. այլ առնելով զներհակ գործս, ո՛րպիսիք և իցեն, և յատկապէս զգործս սիրոյն այ̃ ։ Վ̃ զի եթէ կամիս լսել ինձ՝ ասեմ. մի՛ յամառիր դու կամելով հակադրել զներհակ առաքինութիւն՝ այնմիկ փորձութե̃, զոր զգաս դու 'ի քեզ ։ քանզի այս լինի երբ կամեցողութիւն իմն առ 'ի հակաճառիլ ընդ նմա ։

Բայց զկնի առնելոյ քոյ զգործ իմն առաքինութե̃, որ ուղղապէս ներհակի փորձութե̃. (եթէ ունիս դու զկարողութի̃ առ 'ի վերաճանաչել զորպիսութիւն փորձութե̃) դարձո՛ զսիրտն քո պարզապէս՝ 'ի կողմն խաչեցելոյն Յի̃ Քի̃. և 'ի ձեռն իմիք ներգործութեան սիրոյ՝ գրկեա՛ զարբազան ոտս նորին ։ Վ̃ զի այս է լաւագոյն կերպ յաղթելոյ զթշնամին. թէ 'ի փոքրագոյն փորձութիս, և թէ 'ի մեծամեծս ։ Քանզի որովհետև սէրն այ̃՝ պարունակէ յինքեան զբնաւ կատարելութիւս ամի̃ց առաքինութե̃ց, և է ևս գերազանց քան զայլս առաքինութիւս. այնու իսկ նաև է առաւել գերազանցագոյն դեղ՝ ընդդէմ ամի̃ց մոլութե̃ց ։ Եւ՛ մինչ միտն քո սովորեալ, և վարժեալ է դիմել առ այս ճշմարտական ապաստանս՝ 'ի բնաւ փորձութե̃ իւրում. այնու ոչ լինի պարաւանդեալ առ 'ի նկատել, և քննել զփորձութիւս, զորս ունի ։ այլ զգալով վրդովեալ և խռովեալ զինքն պարզապէս, հանդարտի այսու զօրեղագոյն դեղով ։ Որ բաց 'ի յայսմանէ, նաև այնքան

զար

զարհուրելի է սոյնս չար հոգւոյն. մինչ զի 'ի տեսանելն թէ փորձութիւնքն իւր, շարժեն զմեզ զիմել առ այս ա͞ծային սէրն, դադարի 'ի նեղելոյ զմեզ:

Ահա տե՛ս ուրեմն. զի ո՛րքան ոք կամիցի յամենալ 'ի փոքրագոյն, և 'ի յաճախակի պատահեալ փորձութիւնս՝ 'ի քննել մանրամասնաբար, և 'ի կորուսանել զժամանակն. թէպէտ այնպիսին աշխատի և վաստակի, բայց զոչինչ շահի, և օգտի:

## Յաղագս թէ՝ ո՛րպէս պիտոյ է զօրացուցանել զսիրտն ընդդէմ փորձութեանց:

### Գլուխ. Ժ:

Մտածեա՛ 'ի ժամանակէ 'ի ժամանակ. թէ ո՛րպիսի ախտք տիրեն, և իշխեն հոգւոյ քոյ: Եւ 'ի բացորոշելն զայնս, յետոյ ստացի՛ր զայնպիսի կերպ իմն կենցաղավարութեան, որ իցէ բոլորովին ներհակ նոցին, 'ի խորհուրդս, 'ի բանս, և 'ի գործս:

* Օր օրինակ. եթէ դու ճանաչես և զգաս զքեզ հակեցեալ առ ախտն ունայնասիրութ͞ե. մտածեա՛ յաճախապէս զթշուառութիւն մ͞դկային կենաց: Թէ ո՛րդեօք որքան վնասակարք լինին մ͞դկանց, ունայնասիրութիւնքն խղճմտանաց նոցին՝ 'ի յաւուր մահուա՛ն իւրեանց: Նաև ո՛րպէս անարժանք լինին միոյ քաջագոյն սրտի, վ͞ս այնց ունայնութ͞եց. որք ոչ են այլ ինչ, եթէ ոչ յիմարութիւնք, և խաղարկութիւնք տղայականք: և զայլս այսպիսիս: Խօսեա՛ց յաճախապէս ը͞դդէմ ունայնասիրութ͞ե: և եթէ թուիցի քեզ լինել այս ընդդէմ կա-

կամաց քոց . մի՛ թողուցուս տակաւին վն զար֊
համարհեսն զնա : զի այսպէս առնելով, դոնէ վն
բարի համբաւոյ և պատուոյ քոյ, հպխս և մեր֊
ձենաս դու 'ի ներհակ կողմն : Վն զի զօրութք
տրամախոսութեան, զոր առնեմք մեք ընդդէմ երի
իմէք, սովորեմք զմեզ առ 'ի յատել զնա, թէև նա
խապէս ըղձահարեալք եաք 'ի նա : Արա՛ զգործս
սարկութե, և խոնարհութե որքան և կարի֊
ցես, թէև թուիցի լինել այս ընդդէմ քոյոյ հա
ճութե . զի այսու կերպիւ՞ ստանաս դու զխո֊
նարհութի : Եւ՞ այնպէս տկարացուցանես զու֊
նայնամտութին քո, մինչ զի 'ի գալն փորձու֊
թե, ոչ կարէ օգնել նմա յօժարութին քո . նաև
ընկալնուս զմեծագոյն զօրութի առ 'ի յաղթա֊
հարել զնա :

* Եթէ հակեալ իցես դու 'ի կողմն ագահութե .
մտածեա՛ յաճախապէս զյիմարութին, և զեղեռն
այսորիկ մեղաց : Քզի առնէ զմեզ գերի այնմ, որ ոչ
է ստեղծեալ վն այլոյ իմիք, եթէ ոչ առ 'ի ծա֊
ռայել մեզ : Որև հարկ է լքել և արհամարհել
զայնս ընաւս 'ի մահուան, և թողուլ 'ի ձեռն
այնպիսեաց ումեք . որ կմ մախիցէ զնա, և կմ վա
րիցէ նովաւ 'ի կործանումն, և 'ի կորուստ հոգւոյ
իւրոյ : և զայլ այսպիսի մտածմունս : Խօսեա՛ց յա
ճախապէս ընդդէմ ագահութե . և գովեա՛ զարհա
մարհումն աշխարհի . արա՛ քեզ զստիպմունս, առ
'ի տալ բազմիցս ողորմութի . և առ 'ի թողուլ
անցանիլ զառիթ իմն ժողովելոյ :

* Եթէ ենթարկեցեալ ես դու առ 'ի կամիլ տալ,
և կամ առնուլ զառիթ մարմնական սիրոյ : խոր֊
հեա՛ց յաճախապէս . թէ ո՛րքան որոգայթաւոր է
այսպիսի ըղձաձկութիս, թէ վն քո, և թէ վն
այլոց : Խորհեա՛ց, թէ ո՛րքան անարժան իր իմն
է, ծախել և ապականել վն անցուցման ժամանակի՝
զպատուականագոյն իղձն մեր, որ է 'ի հոգիս մեր,

և կամ, ո՛րքան ենթարկեցեալ է այսպիսին նախատանաց, վասն ծայրագունի թեթևութեան մտացն ։ Խօսեա՛ց յաճախապէս զմաքրութէ, և զպարզութէ սրտի ։ և որքան առաւել կարելի է քեզ, համաձայնեցո՛ զգործս քո այսոցիկ ․ և փախի՛ր 'ի բնաւից փաղաքշութեց, և խնենշութեանց ։

* Սերջապէս ․ 'ի ժամանակի խաղաղութե ․ մ͞ մինչ փորձութիւնքն մեղաց ( որոց ենթարկեալ ես դու ) ոչ տան քեզ զնեղութի, և զձանձրութի, արա՛ զբազում գործս առաքինութե, որք ներհակին այնպիսի սիրոյ ։ Եւ՛ եթէ ոչ պատահին առիթք և պատճառք ․ դնա՛ դու պատահիլ նց ։ քանզի այսպէս առնելով, զօրացուցանես զսիրտն քո ընդդէմ ապառնւոյ փորձութե ։

## Յաղագս անհանգստութեան։

### Գլուխ ․ ԺԱ։

Անհանգստութիւն՝ ոչ է միայն պարզ փորձութի ինն ․ այլ նաև է աղբիւր փորձութե, յորմէ, և որով գան առ մեզ բազում փորձութիւնք ։ ասացից ուրեմն զիր ինչ և զայսմանէ ։ Տրտմութիւն ոչ է այլ ինչ, եթէ ոչ ցաւ ոգւոյ, զոր ունիմք վասն չարին, որ պատահի մեզ ընդդէմ կամաց մերոց ։ Եւ՛ այս թէ իցէ արտաքին չար ․ ո͞պ է աղքատութիւն, հի՛ւանդութիւն, արհամարհեցեալ գոլն ։ և թէ իցէ ներքին ․ ո͞պ է տգիտութիւն, չորութիւն, ընդիմութիւն, և փորձութիւն ։ Ուրեմն յոր ժամ զգայ հոգին, թէ ունի զչար ինչ, անհաճոյանայ նմա ունիլ զայն ․ և ահա այս է տրտմութի ։

թն : որոյ վ̄ն բղձայ առժամայն ազատիլ, և ու-
նիլ զկերպ ի̄մն փոփոխելոյ զնա : Եւ մինչև ցատոտ-
ունի նա զբանձաւոր պատճառ : վ̄ն զի ընակչանա-
բար ա̄մ ոք ցանկայ բարւոյն, և փախչի յայնմա-
նէ, որ գիտէ գոլ չար :

* Արդ եթէ հոգին խնդրէ զկերպ ազատիլ 'ի չա-
րէն իւրմէ՝ վ̄ն սիրոյն ա̄յ : պարտի խնդրել զնա
համբերութ̄ք ; քաղցրութ̄ք ; խոնարհութ̄ք, և
հանդարտութ̄ք : Նաև յուսալով, թէ ազատու-
թին իւր՝ առաւել լինի յա̄ծայնոյ բարերարութէ
և նախախնամութէ, քան յաշխատութէ, յուշի-
մութէ, և 'ի հանճարեղութէ իւրմէ : Բայց եթէ
խնդրէ զազատութին իւր՝ վ̄ն յատկի սիրոյ իւրոյ,
այնու տագնապի ; պառապի, և աշխատի 'ի խնդ-
րելն միջնորդաց . իբր թէ՝ այս ազատութիս ա-
ռաւել կախի յինքենէ, քան թէ յա̄յ : Արդ ես
ոչ ասեմ թէ՝ նա այսպէս խորհի . այլ ասեմ թէ՝
այնքան տագնապի, և տառապի ; մինչ զի այնու
դրեթէ այնպէս խորհիցի :

* Եւ եթէ ոչ հասանիցի նա այնմ, որում փա-
փաքի . խռովի մտանէ 'ի մեծագոյն անհանգստու-
թիս, և անհամբերութիս : Որ մինչ նոքա ևս
ոչ կարելով բառնալ զնախկին չարն, առաւել
վատթարեցուցանեն զնա . որոյ վ̄ն մտանէ հոգին
'ի մեծագոյն նեղութիս, և 'ի ցաւս : Եւ այս՝ այն-
պիսի պակասագոյն զօրութ̄ք և քաջութ̄ք, մինչ
զի թուի ինքեան . թէ չարն իւր ոչ ունի այլ ևս
զդեղ և զպեղանի : Արդ՝ տես դու ուրեմն .
զի տրտմութին, որ է 'ի սկիզբն արդար, ծնանի
զանհանգստութի . և անհանգստութին ծնանի
յետոյ մերձապէս՝ զբազմութի ի̄մն տրտմութե,
որ է ծայրագունա̄պ որոգայթաւոր իր ի̄մն :

* Անհանգստութին է մեծագոյն չար՝ քան զայլ
չարս, որք կարեն վնասել հոգւոյն, բաց 'ի մե-
ղաց : Վ̄ն զի ո̄պ ներքին խռովութիք, և աղ-

մուկքն միոյ թագաւորութեն, բոլորովին վրդովեն և արգելուն զնա՝ առ՚ի կարել ընդդիմանալ օտարաց: Այսպէս և սիրտն մեր գոլով վրդովեալ, և անհանգիստ եղեալ յինքն իւր. այնու կորուսանէ զօրութին պահելոյ զառաքինութիս, զորս ստացեալ էր. նաև 'ի միասին զկերպն ընդդիմանալոյ փորձութեց թշնամւոյն: Որ սոյն թշնամիս՝ յայնժամ սովոր է խստացուցանել զնմ տեսակս բռնութեն իւրոյ 'ի յորսալ զձկունս, մինչ ջուրն է պղտորեցեալ:

* Անհանգստութիւն յառաջագայի 'ի յանկարգ յղձէ միոյ՝ աղագաւ ազատելոյ 'ի չարէն, որ կրեալ լինի. և կամ աղագաւ ստանալոյ զբարին որոյ յուսացեալ լինի: Բայց սակայն ոչ է անդ այլ իր ինչ, որ առաւել վատթարացուցանէ ըղչարն, և առաւել հեռացուցանէ զբարին, եթէ ոչ անհանգստութիւնն, և տրտմահոծութիւնն: Թռչունքն՝ մինչ ըմբռնեցեալք լինին 'ի ծուղակի, և յորոգայթի, վասն գոլոյն գրաւեցեալ անդ, որքան առաւել բախբախեն զինքեանս, և վազեն յարտաքս անչափապէս առ՚ի զերծանիլ. այնքան առաւել մնան պատատեալք 'ի նմին: Յորժամ ստիպիցիս դու 'ի յըղձէ քումմէ, առ՚ի ազատիլ 'ի չարէ իմեքէ, և կամ առ՚ի հասանիլ բարւոյ իմիք: Նախ քան զայլ ամ ինչ, դի՛ր զսիրտն, և զմիտն քո 'ի հանգստութեն, և 'ի հանդարտութեն, և խաղաղացո՛ զբանականութիւն, և զկամքն քո: Եւ յետոյ գեղեցկապէս, և քաղցրապէս յառաջացո՛ զկատարումն ըղձի քոյ, կարգաւորաբար առնելով զմիջնորդսն, որք են պատկանաւորք առ այն: Եւ մինչ ասեմ գեղեցկապէս. այնու ոչ կամիմ ասել՝ հեղգապէս, այլ առանց տրտմահոծութեն, աղմկութեն, և անհանգստութեն: Ապա թէ ոչ՝ փոխանակ ունելոյ զկատարումն ըղձի քոյ, աւերես զբնաւ իրս. և մնաս առաւել աղմկեցեալ, և

վրդովեցեալ: Անձն իմ 'ի ձեռս իմ է յամ ժամ. և զօրէնս քո ես ոչ մոռացայ. ասէր մարգարէն դաւիթ: Արդ քննեա՛ յաւուրն միանգամ, և կամ այլ աւելի. գոնեայ յերեկոյի, և կամ յառաւօտու. թէ արդեօք ունիս զհոգին քո 'ի ձեռս քո: կամ թէ՝ արդեօք ախտ ինչ, և անհանգստութիւն իմն յափշտակեալ է զքեզ: Մտածեա՛. թէ արդեօք ունիս զսիրտն քո 'ի ներքոյ հրամանաց քոց: կամ թէ՝ արդեօք յափշտակեցեալ իցէ նա առ'ի գրաւիլ յանկարգ ըղձի իմիք. հի՛բար. սիրոյ, ատելութեան, նախանձու, ագահութեան, երկիւղի, տրտմութեան, և ուրախութեան: Եւ՛ եթէ մոլորեալ իցէ նա. նախ քան զամենայն ինչ խնդրեա՛ զնա, և կացո՛ առաջի ներկայութեան այ. ենթարկելով զըղձաձկութիւնն, և զփափաքն քո 'ի ներքոյ հնազանդութեան, և կատարելութեան ածային կամաց նորա: Վասն զի որպէս այնոքիկ, որք երկնչին կորուսանել զպատուական իր իմն, բարեպէս պահեն զայն՝ փակեալ 'ի մէջ ձեռաց իւրեանց: Այսպէս եւս պարտիմք մեք՝ միշտ հետևիլ թագաւորիս այսորիկ, և ասել: Ո՛վ Տր իմ, և ած իմ. հոգին իմ կայ 'ի յորոգայթի, որոյ վասն միշտ ունիմ ես զնա 'ի ձեռս իմ. և այսպէս առնելով, ոչ եմ մոռացեալ զօրէնս քո:

* Մի՛ թոյլտար ըղձից քոց՝ որքան փոքրագոյնք և իցեն. և որքան նուաստագոյն հարկաւորութեան և իցեն, առ'ի անհանգստացուցանել զքեզ: Վն զի զկնի փոքրագունից, մեծագոյնքն և հարկաւորագոյնքն՝ գտանեն զսիրտն քո առաւել տրամադրեալ առ վրդովմուն, և առ անկարգութիւն: Յորժամ զգաս դու, թէ հասանի 'ի քեզ անհանգստութիւն ինչ, յանձնեա՛ զքեզ այ. և առաջադրեա՛ ոչ առնել բնաւ զայն, զոր խնդրէ 'ի քէն իղձն քո, մինչ ոչ իցէ բոլորովին անցեալ անհանգստութիւնն: Բայց եթէ իցէ այնպիսի իր, որ ոչ կա-

կարիցէ յապաղել. յայնժամ պիտոյ է քաղցր, և հանդարտ զօրութեամբ ըմբռնել զընթացումն ըղձին քոյ. բարեխառնելով և կարգաւորելով զնա, որքան և իցէ քեզ կարելի. և ապա առնել զիրն, ոչ ըստ քոյոյ ըղձի, այլ ըստ բանականութեան:

* Եթէ կարես դու յայտնել զանհանգստութիւն քո այնմ, որ առաջնորդէ հոգւոյ քոյ. և կամ գոնեայ այլոյ ումեք համատարիմ, և ջերմեռանդ-բարեկամի քոյ, մի՛ երկմտիր առնել զայս. զի այսու իսկոյն մնաս հանդարտեալ: Քանզի բացայայտութիւն ցաւոյ սրտի, զնոյն ներգործութիւն առնէ 'ի հոգւոջ, զոր առնէ քարշումն արեան 'ի մարմնոյ այնորիկ, որ ունի զջարունակ տենդս: վասն զի այս է դեղն դեղոց: Ուստի սուրբ թագաւորն Լուդովիկոս զայս խրատս ետ որդւոյ իւրոյ. Եթէ ունիս դու զցաւս ինչ 'ի սրտի քում, իսկոյն ասա զայն խոստովանահօրն քոյ. կամ այլոյ ումեք, որ իցէ բարեբարոյ: Եւ՛ այսպէս 'ի ձեռն խրատու, և յորդորման՝ զոր նա տայ քեզ, կարես թեթևապէս տանիլ զցաւն քո:

## Յաղագս տրտմութեան:

### Գլուխ. ԺԲ.

Զի որ ըստ Աստուծոյ տրտմութիւն է, ( ասէ սուրբն պօղոս ) զապաշխարութիւն 'ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ. իսկ աշխարհի տրտմութիւն՝ զմահ գործէ: Ուրեմն տրտմութիւն կարէ գոլ բարի, և չար. ըստ զանազան ներգործութեանցն, զոր առնէ 'ի մեզ: Բայց առնէ զառաւել չարս, քան զբարիս: վասն զի ոչ առնէ, եթէ ոչ զերկու բարիս, այսինքն զողորմութիւն, և զա-

պաշ

պաշխարութիւն : և առնէ զմեց չարիս . զ զնեղութիւն, զծուլութիւն, զպայրացումն, զզջարիլ, զնախանձ, և զանհամբերութիւն : Ուստի և իմաստունն ասէ . Զբաղումս սպան փորձութիւն . և ոչ է շահեկանութիւն ՙի նմա : Եւ՛ այս այնու, զի թէպէտ երկու բարի առուք յառաջագայլն յաղթերբէ տրտմութիւն . սակայն նաև են անդ մեց առուք չարագոյնք :

* Թշնամին մեր վարի տրտմութե՛՝ առ ՙի գործածել զփորձութիւս իւր դէպ ՙի բարիսն : Զի ոչ ջանայ ուրախացուցանել զչարս ՙի մեղս իւրեանց : այսպէս և ջանայ տրտմեցուցանել զբարիս ՙի բարեգործութիւն իւրեանց : Եւ՛ ոչ ոչ կարէ ջանալ չարին, եթէ ոչ առնելով զնա վարկանիլ հաճելի և հեշտալի : այսպէս և ոչ կարէ վնասել բարւոյն, եթէ ոչ առնելով զնա լինել անհաճելի : Զար ոգին համահաճի, և հեշտանայ ՙի տրտմութե, զի է ինքն տրտում . և միշտ ելոց է այնպէս ՙի յաւիտեան . որոյ վա կամի՝ զի ամ ոք լինիցի այնպէս, ոչ և է ինքն :

* Սաստկար և չար տրտմութիւն՝ խռովէ զհոգին, և դնէ զնա յանհանգստութե, պատճառէ զանկարգ երկիւղս, դառնացուցանէ ՙի յաղօթս, թըմբեցուցանէ և նուաճէ զուղեղն . նաև զրկէ զհոգին ՙի խորհրդոյ, յառաջադրութէ, յենթադատութէ, և յարիութէ, և աւերէ և զզօրութիւն նորին : Վերջապ . է համդոյն խստագոյն ձմերան, որ բառնայ զամ գեղեցկութիւս ՙի յերկրէ, և սասանեցուցանէ զամ կենդանիս : Վա զի բառնայ զամ քաղցրութիւն, և զհամեղութիւն ՙի հոգւոյ, և տկարացուցանելով զնա՝ առնէ անկար ՙի բնաւ գործս իւր :

* Արդ եթէ պատահիցի քեզ՝ ո՛վ խանդակաթդ առաքինութե . պաշարիլ յայսպիսի չար տրտմութէ, կիրարկ զհետևեալ դեղս : Վաշտանայցէ ոչ ՙի

չէնջ, (մ՜ եթէ տրտմեալք որք 'ի ձէնջ) յաղօթս հայցէ՛• առէ սէրն առաքեալն յակոբոս : Վ՜ զի աղօթքն է բարձրագոյն դեղ իմն, որ վերացուցանէ զմիտս առ ա՜ծ, որ է միակ ցնծութ, և մխիթարութ մեր : Բայց 'ի յաղօթելն, զայնպիսի իղձս, և խօսս 'ի կիրարկ՝ (թէ իցեն ներքինք, և թէ արտաքինք) որք նկատիցեն առ ապաւինութ, և առ սէրն ա՜յ : Հի բա՛ր• ո՛վ ա՜ծ ողորմութ, և գթութ : ո՛վ քաղցրագոյն փրկիչ իմ : ո՛վ ա՜ծ սրտի իմոյ• ցնծութիւն իմ• յոյս իմ• սիրելի փեսայ հոգւոյ իմոյ : և զայլս այսպիսիս :

* Մարտի՛ր հզօրապէս ընդդէմ հակեցմանց տրտմութն : Եւ՞ զի թէպէտ թուի քեզ, թէ զայն ա՜մ զոր առնես դու յայնժամ, լինի ցրտա՜մ և դաղջապէս• սակայն այսու ա՜մի՞, մի՛ թողուր տակաւին զառնելն զնա : Վ՜ զի թշնամին, որ դիտէ տկարացուցանել զմեզ 'ի բարեգործութես 'ի ձեռն տրտմութեն• 'ի տեսանելն՝ թէ մեք ոչ դադարեմք առ'ի առնել զնա• մանաւանդ թէ տրտմեցեալք՝ առաւել զօրեղանամք 'ի առնել, դադարի 'ի նեղացուցանելոյ զմեզ :

* Խորհեա՛ նաև զհոգևոր երգս• զի միջնորդութբ այսպիսի երգոց, բազմիցս չար ոգին թուլանայ 'ի գործելոյ զեղեռն իւր : Որպէս յայտ է սոյնս՝ 'ի յայան չար, որ պաշարեալ և ժառանգեալ էր զսաւուղ• որոյ բռնութին նուաճիւր 'ի սաղմոսերգութէն դաւթի :

* Բարեգոյն ևս է զբաղիլ յարտաքին գործս, և փոփոխել զնա առաւել, որքան և իցէ կարելի, առ'ի դարձուցանել զհոգին 'ի տրտմալի առարկայէ : Նաև առ'ի մաքրել, և ջերմացուցանել զմիտս, և զոգին• վ՜ զոլոյ տրտմութեն ախտ իմն ցուրտ, և չոր կազմողութբ :

* Արա՛ զարտաքին գործս ջերմեռանդութեան, թէև իցէ թարց քաղցրութն• հի՛բար• դրկելով

զպատ

զպատկերն խաչելութեան . դնելով զնա 'ի կուրծս
քո . համբուրելով զոտս և զձեռս նորին . ամբառնա
լով զաչս , և զձեռս քո 'ի յերկինս . և արձակե
լով զձայնն քո առ նմ̃ , բանիւք սիրոյ , և յուսոյ .
ոպ̃ և են այսոքիկ : ՍԻՐԵԼԻՆ ԻՄ ԻՆՁ , ԵՒ ԵՍ ՆՄԱ :
ՍԻՐԵԼԻՆ ԻՄ Է ԻՆՁ ԻԲՐԵՒ ԶԾՐԱՐ ՓՈՒՇԽԻՆ . ՆԱ ԲՆԱԿԷ 'Ի
ՄԷՋ ԱՏԵԱՆՑ ԻՄՈՑ : ՍՊԱՌԵՑԻՆ ԱՉՔ ԻՄ ԲԱՆԻ ՔՈՒՄ . Ա-
ՍԵԼ ԵՐԲ ՄԽԻԹԱՐԵՍՑԵՍ ԶԻՍ : Ո՛Վ Յ̃Ս , լե՛ր ինձ Յ̃Ս ,
ողջ լե՛ր Յ̃Ս . և ողջացո՛ զհոգի իմ : Ո՛Վ ՀԱՐԷ ԴԻ
ՆԵԼ ԶԻՍ 'Ի ՍԻՐՈՅՆ Ք̃Ո ԻՄՈՅ . և զայլ նմանս :

* Բարեխառն կրթութիւն և՛ս՝ լաւագոյն է ընդ
դէմ տրտմութեան : Ա՟յլ զի այս կամաւոր արտաքին
նեղութիւնս , հայցէ և ընկալնու զներքին մխիթա
րութիւնն . և հոգին դդալով զարտաքին ցաւս ,
դառնայ յայսոցիկ առ այնս , որք են 'ի ներքս :
Յաճախելն առ սրբազան հաղորդութիւն , է գերա
զանց սպեղանի առ այն : քանզի այս երկնային
հաց՝ հաստատէ զսիրտն , և ուրախացուցանէ ըզ
հոգին :

* Յայտնեա՛ խոնարհաբար , և հաւատարմապէս
զզգացմունս , զխղձս , և զթերադրութիւնս , որք
յառաջագայեն 'ի տրտմութենէ քումմէ , հոգևոր
առաջնորդին , և խոստովանահօր քոյ : Նաև խնդ
րեա՛ կենցաղավարել ընդ հոգևոր անձինս . և
յաճախեա՛ որքան և կարես , կալ ընդ նմ̃ 'ի բո
լոր յայսպիսի ժամանակս : Եւ՞ վերջապէս . յանձ
նեա՛ զքեզ 'ի ձեռն այ̃ , պատրաստելով առ'ի կրել
համբերութեամբ՝ զայս վշտակիր տրտմու
թիւն , ոպ̃ զարդար պատիժ իմն՝ փոխանակ ու
նայն ուրախութեան քոյ : Եւ՞ մի՛ երկբայիր ամե
նևին , զի նմ̃ զկնի փորձելոյ զքեզ , ազատէ 'ի
չար ախտէս այսմանէ .

## Յաղագս հոգւոյ, և զգայական մխիթարութեանց։ Նաև թէ՝ ո՛րպէս պիտոյ է վարել ՚ի նա։

### Գլուխ. ԺԳ։

ԱՍտուած պահէ զգոլն աշխարհիս ՚ի մշտնջենական փոփոխութեան խմբի, որով օրն միշտ փոխի ՚ի գիշեր, գարունն ՚ի յամառն, ամառն ՚ի յաշուն, աշունն ՚ի ձմեռն, և ձմեռն ՚ի գարուն։ Ե՞ւ մի օրն ոչ է նման միւսոյն. զի գան ամպոտ, անձրևոտ, չորային, և հողմային աւուրք։ և այսպիսի փոփոխութիւն պատճառէ զմեծագոյն գեղեցկութի իմն առ այս ընդհանուրս։ Այնս է և ՚ի մարդն՝ (որ ըստ ասելոյն հնագունից) է փոքր, և համառօտ աշխարհ իմն։ Վասն զի ոչ երբէք յարամնայ մարդ ՚ի միում կացութեան զի կեանքն իւր այնպէս հոսի ՚ի վր երկրի, որպէս և հոսի ջուրն միով մշտնջենական շարժմամբ, և փոփոխմամբ։ Ուստի երբեմն բարձրացուցանէ զնա յուսով՝, և երբեմն ցածացուցանէ երկիւղիւ. երբեմն հակէ ՚ի յաջկոյս մխիթարութե, և երբեմն ՚ի ձախկոյս տրտմութեամբ։ Ե՞ւ ոչ երբէք մի օրն իւր, նաև ոչ ևս մի ժամն իւր՝ ամբողջապէս նման է միւսոյն։

* Այս է մեծագոյն խրատ իմն, զոր յայժմ ասելոց եմ։ Պիտոյ է մեզ ջանալ՝ առ ՚ի ունիլ զշարունակ, և զանաղարտելի հաւասարութի իմն սրտի, ՚ի մէջ այսպիսի մեծագոյն անհաւասարութե պատահմանց։ Ուստի թէև բնաւ իրք անդրաշրջիցին, և զանազանապէս փոփոխիցին շուրջ զմեօք, պիտոյ է մեզ տակաւին զկայ առնուլ հաստատա-

պէս

պէս, և անշարժապէս հայիլ միշտ՝ առ'ի ձկտիլ և դիմել դէպ առ ած մեր : Վս̃ զի՝ թէև նաւն մեր՝ որով և իցէ հողմով վարիցի՝ յո՛րկոյս և կամիցի : դր̃՝ թէ առ արևմուտս, թէ առ արևելս. թէ առ հարաւ, և թէ առ հիւսիս : Սակայն այսու ամիւ, մագնիսեցեալ փուսուլան՝ և կողմնացոյցն իւր՝ (որով խմանի սիրտն) ոչ երբեք հայեցի յայլ ուր, եթէ ոչ առ գեղեցիկ աստղն, և առ բևեռն : Թէև ամ իր անդրաշրջեցի և դարձցի ներքևն'ի վերան. ոչ ասեմ միայն շուրջ զմեօք, այլ նաև 'ի մեզ իսկ : Այսինքն. հոգին մեր՝ թէ իցէ ուրախ, և թէ տրտում. 'ի քաղցրութե̃, թէ 'ի դառնութե̃. 'ի խաղաղութե̃, թէ 'ի վրդովման. 'ի լուսում, թէ 'ի խաւարի. 'ի փորձութե̃, թէ 'ի համդարտութե̃. 'ի հաճութե̃, թէ 'ի տհաճութե̃. 'ի չորութե̃, թէ 'ի կակղութե̃. նաև թէ արեգակն այրիցէ, և կմ̃ ցօղն զովացուցանիցէ : Սակայն այսու ամիւ պիտոյ է, զի միջակէտն սրտի մերոյ, դր̃ միտքն և վերնագոյն կամքն մեր (որ է փուսուլան մեր) միշտ անդադար հայեցի, և մշտնջենաւորապէս դիմիցէ առ սէրն ստեղծողին իւր, փրկչին իւր. միակ, և բարձրագոյն բարւոյն իւր : Արդ ԵՐԲ ԿԵԱՄՔ, ԵՐԲ ՄԵՌԱՆԻՄՔ՝ ՏՆ̃ ԵՄՔ (ասէ առաքեալն) ԵՒ Ո՛Վ ՄԵԿՆԵՍՑԷ ԶՄԵԶ 'Ի ՍԻՐՈՅՆ ԱՅ̃ : Ոչինչ իր բաժանէ զմեզ երբեք յայսմանէ սիրոյ. ոչ նեղութի̃, և ոչ անձկութի̃. ոչ մահ, և ոչ կեանք. ոչ ցաւն ներկայիս, և ոչ երկիւղն ապառնւոյ պատահմանց, և ոչ ևս հնարագիտութիւն չար ոգւոյն. ոչ բարձրութիւն մխիթարութեց, և ոչ խորութիւն տանջանաց. ոչ կակղութիւն, և ոչ խստութիւն. և ոչ այլ ինչ պարտի երբեք բաժանել զմեզ յայսմանէ սր̃ սիրոյ, որ հիմնեցեալ է 'ի Քս̃ Յս̃ :

Այս բացարձակ առաջադրութիւն՝ առ'ի ոչ երբեք թողուլ զած, և զսր̃ սէրն նորին. ծառայէ նաև հոգւոյ մերոյ՝ առ'ի պահպանել զնա 'ի սր̃

հա_

հաւասարութե՟ն՝ 'ի մէջ անհաւասարութե՟ն զանա զան շարժողաց, զոր առբերէ 'ի մեզ յատկութ՟ին այսորիկ կենի: Վն՟ զի ոպ՟ մեղուքն՝ 'ի տեսանելն զինքեանս 'ի ձեռն հողմոյ վերայառեցեալ 'ի դաշտի, գրկեն զքարինս՝ առ 'ի կարել հաւասարապ՟ կախիլ 'ի յօդս. զի մի դուցէ 'ի ձեռն հողմոյ, և փոթորկի՝ դիւրապէս տարեալք լինիցին 'ի սասակումն: Այսպէս ես հոգին մեր, 'ի ձեռն առաջադրութե՟ իւրոյ՝ կենդանապէս գրկելով զպատուական սէրն այն իւրոյ. մնայ կայուն և հաստատուն 'ի մէջ անհաստատութե՟ն, և այլայլման մխիթարութե՟ց. այնքան առ հոգևորս, որքան առ ժամանակաւորս. և ո՛րպէս առ արտաքինս, նոյնպէս և առ ներքինս:

Բայց 'ի յայսմանէ ը՟ հանրական վարդապետութէ, տակաւին ունիմք նաև զպիտոյութ՟ի մասնաւոր վարդապետութե՟ն իմէք: Նախ ուրեմն ասեմ. թէ ջերմեռանդութ՟ին ոչ կայանայ 'ի քաղցրութե՟, 'ի համեղութեան, 'ի մխիթարութե՟, և 'ի զգալի քաղցրութե՟ սրտի, որ շարժէ զմեզ առ արտասուս, և առ հառաչանս, նաև տայ մեզ զհաճելի, և զհամեղ հատուցումն ինն 'ի յոմանս հոգևոր կրթութ՟իս: Ոչ կայանայ 'ի յայսոսիկ՝ ով խանդակաթ առաքինութե՟. զի ջերմեռանդութ՟իքն ոչ են մի և նոյնք: Վն՟ զի դտանին բազում անձինք, որք ունին զայսոսիկ կակղութ՟իս, և մխիթարութ՟իս: բայց սակայն ոչ թողանին 'ի գոլոյ յոյժ ախտաւորք. և հետևապէս ոչ ունին զճշմարիտ սէր ինչ այ, և ոչ ես զճշմարիտ ջերմեռանդութիւն ինչ:

Սաւուղ հետևելով առ 'ի սպանանել զդաւիթ, որ փոխուցեալ է 'ի նմանէ 'ի յանապատն գաղդայ. եմուտ միայնակ 'ի յայր մի, յորում թագուցեալ գոյր դաւիթ զօրօքն իւրով: Ուստի դաւիթ յայսմիկ պատահման, որ կարէր սպանանել զսաւուղ

առա

առաւել քան զհազար անգամ . շնորհեաց նմա զկեանս, և ոչ կամեցաւ նաև ահացուցանել զնա, այլ եթող ելանել անտի անդորրապէս : Եւ յետոյ կոչեաց զնա, առ'ի ծանուցանել նմա զանմեղութիւնն իւր, և առ'ի ցուցանել համանգամայն, թէ այս եղև ընտրութբ̃, և խոհեմութբ̃ իւրով : Արդ զինչ ոչ արար յայնժամ սաւուղ, առ'ի վկայել թէ՝ սիրտն իւր քաղցրացեալ էր դէպ 'ի դաւիթ : Զի կոչեաց զնա որդի իւր, յարձակեցաւ 'ի լալ, և 'ի գովել զնա բարձրագոյն ձայնիւ . խոստովանելով զքաղցրութիւն և զբարեգըթութիւն նորին . աղաչելով զա̃ծ վ̃ն ն̃ր . և նախագուշակելով զապառնի մեծութիւն նորին . և յանձնելով նմա զյետնորդս իւր, զորս թողլոց էր զկնի իւր : Արդ աւելի քան զայս, զայլ ո՞րպիսի մեծագոյն քաղցրութիւն, և կակղութիւն սրտի կարէր ցուցանել նա : Բայց սակայն այսու ամենիւ, ոչ փոխեալ էր զսիրտն և զմիտն իւր . զի ոչ դադարէր համապազ յարուցանելոյ զանողորմ հալածանս ընդդէմ դաւթի, որ̃պ և առնէրն յառաջ,

Այսպէս և գտանին բազում անձինք, որք մտածելով զբարութիւն ա̃յ, և զչարչարանս փրկչին մերոյ, զգան յինքեանս զմեծ կակղութիւն, և քաղցրութիւն սրտի . որք առնեն զն̃ս հառաչել, արտասուել, աղօթել, և յոյժ զգալապէս շնորհակալութիւն մատուցանել : և այս այնպէս . մինչ զի կարէ ասել ոք, թէ նոքա ունին զսիրտ իմն լի ջերմեռանդութբ̃ : Բայց յորժամ գայ 'ի փորձառութիւն, լաւա̃պ տեսանի, թէ են ո̃պ անցաւոր անձրև իմն ամառային ջերմութիւն, որ անկանելով 'ի վր̃ երկրի խոշորա̃պ՝ ոչ թափանցի 'ի նա . և ոչ ևս ծառայէ յայլ ինչ, եթէ ոչ առ'ի բուսուցանել զսունկս : Հանգունաբար ևս այսպիսի կակղագոյն և դթածագոյն արտասուքս՝ անկանելով 'ի վր̃ միոյ ախտացեալ սրտի, և ոչ թափանցե-

ցելով 'ի նոսա, ամենեքին անօգուտք են նմա: Վս̃ զի այսու ամ̃ենիւ, այսպիսի ողորմելի անձինքս՝ ոչ թողուն նաև զփող մի 'ի չարապէս առացեալ ընչից, զոր ժառանգեն. և ոչ հրաժարին ևս դոնեայ 'ի միոյ չար ըղձէ իւրեանց: Եւ՞ ոչ կամին ընկալնուլ և կրել 'ի յաշխարհէ՝ զփոքրիկ իմն անանդորրութիւն, և նեղութիւն վս̃ ծառայութեան փրկչին, 'ի վր̃ որոյ լան: և այս այնպէս, մինչ զի այն բարի շարժմունքն, զորս ունեցան՝ ոչ են այլ ինչ, եթէ ոչ հոգևոր սունկք: Որք և ոչ միայն ոչ են ճշմարիտ ջերմեռանդութիւնք. այլ նաև բազմիցս են մեծագոյն խորամանկական հնարք թշնամւոյն, որ ըմբռնելով զայնպիսի անձինս՝ այսոքիւք փոքրագոյն մխիթարութեամբք, առնէ զնս̃ մնալ շնորհակալս, և գոհունակս: Զի մի խնդրիցեն այլ ևս զճշմարիտ, և զզուտ ջերմեռանդութիւն, որ կայանայ յայնպիսի կամս, որ իցէ կայուն, հաստատ, յօժար, և գործունեայ՝ առ 'ի հետևել այնց ամ̃ի, զորս գիտէ պատկանիլ այ̃:

Թւէպէտ փափկապէս լայ մանուկ տղայ մի, մինչ տեսանէ զտէգ իմն մխել 'ի բազուկ մօր իւրոյ՝ հանելով 'ի նմանէ զարիւն: Բայց 'ի նոյն ժամանակի, եթէ մայրն իւր (որոյ վս̃ լայ) խնդրիցէ 'ի նմանէ զխնձոր, և կամ շաքրատոգոր պտուղ ինչ, զոր ունի 'ի ձեռին, ոչինչ կերպիւ կամի զնա 'ի բաց թողուլ 'ի ձեռացն: Այսպիսիք են ևս մեծագոյն մասունքն ջերմեռանդութեան մերոյ: զի 'ի տեսանել մեր՝ թէ տիգաւ խոցեցեալ է սիրտն խաչեցելոյ Տն̃ մերոյ Յի̃. լամք ցաւակցաբար, և գթածապէս: Ո՛վ խանդակաթող առաքինութիւն. թէպէտ բարի է լալ զմահն, և զցաւալի չարչարանս փրկչին մերոյ, որ է երկնաւոր հայր մեր: Բայց վս̃ է՞ր ոչ տամք նմա յօժարապէս զխնձորն, զոր ունիմք 'ի ձեռս մեր, որ այնքան ստիպմամբ խնդրէ զայն 'ի մէնջ սիրելի կենարարն մեր. որով

իմա

իմանի սիրտն մեր, որ է միակ խնձոր սիրոյ ։ Ընդ-է՞ր ոչ տամք նմա զայնքան փոքր ըղձկունս, սի-րաձկոութիւնս, և համահաճութիւնս, զոր հանել կամի նա 'ի ձեռաց մերոց, և ոչ կարէ ։ Քանզի այսոքիկ են շաքրատոգոր պտուղքն մեր. առ որս այնքան առաւել ըղձունակք, և անյագք իմք, մինչ զի վս՟ նոցին, ոչ ըղձամք երկնային շնորհաց նորին ։ Ա՞Հ․ այսոքիկ են գթածական, և խան-դաղատական բարեկամութիւքն տղայոց ։ բայց են տկարք, երևակայականք, և թարց ներգոր-ծութեն ։ Ջերմեռանդութիւն ոչ կայանայ ուրեմն յայսպիսի կակղութիւս, և զգայականութիւս ըղձի․ որք բազմիցս յառաջադային 'ի բնութէ, որ է կակուղ և դիւրին առ 'ի ընդունիլ զներտպումն, զոր կամի տալ նմա ոք ։ Եւ՛ երբեմն ևս յառաջա-նան 'ի թշնամւոյն հոգւոց, որ առ 'ի կայուցա-նել զմեզ յայսմիկ, զարթուցանէ զերևակայու-թիւն մեր առ յատուկ ըմբռնումն, 'ի ձեռն այն-պիսի ըղձից ։

* Երկր․ այսպիսի կակուղ, և ըղձալի քաղցրու-թիւքս, երբեմն են բարեգոյնք, և օգտակարք ։ Քանզի զարթուցանեն զախորժակն հոգւոյ, զօ-րացուցանեն զմիտն, և առակցեն առ յօժարու-թիւն ջերմեռանդութեն՝ զսր՟ ցնծութեն, և զուրա-խութեն իմն, որ զգործս մեր առնէ գեղեցիկ, և հաճելի նաև 'ի յարտաքս ։ Այս է քաղցրութիւն և համեղութիւն, որ ունեւալ լինի յածային իրաց, որով աղաղակէր դաւիթ ։ Ո՛րպէս քաղցր են 'ի քիմս իմ բանք քո՝ ( ո՜վ Տէր ) քան զմեղր բերանոյ իմոյ ։ Իրաւի է այս․ զի փոքրագոյն մխիթարու-թիւն ջերմեռանդութեն, զոր ընդունիմք մեք․ ա՟-ծմի առաւել արժէ, քան զա՟մ առաւել դերա-զանց սփոփութիւս, և մխիթարութիւս աշխարհի ։ Սոէնքն, և կալթն․ մ՟ մխիթարութիւնքն, և քաղցրութիւքն ա՟ծայնոյ փեսային, առաւել լա-

ւա

ւադոյնք են հոգւոյ, քան զպատուական դինին աշխարհային հեշտութեան : Ուստի որ ճաշակեալ է յայսմանէ մխիթարութենէ և քաղցրութենէ, դառն և լեղի համարի զայլ ամ մնացեալ մխիթարութիւնս : Զի ոպ այնոքիկ, որք ունին 'ի բերանս իւրեանց զայն խոտն, որ կոչի շիթիքայ, զայնքան մեծագոյն քաղցրութիւն ընդունին յինքեանս. մինչ զի ոչ զգան բնաւ, ոչ քաղցութիւն, և ոչ զծարաւութիւն : Այսպէս և այնոքիկ, որոց տուեալ է ած զայս երկնային մանանայս քաղցրութեան, և ներքին մխիթարութեան. ոչ կարեն ցանկալ և ընդունել զաշխարհային մխիթարութիւնս : և կմ գոնեայ ոչ կարեն զգալ զհամեղութիւն ինչ, և մնալ անդ ըղձին : Այսոքիկ են փոքրագոյն առհաւատչեայքն անմահական քաղցրութեան, զոր տայ ած այնց հոգւոց, որք խնդրեն զնա : Այսոքիկ են շաքրատոգոր հացքն, զոր տայ նա փոքրագոյն որդւոց իւրոց, առ'ի քարշել զնս առ ինքն : Այսոքիկ են բժշկականական ջուրքն սրտի, զոր ընծայէ նոցա ած, առ'ի զօրացուցանել զնս : Լինին նաև երբեմն այսոքիկ՝ առհաւատչեայք յաւիտենական հատուցման, և վարձուց : Ասի թէ, 'ի նաւարկելն աղեքսանդրու մեծի՝ 'ի բարձր ծովու. նախ երևեցաւ երջանիկն արաքիայ, և զգալով զքաղցրութիւն անուշահոտութեան նորին, զոր հողմն բերեր. այնու էառ զմեծագոյն քաջութիւն սրտի՝ ինքն, նաև ընկերքն իւր. Այսպէս և մեք. բազմիցս ընդունիմ զքաղցրութիւն, և զհամեղութիւն յայսմիկ ծովու մահկանացու կենաց. որք թարց երկբայութեան առնեն զմեզ, զի նախագայցեմք զհեշտութիւնն երկնային, և երանելի հայրենեացն, առ որ հառաչեմք, և փափաքեմք մեք միշտ :

* Երրորդ. Թերևս ասիցես ինձ. որովհետև գտանին մխիթարութիւնք զգալիք, որք են բարիք,

և

և գան յիս։ Եւ՛ գտանին ևս մխիթարութիւնք անօգուտք, որոգայթաւորք, և մանաւանդ վնասակարք, որք գան 'ի բնութէ, և կամ 'ի թշնամւոյն։ ուրեմն ես ո՛րպէս կարացից զանազանել, և տարբերել զմինն 'ի միւսոյն. նաև ճանաչել, և որոշել զվատն, և զանօգուտն 'ի բարւոյն։ Այս է ընդհանրական վարդապետութիւն՝ ո՛վ խանդակաթդ առաքինութիւն՝ վս՛ ըղձից, և կրից հոգւոյն. զի պարտիմք ճանաչել մեք զնոսա 'ի պտղոց նոցին։ Արդ սիրտքն մեր են ծառք։ խղճքն, և կիրքն են ճիւղք, և ոստք նոցին։ գործքն, և արարքն՝ պըտուղք։ Ուստի այն սիրտն է բարի, որ ունի զբարի խղճս։ նաև այնք խղճք, և կիրք են բարիք, որք յառաջածեն 'ի մեզ զբարի ներգործութիւնս, և զսուրբ գործս։ Վասն որոյ՝ եթէ քաղցրութիւնքն, կակղութիւնքն, և մխիթարութիւնքն՝ զմեզ առնեն առաւելապէս խոնարհք, համբերողք, մարդասէրք, գթածք, և ցաւակիցք դէպ առ ընկերս. և առաւել ջերմեռանդք առ 'ի մահացուցանել զցանկութիւնս, և զչար յօժարութիւնս մեր։ Նաև առաւել հաստատուք 'ի կրթութիւնս մեր. և առաւել հակեալք, և յօժարք առ այնոսիկ, որոց պարտիմք հնազանդիլ. և առաւել պարզադոյնք 'ի կենցաղավարութեան մերում։ յայնժամ ո՛վ խանդակաթդ առաքինութիւն. թարց երկբայութեան գան նոքա 'ի յիս։ Բայց եթէ այսոքիկ մխիթարութիւնքս՝ ոչ ունիցին զքաղցրութիւն, եթէ ոչ վս՛ մեր. նաև եթէ զմեզ առնեն հետաքրքիրք, թեթևք, կռուարարք. կամակորք, ժանտաբարոյք, անհամբերք, յանդգունք, խիստք դէպ առ ընկերս։ Այլ և եթէ առնեն զմեզ մտածել՝ արդէն եղեալ կէս սուրբք, այնպէս որոյ ոչ ևս ենթարկեալ լինել հոգևոր առաջնորդին, և խոստովանահօր մերոյ. և ոչ ևս ունիցիր լինել յանդիմանութեանն նորին։ Յայնժամ առանց երկբայութեան՝ սուտք,

և փաստակարք են այնպիսի մխիթարութիւնքն, և քաղցութիւնքն: Քանզի բարի ծառն ոչ առնէ, եթէ ոչ զբարի պտուղս:

* Չորրորդ. մինչ մեք ունիցիմք զմխիթարութիւնս, և զքաղցրութիւնս զայսոսիկ: Նախ պիտոյ է զի խոնարհեցուցանիցեմք զմեզ առաջի այ, և զգո՛յշ լինիցիմք 'ի յաւելոյ. Թէ ես բարի, և առաքինի եմ: Այսոքիկ ոչ են բարիք՝ ո՛վ խանդակաթդ առաքինութն. զի ոչ առնեն զմեզ բարեգոյնս: վն զի ոչ ասացի. ջերմեռանդութիւն ոչ կայանայ 'ի սոսա: Այլ ասասցուք ը երեմիայի. Բարի է ած 'ի վե յուսացողաց իւրոց. և անձին՝ որ խնդրէ զնա: Այն՝ որ ունի արդէն զշաքարն 'ի բերան իւր, ոչ կարէ ասել՝ թէ բերանն իւր լցէ քաղցր. վն զի շաքարն է քաղցր: Այսպէս և, թէպէտ այս հոգևոր քաղցրութիւնս է բարեգոյն. և ած ևս, որ տայ մեզ զայն, է բարեգունեղ: սակայն աստուստ ոչ հետևի, թէ լցէ նաև բարի այն, որ ընդունի զնա: Երկրորդ ճանաչեսցուք. թէ մեք տակաւին եմք փոքրագոյն երեխայք, և ունիմք զկարօտութն կաթին՝ թէև տրիցին մեզ այսպիսի շաքրատօգոր պտուղք: Վն զի արդէն ունիմք զմատղաշ, և զփափուկ հօգիս, որք կարօտին փափկագոյն սնուցմանց, և պատառոց, առ 'ի զարգացեալ, և քարշեցեալ լինիլ 'ի սէրն այ: Երրորդ. յետ այսորիկ (ընդհանրականապէս, և համարակաբար խօսելով) ընկալցուք խոնարհաբար ըզշնորհս, և զպարգևս զայսոսիկ, և համարեսցուք զայնս յոյժ մեծագոյնս. ոչ ըստ որում են յինքեանս իւրեանս, այլ ըստ որում ձեռն այ է այն, որ դնէ զայնս 'ի սիրտս մեր: Զոր օրինակ. որդեակէր մայր ումն, առ 'ի քաղցրացուցանել զորդին իւր, դնէ 'ի բերան որդւոյ իւրոյ, զշաքրատօգոր փոքրագոյն հատս՝ մինն զկնի միւսոյն: Ուստի եթէ նոյն երեխայն, ունիցէր զլիակա_

տա_

տարութիւն բանականութեան, առաւել քաղցր համարէր զխանդաղատանս ; և զսէրն, զոր մայրն իւր առնէր ինքեան, քան զքաղցրութիւնն նոյն շաքրատոդոր հատից: Այսպէս և՛ ով խանդակաթդ առաքինութեան. լաւագոյն է ունել զքաղցրութիւն: բայց սակայն այս է քաղցրութիւն քաղցրութեանց. նկատել՝ թէ նա իւր սիրալիր, և յաւիտենական ձեռամբն ընէ զայնս 'ի բերանս ; 'ի սիրտըս, 'ի հոգիս, և 'ի միտս մեր: Զորոգ. զկնի խոնարհաբար ընկալնլոյ մեր զայնս, հոգունակապէս կերակրեսցուք զնսա ըստ դիտաւորութեան այնորիկ, որ ետ մեզ զայնս: Վ՟ զի պարտիմք մտածել. թէ Ած տայ մեզ զայնպիսի քաղցրութիւնս ; առ 'ի առնել զմեզ քաղցր դէպ առ Ած ոք, և սիրահար դէպ առ ինքն: Մայրն տայ որդւոյն զշաքրատոդոր հատս, զի 'ի համբուրիցէ զնա մանուկն: համբուրեսցո՛ւք ուրեմն և մեք զամենափրկիչն մեր, որ սփոփէ զմեզ մխիթարութբն, և քաղցրութբն իւրով: Արդ համբուրել զամենափրկիչն՝ է հնազանդիլ նմա ; պահել զպատուիրանս, և առնել զկամս իւր, և հետևիլ ըղձից նորին. վերջապէս՝ գրկել զնա սիրով, հնազանդութբ, և հաւատարմութբ: Ուրեմն մինչ ընկալնումք զհոգևոր մխիթարութիւն ինչ. պիտոյ է առաւել հոգունակ լինիլ յաւուր այնմիկ, առ 'ի առնել զբարի, և խոնարհեցուցանել զմեզ:

* Հինգերորդ. բաց 'ի բնաւից այսոցիկ. պիտոյ է երբեմն հրաժարիլ յայնպիսի քաղցրութենէ, կակղութենէ ; և մխիթարութենէ. և բաժանել զսիրտն մեր յայնցանէ: Վ՟ զի թէև ընդունիցիմք զայնս բնաւ խոնարհութբ, և սիրով. զի Ած պարգևէ մեզ զնոսա, որք քարշեն, և հրաւիրեն զմեզ առ սէր իւր: սակայն այսու ամի՟. ոչ պարտիմք խնդրել զայնս. այլ զԱծ միայն, և զսէր սէրն նորին: Ո՛չ զմխիթարութիւն, այլ զմխիթարիչն: ոչ

զքաղցրութիւն, այլ զքաղցր փրկիչն: ոչ զկակղութիւն, և զփափկութիւն, այլ զայն՝ որ է համեղութիւն երկնի, և երկրի: Եւ՞ այսու ա՟մ ըղձիւ պարտիմք տրամադրիլ մեք, առ'ի կալ հաստատ 'ի ս՟մ սէրն ա՟յ, թէև 'ի բոլոր կեանս մեր ոչ ունիցիմք երբէք զմխիթարութիւն ինչ: Նաև պարտիմք ասել. որքան 'ի վ՟ր լերինն գողգոթայի, այնքան և ս 'ի լերինն թաբոր: Ո՛վ Տ՟ր. բարւոք է մեզ լինիլ ընդ քեզ, թէ իցես 'ի վերայ խաչին, և թէ 'ի փառս:

* Վեցե՟րդ. աղօթեմ քեզ վերջապէս. զի եթէ գայցէ 'ի քեզ յայտնագոյն առատութի այսպիսեաց մխիթարութեանց. ա՟յ կակղութեանց, փղձկուն արտասուաց, և քաղցրութեանց: Եւ՞ կամ ընդ ն՟մ գայցէ այսպիսի այլ իր ինչ արտաքոյ կարգի. յայտնեա զն՟մ հաւատարմաբար հոգևոր հօրն քո, առ'ի ուսանիլ. թէ ո՛րպէս պիտոյ է կարգաւորիլ, և վարիլ 'ի յայնս: Զի գրեալ է. Մեղր յորժամ գտանիցես՝ չափով կերիցես: ա՟յ այնքան կե՛ր, որքան պիտոյանայ քեզ:

## Յաղագս չորութեան, և հոգևոր անձկութեան:

## Գլուխ. ԺԳ.

Յորժամ ունիցիս դու զմխիթարութիւնս ո՛վ խանդակաթդ առաքինութե. այնպէս առնիցես, ո՛ր և ասացի քեզ: Բայց այսպէս գեղեցիկ, և հաճելի ժամանակս՝ ոչ յարատևէ միշտ. մանաւանդ թէ՝ պատահի նաև երբեմն, զի այնպէս զրկեցեալ, և թողանեցեալ լինիս դու 'ի բնաւից ջերմեռանդական զգացմանց. մինչ զի թուիցի քեզ, թէ հո-

գին

զի՞նչ քո լիցէ ո՛վ երկիր իմն անապատ, անպտուղ, և ամուլ, ուր ոչ լիցէ շաւիղ, և ճանապարհ առ՛ի գտանել զնա։ Նաև ոչ լիցէ անդ ջուր ինչ շնորհաց, զի կարիցէ լժանալ, և ոռոգել զնա։ և պատճառաւ չորութե՛ (թուի թէ) բոլորովին խոպանացեալ և վայրենացեալ լիցէ։ Ո՜հ թէ. որպիսի ցաւակցութե՛ արժանի է հոգին այն, որ գտանի յայսպիսի կացութե՛. և մանաւանդ յայն ժամ, մինչ այս չարս է զօրեղագոյն։ Քանզի յայն ժամ առ՛ի հեռանալ դաւթի, կերակրի արտասուօք 'ի տուէ, և 'ի գիշերի. մինչ թշնամին բազմաղան կերպ թելադրութե՛ և փորձութե՛, առ՛ի յուսահատել, և այպանել զնա՝ ասիցէ նմա։ Ո՜հ քեզ. ո՛վ ողորմելի, և աղքատ. ո՞ւր է ա՛ծն քո։ ո՞րով ճանապարհաւ կարիցես գտանել դու զնա։ ո՞վ կարիցէ երբէք հաստուցանել քեզ զմարդարիան իւրոյ շնորհաց։

* Օի՛նչ առնել պարտիս ուրեմն դու ո՛վ խանդակա՛թդ առաքինութեան. յայսմիկ ժամանակի։ Պարտիս նկատել, թէ ուստի՛ գայ և յառաջանայ չարս։ վ՛ն զի բազմիցս մեք ինքեանքս պատճառ լինիմք ամլութե՛, և չորութե՛ մերոյ։ Նախ. ո՛ք մայրն զլանայ և ոչ տայ զշաքարն որդւոյն, որ ենթարկեցեալ է որդանց։ այսպէս և ա՛ծ բառնայ 'ի մէնջ զմխիթարութի՛ն, մինչ առնումք մեք զունայն համահաճութի՛ ինչ, և մինչ ենթարկիմք որդան ամբարհաւաճութե՛։ Բարի է ինձ (ո՛վ Տր՛) զի խոնարհ արարեր զիս ասէր մարգարէն։ և այս իրաւամբ. քանզի մինչև խոնարհեալ էի ես՝ մեղայ. վ՛ս վշտացուցի զքեզ։ Երկ՛դ. յորժամ հեղգանամք մեք ժողովել զքաղցրութի՛ն, և զհեշտութի՛ն սիրոյն ա՛յ՝ մինչ է ժամանակն, նա հեռանայ 'ի մէնջ 'ի պատիժ հեղգութե՛ մերոյ։ Իսրայէլացիքն, որք ոչ ժողովէին զմանանայն վաղվաղ ը՛ առաւօտն, զկնի ծագման արեգական՝ ոչ կարէին ժողովել



զնա,

զնա, զի գտանիւր ամենեւին հալեալ։ Երրորդ. մեք ընկղմանիմք երբեմն 'ի յգդայական, և 'ի մխիթարական մահճի խմիք, որք կորուսանեն զսիրելին մեր. որպէս և ընկղմանեալ էր սրբազան հարսն երգերգոցին։ Փեսայն հոգւոց մերոց բախէ զդուռն սրտի մերոյ, և ներշնչէ 'ի մեզ առ 'ի յառնել զհոգևոր կրթութիւս։ բայց մեք պատճառեմք առ նա, թէ թողուլն զայս ունայն հաճութիւս, և բաժանիլն յայսմանէ սուտ հեշտութէ՝ վնասաբեր լինի մեզ։ Որոյ վս՟՝ նա անցանի յառաջ, և թողու զմեզ անդ առ 'ի կորուսանել զժամանակն։ Եւ մինչ յետոյ կամիցիմք խնդրել զնա, յաւէտ դժուարաւ գտանեմք։ վս՟ զի մեք ինքնին արդիւնաւորեցաք զայս դժուարութիւս. որովհետև անհաւատարիմ գտանեցաք սիրոյ նորին, և արհամարհեցաք զկենցաղավարիլն իւր ըն՟ մեզ, առ 'ի հետևիլ աշխարհային իրաց։ Ափսո՜ս ուրեմն քեզ. զի մինչ ունիս դու զալիւրն եգիպտոսի, ոչ ունիս զմանանայն երկնից։ Մեղուքն գարշին յամ արուեստաւոր հոտոց։ այսպէս և ա քաղցրութիւնքն հոգւոյն՝ անբաղադրելիք են ընդ արուեստաւոր հեշտութեցն աշխարհի։ Չորրորդ. հոգևոր նենգութիւն, և խորամանկութի հոգւոյ, կիրարկեալ 'ի խոստովանութե, և 'ի հաղորդութե, զոր առնէ ոք ընդ խոստովանահօր իւրոյ. պատճառէ զչորութի, և զամլութի հոգւոյ։ Վս՟ զի ատելով դու հոգւոյն սիյ՟. ոչ է զարմանք, եթէ ոչ տացէ քեզ զմխիթարութիւն իւր։ և մինչ ոչ կամիս լինիլ պարզ, և միամիտ ոպ՟ երեխայ ոմն. այնու ուրեմն ոչ ունիցիս զշաքրատոգոր հատսն, որք տրին երեխայից։ Հինգերորդ. յագեալ ես դու աշխարհային հեշտութբն՟. ոչ է զարմանք ուրեմն՝ եթէ հոգևոր հեշտութիւնքն առբերիցեն 'ի քեզ զզուանս, և զգարշուանս։ Յագեալ աղաւնիքն (ասէ հին առակն) գտանեն զկեռասն

դառ

դառնագոյն։ Զքաղցեալս լցոյց բարութեամբ, ( ասէ Տիրուհին մեր ) և զմեծատունս արձակեաց ունայնս։ Քանզի այնք, որք լիացեալք, և լցեալք են աշխարհային հեշտութեամբն, ոչ են ընդունակք հոգևոր հեշտութեան, և մխիթարութեան։ Վասնորոյ․ եթէ պահեսցես դու բարեպէս զընկալեալ պտուղս մխիթարութեան, ունիցիս ուրեմն զայլ պտուղս նորապէս։ Զի այնմ՝ որ ունի, տացի և յաւելցի․ և այնմ՝ որ ոչ ունի զայն՝ որ տուեալ է ինքեան, այլ կորուսեալ․ բարձցի ՚ի նմանէ նաև այն, զոր ոչ ունի․ ՚ի զրկի ՚ի շնորհաց, որք պատրաստեալ էին նմա։

Զի թէպէտ անձրևն կենդանացուցանէ զտունկս, որք են դալարք, և կանաչք։ բայց ՚ի նոցունց, որք են չորացեալք, բառնայ նաև զկեանքն, զոր ոչ ունին, զի առնէ զնոսա ամենևին գոսանալ, և փտիլ։ Հանդունագոյն պատճառաւ կորուսանեմք և մեք զջերմեռանդական մխիթարութիւս, և անկանիմք ՚ի յամլութիւն, և ՚ի չորութիւն հոգւոյ։ Քննեսցուք ուրեմն զխղճմտանս մեր, և տեսցուք․ մի՛թէ գտանի ՚ի մեզ այնպիսի պակասութիւն ինչ։ Բայց պարտիս գիտել․ ո՛վ խանդակաթ առաքինութիւն․ զի այս քննութիւս ոչ է պարտ առնել անհանգստութեամբ, և մեծագոյն հետաքրքրութեամբ։ Այլ մանաւանդ թէ՝ զկնի հաւատարմաբար քննելոյ, և մտածելոյ զ․յօժարութիւն մեր առ այս իրակութիւս․ եթէ գտանիցեմք ըղ պատճառն չարին ՚ի մեզ, պիտոյ է շնորհակալ լինիլ զայս։ Վասն զի արդէն չարն, և հիւանդութիւն բժշկեցեալ համարի ՚ի կէսն, մինչ պատճառն յայտնեցեալ լինի։ Բայց եթէ հակադարձապէս․ ոչ տեսանես դու զմանաւոր, և զյատուկ ինչ, որ թուիցի քեզ թէ նոյնն պատճառեալ իցէ ՚ի քեզ զայս չորութիւս․ մի՛ յամիր նաև կէս մի առ ՚ի առաւել հետաքրքրել, և որոնել։ Այլ ընդ ամե

 պարզ

պարզմտութիւ, և առանց քննելոյ զմասնաւոր ինչ-
տրամ զայն, զոր տացին քեզ:

* Նախ. խոնարհեցո՛ զքեզ մեծապէս առաջի այ, հանդերձ ճանաչմամբ ոչնչութեան, և թշուառութեան քոյ. ասելով դու 'ի քեզ: Վա՜յ ինձ. զի՞նչ եմ ես ըստ ինքեան. ո՛վ Տէր, եթէ ոչ չոր երկիր իմն, որ պատառիլովն յամ կողմանէ, տայ զվկայութիւն ծարաւութեան իւրոյ, զոր կրէ պատճառաւ պակասութեան երկնային անձրևոյ. որև յայս պէս միջոցի ցրուէ, և 'ի փոշի դարձուցանէ զնա հողմն: Երկրորդ. կարդա՛ առ ած, և խնդրեա՛ 'ի նմանէ զիւր ցնծութիւն: Տո՛ւր ինձ ցնծութիւն փըր-կութեան քոյ: Հա՛յր իմ. եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն: Բա՛րձ աստի զանպտուղ հողմն, որ չո-րացուցանէ զհողի իմ. և առաքեա՛ զցօղադին հողմն մխիթարութեան, և շնչեա՛ 'ի պարտէզս իմ, զի խղձքն իմ արձակեսցեն զառուս առատագոյն ջերմեռանդութեան: Երրորդ. ե՛րթ առ խոստովա-նահայրն քո. բա՛ց բարեպէս զսիրտն քո. ցո՛յց նմա պարզապէս զբնաւ անկիւնս հոգւոյ քոյ. և ընկա՛լ զբնաւ զազդմունս, և զխրատս մեծաւ խո-նարհութիւ և պարզութիւ, զորս տայ քեզ: Վս զի ած, որ անհնապէս սիրէ զհնազանդութիւն. բազ-միցս առնէ օգտակար եղանիլ զայնս խրատս, որք առնանին յայլոց. և 'ի վեր քան զամ 'ի յառաջ-նորդաց հոգւոց, թէև այլովք ոչ թուիցին այն պիտիք: Ո՞չ և արար օգտակար լինել Նէեմանայ զջուրսն Յորդանանու, որոց սակս պատուիրեաց նմա Եղիսէոս 'ի կիրառնուլ, առանց վերահասու
լինելոյ մարդկայնոյ բանականութեան:

* Չորրորդ. զկնի այսոցիկ ամից, ոչինչ է առաւել պիտաքեր 'ի յայնպիսի չորութեան, և ամլութեան. քան զոչ ըղձահարիլն, և զյոյժ ոչ զբաղիլն 'ի յըղձի ազատելոյ: Արդ ես ոչ ասեմ արդէն. թէ ոչէ պիտոյ ունիլ զպարզ զըղձս ազատութեան իւրոյ:

այլ առեմ, թէ ոչ է պիտոյ ըղձահարիլ յոյժ. այլ մանաւանդ յանձնիլ պարզապէս յառկի նախախնամութեան Աստուծոյ, մինչև հաճեսցի նոյն ինքն ազատել զմեզ 'ի միջոյ այսոցիկ փշոց, և յանապատէ: Ասասցո՛ւք ուրեմն առ Աստուած յայնպիսի ժամանակի. Հա՛յր եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն: սակայն նաև առակցեսցո՛ւք: Բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու: Եւ մեծագոյն հանգստութեամբ հաստատեսցուք 'ի սմին, որքան և կարասցուք: զի տեսանելով Աստուած զմեզ 'ի յայսպիսի անզանազանութե, մխիթարէ զմեզ մեծագոյն շնորհի՛, և օգնութեամբ: Որպ մինչ ետես զաբրահամ, որ առաջադրեալ էր յինքեան՝ զրկել 'ի սահակայ որդւոյ իւրմէ, հաճեցաւ 'ի նա՝ տեսանելով զնա անզանազան յայսպիսի մաքուր յանձնեցման, և առաջադրութե. և մխիթարեաց զնա հաճելի տեսլեամբ, և քաղցրագոյն օրհնութեամբ միով: Պարտիմք ուրեմն մեք 'ի բնաւ իղձս մեր, որքան 'ի մարմնաւորս, այնքան 'ի հոգևորս. և 'ի բնաւ ցնդմունս, և կմ 'ի շարաբարձմունս զգայական ջերմեռանդութե, որք պատահին մեզ, առել բոլորով սրտիւ՛, և խորագոյն խոնարհութեամբ միով: Տէր ետ ինձ զմխիթարութի. Տէր եբարձ յինէն զայն, օրհնեալ լիցի իւր անունն: Վա՛ զի յարատևելով յայսմիկ խոնարհութե, վերստին տայ նա մեզ զայնպիսի հեշտալի մխիթարութիւնս, և զշնորհս. որպ և արար յակոբայ, որ այսպիսի բանիւք վարէր 'ի բնաւ պանդխտութե իւրում:

* Հինգերորդ, և վերջապէս. 'ի մէջ բնաւից չորութեանց, և ամլութեանց մերոց, մի՛ կորուսցուք զքաջութիւն. այլ սպասեսցուք համբերութեամբ վերադարձմանն մխիթարութե. սակայն այսու միջի՛, հետևեսցուք նաև հասարակ սովորութե մերոյ: Մի՛ թողցուք զմի՛կ զջերմեռանդական կրթութիւն ինչ: մանաւանդ եթէ կարելի իցէ, բազմացուսցուք

զնա

զբարեգործութիւն մեր: Եւ ոչ կարելով տալ որ_
բագոյն փեսայիւն մերոյ զկակուղ, և զփափուկ
պտուղս շաքրով համեմեալս. գոնեայ տացուք նմա
զչորագոյնս, և զխստագոյնս. զի նմա մի և նոյն
է ամ: միայն թէ սիրտն, որ մատուցանէ նմա,
իցէ կատարելապէս առաջադրեալ 'ի յինքն՝ առ'ի
սիրել զնա, Յորժամ դարունն է գեղեցիկ, մե_
ղուքն յառաջածեն զմեղերս յոգունս, և զսակաւ
ձագունս: քանզի պատճառաւ գեղեցկութեան
ժամանակին, այնքան զբաղին նոքա 'ի վերայ
ծաղկանց առ'ի հաւաքել զմեղրն, մինչ զի մո_
ռանան բազմացուցանել զձագունս իւրեանց:
Բայց մինչ դարունն է խիստ, և ամպախառն,
յառաջածեն զբազում ձագունս, և զսակաւ մե_
ղերս. զի ոչ կարելով ելանել յարտաքս առ'ի
ժողովել զմեղրն, զբաղին 'ի բազմացուցանել զձա
գունս: Պատահի բազմիցս՝ ո՛վ խանդակաթդ ա_
ռաքինութե. զի հոգին տեսանելով զինքն 'ի գե
ղեցիկ գարնան հոգևոր մխիթարութե, այնքան
զբաղի 'ի ժողովել, և 'ի ծծել զնա. մինչ զի 'ի յա
ռատութե այսորիկ քաղցրագոյն հեշտութե, նա
առնէ զսակաւագոյն գործս: Եւ հակադարձա_
պէս. 'ի մէջ խստութեց, և հոգևոր ամլութեց.
ո՛րքան առաւել տեսանէ զինքն զուրկ գոլ 'ի հա_
ճելի զգացմանց ջերմեռանդութե, այնքան առա
ւել բազմացուցանէ զգործս: Նաև առատանայ 'ի
ծնանիլ զներքին առաքինութիս համբերութե,
խոնարհութե, արհամարհման իւրեան, յանձնա
րարութե յա՟ծ, և ուրացման յատկի սիրոյ իւր:
* Այս է ուրեմն մեծագոյն վատ սովորութիւն
բազմաց, և յատկապէս կանանց. հաւատալ թէ,
զայն ծառայութիւն՝ զոր մեք առնեմք ա՟յ թարց
քաղցրութե, թարց կակղութե սրտի, և թարց
զգացման ջերմեռանդութե, անհաճոյ իցէ ա՟ծայ
նոյ հանդիսավեհութեն: Որովհետև հակադար
ձա_

ձանպս, գործքն մեր են հանգոյն վարդից, որք թէպէտ 'ի գոլն դալար և թարմ, ունին զգեղեցկութիս. բայց 'ի գոլն չորացեալ, ունին զմեծագոյն հոտս, և զօրութիս: Սոյնգունակ. թէպէտ գործքն մեր մինչ առնանին կակղութբ սրտի, են առաւել հաճելիք առ մեզ: ասացի առ մեզ. զի մեք ոչ նկատեմք, եթէ ոչ առ յատուկ քաղցրութիւն մեր: Բայց սակայն մինչ առնանին 'ի յամլութե, և 'ի չորութե. ունին զմեծագոյն հոտս, և զմեծագոյն զօրութիս առաջի այ:

Այսպէս է ո՛վ խանդակաթդ առաքինութե. զի 'ի ժամանակի չորութե, կամքն մեր քարշէ զմեզ առ ծառայութիւն այ՝ իբր թէ բռնութբ. որոյ վն պիտոյ է հետևապէս, զի իցէ առաւել քաջ, և առաւել հաստատ, քան 'ի ժամանակի կակղութե: Ոչ է մեծագոյն իր ինչ ծառայել իշխանի ուրուք, 'ի քաղցրութե խաղաղ ժամանակի իմիք, և 'ի մէջ հեշտալի պալատի և յարկի: Բայց այս է ճշմարիտ նշանն հաւատարմութե, և հաստատութե, ծառայել նմա 'ի խստութե պատերազմի, նաև 'ի մէջ աղմկութե, և վրդովման: Ասէ երանուհի անկլիա Փօլինացին. թէ այն աղօթքն առաւել հաճելի է այ, որ առնանի բռնութբ, և ստիպմամբ: Այսինքն. այն աղօթքն, առ որ քարշիմք մեք, ոչ վն քաղցրութե ուրուք, զոր ունիմք անդ, և ոչ ևս վն հակման, և յօժարութե մերոյ. այլ պարզապէս առ 'ի հաճոյանալ այ, առ որ ածէ զմեզ կամքն մեր՝ իբր ընդդէմ յօժարութե մերոյ. ստիպելով, և բռնաբարելով զչորութիւն, և զհակամարտութս, որք հակառակին ընդդէմ այսորիկ:

Ասեմ ևս զնոյնն, վն ամ տեսակ բարեգործութե. զի որքան առաւել հակառակութի, և ներհակութի ունիցիմք. թէ ներքին, և թէ արտաքին 'ի առնելն զնա. այնքան առաւել լաւագոյնք

հա-

համարեալք լինին, և հաճոյանան առաջի ա̃յ: Եւ ո՛րքան սակաւ գտանիցի մասնաւոր, և յատուկ շահն մեր՝ 'ի կրթելն յառաքինական գործս. այնքան մեծապէս փայլի անդ մաքրութիւն ա̃ծային սիրոյն: Արդ թէպէտ երախային դիւրապէս համբուրէ զմայրն իւր, որ տայ նմա զշաքար: բայց եթէ համբուրիցէ զնա յետոյ, մինչ տայ նմա զալիսինթ, և զլեղի. յայնժամ նշան է, թէ յոյժ սիրէ զնա:

## Հաստատի, և բացայայտի առաջեալն մեր, 'ի ձեռն միոյ յայտնագոյն օրինակի:

## Գլուխ. ԺԵ:

Արդ առ 'ի առնել քեզ առաւել յայտնի զբնաւ խրատս, և զներադրումնս, կամիմ դնել աստ զգեղեցկագունից պատմութիւն իմն սրբոյն Բեռնարդոսի. այնպէս, ո̃պ և գտանի 'ի գիրս նորին գիտնագոյն, և իմաստնագոյն առն: Արդ ուրեմն՝ այսպէս ասէ նա: Է երբ հասարակ էր իմն առ այնս բնաւս, որք կամին ծառայել ա̃յ, և առ այնս՝ որք ոչ են տակաւին փորձառուք 'ի բաց բարձման շնորհաց, և հոգևորական փոփոխմանց: Մինչ պակասի 'ի նոցանէ այս զգայական քաղցրութիւն ջերմեռանդութեն, և այս հեշտալի լոյսս, որ յորդորէ զնո̃ փութալ յա̃ծային ճանապարհս. իսկոյն 'ի միում կիտոջ կորուսանեն զհամբերութիւն, և անկանին 'ի տրտմութիւն, և 'ի փոքրոգութիւն սրտի: Վ̃ն զի իմաստուն արքն տան զայս պատճառս. թէ բանական բնութիւնն, ոչ կարէ երկարապէս կալ քաղցեալ, և առանց հեշտութեն ուրուք, թէ

երկ-

երկնային, և թէ երկրային : Արդ ոչ հոգիքն
վերացեալք 'ի վեր քան զաստեղս՝ ճաշակմամբ վե
րադունի հեշտութե՛ , դիւրապէս հրաժարին յե
րևելի առարկայից : Այսպէս ևս մինչ ծայրին
տրամադրութե՛ն բառնի 'ի նոցանէ հոգևոր ցըն
ծութիւնն . և գտանիլով ևս 'ի միւսոյ կողմանէ
զուրկք 'ի մարմնական մխիթարութէ . նաև ոչ գո
լով տակաւին սովորք ապաւել համբերութեամբ
վերադարձմանն արեգական . թուի նոցա թէ ոչ
իցեն 'ի յերկինս, և ոչ ևս 'ի յերկրի . այլ իցեն թա
ղեալք 'ի մշտնջենաւոր դիշերի խիք : Որոյ վս՞ լի
նին համդոյն երեխայից , որք հատանիլով յստե
անց , վս՞ կորուսանելոյ զստինս իւրեանց , հի՛ւծա
դանան , հեծեն , նաև նեղասիրտք , և անհամ
բերք լինին նախապետաքարյինքեանս : Այն պա
տահումն ուրեմն՝ պատահեցաւ 'ի դնալն 'ի ճանա
պարհ , միոյն 'ի յընկերակցաց իւրոց , (զորմէ պատմե
ա՞ն) որ կոչէր կօլթիֆռէտօ փէրօնացի , որ և նո
րա՞ ընծայեալէր զինքն 'ի ծառայութէն այ : Վս՞
զի սոյն անձնս՝ 'ի միում կիտող դտանեցաւ չոր , և
զուրկ յամէց մխիթարութե՛ց . և պաշարեցեալ 'ի
ներքին խաւարէ , սկսաւ յիշել զաշխարհային բա
րեկամսն , զծնօղսն , և զինչսն իւր , զորս թողեալ
էր : Ուստի այնպէս շրջապատեցեալ եղև 'ի խստա
դոյն փորձութէ միոյ , մինչ զի ոչ կարէր թադու
ցանել նա 'ի դնացից , և 'ի կրից իւրոց : Եւ մինն
յառաւել հաւատարմաց իւրոց՝ իմանալով զայս ,
մերձեցաւ առ նա յաջկուսէ , և ասաց նմա ծած
կաբար՝ քաղցրադոյն բանիւք : Զի՞նչ կամի լինել
այս , ո՜վ կօլթիֆռէտօս . է՞ր վս՞ արտաքոյ կար
գի կաս դու այսպէս տրտմաթախիծ , և անձկա
ցեալ : Յայնժամ կօլթիֆռէտոս պատասխանեաց
նմա խորադոյն հառաչմամբ . ահ . ո՜վ եղբայր
իմ . ես ոչ երբէք այլ ևս ուրախացայց 'ի բոլոր
կեանս իմ : Եւ 'ի լսելն նա զայսպիսի բանս 'ի

նմա

նմանէ, շարժեցաւ 'ի գթութիւն, և 'ի ցաւակցու-
թիւն վ̄ս եղբայրական սիրոյն: Որոյ վ̄ս գնաց ին-
կոյն 'ի պատմել զայս սր̄բյն Բեռնարդոսի, որ էր
հայր հասարակ եղբայրութեանն: որ և նա տեսանե-
լով զմեծագոյն որոգայթն զայն, եմուտ 'ի մերձա-
գոյն եկեղեցի մի առ 'ի աղօթել վ̄ս ն̄ր: Եւ կօ-
թիֆուէտոս յայսմիկ միջոցի անձկացեալ 'ի տրտ-
մութեան, եդ զգլուխն իւր 'ի վերայ քարի միոյ, և
ննջեաց: Բայց զկնի սակաւ ժամանակի երկոքե-
անքն ևս յարեան: մինն 'ի յաղօթից՝ ընկալեալ
շնորհօքն. և միւսն 'ի քնոյ՝ այնքան պայծառ, և
ուրախ երեսօք. մինչ զի այն սիրելի բարեկամն
իւր՝ զարմացեալ վ̄ս այսպիսւոյ մեծի, և խոկոյնա
կան փոփոխմանս, ոչ կարաց համբերել 'ի յոչ
յանդիմանելոյ սիրականապէս զայն բանն, զոր
սակաւ ինչ յառաջ նա պատասխանեալ էր նմա: Առ
որ պատասխանեաց յայնժամ կօթիֆուէտոս: Թէ
պէս յառաջ ասացի քեզ, թէ ոչ երբէք այլ ևս
ուրախացայց, 'ի բոլոր կեանս իմ: բայց յայժմ
ասեմ, թէ ոչ երբէք այլ ևս տրտմեցայց 'ի բնաւ
կեանս իմ: Ահա այսպիսի եղև պատահումն փոր
ձութեան, այս ջերմեռանդ անձինս:

*Բայց սակայն գիտել պարտիս՝ ո՛վ խանդակաթդ
առաքինուն. զայսս ներգործութիւնս, որք լինին յայս
պիսի իրակութեան: Նախ. թէ ա̄ծ հասարակօրէն
տայ զառհաւատչեայ իմն երկնային հեշտութեան,
և քաղցրութեան՝ այնոցիկ, որք նուիրին 'ի ծառայ
ութիւն իւր, առ 'ի 'ի բաց քարշել զն̄ս յերկրային
հեշտութեանց, և զօրացուցանել 'ի հետևումն ա̄ծ
ային սիրոյն: Ոչ և առնէ մայր ոմն, որ առ 'ի
քարշել զիւր փոքրագոյն որդին 'ի յստինս իւր,
դնէ 'ի վ̄ր ն̄ր զմեղր: Երկ̄րդ. թէ ա̄ծ է այն, որ
երբեմն ըստ խորագոյն տրամադրութեանն իւրոյ,
բառնայ 'ի մէնջ զկաթն, և զմեղրն միխթարու-
թեան: Զի այսու կերպիւ հատանելով զմեզ 'ի յստե-
անց,

անց, ուսանիցիմք ուսել զկարծրագոյն, և զխստագոյն հացն սաստկագունի ջերմեռանդութեան միոյ. և կրթիցուք 'ի փորձառութիւն անհաճելեաց. դ̃ փորձութեանց, և նեղութեանց։ Երրորդ. թէ երբեմն յառնեն մեծամեծ փորձութիւնք 'ի մէջ չորութեան, և ամլութեան։ ուստի յայնժամ պիտոյ է հաստատապէս ընդդիմանալ ընդդէմ նոցա, վ̃ զի նոքա ոչ գան 'ի յայ̃։ Բայց սակայ պիտոյ է և ս տանիլ հորութեանցն համբերաբար, որովհետև ա̃ծ թոյլատրէ զնո̃ 'ի գալ, վ̃ կրթութեան մերոյ։ Չորրորդ. թէ ոչ պարտիմք յուսահատիլ երբէք հոգւով, 'ի մէջ ներքին անձկակրութեան մերում, և ոչ և ս ասել զ̃ ջերմեռանդ կօթէլիփուէտոսին. թէ ոչ երբէք այլ և ս ուրախացայց. զի 'ի մէջ գիշերի պարտիմք ակնունիլ լուսոյ։ Եւ հակադարձապէս և ս 'ի գեղեցկագոյն հոգևոր ժամանակի, զոր կարեմք ունիլ մեք. ոչ պիտոյ է ասել՝ թէ ոչ երբէք այլ և ս տրտմեցայց։ Ո՛չ. զի ո՞չ ասէ իմաստունն։ Յաւուրս բարեաց մի՛ լինիցիս անյիշող չարեաց։ Քանզի պիտոյ է յուսալ 'ի մէջ նեղութեանց, և երկնչիլ 'ի մէջ յաջողութեանց։ և ո՞չ 'ի միում առթի և պատահման, այսպէս և ս 'ի միւսումն՝ պիտոյ է միշտ խոնարհիլ։ Հինգերորդ. թէ այս է դերաղանցագոյն դեղ իմն, բացայայտել զչարիս, և զկիրքն իւր՝ հոգևոր բարեկամի ումեք, որ կարէ ձեռնտու լինիլ մեզ։

* Մերջապէս. առ 'ի եզրակացութիւն այսպիսի հարկաւոր խրատու, ծանուցանեմ քեզ. թէ ո՛րպէս 'ի բնաւ իրս, այսպէս և 'ի սոյնս, ունին ըղներհակ դիմամարտուն՝ Ած̃, և թշնամին մեր։ Վ̃ զի ա̃ծ կամի նոքօք ածել զմեզ առ մի մեծագոյն մաքրութիւն սրտի, և առ մի ամբողջագոյն հրաժարումն յատկի օգտի մերոյ, որքան առ իւր ծառայութիւն, և որքան առ մի կատարեալ անյօրմարութեան մերոյ ինքեան։ Բայց չար ոգին ջանայ

ցա_

յարուցանել զայսպիսի նեղութիւնս, և անձկութիւնս, առ'ի յուսահատել զմեզ, առ'ի դարձուցանել 'ի կողմն զգայական հեշտութեան, առ'ի լինել վնասակար մեք մեզ, նաև այլոց, և առ'ի փառաբանել և անգոսնել զամ̃ ջերմեռանդութիւն: Այլ եթէ պահեսցես դու զխրատս, զորս ետու քեզ. մեծապէս աճեցուցանես զկատարելութիւն քո 'ի կրթութեան, զոր արասցես դու 'ի մէջ նեղութեանց: զորոց ընձեռելն ոչ կամիմ եղերել, մինչև իցեմ ասացեալ նաև զայս բանս. Թէ դառնութիւն, չարութիւն, և ամլութիւն, ծնանին երբեմն 'ի տրամադրութենէ մարմնոյ. ո̃չ մինչ վ̃ առաւելութեան ծերութեան, նեղութեան, և պահեցողութեան՝ դատանի առ նուաճեալ 'ի յաշխատութէ, 'ի քնոյ, 'ի ծանրութէ խմբէ, և կամ յայլոց այսպիսեաց տկարութեանց: Որք թէպէտ կախին 'ի մարմնոյ. սակայն ոչ դադարին նաև 'ի նեղացուցանելոյ զոգին. և այս վ̃ անձկագոյն կապանացն, որ դատանի 'ի մէջ նց: Արդ 'ի սոյնպիսի պատահման, միշտ պիտոյ է մեզ մտախոհ լինել՝ առ'ի առնել զբազում գործս առաքինութեան, 'ի ձեռն զօրութեան մտաց, և վերնագոյն կամաց մերոց: Վ̃ զի թէպէտ թուի մեզ, թէ հոգին մեր բոլորովին թմբրեալ, և նուաճեալ իցէ 'ի քնոյ, և յաշխատութէ: սակայն այսու ամ̃ի, գործքն հոգւոյ մերոյ ոչ թողուն զհաճելի լինելն ա̃յ:

* Եւ՞ կարեմք առնել 'ի նմին ժամու, ո̃չ և առէր որբազան հարսն. Ես ննջեմ, և սիրտ իմ արթուն կայ: Եւ՞ ոչ ասացի 'ի վերոյ. թէպէտ քեզ սակաւ հաճելի է այսպիսի կերպն տաղնապին, և տառապակրելն: սակայն սոյնս է քեզ մեծագոյն արդիւն, և մեծագոյն առաքինութիւն: Բայց յայսմիկ պատահման՝ դեղն է այս. զօրացուցանել ըն մարմինն օրինաւոր ուրախութեամբ, և զբօսանօք իմեք: Այսպէս և սրբն բեռնարտոս պատուիրէր

կրօնաւորացն իւրոց, զի այնպէս բարեխառնք ի-
ցեն յաշխատութե իւրեանց, մինչ զի ոչ նուա-
ղիցեն այնու զջերմեռանդութիւն հոգւոյ ։

* Բռ այս առաջադրութի ․ նաև փառաւորա-
գոյն նոյն հայրն, միանգամ այնպէս պաշարեցել
և շարժեցեալ եղև 'ի միոյ խորագոյն տրտմութե,
մինչ զի ոչ կարէր առնել ոչ ցուցանել զկիրս իւր ։
Վզ զի եթէ կամէր կենցաղավարել ընդ կրօնա-
ւորաց, ոչ կարէր ․ եթէ բաժանիւր 'ի նոցանէ
էր վատթարագոյն ․ ժուժկալութիւն, և նիհա-
րութիւն մարմնոյ՝ առաւել ծանրացուցանէին զայն,
և աղօթքն ոչ թեթևացուցանէր գոնեայ կէտ
մի ։ Ուստի եկաց նա այսու կերպիւ զամս եր-
կուս ․ այնպէս՝ մինչ զի թուէր ինքեան, թէ բո-
լորովին թողանեցեալ իցէր յայ ։ Բայց զկնի կրե-
լոյ խոնարհաբար զայս խստագոյն մրրիկս, և ա-
լէկոծութիս ․ Ամենափրկիչն մեր ետ նմա 'ի մի-
ում կիտոջ զերջանկագոյն հանդարտութի իւր ։
Ե՞ւ այս առ'ի ծանուցանել, թէ մեծամեծ ծա-
ռայքն այ ենթարկեալք են այսպիսի սասանեց-
մանց ․ ուստի և փոքրագոյնքն ևս ոչ պարտին
զարհուրիլ, եթէ պատահիցի երբեմն նց այս ։

Վերջ Չորրորդի Մասին ։

# ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

## ՆԵՐԱԾՈՒՄՆ ԱՌ ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ։

*Որ պարունակէ զկրթութիւս, և զներազդմունս առ 'ի նորոգել զհոգին, և առ 'ի հաստատել զնա 'ի ջերմեռանդութեան.*

Յաղագս թէ պիտոյ է յոյժ փութով նորոգել զէարէ առաջադրութիւն, ըստ հետեւեալ կէրթութէանցն ։

### Գլուխ. Ա։

ՍԱԽԿԻՆ ԿԷՏՆ, ԵՒ ՄԱՍՆ այսոցիկ կրթութեանց՝ կայանայ 'ի բարեպէս ճանաչել զհարկաւորութիւն նոցին ։ Մարդկային բնութիւն դիւրապէս անկանի 'ի բարի ըղձից իւրոց, պատճառաւ բեկանաւորութեն, և չար յօժարութեն մարմնոյ իւրոյ, որ ծանրացուցանէ զհոգին, և քարշէ 'ի վայրկոյս, եթէ ոչ վերացուցէ զինքն բազմիցս 'ի վերկոյս՝ զօրութբ առաջադրութեն ։ Ուստի անկանին 'ի յերկիր ոպ զթռչունս, եթէ ոչ յաճախիցեն զհարկանմունս մագլաց, և զբախմունս թեւոց՝ առ 'ի մնալ 'ի թռչման 'ի բար

'ի բարձունս ։ Վ̃նկ ո՛վ խանդակաթդ առաքինութե. դու ունիս զպիտանաւորութի՛ առ 'ի նորոգել, և վերակրկնել յաճախա̃պ զբարի առաջադրութիս, զորս արարեր վ̃ ծառայելոյ ա̃յ. աղագաւ երկխղին, զի մի՛ գուցէ ոչ առնելով զայն, անկանիցիս 'ի յառաջին կացութին քո. կմ̃ գոնեայ յայնպիսի կացութե իմիք, որ իցէ յոյժ վատթարագոյն։ Քանզի հոգևոր անկմունքն ունին զյատկութիս զայս, զի միշտ գահավիժեն զմեզ առաւել 'ի վայրկոյս, քան զոր զոր էաքն 'ի նախկին կացութեան, յորմէ վերացաք 'ի բարձունս ջերմեռանդութե։

Արդ ոչ գտանի ժամացոյց ինչ, որքան և լաւագոյն իցէ, որոյ ոչ պիտոյանայցէ լարել զհակադըրեցեալ անիւ՛ն երկու անգամ յաւուրն. մ̃ 'ի յառաւօտու, և 'ի յերեկոյի։ Եւ՛ բայց 'ի յայսմանէ նաև միանգամ 'ի տարւոջն քակի, և բաժանի 'ի մասունս՝ առ 'ի լուանիլ 'ի ժանգոյ, զոր ունի. և առ 'ի ուղղել 'ի յաւերեալ մասունս, նաև վերանորոգել 'ի յայնս, որք են մաշեցեալք։ Այսպէս ևս այն, որ ունի զճշմարիտ հոգունակութի վ̃ սրտի իւրոյ, պարտի վերացուցանել զնա 'ի յա̃ծ՝ 'ի յերեկոյի, և 'ի յառաւօտու, 'ի ձեռն վերոասացեալ կրթութեն։ Եւ՛ բաց 'ի յայսմանէ, պարտի նաև բազում անգամ քննել զկացութին իւր, առ 'ի ուղղել, և կարգաւորել զնա։ Եւ՛ վերջա̃պ. նաև գոնեայ միանգամ 'ի տարւոջ պարտի մանրամասնաբար քննել, և վերանկատել զա̃մ մասունս նորին. մ̃ զիղձս, և զկիրս իւր, առ 'ի վերաբժշկել զա̃մ պակասութիս, որք գտանիլ կարեն անդ։ Եւ՛ ո̃պ շինօղն ժամացուցի, փուփուկ իւղովն օծանէ զանիւ՛ն, զլիսեռն, և զընաւ շարժական մասունս ժամացուցի իւրոյ, զի շարժմունքն լինիցին բարեխառնապէս, և քաղցրաբար. նաև զի իցէ սակաւապէս ենթարկեալ ժանգոյ։ Այսպ̃ս

եւս ջերմեռանդ անձն, զկնի կրթելոյ առ՚ի բարեպէս վերանորոգել զայս աւերումն սրտի իւրոյ, պարտի նաեւ օծանել զնա խորհրդով խոստովանութեան, եւ հաղորդութեան: Զի այս կրթութիւնս վերանորոգէ զօրութիւնս մեր՝ աւերեալ երկարութբ ժամանակի, ջերմացուցանէ զսիրտն մեր, կանաչացուցանէ զբարի առաջադրութիւնս մեր, եւ ծաղկեցուցանէ զառաքինութիւնս հոգւոյ մերոյ:

* Առաջին քրիստոնեայքն կիրարկէին զնա մեծահոգաբարձութբ 'իյաւուր տարեդարձի բոլորի տարւոյն՝ մկրտութեան Տն մերոյ. յորում ( ոպ ասէ սբն գրիգոր նիւսացի ) նորոգէին նոքա զդաւանութիւնն, զխոստումն, որք առնանէին յայսմիկ խորհրդոջ: Արասցուք ուրեմն ո՛վ խանդակաթդ առաքինութեան. զնոյնն նաեւ մեք, կարգադրելով զբարի կամս մեր, եւ զբաղելով զմեզ 'ի բաղում պարաւանդութիս :

* Ընտրեա՛ ուրեմն զպատկանաւոր ժամանակ ինչ, ըստ՝ ենթադատութեան հոգեւոր հօր քոյ, եւ կալով անդ մնացեալ սակաւ ինչ աւելի քան զհասարակն, իբր 'ի հոգեւոր, եւ յիրական անապատի. արասցես զերկու, եւ կամ զերիս մտածմունս, 'ի վերայ հետեւեալ կէտիցն, ըստ այնմ կանոնի, որ տուաւ քեզ յերկրորդի մասին :

## Մտածումն 'ի վերայ բարերարութեան՝ զոր առնէ քեզ Աճ, յորդորել առ ի սէր և ծառայութիւն · ըստ խոստման, և ըստ առաջադրութե, որ 'ի վերոյ արարաւ :

### Գլուխ · Բ :

1. Մտածեա՛ զկէտս խոստման, և առաջադրութե՛ քոյ : Առաջինն է · զի թողեր, արհամարհեցեր, անարգեցեր, և հրաժարեցար մշտապէս յամենայն մահացու մեղաց : Երկրորդն է · զի ընծայեցեր և նուիրեցեր 'ի սէր, և 'ի ծառայութե՛ այ զհոգի, զսիրտ, և զմարմինն քո, համդերձ այնոքիւք ընաւիւք, որք կախին 'ի նոցանէ : Երրորդն է · զի եթէ պատահիցէր քեզ երբեմն անկանիլ 'ի չար գործ ինչ, յառնիցէիր անդէն իսկոյն, միջնորդութեամբ ածային շնորհացն : Արդ մի՞թէ այսպիսի առաջադրութիւնքս, ոչ իցեն գեղեցիկք, արդարք, արժանաւորք, և ազնուագոյնք : Բարեպէս մտածեա՛ ուրեմն 'ի հոգի քո · թէ ո՛րքան ըղձալի է այսպիսի առաջադրութիւնս :

* 2. Մտածեա՛ · թէ ո՛ւմ արարեր զայս առաջադրութիւնս, և զխոստմունս · վասն զի արարեր զայն այ : Արդ եթէ բանաւոր խօսքն, զոր տամք մեք մարդկանց, խստապէս պարտաւորեն զմեզ առ 'ի կատարել : ապա ո՛րքան առաւել պարտաւորեն այնք, զորս տուեալ եմք այ : Ո՛վ Տէր ասէր դաւիթ · Քեզ ասաց սիրտ իմ : Բղխեաց սիրտ իմ զբան բարի :
Յաւիտեան ես ոչ մոռացայց զարդարութիւնս քո :

* 3. Մտածեա՛ · թէ 'ի ներկայութե՛ ո՛րոց արարեր : զի արարեալ եղև յանդիման այ երկնային քաղաքակցաց : Այսինքն · առաջի Ամենասրբուհ

ւոյ կուսին մարիամու. Սրբոյն Յովսէփայ. Պաշտպան հրեշտակի քոյ, և այլոց բազմաց սրբոց: Եւ բոլոր այն օրհնեալ ընկերակցութիւն նկատէր 'ի քեզ, և հառաչէր 'ի վերայ խօսիցն քոյ հառաչմամբ ցնծութեան, և հաւանութեան. և անպատմելի աչօք սիրոյ տեսանէր զսիրտն քո անկեալ առ ոտս փրկչին, նուիրելով զինքն 'ի ծառայութիւն նորին: Որոյ վասն նաև արար զերջանիկ ուրախութիւն իմն մասնաւոր, 'ի բոլոր երկնայինն եդեմ: և այժմ ևս առնէ զյիշատակն, եթէ բարի սրտիւ նորոգեցես դու զառաջադրութիւն քո:

* 4. Մտածեա՛. թէ 'ի ձեռն ո՛րոյ միջնորդութեան արարեր դու զառաջադրութիւն քո: Ո՞հ թէ. ո՛րքան քաղցր, և ո՛րքան հաճելի եղև քեզ ած 'ի ժամանակի այնմիկ: Բայց սաս՛ ճշմարտութեամբ. մի՞թէ ոչ հրաւիրեցար դու յայնժամ 'ի Հոգւոյն սբյ 'ի ձեռն քաղցրագոյն քարոզման: Մի՞թէ առասանքն, 'ի ձեռն որոց քարոզեաց ած զայս նաւակս առ նաւահանգիստ փրկութեան, ո՞չ եղեն առասանք սիրոյ, և քաղցրութեան: Արդեօք որպէս քարոզեաց զքեզ առ ինքն քաղցրացուցեալ ածային շաքարովն, միջնորդութեամբ սրբազան խորհրդոց, ընթերցմանց, և աղօթից: Ո՞հ ցաւոյս. ո՛վ խանդակաթդ առաքինութեան. դու ննջէիր, և ած հսկէր 'ի վերայ քո, և խորհէր վասն սրտի քոյ զխորհուրդ խաղաղութեան. նաև մտածէր վասն քո զմտածումն, և զխորհուրդ սիրոյ:

* 5. Մտածեա՛. թէ յո՛րում ժամանակի քարոզեաց զքեզ ած առ այս մեծ առաջադրութիւն. զի եղև 'ի ժամանակս ծաղկեալ հասակի քոյ: Ո՞հ թէ. ո՛րքան բարեբախտութիւն է ուսանիլ յայնմիկ ժամանակի, զոր ոչ երբէք կարեմք ուսանիլ յայլում ժամանակի, եթէ ոչ անագան: Սրբն օգոստինոս գոլով քարոզեցեալ առ ած, մինչ էր յեռեսնամեայ հասակի, աղաղակէր: Ով հնագոյն գեղեցկութիւն,

որ-

որպէս անագան ճանաչեցի զՔեզ: Վա՜յ ինձ. Եւ զՔեզ փնտռէի, բայց ոչ էր ի զՔեզ խնդրայի: Որ և բարեպէս կարես ասել և դու: Ո՞վ հնազդոյն քաղցրութի. ընդ է՞ր ոչ ճաշակեցի զքեզ կանխապէս. մի՞թէ յայնժամ ոչ արդիւնաւորէիր դու զայս: Եւ ճանաչելով, թէ զո՛րպիսի շնորհս արար քեզ Տծ, քարշելով զքեզ առ ինքն 'ի մանկութե, և յերիտասարդութե քում, ասա ընդ Դաւթի. Ած իմ, ուսուցեր զիս 'ի մանկութէ իմմէ, և ցարդ ևս պատմեցից զարդարութիւնս քո: Բայց եթէ այս եղեալ իցէ 'ի հասակի ծերութե քո ո՛վ խանդակաթդ առաքինութե, իմա թէ ո՛րպիսի շնորհք է այս, որ լինի դէպ առ քեզ զկնի այսպէս չարաչար վատնելոյ զանցեալ ամս քո, որովհետև կոչեաց զքեզ Տծ առ ինքն յառաջ քան զմահն քո: Քանզի եթէ կարճիցէր, և դադարեցուցանիցէր զընթացն քոյոյ թշուառութե յայնմիկ ժամանակի, յորում յարատևէիր դու 'ի չարիս, յաւիտենականապէս ողորմելի, և թշուառական լինէիր:

*6. Մտածեա՛ զներգործութիւնն կոչմանս այսորիկ: Զի ըստ վարկման իմոյ, գտանես դու 'ի քեզ զբարի փոփոխմունս, 'ի բաղդատելդ զայս՝ որ եսդ, առ այն՝ որ էիր յառաջ: Մի՞թէ ոչ համարիս դու զմեծ բարերարութիւն ինչ զայսոսիկ. գիլելն խօսիլ առ Տծ 'ի յաղօթս. ունելն զըղձս առ 'ի սիրել զնա. խաղաղելն և հանդարտելն ըզբազում ախտս, որք անհանգստացուցանէին ըզքեզ. զգուշանալն 'ի բազում մեղաց, և 'ի շփոթմանց խղճմտանաց: Եւ վերջապէս՝ լինելն բազմիցս հաղորդեցեալ քան զայն, զոր առնէիրն յառաջ. նաև առակցելն զքեզ առ այն ծայրագոյն, և գերազանցագոյն աղբիւրն շնորհաց: Վա՜շ թէ. ո՛րքան մեծագոյնք են շնորհքս այսոքիկ: Պիտոյ է ո՛վ խանդակաթդ առաքինութե. կշռել զայնս կշռով սրբարանին. զի աջ Տն է, որ արար զայս ամ:

ման: Աջ Տն արար զզօրութիւն. ( ասէ դաւիթ ) աջ Տն բարձր արար զիս. ո՞չ. Ոչ մեռայց. այլ կեցից, և պատմեցից զգործս Տն. զի զսքանչելիս բարութեն իւրոյ՝ սրտիւ, բերանով և գործով:

*7. Զկնի այսոցիկ բնաւից մտածմանց, ( ով տեսանես դու ) որք զարդարեն զմեզ, լցուցանելով բարի ըղձիւք. պիտոյ է պարզապէս եզրափակել զայնս շնորհակալութբ, և ըղձալիս աղօթիւք իմիք, առ՚ի բարեպէս զարդանալ, և յառաջանալ: Դիմելով ՚ի յամ խոնարհութբ, և մեծաւ ապաւինութբ. նաև պահելով զզօրութիւն առաջադրութեն, առ՚ի առնել զկնի երկրորդ կիսի այսորիկ կրթութեն:

Յաղագս ձևնոյ հոգւոյ մերոյ՝ ի մ զարգացման, և յառաջադիմութե նորին առ քերթողական կեանն:

Գլուխ. Գ:

Այս երկրորդ կէսս կրթութեն է սակաւ ինչ երկար, և առ՚ի գործածել զնա առեմ քեզ. եթէ ոչ է հարկաւոր, զի առնիցես դու զնա բոլորն ՚ի միում վարկեան, և համանգամայն, այլ բազում անգամ: Հի՛բար. միանգամ առնելով զայն հարկաւորութիւն քո, որ հայի դէպ առ Ած: այլ անգամ զայն, որ հայի ՚ի քեզ ինքն: այլ միւսանգամ զայն, որ հայի առ ընկերդ: և ՚ի չորրորդ անգամին՝ արասցես զնկատումն, և զմտածումն ախտից, և կրից քոց: Ոչ է պիտոյ, և ոչ է հարկաւոր, զի դու արասցես զայնս ակնեալ ՚ի ծունկս. եթէ ոչ միայն ՚ի սկզբան, և ՚ի վախճանի, որ պարունակէ զխնդիրս: Եւ զայլս կէսս քննութեն՝ կա

րես

րես առնել դու քայլելով, և շրջագայելով. կամ
թէ լաւագոյն կերպիւ՝ 'ի մահճի, եթէ կարիցես
մնալ դու անդ ժամանակ ինչ առանց ննջելոյ,
և բարեպէս հսկողութ̃ ։ Սակայն առ 'ի առնել
զայս՝ պիտոյ է նախ բարեպէս ընթեռնուլ զայնս ։
Բայց պարտ է զայս ամ̃ առնել ըստ կնոջ, որ լինի
'ի յերիս աւուրս, և կամ 'ի յերկու գիշերս. առ-
նելով յիւրաքանչիւր աւուր, և յիւրաքանչիւր
գիշերի զժամ մի. կ̃ զժամանակ ինչ, ըստ ո-
րում կարես դու ։ Քանզի եթէ սոյն կրթութիւնս
առնանիցի յայնպիսի ժամանակի, որ յոյժ տա-
րակած իցէ միտն 'ի միւսոյ, այնու կորուսանէ ըզ
զօրութիւնն իւր, և լինի յոյժ անզօր ներգոր
ծութեան նորին ։

* Օկնի իւրաքանչիւր կէտի քննութ̃ե. նշանա-
գրեսցես՝ թէ յո՛րում պակասեցար, և կամ ո՛ւր
պատահեցան մեծագոյն անկարգութիւնք, առա-
ջաւ դիտելոյ բացայայտել զնս̃, առ 'ի առնուլ ըզ
խորհուրդ, զառաջադրութ̃ի, և զզօրութ̃ի մը-
տաց ։ Եւ 'ի յայնս աւուրս, նաև 'ի յայլս, յորս
դու արասցես զայս կրթութիւնս, թէպէտ ոչ
իցէ հարկաւոր բոլորովին 'ի բաց քարշել 'ի կեն-
ցաղավարութ̃է ։ Բայց պիտոյ է առնել զնա սա-
կաւ ինչ, և 'ի վեր քան զամ̃՝ դէպ 'ի յերեկոյն. զի
կարիցես կանխապէս գնալ 'ի ննջել, և առնուլ
զհանգստութ̃ի մարմնոյ, և մտաց, որ է հարկա-
ւոր առ մտածութ̃ն ։ Եւ 'ի մէջ աւուրն պիտոյ է
առնել զյաճախ հառաչմունս, և զաղօթս առ Աճ.
առ Ամենասրբուհի կոյսն մարիամ. առ Հրեշ-
տակսն. և առ բոլոր երկնայինն էջն ։ Պիտոյ է
նաև, զի այս ամ̃ առնանիցի առ Աճ՝ սիրահարեն̃,
և կատարեալ սրտիւ միով ։ Ուստի առ 'ի բարեպ̃
սկսանել զայս քննութիւնս ասեմ ։

* Դի՛ր զքեզ նախ առաջի ներկայութ̃ե այ̃ ։
Երկրորդ, կոչեա՛ զհոգին սբ̃, խնդրելով 'ի նմա-
նէ,

մանէ զլոյս, և զպայծառութիւն, զի կարիցես բարեպէս ճանաչել զքեզ հանգոյն սրբոյն Օգոստինոսի, որ խոնարհութեամբ մտաց աղաղակէր առաջի այ: ՈՎ ՏՐ, ԵԹԷ ՃԱՆԱՉԷՑԻՑ ԶՔԵԶ, ՃԱՆԱՉԷՑԻՑ ԵՒ ԶԻՍ: Նաև հանգոյն Ֆրանչիսկոսի, որ հարցանէր զած ասելով: ՈՎ ԵՍ ԴՈՒ. ԵՒ ՈՎ ԵՄ ԵՍ: Առաջադրեա ոչ կամիլ գիտել զզարդացումն, և զյառաջադիմութիւն քո առ՚ի ուրախանալ ՚ի քեզ ինքնդ. այլ առ՚ի տալ զփառս այ, և առ՚ի շնորհակալ լինել նմանէ:

* Առաջադրեա, ոչ և մտածես իսկ. թէ դու առարեալ իցես զաւակաւ զարգացումն, և յառաջադիմութիւն, կամ թէ դարձեալ իցես ՚ի յետս. բայց ոչ կամիս նաև այսու յուսահատիլ կերպիւ իւիք, և ոչ ևս ցրտանալ պակասութեամբ իմիք: Մանաւանդ թէ հակադարձապէս՝ կամիս առնել զմեծագոյն քաջութիւն, և առաւել զօրացուցանել, և խոնարհեցուցանել, և բուժել զպակասութիւնս քո, միջնորդութեամբ ածային շնորհաց:

* Զայս արարեալ. մտածեա քաղցրապէս, և հանդարտապէս, իբր թէ մինչև ցներկայ ժամն ոչ իցես բարեպէս վարեցեալ դէպ ՚ի յած, դէպ ՚ի յընկերդ, և դէպ ՚ի քեզ ինքնդ.

## Քննութիւն հաշուոյն հոգւոյ քոյ՝ դէպ ՚ի յած:

## Գլուխ. Դ:

1. Արդեօ՞ք ողջ սիրտ ունիս դու ընդդէմ մահացու մեղաց. մի՛ թէ բարեպէս առաջադրեալ իցես առ՚ի ոչ երբէք ևս կամիլ գործել զայն, որով և իցէ կերպիւ, որ քեզ կարիցէ պատահել: Եւ թէ

սոյն

սոյն առաջադրութ՟ին մնալոց 'ի քեզ 'ի ժամանա-
կէ առաջադրութեան քո՝ մինչև ցներկայ ժամս ։
Քանզի յայսմիկ առաջադրութե՟ն կայանայ հի՟մն
հոգևոր կենաց ։

*2. Որպիսի է սիրտն քո դէպ 'ի պատուիրանս ա՟յ ։
արդեօ՞ք այնոքիկ թուին քեզ բարի, քաղցր, հա
մեղ, և հաճելի ։ Քանզի ո՛վ խանդակաթ առա
քինութե՟ն. այն, որ ունի զճաշակելիքն իւր բարե
պէս տրամադրեալ, և զատամունս առողջ, սի-
րէ զլաւ կերակուրն, և արտաքսէ զվատն ։

*3. Որպիսի է սիրտն քո դէպ աններելի մեղս .
զի ոչ կարէ ոք զգուշանալ առ 'ի ոչ առնելով զն՟ս՝
մերթ աստ, և մերթ անդ ։ Արդեօ՞ք գտանի 'ի
քեզ իր ինչ, առ որ ունիցիս դու զյատկագոյն
հակումն, և յօժարութի ։ Եւ այս, որ վատթա
րագոյնն է . արդեօք ունիս այնպիսի ինչ, առ որ
ունիցիս զիղձ, և զսէր ։

*4. Որպիսի է սիրտն քո դէպ 'ի հոգևոր կրթու
թիս . սիրե՞ս արդեօք զայնս, համարի՞ս զն՟ս լաւա
գոյն . բերե՞ն արդեօք նոքա քեզ զձանձրութի .
զգա՞ս 'ի քեզ զտհաճութի ինչ 'ի ն՟ս ։ Առ ո՞րս 'ի
սոցանէ զգաս զքեզ հակեալ, և յօժարեալ աւե
լի, կամ պակաս . արդեօք 'ի լսել զբանն ա՟յ, յըն
թեռնուլ զնա, 'ի խօսել, և 'ի խոկալ զա՟յ, յաղօ-
թել և 'ի հաղորդել առ նա, 'ի խոստովանել, և 'ի
առնուլ զհոգևոր խրատս, 'ի պատրաստել առ
հաղորդութի, 'ի հաղորդել, 'ի բորբոքել զիղձս ։
նաև արդեօ՞ք իցէ իր ինչ յայսոցիկ իրաց, որ ընդ-
դիմանայ սրտի քո ։ Ուստի եթէ գտանես դու
զիր ինչ, առ որ սիրտն քո ունիցի զպակասւ յօժարու
թի . քննեա՛ թէ ուստի՛ գայ տհաճութինն, և կա՟մ
զինչ է պատճառն ։

*5. Որպիսի է սիրտն քո դէպ 'ի նոյն անձն ։ Ար
դեօ՞ք հաճի, և հեշտանայ սիրտն քո 'ի յիշելն զա՟ծ .
զգա՞յ երբեք զհաճելի քաղցրութի ինչ ։ Ա՞հ . ա-

էս

սէ դաւիթ. Ցիշեցի զա՟ծ, և ուրախ եղէ. ո՟ հեշ-
տացայ: Արդեօ՞ք զգաս դու 'ի սրտի քում ըղ-
դիւրութի առ 'ի սիրել զնա, և զմասնաւոր քաղց-
րութի իմն սիրոյ այսորիկ: Արդեօք սիրոն քո
հեշտանայ 'ի մտածելն զանչափութիւն, զբարու-
թիւն, և զքաղցրութիւն ա՟յ: Արդեօք գայ 'ի քեզ
յիշումն ա՟յ 'ի մէջ աշխարհային զբաղմանց, և ու-
նայնութեց. տաս դու նմա տեղի. տիրէ՞ արդեօք
սրտի քում. Թուի՞ քեզ թէ սիրոն քո դարձցի
առ նա, և կերպիւ իմն դնայցէ ընդդէմ նո՟. Զի
ճշմարտապէս գտանին անձինք բազումք, որք
այսպէս առնեն:

* 6. Եթէ այրն կնոջ ումեք գալոց իցէ 'ի հեռաս-
տանէ. խնկոյն 'ի տեղեկանալն իւր վերադարձ-
ման նորին, և նախ քան զլսելն զձայնն նորին.
թէպէտ զբաղեալ իցէ նա 'ի բազում գործս, և
արգելեալ 'ի բռնաւոր մտածմանէ իմեքէ 'ի գործ-
առութիս իւր: Սակայն այսու իմիք ոչ արգելա-
նի նա այնոքիւք. այլ թողու զայլ ա՟մ մտածմունս
'ի բաց, առ 'ի խորհել զգալստենէ առն իւրոյ:
Նոյնպէս պատահի և այնոցիկ, որք ճշմարտապէս
սիրեն զա՟ծ: Քանզի թէև յոյժ զբաղեալք իցեն
'ի բազում հոգս: սակայն յորժամ մերձենայ 'ի
նո՟ յիշումն ա՟յ, մոռանան զայլ ա՟մ մնացեալս, վ՟ն
քաղցրութեն, զոր ունին առ 'ի տեսանել զվերա-
դարձումն սիրելի յիշմանս այսորիկ: Եւ այս է
բարեգոյն նշան իմն:

* 7. Որպիսի է սիրոն քո դէպ 'ի Յ՟ Ք՟, ա՟ծ և
մարդն. արդեօ՞ք հեշտանայ նա կալ ընդ նմա:
Մեղուքն հեշտանան կալ շուրջ զմեղերբք, և
պիծակքն շուրջ զաղբովք: այսպէս և բարի
անձինքն ունին զհեշտութիս իւրեանց շուրջ ըզ
Յ՟ի Ք՟ի. նաև ունին զկակղութի իմն ծայ-
րագոյն սիրոյ դէպ 'ի նա: Բայց չարքն հեշտա-
նան ունայնութբք:

Որ-

* 8. Ո՛րպիսի է սիրտն քո դէպ 'ի Տէրունին մեր . 'ի Սբն . և 'ի Պահապան հրեշտակն : Արդեօ՞ք սիրես զնա . և ունի՞ս զմասնաւոր, և զյատուկ ապաւինութի 'ի բարեբարութիս նոցին . նաև հաճոյանա՞ն քեզ պատկերքն, վարքն, և գովութիւնքն նոցին :

* 9. Որքան առ լեզուն քո . ո՛րպէս խօսիս դու զնոյ . ա՛րդեօք հեշտանաս ասել բարի զնմանէ, ըստ յատկութեն կացութեն քոյ : հեշտանա՞ս նաև երգել զհոգևոր երգս :

* 10. Որքան առ գործն . մտածեա՛, ա՛րդեօք ունիս 'ի սրտի քում զարտաքին փառքն նոյ, առ 'ի առնել զեր ինչ 'ի պատիւ նորին : Քանզի այնոքիկ, որք սիրեն զած, սիրեն նաև 'ի միասին ընդ նոյ՝ զվայելչութիւն տան նր :

* Կարե՞ս արդեօք ցուցանել դու, թէ թողեր զիղձ իմն, և հրաժարեցար յիրէ իմեքէ վն նոյ : Վն զի այս է բարի նշան իմն սիրոյ, զրկել յիրէ իմեքէ վն սիրոյ այնորիկ, զոր սիրէ ոք : Զինչ թողեր ուրեմն դու մինչև ցայժմ, վասն սիրոյն աստուծոյ :

ՔՆՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒԹԵՆ ՄԵՐՈՅ՝ ԴԷՊ 'Ի ՄԵԶ ԻՆՔԵԱՆՍ :

## Գլուխ . Ե :

1. Ո՛րպէս սիրես դու զքեզ ինքնդ . թե՞րևս յոյժ սիրես զքեզ վն աշխարհի : Եթէ այսպէս իցէ . ուրեմն ցանկաս դու միշտ բնակիլ աստ, և ունիս նաև զմեծագոյն հոգ իմն հաստատիլ յայսմիկ երկրի : Բայց եթէ սիրես դու զքեզ վն երկնից, այնու ցանկաս, կամ գոնեայ հաճիս դիւրապէս

պէս ելանել աստի, երբ և հաճոյ իցէ Տն մե-
րոյ:

*2. Պահե՞ս դու արդեօք ՚ի քեզ զբարեգոյն կարգ-
սիրոյ: քանզի միայն անկարգ սէրն մերոյ ին-
քեան է, որ աւերէ զմեզ: Արդ հարկաւոր սէրն
կամի, զի մեք առաւել սիրեսցուք զհոգին, քան
զմարմինն. և ունիցիմք առաւել հոգունակութի
առ՚ի ստանալ զառաքինութիւս, քան զայլ ամ ինչ.
նաև առաւել համարիցիմք զերկնային փառս,
քան զասհական փառս, որ է յերկրի աստ:
Սիրտն, որ բարեպէս կարգաւորեցեալ է, ասէ
բազմիցս ՚ի յինքն իւր: զի՞նչ ասեն հրեշտակքն,
եթէ ես խորհիցիմ զայնպիսի իրն. թէև ոչ ասէ,
զի՞նչ ասեն մարդիկք:

*3. Ո՛րպիսի սէր ունիս դու դէպ ՚ի սիրտն քո.
զգա՞ս արդեօք դու զձանձրութի ինչ ՚ի ծառայել
նմա ՚ի տկարութեն նորին: Ո՛հ. ապա ուրեմն պա
րտաւորեալ ես օգնել նմա, մինչ ախտքն իւր տան
ջիցեն զնա, նաև թողուլ զամ ինչ առ՚ի պարա-
պիլ յայնս:

*4. Զի՛նչ և համարիս դու զքեզ առաջի այ, թարց
երկբայութեն ոչինչ ես: Արդ ոչ է մեծ խոնար
հութի ինչ ճանճի միոյ, համարիլ զինքն ոչինչ ՚ի
բաղդատութե միոյ լերին: և ոչ միոյ կաթիլ ջրոյ
վարկանիլ զինքն ոչինչ, նկատմամբ ծովու: և ոչ ևս
միոյ կածական հրոյ հաշուիլ զինքն ոչինչ, ՚ի բաղ
դատութե արեգական: Վն զի խոնարհութին կայա
նայ ՚ի յոչ համարելն զմեզ ՚ի վեր քան զայլս, և՚ի
յոչ կամելն գերազանց գոլ ՚ի վեր քան զայլս:
Արդ ուրեմն տե՛ս, թէ ո՛րպէս գտանես դու զքեզ
շուրջ զայսու մասնաւորիւ:

*5. Որքան առ լեզուն քո. ա՛րդեօք պարծիս դու
զքէն, զմիոյ, և կամ զմիւսոյ իրակութէ: Եւ շողոքոր
թե՞ս դու զքեզ, խօսելով զքէն ինքենէ:

*6. Որքան առ գործն. ա՛րդեօք առնուս դու զհեշ
տու

տութիւն ինչ ներհակ առողջութեն քոյ։ Խօսիմ աստ զունայն, և զանօգուտ հեշտութէ, և զառաւել արթնութէ, որ լինի թարց պտղոյ. և զայլ նմանեաց։

## Քննութիւն կացութեան հոգւոյ մերոյ՝ դէպ 'ի յընկերս մեր։

### Գլուխ. Զ։

1. Պիտոյ է սիրել զայլսն՝ և զինքն, միով քաղցր, խաղաղ, և հաստատ սիրով։ Նաև այս լիցի յառաջին տեղւոջն, վս զի են ած աա հրամանեաց, և կամի զայն։ Զնոյնն առնեմ զորդւոց, զծնողաց, և զմերձաւորաց, ևևս զբարեկամաց, զիւրաքանչիւրոց ըս աստիճանի իւրում։

*2. Բայց խօսելով ընդհանրականապէս. ո՞րպիսի սիրտ ունիս դու դէպ 'ի յընկերսն քո։ արդեօք սիրես զնա սրտիւ, և վս սիրոյն այ։ Եւ առ 'ի բարեպէս ճանաչել զայս, պիտոյ է զի ներկայացուսցես 'ի քեզ զամենս ձանձրացուցիչս, և զանքաղաքավար մարդիկս. վս զի այսպիսեօք կրթի սէրն այ դէպ 'ի յընկերսն, և մանաւանդ դէպ առ այնս, որք առնեն մեզ զչար. թէ բանիւ, և թէ գործով։ Քննեա՛ ուրեմն բարեպէս. արդեօք սիրտն քո պակասեալ իցէ 'ի յայնս. և կամ զգաս զհակառակութիւն ինչ 'ի սիրելն զնս։

*3. Արդեօ՞ք դիւրին իցէ քեզ ասել զչար վասն ընկերի քոյ. և յատկապէս վս այնոցիկ, որք ոչ կամին քեզ զբարի։ Արդեօ՞ք առնես զչար ինչ ուղղապէս, կամ անուղղապէս ընդդէմ ընկերի քոյ։ Վասն զի որքան սակաւ բանաւոր և իցես դու, դիւրապէս կարես իմանալ զայս ինքնին։

Քննու

## Քննութիւն ըղձից հոգւոյ մերոյ :

### Գլուխ . Է :

ԿԱմեցայ այսպէս ընդերկար տարածել զայսոսիկ կէտս, 'ի քննութեան որոց կայանայ ճանաչումն հոգևոր զար-գացման, և յառաջադիմութեան մեր, զոր արարաք : Վս՟ զի որքան առ քննութիւն մե-ղաց, նա պիտոյ է վս՟ խոստովանութեան այնոցիկ, որք ոչ հոգան առնել զյառաջադիմութիւն :

* Սակայն ոչ է պիտոյ առաւել աշխատիլ 'ի վ՟ր իւ-րաքանչիւրոց մասանց այսոցիկ, եթէ ոչ չափաւո-րապէս մտածելով . թէ յո՛րպիսի կացութեան իցէ լեալ սիրտն մեր, ըստ որում պատկանի առ այնս : Նաև թէ զկնի առաջադրութեան մերոյ, ո՛րպիսի նշանաւոր մոլորութիւնս գործեցաք :

* Բայց առ 'ի դիւրել զբոլորն, պիտոյ է ածել ըզ քննութիւն առ որոնումն, և առ խնդրումն ախտից մերոց : Եւ՛ եթէ վնաս տայ մեզ այսպէս ման-րամասնաբար մտածելն զբոլոր անցեալ գործս մեր, (որպէս ասացաւ) կարեմք յայնժամ քննել : Արդեօ՞ք որպիսաբար կացեալք, և կենցաղա-վարեալք եմք մեք 'ի գործս սիրոյ՝ դէպ 'ի յա՟ծ, դէպ 'ի յընկերն, նաև դէպ 'ի մեզ իսկ :

Նաև 'ի գործս ատելութեան . արդեօք եղեալ իցէ նա ընդդէմ մեղաց, որք գտանին 'ի մեզ, ընդ-դէմ մեղաց, որք գտանին 'ի յընկերն : Քանզի պար-տիմք ցանկալ ազատութեան միոյն, և միւսոյն : Եւ՛ 'ի գործս ըղձից՝ արդեօք եղեալ իցէ նա շուրջ զբարեաւ, շուրջ զհեշտալեաւ, և շուրջ զպատ-ուով : Եւ՛ 'ի գործս երկիւղի՝ որոգայթէ մեղան

չե-

չելոյ, և կորուսանելոյ զբարիս այսորիկ աշխար-
հի ․ արդեօ՞ք յոյժ առաւել երկնչեալ իցես 'ի մի-
ոյն, և յոյժ սակաւ 'ի միւսոյն ։

'Ի գործս յուսոյ ․ թէրևս յոյժ առաւել զետեղեալ իցես զայն 'ի յաշխարհ, 'ի յստեղծուածս, և յոյժ սակաւ 'ի յԱծ, և 'ի յաւիտենական իրս ։ 'Ի գործս տրտմութեան, եթէ յոյժ տրտմեալ իցես վն աւելորդ, և ունայն իրաց ։ 'Ի գործս ուրախութեան, եթէ եղեալ իցէ այն յոյժ աւելորդ, և վն անօգուտ իրաց ։

* Սերջապէս ․ արդեօք որպիսի իղձք պաշարեն զսիրտն մեր, և որպիսի ախտք տիրեն նմա ․ նաև 'ի ձեռն որպիսի իրաց նախապետաբար բացաքարշեցեալ է նա 'ի ճշմարիտ ճանապարհէն ։

* Օի միջնորդութիւն կրից հոգւոյն ճանաչէ ոք զկացութիւնս իւր, շօշափելով զիւրաքանչիւրն 'ի մասնաւորի ։ Քանզի ոչ գուսան, և քնարահար ոք, շօշափելով զբնաւ լարս երգարանին իւրոյ, համաձայնէ զայնս, զորս գտանէ անհամաձայնս, քարշելով, և կամ թուլացուցանելով ։ Այսպէս ևս զկնի շօշափելոյ մեր զսէրն, զատելութիւն, զիղձն, զերկիւղն, զյոյսն, զտրտմութիւն, և զուրախութիւն հոգւոյ մերոյ ․ եթէ գտանիցեմ զնս անհամաձայնս եղանակաւ, որով կամիմք հնչեցուցանել (որ է փառքն այ) ։ Յայնժամ կարեմք յարմարել, և համաձայնել զնոսա, միջնորդութիւն ածային շնորհացն, և խորհրդովն հոգևոր հօրն մերոյ ։

## Իղձքն , որք պարտին ունեալ լինել զկնի քննութեն :

### Գլուխ. Ը:

Զկնի հանդարտութեամբ մտածելոյ քոյ զիւրաքանչիւր կէտս. նաեւ զկնի տեսանելոյդ, թէ առ ո՛ր սահման գտանեցեալ ես. ե՛կ առ խղձս այսու կերպիւ:

* Շնորհակա՛լ լեր զա̃յ վ̃ այն փոքր առաջադիմութե̃ն, եւ զարգացմանն, զոր գտանես արարեալ 'ի կեանս քո, 'ի յառաջադրութենէ քումմէ մինչեւ ցայժմ: Եւ ճանաչիցես զայս, թէ այս եղեալ է միայն ա̃ծային ողորմութե̃ն, որ արար 'ի քեզ, եւ վ̃ բարւոյ քոյ:

* Խոնարհեցո՛ զքեզ յոյժ առաջի ա̃յ, ճանաչելով լաւապէս, եթէ դու ոչ արարեալ իցես զմեծ առաջադրութե̃ն, այս իցէ պատահեալ վ̃ պակասութե̃ն քոյ: Քանզի ոչ պատասխանեցեր հաւատարմապէս, քաջապէս, եւ հաստատապէս՝ ներշնչմանն, լուսոյ, եւ շարժմանն, զոր ետ քեզ ա̃ծ 'ի յաղօթս, եւ յայլ ուր:

* Առաջադրեա՛ առ 'ի գովել զնա միշտ վ̃ շնորհացն, զոր արար քեզ, 'ի բաց քարշելով զքեզ 'ի վատ յօժարութենէ քումմէ, 'ի ձեռն այսու փոքր ուղղելութե̃ն քոյ:

* Խնդրեա՛ 'ի նմանէ զներումն անհաւատարմութե̃, եւ ապերախտութե̃ն քոյ, որով համապատասխանեցեր նմա:

* Մատո՛, եւ ընծայեա՛ նմա զսիրտ քո, զի լիցի բոլորովին 'ի ներքոյ իշխանութեան, եւ տէրութեան նորին:

Աղա

* Աղաչեմ զնա, զի արասցէ զքեզ կատարելա-
պէս հաւատարիմ ։

* Աղաչեմ զսուրբսն, և զսրբուհին կոյսն մարիամ, զՊահապան հրեշտակն քո․ զՅատուկ փաստա-
բան սբ̃ն քո․ զՍբ̃ն յովսէփ, և զայլս ։

Յաղագս յաւուրս մտածմանց, առ 'ի վերանորոգել
զհոգի առաջնորդութեամբ Տէր ։

## Գլուխ ․ Թ ․

Զկնի առնելոյ քոյ զքննութիւն, և զկնի բարեպէս խորհրդակցելոյ ընդ խոհեմագոյն առն ումեք, վասն պակասութեանց քոց, և վտ̃ դեղոց, և բժշկութեանց նոցին ։ Արա զհետևեալ մտածմունս, առնելով զմինն յիւրաքանչիւր աւուր ը̃ կերպի մտածման, ծախելով անդ զժամանակն աղօթից քոց ։ Եւ՛ այս միշտ այնու կանոնիւ նախապատրաստութեան, և ըղձի, որով վարեցար դու 'ի մտածման առաջնոյ մասին ։ Դնելով զքեզ առաջքան զա̃մ ինչ 'ի ներկայութեան նր̃յ․ հայցելով զշնորհն իւր, առ 'ի բարեպէս հաստատել 'ի սբ̃ սիրոջ, և 'ի ծառայութեան նորին ։

## Մտածումն առաջին, յաղագս գերազանցութեան հոգւոյ մերոյ։

### Գլուխ. Ժ։

ՄՏածեա՛ զազնուա՛ութիւն, և զգերազանցութիւն հոգւոյ քոյ, որ ունի զայն պէսի բանականութիւն իմն, որով ոչ միայն ճանաչէ զբոլոր երևելի աշխարհս զայս, այլ նաև ճանաչէ թէ են հրեշտակք, և արքայութիւն մի։ Նաև ճանաչէ, թէ անդ է մի Ած, որ է բարձրագոյն, ծայրագոյն, և անճառելի բարի. թէ է ևս անդ յաւիտենականութիւն։ Այլ և ճանաչէ լաւագոյն զայն ճմ, որ պահանջի առ ՚ի կեալ բարեպէս յայսմիկ երևելի աշխարհի, և առ ՚ի ընկերանալ հրեշտակաց ՚ի յարքայութեն, նաև առ ՚ի վայելել զԱծ ՚ի յաւիտեան։

* Մտածեա՛ թէ հոգին քո ունի զկամք մի, որ է բոլորովին ազնիւ, որև կարէ սիրել զԱծ, և ոչ կարէ ատել զնա ընդ ինքեան։ Նկատեա՛ ուրեմն ՚ի սիրտն քո, թէ ո՛րպէս ազնուա՛ագոյն է։ Եւ՛ զի ոպ ոչինչ ապականեալ իր կարէ հանդարտել զմեղուսն, եթէ ոչ միայն նստիլն ՚ի վր ծաղկանց։ այպէս ևս սիրտն քո ոչ կարէ գտանել զհանգիստ, եթէ ոչ միայն ՚ի յԱծ. քանզի ոչինչ ստեղծուա՛ծ կարէ յագեցուցանել զնա։ Խորհեա՛ մտերմաբար զայն առաւել սիրելի, և բռնաւոր կրակութիս, որք երբեմն պաշարեալք էին զսիրտն քո։ և ընթադատեա՛ ճշմարտութբ, մի՞թէ ոչ էին նոքա դադարք, և ծայրք անհանդստութեն, ձանձրութեն, խայթօղ մտածմանց. և վնասակար սխալմունք, ՚ի մէջ որոց ողորմելաբար կայր սիրտն քո։

Աւաղ

* Աւաղ մեզ․ զի սիրտն մեր ընթանալով զկնի ստեղ-ծուածոց , գնայ տրտմութե՛ , խորշելով մեղմել զիղձն իւր անդ ։ բայց վռազի , զի 'ի հանդիպելն ինքեան այն , իմանայ գոլ պատրեցեալ․ վն զի ոչ ինչ իր կարէ բաւականացուցանել , և հանդար-տել զնա ։ Մի՛ արասցէ ած , թէ սիրտն մեր գտա-նիցէ զտեղի ինչ, 'ի վերայ որոյ հանգչել կարիցէ ․ զի է հանգոյն աղաւնւոյ ելանողի 'ի տապանէն նոյի, որ վերադառնայ անդրէն առ ածն իւր , յորմէ հեռացեալ էր ։ Ո՞հ թէ․ ո՛րպիսի գեղեցկութի բնութե գտանի 'ի սրտի մերում․ վն է՞ր ուրեմն դնեմք զնա յստորնագոյն աստիճանի , առ 'ի ծա-ռայել ստեղծուածոց ։

* Ո՛վ գեղեցիկ հոգի իմ պարտիս ասել․ դու կարես իմանալ , և կամիլ զած ։ ընդ է՞ր ուրեմն յենուս զքեզ յայնպիսի իրս , որ է ստորնագոյն քան զնա ։ Դու կարես հասանիլ յաւիտենակա-նութե․ ընդ է՞ր ուրեմն հաստատես զքեզ 'ի րո-պէականում ։ Այս եղև մինն 'ի խայթիչաց խղճմ-տանացն անառակ որդւոյն, որ կարէր կեալ փափ-կապէս 'ի սեղան հօր իւրոյ , բայց ուտէր աղտե-ղապէս զայն , որ էր կերակուր անասնոց ։ Ո՛վ հոգի իմ, դու ես ընդունակ այ․ վա՜յ քեզ՝ եթէ բաւականանաս այլով բաց 'ի յայ ։ Բարձրացո՛ բարեպէս այսու մտածմամբ զհոգի քո․ և ցո՛յց նմա , թէ նա է յաւիտենական , և արժանի յաւի-տենականութե․ և այսու քաջացի՛ր, և լե՛ր այր զօրութեան ։

## Մտածութիւն երկրորդ, վասն գերազանցութեան առաքինութեան :

### Գլուխ. ԺԱ.

Մտածեա՛. թէ միայն առաքինութիւն, և ջերմեռանդութիւն կարեն բաւականացուցանել զհոգի քո յայսմիկ աշխարհի : Նկատեա՛ց 'ի յայնս, թէ ո՛րպէս գեղեցիկք են. և արա՛ զբաղդատութիւն 'ի մէջ առաքինութեանց, և մոլութեանց, որք են ներհակք միմեանց : Արդ ո՛րպիսի քաղցրութիւն է համբերութիւն, նկատմամբ վրէժխնդրութեան : հեզութիւն, նկատմամբ բարկութեան, և զայրացման : խոնարհութիւն, նկատմամբ ամբարհաւանութեան, և ամբարտաւանութեան : առատաձեռնութիւն, նկատմամբ ագահութեան : սէրն, նկատմամբ նախանձու : զգաստութիւն, նկատմամբ որկրամոլութեան : Քանզի առաքինութիւնքն ունին զայս զարմանալի յատկութիւնս, զի հեշտացուցանեն զհոգին անբաղդատելի քաղցրութեամբ, և համեղութեամբ միով զկնի կիրարկեցմանն իւրեանց : ուր հակադարձապէս, մոլութիւնքն թողուն զնա անհնարապէս նեղեալ, անձկացեալ, և տանջեալ : Ապա ուրեմն. ընդէ՞ր ոչ ջանամք մեք ստանալ զայս քաղցրութիւնս :

* Որքան առ մոլութիւնս, որ ունի զայնս սակաւ, ոչ է գոհունակ կէտ մի բնաւ, և որ ունի զբազում, է յոյժ անգոհունակ : Բայց որքան առ առաքինութիւնս, որ ունի զայնս սակաւ, արդէն ունի զգոհունակութիւն իմն, զի յետոյ միշտ գնայ յառաջ աճելով : Արդ ո՛վ ջերմեռանդ կեանք. ո՛ր-

ո՛րքան գեղեցիկ, քաղցր, հաճելի, և համեղ ես: Դու քաղցրացուցանես զնեղութիս, և համեղացուցանես զմխիթարութիս, առանց քեզ՝ բարին է չար. և հեշտութին՝ նեղութի, տառապանք, և չքաւորութիւն: Ո՜հ. զի եթէ ճանաչիցէր ոք զքեզ, կարէր ասել ըս՟ սաղմոսացողին. Տէ՛ր, փո՛ր ինչ վճարն զայն: Այս փրկագործական աղօթքս յաւէտ 'ի գործածեցեն եղև 'ի սրբուհի մօրէն թերեզիայ, և 'ի սրբուհի կատարինէէ ճենովացւոյ, թէպէտ 'ի յայլ զանազան դիպուածս:

## Մտածումն երրորդ, վ՟ օրինակի սրբոց:

## Գլուխ. ԺԲ:

Մտածեա՛ զն՟ կերպ օրինակս սրբոց: քանզի զի՞նչ ոչ արարին նոքա առ'ի սիրել զն՟, և առ'ի լինիլ ծառայ իւր: Նակատեա՛ զայնքան մարտիրոսն, որք էին անյաղթելիք 'ի յառաջադրութն իւրեանց. արդեօ՞ք զորպիսի տանջանս ոչ կրեցին, առ'ի պահել զառաջադրութիս: Բայց 'ի վեր քան զն՟, տե՛ս զայն շնորհալի, և ծաղկեալ կուսանս, որք են առաւել սպիտակք քան զշուշանս վն՟ մաքրութն, առաւել կարմրափայլք քան զվարդս վասն սիրոյ: Յորոց ոմանք յերկոտասան, ոմանք յերեքտասան, ոմանք 'ի հնգետասան, ոմանք 'ի քսան, և այլք ոմանք 'ի քսանևհինգ ամս կամեցան մանաւանդ կրել զհազար տեսակս չարչարանաց, և մարտիրոսութն, քան թէ թողուլ զառաջադրութիս իւրեանց: Ոչ միայն վն՟ այնպիսի առաջադրութն, որ պատկանիւր առ դաւանութին հաւատոյ, այլ նաև վն՟ այնպիսւոյ, որ պատ

կանխիր առ ջերմեռանդութիւն : Քանզի կամեցան մանաւանդ մեռանիլ, քան կորուսանել զկուսութիւն իւրեանց : այլք ոմանք ևս կամեցան կորուսանել զկեանս, քան թէ թողուլ զծառայութիւն նեղելոց, և զմխիթարութիւն տանջեցելոց, և զթաղումն մեռելոց : Ո՞հ . ո՛վ Տէր իմ . զո՛րպիսի հաստատութիւն, և քաջութիւն եցոյց այս ընկանաւոր, և տկար սեռս 'ի մէջ այսպիսի պատահմանց :

* Տե՛ս նաև զայնքան սրբ խոստովանողս . թէ ո՛րքան քաջութեամբ արհամարհեցին զաշխարհն : ո՛րպ անյաղթելիք ցուցան 'ի յառաջադրութեան իւրեանց : ոչինչ իր կարաց բառնալ զայն 'ի նոցանէ : զիրկս արկին նմա առանց երեսպաշտութեան, և պահեցին զնա առանց բացասութեան : Լո՛ւր աստուածոյ սրբոյն օգոստինոսի . թէ զի՛նչ ասէ զմօնիքա մօրէն իւրմէ . ո՛րդեօք որպիսի քաջութեամբ հետևեցաւ ձեռնամուխ լինիլ առ 'ի ծառայել այ, 'ի յամուսնութեան, և 'ի յայրիութեան իւրում : Նաև լո՛ւր սրբոյն ջերօնիմոսի, որ հանդունապէս խօսի զփաօլա սիրելի դստերէն իւրմէ, թէ ո՛րդեօք 'ի մէջ որքան պատահմանց եկաց : Բայց աւա՜ղ մեզ . վն է՞ր ոչ առնեմք մեք զիմն, առ 'ի հետևիլ այնպիսեաց գերապանց օրինակաց : Այնպիսիք էին այսոքիկ, որպիսի եմք և մեք . և առնէին զայնս վն այ, և վն առաքինութեան : Վն է՞ր ուրեմն ոչ առնեմք նոյնպէս և մեք, ըստ յատկութեան կացութեան, և կոչման մերոյ, առ 'ի պահել զառաջադրութիւն, և սր դաւանութիւն մեր :

Մաս_

## Մտածումն չորրորդ, յաղագս սիրոյն, զոր ունի առ Տն Յս Քս ։

## Գլուխ. ԺԳ։

Ս Տածեա՛ զսէրն, որով Յս Քս Տէր մեր կրեաց զայնքանս 'ի վշտ աշխարհի. և յառկապէս 'ի պարտիզի ձիթենեաց լերինն, նաև 'ի վշտ լերինն գողգոթայի։ Այս սէրս հայէր 'ի քեզ, և 'ի ձեռն այնց բնաւից պատժոց և նեղութեց, հայցէր յւր հօրէ վս սրտի քոյ՝ զբարի առաջադրութիս, և զխոստմունս. և նոյնով միջնորդութբ հայցէր ևս զայնամ, որ էր հարկաւոր քեզ առ 'ի պահել, անուցանել, և կատարել զայս առաջադրութիս։ Ո՜հ. ո՛վ դու առաջադրութի, ո՛րպիսի գեղեցիկ ես, գոլով դուստր այնպիսի ծնողի միոյ, որպիսի է չարչարանքն Տն մերոյ։ Ո՜հ թէ. ո՛րքան պարտիս սիրելի լինել ինձ ո՛վ հոգի իմ, որովհետև սիրելի եղեր Յսին իմոյ։ Վա՜յ ինձ. ո՛վ փրկիչ հոգւոյ իմոյ. դու մեռար առ 'ի փրկել զիս, և առ 'ի պահել զառաջադրութիս իմ։ Ուստի արա՛ ինձ զայս շնորհս ո՛վ Տր, զի մանաւանդ մեռայց, քան թէ կորուսից զայնս։

* Տե՛ս ուրեմն ո՛վ խանդակաթդ առաքինութի. (որև է ճշմարիտ) զի սիրտն սիրեցելոյ Յսի մերոյ, հայէր 'ի սիրտն քո նաև 'ի խաչափայտէ, և սիրէր զնա. և վս այս սիրոյս հայցէր նմա զընաւ բարիս, զոր կարէր ունիլ, և 'ի մէջ այլոց զառաջադրութիւնս քո։ Այո՛. այսպէս է ո՛վ սիրելի խանդակաթդ. որոյ վս մեք բնաւքս կարեմք ասել ըստ Երեմիայի. Տէ՛ր մինչև օփեղծեալէի ես, տես

աեսա

փետտնէիր զիս, և անօսամբ խոցէիր զիս : Ուստի ամ_
ային բարութին իւր, 'ի ձեռն սիրոյ, և ողորմու_
թե իւրոյ, պատրաստեաց ճշմարտապէս զընաւ
ընդհանուր, և զմասնաւոր միջնորդս փրկութե
մերոյ, և հետևապէս առաջադրութե :

* Թարց երկբայութեան այսպէս է ո՛վ սիրելի : քանզի ոչ յղի կին ոմն պատրաստէ զօրոցն, զխանձարուրն, և զփաթաթելի զկտաւն, նաև զդահեակ իւր վ՟ երեխային, զոր յուսայ ծնանիլ, թէև տակաւին ոչ իցէ ծնեալ զայն 'ի յաշխարհ : Այսպէս և Տ՟ն մեր, ունելով զբարութին իւր յղի քև, ջանայ ծնանիլ զքեզ 'ի փրկութիւն, և առնել որդի իւր • որոյ վ՟ պատրաստեաց 'ի վ՟ր խաչին զայն ա՟մ, որ պիտանի էր վ՟ քո : Այսինքն • զօրոցն քո, զխանձարուրն, և զփաթաթելի կտաւն քո, զհանդերձն քո, զդահեակն, և զսնուցիչն քո • և զայն ա՟մ, որ էր պիտոյ վ՟ երջանկութե քոյ : Քանզի այսոքիկ են բնաւ միջոցքն, շարժառիթքն, և շնորհքն, 'ի ձեռն որոց առաջնորդէ հոգւոյ քոյ, և միջնորդութբ որոց կամի քարշել զնա առ կատարելութի : Ուստի այսպիսի հոգևորական յղիութբ, Տ՟ն մեր ունէր 'ի վ՟ր խաչափայտին զկացութի, և զնմանութի յղի կանանց :

* Ո՜հ • ո՛վ Տ՟ր իմ, և ա՟ծ իմ • արդեօք ոչ պարտէաք մեք դնել զայս ա՟մ 'ի խորս յիշողութե մերոյ : Եւ՛ մի՞թէ կարելի իցէ այս լինիլ, թէ ես սիրեցեալ եղէ 'ի փրկչէն իմմէ : և այնքան սիրեցեալ, մինչ զի մտածեալ իցէ զինէն 'ի մասնաւորի, նաև զընաւից փոքրագոյն հարկաւորութեց իմոց, որովք քարշեալ է զիս առ ինքն : Որքան ուրեմն պարտիմք նաև մեք սիրել, 'ի մեծի վարկման ունիլ, և 'ի գործածել զընաւս զայսոսիկ 'ի յառաջադիմութի մեր : Արդարև այս է քաղցրագոյն իր իմն • թէ սիրահարեալ սիրտն ա՟յն իմոյ, այնչ՟ խոր

հէր

հէր եւս վս̅ խանդակաթ եղելոյդ առաքինութե̅. սիրէր զնա, եւ նախահոգայր նմա զբազմազան միջոցս փրկութե̅, ո՞չ թէ ոչ ունիցէր զայլս հոգիս ՚ի յաշխարհի, որոց վս̅ խորհիցէր։ Հի՛բար. արեգակն ՚ի լուսաւորելն զմի մասն երկրի, այնու կերպիւ̂ լուսաւորէ զնա, իբր թէ ոչ լուսաւորիցէր զայլ մասունս, եւ եթէ ոչ զայն միայն։ Այնպէս եւս Տ̅ր̅ն մեր, այնու կերպիւ̂ խորհէր, մտածէր, եւ հոգայր վս̅ իւրաքանչիւր սիրելի որդւոց իւրոց, ո՞չ թէ ոչ մտածիցէր զայլ մնացեալս։ Որ սիրեաց զիս (ասէ ս̅ր̅ն պօղոս) եւ մատնեաց զանձն իւր վս̅ իմ։ իբր թէ ասիցէր. այնպէս արար վս̅ իմ միայն, ո՞չ թէ ոչ արարե՟լ իցէ վս̅ այլոց։ Պարտ է ուրեմն ո՛վ խանդակաթդ առաքինութե̅. քանդակել եւ դրել այս ՚ի հոգւոջ քո, առ՚ի համարիլ մեծագոյն իր, եւ առ՚ի բարեպէս ծանուցանել զառաջադրութիւն քո, որ այսքան պատուական եղեալ է առաջի սրտի փրկչին մերոյ։

## Մտածումն հինգերորդ, յաղագս յաւիտենական սիրոյն Ա̅յ դէպ ՚ի մեզ։

### Գլուխ. ԺԴ։

Ս Տածեա՛ զյաւիտենական սէրն, զոր ունէր Ա̅ծ դէպ ՚ի քեզ։ Վ̅ս̅ զի նախ քան թէ Տ̅ր̅ն մեր Յ̅ս̅ Ք̅ս̅, ո̅րում մարդ՝ կրեցէր վս̅ քո ՚ի խաչին, արդէն Ա̅ծային հանդիսավեհութեան իւրով, ձեւակերպէր զքեզն ՚ի բարձրագոյն բարութե̅ իւրում, եւ սիրէր զքեզ գերազանցապէս։ Բայց թէ ե՛րբ սկսաւ նա սիրել զքեզ։ յայնժամ, մինչ սկսաւ լինիլ Ա̅ծ։ եւ ե՛րբ սկսաւ նա լինիլ Ա̅ծ. ոչ երբէք.

քեք. զի միշտ եղև առանց սկզբան, և առանց
վախճանի: Եւ այսպէս, միշտ սիրեաց զքեզ 'ի յա
ւիտենականութենէ հետէ. և վ͞նկ պատրաստէր վ͞ն
քո զշնորհս, և զփառս, որև յետոյ արար զքեզ:
Ուստի Նա զայս ասէ մարգարէիւն. Սիրով յաւի-
տենականաւ սիրեցի զքեզ ( խօսի, որքան զքէն, այն
քան վ͞ն այլոց ) վ͞ն ձգեցի զքեզ առ իս, գթալով
'ի վ͞ե քո: Ուրեմն մտածեաց նա 'ի մէջ այլոց իրաց
և զայս, զի արասցէ զմեզ արարող առաջադրու
թ͞ե, առ 'ի ծառայել ինքեան:
* Սաշ թէ. որպիսի առաջադրութիւնք են այսո
քիկ, զորս ա͞ծ խորհեցաւ, մտածեաց, և համանը
շանեաց 'ի յաւիտենականութենէ հետէ: Որքան ար
դեօք պարտին սիրելի, և պատուական լինել այնք
մեզ: արդեօք զինչ ոչ պարտիմք մանաւանդ կրել
մեք, քան կորուսանել զսակաւ ինչ յայսցանէ:
արդարև արժէ իսկ, եթէ կորուսանիցեմք զբո-
լոր աշխարհն վ͞ն սորա: Վ͞ն զի բոլոր աշխարհն
'ի միասին ոչ արժէ զհոգի մի, և հոգին ևս ոչինչ
արժէ առանց առաջադրութ͞ե մերոյ:

## Ընդհանրական իղձ 'ի վ͞ե նախանշեալ հատածմանց. և Եզրափակումն կրթութեանց:

## Գլուխ. ԺԵ:

Ո՛Վ սիրելի առաջադրութիւն, դու ես գեղեցիկ ծառ կենաց, զոր տնկեաց ա͞ծ ձեռամբն իւրով 'ի մէջ սրտի իմոյ, և փրկիչն իմ կամի ոռոգել զքեզ պատուական արեամբն իւրով, առ 'ի առնել զքեզ պտղաբեր. և կամի ևս զհազար մահս մանաւանդ, քան թողուլ զի հողմն ինչ արմատախլեսցէ զքեզ:

Ու-

Ուրեմն ոչինչ երբեք կարէ արմատախլել զքեզ զնպատակդ իմ. ոչ ունայնութիւն, ոչ հեշտութիւն, ոչ հարստութիւն, և ոչ ևս նեղութիւնքն :

* Ո՜հ. Տէր իմ. դու տնկեցեր զայս գեղեցիկ ծառս, և պահեցեր յաւիտենականապ̃ 'ի հայրական ծոցի քում, վս̃ պարտիզի իմում : Աւա՜ղ ինձ. ա՛րդեօք որքան անձինք գտանին, որք ոչ են այսու կերպիւ սիրեցեալք, և պատուեցեալք : ուրեմն ո՛րպէս կարացից ես բաւականապէս խոնարհեցուցանել զիս իսպառ, 'ի ներքոյ ողորմութե̃ քոյ :

* Ո՜վ գեղեցիկ, և սրբ̃ առաջադրութիւնք, եթէ ես պահիցեմ զձեզ, դուք ևս պահէք զհոգի իմ : եթէ կեայցէք դուք 'ի հոգւոջ իմում, նա ևս կեայցէ 'ի ձեզ : Լերո՛ւք ուրեմն միշտ ո՛վ առաջադրութիւնք, ոպ̃ և էք յաւիտենականք 'ի յողորմութե̃ ա̃յ իմոյ : նաև լերո՛ւք ևս 'ի յիս յաւիտենականապ̃, զի ոչ երբեք թողից ես զձեզ :

* Օկնի այսպիսի ըղձից պիտոյ է, զի մասնաւորապէս մտածիցես դու նաև զմիջնորդսն, որք պահանջին առ 'ի պահել զսիրելի առաջադրութիս զայսոսիկ : Եւ̂ առ̃ջադրեսցես ևս կամիլ հաւատարմաբար ծառայել սոցա, 'ի ձեռն յաճախութե̃ աղօթից, սրբաղնութեց̃, և բարեգործութեց̃, նաև ուղղելով զճանաչեալ պակասութիւնս քո յերկդի մասին, արմատախլելով զչար առիթսն . և ևս հետևելով խրատուց, և ազդեցմանց, որք տրեցան քեզ առ այս ներգործութի :

* Որև յետ առնելոյ զայս, իբր թէ առ 'ի առնուլ զշունչ, և զօրութի, առաջադրեա բազում անգամ յարատևել 'ի յառաջադրութե̃ քում : Եւ̂ ոպ̃ թէ ունիցիս զսիրտն, զհոգին, և զկամքն քո 'ի ձեռին քո . նուիրեա, ա̃նագրեա, ընծայեա, մատո՛, և զե՛ն զնս̃ ա̃յ : առաջադրելով, ոչ երբեք առնուլ զնս̃ 'ի յետս, այլ թողուլ 'ի ձեռս ա̃ծայ

նոյ

նոյ հանդիստական հութն, առ'ի հետևել այնմ, ՚ի որում կարգադրիցէ նա: Աղաչեմ զքեզ, զի բոլորովին նորոգիցէ զքեզ, և օրհնիցէ զնորոգումն առաջադրութեն քոյ, և զօրացուսցէ զնա:

Կոչեմ զսրբուհի կոյսն մարիամ, զպահապան հրեշտակն քո, նաև զայլ սուրբս: Եւ դիմեմ այսպիսի շարժմամբ սրտի առ ոտս հոգևոր հօրն քոյ. ամբաստանեմ զմն հոգևոր պակասութեն քոյ, զոր ճանաչեցեր գործեալ զկնի ընդհանրական խոստովանութեն. և ընկալ զարձակումն նոյնով կերպիւ, զոր արարեր յառաջին անգամն: Արդա բերեմ առաջի նո զառաջադրութիւն, և ստոյգ գրեմ զնա: և 'ի վախճանի դնեմ առ'ի միաւորել զվերանորոգեցեալ սիրտն քո ընդ սկզբան, և փրկչին իւրոյ, 'ի ձեռն խորհրդոյ ամենասուրբ հաղորդութեն:

Յաղագս խրատուց, և զգուշանաց, որ պիտոյ է ունել զկնի այսոցիկ հերթուածոց:

## Գլուխ. ԺԶ:

Ի Յաւուր արարման վերանորոգմանս այսորիկ, նաև 'ի յայլ հետևեալ աւուրս, պարտիս դու բազմիցս ասել սրտիւ, և բերանով քով, զայն հրա բորբոք բանսն սրբոյն պօղոսի, սրբոյն օգոստինոսի, և սրբուհւոյն կատարինէի ճենուացւոյ, և այլոց: Ես ոչ եմ այլ ես իմ, թէ կեցից, և թէ մեռայց. այլ եմ փրկչին իմոյ: և ոչ ունիմ բնաւ զիր ինչ իբր իմ, և ոչ ես իբր յիրաց իմոց. այլ իմ է Յս, և իւր է ամենևին դոյն իմ: Ով աշխարհ. դու ես միշտ նոյն, և ես ես եմ միշտ նոյն. մեք ոչ եմք

այլ

այլ և՛ս նոյնք, զի փոխեալ եմք զսիրտս: Ե՛ւ աշխարհն, որ պատրեաց զմեզ այնքանիցս, պատրեցեալ լինի 'ի մէնջ: քանզի ոչ իմանալով զփոփոխումն մեր, որ լինի սակաւ առ սակաւ, այնու կարծէ թէ մեք իցեմք եսաւ. սակայն գտանէ ամենևին յակօբ:

* Պիտոյ է, զի կրթութիւնքս այսօրքիկ հաստատեսցին 'ի մէջ սրտի մերում. և յառնելով 'ի խոկմանէ, և 'ի մտածմանէ, գնասցուք սակաւ առ սակաւ 'ի մէջ գործառութեանց, և կենցաղավարութեանց մերոց. և այս վ̅ն երկիւղին, զի մի՛ խակոյն ցրուեսցի խոնաւութիւն առաջադրութեան մերոյ: Քանզի պիտոյ է, զի բարեպէս հեղանիցի, և թափանցեսցի նա 'ի բնաւ մասունս հոգւոյ մերոյ. սակայն առանց բռնութեան, թէ հոգւոյ, և թէ մարմնոյ:

## Պատասխանատուութիւն առ առարկութիւնս, որք հարկէն լինել ընդդէմ այս ներածմանս Ջերմեռանդութեան:

## Գլուխ. ԺԷ:

Աշխարհն ասէ քեզ ո՛վ խանդակաթ ջերմեռանդութեան. թէ սոյն խրատքս, և կրթութիւնքս, այնքան բազմադոյնք են թուով. մինչ զի եթէ ոք կամիցի պահել զայնս, պիտոյանայ զի ոչ դիտիցէ առ այլ ինչ: Ո՛վ սիրահարդ իմ. յորժամ մեք զայլ ինչ ոչ առնէաք, յայնժամ առնէաք զբաղումս. որովհետև առնէաք զայն, զոր պարտէաք առնել յայսմիկ Տի: Բայց արդ՝ մի՞թէ ոչ տեսանես դու զխորամանկութիւն Տի: Քանզի եթէ պիտոյանայցէր առնել զբնաւ կրթութիւնս զայսոսիկ յամում աւուր, արդարև զբաղեցուցանէին, և ձանձրացուցանէին զմեզ:

զմեզ: բայց ոչ է պիտոյ առնել զնոյն, եթէ ոչ ը̅ ժամանակի, և ը̅ պատահման: Արդ որքան քաղաքական օրէնք, և ծէսք գտանին 'ի կանոնական գրեանս, իմանին ը̅ պատահման: վասն զի ոչ է հարկաւոր իսկ կիրարկանել զայնս բնաւս յամ̃ում աւուր: Ապա թէ ոչ՝ թագաւորն դաւիթ, որ լի էր դժուարագոյն զբաղմամբ, ո՞րպ̃ կիրարկանէր զպէսպէս կրթութիւնս, զորս ոչ եդի ես աստ: Եւ սբ̃ թագաւորն լուդովիկոս, որ էր զարմանալի 'ի պատերազմի, և 'ի խաղաղութեան. անբաղդատելի հոգունակութբ̃ միով խրակէր զարդարութեան, և գործէր զգործս: Լսէր յամ̃ում աւուր զերկու պատարագս, ասէր զերեկոյեան ժամն, և զեկեսցէն ընդ քահանայի իւրում, կատարէր զմտածական աղօթքն իւր, այցանէր հիւանդաց, խոստովանէր յամ̃ ուրբաթօջ, և առնէր զկրթութիւն ուսման, լսէր զքարոզութիւն, և առնէր հանապազ զհոգևոր խոստակցութիւնս: Բայց սակայն այսու ամ̃, ոչ կորուսանէր զփոքրագոյն առիթ իւն̃ հասարակական, և արտաքին բարւոյն, զոր ոչ առնիցէր, և հոգունականապէս ոչ կատարիցէր: Անք, որք բնակէին յապարանի, և 'ի պալատի իւրում, այնպ̃ առաւել ծաղկեալք, և բարեկարգեալք էին, մինչ զի ոչ եղև երբէք այնպ̃ 'ի ժամանակս նախորդաց իւրոց: Արդ ուրեմն համարձակապ̃ զկրթութիւնս զայսոսիկ, ը̅րմ առնչանադրեցի. և ա̃ծ տայ քեզ զբաղում ժամանակս, և զօրութիւնս առ 'ի առնել զայլ մնացեալ գործս քո: Այսպէս է. յորժամ պարտ եղիցի, զի արեգակն կայցէ, (որպ̃ և եղև 'ի ժամանակին յեսուայ) մեք և ես առնեմք միշտ զնոյնն առաւել, մինչ ա̃ծ գործէ ընդ մեզ:

* Աշխարհն ասէ (որպ̃ և ենթադատեմ ես) թէ խանդակաթ անձն այ̃, յամ̃ տեղւոջ ունի զպարգևն մտածական աղօթից: բայց զայս ոչ ունի ամ̃ ոք.

ոք. որոյ վ՟ն այս ներածումս ոչ ծառայէ ա՟մից։ Այս է ճշմարիտ առանց երկբայութե՟ն, ո՟պ և ենթադրեմ ես. թէ ա՟մ ոք ոչ ունի զպարգևն մտածական աղօթից։ Բայց սակայն ճշմարիտ է նաև այս. թէ ա՟մ ոք կարէ ունիլ զնա, թէևս դուեհիկք իցեն, միայն թէ ունիցին զլաւագոյն ուսուցիչս, և կամիցին աշխատիլ ևս առ՚ի ստանալ զայն քան, որ՟ք և արդիւնաւորի իւրն։ Եւ եթէ գտանիցի ոք, որ ոչ ունիցի գոնեայ սակաւ ինչ զպարգևս զայս (որ ըստ վարկման իմոյ ոչ կարէ պատահիլ այս, եթէ ոչ յոյժ սակաւ.) յայնժամ խոհեմագոյն հոգևոր հայրն, առնէ զն՟ա դիւրապէս լցուցանել զպակասութիւն զայն՝ մտադրութե՟ն, զոր ինքն ուսուցանէ նց՟. կամ ՚ի յընթեռնուլն, կամ ՚ի լսելն ընթեռնուլ զնոյն մտածմունս, որք եդեալք են ՚ի մտածականութե՟ն։

Երեք աղերսմունք, և խրատք վերջինք, և նախապէպահանք, վասն ներածմանս այսորիկ։

## Գլուխ. ԺԲ։

1. Արա՛ յա՟մ առաջնում աւուր ամսոյն զառաջադրութիւն զայն, որ կայ ՚ի նախկնում մասին զկնի մտածութե՟ն, և յա՟մում կիտող առաջադրեա՛ առ ՚ի պահել զնա, ասելով ը՟դ դաւթի։ Յաւիտեան ոչ մոռացայց զարդարութիւնս քո, զի նոքօք կեցուցեր զիս։ Եւ մինչ զգայցես ՚ի հոգւոյդ քո զանկարգութիւն ինչ, ա՛ռ ՚ի ձեռս զառաջադրութիւնն, և անկեալ առաջի ա՟յ խոնարհութե՟բ հոգւոյ, արտաբերեա՛ զնա բոլորով սրտիւ՛ քով, և այնու զգայցես զմեծ թեթևութիւն ինչ։

* 2. Արա՛ յայտնապէս զառաջադրութիւն, առ՚ի կամիլ գոլ ջերմեռանդ: արդ ես ոչ ասեմ, առ՚ի գոլ ջերմեռանդ, այլ առ՚ի կամիլ գոլ ջերմեռանդ. և մի՛ ամօթ համարիր քեզ կալ՚ի հասարակ գործոջ, և ՚ի յայնս, որք պատկանաւորք են առ՚ի ածել զմեզ ՚ի սէրն այ: Խոստովանեա՛ համարձակապէս. թէ ջանաս դու մտածել, և կամիս մանաւանդ մեռանիլ, քան թէ մահացորէն մեղանչել: Նաև՝ թէ կամիս դու յաճախել ՚ի սրբազնութիւնս, և հեռանալ խրատուց այնոցիկ անձանց, որք առաջնորդեն քեզ (թէև ոչ է հարկաւոր վասն բազում պատճառաց յաճախանաց անուանել զայն): Քանզի այս համարձակութիւն այնմ, որ կամի ծառայել այ, և այնմ որ է ընծայեալ սիրոյն այ մասնաւոր ըղձիւ միով, յոյժ հաճելի է ածայնոյ հանդիսավեհութեանն, որ ոչ կամի երբէք, թէ ոք ամօթ համարիցի զինքն, և զխաչն իւր: Ե՛ւ յետոյ սոյնս՝ արգելէ նաև զճանապարհն բազմաց համոզմանց, զոր աշխարհն կամի առնել ներհակապէս, և պարտաւորել զմեզ ՚ի ներքոյ մակադրի պատուոյ, առ՚ի հեռանալ նոքեան: Փիլիսոփայքն յայտնէին զինքեանս գոլ փիլիսոփայս, այսու՝ զի իւրաքանչիւրոք թողուցուր զնա կեալ փիլիսոփայաբար: այսպէս և մ պարտիմք մեք ճանաչեցուցանել զմեզ գոլ ցանկացող կատարելութե. զի թողցեն զմեզ մդիկք կեալ ջերմեռանդապէս: Ե՛ւ եթէ ոք ասիցէ քեզ, թէ կարէ ոք կեալ ջերմեռանդաբար առանց գործածութեան այսպիսեաց խրատուց, և կրթութեանց: Մի՛ բացասեր զայս ամենևին, այլ պատասխանեա՛ նմա սիրով. թէ այնքան մեծ է տկարութիւն իմ, մինչ զի պահանջէ զմեծագոյն օժանդակութիւն, զոր ոչ կարեն առնել այլ իրք:

* 3. Սերջապէս. ով խանդակաթդ առաքինութե. երդմնեցուցանեմ զքեզ ՚ի յայնքան սէս, որք դատա_

գտանիլ կարեն 'ի յերկինս, և 'ի յերկրի. 'ի սբ̃ մըր-տութեն, զոր ընկալար. 'ի սբ̃ ամէնս, զոր ծծեաց Քն̃. 'ի սիրալիր սրտն նորին; որով սիրեաց ըզ-քեզ. 'ի յաղխմն ողորմութեան, առ որ յուսաս. կաց և յարատևեա յայսմիկ երանելի ձեռնամխու-թեն, և կրթութն ջերմեռանդ կենաց: Զի անցա-նեն աւուրքն մեր, մաՀն կայ առ դրուն: Փ[illegible]ն (ասէ սբ̃ն գրիգոր նիւսացի) [illegible].

[illegible]:

Մայրն սբ̃յն սօփրոնիոսի՝ տեսանելով, զի տա-նէին զնա 'ի մարտիրոսութն, աղաղակէր զկնի նր̃: Որդեակ իմ որդեակ, յիշեա զյաւիտենական կե-անս, Հայեաց յերկինս, և տե՛ս զայն; որ անդ-թադաւորէ. մերձ է վախճանն Համառօտ ընթաց-մանս այսորիկ, և յոյժ շուտով եղերի: Վս̃յ ո՛վ սիրաՀարդ իմ. ես և ս ասեմ քեզ զնոյնն. Հայեաց 'ի յերկինս, և մի՛ թողուր զնա վս̃ երկրի. Հայեաց 'ի դժոխս, և մի արկաներ զքեզ անդ վս̃ րոպէա-կան Հրաց. Հայեաց 'ի Յս̃ Քս̃, և մի՛ ուրանար զնա վս̃ բոլոր աշխարՀի: Եւ՞ մինչ նեղութիւնն ջերմեռանդ կենաց քեզ խիստ թուիցի, երդեա ըստ սբ̃յն Փրանչիսկոսի:

Այնչափ բարի է այն, որում ես սպասեմ,
[illegible]:

Որև ողջ լիցի Յս̃. ընդ Հօր, և ընդ Հոգւոյն սբ̃յ, 'ի փառս, և 'ի պատիւս, այժմ, և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Վ. Ե Ր Ջ։

# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

## ԱՌԱՋՆՈՑ ՄԱՍԻՆ։

Ստորագրութի̃ ճշմարիտ ջերմեռանդութեան ․ գլ․ Ա։ երես ․ 1
Յատկութի̃, և Գերազանցութի̃ ջերմեռանդութե̃ ․ գլ․ Բ։ 5
Յղգ̃ս թէ Ջերմեռանդութի̃ն պատկանի ամ̃ ցեղ կոչման, և կացութե̃ ․ գլ․ Գ։ 9
Յղգ̃ս հարկաւորութե̃ միոյ Առաջնորդի, առ՚ի մտանել, և առնել զյառաջադիմութի̃ ՚ի ջերմեռանդութե̃ ․ գլ․ Դ։ 12
Յղգ̃ս թէ պիտոյ է սկսանիլ զմաքրութի̃ հոգւոյ ․ գլ․ Ե։ 16
Յղգ̃ս նախկնոյ մաքրման, որ է ՚ի մահացու մեղաց ․ գլ․ Զ։ 19
Յղգ̃ս երկր̃դի մաքրման, որ է ՚ի յըղձից մեղաց ․ գլ․ Է։ 21
Յղգ̃ս կերպի առնելոյ զայս երկր̃դ մաքրումս։ գլ․ Ը։ 23
Մտածումն առաջին ․ Յղգ̃ս ստեղծման ․ գլ․ Թ։ 25
Մտածումն երկր̃դ ․ Յղգ̃ս վախճանի, որոյ սակս ստեղծեցեալ եմք ․ գլ․ Ժ։ 28
Մտածումն երր̃դ ․ Յղգ̃ս բարերարութե̃ցն այ̃ ․ գլ․ ԺԱ։ 31
Մտածումն չրր̃դ ․ Յղգ̃ս մեղաց ․ գլ․ ԺԲ։ 34
Մտածումն հինգերորդ ․ Յաղագս մահուան ․ գլ․ ԺԳ։ 37
Մտածումն վեցերորդ ․ Յղգ̃ս դատաստանին ․ գլ․ ԺԴ։ 40

Մտա

Մտածումն եօթներորդ․ Յաղագս դժոխոց․ գլ․ ԺԵ։ 43
Մտածումն ութերորդ․ Յաղագս արքայութեան․ գլ․ ԺԶ։ 45
Մտածումն իններորդ․ Յաղագս կերպի ընտրութեան, և ըղձի արքայութեան․ գլ․ ԺԷ։ 48
Մտածումն տասներորդ․ Յաղագս ընտրութեան, զոր հոգին առնէ զջերմեռանդ կենաց․ գլ․ ԺԸ։ 51
Յաղագս թէ պարտ է առնել ընդհանրական խոստովանութիւն․ գլ․ ԺԹ։ 55
Գործունեայ, և հեղինակական պայմանադրութիւն առ՚ի ներտպել ՚ի հոգւոջ զառաջադրութիւն, վասն ծառայելոյ Աստուծոյ, և վասն նախաընտրելոյ զգործս ապաշխարութեան․ գլ․ Ի։ 57
Եզրափակումն առաջնոյ մասին, և ջերմեռանդ կերպի, առ՚ի ճշմարտիլ զարձակումն․ գլ․ ԻԱ։ 60
Յաղագս թէ պիտոյ է մաքրել ՚ի յըղձից, որք են առ ներելի մեղս․ գլ․ ԻԲ։ 62
Յաղագս թէ պիտոյ է մաքրել ՚ի անօգուտ ըղձից, և որոգայթաւոր իրաց․ գլ․ ԻԳ։ 65
Յաղագս թէ պիտոյ է մաքրել ՚ի վատթար յօժարութեանց․ գլ․ ԻԴ։ 67

## ԵՐԿՐՈՐԴԻ ՄԱՍԻՆ։

Յաղագս հարկաւորութեան աղօթից․ գլ․ Ա։ 69
Համառօտ կերպ մտածման․ և Նախապէս յաղագս ներկայութեան Աստուծոյ, որ է առաջին կէտ նախապատրաստութեան․ գլ․ Բ։ 74
Յաղագս ներկոչման, որ է երկրորդ կէտ նախապատրաստութեան․ գլ․ Գ։ 78
Յաղագս առաջադրութեան խորհրդաւոր իրի․ որ է երրորդ կէտ նախապատրաստութեան․ գլ․ Դ։ 79

Յղգս մտածման, որ է երկրդ մասն մտածութն. գլ. Ե: 81
Յղգս ըղձի, և առաջադրութն, որ է երրորդ մասն մտածման. գլ. Զ: 82
Յղգս եզրափակման, և հոգևոր ծրարի. գլ. Է: 83
Ոմանք օգտակարագոյն աղդմունք, վս առարկայի մտածութն. գլ. Ը: 85
Յղգս չորութն, որք պատահին 'ի մտածութն. գլ. Թ: 88
Կրթութի առաւօտեան. գլ. Ժ: 90
Յղգս երեկոյեան կրթութեան, և քննութեան խղճմտանաց. գլ. ԺԱ: 92
Յղգս հոգևոր առանձնականութն. գլ. ԺԲ: 94
Յղգս Ըղձակերտութն, և Սլաքական աղօթից, և Բարի խորհրդոց. գլ. ԺԳ: 97
Յղգս Ամենասբ Պատարագի, թէ ոպ պիտոյ է լսել. գլ. ԺԴ: 105
Յղգսայլոյ հրապարականան, և հասարակական կրթութն: գլ. ԺԵ: 108
Յղգս թէ պիտոյ է պատուել զսբս. գլ. ԺԶ: 110
Յղգս թէ պիտոյ է լսել, և ընթեռնուլ զած ային բանս. գլ. ԺԷ: 112
Յղգս թէ ո՛րպէս պիտոյ է ըունիլ զներշնչմունս ԱՅ. գլ. ԺԸ: 115
Յղգս սբյ խոստովանութն. գլ. ԺԹ: 119
Յղգս յաճախապէս ընկալման սբ Հաղորդութն. գլ. Ի: 125
Յղգս թէ ոպ պիտոյ է հաղորդիլ. գլ. ԻԱ. 130

---

## ԵՐՐՈՐԴԻ ՄԱՍԻՆ:

Յաղագս ընտրութն, որ պարտի առնանիլ որք առ կրթութին առաքինութեց. գլ. Ա: 134
Հետևի նոյն խօսակցութին, յաղագս ընտրութն

առա

առաքինութն. գլ. Բ: 141
Յղգ̃ս համբերութն. գլ. Գ: 146
Յղգ̃ս արտաքին խոնարհութն. գլ. Դ: 153
Յղգ̃ս ներքոյ խոնարհութն. գլ. Ե: 157
Յղգ̃ս թէ՝ խոնարհութիւնն առնէ զմեզ սիրել զյատուկ տկարութին մեր. գլ. Զ: 164
Թէ ո՛րպէս պիտոյ է պահել զքարի անունն, 'ի գործածելով զ խոնարհութին. գլ. Է: 170
Յղգ̃ս հեզութն դէպ առ ընկերս, և դեղոյ ընդ-դէմ բարկութն. գլ. Ը: 176
Յաղագս հեզութեան դէպ 'ի մեզ ինքեանս. գլ. Թ. 182
Յղգ̃ս թէ պիտոյ է ջանացողութ̃, և առանց նեղութն և վնասակար խորհրդոյ՝ ձեռնամուխ լինիլ 'ի գործս. գլ. Ժ: 186
Յղգ̃ս հնազանդութն. գլ. ԺԱ: 189
Յաղագս հարկաւորութեան ողջախոհութեան. գլ. ԺԲ: 193
Զգուշութիք, և խրատք՝ վ̃ պահպանելոյ զողջախոհութին. գլ. ԺԳ: 198
Յղգ̃ս աղքատութն հոգւոյ, որ կիրարկանի 'ի մէջ հարստութեց. գլ. ԺԴ: 202
Թէ ո՛րպէս պիտոյ է 'ի կիրարկանել զիրական աղքատութին, մնալով նաև իրականապէս փարթամ. գլ. ԺԵ: 206
Յղգ̃ս կիրարկման հարստութեան հոգւոյ՝ 'ի մէջ իրականի աղքատութն. գլ. ԺԶ: 212
Յաղագս բարեկամութն: Եւ՛ նախապետաբար յաղագս վատ, և սնոտի բարեկամութեան. գլ. ԺԷ: 215
Յղգ̃ս սիրահարութեց, և կմ̃ խանդաղատմանց. գլ. ԺԸ: 218
Յղգ̃ս ճշմարիտ բարեկամութն. գլ. ԺԹ: 224
Յղգ̃ս զանազանութն, որ գտանի 'ի մէջ ճշմարիտ, և ունայն բարեկամութն. գլ. Ի: 228

Խրատ, և դեղ ընդդէմ չար բարեկամութեան. գլ. ԻԱ: 232
Այլք ոմանք աղդմունք, և խրատք՝ 'ի վ̃ր առար_կայի բարեկամութ̃ե. գլ. ԻԲ: 237
Յաղագս կրթութ̃ե արտաքնոյ մահացուցման. գլ. ԻԳ: 240
Յղ̃ս կենցաղավարութ̃ե, և առանձնականութ̃ե. գլ. ԻԴ: 248
Յղ̃ս պատկանաւորութ̃ե, և պատշաճաւորութ̃ե զգեստուց. գլ. ԻԵ: 253
Յղ̃ս խօսակցութ̃ե, և նախապետաբար՝ թէ ո̃պ պիտոյ է խօսիլ զԱ̃Ծ. գլ. ԻԶ: 256
Յղ̃ս համեստութ̃ե խօսից, և պատկառանաց՝ զոր պիտոյ է ունիլ դէպ առ անձինս. գլ. ԻԷ: 258
Յղ̃ս յանդգնոյ դատողութ̃ե. գլ. ԻԸ: 261
Յաղագս բամբասանաց, և չարաստութեան. գլ. ԻԹ: 269
Այլք ոմանք աղդեցմունք, և խրատք, որք պատկանին առ խօսակցութ̃ին. գլ. Լ: 277
Յղ̃ս զբօսանաց, և անցուցման ժամանակի. և և նախապետաբար յղ̃ս այնց զբօսանաց, որք են ճահաւորք, և գովելիք: գլ. ԼԱ: 280
Յղ̃ս արգելեալ խաղուց. գլ. ԼԲ: 282
Յղ̃ս ճահաւոր կաքաւեցմանց, և զբօսանաց. նաև որոգայթաւորաց. գլ. ԼԳ: 284
Յղ̃ս թէ յե՛րբ պիտոյ է խաղալ, և կաքաւել. գլ. ԼԴ: 288
Յղ̃ս թէ պիտոյ է հաւատարիմ գտանիլ 'ի մե_ծագոյն, և 'ի փոքրագոյն պատահման, և առ_թի. գլ. ԼԵ: 289
Յղ̃ս թէ պարտ է ունիլ զարդար, և զբանաւոր հոգի. գլ. ԼԶ: 293
Յղ̃ս ըղձից. գլ. ԼԷ: 297
Աղդմունք, և խրատք՝ վ̃ս ամուսնացեալ անձանց. գլ. ԼԸ: 301

Յա_

Յաղագս համեստութեան ամուսնական անկողնոյ. գլ. ԼԹ: 311
Առազդմունք, և խրատք վ̃ այրեաց. գլ. Խ: 317
Մի միայն բան առ կուսանս. գլ. ԽԱ: 324

---

## ՉՈՐՐՈՐԴԻ ՄԱՍԻՆ:

Յաղագս թէ՝ ոչ է պիտոյ ունկնդիր լինիլ բանիցն որդւոց աշխարհի. գլ. Ա: 326
Յղ̃գս թէ՝ պիտոյ է ունիլ զբարի սրտեղութիւն, և քաջութիւն. գլ. Բ: 330
Յղ̃գս բնութեան փորձութեան: Եւ՛ յաղագս զանազանութեան՝ որ գտանի ՚ի մէջ զգալոյ զփորձութիւս, և հաւանելոյ առ այնս. գլ. Գ: 333
Երկու գեղեցիկ օրինակք ՚ի վ̃ր սոյն առարկայի և նիւթոյ. գլ. Դ: 337
Յղ̃գս քաջալերութեան հոգւոյ, որ կայ ՚ի մէջ փորձութեան. գլ. Ե: 340
Յղ̃գս թէ՝ ո՛րով կերպիւ՛ կարեն գոլ մեղք փորձութիւքն, և հեշտութիւքն. գլ. Զ: 342
Յաղագս դեղոյ ընդդէմ մեծամեծ փորձութեանց. գլ. Է: 346
Յղ̃գս թէ՝ պիտոյ է ընդդիմանալ ընդդէմ փոքրագունից փորձութեանց. գլ. Ը: 348
Յղ̃գս թէ՝ ո՛րպէս պիտոյ է բժշկել զփոքրագոյն փորձութիւս. գլ. Թ: 350
Յղ̃գս թէ՝ ո՛րպ̃ պիտոյ է զօրացուցանել զսիրտն ընդդէմ փորձութեանց. գլ. Ժ: 352
Յղ̃գս անհանգստութեան. գլ. ԺԱ: 354
Յղ̃գս տրտմութեան. գլ. ԺԲ: 358
Յղ̃գս հոգևոր, և զգայական մխիթարութեանց: Նաև թէ ո՛պ̃ պիտոյ է վարիլ ՚ի նս̃. գլ. ԺԳ: 362
Յաղագս չորութեան, և հոգևոր ամլութեան. գլ. ԺԴ: 372

Հաս-

Հաստատուն, և բացայայտ ապացեալն մեր, 'ի ձեռն միոյ յայտնագոյն օրինակի. գլ. ԺԵ: 380

## ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ՄԱՍԻՆ:

Յաղագս թէ պիտոյ է յոյժ տարւոջ նորոգել զբարի առաջադրութիւն, ըստ հետևեալ կրթութեանցն. գլ. Ա: 386

Մտածումն 'ի վերայ բարերարութեան, զոր առնէ մեզ Ած, կոչելով առ իւր սբ ծառայութիւն. ըստ խոստման և ըստ առաջադրութեան, որ 'ի վերոյ արարաւ. գլ. Բ: 389

Յաղագս քննութեան հոգւոյ մերոյ՝ վն զարգացման, և յառաջադիմութեան նորին առ ջերմեռանդ կեանն. գլ. Գ: 392

Քննութիւն կացութեան մերոյ՝ դէպ 'ի յԱծ. գլ. Դ: երես. 394

Քննութիւն կացութեան մերոյ՝ դէպ 'ի մեզ ինքեանս. գլ. Ե: 397

Քննութիւն կացութեան մերոյ՝ դէպ 'ի յընկերս մեր. գլ. Զ. 399

Քննութիւն ըղձից հոգւոյ մերոյ. գլ. Է: 400

Իղձք, որք պարտին ունեալ լինել զկնի քննութեան. գլ. Ը: 402

Յաղագս յատուկ մտածմանց, առ 'ի վերանորոգել զբարի յառաջադրութիւնս մեր. գլ. Թ: 403

Մտածումն առաջին, յաղագս գերազանցութեան հոգւոյ մերոյ. գլ. Ժ: 404

Մտածումն երկդ, վն գերազանցութեան առաքինութեան. գլ. ԺԱ: 406

Մտածումն երրդ, վն օրինակի սրբց. գլ. ԺԲ: երես. 407

Մտածումն չրրդ, յաղագս սիրոյն, զոր ունի առ մեզ Յս Քս. գլ. ԺԳ: 409

Մտա-

Մտածումն հնգերո̃դ, յաղագս յաւիտենական սիրոյն ա̃յ դէպ 'ի մեզ. Գլ. ԺԴ: 411
Ընդհանրական խղճ 'ի վ̃ր նախանցեալ մտածմանց. և եզրափակումն կրթութ̃ենց. Գլ. ԺԵ: 412
Յաղագս խրատուց, և զգացմանց, որ պիտոյ է ունել զկնի այսոցիկ կրթութ̃ենց. Գլ. ԺԶ: երես. 414
Պատասխանատուութիւնք առ առարկութեանս, որք կարեն լինել ը̃դդէմ այսմիկ ներածման ջերմե-ռանդութ̃ե. Գլ. ԺԷ: 415
Երեք ազդեցմունք, և խրատք վերջինք, և նա խապետականք, վասն ներածմանս այսորիկ. Գլ. ԺԸ: 417

## ՎԵՐՋ ՑԱՆԿԻՍ:

## Վերջաբանութիւն, և յիշատակարան առ բանասէր անձինս Աշգէ Տէրոյ:

Ի Ձեռն անհուն բարեգթութեան Տն, յանկ ելեալ եզերեցաւ տպագրութիւն հոգեշահ սոյն գրգոյս, 'ի օգուտ առաքինասէր անձանց մերազնէից: Վս զի մինչ էի ես 'ի բնիկն իմ 'ի կոստանդնուպօլիս. առժամայն 'ի թարգմանիլն սորին, ըստ խնդրոյ Հօրն իմոյ հոգևորի արդէն 'ի տր հանգուցելոյ. ցանկացող, և ջանացող եղև տպագրութեան սորին: Եւ այս աղագաւ յոյժ շահաւէտ գոլոյն առ այնս բնաւս, որք ցանկան յառաջանալ յառաքինական, և 'ի ջերմեռանդական զարգացմունս, թէ եկեղեցականք իցեն, և թէ աշխարհականք. զի ըստ սմին ամենեցուն ծառայէ: Եւ մինչ դժուարութին իմն գտանիւր անդ, առ 'ի տպագրել զնորապէս թարգմանեցեալ գրեանս. այնու լուռ լեալ յոգւոցհանէի, և մորմոքէի: Բայց մինչ դէպ եղև ինձ, ժամանակ ինչ նշդեհանալ յայսմիկ կողմունս, և հեռանալ 'ի սիրազնոյ ազգէ իմմէ, նաև 'ի քարոզելոյ նշ զբան տն: Տակաւին առ 'ի վճարել զհարկն պաշտօնի իմոյ, ձեռնամուխ եղէ նախապէս ըստ կարեաց իմոց, տպագրել զգերազանցագոյն գիրքն օրինակաց, և նմանութեանց. որ վասն գոլոյն մեծագոյն գործ, այնու հազիւ թէ մինչև ցայժմ կարաց հասանիլ տպագրութիւնն նորին ցառ կէտն: Սակայն 'ի խնդրելն յինէն բարեբարոյից ոմանց սոփեանօք, զտպագրութիւն սոյն նեղկայ գրգոյս. խակոյն արծարծեալ արթնացաւ

յիս

յիս վաղեմնի տենչմունքն նիրհեցեալ: Որոյ վ̅ս թողեալ առ ժամանակ մի զնոյն գիրքն օրինակաց, սկսայ յառաջացուցանել զայնս մեծաւ աշխատութե̅, 'ի բաւարարումն փափաքանաց իմոց, և այլոց ծառայից Տ̅ն:

Որդ գիտել պարտի այն, որ ընթեռնու զայս, զի շարադրող հեղինակն սորին, կոչի Փրանչիսկոս Սալեզացի, որ և էր մաքրափայլ եպիսկոպոս քաղաքին Ճենովայու: Եւ 'ի մեծագոյն յարգման, և համարման եղև առաջի մեծամեծ անձանց: և այս վ̅ս գերազանց սրբութե̅ն, վ̅ս եզական բարութե̅ն, վ̅ս գերահռչակ իմաստութե̅ն, վ̅ս առաքինական բարուցն, վ̅ս բարեօրինակ կենցաղավարութե̅ն, և վ̅ս մեղրածորան քարոզութե̅ն: Քանզի 'ի քսանևութն ամհետէ կենաց իւրոց, մինչև ցվախճանն իւր, աւելի քան զչորս հազար անգամս քարոզեաց 'ի յամպիոնի: Նաև 'ի մեծամեծ մայրաքաղաքս քրիստոնէից, զյաճախագոյն դասս ասաց աշակերտեցեալ անձանց: Առ որ գային յամ ուստեքէ մեծաւ փափաքանօք, ոպ̅ ծարաւիք առ աղբիւրս ջրոյ կենդանւոյ, առ 'ի ուսանիլ զիմաստութի̅, և առ 'ի ստանալ զառաքինութի̅ն ջերմեռանդ կենաց: Զի ըստ վկայելոյ պատմագրի բոլոր կենաց նորին. արդարև այնպիսի իսկ կատարելագոյն էր վարուքն, ոպ̅ և ուսուցանէ զայլս բանիւքն. ըստ օրինակի Տ̅ն մերոյ, որ առնէր, և ուսուցանէր: Ո՞հ. և ո՞հ. երանի՜ թէ լսէաք, և 'ի միտ առնուք զառս, և ըզգործս այսպիսեաց անձանց սրբակրօնից, մեք, մեք ասեմ եպիսկոպոսունքս, առաջնորդքս, և վարդապետքս, առ 'ի զգաստացուցանել, և բարեկարգել զմեզ, գնալով ը̅ շաւղաց, և ը̅ հետոց այսպիսեաց. և ոչ ըստ ախտից մտաց մերոց:

Նաև մինչ ընթեռնոյք զայնս գլուխս, զորս գրեաց սոյն երանելի անձնս, յաղագս դոպեցմանց,

պա_

պարեգմանց ; խաղուց ; սիրահարութեանց , և անցուցմանց ժամանակի ․ մի՛ գուցէ՛ թէ այսոքիւք քստմնիցիք ։ Քանզի իւրաքանչիւր ո՛ և իցէ ազգ և գաւառ ; ունի առ ինքն զընաւորեալ սովորութիս ; և զծէսս ոմանս ; որ անդէպ իմն է ունել զայնս այլ ազգք ; և այլ գաւառք ․ ոչ և փորձիւ իսկ յայտ է հմտութեան ձեռում ։ Որոյ վասն մինչ սոյն գերազանցագոյն այրս , գրէր սոյն գիրքս կալլիականաւ լեզուաւ ; առ նոյն ազգն ; և ժողովուրդն կալլիացւոց , ուր 'ի ընէ իսկ սովորք էին լինել յաճախաւ այսպիսի իրակութիք ; այնու հարկաւորապէս գրէր զոմանս խրատս , և զգուշութիս առ այնս ։ Ուստի թէպէտ մտածեցի ես բառնալ զայնս գլուխս 'ի միջոյ ։ բայց ոչ կարացի համարձակել ․ զի մի' խրամատօղ երևեցայց երկանց այսպիսւոյ առն սրբազունի ։ Նաև ; թէպէտ ոչ են բոլորին ․ գոնեայ են մասին գտանին և այնպիսի իրակութիք 'ի զանազան գաւառս , առ որս արդէն սփռեալք գոն ազգս մեր ։ Վասն 'ի յընթեռնուլն մտացի արանց զայսպիսի նիւթս ․ պարտին նկատել զպարագայս նոցին , թէ զի արդ ; և առ ոյս գրեալք են ․ և այսու ամիւ համբերաբար տանել զայնս , որք գրեալք եղեն առ տկարս , և առ սակաւ խոհեմս ։

Իսկ որքան առ աշխատութիւն իմ, զոր կրեցի 'ի յարմարագրելն և 'ի սրբագրելն զսա ( որքան և կարելին էր ) 'ի պէսպէս սխալանաց ․ թէ բառից , թէ շարադրութեանց , թէ իմացուածոց , և թէ 'ի յոմանս տեղիս պակաս մնացելոց յանհոգութենէ թարգմանչին ․ զայն 'ի փառս իւր համարեսցի տր , և աղօթիւք սրբոյն ինձ ողորմեսցի ։ Եւ թէպէտ գիտեմ իսկ ; զի 'ի բազում ուրեք գտանին նաև աստ աւելորդութիք , և պակասութիք տառից ․ զայնս ինձ ; և միայնակութեան իմոյ շնորհել աղաչեմ, զի 'ի վրիպմանէ աչաց պատահին այնք ։

Վասն

Վասն զի 'ի սրբագրելն զխառնիխուռն շարուածս տպագրչաց, որք են անհմուտք լեզուի մերոյ, մինչ ընթեռնուաք զայնս տեսակաւ բառիցն, և ոչ ոպ զմանկունս զօրութ֊ տառիցն, այնու բզ֊մ տառք վրիպեալք գտանէին յաչաց մերոց։

* Մերջապէս. աղաչեմ զբարեմիտ ընթերցասէրսդ, առ 'ի ընթեռնուլ զսա՝ ոչ միայն եւեթ տեսական գիտութ֊; առ 'ի գիտել և իմանալ միայն. այլ նաև գործնականաւ, առ 'ի աշխատիլ և ջանալ ստացման կատարեալ առաքինութեն, և ջերմեռանդն կենաց. որովհետև ա̃ ասելոյն պղատոնի; ստոյն առաքինութեն ոչ կարէ ծաղկիլ թարց աշխատութեն։ Եւ մինչ օգտիցէք 'ի սմանէ զհոգևոր պտուղս, առ Տէր յիշման արժանի համարեսջիք զՀոգևոր, և զմարմնաւոր ծնօղսն իմ, նաև զիս զյետնեալս 'ի յերամս բանասիրաց.

որ եմ պատրաստական ծառայ
բարեպաշտութեն Ձերում։

Սարգիս Վարդապետ, և Արք եպիսկոպոս
Կոստանդնուպօլսեցի։